Գիրքը լուսապատճենահանվել է

"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՔՐՈՆԻԿՆԵՐ

SHAKESPEARE CHRONICLES

2

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

SHAKESPEARE

CHRONICLES

TRANSLATED BY

KHACHIC DASHTENTZ

AND

HENRY SEVAN

2

PUBLISHING HOUSE

OF THE ARMENIAN ACADEMY OF SCIENCES

YEREVAN 1973

ՇԵՔՍՊԻՐ

ՔՐՈՆԻԿՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑԻ
ԵՎ
ՀԵՆՐԻԿ ՍԵՎԱՆԻ

2

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1973

И
Շ 53

«ԳՐԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (նախագահ)
Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ, Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ, Ռ. Վ. ԶԱՐՅԱՆ
Գ. Ն. ՀՈՎՆԱՆ
Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (գիտ. քարտուղար)

Թարգմանության խմբագիրներ
ԱՐՈՒՍ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ և ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ընդհանուր խմբագրությամբ
ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ

ШЕКСПИР

ХРОНИКИ

2

(на армянском языке)

Издательство АН Армянской ССР
Ереван 1973

Շ $\frac{0613.025}{703(02)\text{-}73}$ 68—71

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ

Մասն առաջին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐ
ԴՈՒՔՍ ԳԼՈՍՏԵՐ, թագավորի հորեղբայրը և խնամակալը
ԴՈՒՔՍ ԲԵԴՖՈՐԴ, թագավորի հորեղբայրը և Ֆրանսիայի կուսակալը
ԹՈՄԱՍ ԲՈՖՈՐՏ, դուքս Էքսետր, թագավորի մեծ հորեղբայրը
ՀԵՆՐԻ ԲՈՖՈՐՏ, թագավորի մեծ հորեղբայրը, Ուինչեստերի եպիսկոպոսը, հետագայում՝ կարդինալ
ՋՈՆ ԲՈՖՈՐՏ, կոմս Սոմերսետ, հետագայում՝ դուքս Սոմերսետ
ՌԻՉԱՐԴ ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ, Քեմբրիջի հանգուցյալ կոմսի՝ Ռիչարդի որդին, հետագայում՝ դուքս Յորք
ԿՈՄՍ ՎՈՐՎԻԿ
ԿՈՄՍ ՍՈԼՍԲԵՐԻ
ԿՈՄՍ ՍԵՖՈԼԿ
ԼՈՐԴ ՏՈԼԲՈՏ, հետագայում՝ կոմս Շրուսբերի
ՋՈՆ ՏՈԼԲՈՏ, նրա որդին
ԷԴՄՈՒՆԴ ՄՈՐՏԻՄԵՐ, կոմս Մարչ
ՍԸՐ ՋՈՆ ՖԱՍՏՈԼՖ
ՍԸՐ ՎԻԼՅԱՄ ԼՅՈՒՍԻ
ՍԸՐ ՎԻԼՅԱՄ ԳԼԱՆՍԴԵԼ
ՍԸՐ ԹՈՄԱՍ ԳԱՐԳՐԵՎ
ԼՈՆԴՈՆԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ
ՎՈՒԴՎԻԼ, Թաուերի բերդապահը
ՎԵՌՆՈՆ, Սպիտակ վարդի կամ Յորքի կողմնակից
ԲԱՍԵՏ, Կարմիր վարդի կամ Լանկաստերի կողմնակից
ՄԻ ՓԱՍՏԱԲԱՆ
ՄՈՐՏԻՄԵՐԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ
ՇԱՌԼ, թագաժառանգը, հետագայում՝ Ֆրանսիայի թագավորը
ՌԵՆԵ, դուքս Անժու, Նեապոլի թագավորը
ԴՈՒՔՍ ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱ
ԴՈՒՔՍ ԱԼԱՆՍՈՆ
ՕՌԼԵԱՆԻ ԲԱՍՏԱՐԴ
ՓԱՐԻԶԻ ՊԱՐԵՏ
ՕՌԼԵԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԻՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՊԵՏ
ՆՐԱ ՈՐԴԻՆ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶՈՐՔԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԲՈՐԴՈՅՈՒՄ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻ ՀԻՍՆԱՊԵՏ

ՄԻ ԲԱՐԱԳԱՆ
ՄԻ ԾԵՐ ՀՈՎԻՎ, կույս Հովհաննայի հայրը
ՄԱՐԳԱՐԻՏ, Ռենեի դուստրը, հետագայում ամուսնանում է Հենրի թագ
ԿՈՄՍՈՒՀԻ ՕՎԵՌՆ
ԿՈՒՅՍ ՀՈՎՀԱՆՆԱ, Ժաննա դ'Արկի սովորական անվանումը

Լորդեր, Թաուերի պահակներ. հերալդներ, սպաներ. զինվորներ. ւ
վորներ և չար ոգիներ՝ կույս Հովհաննային երևացող:

Գործողության մի մասը տեղի է ունենում Անգլիայում, մյուսը՝ Ֆրւ

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Վեստմինստերի աբբայություն:

Թաղման քայլերգ: Մտնում է Հենրի Հինգերորդ թագավորի թաղման թափորը. Հետևում են դուքս Բեդֆորդը՝ Ֆրանսիայի կուսակալ, դուքս Գլոստերը՝ խնամակալ, դուքս Էքսետերը, կոմս Ուորվիկը, եպիսկոպոս Ուինչեստերը, հերալդներ և ուրիշներ:

ԲԵԴՖՈՐԴ

Սև հագիր, երկինք, և ցերեկ, զիջիր տեղդ գիշերվան,
Գիսաստղեր, դուք որ փոխում եք հավետ
Բախտը տերության ու ժամանակի,
Արդ շողացրեք ձեր բյուրեղափայլ հյուսքերն երկնքում
Եվ խարազանեք նրանցով աստղերն ընդվզող ու չար,
Քանզի հաշտվեցին Հենրու մահվան հետ:
Մեծ համբավ ուներ՝ ուստի չէր կարող նա երկար ապրել,
Անգլիան չէր կորցրել այսքան փառապանծ ոչ մի թագավոր:

ԳԼՈՍՏԵՐ

Անգլիան չէր տեսել այսպիսի արքա:
Առաքինի էր և արժանավոր հրամայելու.
Նրա շողացող, ոսկեփայլ սրի ճառագայթներից
Կուրանում էին աչքերը մարդկանց,
Ավելի երկար բազուկներ ուներ, քան թե վիշապը,
Նրա հրացայտ, շանթող աչքերը շլացնում էին
Թշնամիներին ավելի սաստիկ և վանում հեռու,
Քան միջօրեի բարկ արևն՝ հակված նրանց դեմքերին,
Ավա՜ղ, ի՞նչ ասեմ. արարքներն էին խոսքերից հզոր.
Ձեռքն էր բարձրացնում միայն ու միայն հաղթության համար:

Եվ զգեստի մեջ ողբում ենք նրան,
Բայց ինչո՞ւ արյամբ մենք չենք ողողված,
Մեռել է Հենրին, չի զարթնի երբեք:
Կանգնած փայտաշեն դագաղի շուրջը՝ հսկում ենք նրան,
Եվ վսեմաշուք մեր ներկայությամբ
Հարգում ենք մահվան հաղթանակն անարգ,
Գերիների պես՝ հավերժ շղթայված հաղթական կառքին:
Մի՞թե չարագույժ մոլորակները պիտի նզովենք,
Որ դարանամուտ նյութեցին մահը մեր հպարտության.
Թե՞ պիտի խորհենք, որ հնարամիտ-նարպիկ ֆրանսիացիք
Հենրուց սարսափած՝ նետվեցին իսկույն դուռը մոգության
Եվ կախարդական քերթվածքով նրա մահն հնարեցին:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Թագավոր էր նա: Օրհնել էր նրան Արքայից արքան:
Վերջին դատաստանն այնքան ահավոր չէր կարող լինել,
Որքան որ նրա տեսքն էր ահավոր՝ դաժան թշնամուն:
Աստծո զորությամբ կռվում էր արքան
Եվ եկեղեցու սուրբ աղոթքներով դարձավ հաղթական:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ: Եկեղեցո՞ւ: Թե չաղոթեին քո տերտերները,
Նրա կյանքի թելն երբեք չէր հատվի այսքան վաղաժամ:
Քեզ դուր է գալիս միայն թուլամորթ թագաժառանգը,
Զի ահաբեկել կարող ես նրան իբրև աշակերտ:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գլոստեր, ինչ էլ որ մենք կամենանք՝ դո՛ւ ես հովանին,
Ուզում ես իշխել թագաժառանգին ու տերությանը:
Քո կինն հպարտ է. ներշնչել է քեզ ավելի երկյուղ,
Քան կարող էին աստված ու նրա ծառաները սուրբ:

ԳԼՈՍՏԵՐ

Մի՛ տուր կրոնի անունը, քանզի մարմինն ես սիրում,
Եվ թե գնում ես դու եկեղեցի տարին մի անգամ,
Ասպա՝ թշնամու մահն աղոթելու:

ԲԵԴՖՈՐԴ

Վե՛րջ տվեք կռվին, խաղաղվե՛ք, տյարք իմ:
Գնա՛նք զոհարան: —Հերալդներ, սպասեք:—

Ոսկու փոխարեն զոհ կմատուցենք մեր զենքերն ամբողջ,
Զենքերն այլևս մեզ չեն ծառայի՝ մեռել է Հենրին:
Ո՞վ դո՛ւք, հետնորդնե՛ր. դեռ պիտի տեսնեք տարիներ դժնի,
Երբ արցունքներով մայրը կսնի նորածին մանկան,
Եվ մեր հարազատ կղզին կդառնա արցունքի մորուտ,
Կմնան կանայք, որպեսզի ողբան զոհերի վրա:
Հենրի Հինգերո՛րդ, կանչո՞ւմ եմ ոգուդ,
Փրկի՛ր երկիրն այս և հեռու պահիր խառնակությունից.
Կռվիր երկնային մարմինների հետ,
Եվ աստղը ոգուդ ավելի մեծ փառք կունենա այստեղ,
Քան Կեսարինը կամ շքեղորեն...

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Իմ ողջույնը ձեզ, պատվարժան տերեր.
Ես Ֆրանսիայից վատ լուր եմ բերել.
Ամենուր՝ կորուստ, անհաջողություն,
Գյուիեն, Շամպայն. Օռլեան, Ռուան,
Փարիզ. Ռեմս, Գիզոր... կորցրինք լիովին:

ԲԵԴՖՈՐԴ

Ինչ որ գուժեցիր դագաղի վրա, սա՛ կամացո՞ւկ,
Թե չէ կորցրած մեծ քաղաքները կստիպեն նրան՝
Դագաղը ջարդել. արթնանալ քնից:

ԳԼՈՍՏԵՐ

Փարիզը կորցրի՞նք. մի՞թե Ռուանը անձնատուր եղավ.
Եթե Հենրիին կյանք տրվեր նորից՝
Այս վատ լուրերից կավանդեր հոգին:

ԷՔՍԵՏԵՐ

Ինչպե՞ս կորցրինք այդ քաղաքները, ո՞վ դավաճանեց:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ոչ մի՛ մատնություն: Պակասում էին մարդիկ ու դրամ:
Զինվորների մեջ փսփսուկներ են տարածվել արդեն. `
Որ իբրև այստեղ դուք բաժանվել եք տարբեր խմբերի:
Եվ որ ռազմի դաշտ փութալու տեղակ՝
Վիճում եք, թե ում ընտրել զորավար.
Մեկը քիչ ծախքով ուզում է մղել երկար պատերազմ,

Երկրորդը ճախրել, բայց թևեր չունի,
Երրորդն է խորհում, որ առանց փողի,
Քաղցրանենգ խոսքով կարող է հասնել լոկ խաղաղության։
Զարթնի՛ր, Անգլիայի ազնվականություն,
Թող հեղգությունը չխամրեցնի փառքդ նորածին.
2 Զինանշանից պոկել են բոլոր շուշաններն արդեն,
Վահանն Անգլիայի ճեղքված է կեսից։

ԷՔՍԵՏԵՐ

Թե քիչ լինեին մեր արցունքները դագաղի վրա,
Բավ են լուրերն այս, որպեսզի թափվեր արցունքի հեղեղ։

ԲԵԴՖՈՐԴ

Տյարք իմ, լուրերն ինձ վիշտ են պատճառում,
Ես՝ կուսակալս, չեմ կարող դրանց նայել անարցունք.
Բերեք զրահն իմ, ես պիտի կռվեմ Ֆրանսիայի համար
Եվ հեռու տարեք այս ամոթալի սգի շորերը,
Ես ֆրանսիացուն աչքերի տեղակ վերքեր եմ տալու,
Որպեսզի ողբա իր ցավերն արնոտ։

Մտնում է երկրորդ սուրհանդակը։

ԵՐԿՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Լորդե՛ր, կարդացեք այս նամակները՝ դառնությամբ լեցուն.
Ապստամբվել է Ֆրանսիան մեր դեմ.
Բացի աննշան, փոքր քաղաքներից։
Ռեմսի տաճարում թագադրվել է Շառլը՝ դոֆինը,
Եվ Օռլեանի պոռնկորդու հետ դաշինք է կնքել,
Անժույի դուքսը՝ Ռենեն, դոֆինի բանակն է անցել,
Ալանսոնի դուքսն այնտեղ է վազում։

ԷՔՍԵՏԵՐ

Թագաժառանգը կարգվել է արքա, բոլորն էլ նրա կողմն են շտապում։
Ո՞ւր փախչենք, ասա՛, այս ամոթանքից։

ԳԼՈՍՏԵՐ

Չպետք է փախչենք, որ մեր թշնամու կոկորդը բռնենք,
Բեդֆորդ, իմացիր, եթե հապաղես՝ մենակ գմնաս։

ԲԵԴՖՈՐԴ

Գլոստեր, ինչո՞ւ ես կասկածում վրաս։

Ես ժողովել եմ արդեն մտովի այնպիսի բանակ,
Որ նվաճել է ամբողջ Ֆրանսիան:

Մտնում է երրորդ սուրհանդակը:

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ողորմած տերեր, կրկնապատկեցեք ձեր արցունքները,
Որով ցողում եք դագաղն արքայի,
Ձեզ պիտի լուր տամ չարագույժ կռվից,
Որ մեր թշնամու և լորդ Տոլբոտի միջև բորբոքվեց:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Տոլբոտն հաղթե՞լ է ֆրանսիացիներին: Այդպե՞ս է, իրա՞վ:

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՜, ո՛չ: Տոլբոտը պարտություն կրեց:
Ամեն ինչ հիմա մանրամասնորեն ես ձեզ կպատմեմ:
Օգոստոսի տասին, այս իշխանն ահեղ
Օրլեան քաղաքի շրջապատումից նորեն դուրս ելավ,
Վեց հազար մարդ կար նրա ձեռքի տակ,
Բայց ֆրանսիացիք՝ Տոլբոտի զորքից չորս անգամ ավել,
Շրջապատեցին նրան փութորեն:
Նա չհասցրեց շարել յուր մարդկանց.
Տոլբոտն ուզում էր նետաձիգների շարքերի առաջ ձողեր կանգնեցնել.
Դրա փոխարեն ցանկապատերից պոկեցին ցցեր,
Կարծր հողի մեջ խրեցին անկարգ,
Որ կասեցնեն հեծելազորի ճնշումը սաստիկ:
Երեք ժամ տևեց կռիվն արնահեղ,
Մարդկային լեզուն չի կարող պատմել,
Թե քաջ Տոլբոտը սրով ու տեգով ինչ հրաշք գործեց.
Նա բյուր զինվորներ ուղարկեց դժոխք.
Ոչ ոք չէր կանգնում նրան հանդիման.
Եվ ամենուրեք թռչում էր նրա զայրացկոտ ոգին,
Իսկ ֆրանսիացիք բղավում էին, որ նա հենց դևն է, զրահը հագին.
Եվ ողջ բանակը՝ վախից քարացած, նայում էր նրան,
Իսկ նրա զորքը դիտում էր հպարտ այդ անկոր ոգուն,
Եվ բղավելով՝ Տոլբո՜տ, հե՜յ Տոլբոտ,
Նետվում էր կռվի որովայնն արնոտ:
Հաղթությամբ մարտը պիտի պսակվեր,
Թե Ջոն Ֆաստոլֆի սիրտը չօղակեր վախի զգացում՝

Նրան թողնում են դիտմամբ վերջապես,
Որպեսզի նեցուկ կանգնի մեր զորքին,
Բայց վախկոտի պես փախչում է դաշտից՝
Դեռ չնաշակած հարվածն առաջին:
Դրանից հետո սկիզբ են առնում կոտորած ու ջարդ,
Շրջապատում է թշնամին մերոնց,
Մի նենգ վալոնցի, որպեսզի մտնի աչքն արքայորդու,
Տեգ է մխրճում մեջքը Տոլբոտի,
Ում ցասկոտ դեմքին նրանց զորքն ամբողջ
Քաջություն չուներ հեղ մի նայելու:

ԲԵԴՖՈՐԴ

Տոլբոտն սպանվա՞ծ, ես ինձ կսպանեմ,
Զի մեղկ ծուլությամբ ապրում եմ այստեղ՝
Գրկում հանգստի ու շքեղության.
Մինչդեռ նա ընկավ՝ օգնության կարոտ,
Մեր երևելի, քաջ առաջնորդին ծախեցին, ավա՜ղ:

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Օ՜, ո՛չ, չի զոհվել, գերել են միայն,
Հետն էլ՝ Սքեյլսին ու Հենգերֆորդին,
Զորքի մեծ մասը նույնպես կոտորվեց կամ գերի ընկավ:

ԲԵԴՖՈՐԴ

Ոչ ոք չի տալու նրա փրկագինն ինձանից բացի,
Ես քարշ եմ տալու բազմաթիվ գահից գլխիվայր,
Իմ բարեկամին որպես փրկագին նրա ոսկեշող բազը կլինի,
Զորս իշխաններով կփոխանակեմ մեր գերված մեկը:
Դե՛հ, մնա՜ք բարյավ, ես դեռ պարտք ունեմ.
159 Թշնամու հողում խարույկ կվառեմ,
Որ այդ երկրում էլ մեր սուրբ Գևորգի հանդեսը լինի:
Տանում եմ ինձ հետ տասն հազար զինվոր,
Որ արյունահեղ նրանց գործերից դողա Եվրոպան:

ԵՐՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Պետք չէ հապաղել, շրջապատված է Օռլեանն արդեն,
Բանակն Անգլիայի հոգնել է, հյուծվել,
Կոմս Սոլսբերին հայցում է պարեն,
Հազիվ է զսպում խռովքն իր մարդկանց,
Որ սակավաթիվ՝ եռ են շպրտում մի մեծ բազմություն:

ԷՔՍԵՏԵՐ

168 Հիշե՛ք, իշխաննե՛ր, ձեր նվիրական երդումն Հենրիին.
Ի սպառ սանձել թագաժառանգին
Կամ նրան հանձնել մեր տերությունը:

ԲԵԴՖՈՐԴ

Այո՛, հիշում եմ: Դե՛հ, մնա՛ք բարյավ,
Գնամ-պատրաստեմ իմ զենքն ու զրահն:

Գնում է:

ԳԼՈՍՏԵՐ

Անապարանքով ես պիտի փութամ դեպի Թաուեր,
Որ հրետանին ու պաշարն ամբողջ ստույգ զննեմ
Եվ, այնուհետև, ջահել Հենրիին հռչակեմ արքա:

Գնում է:

ԷՔՍԵՏԵՐ

Էլթեմ կգնամ, որտեղ ապրում է մեր ջահել արքան,
Լինելով նրա կուսակալն հատուկ՝
Կգտնեմ նրա ապահովության լավագույն միջոց:

Գնում է:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ամեն ոք ունի իր տեղն ու գործը,
Ես ավելորդ եմ, ինձ համար կարծես ոչինչ չմնաց,
Բայց ես չեմ մնա Էլթեմից հեռու.
Ես միտք եմ դրել թաքուն փախցնել արքային ջահել
Եվ մեր տերության ղեկին մոտ կանգնել:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆրանսիա: Օռլեանի առաջ:

Շեփորներ: Թմբուկների հնչյունների ներքո մտնում են Շառլը, Ալանսոնը, Ռենեն ու զինվորներ:

ՇԱՌԼ

1 Մինչև այս օրը դեռևս հայտնի չէ Մարս մոլորակի շարժումը ստույգ

Ո՛չ երկրի վրա, ո՛չ էլ երկնքում,
Վերջերս այն շողաց Անգլիո կողմերում,
Այժմ ժպտում է մեզ՝ հաղթողներիս:
Դեռ կան քաղաքնե՞ր՝ փոքր-ինչ կարևոր, որ չենք նվաճել
Մենք մեր իսկ կամքով մնում ենք այստեղ՝ Օռլեանի տակ,
Մինչ անգլիացիք ուրվականի պես գունատ ու դժգույն,
Վհատյալ կերպով պաշարում են մեզ ամիսը մեկ ժամ:

ԱԼԱՆՍՈՆ

Նրանք ապուրի ու պարարտ մսի կարիք են զգում,
Նրանց ջրու պես պետք է կերակրել՝ վզից կախ տալով պարկը վարսակի,
Այլապես թրջված մկների նման կնայեն խղճուկ:

ՌԵՆԵ

Կքշենք նրանց: Ինչու ձեռնունայն սպասել այստեղ,
Ումից վախենալ՝ Տոլբոտն է գերված,
Մնացել է լոկ խելքը թռցրած կոմս Սոլսբերին,
Թող ինչպես կուզե փրփուրը բերնին՝ իր մաղձը թափի,
Ո՛չ դրամ ունի, ո՛չ էլ զինվորներ:

ՇԱՌԼ

Հնչեցրե՛ք տագնապ, պետք է հարձակվենք մենք նրանց վրա՝
Հանուն մեր անօգ ֆրանսիացիների,
Պատրաստ եմ ներել ինձ մահ պարգևող ամեն մի մարդու,
Եթե ինձ տեսնի փախուստի ճամփին:

Գնում են:

Տագնապ: Հարձակում: Վերադառնում են նահանջելով: Մտնում են
Շառլը, Ալանսոնը, Ռենեն և ուրիշներ:

ՇԱՌԼ

Ա՜խ, ո՞վ էր տեսել նման բան կյանքում.
Իմ մարդիկ շուն են, վախկոտ, սրիկա: Ես չէի փախչի,
Եթե այդ մարդիկ թշնամու բերանն ինձ չգցեին:

ՌԵՆԵ

Սոլսբերին հանդուգն, անվախ մարտիկ է,
Կռվում է կյանքից հոգնած մարդու պես,
Մյուս իշխանները՝ քաղցած ու վայրի առյուծների պես
Վրա են տալիս, հոշոտում են մեզ, հանց իրենց որսը:

Հենրի Վեցերորդ

Գործ՝ Ջեյլարդի

Ժաննա դ'Արկ

Գործ՝ Ա. դե Մարսինի

ԱԼԱՆՍՈՆ

Մեր հայրենակից Ֆրուասարը հիշատակում է,
Որ Անգլիան երկնեց միայն ռոլանդներ ու օլիվերներ
Էդուարդ Երրորդ արքայի օրոք:
Եվ սա դառնում է ավելի ստույգ,
Քանզի կռվի է նետում սամսոններ ու գողիաթներ,
Մեկը՝ տասի դեմ: Վտի՛տ սրիկանե՛ր, ով պիտի խորհեր,
Որ նրանք այսքա՞ն քաջ են ու խիզախ:

ՇԱՌԼ

Քաղաքը թողնենք: Այդ թեթևամիտ ավազակները
Սաստկացող սովից խիստ կգազազեն.
Ճանաչում եմ ես նրանց շատ վաղուց՝ սուր ատամներով
Կքանդեն պատեր, բայց չեն հրաժարվի շրջապատումից:

ՌԵՆԵ

Կարծես թե նրանց ձեռքերն է լարել
Ինչ-որ հատուկ սարք կամ մի զսպանակ.
Որպեսզի նրանք ժամացույցի պես հարվածեն անդուլ,
Այլապես նրանք չէին կարենա ծառանալ մեր դեմ:
Շուտով ես նրանց մենակ կթողնեմ:

ԱԼԱՆՍՈՆ

Թող այդպես լինի:

Մտնում է Օռլեանի Բաստարդը:

ԲԱՍՏԱՐԴ

Որտե՞ղ է, ասեք, թագաժառանգը: Ես լուր եմ բերել:

ՇԱՌԼ

Ողջո՜ւյն ձեզ, Բաստա՛րդ, երի՛ցս ողջույն:

ԲԱՍՏԱՐԴ

Կարծեմ. տխուր եք, նույնիսկ՝ գունատված:
Մի՞թե ձեր վերջին պարտությունն այդպես անարգում է ձեզ,
Պետք չէ վշտանալ. օգնությունն արդեն ձեր ձեռքի տակ է.
Ինձ հետ կա մի կույս, ում շնորհել է երկինքն ի վերուստ՝
Վերջ տալու տանջող այս պաշարմանը,
Դուրս վռնդելով մեր հայրենիքից թշնամուն անարգ:
Նրա խորամիտ, գուշակող ոգին

Ուժեղ է Հռովմի ինն սիբիլներից։
Գուշակում է նա, թե ինչ է եղել, ինչ է լինելու,
Ասեք, կարո՞ղ եմ ներս բերել նրան։
Հավատացեք ինձ՝ խոսքերս են ստույգ և ճշմարտացի։

ՇԱՌԼ

Գնա՛ ներս կանչիր։

Գնում է Բաստարդը։

Նախ՝ պետք է փորձել նրա շնորհքը։
Ռենե, եկ, կանգնիր դոֆինի տեղը,
Նայիր նրան խիստ և հպարտորեն հարցափորձ արա.
Այս ձևով նրա շնորհքը կստուգենք։

Առանձնանում է։

Մտնում են Բաստարդը և Ժաննա դ'Արկը։

ՌԵՆԵ

Ով կույս գեղանի, ուզո՞ւմ ես մեզ մոտ հրաշքներ գործել։

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Ռենե, ուզում ես ա՞յդ ձևով խաբել,
Որտե՞ղ է, ասա՛ թագաժառանգը։ Դո՛ւրս եկ, մոտեցի՛ր,
Ճանաչում եմ քեզ, թեև չեմ տեսել,
Պետք չէ շփոթվել, ամեն ինչ գիտեմ,
Ուզում եմ քեզ հետ առանձին խոսել,
Ազնիվ իշխաններ, մեզ թողեք մենակ մի քանի վայրկյան։

ՌԵՆԵ

Առաջին գործը համարձակ է խիստ։

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Ես մի հասարակ աղջիկ եմ հովվի,
Միտքս վարժված չէ ոչ մի գիտության,
Սակայն երկինքը, մեր կույս Մարիամը հաճեցավ մի օր
Շողալ անարգված իմ բախտի վրա։
Մի անգամ դաշտում, երբ նայում էի մատղաշ գառներիս,
Այտերս այրում արևի շողքով,
Հանկարծ հայտնվեց Աստվածամայրը վեհափառ տեսքով,
Եվ ինձ պատվիրեց՝ թողնել հովվուհու ցույցը լեռներում,
Փրկել հայրենիքս այս աղետներից,
Նաև խոստացավ՝ լինել ինձ նեցուկ։

Երբ իր կատարյալ փառքով հայտնվեց՝
Ես տգեղագեմ, սև աղջիկ էի:
Երկնի մաքրափայլ շողերն արձակեց իմ դեմքի վրա,
Եվ գեղեցկությամբ ինձ հավերժ օրհնեց:
Տուր հնարավոր հարցերն ամենայն՝ կպատասխանեմ:
Երբ հանդգնես իմ քաջությունը փորձել կռվի մեջ,
Կտեսնես, որ ես գերազանցում եմ սեռն իմ կանացի:
Դու ինձ վստահիր, և քեզ կժպտա երջանկությունը,
Երբ քո զորքին ես տանեմ ի մարտ:

ՇԱՌԼ

Հիանում եմ ես քո քաջ ոգով,
Տուր ինձ ապացույց քո խիզախության.
Ե՛կ, մենամարտենք այստեղ իրար հետ,
Եվ երբ հաղթես՝ խոսքերդ են ճիշտ,
Այլապես բնավ քեզ չեմ հավատա:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Պատրաստ եմ, ահա իմ սուրսայր սուրը,
Յուրաքանչյուր շեղբն ունի հինգ շուշան,
Սուրս Թուրենում սուրբ Կատարինի գերեզմանատան
Հին երկաթների միջից եմ գտել:

ՇԱՌԼ

Եկ, մենամարտենք, աստված պահապան,
Ես չեմ սարսափում կնոջ հարվածից:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Իսկ ես քանի կամ՝ չեմ փախչի երբեք ոչ մի այր մարդուց:

Մենամարտում են: Ժաննա դ'Արկը հաղթում է:

ՇԱՌԼ

Կա՛ց. սուրդ վայր դիր. դու ամազոնի ցեղից ես սերվել.
Բայց Դեբովրայի սրով ես կռվում:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ավա՜ղ, ես քույլ եմ, ինձ ներցուկ եղավ Աստվածամայրը:

ՇԱՌԼ

Ով էլ քեզ օգնի, դարձիր ինձ սատար,
Իմ սիրտը լցվեց այրվող տենչանքով,

Դու շղթայեցիր իմ ձեռքն ու ոտը,
Սքանչելի՛ կույս. եթե քեզ մարդիկ այսպես են կոչում.
Թող ոչ թե տերդ, այլ ծառադ լինեմ,
Քեզ Ֆրանսիայի թագաժառանգն է այսպես աղերսում:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ես մերժելու եմ սիրո ամեն ձեւ,
Իմ ուխտն է՝ փառել երկինքն աստղակեզ,
Երբ դուրս վռնդեմ զորքը թշնամյաց՝
Թող ինձ հատուցի արքան ողորմած:

ՇԱՌԼ

Քաղցրությամբ նայիր գետնած ստրուկիդ:

ՌԵՆԵ

Տերն իմ չափազանց երկա՞ր է խոսում:

ԱԼԱՆՍՈՆ

Ջանում է, անշուշտ, կորզել կնոջից գաղտնիքներն ամեն,
Այլապես զրույցն այսքան չէր տևի:

ՌԵՆԵ

Արդյոք ընդմիջե՞նք, չափը չի՞ անցնում:

ԱԼԱՆՍՈՆ

Նա գիտե ավելի, քան թե ինքներս:
Օ՜, կանայք՝ դյութիչ սատանաներ են:

ՌԵՆԵ

(Շառլին). Ի՞նչ որոշեցիք. թողնե՞լ քաղաքը թշնամուն, թե՞ ոչ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ո՛չ, ո՛չ: Ուխտազանց թերահավատնե՛ր,
Կռվեք մինչև վերջ, ես ձեր սատարն եմ:

ՇԱՌԼ

Ես հաստատում եմ նրա խոսքերը. կռվե՛նք մինչև վերջ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Բախտն ինձ սահմանեց, որ պիտի դառնամ Անգլիո խարազան:
Այս գիշեր պետք է քաղաքն ազատեմ շրջապատումից:
Երբ ես մասնակցեմ այս կռիվներին՝ դուք պիտի տեսնեք

Նրշանիկ օրեր և Մարտինոսի ամառն հոգերով:
Փառքն ասես լինի ծովի գիրկն ընկած ջրի շրջանակ,
Որ ծավալվելով անվերջ, անդադար՝ ցնդում է անհետ:
Հենրիի մահով ցնդեց անգլիացու այն շրջանակը,
Որ պարփակում էր իր մեջ բյուր փառքեր:
Արդ, ես նման եմ այն հպարտ նավին,
Որ միանգամից տարավ Կեսարին ու նրա բախտը:

ՇԱՌԼ

Մուհամեդն, արդյոք, չէ՞ր ոգեշնչվում իր աղավնիով,
Իսկ դու՝ արծիվով:
Ո՛չ, նման չեն քեզ սուրբ Փիլիպոսի դուստրերը չքնաղ,
Ո՛չ Կոստանդնու մայրը՝ Հեղինեն:
Դու Վեներայի շողշողուն աստղիկ՝ ի վերա Երկրի,
Ինչո՞վ կարող եմ ես քեզ մեծարել:

ԱԼԱՆՍՈՆ

Պետք չէ հապաղել. թող պաշարումից քաղաքն ազատենք:

ՌԵՆԵ

Ամեն ինչ արա, միայն թե փրկիր մեր պատիվն. ո՛վ կո՛յս,
Դու կհավերժանաս, եթե Օռլեանից դուրս քշես նրանց:

ՇԱՌԼ

Հիմա կփորձենք, ինձ հետևեցեք,
Թե խաբի՝ ուրեմն չկա մարգարե:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Լոնդոն: Թաուերի առաջ:

Մտնում են դուքս Գլոստերը և նրա կապտազգեստ սպասավորները:

ԳԼՈՍՏԵՐ

Եկա, դիտելու Թաուերն այսօր,
Ինչ մեռավ Հենրին, երկյուղ եմ կրում հափշտակումից:
Որտե՞ղ են չքվել այս պահակները: Ինչո՞ւ տեղում չեն:
Բացե՛ք դարպասը: Գլոստերն է կանչում:

Սպասավորները հարվածում են:

Ա ՊԱՀԱԿ

(Բեմի խորքից). Ո՞վ է հարվածում այսպես տիրաբար:

Ա ՍՊԱՍԱՎՈՐ

Ազնվատոհմիկ դուքս Գլոստերը:

Բ ՊԱՀԱԿ

(Բեմի խորքից). Ով էլ որ լինեք, ներս չենք թողնի ձեզ:

Ա ՍՊԱՍԱՎՈՐ

Սրիկա՛. այսպիսի՞ պատասխան կտան խնամակալին:

Ա ՊԱՀԱԿ

(Բեմի խորքից). Աստված նրա հետ. այսպես ենք նրան մենք պատասխանում:
Մենք հրամանն ենք միայն կատարում:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՞վ է հրամայել: Ինձանից բացի ոչ ոք չի կարող ձեզ հրամայել:
Ես եմ տերության խնամակալը:
Ջարդե՛ք դարպասը, ես թույլ եմ տալիս.
Մի՞թե կթողնեմ, որ ձիապաններն այսպես մեզ ծաղրեն:

Գլոստերի սպասավորները հարձակվում են Թաուերի դարպասի վրա:
Վուդվիլը՝ բերդապետը, խոսում է ներսից:

ՎՈՒԴՎԻԼ

Ի՞նչ աղմուկ է սա: Դավաճանությո՞ւն:

ԳԼՈՍՏԵՐ

Ձեր ձա՞յնն եմ լսում, բերդապե՛տ, արդյոք:
Բացե՛ք դարպասը, դուքս Գլոստերը պետք է ներս մտնի:

ՎՈՒԴՎԻԼ

Մի քիչ համբերեք, ազնիվ Գլոստեր,
Չեմ կարող բանալ՝ արգելել է ինձ լորդ կարդինալը,
Նա ինձ տվել է հատուկ հրաման,
Որ ձեզ ու ձերոնց չթողնեմ այստեղ:

ԳԼՈՍՏԵՐ

Փոքրոգի Վուդվիլ, մի՞թե ինձանից բարձր է այդ մարդը՝
Հանդուգն ու գոռոզ եպիսկոպոսը,
Ում չէր հանդուրժում մեր վեհապետը՝ հանգուցյալ Հենրին:

Դուք բարեկամ չեք ո՛չ թագավորին, ո՛չ էլ աստծուն.
Բացե՛ք դարպասը, թե չէ ձեր տեղից կթռչեք իսկույն:

ՍՊԱՍԱՎՈՐ

Բացե՛ք դարպասը Գլոստերի առաջ,
Եթե հապաղեք՝ կջարդենք ուժով:

Մտնում են Ուինչեստերի եպիսկոպոսը և նրա սպասավորները՝ հագած մուգ-դարչնագույն զգեստ:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ինչի՞ ես ձգտում, փառամոլ Հեմֆրի:

ԳԼՈՍՏԵՐ

Ածիլվա՛ծ տերտե՛ր, դո՞ւ ես պատվիրել, որ ինձ ներս չառնեն:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այո՛, իմացիր, նենգամտորեն պետություն շորթող,
Եվ ոչ թե երկրի կամ թե մեր տիրոջ դու խնամակալ:

ԳԼՈՍՏԵՐ

Հետ կանգնիր իսկույն, հայտնի դավադիր,
Դու չէի՞ր արդյոք, որ փորձում էիր տիրոջն սպանել,
Դու չէի՞ր ներում անառակ կանանց մեղքերը բոլոր,
Քեզ պիտի շուռ տամ կարդինալական լայն գլխարկիդ մեջ,
Թե շարունակես լկտիությունդ:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Հետ կանգնի՛ր իսկույն: Մի քայլ չեմ անի.
Թող այս վայրը քեզ դառնա Դամասկոս և քեզ անիծե Կայենն արնախում,
Թե քո եղբորը՝ անմեղ Աբելին, սպանել կամիս:

ԳԼՈՍՏԵՐ

Քեզ չեմ սպանի, բայց ետ կքշեմ,
Քեզ փաթաթելով քո ծիրանավառ հագուստների մեջ,
Դուրս կշպրտեմ այստեղից, ինչպես մանկան կնքաշոր:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Փորձիր՝ հանդգնել, կպետեմ ես քո ցանցառ մորուքը:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ: Հանդգնո՞ւմ ես ձեռք տալ մորուքիս:
Հե՜յ, մարդի՛կ, սրեր, թեև այս տեղը վայր է արքայան,

Կապտազգեստնե՛ր, զարկե՛ք անխնա դարչնագույններին:
Տիրացո՛ւ, զգո՜ւյշ քո պիղծ մորուքից,
Կամենում եմ ես մորուքդ պոկել ու քեզ ապտակել
Եվ ոտքերիս տակ կարդինալական գլխարկդ նետել.
Թեպետ քեն չունեմ ո՛չ եկեղեցու, ո՛չ պապի հանդեպ,
Ծիքդ բռնած քեզ քարշ եմ տալու:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գլոստեր, դու պապին պատասխան կտաս:

ԳԼՈՍՏԵՐ

54 Ուինչեստերի դա՞գ: Հե՜յ, պարան բերեք,
Դուրս քշեք նրանց: Ինչո՞ւ եք թողնում սրանց այս վայրում:
Կորի՛ր աչքիցս: Գայլ՝ գառան մորթի գցած ուսերիդ,
Դո՛ւրս դարչնագույններ, դո՛ւրս, ծիրանակիր դու փարիսեցի:

Գլոստերի սպասավորները ետ են մղում եպիսկոպոսի ծառաներին: Ժխորի մեջ հայտնվում են Լոնդոնի քաղաքագլուխը և նրա ոստիկանները:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Վա՜յ ձեզ, լինելով տոհմիկ իշխաններ,
Դուք ամոթաբար անդորրն եք հերքում:

ԳԼՈՍՏԵՐ

Լռի՛ր, չգիտես վիրավորանքս:
Ահա Բոֆորը՝ թշնամին աստծո և թագավորի,
Ուզում էր ուժով Թաուերն առնել:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գլոստերն ահա՝ քաղաքաբնակ մարդկանց թշնամին,
Մա՛րդ, որ շարունակ կռիվ է տենչում, ո՛չ խաղաղություն:
Ձեր դատարկ քսակն հարկերով ճզմում:
Ջանում է, ավա՜ղ, հավատն սպանել,
Քանզի հորջորջվեց երկրի հովանի.
Կամենում է նա հենց Թաուերից զենքեր գողանալ
Եվ, տապալելով թագաժառանգին՝ պսակվել արքա:

ԳԼՈՍՏԵՐ

Բառերի տեղակ քեզ հարվածներով պատասխան կտամ:

Նորից կռվում են:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Արդ, ինձ այլևս ոչինչ չի մնում այս ազմուկի մեջ,
Քան հնչեցնել օրենքը տիրոջ:
Մոտ ե՛կ, ոստիկան. որքան կարող ես՝ կարդա բարձրաձայն:

ՈՍՏԻԿԱՆ

(Բարձրաձայն) Ի լուր ամենայն դասի պատկանող մարդոց, որ զենքը ձեռքերին հավաքվել են այստեղ՝ խանգարելու աստծո ու թագավորի խաղաղությունը, մենք Նորին մեծության անունից հայտարարում և հրամայում ենք՝ հեռանալ ձեր բնակատեղիները: Հետ այսու արգելում ենք մահվան սպառնալիքով կրել կամ գործածել զենք, դաշույն ու սուսեր:

ԳԼՈՍՏԵՐ

Կարդինալ, օրենքին երբեք դրժող չեմ,
Բայց երբ հանդիպենք՝ մեր հոգիները մենք պիտի բանանք:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Գլոստեր, իմացիր. պիտի հանդիպենք և սա քեզ վրա թանկ է նստելու.
Սրտիդ արյունով այսօրվա համար պիտի հատուցես:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Թե չհեռանաք՝ պահակախմբին կկանչեմ իսկույն.
Այս կարդինալը գոռոզ է թվում, քան թե սատանան:

ԳԼՈՍՏԵՐ

Քաղաքագլուխ, գործդ արեցիր, դե՜հ, մնա՜ս բարով:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Զզվելի Գլոստեր. գլուխդ պահիր,
Միտք ունեմ ես այն շուտով թռցնել:

Գլոստերն ու Ուինչեստերի եպիսկոպոսը իրենց սպասավորների հետ
գնում են տարբեր ուղղություններով:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Թող փողոցն անցնի, հետո կգնանք:
Ողորմած աստված, ի՜նչ կատաղի են այս իշխանները,
Չորս տասնյակ տարիս անցավ, բարեկա՛մ.
Սակայն չեմ կռվել և ոչ մի անգամ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Ֆրանսիա: Օռլեանի առաջ:

Բարձրանում են պարիսպների վրա Օռլեանի զինագործների վարպետը և նրա որդին:

ՕՌԼԵԱՆԻ ԶԻՆԱԳՈՐԾ

Զավա՛կս, գիտե՞ս, որ պաշարված է Օռլեանն հիմա,
Եվ ինչ պատճառով անգլիացիք առան արվարձանները:

ՈՐԴԻՆ

Հայրիկ, ես գիտեմ, հաճախ եմ նրանց վրա կրակել,
Բայց, դժբախտաբար, վրիպել եմ միշտ:

ՕՌԼԵԱՆԻ ԶԻՆԱԳՈՐԾ

Զավա՛կս, հիմա պետք չէ վրիպել, լսի՛ր քո հորը,
Ես եմ քաղաքի զինագործն հիմա.
Մի բանով պետք է շնորհքս երևա:
Թագաժառանգի դիտազորները ինձ իմաց տվին,
Որ անգլիացիք արվարձաններում խիստ ամրանալով,
Գաղտնադիտում են այն աշտարակի ճաղերի միջից,
Ամբողջ քաղաքը առած ափի մեջ: Եվ նրանք գիտեն՝
Հրաձգությամբ կամ գրոհներով մեզ նեղը գցել:
Բայց ես փակել եմ այս խոշընդոտը՝
Ուղղելով այնտեղ մեր թնդանոթը,
Ես երեք գիշեր հսկել եմ նրանց ու հետամտել,
Այժմ դու հսկիր, հոգնել եմ սաստիկ,
Ու երբ հանկարծ մի բան նկատես, վա՛զ տուր, ինձ ասա՛,
Ինձ բերդապետի տանը կգտնես:

Գնում է:

ՈՐԴԻՆ

Ապահով եղիր, վստահիր որդուդ,
Նկատելիս էլ՝ հոգս չեմ պատճառի:

Աշտարակի վրա երևում են Սոլսբերին և Տոլբոտը, սըր Վիլյամ Գլանսդելը, սըր Թոմաս Գարգրեյը և ուրիշներ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Տոլբո՛տ, իմ արև՜, իմ ուրախությո՛ւն, դու վերադարձա՞ր,
Ինչպե՞ս վարվեցին քեզ հետ, քաջ իշխան,

Ի՞նչ ձևով, կյա՛նք իմ, դու ազատվեցիր,
Խնդրում եմ, պատմիր այս աշտարակի բարձրության վրա.

ՏԱԼԲՈՏ

Դուքս Բեդֆորդն ուներ գերված մի իշխան,
Քաջի անունն էր՝ Փոնտոն դը Սանտրայլ:
Ինձ բաց թողեցին՝ փոխանակելով այս իշխանի հետ:
Սակայն մի անգամ նրանք ցանկացան, ստորացնելով՝
Ինձ փոխանակել մի զինվորի հետ,
Բայց անգոսնելով՝ մահ պահանջեցի,
Որ ամոթալի վիճակից դուրս գամ:
Ի վերջո, նրանք իմ ուզած ձևով ինձ ազատեցին:
Բայց մատնիչ Ֆաստոլֆն իմ սիրտն է խոցում,
Ես կսպանեի այդ դավաճանին իմ բռունցքներով,
Եթե նա հիմա իմ ձեռքը ընկներ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Բայց դու չես ասում, թե նրանք քեզ հետ ինչպես վարվեցին:

ՏԱԼԲՈՏ

Օ՜, թշնամաբար ինձ կշտամբեցին
Եվ այպանելով՝ զազրախոսեցին.
Ինձ քարշ տվեցին նրանք շուկայի հրապարակը՝
Ի զվարճություն ողջ ժողովրդի:
«Ահա Ֆրանսիայի սարսափն,—ասացին,—
Խրտվիլակ, որով երեխաներին մենք վախեցնում ենք»:
Բայց պահակների ձեռքից ես փախա,
Իմ եղունգներով գետնից պոկեցի վիթխարի քարեր,
Որպեսզի նետեմ իմ ամոթանքի հանդիսատեսին:
Նրանք իմ խոժոռ հայացքից փախան,
Մահվան երկյուղից՝ ոչ ոք քաջություն չունեցավ մոտ գալ:
Պատերն երկաթյա չէին խոստանում ապահովություն,
Եվ այնքան մեծ էր սարսափն իմ անվան,
Որ կարծում էին, թե ես կջարդեմ պողպատ-ձողերը
Եվ գրիվ կտամ ադամանդակուռ պատերը բանտի:
Ընտրյալ զինվորներ կարգեցին վրաս,
Նրանք աչալուրջ հսկում էին ինձ,
Եվ եթե հանկարծ ես բարձրանայի իմ չոր անկողնուց,
Ա՜խ, պատրաստ էին սիրտս խոցելու:

ՍՈԼՍԲԵՐԻ

Վիշտ է պատճառում ինձ տառապանքդ,
Բայց, ինչպես հարկն է վրեժդ կառնենք,
Արդ՝ Օռլեանում ժամ է ընթրիքի:
Ճաղերի միջով կարող եմ համրել բոլորին մեկ-մեկ,
Տեսնել, ինչպես են նրանք ամրանում,
Ե՛կ, նայիր, գուցե հանույք պատճառի քեզ տեսարանը:
Սըր Թոմաս Գարգրև, սըր Վիլյամ Գլանսդել,
Խնդրում եմ հայտնեք ձեր կարծիքները,
Ո՛ր կողմի վրա մեր մարտկոցն ուղղենք:

ԳԱՐԳՐԵՎ

Կարծում եմ, լավ է, դարպասն հյուսիսի,
Բոլոր իշխաններն այնտեղ են կանգնած:

ԳԼԱՆՍԴԵԼ

Իսկ իմ կարծիքով՝ վատ չէ կամրջի փոքրիկ ամրոցը:

ՏՈԼԲՈՏ

Ինչպես տեսնում եմ, պետք է սովամահ անել քաղաքը,
Կամ խեղճացնել թեթև մարտերով:

Կրակոց՝ քաղաքից: Սոլսբերին ու սըր Թոմաս Գարգրևն ընկնում են:

ՍՈԼՍԲԵՐԻ

Օ՜, աստվա՛ծ, գթա՛ մեղավորներիս:

ԳԱՐԳՐԵՎ

Օ՜, աստվա՛ծ, գթա՛ ինձ՝ տառապյալիս:

ՏՈԼԲՈՏ

Ի՞նչ պատահմունք էր, որ հանկարծ գցեց մեզ փորձանքի մեջ:
Խոսի՛ր, Սոլսբերի՛, գեթ մի բառ ասա՛, եթե կարող ես.
Քեզ ի՞նչ պատահեց, դու զինվորների մաքուր հայելի.
Արկը տարել է քո աչքի մեկը, ջարդել քո այտը.
Ձեզ հավերժ նզո՜վք, արնոտ աշտարակ և ձեռք չարագույժ.
Որ պատճառ դարձաք այս աղետալի ողբերգությանը:
Տասներեք մարտ է Սոլսբերին շահել.
Հենրի Հինգերորդն առաջին անգամ նրանից մարտի արվեստն ուսանեց.
Մինչ հնչում էին և՛ փող, և՛ թմբուկ,
Շամփրում էր նրա սուրն ռազմի դաշտում:

Դեռ ապրո՞ւմ ես դու. թեև ուժ չունես խոսելու համար.
Բայց քո մեկ աչքով կարող ես նայել ու Երկնից խնդրել ապաշխարություն.
Այսպես արևն է իր միակ աչքով նայում աշխարհին:
Երկի՜նք. մի՛ գթա դու այսուհետև ոչ մի կալկի.
Թե Սոլսբերին կարոտ է մնում ձեռքիդ գթության:
Տարեք այստեղից նրա մարմինը, ես պիտի թաղեմ:
Սըր Թոմաս Գարգրև, դու շնչո՞ւմ ես դեռ,
Խոսիր դու ինձ հետ: Ո՛չ, ո՛չ, ինձ նայի՜ր:
Սոլսբերի, ոգիդ թող քաջալերվի այն սփոփանքով,
Որ արդ չես մեռնում...
Նա ժպտում է ինձ ու ձեռքով անում,
Կարծես ասում է. «Երբ ես կմեռնեմ. հիշիր. բարեկա՛մ,
Պետք է թշնամուց վրեժս լուծես»:
Պլանտագենետ, վրեժդ կառնեմ և Ներոնի պես
Քնարն իմ ձեռքին՝ ես պիտի հրճվեմ այրվող քաղաքով.
Ֆրանսիան պետք է անդադար դողա լոկ իմ անունից:

Տագնապ: Որոտ ու կայծակ:

Ի՞նչ աղմուկ է սա, ինչո՞ւ է հուզվել երկինքը այսպես,
Ուսկից է գալիս այս ահազանգը և այս աղմուկը:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տեր իմ, ֆրանսիացիք ուժ են հավաքել:
Արքայորդու հետ մի կույս Հովհաննա,
Որ հայտնվել է որպես մարգարե,
Փորձում է ուժով նեղել քաղաքի շրջապատումը:

Սոլսբերին մի փոքր բարձրանում է, ու հառաչում:

ՏԱԼԲՈՏ

Լսիր, թե ինչպես լուռ հառաչելով՝ մահանում է նա.
Սիրտն է ծվատում, որ չենք կարենում վրեժը լուծել:
Ֆրանսիացիներ, ես պիտի դառնամ նոր Սոլսբերի.
Աղջիկ կամ պոռնիկ. դոֆին կամ դելֆին,
Ես իմ նժույգի սմբակների տակ պետք է տրորեմ ձեր սիրտն անխնա
Եվ խառնացրիվ ձեր ուղեղներից ճահիճ կշինեմ:
Տարեք իշխանին իր վրանն իսկույն,
Տեսնենք, թե հիմա ի՞նչ են հանդգնում վախկոտ ֆրանսիացիք:

Տագնապ: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նույն վայրը:

Նորից տագնապ: Տոլբոտը հետապնդելով քշում է թագաժառանգին:
Ներս է մտնում Ժաննա դ'Արկը, որ. հետապնդելով քշում է անգլիացիներին:
Նորից գալիս է Տոլբոտը:

ՏՈԼԲՈՏ

Ո՞ւր է իմ ուժը, իմ զորությունը և քաջությունը.
Մեր ջոկատները նահանջում են արդ: Նրանց չեմ կարող այլևս պահել:
Զրահը հագին՝ հետապնդում է մեր զորքին մի կին.
Գալիս է ահա:

Մտնում է Ժաննա դ'Արկը:

Ուզում եմ քեզ հետ ուժերս չափել.
Սատանա՞ ես դու, թե՞ սատանի կին, սատանան պետք է քո միջից հանեմ,
Արյուն եմ ուզում հեղել քեզանից:
Ում ծառայում ես՝ նրան էլ կտաս քո կախարդ հոգին:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ինձ է շնորհված՝ համբավդ գետնել:

Մենամարտում են:

ՏՈԼԲՈՏ

Երկի՛նք, կարո՞ղ ես քո հաղթանակը զիջել դժոխքին,
Թող կուրծքս պատռի իմ արիության ուժեղ պրկումը.
Եվ թող ձեռքերն իմ զատվեն ուսերից,
Ես պիտի պատժեմ գոռոզ պոռնիկին:

Մենամարտում են:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Արդ, մնա՛ս բարով. դեռ չի մոտեցել քո ժամը, Տոլբոտ.
Ես պետք է պարեն տանեմ Օռլեան:

Կարճ տագնապայի ազդանշան: Խոսելով՝ մտնում է քաղաք զինվորների հետ:

Բռնի՛ր՝ կարող ես: Քո ուժն եմ ծաղրում:
Գնա՛, սփոփիր քո հյուծված մարդկանց,
Օգնիր Սոլսբերուն, որ թելադրի հետմահու կամքը,
Մերն է այս օրը և նման օրեր շատ են լինելու

Գնում է:

ՏՈԼԲՈՏ

Մտքերս են դառնում, ինչպես բրուտի պտտվող անիվ.
Ես չեմ հասկանում որտե՞ղ է սիրտն իմ և ի՞նչ եմ անում,
21 Ոչ թե զորությամբ, այլ սարսափներով Հաննիբալի պես
Քշում տանում է մեր զոկատները, ինչպես կամենա:
Այսպես քշում են ծխի ծածկույթով մեղվին փեթակից,
Կամ թե անհանո գարշահոտությամբ աղավնուն՝ բնից:
Կատաղությունից նրանք մոլեգնած՝ մեզ կոչում էին անգլիական գամփռ.
Արդ, վնգստալով շան լակոտի պես փախչում ենք հեռու.

Կարճատև տագնապ:

Հայրենակիցնե՛ր, նորից ռազմի՜ դաշտ,
Կամ պիտի պոկենք մեր առյուծները զինանշանից:
Թե հրաժարվենք ձեր հայրենիքից
Եվ փոխարինենք առյուծն ոչխարով,
Նույնիսկ ոչխարը չի փախչի գայլից, եզն՝ ընձառյուծից,
Ինչպես դուք՝ վաղուց արդեն ենթակա ձեր ստրուկներից:

Տագնապ: Նորից ընդհարում:

Այդպես չի լինի: Դարձեք դիրքերը.
Դուք հաշտվեցիք կոմս Սոլսբերիի անզուր մահվան հետ,
Զի ոչ ոք ձեզնից նրա վրեժը չառավ հարվածով:
Կույսը գողունի մտավ Օռլեան,
Ի հեճուկս մեզ՝ մենք անզոր եղանք նրան պահելու:
Ինչո՞ւ, Սոլսբերի, քեզ հետ չմեռա,
Ես ո՞ւր թաքցնեմ իմ խեղճ գլուխը այս ամոթանքից:

Գնում է Տոլբոտը: Տագնապ, նահանջ: Շեփորներ:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Նույն վայրը:

Բարձրանում են պարիսպների վրա Ժաննա դ՚Արկը, Շառլը, Ռենեն, Ալանսոնը և զինվորներ.

ԺԱՆՆԱ Դ՚ԱՐԿ

Դե՜հ, բարձրացրեք մեր դրոշակները պատերի վրա,
Զի Օռլեանից փախան անգլիացիք.
Եվ Ժաննան եղավ տերը իր խոսքի:

ՇԱՌԼ

4 Ով աստվածայի՛ն դու արարչությո՛ւն, դո՛ւստր Աստրեայի,
Ինչպե՞ս մեծարեմ քեզ այս փառահեղ հաղթության համար:
6 Քո խոստումները վառ Ադոնիսի այգիների պես
Փթթում են այսօր, իսկ հաջորդ ավուր՝ բերքից կռանում:
Ցնծա՛, Ֆրանսիա. քո փառավորյալ կույս մարգարեով:
Մեզ վերադարձրեց Օռլեանն ահա,
Այսչափ օրհնյալ օր չէր տեսել երբեք մեր տերությունը:

ՌԵՆԵ

Ինչո՞ւ չեն զարկում քաղաքում զանգեր,
Ով արքայորդի՛, պատվիրիր նորից,
Որ քաղաքացիք անզուսպ ցնծության խարույկներ վառեն,
Բաց փողոցներում խնջույքներ սարքեն խնդության համար,
Որ մեզ շնորհեց բարեգութ աստված:

ԱԼԱՆՍՈՆ

Թո՛ղ ուրախությունն ու բերկրանքն հորդեն ողջ Ֆրանսիայով.
Երբ նա լուր առնի, թե ինչպես էին կռվում իր որդիք:

ՇԱՌԼ

Ո՛չ թե մենք, այլ նա՝ Ժաննան, վաստակեց այս հաղթանակը,
Ուստի նրա հետ ես կամենում եմ թագս բաժանել:
Թող իմ տերության ամեն աբեղա, ամեն վանական
Սուրբ հանդեսներում Ժաննային մաղթի հավիտենություն:
22 Ավելի շքեղ, քան Ռոդոպեի բուրգը վիթխարի,
Ես մի հուշարձան պիտի կանգնեցնեմ Ժաննայի պատվին:
Երբ նա չի լինի՝ նրա աճյունը պետք է ամփոփի
Ավելի ազնիվ, թանկարժեք սափոր,
26 Քան թե Դարեհի ակնազարդ տուփը,
Եվ Ֆրանսիայում բյուր թագավորաց աչքերի առաջ՝
Տոնախմբության շքեղ օրերին թող նա շողշողա:
29 Մենք էլ չենք կանչի սուրբ Դիոնիսին,
Մեր երկրի սուրբը կլինի Ժաննան:
Դե՛հ, մտնենք քաղաք և արքայաբար նստենք խնջույքի
Եվ հաղթանակի այս ոսկյա օրը տոնենք փառավոր:

Շեփորներ: Գնում են:



Սոլսբերիի տաճարը. փորագրություն՝ Վիլյամ Բյոռնսի

Դղյակի դահլիճ գյուղական ոճով

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ֆրանսիա: Օռլեանի առաջ:

Մտնում է մի հիսնապետ, երկու ժամապահի ուղեկցությամբ:

ՀԻՍՆԱՊԵՏ

Պարոններ, զրավե՛ք ձեր տեղերն իսկույն և եղեք զգոն
Ու թե որևէ զինվոր նկատեք կամ աղմուկ լսեք
Պարիսպների մոտ, դուք տեսանելի նշանով հայտնեք
Պահակախմբին:

Ա. ԺԱՄԱՊԱՀ

Զգույշ կլինենք:

Հիսնապետը գնում է:

Խե՜ղճ ժամապահներ,
Երբ ուրիշները քնում են իրենց խաղաղ անկողնում,
Դուք ստիպված եք հսկել խավարում, ցրտին, անձրևին:

Գալիս են Տոլբոտը, Բեդֆորդը՝ Բուրգունդիայի դուքսը, զինվորները՝ սանդուղքներով: Թմբուկները հարվածում են թաղման քայլերգ:

ՏՈԼԲՈՏ

Լորդ-խնամակալ և Բուրգունդիայի ահեղաշունչ դուքս,
Ձեր մերձեցումով դարձել են հիմա մեզ բարեկամներ
Արտուան, Վալոնն ու Պիկարդիան,
Ֆրանսիացիներն այս ուրախ գիշեր հանգիստ կքնեն,
Քանզի զինովցած՝ ամբողջ օրն ուրախ խնջույք սարքեցին.
Պետք է օգտվել պատեհությունից՝
Հատուցել նրանց խաբեությանը,
Որ հնարեցին խորամանկությամբ ու կախարդանքով:

ԲԵԴՖՈՐԴ

Վախկո՛տ ֆրանսիացի: Տեսե՛ք, ինչպե՛ս է իր փառքն աղարտում,
Հուսահատվելով սեփական զենքից,
Դաշինք է կնքել վհուկների հետ, նեցուկ փնտրելով խավար դժոխքում:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Օ՜, դավաճանը ա՜յլ ընկեր չունի,
Ո՞վ է այդ կույսը, որի մաքրությամբ երդվում են նրանք:

ՏՈԼԲՈՏ

Ասում են՝ կույս է:

ԲԵԴՖՈՐԴ

Կո՜ւյս և ռազմատե՜նչ:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Աղերսի՛ր աստծուն, որ նա ի մոտո չդառնա այր մի,
Թե ոչ՝ Ֆրանսիայի դրոշի ներքո
Կկռվի մեր դեմ առաջվա նման:

ՏՈԼԲՈՏ

Թող նրանց խաբի, թող շաղակրատի ոգիների հետ.
Աստված մեզ ամրոց, ում հաղթ անունով
Կելնենք քաջաշեն պատնեշներն ի վեր:

ԲԵԴՖՈՐԴ

Դնա՛, քաջ Տոլբոտ, քեզ կհետևենք:

ՏՈԼԲՈՏ

Ո՛չ, հարկավոր չէ բոլորս մեկտեղ,
Ես նախընտրում եմ բերդը գրավել տարբեր կողմերից:
Եվ եթե մեկին բախտը չժպտա,
Թող մյուսն հարձակվի հակառակ թևից:

ԲԵԴՖՈՐԴ

Ես համաձայն եմ: Ես՝ այս անկյունից:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Իսկ ես՝ այստեղից:

ՏՈԼԲՈՏ

Իսկ Տոլբոտն այստեղ պետք է բարձրանա կամ այսաեղ մեռնի:

Ո՜, Սոլսբերի, հանգուցյալ Հենրի, ձեր փառքի համար
Պետք է գիշերն այս ցույց տա ամենքին,
Թե ինչպե՜ս եմ ես պարտքս կատարում Երկուսից հանդեպ:

Դղալում են. «Սուրբ Գեորգ» և «Տոլբոտ»:

ԺԱՄԱՊԱՀ

Զինվե՛ք: Թշնամին հարձակման անցավ:

Ֆրանսիացիները պարիսպների վրայով ցատկում են: Գալիս են տարբեր կողմերից Բաստարդը, Ալանսոնը և Ռենեն, բոլորն էլ կիսամերկ:

ԱԼԱՆՍՈՆ

Տյա՛ր իմ, ինչո՞ւ եք այսպես կիսամերկ:

ԲԱՍՏԱՐԴ

Ուրախ ենք, որ մեզ հաջողվեց նույնիսկ կիսամերկ փախչել:

ՌԵՆԵ

Հազիվ արթնացանք ու դուրս վազեցինք անկողիններից,
Երբ ահազանգի ձայները հասան ննջասենյակներ:

ԱԼԱՆՍՈՆ

Այն օրից ի վեր, երբ զենք եմ կրում,
Տեսել եմ բազում քաջագործություն,
Սակայն չեմ լսել այսքան հանդուգն,
Խիզախ զինվորի սխրանքի մասին:

ԲԱՍՏԱՐԴ

Տոլբոտը սատանա դևն է դժոխքի:

ՌԵՆԵ

Եթե ոչ դժոխքը, ապա երկինքն է նրան պաշտպանում:

ԱԼԱՆՍՈՆ

Ո՜, Շառլն է գալիս: Ո՞վ զարմանք, ինչպե՞ս անվնաս մնաց:

ԲԱՍՏԱՐԴ

Սուրբ Հովհաննան է նրան պաշտպանում:

Մտնում են Շառլը և Ժաննա դ'Արկը:

ՇԱՌԼ

Սա՞ էր, խաբեբա՛, քո արվեստն հմուտ,
Այս սկզբից մեզ շողոմելով՝

Տվիր աննշան մի փոքրիկ օգուտ,
Որ տասնապատիկ կորուստներ կրենք:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ինչո՞ւ է Շառլը ընկերոջ հանդեպ այդպես աններող,
Կարո՞ղ է արդյոք իմ զորությունը միշտ նույնը լինել,
Քնած ժամանակ կարո՞ղ եմ հաղթել:
Դուք կամենում եք ձեր սխալները բարդել ինձ վրա:
Անհո՛գ զինվորնե՛ր, եթե կարգեիք զգոն պահակներ,
Ձեզ հանկարծակի երբեք չէր բերի դժբախտությունը:

ՇԱՌԼ

Դուք մեղավոր եք, Ալանսոնի դուքս,
Քանզի լինելով պահակախմբի հրամանատար,
Պարտավոր էիք դառնալ այդ գործին նախանձախնդիր:

ԱԼԱՆՍՈՆ

Եթե ձեր բոլոր զորամասերը
Հսկեին ինձ պես հուսալիորեն,
Չէինք տեսնելու այս ամոթանքը:

ԲԱՍՏԱՐԴ

Իմն ապահով էր:

ՌԵՆԵ

Եվ իմն էլ, տե՛ր իմ:

ՇԱՌԼ

Գալով՝ ինքս ինձ, ապա գիշերվա մեծագույն մասը
Վատնեցի կույսի և իմ դիրքերում՝
Փոխելով հաճախ ժամապահներին:
Ի՞նչ ճանապարհով և ինչպե՞ս նրանք ներս մտան այստեղ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Պետք չէ, օ՜, տյա՛րք իմ, շարունակ հարցնել՝
Ինչպե՞ս, որտեղի՞ց... Պարզ է, որ նրանք գտել են մի տեղ,
Ուր հսկողությունը շատ թույլ է եղել և ներս են մտել,
Այժմ մեզ միայն մի բան է մնում.
Ինչպես հավաքել ցիրուցան եղած մեր զինվորներին
Եվ ինչպես կազմել հարձակման պլան:

Տագնապ: Մտնում է անգլիացի մի զինվոր, բացականչելով. «Տոլբո՜տ», «Հե՜յ Տոլբոտ»: Բոլորը փախչում են, թողնելով իրենց զգեստները:

ՉԻՆՎՈՐ

Այն ինչ զցեցին՝ ես կվերցնեմ համարձակորեն,
Տոլբոտի անունն ինձ ծառայում է սրի փոխարեն,
Իմ ավարն եղավ առատ ու հարուստ,
Չի նրա անունն իմ զենքն է միայն:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Օռլեան: Քաղաքի ներսում:

Գալիս են Տոլբոտը, Բեդֆորդը, Բուրգունդիայի դուքսը, մի կապիտան և ուրիշներ:

ԲԵԴՖՈՐԴ

Լույսը բացվում է, գիշերն է փախչում,
Որ սքողում էր սև պատմուճանով աշխարհը,
Հնչեցրե՛ք այստեղ ավարտանշան, մի՛ հետապնդեք:

Ավարտի ազդանշան:

ՏՈԼԲՈՏ

Բերեք մարմինը ծեր Սոլսբերու
Եվ դրեք այստեղ՝ հրապարակում,
Եզովյալ Նաղաքի ուղիղ կենտրոնում:
Ես կատարել եմ ուխտն իմ վրեժի.
Թանկագին արյան յուրաքանչյուր սուրբ կաթիլի դիմաց
Այս գիշեր ընկան հինգ ֆրանսիացի:
Որպեսզի գալիք դարերում տեսնեն,
Թե ինչ ավերմամբ ես վրեժ առա,
Նրանց գլխավոր տաճարի ներսում
Պիտի կառուցեմ մի մեծ դամբարան,
Ուր հանգչելու է մարմինը նրա:
Թող փորագրեն այգ շիրմի վրա, որ կարդան մարդիկ,
Թե Օռլեանը ինչպե՞ս ավերվեց,
Թե հերոսն ինչպես մատնությամբ ընկավ,
Եվ ինչպես դողաց այդ խիզախ մարդուց ամբողջ Ֆրանսիան:
Սակայն այս կռվում չտեսա նրանց բազմառանգին,
Ո՛չ նրա զինվոր, խիստ առաքինի Ժաննա դ'Արկին,
Եվ ո՛չ էլ մեկին՝ նրա դժրամիտ դաշնակիցներից:

ԲԵԴՖՈՐԴ

Կարծում եմ. հենց որ կռիվը սկսվեց,
Նրանք՝ կիսամերկ, վեր թռան հանկարծ իրենց անկողնուց
Եվ խառնվելով զինված զնդերին,
Պատից վար թռան՝ պատսպարվելով արձակ դաշտերում:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Ինձ թվաց. որքան լավ նշմարեցի,
Գիշերվա թանձր խավարի միջից,
Թագաժառանգը, նրա պոռնիկը խիստ ահաբեկված,
Փախան թևանցուկ՝ նման սիրահար այն զույգ տատրակին,
Որ իրարից զատ չեն կարող ապրել նույնիսկ մեկ գիշեր:
Երբ կարգ ու կանոն հաստատենք այստեղ,
Կհետապնդենք նրանց մեր զորքով:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ողջո՜ւյն, իշխաննե՛ր, ո՞վ է փառապանծ այս շքախմբից
Կոչվում քաջ Տոլբոտ, ում սխրանքներին
Ծափահարում է ամբողջ Ֆրանսիան:

ՏՈԼԲՈՏ

Ահա Տոլբոտը, ո՞վ է կամենում նրա հետ խոսել:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Օվերնի ազնիվ, պարկեշտ կոմսուհին,
Ով հիանում է քո անմահ փառքով,
Աղերսում է քեզ իմ շրթունքներով, որ շնորհ անես քո այցելությամբ
Իր դղյակն անշուք, ուր ապրում է նա, որպեսզի ինքն էլ
Պարծենա մի օր, որ տեսել է քեզ,
Ո՛ւմ փառքն է թնդում արար աշխարհով:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Մի՞թե այդպես է: Օհո՜, տեսնում եմ՝ մեր կռիվները
Կդառնան ուրախ, զվարճալի խաղ,
Երբ տեսակցություն կանայք են հայցում:
Դուք, հավանաբար, չեք մերժի նրա քաղցրիկ հրավերը:

ՏՈԼԲՈՏ

Եթե մերժեմ էլ՝ ինձ չհավատաք:
Քանզի, ուր էրիկ մարդկանց մի աշխարհ

Չի կարող տիրել ճարտասանությամբ,
Հաղթում է կնոջ ազնվությունը:
Հայտնիր կոմսուհուն շնորհակալություն,
Ես խոնարհաբար կայցելեմ նրան,
Չե՞ք ուզում արդյոք ինձ ընկերանալ:

ԲԵԴՖՈՐԴ

Ճիշտն ասած, պետք չէ: Սա բարձր է ամեն պատշաճությունից:
Հաճախ եմ լսել՝ երբ անկոչ հյուրը գնում է տնից
Նրան մաղթում են բարի ճանապարհ:

ՏՈԼԲՈՏ

Այդ դեպքում նրան մենակ կայցելեմ.
Կփորձեմ կնոջ ազնվությունը:
Մոտ ե՛կ, կապիտան:

Շշնջում է ականջին:

Հասկացա՞ր միտքս:

ԿԱՊԻՏԱՆ

Տեր իմ, կվարվեմ, ինչպես ասում եք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Օվերն: Դղյակի փակ բակում:

Մտնում են կոմսուհին ու նրա բարապանը:

ԿՈՄՍՈՒՀԻ

Հիշիր, թե ինչ եմ պատվիրել ես քեզ,
Երբ գործդ ավարտես, բանալիները ինձ հանձնիր իսկույն:

ԲԱՐԱՊԱՆ

Կանեմ, տիրուհի:

Գնում է:

ԿՈՄՍՈՒՀԻ

Ես դավ եմ նյութել. եթե ամեն ինչ գնա իր հունով,
Ես կհռչակվեմ իմ խիզախությամբ,

6 Ինչպես սկյութացի Մաշ Տոմիրիսը՝ Կյուրոսի մահով:
Այս անեղ ասպետն ունի մեծ համբավ,
Պակաս չեն նրա սխրանքները անթիվ:
Ես շատ եմ ուզում, որ իմ աչքերը ու ականջները
Վկաներ լինեն այս խիստ անսովոր պատմություններին:

Մտնում են սուրհանդակն ու Տոլբոտը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տիրուհի՛,
Ըստ ձեր բարի ցանկության,
Պատգամաբերիս խոնարհ խնդրանոք,
Ահա ժամանեց իշխան Տոլբոտը:

ԿՈՄՍՈՒՀԻ

Բարի՛ գալուստ: Ի՞նչ: Սա՞ է այն մարդը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տիրուհի, նա՛ է:

ԿՈՄՍՈՒՀԻ

Սա՞ է մտրակում ամբողջ Ֆրանսիան:
Մի՞թե Տոլբոտն է, ում սարսափներից աշխարհն է դողում
Եվ ում անունով մայրերն են սաստում նորածին մանկանց:
Ինչպես տեսնում եմ, այս զրույցները կեղծ են ու պատիր:
Ես կարծում էի, թե պիտի տեսնեմ մի Հերկուլեսի,
Երկրորդ Հեկտորին, ում խոժոռ դեմքը
Ներդաշնակորեն կապված կլիներ զորեղ կազմվածքին:
Բայց, ավա՜ղ, սա մի փոքրիկ տղա է, մի ապուշ գաճաճ,
Չի կարող երբեք այս կնճռապատ ու խեղճ թզուկը
Այսպիսի անլուր երկյուղ ներշնչել թշնամիներին:

ՏՈԼԲՈՏ

Ես հանդգնում եմ ձեզ վրդովեցնել:
Բայց տեսնում եմ դուք ժամանակ չունեք,
Լավ է՝ ձեզ ուրիշ ատեն այցելեմ:

Ուզում է գնալ:

ԿՈՄՍՈՒՀԻ

Ի՞նչ է ուզում նա, մոտեցիր, հարցրու, թե ուր է գնում:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կա՛ց, իշխան Տոլբոտ, ազնիվ կոմսուհին կուզե իմանալ,
Թե ինչու այսպես մեկնում եք հանկարծ:

ՏՈԼԲՈՏ

Անշո՛ւշտ. տիրուհին ինձ չի հավատում,
Եվ ես գնում եմ, որ ապացուցեմ Տոլբոտն այստեղ է:

Գալիս է բարապանը, ձեռքին բանալիներ:

ԿՈՄՍՈՒՀԻ

Եթե Տոլբոտն ես՝ գերի ես արդեն:

ՏՈԼԲՈՏ

Ես՝ գերի՞, ո՞ւմ:

ԿՈՄՍՈՒՀԻ

Իմ, արնախո՛ւմ իշխան:
Այդ նպատակով քեզ հմայեցի, կանչեցի տունս:
Վաղուց գերի է քո ստվերն ինձ մոտ՝
Ես քո նկարն եմ կախել իմ պատից,
Եվ այժմ ի՛մն ես քո ողջ էությամբ:
Կապանքներ պիտի դնեմ ոտքերիդ, ձեռքերիդ վրա,
Զի կեղեքելով տարիներ ի վեր՝ ավերում էիր մեր հայրենիքը,
Անխնա մորթում մեր քաղաքացոց.
Մեր որդիներին, ամուսիններին տանում գերեվար:

ՏՈԼԲՈՏ

Հա՜, հա՜, հա՜...

ԿՈՄՍՈՒՀԻ

Ծիծաղո՞ւմ ես դու, ո՜, թշվառակա՜ն, տե՛ս, լաց չլինես:

ՏՈԼԲՈՏ

Ես ծիծաղում եմ ձեր մտքի վրա,
Քանզի կարծում եք ստվերիս տեղակ Տոլբոտն է այստեղ,
Որի նկատմամբ ձեր խստությունն եք սաստիկ կիրառում:

ԿՈՄՍՈՒՀԻ

Դու Տոլբոտը չե՞ս:

ՏՈԼԲՈՏ

Այո՛, ես ինքս եմ:

ԿՈՄՍՈՒՀԻ

Արդ՝ քո էությամբ ինձ ես պատկանում:

ՏՈԼԲՈՏ

Ո՛չ, ո՛չ: Տեսնում եք ստվերս միայն:
Խիստ սխալվում եք. իմ էությունը այստեղ չէ հիմա:
Զի ինչ տեսնում եք՝ մարդկային փոքրիկ բեկորն է միայն:
Հիրավի, տիկին, երբ նա կանգնի իր ողջ հասակով,
Օ՜, բարձր է այնքան ու լայնաթիկունք.
Որ ձեր հարկի տակ չի տեղավորվի:

ԿՈՄՍՈՒՀԻ

Ի՞նչ է, նա անմիտ հանելուկներ է վաճառքի հանել:
Մերթ այստեղ է նա, մերթ էլ այստեղ չէ:
Ինչպես հասկանալ հակասությունն այդ:

ՏՈԼԲՈՏ

Կմեկնեմ հիմա:

Փողեր: Թմբկահարություն: Հրետանու համազարկ: Մտնում են զինվորներ:

Ինչ կասեք հիմա, չքնա՜ղ տիրուհի,
Դուք համոզվեցի՞ք, որ իր ստվերն է Տոլբոտը միայն,
Ահավասիկ նրա մարմինն ու ջիղը, ձեռքերը, ուժը,
Որոնք սանձում են ձեր ըմբոստ լեզուն
Եվ ավերում են ձեր քաղաքները, ձեր ամրոցները
Եվ մի վայրկյանում ամայի դարձնում:

ԿՈՄՍՈՒՀԻ

Հաղթապանծ Տոլբոտ, դու նախատինքն իմ ընդմիշտ մոռացիր.
Տեսնում եմ ես քեզ ոչ այնքան նվաղ, քան թե քո փառքն է.
Պարթևահասակ, քան երևում ես քո ներկա տեսքով:
Թող իմ անպատկառ հանդգնությունը քեզ չզայրացնի,
Ես շատ եմ ցավում, որ պատշաճ ձևով
Չընդունեցի քեզ, ինչպիսին որ կաս:

ՏՈԼԲՈՏ

Պետք չէ շփոթվել, չքնա՛ղ տիրուհի: Դուք ստույգ մեկնեք
Տոլբոտի միտքը: Թեև բավական սխալ եք դատել
Նրա արտաքին կազմվածքի մասին:

Ձեր արարքն երբեք ինձ չի վշտացնում,
Ես այլ հառաչում չեմ հայցում ձեզնից, զի հոժարակամ
Դուք թույլ եք տալիս՝ հաշակելու ձեր ուտեստն ու գինին.
Քանզի գինվորի սասմաքսը միշտ
Պատրաստ է նրանց սիրով ծառայել:

ԽՈՄՍՈԻՉԻ

Իմ ամբողջ սրտով: Ինձ պատիվ է մեծ՝
Խնջույքի կանչել նման քաջ մարդուն իմ հարկի ներքո:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Թեմպլի պարտեզում:

Գալիս են կոմսեր Սոմերսետ, Սեֆոլկը, Վորվիկը, Ռիչարդ Պլանտագենետը, Վեռնոն և մի փաստաբան:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ի՞նչ է նշանակում այս լռությունը, ազնիվ իշխաններ.
Մի՞թե մարդ չկա, որ ճշմարտությունն ասի համարձակ:

ՍԵՖՈԼԿ

Թեմպլի սրահում շատ աղմկեցինք,
Պարտեզն ավելի վայելուչ տեղ է զրույցի համար:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ասացեք խսկույն, ե՞ս եմ պաշտպանել ճշմարտությունը.
Թե՞ Սոմերսետը՝ ինձ հետ վիճելիս:

ՍԵՖՈԼԿ

Օրենքի հանդեպ ես չեմ ունեցել և ոչ մի հակում.
Չեմ ծռել կամքս օրենքի առաջ,
Ուստի նա՛ պետք է կամքիս համարվի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Խնդրում եմ, Վորվիկ, ինքդ մեզ դատիր:

ՎՈՐՎԻԿ

Թերևս մի կերպ կարող եմ դատել՝

Երկու բազեից ո՛րն է ավելի բարձրաթռիչ ճախրում,
Երկու շներից ո՛րն է ավելի կատաղի հաչում,
Երկու սրերից ո՛ր մեկն է ձուլված անխառն պողպատից.
Երկու ձիերից ո՛ր մեկն է վարգում ավելի արագ,
Երկու կանանցից ո՛ր մեկն է քաղցր աչքով անում ինձ,
Բայց ես օրենքի այս նուրբ ու փափուկ բծախնդրության մեջ,
Ճշմարիտն ասած, խելոք չեմ նույնիսկ մի սև ճայեկից:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Օհո՜, ինչպիսի՜ զգույշ պատասխան.
Ճշմարտությունն այնպես անզգեստ իմ կողմն է կանգնած,
Որ կարճատեսն էլ կարող է տեսնել:

ՍՈՄԵՐՍԵՏ

Իմ կողմն է կանգնած ճշմարտությունը նույնպես անսքող,
Այնքան բացահայտ և այնքան փայլուն,
Որ կույր աչքի մեջ նույնիսկ կշողա:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Եթե ձեր լեզվին կապանք է դրված, ծանր է խոսելը,
Ձեր մտքերն հայտնե՛ք համր նշանով:
Նա, ով զտարյուն ազնվական է,
Նա, ով իր տոհմի պատվույն է կանգնած
Եվ հավատարիմ ճշմարտությանը,
Թող ինձ հետ պոկի սպիտակ մի վարդ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Իսկ նա, ով երկչոտ ու շողոքորթ չէ,
Բայց ճշմարտության զինվոր է խիզախ,
Թող պոկի թփից կարմիր վարդ ինձ հետ:

ՎՈՐՎԻԿ

Չեմ սիրում գույներ ու շողոմության
Ստոր ակնարկներն արհամարհելով.
Պլանտագենետ, պոկում եմ թփից այս վարդն սպիտակ:

ՍԵՖՈԼԿ

Այս կարմիր վարդն էլ պոկում եմ ջահել Սոմերսետի հետ:
Նա ճշմարտության զավակն է ազնիվ:

ՎԵՐՆՈՆ

Կացե՛ք, իշխաններ, մի՛ պոկեք թփից ոչինչ ավելի,

Քանի դեռ մենք չենք պայմանավորվել. ում թփից պոկված
Վարդերն են նվազ, ասել է՝ պետք է նա խոստովանի
Հակառակ կողմի ճշմարտությունը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ով բարի Վեռնոն, սա լավ խորհուրդ է,
Եթե իմ թփից քիչ վարդեր պոկեն, կտամ լռելյայն հավանություն

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ես էլ՝ պարոններ:

ՎԵՌՆՈՆ

Գործի ճշտության, պարզության համար
Պոկում եմ անբիծ, գունատ ծաղիկը,
Տալով իմ ձայնը սպիտակ վարդին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Զգո՛ւյշ պոկեցե՛ք, որ ձեր մատներն հանկարծ չծակի,
Թե ոչ՝ ձեր կարմիր արյամբ կներկեք սպիտակ վարդը,
Կամքիդ հակառակ՝ իմ կողմը կանցնեք:

ՎԵՌՆՈՆ

Տեր իմ, եթե ես արյուն եմ թափում կարծիքիս համար,
Ուստի այն պետք է դառնա իմ վերքին հմուտ վիրաբույժ,
Եվ ինձ պաշտպանի, որ կանգնած եմ արդ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Շատ բարի, տյարք իմ, ո՞ւմ հերթն է հիմա:

ՓԱՍՏԱԲԱՆ

(Սոմերսետին). Եթե գրքերս, փաստերս աչքս չեն կապում,
Ձեր ապացույցը սխալ է, միլորդ.
Ես էլ եմ պոկում վարդը սպիտակ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ո՞ւր է, Սոմերսետ, ձեր ապացույցը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ահա այստեղ է, որին պատյանում, կարծում եմ, որ սա
Կարող է ներկել սպիտակ վարդը կարմիր արյունով:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ի դեպ, այտերիդ գույնը նման է մեր ճերմակ վարդին.
Որ գունատվել են սաստիկ երկյուղից,
Եվ վկայում են, որ ճշմարտությունն իմ կողմն է կանգնած:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ոչ թե երկյուղից, այլ բարկությունից այտերս են գունատ:
Օ՛, Պլանտագենետ, դու ամոթանքից շիկնել ես ահա,
Եվ նմանվելով մեր բյուր վարդերին,
Չես խոստովանում, որ սխալ ես դու:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Սոմերսետ, քո վարդն արդյոք չի՞ որդնել:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ռի՛չարդ, քո վարդը փուշ չունի՞ արդյոք:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Շատ սուր է, ծակող, որ նեցուկ լինի ճշմարտությանը,
Մինչդեռ քո հյուծող որդը ապրում է քո ստի հաշվին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Լավ, ես կգտնեմ ինձ բարեկամներ,
Ովքեր կկրեն վարդերն արնաներկ
Եվ կհաստատեն իմ ճշմարտության խոսքն ամենուրեք,
Ուր չես հանդգնի նույնիսկ երևալ, օ՛, Պլանտագենետ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Երդվում եմ ձեռքիս այս անբիծ ծաղկով՝
Անգոսնում եմ քեզ և ընկերներիդ, պարծենկո՛տ տղա:

ՍԵՖՈԼԿ

Քո արհամարհանքն այս կողմի վրա մի՛ ուղղիր երբեք:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Պարկեշտ ձևացող, ես ձեզ երկուսիդ արհամարհում եմ:

ՍԵՖՈԼԿ

Իմ մեծ բաժինը ուղարկելու եմ ես քո կոկորդը:

ՍՈՄԵՐՍԵՏ

82 Հեռացի՛ր, բարի Վիլյամ դը լա Պոլ,
Շնո՞րհ է՝ խոսել անտաշ մարդու հետ:

ՎՈՐՎԻԿ

Երդվում եմ ստածով, վիրավորում ես նրան, Սոմերսետ:
Կլարենսի դուքս Լիոնելը նրա մեծ հայրն է եղել,
Անգլիո թագավոր Էդվարդ Երրորդի երրորդ զավակը:
Մի՞թե այսպիսի ազնիվ արմատից
Կարող է սերվել անտաշ մի ոստիկ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Նա օգտվում է սրբազան վայրի արգելումներից,
Այլապես վախկոտն այսպե՞ս չէր խոսի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Աստվա՛ծ է վկա, որ կկրկնեմ դարձյալ բառերս
Քրիստոնեական ամեն մի արդար հողակտորի վրա:
Մի՞թե հայրդ չէր Ռիչարդ Քեմբրիջը,
Ում Հենրու օրոք որպես դավաճան մատնեցին մահվան,
Մի՞թե քեզ, Ռիչա՛րդ, այդ դավաճանությամբ չապականեցին
Եվ չխլեցին քո ազնվական տիտղոսն հինավուրց,
Որդ. հանցանքը դավաճանորեն ապրում է քո մեջ
Եվ դու քանի դեռ չես վերականգնված, կմնաս ոստիկ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Այո՛, իմ հորը ամբաստանել են. բայց նա մեղք չուներ,
Մահվան են մատնել որպես դավաճան, բայց դավաճան չէր,
Ես կապացուցեմ, Սոմերսետ, քեզնից լավագույն մարդկանց,
Երբ վրա հասնի ժամն իմ ցանկության:
Արդ՝ քեզ դառնալով և կցորդ Պոլին,
Իմ հիշողության գրատախտակին ես պետք է գրեմ ձեր անունները,
Որ խելքի բերեմ ձեզ այդ սինլքոր ձևնգության համար,
Ուստի լավ հիշեք, որ ես նախապես ձեզ զգուշացրի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Այո, կգտնես դու մեզ միշտ պատրաստ,
Եվ կարմիր գույնով պետք է ճանաչես թշնամիներիդ.
Ջի բարեկամներս՝ ի հեճուկս քեզ, այդ գույնն են կրում:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Երդվում եմ անա ընկերներիս հետ իմ ամբողջ հոգով,
Ի նշան սրտիս խոր ատելության,
Հավերժ կկրեմ այս դալուկ վարդը,

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ի դեպ, այտերիդ գույնը նման է մեր ճերմակ վարդին.
Որ գունատվել են սաստիկ երկյուղից,
Եվ վկայում են, որ ճշմարտությունն իմ կողմն է կանգնած:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ոչ թե երկյուղից, այլ բարկությունից այտերս են գունատ:
Օ՜, Պլանտագենետ, դու ամոթանքից շիկնել ես ահա,
Եվ նմանվելով մեր բյուր վարդերին,
Չես խոստովանում, որ սխալ ես դու:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Սոմերսետ, քո վարդն արդյոք չի՞ որդնել:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ռի՛չարդ, քո վարդը փուշ չունի՞ արդյոք:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Շատ սուր է, ծակող, որ նեցուկ լինի ճշմարտությանը,
Մինչդեռ քո հյուծող որդը ապրում է քո սուտ հաշվին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Լավ, ես կգտնեմ ինձ բարեկամներ,
Ովքեր կկրեն վարդերն արնաներկ
Եվ կհաստատեն իմ ճշմարտության խոսքն ամենուրեք,
Ուր չես հանդգնի նույնիսկ երևալ, օ՜, Պլանտագենետ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Երդվում եմ ձեռքիս այս անբիծ ծաղկով՝
Անգոսնում եմ քեզ և ընկերներիդ, պարծենկո՛տ տղա:

ՍԵՖՈԼԿ

Քո արհամարհանքն այս կողմի վրա մի՛ ուղղիր երբեք:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Պարկեշտ ձևացող, ես ձեզ երկուսիդ արհամարհում եմ:

ՍԵՖՈԼԿ

Իմ մեծ բաժինը ուղարկելու եմ ես քո կոկորդը:

ՍՈՄԵՐՍԵՏ

82 Հեռացի՛ր, բարի Վիլյամ դը լա Պոլ,
Շնո՞րհ է՝ խոսել անտաշ մարդու հետ:

Երդվում եմ տանձով, վիրավորում ես նրան, Սոմերսետ:
Կլարենսի դուքս կիռնեյր նրա մեծ հայրն է եղել.
Անգլիո թագավոր Էդվարդ Երրորդի երրորդ զավակը:
Մի՞թե այսպիսի ազնիվ արմատից
Կարող է սերվել անտաշ մի ոամիկ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Նա օգտվում է արքայական վայրի արգելումներից,
Այլապես վախկոտն այսպե՞ս չէր խոսի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Աստվա՞ծ է վկա, որ կկրկնեմ դարձյալ բառերս
Քրիստոնեական ամեն մի աղար հողակույտի վրա:
Մի՞թե հայրդ չէր Ռիչարդ Քեմբրիջը,
Ում Հենրու օրոք որպես դավաճան մատնեցին մահվան,
Մի՞թե քեզ, Ռիչա՛րդ, այդ դավաճանությամբ չապականեցին
Եվ չխլեցին քո ազնվական տիտղոսն հինավուրց,
Հորդ հանցանքը դավաճանորեն ապրում է, քո մեջ
Եվ դու քանի դեռ չես վերականգնված, կմնաս ռամիկ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Այո՛, իմ հայրը ամբաստանել են, բայց նա մեղք չուներ,
Մահվան են մատնել որպես դավաճան, բայց դավաճան չէր,
Ես կապացուցեմ, Սոմերսետ, քեզնից լավագույն մարդկանց,
Երբ վրա հասնի ժամն իմ ցանկության:
Արդ՝ քեզ դառնալով և կցորդ Պոլին,
Իմ հիշողության գրատախտակին ես պետք է գրեմ ձեր անունները,
Որ խելքի բերեմ ձեզ այդ սինլքոր ենթադրության համար,
Ուստի լավ հիշեք, որ ես նախապես ձեզ զգուշացրի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Այո, կգտնես դու մեզ միշտ պատրաստ,
Եվ կարմիր գույնով պետք է ճանաչես թշնամիներիդ.
Զի բարեկամներս՝ ի հեճուկս քեզ, այդ գույնն են կրում:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Երդվում եմ անհա ընկերներիս հետ իմ ամբողջ հոգով,
Ի նշան արտիս խոր ատելության,
Հավերժ կկրեմ այս դալուկ վարդը.

Քանի դեռ ինձ հետ նա չի թաղվել իմ գերեզմանում
Կամ թե չի ծաղկել փառքիս բարձունքին։

ՍԵՖՈԼԿ

Գնա՛ և խեղդվիր փառասիրությամբ,
Դե՛հ, մնա՛ս բարով, ցնոր հանդիպում։

Գնում է։

ՍՈՄԵՐՍԵՏ

Գնա՛նք, Վիլյամ Պոլ։ Մնացեք բարյավ, փառամո՛լ Ռիչա՛րդ։

Գնում է։

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ինձ անպատվում են, բայց պետք է տոկամ։

ՎՈՐՎԻԿ

Այս նախատինքը, որով անարգվեց ձեր ազնիվ տոհմը,
Պետք է մաքրվի խորհրդարանի հետևյալ նիստում.
Որտեղ Գլոստերին և Ուինչեստերին պետք է հաշտեցնեն։
Եվ եթե այնտեղ քո հին անունը չվերականգնեն,
Թող ինձ չկոչեն այլևս Վորվիկ։
Ի նշան սիրույս, որ տածում եմ քեզ,
Եվ ի հեճուկս՝ Վիլյամ դը Պոլի ու Սոմերսետի.
Ես պիտի կրեմ համախոհներիդ այս վարդը սպիտակ։
Արդ՝ գուշակում եմ՝ այս վեճը, որը միայն մի փոքր
Որ խիստ բորբոքվեց Թեմպլի պարտեզում,
Կարմիր ու սպիտակ վարդերի միջև,
Պետք է ուղարկի անթիվ հոգիներ մահվան մութ աշխարհ։

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Օ՜, բարի Վեռնոն, ձեզ եմ պարտական.
Քանզի իմ օգտին պոկեցիք մի վարդ։

ՎԵՌՆՈՆ

Ի նշան ազնիվ հավատարմության՝ ես պիտի կրեմ ձեր վարդը սպիտակ

ՓԱՍՏԱԲԱՆ

Ես էլ, պարոններ։

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Շնորհակալություն, ազնիվ բարեկամ։

Գնանք ճաշելու: Ինձ մտահոգում է,
Որ գժտությունն այս ծարավ է արյան:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լոնդոն: Թաուեր:

Բանտապահները բերում են Մորտիմերին՝ թիկնած բազմոցին:

ՄՈՐՏԻՄԵՐ

Հանգչող ու տկար իմ տարիների բարի հսկողներ,
Թողեք մերձիմահ Մորտիմերն այստեղ քիչ հանգստանա:
Այնպես է տանջում իմ ողջ մարմինը,
Ասես թե նոր են ազատ արձակել ինձ խոշտանգումից:
Իսկ գորշ մազերս՝ բանբերները, ավա՜ղ, մոտալուտ մահվան,
Որ ճերմակել են տառապանքներից, ինչպես Նեստորը,
Մահն են գուշակում կոմս Մորտիմերին:
Այս աչքերն անյուղ կանթեղների պես հանգչում են արդեն,
Շուտով կպատի մշուշը նրանց,
Վշտի բեռան տակ ուսերս են ծռվել,
Եվ բազուկներս կախվել են անզոր,
Ինչպես խաղողի ոստերն ազազուն,
Նույնիսկ ոտքերս չեն կարող կրել կավե զանգվածն այս,
Որ իմ ցանկության թևով ձգտում է դեպի գերեզման,
Կարծես, թե գիտեն, որ չունեմ ուրիշ մխիթարություն,
Բայց ասա, կգա՞ քրոջս որդին:

Ա. ԲԱՆՏԱՊԱՀ

Գալու է. տեր իմ, Ռիչարդն, անշուշտ,
Մարդ ենք ուղարկել նրա մոտ Թեմպլ,
Պատասխանն եկավ, որ գալու է նա:

ՄՈՐՏԻՄԵՐ

Այնժամ իմ հոգին կիջնի խոր անդորր:
Անբա՜խտ երեխա, պատիժ կրեցիր ինձ հետ հավասար:
Տարիներ առաջ փառքս թնդում էր կռիվների մեջ,
Բայց երբ որ Հենրի Մոնմութը իշխեց,
Այս նզովապարտ մեկուսացումը ինձ առավ գիրկը,
Այնժամ Ռիչարդը խիստ նսեմացավ,

Զրկվեց իր պատվից, ժառանգությունից:
Բայց վճատության հաշտարարուհին՝
Մարդկանց վշտերի ազնիվ միջնորդը՝ մահն արդարամիտ,
Տալով ցանկալի ազատությունս
Ինձ բաց է թողնում այս խավար բանտից:
Ես կուզենայի, որ նրա վիշտն էլ հավիտյան հանգչեր
Եվ կորսվածը ձեռք բերեր նորեն:

Մտնում է Ռիչարդ Պլանտագենետը:

Ա. ԲԱՆՏԱՊԱՀ

Տեր իմ, ձեր սիրած քրոջ որդին եկավ:

ՄՈՐՏԻՄԵՐ

Եկա՞ր դու, Ռիչարդ, ազնիվ բարեկամ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Այո՛, մորեղբայր: Ինչպե՜ս անպատկառ վարվեցին քեզ հետ:
Եկավ անարգված քո քրոջ որդին:

ՄՈՐՏԻՄԵՐ

Ձեռքերս ուղղեք, որ գրկեմ նրան,
Եվ նրա կրծքին արձակեմ վերջին իմ հառաչանքը:
Օ՜, ասե՛ք, երբ են շուրթերս հպվելու նրա այտերին,
Որ կարողանամ բարեսիրության մի թույլ համբույր տալ,
Իսկ այժմ ասա, Յորքի մեծ տոհմի քնքուշ շառավիղ,
Ինչո՞ւ վերջերս քեզ անարգեցին:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Նախ՝ ծերունական քո մեջքը հակիր դեպի ձեռքերս,
Որ թեթևությամբ տանես նոր վիշտս:
Այսօր վիճելով մի խնդրի շուրջը,
Ես լուրջ խոսեցի Սոմերսետի հետ,
Նա ազատ քակեց զազրելի լեզուն
Եվ ինձ կշտամբեց իմ հորս մահով.
Այդ զրպարտանքով նա կապանք դրեց իմ լեզվի վրա.
Ես անզոր եղա խոսք հատուցելու:
Բարի մորեղբայր, ի սեր մեր տոհմի,
Եվ իմ հոր պատվույն, որպես մի սուրբ Պլանտագենետ,
Հայտնիր, թե ինչու Քեմբրիջի կոմսին գլխատման տարան:

ՄՈՐՏԻՄԵՐ

Առիթն այն եղավ, որ բանտ նետեցին թշվառականիս
Իր ջահելության անհոգ օրերին:
Անխիղճ բանտում իմ կյանքը մաշվեց,
Եվ այդ զնդանն էլ եղբորս մահվան գործիքը դարձավ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Պատմիր ամենայն մանրամասնությամբ,
Քանզի չեմ կարող ոչինչ կռահել:

ՄՈՐՏԻՄԵՐ

Շատ բարի, եթե շնչառությունս թույլ տա խոսելու.
Եվ վրա հասնող մահը չկտրի թելն իմ պատմության:
Հենրի Չորրորդը՝ այս թագավորի հարազատ պապը.
Գահընկեց արավ յուր եղբորորդի ջահել Ռիչարդին՝
Էդվարդ Երրորդի առաջնեկ որդուն.
Որն օրինավոր թագաժառանգն էր:
Մեծ պերսիները հյուսիսում տիրող,
Տեսնելով, որ նա անարդարությամբ թագն հափշտակեց.
Ջանացին գահին ինձ բարձրացնել:
Բայց ի՞նչը դրդեց պատերազմասեր այդ իշխաններին.
Պատճառը դարձավ գահընկեց արված ջահել Ռիչարդը.
Որ մի հարազատ ժառանգ չէր թողել իրենից հետո,
Իսկ ես ծնունդով ու ազգակցությամբ ժառանգորդն էի.
Որ մորս կողմից իմ պապն եղել է դուքս Կլարենսը՝
Էդվարդ Երրորդի երրորդ զավակը,
Բայց Հենրի Չորրորդ արքայի տոհմն է սերվում Ջոն Գոնտից,
Որ հերոսական այդ ազգատոհմի չորրորդ որդին է:
Իմացիր, որդիս, պերսիներն հանդուգն քայլեր արեցին.
Որ գահ բարձրանար օրինապաշտան թագաժառանգը,
Բայց ես կորցրի իմ ազատությունը, իսկ նրանք՝ կյանքը:
Շատ տարիներ անց, երբ թագավորեց Հենրի Հինգերորդը՝
Հայրդ՝ Քեմբրիջը, որ Էդմունդ Լենգլու տոհմից էր սերված,
Իմ քրոջն առավ իրեն կնության, որ քեզ մայր դարձավ:
Նա կարեկցելով իմ թշվառ բախտին,
Նորից հնչեցրեց ռազմի շեփորներ,
Որպեսզի փրկեր ինձ տառապանքից
Եվ հանդիսավոր շուքով ինձ կարգեր երկրի թագավոր:
Բայց այլոց նման այդ ազնիվ կոմսը նույնպես գլխատվեց,

Ում պատկանում էր տիտղոսն արքայի:
Այսպես, զավա՛կս, Մորտիմերներբ,
Ովքեր ունեին տիտղոս և անուն, մի կողմ նետվեցին:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Մորեղբա՛յր, դո՞ւք եք այդ տոհմի վերջին արժանավորը:

ՄՈՐՏԻՄԵՐ

Այո՛, և չունեմ օրինաց ժառանգ,
Եվ իմ թալկացող բառերն են կարդում մահվան վճիռս,
Դու ես ժառանգն իմ. կուզեմ ամեն ինչ քո ձեռքը առնես
Եվ շրջահայաց ու խոհեմ լինես ձգտումներիդ մեջ:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Ես կհետևեմ քո իմաստալից, վսեմ խորհուրդին:
Բայց իմ հարազատ հոր գլխատումը ոչ այնքան նվազ,
Քան արյունալի վայրագություն է:

ՄՈՐՏԻՄԵՐ

Եղիր լռակյաց մի քաղաքագետ,
Լանկաստերների տոհմն է անսասան
Եվ լեռան նման կանգնած է անշարժ,
Բայց մորեղբայրդ աշխարհն է լքում,
Ինչպես լքում են արքաներն իրենց ապարանքները,
Երբ ձանձրանում են միևնույն տեղում երկար մնալուց:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Օ՛, կարենայի չահել օրերիս մի մասը քեզ տալ,
Միայն թե քեզնից մահը հեռանար, բարի՛ մորեղբայր:

ՄՈՐՏԻՄԵՐ

Դու մեզ ես զործում մարդասպանի պես,
Որ կուրծքն է խոցում բազում վերքերով, երբ մեկն էլ բավ է:
Դու լաց մի լինիր, մահը փառք է ինձ, սիրասուն որդի,
Ուրիշա՛րդ, բաղումիս հետևիր կարգին:
Դե՛հ, մնա՛ս բարյավ: Թող քո հույսերը միշտ պայծառ շողան,
Հաջողակ եղիր խաղաղության մեջ և ռազմի դաշտում:

Մեռնում է:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Թող խաղաղությամբ միշտ մնա հոգին,

Դու մութ զնդանում ուխտավոր եղար,
Կյանքդ ապրեցիր ճգնավորի պես:
Իմ հոգում պիտի խորհուրդդ պահեմ,
Եվ ինչ խորհեցի՝ կհանգչի այստեղ:
Հե՜յ, պահապաննե՛ր, տարե՛ք մարմինը,
Ես պիտի ջանամ, որ թաղումն անցնի
Ավելի շքեղ, քան կյանքն էր նրա:

Բանտապահները տանում են Մորտիմերի մարմինը:

Ահա հանգչում է իմ խեղճ մորեղբոր ջահը՝ թախծալի,
Որին թշնամու փառամոլ ոգին խեղդամահ արեց.
Այս վիրավորանքն ու այս ցավալի ամոթանքները
Որ Սոմերսետը տոհմիս հասցրեց,
Կտեսնեն ինձնից պատշաճ հատուցում:
Դրա համար էլ ես շտապում եմ դեպի պառլամենտ.
Որ վերադարձնեն իրավունքն իմ տան
Կամ շահս զոհեմ արով չարության:

Գնում է:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Պառլամենտ:

Փողեր: Մտնում են Հենրի թագավորը, Էքսետերը, Գլոստերը, Ուինչեստերի եպիսկոպոսը. Վորվիկը. Սոմերսետը. Սեֆոլկը. Ռիչարդ Պլանտագենետը և ուրիշներ: Գլոստերը փորձում է ներկայացնել մի ամբաստանագիր: Եպիսկոպոսը հափշտակելով թուղթը՝ պատռում է:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մի՞թե, Գլոստեր, եկել ես այստեղ
Նախապատրաստված նամակներ ձեռքիդ
Եվ հորինել ես փութեռանդորեն պարսավագրեր:
Եթե ուզում ես որևէ բանով ինձ մեղադրել
Կամ ինձ հետ չափվել, դու գործի անցիր,
Պետք չէ նախապես երկար պատրաստվել, քանզի կարող եմ
Քեզ պատասխանել մի ակնթարթում, խիստ հանկարծակի:

ԳԼՈՍՏԵՐ

Ժպիրհ քահանա՛, վայրը սրբազան
Ստիպում է ինձ համբերող լինել,
Թե ոչ՝ զայրույթը այս անարգանքի դու կտեսնեիր:
Մի՛ կարծիր, որ ես. եթե գրավոր շարադրել եմ
Քո թշնամական պիղծ արարքների ձևերը բոլոր,
Ի վիճակի չեմ բանավոր կրկնել:
Ո՛չ: Եպիսկոպո՛ս: Այնպես հանդուգն է քո չարությունը,
Քո ապականիչ շվայտությունը, ստոր արարքը,
Որ մանուկներն էլ քո գոռոզության մասին են խոսում:

Դու կարծանարար վաշխառու ես մի,
Բնությամբ դաժան և խաղաղության անարգ թշնամի,
Ավելի շվայտ և ապականված, քան պատշաճում է
Նման մի մարդու դիրք ու պաշտոնին:
Ի՞նչ կասես այժմ դավանանական գործերիդ մասին.
Դու չէի՞ր արդյոք կամրջի վրա և Թաուերում
Գլոստերի սարքել ծուղակ կյանքիս դեմ:
Բացի այդ, եթե մտքերդ մաղեն, ես վախենում եմ,
Որ թագավորն էլ՝ տերը գերագույն, ազատ չէր բնավ
Քո զոռոզ սրտի չարակն ու նախանձ խարդավանքներից:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այպանում եմ քեզ: Իշխաննե՛ր, լսեք,
Թե ինչ պատասխան կտամ ես նրան:
Եթե ես իրավ, մի փառամոլ եմ, ընչասեր, ագահ,
Ինչպես նա ասաց, ապա ես ինչո՞ւ աղքատ եմ այսքան,
Ինչո՞ւ եղումիս միշտ հավատարիմ՝
Չեմ ձգտում երբեք բարձր պաշտոնի:
Գալով այս վեճին. ո՞վ է նախընտրում խաղաղությունը
Ինձնից առավել, թե ինձ չեն քաշում խորքը գժտության:
Ո՛չ, ո՛չ, իշխաններ, սա չէ չարության պատճառը բնավ.
Եվ սա չէր կարող բորբոքել դուքսին.
Պատճառը այն է, որ նա ուզում է իշխել միայնակ
Եվ չի կամենում որևէ մեկը մոտ լինի Հենրուն:
Ահա թե ինչու նրա պիղծ հոգում ամպրոպ է ծնվում,
Ինչն ստիպում է գրպարտանքներով անվերջ որոտալ:
Թող նա իմանա, որ ես իրենից պակաս չեմ երբեք:

ԳԼՈՍՏԵՐ

Պակաս չե՞ս երբեք.
Դու ապօրինի որդին չե՞ս պապիս:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Այո՛, ամբարիշտ. իսկ դո՛ւք, դո՛ւք ո՞վ եք:
Եթե ոչ այլոց թագին աչք տնկող:

ԳԼՈՍՏԵՐ

Հանդուգն տերտեր, ես չե՞մ հովանին:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ես եկեղեցու առաջնորդը չե՞մ:

ԳԼՈՍՏԵՐ

Այո՛, քեզ պես է ավազակն ապրում այն ամրոցի մեջ.
Ուր թաքցնում է յուր կողոպուտը:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Սրբապի՜ղծ Գլոստե՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

Անպի՜ղծը դու ես
Իբրև կրոնավոր. սակայն ոչ՝ վարքով:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Դրա պատասխանն Հռոմից կգա:

ՎՈՐՎԻԿ

Ուրեմն՝ Հռոմ դու անապարիր:

ՍՈՄԵՐՍԵՏ

Տեր իմ, ձեր պարտքն է լինել ողջախոհ:

ՎՈՐՎԻԿ

Այո՛, բայց տեսեք, ինչպե՜ս է պահում եպիսկոպոսը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Օ՜, տերն իմ պետք է բարեպաշտ լիներ,
Եվ պարտքն իմանար հավուր պատշաճին:

ՎՈՐՎԻԿ

Կարծում եմ, պետք է լիներ շատ խոնարհ
Եվ իրեն պահեր առաջնորդը գուսպ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Այո, բայց այդքան չի վիրավորել սրբազան հայրը...

ՎՈՐՎԻԿ

Օ՜, սուրբ է, թե ոչ, այդ միևնույն է.
Մի՞թե դուքսը չէ խնամակալը մեր թագավորի:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

(Առանձին). Ինչպես տեսնում եմ, Ռիչարդ, պետք է որ քո լեզուն զսպես,
Որպեսզի չասեն՝ խոսիր երբ հարկն է,
Եվ մի խառնվիր հանդուգն կարծիքով այս իշխանների խոսք ու զրույցին,
Այլապես պետք է դառնորեն հեգնես եպիսկոպոսին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ձեզ՝ հորեղբայրներ, մեր մեծ տերության հատուկ պաշտպաններ,
Ես կխնդրեի, երբ խնդրանքս կարող է իշխել,
Որ ձեր սրտերը միանան սիրով ու մտերմությամբ:
Օ՜, ինչ ամոթանք մեր թագ ու գահին.
Երբ նման երկու ազնիվ իշխաններ վիճում են այսպես:
71 Ինձ հավատացեք, թեև ջահել եմ,
Բայց պիտի ասեմ, որ քաղաքային խռովությունը
Թունոտ որդի պես կրծում է ներսը ամեն տերության:

Բեմի խորքից բղավում են. «Խփե՛ք շեկ զգեստավորներին»:

Ի՞նչ աղմուկ է սա:

ՎՈՐՎԻԿ

Ես հանդգնում եմ ասել՝ խռովություն:
Սա առաջնորդի մարդիկ են սարքել:

Նորից բղավում են. «Քարկոծել, քարկոծել»:
Մտնում է Լոնդոնի քաղաքագլուխը:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Օ՜, ազնիվ տյարք իմ և բարի Հենրի,
Գութ մեզ գթացեք և մեր քաղաքին:
Եպիսկոպոսի և դուքս Գլոստերի կողմնակիցները.
Որոնց վերջերս խիստ արգելված էր զենքեր պահելու,
Քար և խիճ լցրին իրենց գրպանը
Եվ, երկու ներհակ խմբեր կազմելով,
Այնպես փութեռանդ ու խելապատառ խփեցին իրար.
Որ շատերն իրենց հիմար ուղեղը գլխից թափեցին:
Եվ փողոց նայող պատուհանները ջարդ-փշուր եղան,
Վախից փակեցինք խանութները մեր:

Մտնում են Գլոստերի և Եպիսկոպոսի կողմնակիցները: Նրանք կռվում են:
Շատերի գլխից արյուն է հոսում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պատվիրում եմ ձեզ՝ ի նշան խոնարհ հպատակության,
Թող դադար առնեն ձեր ձեռքերն արնոտ
Եվ խաղաղություն հաստատվի այստեղ:
Աղերսում եմ ձեզ, ազնիվ հորեղբայր, վերջ տվեք կռվին:

Ա ԾԱՌԱ

Եթե չեք թողնում քարերով կռվել, ապա ցույց կտանք մեր ատամները:

Բ ԾԱՌԱ

Դեհ, համարձակվեք, չենք զիջի երբեք:

Նորից կռվում են:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ տան ծառաներ. թողեք դյուրաբորբ այս գժտությունը
Եվ մի կողմ ձգեք կռիվն անպատշաճ:

Գ ԾԱՌԱ

Տեր իմ. մենք գիտենք, որ դուք մի ազնիվ ու շիտակ մարդ եք,
Եվ ձեր ծնունդով զիջում եք միայն արքային բարի:
Մենք չենք հանդուրժի ձեզ պես իշխանին՝
Մեր մեծ տերության հորը բարեգութ,
Մի սևահոգի արատավորի:
Եվ մենք բոլորս՝ երեխա ու կին,
Պատրաստ ենք նետել մեր մարմինները թշնամու առաջ:

Ա ԾԱՌԱ

Այո, և նույնիսկ մեր եղունգները
Կփորեն դաշտը, երբ մենք չենք լինի:

Նորից կռվում են:

ԳԼՈՍՏԵՐ

Սպասեք, եթե
Դուք սիրում եք ինձ, ինչպես ասացիք,
Լսեք ու թողեք այս գժտությունը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, այս գժտությունն ինչպիսի՜ վիշտ է պատճառում հոգուս.
Դուք, եպիսկոպոս, կարող եք տեսնել
Իմ արտասուքը և հառաչանքը. մի՞թե չեք ուզում մեղմանալ հոգով:
Ո՞վ պետք է գթա, ա՜խ, եթե ոչ դո՛ւք.
Կամ թե ո՞վ պիտի մեզ մատուցանի խաղաղությունը,
Թե եկեղեցու բարձրադիրք մարդիկ հաճույք են գտնում խռովության մեջ:

ՎՈՐՎԻԿ

Զիջե՛ք, հովանի, զիջե՜ք, առաջնո՛րդ,

Եթե չեք ուզում կամակորությամբ
Դուք հրաժարվել ձեր վեհափառի սպանությունից
Եվ կործանումից մեր իշխանության: Մի՞թե չեք տեսնում.
Ձեր թշնամությամբ ծնվեցին այսքան մահ ու կոտորած,
Հաշտվե՛ք, խնդրում եմ, եթե ձեր հոգին ծարավ չէ արյան:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Թող նա հաշտվի, թե ոչ՝ չեմ զիջի:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ սերն առ արքան՝ պատվիրում է ինձ լուռ հնազանդվել,
Այլապես նախքան նրան ներելը,
Ես կպոկեի նրա սիրտը պիղծ:

ՎՈՐՎԻԿ

Նայի՛ր, առաջնո՛րդ, դուքսը իր սրտից
Վանել է արդեն խիստ անագորույն մոլեգնությունը,
Նրա ճակատին կնճիռներ չկան,
Ինչո՞ւ ես այսքան մռայլ ու դժգոհ:

ԳԼՈՍՏԵՐ

Լորդ Ուինչեստեր, մեկնում եմ ձեռքս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ամո՜թ, հորեղբա՛յր: Քարոզել եք միշտ,
Որ չարությունը մեղք է դառնագին:
Մի՞թե չեք ուզում ձեր քարոզները գործով պաշտպանել.
Թվում է նրանց ախոյանն եք մեծ:

ՎՈՐՎԻԿ

Սիրելի արքա, դուքս առաջնորդի նկատմամբ եղավ չափազանց բարի
Ամո՜թ է, հաշտվե՛ք, լորդ Ուինչեստեր:
Մի՞թե երեխան ձեզ պետք է ասի՝ ինչ եք անելու:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Շատ բարի, Գլոստեր: Ես կամենում եմ քեզ հետ հաշտվել:
Տալիս եմ ազնիվ սերս քո սիրույն ու ձեռքս՝ ձեռքիդ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին). Այո՛, բայց ավա՜ղ, վախենում եմ ես, որ դատարկ սրտ
Դուք նայեք այստեղ, իմ բարեկամներ և իմ սիրելի հայրենակիցներ

Ահա նշանն այն, որ պետք է լինի հաշտության դրոշ
Համախոհներիս ու մերոնց միջև:
Ասված է վկա՝ հոգիս է մաքուր:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Առանձին). Ասված է վկա, հոգիս մաքուր չէ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, իմ սիրասուն, ազնիվ հորեղբայր, բարի Գլոստեր,
Որքան ուրախ եմ ձեր այս հաշտությամբ:
Հե՜յ. մարդի՛կ, գնացե՛ք, մի վրդովեք մեզ,
Բայց ձեր սրտերը բարեկամաբար ձուլեք իրարու,
Ինչպես արեցին ձեր տերերն ազնիվ:

Ա ԾԱՌԱ

Լավ, ես կգնամ վիրաբույժի մոտ,

Բ ԾԱՌԱ

Ես նույնպես, տղե՛րք:

Գ ԾԱՌԱ

Իսկ ես կփնտրեմ դեղը պանդոկում:

Գնում են ծառաները, լորդերի քաղաքագլուխը և ուրիշներ:

ՎՈՐՎԻԿ

Տեր իմ, ընդունեք հյուսակն գրոց,
Ձեր արքայական վեհության ի տես
Ներկայացնում ենք Ռիչարդի կողմից:

ԳԼՈՍՏԵՐ

Սքանչելի քայլ, իմ ազնիվ Վորվիկ:
Ձերդ մեծություն, դուք ծանր ու թեթև անելուց հետո
Կիմանաք գործի էությունն ամբողջ,
Եվ դուք կունենաք հիմքերը բոլոր, որպեսզի Ռիչարդն իր դիրքն ստանձնի:
Հատկապես, տեր իմ, նկատի առեք այն հանգամանքը,
154 Որ ձեզ ասացի Էլթեմ պալատում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս պատճառները, բարի հորեղբայր, զորավոր են խիստ,
Ահա թե ինչու, ազնիվ իշխաններ, հաճելի է մեզ,
Որ արենակից յուր տոհմը կրկին Ռիչարդը դառնա:

ՎՈՐՎԻԿ

Թող վերադառնա Ռիչարդն իր տոհմը,
Նա կհատուցի նոր վրեժի համար:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ինչ ուրիշներն են կամենում, տեր իմ,
Նույնն էլ ուզում է Ուինչեստերը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թե Ռիչարդ, մնաս ինձ հավատարիմ,
Ոչ միայն իրավունքդ, այլև քեզ կտամ
Յորքի բովանդակ ժառանգությունը,
Որի արմատից քո ճյուղն է ծլել:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Քեզ ազնիվ ծառադ հնազանդորեն երդում է տալիս,
Որ կծառայի մինչև իր մահը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խոնարհվի՛ր, Ռիչա՛րդ, և ծունր իջիր իմ գահի առջև.
Ի հատուցումն քո հնազանդության՝
Մեջքիդ եմ կապում Յորքի մեծ սուրը:
Բարձրացի՛ր, Ռիչարդ, որպես իսկական Պլանտագենետ,
Բարձրացի՛ր, նորից քեզ շնորհվել է Յորքի անունը:

ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ

Թող ձեր թշնամուն ոչնչացնի հաջողությունս,
Ես կկատարեմ պարտքն իմ սրբազան,
Կկորչեն, տեր իմ, չարակամ մարդիկ,
Ովքեր ձեր հանդեպ քենով են լցված:

ԲՈԼՈՐԸ

Ողջո՜ւյն, բարձրատոհմ, հզոր Յորքի դուքս:

ՍՈՄԵՐՍԵՏ

(Առանձին). Կորսվի՛ր, նվաստ, Յորքի ստոր դուքս:

ԳԼՈՍՏԵՐ

Ամենահարմար առիթն է հիմա, ձերդ մեծություն,
Որ անցնեք ծովը և Ֆրանսիայում կարգվեք թագավոր:
Ձեր ներկայությամբ սեր կարթնացնեք

Ձեր հպատակների, բարեկամների ուղղամիտ սրտում
Եվ կսարսափեցնեք թշնամիներին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Երբ Գլոստերն է այս բառերն ասում, ուրեմն կմեկնեմ.
Երբ խրատներն են ազնիվ ու բարի՝
Չկա թշնամի քո ճանապարհին:

ԳԼՈՍՏԵՐ

Տեր իմ, պատրաստ են ձեր նավերն արդեն:

Փողեր: Գնում են բոլորը, բացի Էքսետերից:

ԷՔՍԵՏԵՐ

Այո, Անգլիայում կամ Ֆրանսիայում պետք է մենք լինենք,
Բայց, ավա՜ղ, ի՞նչ է մեզ սպասելու, հայտնի չէ բնավ:
Այս գժտությունը, որ խիստ բորբոքվեց լորդերի միջև,
Այրվում է դանդաղ նենգադավ սուտ մոխրով անթեղված,
Եվ պետք է մի օր բռնկվի բոցով,
Ինչպես որ դանդաղ մարմինն է փտում,
Քանի չեն թափվել ոսկորն ու միսը,
Այնպես էլ պետք է այս չար ու ստոր վեճը ծավալվի:
Սարսափում եմ ես ճակատագրական գուշակությունից,
Որը հնչում էր ծծկեր տղայից կաթոտ շուրթերին,
Երբ որ իշխում էր Հենրի Հինգերորդն իր տերությունը.
198 «Հենրի Հինգերորդն ինչ որ վաստակեց,
Վինձորում ծնված Հենրին կվատնի»:
Այս ամենն այնքան պարզ է ու որոշ, որ երազում է Էքսետերն արդեն՝
Ավելի արագ օրերն ավարտել, քան թե կտեսնի այդ դժբախտ օրը:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆրանսիա: Ռուանի առաջ:

Մտնում են Ժաննա դ'Արկը և չորս զինվոր գյուղացու հագուստով, ուսներին պարկեր:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Դարպասներն անա Ռուան քաղաքի:

Խորամանկությամբ պետք է թափանցել դռների ետև:
Արդ՝ զգույշ եղեք, թող ձեր բառերը ձեր դիրքը հուշեն՝
Խոսեք հասարակ գյուղացու նման,
Որն իր ցորենը շուկա է բերել ծախելու համար:
Երև ներս թողնեն (ինչպես հույս ունեմ),
Եվ մեզ պարզ դառնա, որ պահակները անուշադիր են,
Ես կհաղորդեմ ազդանշանով բարեկամներիս,
Որ մեր դոֆինը գրոհը սկսի·

Ա. ԶԻՆՎՈՐ

Կոզնեն պարկերը, որպեսզի քաղաքն առնենք պարկի մեջ,
Եվ մեր տերությունը այնտեղ հաստատենք:
Սուրեմըն, բախենք:

Բախում են դռները:

ՊԱՀԱԿ

(Ներսից). Qui va la[1]:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Paysans, pauves gens de France[2],
Խեղճ գյուղացիներ, որ իրենց ցորենն ուզում են ծախել:

ՊԱՀԱԿ

(Բանալով դռները). Դե՛հ, շո՛ւտ ներս մտեք.
Շուկայի զանգը խփել է արդեն:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Արդ, Ռուան քաղաք, ես պիտի ցնցեմ քո հիմքերն ամուր:

Մտնում են Ժաննա դ'Արկը և զինվորները:
Գալիս են դոֆինը, Օրլեանի Բաստարդը, Ալանսոնը, Ռենեն և զորքը:

ՇԱՌԼ

Սուրբ Դենի, օրհնիր հնարքն երջանիկ,
Եվ մենք ապահով նորից կքնենք Ռուան քաղաքում:

ԲԱՍՏԱՐԴ

Ներս մտավ Ժաննան զինվորների հետ,
Այնտեղ է հիմա, բայց նա ինչպես է ցույց տալու տեղը,
Թե մենք որտեղից կարող ենք խուժել ավելի հաջող:

---

1 *Ո՞վ է այնտեղ:*
2 *Գյուղացիներ, խեղճ ֆրանսիացիներ (ֆրանս.):*

ՌԵՆԵ

Նա աշտարակից կպարզի ջահը,
Որը ցույց կտա՝ իր գտած տեղից
Ավելի դյուրին ճանապարհ չկա:

Աշտարակի ծայրին երևում է Ժաննա դ'Արկը: Նա թափահարում է հրավառ ջահը:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Նայե՛ք, երջանիկ պսակադրության բոցավառ ջահին՝
Խաբում է Ռուանն իր ժողովրդին:
Բայց տոլբոտների մահն է գուշակում:

Գնում է:

ԲԱՍՏԱՐԴ

Նայի՛ր, ազնիվ Շառլ, մեր բարեկամը նշան է անում,
Այն աշտարակից լույս է երևում:

ՇԱՌԼ

Թող փայլի ջահը վրեժխնդրության գիսաստղի նման
Եվ մեր թշնամու մահը գուշակի:

ՌԵՆԵ

Հապաղման ժամ չէ՛: Հապաղումն ունի ծանր հետևանք:
Պետք է ներս խուժենք և իսկույն կոչենք՝ թագաժառա՛նգը:
Ապա վերջ կտանք պահակախմբին:

Տագնապ: Մտնում են քաղաք:
Տագնապ: Գալիս է Տոլբոտը կռվելով:

ՏՈԼԲՈՏ

Դավաճանության համար, Ֆրանսիա՛, դու պետք է ողբաս,
Եթե Տոլբոտը նորից ողջ մնա քո մատնությունից:
Ժաննա դ'Արկը՝ այս գեհենապատ դժնի վհուկը,
Այս դժոխային փորձանքը հանկարծ բերեց մեր գլխին,
Եվ մենք հազիվհազ ճողոպրեցինք գոռոզ թշնամուց:

Գնում է:

Տագնապ: Ընդհարումից հետո բերում են հիվանդ Բեդֆորդին՝ բազկաթոռի մեջ: Գալիս են Տոլբոտը և Բուրգունդիայի դուքսը: Պարսպի վրա բարձրանում են Ժաննա դ'Արկը, Շառլը, Բաստարդը, Ալանսոնը, և Ռենեն:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Բարի՛ լույս, քաջե՛ր, ցորեն չե՞ք ուզում ձեր հացի համար,

Բուրգունդի դուքսը կգերադասի անվերջ ծոմ պահել,
Քան թե այդ գնով ցորեն ձեռք բերել:
Որոմ եմ խառնել, չէ՞ք բարեհաճի:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Հեգնիր, սուտ դև՛, անզգամ պոռնիկ,
Ես քեզ կխեղդեմ քո հացով հիմա
Եվ դու ստիպված՝ բերքդ կանիծես:

ՇԱՌԼ

Մինչև այդ գուցե, ձերդ մեծություն, սովից մահանաք:

ԲԵԴՖՈՐԴ

Օ՜, թո՛ղ սխրանքը, ոչ թե բառերը
Մեր վրեժն առնի նենգության համար:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Չե՞ս ուզում բարի, սպիտակ մորուք, շարժել մի նիզակ,
Կռվել մահվան հետ բազկաթոռի մեջ:

ՏԱԼԲՈՏ

Դու դև՛ Ֆրանսիայի, վհո՛ւկ չարության,
Դու շրջապատված տռփոտ ու վավաշ սիրեկաններով,
Փորձում ես ծաղրել նրա փառավոր քաջ ծերությունը
Եվ հանդիմանում կիսամեռ մարդուն երկչոտության մեջ,
Լսի՛ր դու, պոռնի՛կ, եթե ես նորից քեզ հետ չկռվեմ,
Թող մեռնի Տալբոտն այս ամոթանքից:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Մի՞թե դուք այսքան շուտ եք բռնկվում:
Ժաննա, դու պետք է խիստ զգույշ լինես,
Եթե Տալբոտն է շանթում, որոտում՝ անձրև սպասիր:

Տալբոտը և անգլիացիները շշուկով խորհրդակցում են իրար հետ:

Աստված հաջողե խորհրդարանին: Ո՞վ է լինելու խոսողն առաջին:

ՏԱԼԲՈՏ

Դուք համարձակվո՞ւմ եք դուրս գալ քաղաքից ու կռվել մեզ հետ:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Մի՞թե մենք այնքան հիմար ենք, պարոն, որ նորից ստուգենք՝
Մե՞րն է մեր կայքը, թե՞ ուրիշինն է:

ՏՈԼԲՈՏ

66 Ո՛չ թե խոսում եմ չար Հեկատեի,
Այլ քեզ և ուրիշ զինվորների հետ, սինյոր Ալանսոն:
Չե՞ք ուզում կռվել զինվորի նման:

ԱԼԱՆՍՈՆ

70 Օ՜, երբե՛ք, սինյոր:

ՏՈԼԲՈՏ

Կորեք իմ աչքից, դուք Ֆրանսիայի ստոր ջորեպաններ,
Ասես թե լինեն գեղջուկ ծառաներ, որ թաքնվում են պատերի ետև,
Երբ հարկ է լինում մի տեղ ուղարկել
Եվ չեն հանդգնում ասպետի նման զենքը ձեռքն առնել:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Հրամանատարներ, իջնենք պարսպից,
Տոլբոտի հայացքն երբեք բարության ակնարկ չի անում:
Տեր ընդ ձեզ, պարոն: Եկանք ասելու, որ մենք այստեղ ենք:

Ժաննա դ'Արկը և ուրիշները իջնում են պարսպից:

ՏՈԼԲՈՏ

Մենք էլ շատ շուտով կլինենք այդտեղ,
Թե ոչ մեծ փառքս պիտի անարգվի:
Երդվի՛ր, Բուրգունդցի քո տոհմի պատվով՝
Որն անարգված է ողջ Ֆրանսիայում,
Քաղաքն ետ կառնես կամ թե կմեռնես:
Եվ ուխտն իմ ճիշտ է, ինչպես որ Հենրին ապրում է կյանքում.
Ինչպես որ նրա հայրն այստեղ հաղթեց,
Ինչպես որ հենց նոր դավաճանությամբ առած քաղաքում
Մեծ առյուծասիրտ Ռիչարդն է հանգչում:
Ես էլ եմ երդվում քաղաքն ետ առնել կամ մեռնել, տեր իմ:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Իմ երդումները քո խոստումների ընկերն են շիտակ:

ՏՈԼԲՈՏ

Բայց մինչ մեկնելը, նայիր այս մեռնող մեր դուքս Բեդֆորդին:
Միլորդ, ձեզ համար մենք պետք է ընտրենք ապահով մի տեղ,
Ինչպես հարմար է հիվանդությանը ու ծեր տարիքին:

ԲԵԴՖՈՐԴ

Դո՛ւ, իշխան Տալբոտ, անպատվում ես ինձ,
Ես պիտի նստեմ այս քաղաքի տակ
Եվ կիսեմ քեզ հետ վիշտ ու խնդություն:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Անվեհեր Բեդֆորդ, աղերսում եմ ձեզ, համոզվեք, որ դուք ...

ԲԵԴՖՈՐԴ

Ո՛չ մի քայլ, պարոն... Ես կարդացել եմ,
Որ քաջ Պենտրագոն՝ հիվանդ ու տկար, դաշտ է գնացել
Իր պատգարակով և իր թշնամուն պարտության մատնել:
Կարծում եմ, որ ես կարող եմ ուժ տալ զինվորի սրտին,
Քանզի նրանց մեջ ինձ եմ տեսել միշտ:

ՏԱԼԲՈՏ

Օ՜, անվա՛խ ոգի՝ մեռնող կրծքի տակ,
Թող այդպես լինի և ծեր Բեդֆորդին երկինքը հսկե:
Արդ, քան երբևէ, Բուրգունդիայի դուքս,
Պետք է հավաքել ցիրուցան եղած բանակները մեր
Եվ խիստ հարվածել գոռոզ թշնամուն:

Գնում են բոլորը, բացի Բեդֆորդից ու նրա սպասավորներից:
Տագնապ: Ընդհարում: Գալիս են սըր Ջոն Ֆաստոլֆը և մի կապիտան:

ԿԱՊԻՏԱՆ

Ո՞ւր եք շտապում, միլորդ Ջոն Ֆաստոլֆ:

ՖԱՍՏՈԼՖ

Ո՞ւր եմ շտապում, կաշիս փրկելու:
Կարծես թե նորից մեզ պիտի ջարդեն...

ԿԱՊԻՏԱՆ

Ի՞նչ: Կամենում եք փախչել այստեղից և մենակ թողնել իշխան Տալբոտին:

ՖԱՍՏՈԼՖ

Այո՛, աշխարհի ողջ տալբոտներին: Ես կյանքս եմ փրկում:

Գնում է:

ԿԱՊԻՏԱՆ

Քեզ, վախկոտ ասպետ, թող միշտ ուղեկցի բախտը չարագույժ:

Տագնապ: Ընդհարում: Ժաննա դ'Արկը, Ալանսոնը և Շառլը փախչում են քաղաքից:

ԲԵԴՖՈՐԴ

Հիմա, երբ աստծու կամքն է այսպիսին,
Կարող ես հանգչել, խաղաղված հոգի, քանզի ես տեսա փախչող թշնամուն:
Որտե՞ղ են արդյոք խելագարների ուժն ու հավատը,
Նրանք, որ հաճախ մեզ ծաղրում էին.
Գոհ են, որ կյանքն են փրկում փախուստով:

Բեդֆորդը մեռնում է: Սպասավորները նրան տանում են բազկաթոռի մեջ ընկղմած: Տագնապ: Գալիս են Տոլբոտը, Բուրգունդիայի դուքսը և ուրիշներ:

ՏՈԼԲՈՏ

Մեկ օրում կորցնել, նորից ետ բերել՝
Փառք է կրկնակի, Բուրգունդիայի դուքս:
Օրհնենք Երկնքին հաղթության համար:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Ռազմասեր ու քաջ իշխան իմ Տոլբոտ,
Բուրգունդի դուքսը պետք է իր սրտում քեզ հավերժ պահի
Եվ կանգնեցնի այնտեղ արարքիդ անմահ հուշարձան:

ՏՈԼԲՈՏ

Շնորհակալություն, սիրելի իմ դուքս:
124 Բայց ո՞ւր է կույսը, կարծեմ, նիրհում է նրա չար ոգին,
Ո՞ւր է Բաստարդի խիզախությունը, ո՞ւր է դոֆինի ծաղր ու ծանակը:
Ի՞նչ: Մահացե՞լ են: Ռուանը վշտից գլուխն է կախել,
Որ մի այսպիսի կտրին զորախումբ փախել է արդեն:
Տեր իմ, քաղաքում մենք կարգ ու կանոն պետք է հաստատենք,
Եվ դնենք այնտեղ հմուտ սպաներ
Եվ մեկնենք Փարիզ, թագավորի մոտ,
Ուր ժամանել է մեր ջահել Հենրին յուր շքախմբով:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Ինչ կամենում է իշխան Տոլբոտը, հաճո է, անշուշտ. Բուրգունդի դուքսին:

ՏՈԼԲՈՏ

Մեկնելուց առաջ մենք պետք է հիշենք ազնիվ Բեդֆորդին,
Որ այստեղ կնքեց իր մահկանացուն,
Եվ պետք է պատվով թաղենք Ռուանում:
Ո՛չ մի քաջ ռազմիկ չէր կարող ջարդել նրա պես նիզակ,
Ո՛չ մի ազնիվ սիրտ դեռ չի բաբախել գահերի առաջ,

Բայց արքաներն էլ և հզոր մարդիկ պետք է մահանան՝
Բոլորին կյանքում սպասում է լոկ մի ցուրտ գերեզման:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Հարթավայր Ռուանի մոտ:

Գալիս են Շառլը, Բաստարդը, Ալանսոնը, Ժաննա դ'Արկը և զորքը:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Իշխաննե՛ր, բնավ մի ահաբեկվեք այս պատահարից,
Եվ մի վշտանաք, որ նրանք նորից Ռուանը առան.
Վհատությունը սպեղանի չէ, այլ թույն է դառն,
Երբ հնար չկա գործերն ուղղելու:
Թող խելացնոր Տոլբոտը գնծա կարճ ժամանակով,
Պոչը տարածի սիրամարգի պես:
Մենք քամուն կտանք փետուր ու բմբուլ. կպոկենք պոչը,
Երբ դոֆինը և ուրիշները իմ ետևից գան:

ՇԱՌԼ

Ցարդ դու ես, ով կույս, մեզ առաջնորդել,
Եվ չենք կասկածել քո ուժի վրա.
Մեկ ճանկարծակի վրիպումն երբեք պատճառ չէ բնավ անվստահության:

ԲԱՍՏԱՐԴ

Կործի դիր նորից քո ուժն ու խելքը,
Մենք կտարածենք քո փառքն աշխարհով:

ԱԼԱՆՍՈՆ

Արձանդ պիտի դնենք տաճարում
Եվ երկրպագենք քեզ իբրև մի սուրբ,
Երբ, քաղցր կույս, մեր վիշտն ամոքես:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ահա թե ինչ է Ժաննան որոշում.
Պետք է գեղեցիկ, մեղրահամ խոսքով
Դիվահան անել Բուրգունդի դուքսին,
Որպեսզի լքի ընդմիշտ Տոլբոտին և մեզ միանա:

ՇԱՌԼ

Այո, սիրելիս, թե կարողանանք դա գլուխ բերել,
Ապա մեր երկրում Հենրիի զորքը տեղ չի ունենա,
Եվ այդ ժողովուրդն էլ չի պարծենա,
Մեր գավառներից դուրս կվռնդենք:

ԱԼԱՆՍՈՆ

Կքշենք ընդմիշտ նրանց մեր հողից
Եվ թող չունենան նույնիսկ կոմսության ոչ մի իրավունք:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Կտեսնենք, ինչպես ես կանցնեմ գործի,
Որ ձեզ հասցնեմ ափը բաղձալի:

Հեռվից լսվում է թմբուկների ձայն:

Լսեք, այդ ձայնով կարող եք զգալ,
Որ նրանց զորքը մեկնում է Փարիզ:

Անգլիական քայլերգ: Հեռվից անցնում են Տոլբոտը և նրա զորքը:

Տոլբոտն է գնում դրոշներ պարզած,
Նրա ետևից՝ ողջ զորքն Անգլիայի:

Ֆրանսիական քայլերգ: Գալիս են Բուրգունդիայի դուքսը և նրա զորքը:

Դուքսը իր զորքով գալիս է վերջից.
Մեր բախտը բերեց, որ նա ետ մնաց:
Դեհ, բանակցության փողեր հնչեցրեք,
Մենք ցանկանում ենք նրա հետ խոսել:

Հնչեցնում են բանակցության փողեր:

ՇԱՌԼ

Բուրգունդիայի դուքս, մենք կամենում ենք ձեզ հետ բանակցել:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Ո՞վ է ցանկանում խոսել դուքսի հետ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Տե՛ր իմ, Ֆրանսիայի թագաժառանգը, հայրենակիցդ:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Ի՞նչ պետք է ասես, շտապում եմ, Շառլ:

ՇԱՌԼ

Խոսիր, չքնա՛ղ կույս և քո բառերով հմայիր նրան:

ԺԱՆՆԱ Դ՛ԱՐԿ

Արիասիրտ դուքս, Ֆրանսիայի հույս,
Կա՛ց. խոնարհ ծառադ ուզում է խոսել:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Խոսիր, բայց՝ հակիրճ:

ԺԱՆՆԱ Դ՛ԱՐԿ

Նայիր քո երկրին, նայիր արգավանդ հարազատ հողին,
Տե՛ս, թե ինչպես է թշնամին դաժան
Քո քաղաքները, ամրոցներն այրում:
Ա՜խ, նայի՛ր, մաշող հիվանդությանը քո հայրենիքի.
Այսպես նայում է մայրը մանկանը,
Երբ մահն է փակում նրա քնքշագին մեռնող աչքերը:
Նայիր վերքերին խիստ օրհասական,
Որ դու բացում ես նրա ցավոտ կրծքին:
Օ՛. ետ դարձրու շեղբը դաշույնիդ և խոցիր նրան.
Ով վերք է տալիս, ոչ թե՝ երկրիդ նեցուկ զինվորին:
Քո հայրենիքի կրծքից դուրս ժայթքած արյան ամեն շիթ
Պետք է ավելի քեզ վիշտ պատճառի, քան թե օտարի գետերը արյան:
Դարձիր. արցունքիդ առատ հեղեղով
Սրբիր քո երկրի բիծն արատավոր:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

(Առանձին) Ես կախարդվեցի նրա՜ բառերով,
Թե՞ բնությունն է իմ խիղճը շարժում:

ԺԱՆՆԱ Դ՛ԱՐԿ

Ամբողջ Ֆրանսիան նայում է քեզ արդ,
Խիստ կասկածելով քո օրինավոր ծնունդի վրա,
Դու դաշն ես կնքել գոռոզ ազգի հետ,
Որ վստահում է քեզ լոկ շահույթի նպատակներով:
Երբ որ Տոլբոտը ոտքն ամրացնի մայր հողի վրա
Եվ քեզնից ձուլի չարության գործիք,
Ո՛վ պետք է իշխի այստեղ տիրաբար, եթե ոչ՝ Հենրին:
Եվ որպես թշվառ մի փախստական՝ քեզ կվռնդեն:
Որպես ապացույց բերում եմ մի փաստ.

Օ՜, սաս՛, մի՞թե քո թշնամին չէր դուքսն Օռլեանի
Եվ մի՞թե նա չէր գերված Անգլիայում,
Բայց երբ իմացան, որ թշնամիդ է՝
Բաց թողին նրան՝ չառնելով նույնիսկ ոչ մի փրկագին
Ի հենուկս քեզ, և քո բազմաթիվ բարեկամների։
Նայի՛ր, կռվում ես ընդդեմ քո երկրի,
Դաշինք կնքելով դահիճներիդ հետ.
Դարձի՛ր, ե՜տ դարձի՛ր. ով մոլորյալ դուքս.
Քեզ կառնեն իրենց պերի վրա թագաժառանգը և իշխանները։

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

(Առանձին) Ես պարտված եմ։ Նրա բառերը սիրտս խոցեցին,
Հանց հրանոթի ոռնացող արկեր,
Եվ ստիպեցին, որ ծունր իջնեմ։
Ների՛ր հայրենիք, ների՛ք, իմ բարի հայրենակիցներ,
Իսկ դուք՝ իշխաններ, ընդունեք անկեղծ ողջագուրանքս,
Ես ձեզ եմ հանձնում իմ սուրն ու զորքը։
Դե՛հ, մնա՜ս բարյավ, քեզ չեմ վստահում այլևս, Տոլբոտ։

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

(Առանձին) Ահա իսկական մի ֆրանսիացի՝
Պտույտ է գալիս այստեղ ու այնտեղ։

ՇԱՌԼ

Բարի՛ վերադարձ. արիասի՛րտ դուքս.
Հարությունն առանք բարեկամությամբ։

ԲԱՍՏԱՐԴ

Մեր սիրտը լցրիր դու նոր քաջությամբ։

ԱԼԱՆՍՈՆ

Ժաննան հմտությամբ յուր դերը խաղաց
Եվ արժանի է նա ոսկյա թագի։

ՇԱՌԼ

Այժմ, իշխաններ, գնանք միանանք մեր քաջ բանակին։
Եվ խորհենք, ինչպես ջարդել թշնամուն։

Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Փարիզ։ Պալատի մեծ դահլիճը։

Մտնում են թագավոր, Գլոստերը, Ուինչեստերը, Յորքը, Սեֆոլկը, Սոմերսետը, Վարվիկը, Էքսետերը, Վեռնոնը, Բասետը և ուրիշներ: Նրանց ընդառաջ է գալիս Տոլբոտը իր զինակիցների հետ:

ՏՈԼԲՈՏ

Վեհափառ արքա, իշխաններ հարգո,
Ես լուր առնելով, որ ժամանել եք այս տերությունը,
Միաժամանակ դադար տվեցի իմ կռիվներին,
Որպեսզի պարտքս անկեղծ հատուցեմ իմ միապետին:
Ի նշան սիրո՝ ահա բազուկն իմ, որ ետ կոչեց
Ձեր տերությանը հինգ տասնյակ բերդեր,
Երկոտասան քաղաք և յոթ ամրոցներ,
Այլև հինգ հարյուր անվանի գերի,
Թող սուրը դնի ձեր ոտքերի տակ:

Ծունր է իջնում:

Ես սրտիս ազնիվ հավատարմությամբ
Հաղթանակներիս փառքերը բոլոր
Նախ՝ աստծուն, ապա՝ ձեզ եմ պարգևում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սա այն Տոլբո՞տն է, հորեղբա՛յր Գլոստեր,
Որ Ֆրանսիայում ապրում է վաղուց:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, եթե ձեզ հաճո է, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարո՛վ եք եկել, ազնիվ զորավար, հաղթապանծ իշխան:
Երբ ջահել էի.— ծեր չեմ հիմա էլ.—
Հիշում եմ, հայրս հաճախ էր ասում,
Որ չկա քեզ պես անվեհեր մարտիկ:
Տարիներ ի վեր հավատում էինք ձեր ազնվությանը,
Ձեր վստահելի ծառայությանը, ձեր հմտությանը պատերազմներում,
Բայց չեք ճաշակել դուք ի տրիտուր
Եվ չեք ստացել շնորհակալության մեր խոսքերն անկեղծ,
Քանզի ձեր դեմքը չէինք տեսել ցարդ,

Ուստի, վեր կացեք: Գալով ձեր բարի ծառայությանը՝
Ձեզ այսուհետև մենք կոչելու ենք կոմս Շրուսբերի,
27 Թագադրության արքայական ժամին ձեր բարձը գտեք:

Շեփորներ: Բոլորը գնում են, բացի Վեռնոնից ու Բասետից:

ՎԵՌՆՈՆ

Տեր իմ, դուք ծովում սաստիկ տաքացաք,
Խիստ անարգելով այն գույնը, որ ես կրում եմ հիմա՝ ի պատիվ Յորքի:
Կարո՞ղ եք արդյոք համարձակորեն
Նորից պահպանել ոճը ձեր խոսքի:

ԲԱՍԵՏ

Այո՛, կարող եմ, երբ հանդգնեք
Ձեր լպիրշ լեզվի անկուշտ հաչոցը
Ուղղել իմ ազնիվ դուքս Սոմերսետին:

ՎԵՌՆՈՆ

Տիրոջդ եմ հարգում, ինչպիսին որ կա:

ԲԱՍԵՏ

Այսինքն՝ ինչպե՞ս: Չէ՞ որ նա Յորքից պակաս չէ բնավ:

ՎԵՌՆՈՆ

Լսի՛ր, պակաս է: Ահա ապացույց:

Ապտակում է:

ԲԱՍԵՏ

38 Սրիկա՛, գիտես օրենքը ռազմի.
Ով սուր է քաշում՝ նա պետք է մեռնի.
Եթե այդ հարվածն այսպիսին լիներ՝ ես կթափեի քո սրտից արյուն:
Բայց պետք է գնամ թագավորի մոտ ու խնդրեմ նրան,
Որ վրեժն առնեմ վիրավորանքիս,
Այնժամ կտեսնես քեզ կհանդիպեմ դժբախտ օրերիդ:

ՎԵՌՆՈՆ

Դեն, լա՛վ, ապիրա՛տ, ես էլ եմ գնում,
Եվ նորից շուտով քեզ կհանդիպեմ,
Քան կարող էիր ինքդ ցանկանալ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Փարիզ: Գահադահլիճ:

Մտնում են Հենրի թագավորը, Գլոստերը, Ուինչեստերը, Յորքը, Սեֆոլկը, Սոմերսետը, Էքսետերը, Վորվիկը, Տոլբոտը, Փարիզի պարետը և ուրիշներ:

ԳԼՈՍՏԵՐ

Լորդ եպիսկոպոս, պսակեք նրա գլուխը թագով:

ՈՒԻՆՉԵՍՏԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Աստված ձեզ պահի, Հենրի Վեցերորդ:

ԳԼՈՍՏԵՐ

Փարիզի պարետ, երդվեք ծնրադիր,

Պարետը ծունր է իջնում:

Որ չեք ճանաչի մեկ ուրիշ արքա,
Որ ձեզ բարեկամ դուք կհամարեք
Միմիայն նրա բարեկամներին.
Եվ չեք ունենա ոչ մի թշնամի, բացի նրանցից,
Ովքեր չարանենգ նայում են նրա իշխանությանը:
Այսպես էլ գործեք՝ աստված օգնական:

Գնում է պարետը իր շքախմբով:
Մտնում է սըր Ջոն Ֆաստոլֆը:

ՋՈՆ ՖԱՍՏՈԼՖ

Բարեգութ արքա, երբ ես Կալեից
Շտապում էի ձեր թագադրման արարողությանը,

Ինձ ճանապարհին մի նամակ տվին Բուրգունդի դուքսից,
Որ հանձնեմ ձերդ ողորմածությանը:

ՏՈԼԲՈՏ

Հազա՜ր ամոթանք Բուրգունդի դուքսին և քեզ՝ մորթապաշտ,
Ես երդվել էի, թե ինձ հաջողվեր քեզ նորից տեսնել,
Խլել քեզանից քո Ծնրակապի շքանշանը:

Պոկում է շքանշանը:

Այսպես վարվեցի, քանզի դու երբեք արժանի չէիր
Այդ բարձրաստիճան ու վսեմ դիրքին:
Ներե՛ք ինձ, արքա, և դուք՝ իշխաններ,
Այս վախկոտ սիրտը Պատեի ծանր ճակատամարտում,
Երբ ես ունեի վեց հազար զինվոր,
Իսկ ֆրանսիացիք՝ գրեթե տասը մեր մեկի դիմաց,
Ու մինչ հարձակման կանցներ զորքը մեր,
Ու կպատրաստեր հարվածն առաջին,
Փախավ նորավարժ զինակրի նման:
Մարտում սպանվեց երկու հազար մարդ,
Ես գերի ընկա իշխանների հետ:
Ինքներդ դատեք, մեծարգո տյարք իմ, ես վա՞տ վարվեցի.
Մի՞թե կարող է վախկոտը կրել կարգն ասպետության:

ԳԼՈՍՏԸՐ

Ճիշտն ասած, սա մի արարք է ստոր,
Որ չի պատշաճում հասարակ մարդուն,
Առավել ևս՝ մի առաջնորդի ու մի ասպետի:

ՏՈԼԲՈՏ

Ազնիվ իշխաններ, երբ սահմանվեց այս շքանշանը,
Օ՜, Ծնրակապի ասպետներ կային ազնիվ ծնունդով,
Նրանք քաջ էին, խիստ առաքինի և արիասիրտ,
Կռիվներն էին նրանց ստուգում, չէին սարսափում մահվան աչքերից.
Նրանց չէր բռնում և ոչ մի փորձանք,
Խիզախում էին ամենածանր վտանգի ժամին:
Իսկ նա, ով զուրկ է այդ արժանիքից,
Շորթում է ազնիվ անունն ասպետի,
Սրբապղծելով ամենավսեմ այս շքանշանը:
Եթե ես լինեմ դատավորն արդար, բարձրընկեց կանեմ նրան ողջաքար,

Ինչպես պատի տակ ծնված գեղջուկին,
Որ կարծում է, թե իր երակներում ազնվականի արյուն է հոսում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ամո՛թ քո երկրին: Լսիր վճիռը քո ճակատագրի.
Քեզ, նախկին ասպե՛տ, դուրս ենք վռնդում
Եվ տարագրում սարսափով մահվան:

Գնում է Ֆաստոլֆը:

Լորդ խնամակալ, կարդա նամակը,
Որ ուղարկել է մեր հորեղբայրը՝ Բուրգունդի դուքսը:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ է մտածել, որ փոխել է նա ընդունված ձևը.
Ոչինչ ավելի, քան թե՝ «Արքային»:
Մոռացել է նա, որ դուք իր տերն եք:
Գուցե այս կոպիտ, անպատշաճ ոճը
Հուշում է, որ նա հավատարիմ չէ իր տիրոջ հանդեպ:
Ի՞նչ է նա գրում:

Կարդում է:

«Հատուկ պատճառով,
Եվ կարեկցելով վիշտն իմ հայրենի,
Եվ նրա ողբը՝ սրտաշարժ ու խոր,
Որ սնվում են ձեր կեղեքումներից,
Լքում եմ ձեր խումբն հանցապարտ ու նենգ,
Եվ միանում եմ դոֆինին, տեր իմ,
Ով Ֆրանսիայի օրինապատշաճ միակ արքան է»:
Ո՜, ճիվաղային դավաճանություն. հնարավո՞ր է այսպիսի արարք:
Մի՞թե դաշինքի, բարեկամության և երդումների դիմակը ստոր
Ներընդունակ է սքողել նման դավաճանություն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ, իմ հորեղբայր Բուրգունդի դուքսը ըմբոստացե՞լ է.

ԳԼՈՍՏԵՐ

Այո՛, և դարձել, տե՛ր իմ, թշնամիդ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սա չարագո՞ւյնն է, որ ներկրում է այս նամակը պիղծ:

ԳԼՈՍՏԵՐ

Տեր իմ, բոլորից վատթարագույնը և իմաստուն ամբողջ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լա՛վ, թող Տոլբոտը նրա հետ խոսի
Եվ արժանավոր պատիժ հատուցի խաբեության:
Ի՞նչ կասեք, իշխա՛ն, բավարարված չե՞ք:

ՏՈԼԲՈՏ

Գոհ եմ, օ՜հ, այո՛. բայց ինձ կասեցրիք.
Երազում էի այդ մասին հայցել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Զորքդ հավաքիր. գնա նրա դեմ,
Թող նա իմանա, որ մենք չենք ներում դավաճանություն,
Եվ չի կարելի դրժել դաշինքը բարեկամության:

ՏՈԼԲՈՏ

Գնում եմ, տեր իմ, և ամբողջ հոգով
Տենչում եմ տեսնել պարտությունները թշնամիների:

Գնում է:

Մտնում են Վեռնոնը և Բասետը:

ՎԵՌՆՈՆ

Ողորմած արքա, տվեք իրավունք մենամարտելու:

ԲԱՍԵՏ

Ինձ էլ թույլ տվեք, վեհափառ տեր իմ:

ՅՈՐՔ

Սա իմ ծառան է, լսեցեք նրան, արքա՛ իմ ազնիվ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Իսկ սա էլ՝ իմն է, սիրասուն Հենրի, եղեք բարեհաճ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Համբերեք, տյարք իմ, թող նրանք խոսեն:
Ասացե՛ք, ի՞նչն է պատճառն աղմուկի
Ո՞ւմ հետ եք ուզում կռվել և ինչո՞ւ:

ՎԵՌՆՈՆ

Տեր իմ, նրա հետ. ինձ վիրավորեց:

ԲԱՍԵՏ

Տեր իմ. նրա հետ, ինձ վիրավորեց:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ առիթ ունեք վիրավորանքի:
Նախ՝ պետք է լսել և ապա՝ միայն ձեզ պատասխանել:

ԲԱՍԵՏ

Երբ գալիս էինք ծովով Ֆրանսիա,
Այս անպիտանի շարախոս լեզուն
Ինձ պախարակեց այս վարդի համար:
Ասաց, որ նրա թերթերն արյունոտ
Արտացոլում են շիկնանքն ամոթի,
Որ բորբոքվել էր իմ բարի տիրոջ այտերի վրա.
Երբ նա հերքել է իրավունքների մի առույգ խնդիր՝
Ծագած մեր Յորքի ու նրա միջև:
Ուրիշ խայտառակ խոսքեր էլ ասաց,
Տեր իմ, թույլ տվեք, որ մենամարտեմ.
Որպեսզի հերքեմ կշտամբանքը բիրտ
Եվ պաշտպան կանգնեմ իմ տիրոջ պատվին:

ՎԵՐՆՈՆ

Մեր բարի արքա, այս է խնդրանքս.
Թեև նա ջանաց խորամանկությամբ
Անսովոր փայլ տալ հանդուգն արարքին,
Բայց դուք իմացեք, պատճառը նա է.
Եվ նա առաջինն ինձ հանդիմանեց այս վարդի համար,
Ասելով՝ ծաղկի գունատությունը
Մատնում է Յորքի փոքրոգությունը:

ՅՈՐՔ

Վերջ չի՞ լինելու քո նենգության, պարոն Սոմերսետ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Որքան էլ փորձեք խորամանկորեն թաքցնել ձեր նենգ թշնամությունը,
Միևնույնն է, Յորք, երևում է նա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Աստվա՜ծ իմ, այս ի՜նչ հիմարություն է
Մտել այս մարդկանց ուղեղը խելառ,

Երբ այդքան չնչին, անմիտ առիթը
Պատճառ է դառնում նման գժտության:
Խնդրում եմ հաշտվեք, Յորք ու Սոմերսետ:

ՅՈՐՔ

Նախ՝ թող կռիվը այս վեճը լուծի,
Ապա՝ տեր իմ, դուք մեզ կհաշտեցնեք:

ՍՈՄԵՐՍԵՏ

Այս գժտությունը մեզ է պատկանում
Եվ մենք էլ պետք է մեր միջև լուծենք:

ՅՈՐՔ

Ահա գրավն իմ, վերցրո՛ւ, Սոմերսետ:

ՎԵՐՆՈՆ

Ինչով սկսվեց՝ թող նրանով էլ վեճը ավարտվի:

ԲԱՍԵՏ

Այսպես հավատիր, մեծարգո պարոն:

ԳԼՈՍՏԵՐ

Այսպես հավատե՞լ, անիծյալ լինի ձեր գժտությունը,
Չքացեք և դուք ձեր մպիրհ խոսքով
Լկտի վասալներ, դուք չեք ամաչում,
Որ ձեր անպատկառ նախատինքներով
Վրդովեցնում եք արքային ու մեզ:
Իսկ դուք, իշխաննե՛ր, լավ բան չեք անում,
Երբ հանդուրժում եք նրանց չարամիտ կռիվն ու վեճը:
Ինչն է ամենից ցավալին, երբ դուք նրանց շուրթերով
Խռովություն եք բորբոքում ձեր մեջ,
Խորհուրդ եմ տալիս լինել ողջախոհ:

ԷՔՍԵՏԵՐ

Մի վշտացրեք մեր տիրոջն ազնիվ, բարի իշխաններ, դարձեք բարեկամ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դուք, որ ուզում եք կռվել իրար հետ, եկեք այս կողմը,
Եթե հարգում եք մեր երախտիքը՝
Պատվիրում եմ ձեզ մոռանալ վեճը ու շարժառիթը:
Իսկ դուք, իշխաններ, հիշեք, որ հիմա

Մենք գտնվում ենք օտարի երկրում,
Սաստիկ անկայուն, անվճռական ազգի շրջանում,
Նրանք կտեսնեն մեր աչքերի մեջ վեճ ու գժտություն,
Կիմանան, ավա՜ղ, որ միաբան չենք:
Օ՜, ինչպես պիտի գրգռվեն նրանց ստամոքսները
Ապստամբության և ընդվզումի համառությունից:
Ի՜նչ անպատվություն, երբ օտար երկրի իշխաններն այստեղ
Հանկարծ իմանան, որ մի աննշան, չնչին պատճառով
Հենրու տերության պայազատները և ավագանին
Մորթում են իրար՝ ձեռքից թողնելով ամբողջ Ֆրանսիան:
Օ՛. հիշեք իմ նոր հաղթանակները,
Ջահել օրերս, և տանուլ մի՛ տաք
Ինչ ձեռք է բերվել հեղված արյունով:
Թողեք ես դառնամ ձեր վեճին միջնորդ:
Եթե ես կրեմ այս կարմիր վարդը,

Պոկում է մի կարմիր վարդ:

Մի՞թե ձեզանից որևէ մեկը պետք է կասկածի,
Որ Սոմերսետին Յորքից ավելի համակրում եմ:
Նրանք երկուսն էլ հարազատ են ինձ, սիրում եմ նրանց:
Չէ՞ որ այս դեպքում կարող են ինձ էլ իմ թագի համար
Խիստ վիրավորել, զի Շոտլանդիայի արքան թագ ունի:
Բայց կարող է ձեր խոհեմությունը
Ավելի արագ համոզել, քան թե իմ քարոզները:
Եվ քանի որ մենք եկել ենք այստեղ լոկ խաղաղությամբ,
Թողեք սիրով էլ մենք խաղաղ մնանք:
Շնորհափայլ Յորք, մենք կարգում ենք քեզ այստեղ կուսակալ:
Իսկ դու՛, իմ բարի իշխան Սոմերսետ,
Ձեր հեծյալներին միացրեք նրա հետիոտն զորքին:
Որպես ձեր տոհմի ազնիվ զավակներ
Եվ հավատարիմ ինձ հպատակներ
Գնացեք մեկտեղ և ձեր կատաղի
Մաղձը թափեցեք թշնամու վրա:
Լորդ խնամակալ, քիչ հանգիստ կառնենք,
Առանց հապաղման կդառնանք Կալե,
Եվ ապա՝ Անգլիա: Հույս ունեմ այնտեղ
Ձեր հաղթանակով նվեր կբերեք թագաժառանգին,
Նաև Ալանսոնին, դավաճանների ամբողջ ոհմակով:

Շեփորներ: Գնում են թագավորը, Գլոստերը, Սոմերսետը, Ուինչեստերը, Սեֆոլկը և Բասետը:

ՎՈՐՎԻԿ

(Յորքին). Չե՞ս զանում արդյոք, որ թագավորը
Հանեյիորեն նարտարախոսի յուր դերը խաղաց:

ՅՈՐՔ

Դուք ճիշտ եք, սակայն իմ սրտով չեղավ,
Որ Սոմերսետի նշանը կրեց:

ՎՈՐՎԻԿ

Օ՜, ոչինչ, դատարկ մի ճով էր, անցավ,
Մի մեղադրի: Արքան միտք չուներ վատ բան անելու:

ՅՈՐՔ

Թե ճավատայի... Բայց թողնենք, Վորվիկ,
Արդ՝ պետք է ուրիշ գործով զբաղվել:

Դնում են Յորքը, Վորվիկը և Վեռնոնը:

ԷՔՍԵՏԵՐ

Լավ ես քեզ զսպում Ռիչարդ, դուքս Յորքի:
Երբե քո սրտի կիրքը բռնկեր,
Վախենում էի, որ կտեսնեինք այնպիսի մոլի,
Անեղ զժտություն և վրիժառու, խոր ատելություն,
Որպիսիք չէինք կարող պատկերել:
Ինչ էլ որ լինի՝ նույնիսկ ճասարակ մարդիկ տեսնում են
Այս իշխանների զժտությունները վայրագ ու մոլի,
Նրանց դավերը պալատի ներսում,
Եվ նրանց մոտիկ սիրելի մարդկանց լկտի վարմունքը.
Եվ չեն կասկածում, որ դրանք մի օր
Պետք է ունենան չարագույժ վախճան:
Անբախտություն է, երբ գայիոնը մանուկն է բռնում,
Բայց ավելի վատ՝ երբ քենն է ծնում չար բշնամություն,
Բերելով իր ճետ ավեր ու խռովք:

Դնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Բորդոյի առաջ:

Մտնում է Տոլբոտը փողերի ու թմբուկների ուղեկցությամբ:

ՏՈԼԲՈՏ

Փողճա՛ր, Բորդոյի մեծ դուռը գնա,

Եվ կանչիր նրանց հրամանատարին պարսպի վրա:

Փողեր: Պարսպի վրա երևում են հրամանատարը և ուրիշներ:

Իշխանն Տոլբոտ, Անգլիո զորավար,
Որ ծառայում է ռազմի դաշտերում Հենրի արքային.
Ասում է՝ բացե՛ք դուռը քաղաքի
Եվ խոնարհաբար ձեր ճանաչումը բերեք տիրոջն իմ.
Եվ հարգեք նրան որպես հնազանդ, հլու հպատակներ:
Այնժամ արնատենչ իմ զորքերի հետ ես ետ կքաշվեմ.
Բայց թե մատուցված խաղաղությունը հանկարծ անգոսնեք,
Իմ երեք ծառան՝ մսագուրկ սովը, խոշտանգող սուրը,
Մագլցող հրդեհը խիստ կզայրանան: Եվ եթե մերժեք
Մեր սիրո ընծան՝ մի վայրկյան չանցած՝
Ձեր շքեղափայլ և երկնասլաց աշտարակները
Կկործանեն երկրի երեսից ընդմիշտ:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Մահվան չարագույժ, ահավոր բվեճ,
Մեր ազգի սարսափ, արնոտ խարազան,
Արդ՝ քո բռնության վախճանն է հասել:
Դու որպես դիակ կարող ես միայն քաղաքը մտնել:
Հավաստում եմ քեզ, կանգնած ենք ամուր,
Եվ ուժեր ունենք քեզ հետ կռվելու նույնիսկ բաց դաշտում:
Եթե նահանջես՝ գահաժառանգը յուր բանակներով
Քեզ կբնչուկի ռազմի թակարդով:
Նա ամենուրեք զորքեր է շարել,
Որ քո փախուստը պատնեշի ամուր.
Ո՛ր կողմն էլ նայես, չունես փրկության ոչ մի ճանապարհ,
Մահն է սպասում բացահայտորեն կանգնած քո դիմաց:
Պետք է դեմառդեմ հանդիպես գունատ քո կործանումին,
Եվ ֆրանսիացիք՝ թվով տասն հազար.
Ուխտել են արդեն սուրբ հաղորդությամբ,
Որ իրենց ահեղ հրանոթները չեն ուղղի երբեք
Քրիստոնեական հոգիների վրա, բացի Տոլբոտից:
Տեսնում եմ, ահա՛, կանգնել ես իմ դեմ կենդանի կտրիճ,
Դու անպարտելի, աննկուն ոգի:
Ես վերջին անգամ փառքդ եմ գովերգում, թեև թշնամի:
Նայի՛ր, վազում է ավազն անոթով,

Բայց մինչև հոսքի ավարտը լրիվ
Այս իմ աչքերը, որ տեսնում են քեզ արդ՝ կյանքով լեցուն,
Կտեսնեն արյամբ, սառցով ծածկված որպես սպաղ դիակ:

Հեռվից՝ թմբուկի ձայն:

39 Լսի՛ր, թմբուկն է բազմառանգի,
Զգուշացումի զանգն է ահարկու,
Հնչում է ծանր նվագ քո հոգուն,
Իսկ ես կավետեմ ազդը քո մահվան:

Հրամանատարը և ուրիշները գնում են:

ՏԱԼԲՈՏ

Նա ինձ չի խաբում, մոտ է թշնամին.
Հեծյալնե՛ր, դիտեք թևերն ուշադիր,
Օ՜, անփո՛ւյթ, անհոգ կարգապահություն:
Մենք ասես լինենք Անգլիո խղճահար եղջերուների
Մի փոքրիկ նախիր, որ մակաղել է խարխուլ փարախում
Դաժան շների հաչող ոհմակը:
Եթե մենք Անգլիո եղջերուներ ենք,
Ապա թող լինենք ազնվազույն ցեղ,
Եվ ոչ՝ նրանցից, ովքեր նվաղած
Առաջին զարկից ընկնում են իսկույն:
Բայց խենթ, կատաղի եղջերվի նման
Մեր ճակատները պողպատից ամուր,
Ուղղենք շներին արյունածարավ,
Այդ վախկոտները կփախչեն հեռու:
Եթե ինձ պես թանկ ծախեք կյանքը ձեր,
Նրանք կիմանան, թե որքան թանկ է մեր մի եղջերուն:
Աստվա՛ծ, Սուրբ Գևո՛րգ, Անգլիո իրավունք և անվա՜խ Տալբո՛տ,
Թող օրհնի փառքը մեր դրոշները այս ահեղ կռվում:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Գասկոնիայի հարթավայրը:

Մտնում է Յորքը զինվորների հետ: Նրան ընդառաջ է գալիս մի սուրհանդակ:

ՅՈՐՔ

Չե՞ն երևացել դիտազորները,
Որոնք քայլ առ քայլ հետապնդում են դոֆինի զորքին:

Վերադարձել են, հայտնում են, տեր իմ,
Որ նա իր զորքով գնում է Բորդո,
Որպեսզի կռվի քաջ Տոլբոտի հետ: Ինչպես ասում են
Դիտազորները՝ ճամփին տեսել են երկու մեծ ջոկատ՝
Թագաժառանգի զորքից շատ ուժեղ,
Որ միանալով նրա բանակին՝ շարժվում է Բորդո:

ՅՈՐՔ

Սոմերսետ, այրվե՛ս ժանտախտի տենդով,
Ո՞ւր են խոստացած քո հեծյալները,
Որ խիստ պետք էին պաշարման համար:
Փառապանծ Տոլբոտն ինձ է սպասում,
Բայց դավաճանն է ինձ հիմարացնում,
Եվ ես չեմ կարող օգնություն ցույց տալ ազնիվ ասպետին:
Աստվա՛ծ, դու եղիր նրան զորավիգ այս փորձության մեջ,
Եթե նա ընկնի՝ մնաս բարով դու, մեր դատ Ֆրանսիայում:

Մտնում է սըր Վիլյամ Լյուսին:

ԼՅՈՒՍԻ

Օ՜, մեծ առաջնորդ, զորություն Անգլիո,
Այսպիսի կարիք չէինք զգացել ֆրանսիական հողում:
Մենք պետք է փրկենք ազնիվ Տոլբոտին,
Ում մեջքին է սեղմել օղակն երկաթյա,
Եվ դաժան մահն է պաշարել նրան:
Ո՜վ ռազմասեր Յորք, մեկնեցեք Բորդո,
Կամ մնաս բարյավ ասեք Տոլբոտին,
Անգլիայի պատվին ու Ֆրանսիային:

ՅՈՐՔ

Օ՜, աստվա՛ծ, եթե Տոլբոտի տեղակ
Լիներ Սոմերսետն այդ նեղ վիճակում,
Որ խանգարում է իմ ջոկատների առաջխաղացման,
Մենք կփրկեինք մի քաջ զորավար,
Ջուրը գցելով մի նենգ դավաճան:
Խելագար զայրույթն ու մոլուցքն անզուսպ ստիպում են ինձ
Մեր անկասելի կորուստը ողբալ,
Իսկ դավաճանը նիրհում է անհոգ:

ԼՅՈՒՍԻ

Օգնե՛ք իշխանին, նեղության մեջ է:

ՅՈՐՔ

Կործանվում է նա, խոսքս եմ ես ուրանում:
Ոսոխն է հրճվում, իսկ մենք ողբում ենք այս ծանր ժամին.
Այսքան տառապանք կսկիծ ու աղետ,
Դու պատճառեցիր, մատնիչ Սոմերսետ:

ԼՅՈՒՍԻ

Աստված, դու փրկիր Տոլբոտի հոգին
Եվ նրա որդուն՝ Ջոնին պատանի:
Երկու ժամ առաջ ես տեսա նրան
Իր ռազմասեր հոր մոտ էր վազում:
Յոթ տարուց ի վեր չէր տեսել որդուն՝
Պետք է հանդիպեն մահվան հետ արթուն:

ՅՈՐՔ

Ավա՜ղ. Տոլբոտին չի համակելու ոչ մի խնդություն.
Նա գերեզմանում պետք է հանդիպի իր ջահել որդուն:
Խեղդվում եմ արդեն, չեմ կարող շնչել վշտից դժնդակ՝
Հարազատներն են իրար տեսնելու մահվան աչքի տակ:
Դե՛հ, մնա՜ք բարյավ: Չեմ կարող անել ոչինչ ավելի,
Քան թե նզովել մեզ չօգնող մարդուն նենգ ու եղկելի:
Մենք, Պուատիեն, Տուրն ու Բլուան կորցրինք հավետ,
Եվ դու բոլորի պատճառը եղար, մատնիչ Սոմերսետ:

Գնում է զորքի հետ:

ԼՅՈՒՍԻ

Քանի դեռ անգղը երկպառակության
Այսպիսի ազնիվ զորավարների կուրծքն է ծվատում,
Քանի դեռ քնկոտ անհոգությունը խլում է մեզնից
Հաղթանակները Հենրի Հինգերորդ աշխարհակալի,
Ում հիշատակը պիտ հավերժ ապրի,
Քանի դեռ քեն կա իրար նկատմամբ՝
Ամեն ինչ պետք է դառնա փոշու ամպ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Գասկոնիայի մի ուրիշ հարթավայր:

Մտնում է Սոմերսետը իր բանակով: Նրա հետ Տոլբոտի սպաներից մեկը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Չափազանց ուշ է. չեմ կարող զորք նրանց ուղարկել.
Տոլբոտն ու Յորքը խիստ հապճեպությամբ

Ձեռնարկեցին այս արշավանքն, ավա՜ղ:
Ի վիճակի չեն մեր ուժերն ամբողջ
Քաղաքի գրոհը նորից ետ վանել:
Հանդուգն Տոլբոտն այս անմիտ, անփույթ ու բիրտ արարքով
Արատավորեց փառքն իր վաղեմի,
Եվ Յորքը նրան մեղեց կռվելու,
Որպեսզի նրա խայտառակ մահով
Արի մեծ Յորքի անունն աշխարհում:

ՍՊԱ.

Ահա սըր Լյուսին: Եկել է ինձ հետ,
Որ պարտվող զորքին օգնություն ցույց տա:

Մտնում է սըր Վիլյամ Լյուսին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ձեզ, պարոն Վիլյամ, ո՞վ է ուղարկել:

ԼՅՈՒՍԻ

Ո՞վ է ուղարկել: Իշխան Տոլբո՛տը,
Ում որ ծախեցին, ով դժբախտությամբ շրջապատված է:
Նա կոչ է անում վեհանձն Յորքին ու Սոմերսետին,
Որ մահվան գրոհն իր թույլ գնդերից ետ վանեն շուտ,
Եվ այն ժամանակ, երբ որ պատվարժան զորավարն այնտեղ
Հյուծվում է դանդաղ, արյան շիթեր են հոսում մարմնից,
Հավատում է ձեր օգնությանն ազնիվ,
Դո՛ւք, որոնց հետ նա հույսեր է կապել,
Փառապանծ Անգլիո հավատ ու նեցուկ, քաշվել եք մի կողմ,
Վանեք ձեզանից նախանձն անարժան,
Թող ձեր անձնական գժտությունները մոռացվեն ընդմիշտ
Եվ դուք ուղարկեք նրան օգնություն,
Չէ՞ որ փառապանծ ազնիվ իշխանը
Մենակ է մղում մարտն անհավասար:
Շրջապատել են նրան դոֆինը,
Բուրգունդի դուքսը, Ռասարդն ու Ռենեն, կույս Ալանսոնը,
Ձեր անհոգությամբ դատապարտել եք Տոլբոտին մահվան:

ՍՈՄԵՐՍԵՏ

Յորքն է հրահրել, թող Յորքն էլ օգնի:

ԼՅՈՒՍԻ

Իսկ Յորքը ձեզ է մեղավոր դանում,
Երդվելով, որ դուք հեծյալ բանակը
Կանխամտածված բռնել-պահել եք:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ստում է Յորքը։ Կարող էր, անշուշտ, հեծյալն ուղարկել.
Ես նրա հանդեպ չունեմ պարտք ու սեր,
Չեմ ուզում նրան քծնել օգնությամբ։

ԼՅՈՒՍԻ

Ոչ թե թշնամու հզորությունը,
Այլ խարդախ Անգլիան ծուղակն է գցել ազնիվ Տոլբոտին,
Եվ նա հայրենիք չի վերադառնա երբեք կենդանի.
Մեռնում է, ավա՜ղ, ձեր օրհասական գժտություններից։

ՍՈՄԵՐՍԵՏ

Դե՛հ, լա՛վ։ Հեծյալներ կուղարկեմ իսկույն.
Վեց ժամից հետո այնտեղ կհասնեն։

ԼՅՈՒՍԻ

Ուշ է։ Գերել են կամ սպանվել է։
Չէր կարող փախչել, երբ ուզենար,
Իսկ թե կարենար՝ չէր փախչի երբե՛ք։

ՍՈՄԵՐՍԵՏ

Եթե քաջ Տոլբոտ, մեռել ես արդեն, դե՛հ, գնա՜ս բարով։

ԼՅՈՒՍԻ

Քեզ բյուր նախատինք։ Թնդում է նրա փառքը աշխարհով։

Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Անգլիական ճամբար Բորդոյի մոտ։

Մտնում են Տոլբոտը և նրա որդին՝ Ջոնը։

ՏՈԼԲՈՏ

Օ՜, կրտսեր Տոլբոտ, ես քո ետևից մարդ եմ ուղարկել,
Որ ռազմահնար քեզ ուսուցանեն,
Որպեսզի քեզնով Տոլբոտի անունն հարություն առնի.
Երբ իմ անկարող, թույլ անդամները և ծեր տարիքը
Քո հորը գամեն սառը անկողնուն։
Բայց,— օ՜, չարագո՛ւյժ, մահաշունչ աստղեր,—
Եկել ես, ավա՜ղ, մահվան խնջույքի,
Որտեղ վտանգն է անխուսափելի։

Զավա՞կս, հեծի՛ր ձին իմ քաջընթաց
Ես քեզ ցույց կտամ, թե ինչպես պետք է դու փրկվես կռվից:
Դե՛հ, շտապ մեկնի՛ր. պետք չէ հապաղել:

ՋՈՆ

Մի՞թե ինձ մարդիկ Տոլբոտ չեն կոչում. մի՞թե որդին չեմ:
Ես ինչպես փախչեմ: Օ՜, երբ, հայր իմ, սիրում ես մորս,
Մի՛ պախարակիր նրա պատվարժան, ազնիվ անունը,
Եվ ինձ մի կոչիր անօրեն զավակ կամ թե՝ թուլամորթ:
Չէ՞ որ ինձ կասեն՝ չունի Տոլբոտի ազնիվ արյունը,
Ապականում է իր հոր անունը:

ՏՈԼԲՈՏ

Փախիր, որ լուծես հորդ վրեժը, թե ընկնեմ մարտում:

ՋՈՆ

Ով այդպես փախչի, նա չի հասնի տուն.

ՏՈԼԲՈՏ

Թե մնանք այստեղ՝ մենք պիտի տեսնենք մեր մահն անպատճառ:

ՋՈՆ

Թող ինձ, թող մնամ. դու գնա կռվից, սիրելի իմ հայր.
Չէ՞ որ քո մահով դու մեծ կորուստ ես մերոնց պատճառում.
Ով պիտի զգա մահն իմ աննշան այս մեծ աշխարհում,
Իմ փոքրիկ մահով չի հպարտանա թշնամին արդեն:
Քո մահն է ուզում՝ քեզ հետ կհանգչեն մեր հույսերն ամեն:
Այդ փախուստն երբեք չի աղարտելու փառքդ վաստակած,
Իսկ ինձ կաղարտի. քանզի ես չունեմ սխրանքներ քաջաց.
Ամեն մարդ կասի, որ քո փախուստը ունի խոր իմաստ.
Իսկ թե ես փախչեմ՝ ինձ պիտի կոչեն վախկոտ ու նվաստ:
Ապրելու հույսերն ընդմիշտ կհանգչեն,
Թե առաջինը ես կռվից փախչեմ:
Օ՜, լավ է ընկնել հերոսի մահով.
Քան ապրել ահով:

ՏՈԼԲՈՏ

Ուզո՞ւմ ես մորդ հույսերը բոլոր
Հավիտյան դնել գերեզմանը խոր:

ՋՈՆ

Դա լավ է, քան թե պետք է նզովեմ
Մորս արգանդը արարքով նսեմ:

ՏՈԼԲՈՏ

Իմ օրհնանքը քեզ, գնա՛, զավա՛կս:

ՋՈՆ

Այո՛. դեպի մարտ, սա է փափագս:

ՏՈԼԲՈՏ

Քեզ հետ կփրկես հայրիկիդ կյանքը:

ՋՈՆ

Օ՜. ո՛չ, կտանջի ինձ ամոթանքը:

ՏՈԼԲՈՏ

Դու դեռ փառք չունես,
Նախատինքն երբեք չի սպառնա քեզ:

ՋՈՆ

Մի՞թե կարող է. իմ սիրելի հայր,
Փախուստը եղծել քո փառքը անմար:

ՏՈԼԲՈՏ

Իմ հրամանը, իմ զավա՛կ, իմ կյա՛նք,
Կմաքրի քեզնից ամեն ամոթանք:

ՋՈՆ

Ո՞վ կհաստատի, թե գնդակը նենգ
Քեզ խոցի հանկարծ: Ուրեմն, փախչենք,
Երբ էլ չենք կարող մահից խուսափել:

ՏՈԼԲՈՏ

Իսկ ընկերնե՞րս... չեմ կարող լքել...
Ես ծեր եմ, երբեք ինձ չեն անարգել,

ՋՈՆ

Ա՜խ, մի՞թե հայր իմ. տարիքս ջահել
Կարող է ամոթ, պարսավանք տանել:
Ոչ ոք չի կարող քեզնից զատել ինձ,
Ինչպես չես կարող զատվել քեզանից:
Սպասիր, արա՛, ինչ հաճո է քեզ,
Նույնն էլ, իմ հայրիկ, պետք է անեմ ես:
Եթե չի ապրում հայրիկս ինձ հետ՝
Իմ ջահել կյանքը կհանգչի հավետ:

ՏՈԼԲՈՏ

Ես հրաժեշտի խոսք եմ ասում քեզ, զավակս բարի,
Ծնվեցիր, ավա՜ղ, որ այս կեսօրին կյանքդ խավարի:
Գնա՛նք, կողք-կողքի ապրենք կամ մեռնենք,
Թող դրախտ թռչի մեր հոգին անենք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Ռազմադաշտ:

Տագնապ: Ընդհարում: Տոլբոտի որդին շրջապատված է:
Տոլբոտն օգնում է նրան:

ՏՈԼԲՈՏ

Կռվե՛ք, Սուրբ Գեորգ. վսեմ հաղթանակ, կռվե՛ք, զինվորներ,
Տոլբոտին տրված խոստումը դրժեց դուքս կուսակալը,
Մեր դեմ ուղղելով անարգ թշնամու սրերի փայլը:
Որտե՞ղ է Ջոնն իմ: Սպասի՛ր, շունչ ա՛ռ,
Քեզ կյանք տվեցի և քեզ փրկեցի մահվան աչքից չար:

ՋՈՆ

Ես քո կրկնակի որդին եմ, իսկ դու՝ հայրն իմ կրկնակի.
Ա՜խ, կորցնում էի առաջին կյանքս, որ ինձ տվեցիր,
Բայց քո հաղթ սրով, ի հեճուկս չար ճակատագրի,
Վերստին սահմանված ժամն իմ գոյության կրկնապատկեցիր:

ՏՈԼԲՈՏ

Երբ դու քո սրով թագաժառանգի զոռ սաղավարտից
Շանթեր պոկեցիր, հորդ ծեր սիրտը բորբոքվեց նորից
Սուրբ հաղթանակի անհուն ցանկությամբ: Պատանու նման
Ոգևորվելով մարտական հրով ու քենով վառման,
Ես ետ վանեցի կոմս Ալանսոնին, Բուրգունդի դուքսին,
Փրկելով կյանքդ զոռոզ գալլերի երազներից սին,
Եվ Օռլեանի այդ պոռնիկորդուն՝ խենթ ու մոլեգին,
Որ քո անաղարտ արյունը հեղեց, զավա՜կս անգին,
Ում հետ քաջաբար խաչաձևեցիր սուրդ կուսական,
Կանգնեց իմ առաջ. փոխանակեցինք հարվածներ, սակայն,
Ես արագորեն նրա պիղծ արյունն հեղեցի մարտում
Եվ քամահրանքով այսպես ասացի այդ պոռնկորդուն.

«Ես քո անօրեն, սուր, վարակված
Արյունն եմ թափում իմ արյան դիմաց.
Որ դու հեղեցիր իմ քաջ զավակից»:
Ուր որ է՝ պետք է հեռանար կյանքից,
Բայց բախտը բերեց. օգնության եկան: Ասա՛ քո հորը.
Ինչպե՞ս ես զգում. չի՞ հոգնեցրել քեզ այս բոլորը.
Գուցե դու հիմա, երբ ասպետությունն օրհնեց քեզ մարտում.
Թողնես կռիվը, ազնի՛վ զավակս, փախչես անտառում,
Փախի՛ր, որ մահվան իմ վրեժն առնես, երբ չեմ լինի ես.
Ի՞նչ պիտի անի ջրի կաթիլը ծովին փրփրադեզ.
Օ՜, խելքի բան չէ, երբ սպառնում է վտանգն ահագին՝
Բոլորի բախտը հանձնում են փոքրիկ, խարխուլ նավակին:
Երբ թշնամու ահեղ զայրույթն ինձ այսօր չսպանի,
Վաղը տարիքս ցույց կտա ճամփան իմ գերեզմանի:
Իմ մահով երբեք ոչինչ չի շահի թշնամին վայրի,
Միայն մեկ օրով իմ կյանքը պետք է մի քիչ երկարի,
Իսկ քեզ հետ, որդիս, կհանգչի մայրդ, մեր տան անունը,
Մեր երկրի փառքը, հորդ վրեժը, պատանությունդ:
Ավա՜ղ, ամեն ինչ կմատնենք հրի,
Եթե չփախչես և մնաս դաշտում, զավակս բարի:

ՋՈՆ

Բաստարդի սուրը ինձ չպատճառեց երբեք սաստիկ ցավ,
Բայց քո բառերը իմ սրտից արյուն քամեցին անբավ.
Թո՛ղ ինձ անզուսպ ամոթանքն անգամ.
Թո՛ղ ֆրանսիացի մի գեղջուկ դառնամ.
Թո՛ղ կռվում ընկնի իմ ձին վարանոտ.
Թե պիտի փախչեմ մարտից արյունոտ,
Որպեսզի փրկեմ կյանքն իմ աննշան
Օ՜, այպանելով կյանք մի սրբազան:
Երդվում եմ ես քո փառքերով բոլոր.
Թե փախչեմ դաշտից՝ որդին չեմ իմ հոր:
Խոսել այդ մասին՝ չունի նպատակ.
Ես պիտի մեռնեմ քո ոտքերի տակ:

ՏԱԼԲՈՏ

Ե՛կ, իմ հետևից, տարաբա՜խտ Իկար,
Քո ջահել կյանքը թանկ է ինձ համար,
Դու պետք է կռվես հայրիկիդ կողքին,
Հրաժեշտ տանք փառքով մեր կյանքին

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Ռազմադաշտի մի ուրիշ հատված:

Տագնապ, ընդհարում: Ծառան բերում է վիրավոր Տոլբոտին:

ՏՈԼԲՈՏ

Որտե՞ղ է, տա՛, իմ մյուս կյանքը, կորավ իմն, ավա՜ղ,
Որտե՞ղ է Ջոնն իմ, չահել Տոլբոտը, սպետն իմ անվախ:
Օ՜, քեզ՝ հաղթող մահ, հավերժ անարգված քո կապանքներով,
Ծաղրում եմ ահա կրտսեր Տոլբոտիս բյուր սխրանքներով:
Չէ՞ որ երբ տեսավ՝ ինձ ծնկին ծալված ու երեսնիվայր,
Նա շողացրեց իմ գլխի վերև իր սուրն արնավառ,
Եվ ինչպես քաղցած, ամեհի առյուծ, ցատկեց զայրագին.
Դիմելով ցասման ու կատաղության ահեղ արարքին:
Բայց երբ պաշտպանն իմ նկատեց հանկարծ.
Որ ինձ հետ դաշտում միայնակ մնաց,
Մթնեցին նրա աչքերը տրտում
Եվ մի կույր զայրույթ փոթորկվեց սրտում.
Թռավ իմ կողքից, սլացավ ի մարտ,
Անարգ թշնամուն հարվածեց հպարտ,
Այդ արյան ծովում որդիս ամոքեց իր այրվող ոգին,
36 Եվ փառքով մեռավ իմ քա՜ջ Իկարը, իմ ծաղի՜կն անգին...

ԾԱՌԱ

Սիրեցյալ տեր իմ, բերում են ահա որդուդ դիակը:

Մտնում են զինվորները, բերելով Ջոնի դիակը:

ՏՈԼԲՈՏ

18 Օ՜, խեղկատակ մա՛հ, որ ուղղել ես մեզ քո բիրտ ծաղրանքը,
Շուտով կտեսնես, թե քո բռնության զնդանից՝ ազատ,
Ինչպես կձուլենք հավիտենության շղթան սրբազան,
Եվ Տոլբոտները մաքուր երկնքով եթեր կթռչեն.
Ի հեճուկս քեզ մահվան զնդանից հեռու կփախչեն:
Օ՜, դու, ում վերքերն՝ արնոտ բույն պարզած ժանտատես մահվան,
Խոսի՛ր հորդ հետ, մինչև որ մահվան ձեռքերն երևան:
Խոսի՛ր նրա հետ, թեկուզ հայտնվի նենգ ճանապարհով.
Պատկերացրու քո ֆրանսիացուն նրա կերպարով:
Իմ թշվա՜ռ զավա՛կ, կարծես ժպտադեմ կուզե բարբառել.
«Թե մահն ունենար գաղիացու կերպար՝ վաղուց էր մեռել»:
Բերեք իմ որդուն, բերեք հոր գիրկը իր քաջ զավակին,
Չի կարող տանել այս մեծ կորուստը ծերունու հոգին.

Դե՛հ, մնա՛ք բարով, ազնիվ զինվորներ, բախտն եղավ դաժան,
Իմ բազուկները ջահել Տոլբոտիս դարձան գերեզման:

Մեռնում է:

Զինվորներն ու ծառաները՝ թողնելով Տոլբոտի և նրա որդու դիակները, գնում են:
Մտնում են Շառլը, Ալանսոնը, Բուրգունդիայի դուքսը, Բաստարդը,
Ժաննա դ'Արկը և զինվորներ:

ՇԱՌԼ

Երբ Սոմերսետն ու Յորքն օգնեին,
Մեր այսօրն արնոտ օր պիտի լիներ:

ԲԱՍՏԱՐԴ

Տոլբոտի լակոտն անզուսպ ու վայրի.
Մեր արյամբ ներկեց իր սուրը խղճուկ:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Ես հանդիպեցի նրան մի անգամ, այսպես ասացի.
«Ով կույս պատանի, դու պիտի ընկնես մի կույսի սրով».
Բայց պատասխանեց տղան հեգնաբար.
«Կրտսեր Տոլբոտը չի եկել աշխարհ,
Որ ավար դառնա պոռնիկին անսանձ»:
Եվ ինձ զանելով իրեն անարժան,
Քաջաբար նետվեց կռվի մեջ դաժան:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Անշո՛ւշտ, կդառնար ասպետ փառապանծ:
Նայի՛ր, պառկել է գիրկը այն մարդու.
Որ դժբախտություն պատճառեց որդուն:

ԲԱՍՏԱՐԴ

Կտրատե՛ք նրանց, ցրցե՛ք մեկ-մեկ ոսկորներն արնոտ.
Ովքեր Անգլիային փառք շնորհեցին, Գաղիային՝ ամոթ:

ՇԱՌԼ

Օ՛, ո՛չ: Ետ կանգնե՛ք: Պետք չէ անարգել դիերն այն մարդկանց,
Ովքեր կենդանի մեզ ստիպեցին փախչել գլխաբաց:

Մտնում է սըր Վիլյամ Լյուսին իր շքախմբով: Նրա կողքին
կանգնած է ֆրանսիական մի հերալդ:

ԼՅՈՒՍԻ

Դու, հերալդ, տար ինձ վրանն արքայորդու,
Որպեսզի տեսնեմ, թե ով վաստակեց փառքը այսօրվա:

ՇԱՌԼ

Հպատակվելո՞ւ համար ես եկել:

ԼՅՈՒՍԻ

Հպատակվելո՞ւ: Դա ֆրանսիական մի դատարկ բառ է,
Նրա իմաստը չգիտենք երբեք:
Եկա՛, որ տեսնեմ, թե ում ես գերել
Եվ զոհվածների դիերը զննել:

ՇԱՌԼ

Գերինե՞րն են քեզ հետաքրքրում.
Գերի չենք վերցնում, նրանց դժոխք ենք միայն ուղարկում:
Բայց խոստովանիր, ո՞ւմ ես որոնում:

ԼՅՈՒՍԻ

61 Որտե՞ղ է, ասա՛, ճակատամարտի մեծ Ալքիդեսը,
Մեր քաջակորով իշխան Տոլբոտը՝ կոմս Շրուսբերին,—
Ում սակավագյուտ սխրանքի համար պատերազմներում
Շնորհվեց մեծ կոմս Ուոտերֆորդի և Վալենսիայի,
Ո՞ւր է Գուդրիգի ու Էրչինֆիլդի իշխան Տոլբոտը,
Իշխան Վերդենը, իշխան Ստրենջը, իշխան Կրոմվելը,
Շեֆիլդի իշխան քաջ Ֆեռնիվալը,
Երիցս հաղթող փառապանծ իշխան Ֆոկոնբրիջը,
Այդ քաջ ասպետի կուրծքն են զարդարում
«Սրբազան Գեորգ» շքանշանը,
Խիստ երևելի «Սուրբ Միքայելը» ու «Ոսկյա գեղմը»,
Հենրի Վեցերորդն հռչակեց նրան մեծն մարաջախտ,
Որ Ֆրանսիայում բոլոր մարտերի գլուխն էր անցել:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Հիրավի, անմիտ հառ բարբաջեցիր,
Թուրքը, որ ունի հիսուներկու թագավորություն,
Այսպիսի ճոռոմ ոճով չի գրում:
Իսկ նա, ում բազում պատվատիտղոսով փառաբանում ես,
Նեխում է հիմա՝ ճանճերը վրան մեր ոտքերի տակ:

ԼՅՈՒՍԻ

Մի՞թե սպանվեց մեր Քաջ Տոլբոտը՝
Ֆրանսիացիների մտրակը միակ.
Ձեր մեծ տերության ահեղ սարսափը, սև Նեմեսիսը:
Օ՜, եթե արնին դառնան աչքերիս բիբերն հրացայտ,
Ես մոլեգնորեն կուղղեմ ձեր դեմքին.

Եթե քաջերին մի սուրբ հրաշքով կյանքի կոչեի,
Բավ էր, որ նորից Ֆրանսիան դողար:
Բայց նրա պատկերն այստեղ թող մնա,
Որպեսզի ձեզնից ամենազոռոզն ապշահար լինի:
Տո՛ւր դիակները, որ տանեմ ինձ հետ
Եվ հողին հանձնեմ փառքով արժանի:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Աստվա՜ծ իմ, կարծես այս շատախոսը
Ծերուկ Տոլբոտի քաջ ոգին լինի,
Թե ոչ՝ այսպիսի խիստ հրամայող տոնով չէր խոսի:
Ի սեր աստծո՜, տվեք դիերը,
Նրանք փտում են, օդն ապականում:

ՇԱՌԼ

Գնա՛, վերցրու դիերը ձերոնց:

ԼՅՈՒՍԻ

Կտանեմ, քանզի նրանց աճյունից
Հարություն կառնի իբրև մի փյունիկ,
Եվ ողջ Ֆրանսիան կդողա դարձյալ:

ՇԱՌԼ

Պետք է ազատվել այդ դիակներից:
Վարվիր նրանց հետ, ինչպես որ կամիս:
Արդ, դեպի Փարիզ: Սա հաղթանակի ճամփան է անշեղ.
Մերն է ամեն ինչ. չէ՞ որ սպանվեց Տոլբոտն արնահեղ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն։ Պալատում։

Մտնում են թագավորը, Գլոստերը և Էքսեթերը։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու՞ք կարդացե՞լ եք այն նամակները,
Որ առաքել են կոմս Արմանյակը, Պապը և կայսրը։

ԳԼՈՍՏԵՐ

Իհարկե, տեր իմ։ Ահավասիկ նրանց բուն նպատակը.
Խնդրում են նրանք մեզ խոնարհաբար,
Որպեսզի երկու տերությանց միջև
Կնքվի բարեպաշտ մի խաղաղություն։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչպե՞ս եք նայում այդ առաջարկին, ազնիվ հորեղբայր։

ԳԼՈՍՏԵՐ

Բարությամբ, տեր իմ, նրանք ուզում են
Քրիստոնեական արյուն չթափել,
Եվ ամենուրեք հաստատել կայուն խաղաղություն։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լավ է, հորեղբայր։ Ես խորհել եմ միշտ,
Որ բնական չէ, անազնիվ է խիստ,
Երբ նույն հավատքի տերությանց միջև
Տիրում է արնոտ և անմարդկային երկպառակություն։

ԳԼՈՍՏԵՐ

Բացի այդ, տեր իմ, որպեսզի արագ իրականանա
Եվ ամուր լինի բարեկամության այս կապը ազնիվ,

Կոմս Արմանյակը՝ թագաժառանգի մոտ ազգականը,
Որ Ֆրանսիայում մեծ կշիռ ունի,
Առաջարկում է միակ աղջկան ձեզ ի կնություն,
Բազմաժախ ու նոխ, հարուստ օժիտով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ավա՜ղ, հորեղբա՛յր, դեռ ջահել եմ ես,
Ինձ վայելում են ուսումն ու գիրքը,
Քան զվարճանքը սիրած կնոջ հետ,
Բայց կանչեք այստեղ դուք դեսպաններին
Եվ նրանց տվեք պատշաճ պատասխան:
Սրտիս մոտ կառնեմ բավականությամբ ամեն ընտրություն,
Երբ նա աստծո ու հայրենիքիս փառքն է բարձրացնում:

Մտնում են Պապի պատվիրակը, երկու դեսպան և Ուինչեստերը՝
հագին կարդինալական զգեստ:

ԷՔՍԵՏԵՐ

28 *(Առանձին)*. Ի՞նչ, մի՞թե արդեն ձեռնադրել են եպիսկոպոսին,
Եվ մեծարում են կարդինալական բարձր աստիճանով:
Ինչպես տեսնում եմ, ճիշտ է դուրս գալիս,
Ինչ գուշակում էր Հենրի Հինգերորդն իր ժամանակին.
«Երբ նա մի օր դառնա կարդինալ՝
Գլխարկն հավասար կպահի գահին»:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պարոն դեսպաններ, մենք քննարկեցինք
Ձեր առաջարկը հավուր պատշաճի,
Ձեր նպատակն է բարի ու խոհեմ:
Ուստի, մենք ստույգ կանխագծել ենք
Բարեկամության պայմաններն արդեն
Եվ կամենում ենք կարդինալի հետ
Դրանք առաքել դեպի Ֆրանսիա:

ԳԼՈՍՏԵՐ

Դալով ձեր կոմսի բուն առաջարկին՝
Ձեկուցել եմ ես իմ տիրոջն ազնիվ,
Որ առաքինի տիրուհին ունի բարի նպատակ.
Ե՛վ գեղեցկություն, և՛ հարուստ օժիտ,
Եվ նա միտք ունի նրան հռչակել Անգլիո թագուհի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Դեսպաններին) Իբրև ապացույց ու վկայություն մեր այս դաշինքի,
Թող նրա կրծքին զոհարն այս շղթա՝
Անհավատչյան իմ ազնիվ սիրո:
Լորդ խնամակալ, զինյալ ջոկատով ճանապարհ դրեք.
Որ Դուվր հասնեն նրանք ապահով և նստեն նավեր:
Այնտեղից ապա իրենց կհանձնեն ծովի քմային:

Գնում են թագավորը, Գլոստերը, Էքսեթերը և դեսպանները:

ԿԱՐԴԻՆԱԼ

Կա՛ց, լորդ պատվիրակ, նախ՝ դուք ստացեք
Այն մեծ գումարը, որ խոստացել եմ նորին սրբությանն.
Ով իմ ուսերին վերջերս գցեց այս մեծ թիկնոցը:

ՊԱՊԻ ՊԱՏՎԻՐԱԿ

Ես ձեզ ծառա եմ, միլորդ կարդինալ:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Առանձին) Ո՛չ. Ուինչեստեր, չես հնազանդվի,
Եվ դու չես զիջի ամենազոռոզ դուքսերից մեկին:
Հիմա, Գլոստեր, դու պետք է տեսնես,
Որ ո՛չ ծնունդով, ո՛չ ազդեցությամբ
Չես կարող հաղթել եպիսկոպոսին.
Պետք է ստիպեմ՝ քեզ ծնկի բերել,
Կամ խռովությամբ երկիրն ավերել:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆրանսիա: Հարթավայր՝ Անժուում:

Մտնում են Շառլը, Բուրգունդիայի դուքսը, Ալանսոնը, Բաստարդը, Ժաննա դ'Արկը և զինվորներ:

ՇԱՌԼ

Այս լուրն, իշխաններ, բոցավառում է մեր հանգչող հոգին,
Զի փարիզեցիք ապստամբել են,
Նորից դառնում են քաջ ու ռազմատենչ ֆրանսիացիներ:

ԱԼԱՆՍՈՆ

Օ՜ն, անդր, Փարիզ, փառապանծ տեր իմ.
Զորքդ մի՛ պահի գրկում զգվանքի:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Թող գրկի նրանց խաղաղությունը,
Եթե ուզում են ընդառաջ գալ մեզ,
Հակառակ դեպքում նրանց պալատներն ավեր կդառնան:

Մտնում է մի հետախույզ:

ՀԵՏԱԽՈՒՅԶ

Մեր կարմրավառ քաջ առաջնորդին հաջողություններ,
Իսկ նրա խիզախ զինակիցներին քախտավորություն:

ՇԱՌԼ

Խնդրում եմ, ասա՛, ի՞նչ լուր են բերել հետախույզները:

ՀԵՏԱԽՈՒՅԶ

Թշնամու զորքը, որ բաժանվել էր
Մինչև երկու մասի, համախմբվելով,
Պատրաստ է արդեն ձեզ հետ կռվելու:

ՇԱՌԼ

Սա անակնկալ լուր է, իշխաններ,
Մենք պետք է իսկույն առաջներն առնենք:

ԲՈՒՐԳՈՒՆԴԻԱՅԻ ԴՈՒՔՍ

Տեր իմ, էլ չկա Տոլբոտի ոգին,
Եվ առիթ չունենք վախի զգացման:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ամենաստոր զգացմունքներից վախն է անիծյալ,
Հրամայիր, դոֆին, և հաղթանակը քոնը կլինի,
Թող Հենրին զղջա, և աշխարհն արար համերժ դժգոհի:

ՇԱՌԼ

Առա՛ջ, իշխաններ, թող հաղթանակը մեզ միշտ ուղեկցի՛:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Անժուի առաջ:

Տագնապ: Ընդհարում: Մտնում է Ժաննա դ'Արկը:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Ա՜խ, կուսակալը հաղթում է նորից,
Իսկ ֆրանսիացիք փախչում են, ավա՜ղ:

Արդ՝ օգնեցեք ինձ, սուրբ հմայիլներ,
Իսկ դուք իմ ընտրյալ, սատար ոգիներ,
Ցույց տվեք գալիք փորձությունների նշաններն ամեն:
Դուք արագաշարժ իմ աջակիցներ, որ ենթարկվում եք
Հյուսիսի բարձր ամենակալին,
Հայտնվեք փութկոտ և ձեռք մեկնեք ինձ այս դժվար պահին:

Որոտ:

Հայտնվում են ոգիները:

Այսքան շուտ արագ ձեր հայտնությունը
Վկայում է ձեր փութաջանությունն անձիս նկատմամբ:
Արդ, իմ հարազատ, ազնիվ ոգիներ,
Որ երկրի խորքից դուք հայտնվել եք հզոր բանակով,
Այս անգամ էլ ինձ օգնեք, որպեսզի Ֆրանսիան հաղթի:

Ոգիները լռելյայն սահում են նրա շուրջը:

Օ՜, ինձ մի՛ տանջեք ձեր քար լռությամբ,
Չէ՞ որ իմ արյամբ կերակրել եմ ձեզ,
Պատրաստ եմ կտրել իմ ձեռքի մեկն էլ ու ձեզ շնորհել,
Որպես թե հույժ մեծ գրավական, միայն թե օգնեք:

Ոգիները կախում են իրենց գլուխները:

Ինձ չե՞ք սփոփում հույսի մի շողով: Ձեզ կպարգևեմ
Ամբողջ մարմինս, երբ կատարեք դուք իմ խնդրանքը:

Ոգիները տարուբերում են իրենց գլուխները:

Մի՞թե մարմինն իմ և մի՞թե արնոտ
Իմ ողջակեզը ձեզ չեն բախանձում.
Այդ դեպքում առե՛ք հոգիս, մարմինս... Առե՛ք ամեն ինչ...
Միայն մի՛ թողնեք, որ անգլիացիներն հաղթանակ տանեն:

Ոգիները անհետանում են:

Ավա՜ղ, լքեցին ոգիներն ինձ, հասավ ժամն արդեն,
Պետք է Ֆրանսիան փետրազարդ, գոռոզ կատարը կախի
Եվ ծունր իջնի Անգլիայի առջև:
Իմ նախկին թովչանքն անզոր է արդեն,
Չեմ կարող կռվել կամքը դժոխքի,
Ֆրանսիա, ընկավ փառքդ գետնիվար:

Գնում է:

Տագնապ: Ժաննա դ'Արկը և Յորքը մենամարտում են:
Ժաննա դ'Արկը գերվում է: Ֆրանսիացիք փախչում են:

ՅՈՐՔ

Օ՜, գեղեցկուհի, ես քեզ ճանկեցի,
Ազատ արձակիր քո նզովապարտ ոգիներն հիմա,
Գուցե շնորհեն քեզ ազատություն:
Օ՜, դևին վայել փառահեղ դու որս,
Տես. թե ինչպես է հոնքերը կիտում վհուկն այլանդակ,
35 Կարծես ուզում է, Կիրկեի նման կերպարն իմ փոխել:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Անկարելի է, մի այլ զարշելի կերպարանք զանել:

ՅՈՐՔ

Օ՜, թագաժառանգն այր է գեղեցիկ,
Կարող է դուր գալ սիրուն աչքերիդ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Թող մահը տանի դոֆինին ու քեզ
Եվ արնոտ ձեռքով խեղդի երկուսիդ,
Երբ քնած լինեք դուք ձեր անկողնում:

ՅՈՐՔ

Լեզուդ պապանձվի, նզովյա՜լ վհո՛ւկ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Թույլ տուր անիծեմ:

ՅՈՐՔ

Կանիծվես, վհո՛ւկ, խարույկի վրա:

Գնում են:

Տագնապ: Մտնում է Սաֆոլկը, բռնած Մարգարիտի ձեռքը:

ՍԱՖՈԼԿ

Ով էլ որ լինես՝ դու իմ գերին ես:

Նայում է Մարգարիտին:

Օ՜, գեղեցկուհի, դու մի՛ վախենա, մի՛ փախչիր ինձնից:
Ձեռքերս են անձիդ դիպչում հարգալիր.
48 Ես համբուրում եմ մատներդ բարակ,
Որպես հաշտության ազնիվ երաշխիք,

Համբուրում է նրա ձեռքը:

Եվ կամաց գնում քնքույշ իրանիդ նազուկ երկայնքով:
Ո՞վ ես դու, ասա՛, որ քեզ մեծարեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ով էլ որ լինես, ինձ Մարգարիտ են մարդիկ անվանում.
Ես Նեապոլի արքայի դուստրն եմ:

ՍԵՖՈԼԿ

Ես կոմս եմ, և իմ անունն է Սեֆոլկ:
Ինձ մի՛ նախատիր, բնությա՜ն հրա՛շք,
Երբ բախտի կամքով դարձել ես գերի.
Այսպես կարապն է իր ձագուկներին
Իր թևերի տակ պահում քնքշորեն:
Բայց այդ գերությունն երբ համարես քեզ վիրավորանք,
Ազատ ես նորից, գնա քո տունը որպես բարեկամ:

Մարգարիտն ուզում է գնալ:

Օ՜, կա՛ց *(առանձին)*: Չեմ կարող նրան բաց թողնել:
Գուցե ձեռքերս ազատ արձակեն, բայց սիրտս՝ երբեք:
Այս շքեղափայլ գեղեցկությունը ասես թե լինի
Խաղացող արև աչքերիս ծովում, որ շողշողում է
Ճառագայթի պես, արտացոլվելով հայելու գրկում:
Ա՜խ, սիրատածել կուզեի նրան, բայց չեմ հանդգնում:
Մտքերիս համար ես պետք է ճարեմ գրիչ ու թանաք:
Ամո՜թ քեզ, լա Պոլ: Բայց մի՛ վհատվիր,
Չունե՞ս դու լեզու, մի՞թե գերիդ չէ այդ գեղեցկուհին,
Մի՞թե սոսկում ես կնոջ հայացքից:
Իրա՛վ, այսպիսի իշխանավայել ու մեծապայծառ
Գեղեցկությունը բանտում է լեզուս, սիրտս խռովում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ասա՛ կոմս Սեֆոլկ, — եթե քո անունն այդպես է, իրա՛վ, —
Քեզ ի՞նչ փրկագին պետք է վճարեմ, որ ինձ ազատես,
Չէ՞ որ ես հիմա, ինչպես տեսնում եմ, գերիդ եմ դարձել:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին) Ի՜նչ գիտես, որ նա քեզ պիտի մերժի,
Երբ դու չես փորձել սերդ խոստանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչո՞ւ չես խոսում, քեզ ի՞նչ փրկագին պիտի վճարեմ:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին) Գեղեցիկ կին է, դե՛հ, սիրաբանի՛ր,
Կնոջն էլ այդպես կարող ես հաղթել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պետք է ընդունե՞ս փրկագինն արդյոք:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին). Ով անմիտ, հիշիր, որ դու կին ունես,
Սա քո սիրուհին ինչպե՞ս կդառնա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա ինձ չի լսում, պետք է հեռանալ:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին) Կորավ ամեն բան, ինձ բաժին ընկավ շատ վատ խաղաքուղթ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խոսում է անկապ, գժված է կարծես:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին). Գուցե կարող եմ հաղթանակ տանել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գուցե կհաճե՞ք ինձ պատասխանել:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին). Պետք է նվաճեմ այս չքնաղ կույսին. սակայն ո՞ւմ համար.
Արքայի համար: Լռի՛ր դու, հիմա՛ր, տախտակդ է պակաս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Տախտա՞կ է ասում, մի՞թե նա հյուսն է:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին) Ես դեռ կարող եմ քմահաճույքիս բավարարում տալ
Եվ խաղաղություն հաստատել երկու տերությանց միջև:
Բայց դժվարության դեռ մի հյուլե կա:
Թեև աղջկա հայրը վեհափառ Անժուի, Մ՛ենի դուքսն է, անվանի
Եվ Նեապոլի արքան է նաև, սակայն աղքատ է,
Մեր ավագանին կմերժի նման ամուսնությունը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՞թե, կապիտա՛ն, դու ինձ լսելու ժամանակ չունես:

ՍԵՖՈԼԿ

(Առանձին) Թող արհամարհեն. ամուսնությունը պետք է կայանա.
Հենրին ջահել է և հեշտ կլինի նրան համոզել:
Տիրուհի՛, լսեք. ձեզ գաղտնիք ունեմ բացում անելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

(Առանձին) Թող գերված մնամ, ասպետ է կարծես,
Ոչ մի արարքով ինձ չի անպատվի:

ՍԵՖՈԼԿ

Արքայադուստր, ականջ խոնարհեք իմ ասելիքին:

ՄԱՐԳԱՐԻՏ

(Առանձին) Ինձ ֆրանսիացիք գուցե ազատեն,
Այնժամ ինձ բնավ հարկավոր էլ չէ սիրալիրություն:

ՍԵՖՈԼԿ

Քնքուշ տիրուհի, ուզում եմ ասել...

ՄԱՐԳԱՐԻՏ

(Առանձին) Ա՜ս, նախկինում էլ գերել է կանանց:

ՍԵՖՈԼԿ

Ներեցեք, լեդի, ինչի՞ մասին եք դուք այսպես խոսում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ներեցեք, միլորդ, ծագեց մի փոքրիկ թյուրիմացություն:

ՍԵՖՈԼԿ

Դուք գերությունը չէի՞ք համարի բախտավորություն,
Թե նա ձեզ մի օր կարգեր թագուհի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լինել թագուհի և այն էլ՝ գերված,
Չկա ավելի մեծ անպատվություն.
Քան ստրուկ լինել՝ ստրկության մեջ,
Արքաներն ազատ միշտ պետք է լինեն:

ՍԵՖՈԼԿ

Եվ դուք կստանաք ազատությունը,
Երբ ազատ է Անգլիայի արքան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ առնչություն ունեմ նրա հետ:

ՍԵՖՈԼԿ

Ես այնպես կանեմ, որ դու Հենրիի թագուհին դառնաս,
Եվ արքայական ոսկյա մականը քո ձեռքին պահես,
Անչափ ուզում եմ քեզ թագադրել թանկագին թագով,
Թե բարեհաճես իմը լինելու...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ:

ՍԵՖՈԼԿ

Նրա սերը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես արժանի չեմ ազնիվ Հենրիի կինը դառնալու:

ՍԵՖՈԼԿ

Օ՜, իմ տիրուհի, ես՝ անարժանս, իրավունք ունեմ
Այսքան գեղեցիկ տիկնոջից խնդրել
Իր բարի ձեռքը արքայի համար.
Այս ընտրության մեջ ես բաժին չունեմ:
Դուք ի՞նչ եք ասում, գոհ չե՞ք ձեր բախտից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թե հորս հաճո է՝ ես համաձայն եմ:

ՍԵՖՈԼԿ

Հե՜յ, կանչեք այստեղ զորավարներին: Դրոշնե՛ր առա՜ջ:

Դրոշները շարժվում են առաջ:

Ձեր հոր դղյակի պարիսպների տակ
Մենք պիտի վարենք բանակցությունը,

Բանակցության փողեր: Պարսպի վրա երևում է Ռենեն:

Տեսնո՞ւմ ես, Ռենե, գերված աղջկադ:

ՌԵՆԵ

Այդ ո՞վ է գերել:

ՍԵՖՈԼԿ

Ես՝ կոմս Սեֆոլկը:

ՌԵՆԵ

Ինչպե՞ս քեզ օգնեմ: Ես մի ռազմիկ եմ, չեմ կարող ողբալ,
Կամ թե անիծել իմ բախտն անհաստատ:

ՍԵՖՈԼԿ

Այո. օգնության միջոց կա, պարոն:
Ի սեր քո պատվի՝ դու համաձայնիր,
Որ քո աղջկան կտաս արքային:
Ես նվաճել եմ մեծ դժվարությամբ
Քո չքնաղ դստերն իմ տիրոջ համար:
Եվ այս կարճատև, հեշտ գերությունը
Արքայավայել ազատություն է տալիս աղջկան:

ՌԵՆԵ

Ասո՞ւմ ես, Սեֆոլկ, ինչ մտածում ես:

ՍԵՖՈԼԿ

Չքնաղ Մարգարիտն իրավամբ գիտի, որ կոմս Սեֆոլկը
Չի շողոքորթում, չի ձևացնում և չի խարդախում:

ՌԵՆԵ

Իջնում եմ ահա քո իշխանական վեհին ընդառաջ,
Որ պատասխան տամ քո առաջարկին:

ՌԵՆԵՆ պարսպից իջնում է:

ՍԵՖՈԼԿ

Այստեղ կսպասեմ ես քո գալստյան:

Փողեր: Մտնում է ՌԵՆԵՆ:

ՌԵՆԵ

Ողջո՛ւյն քաջ կոմսին մեր հողի վրա:
Ինչ որ կամենաս՝ պահանջիր այստեղ:

ՍԵՖՈԼԿ

Շնորհակալությո՛ւն: Բախտավոր ես դու, քանզի անուշիկ
Մի դուստր ունես, դուստր՝ արժանի միայն թագուհու:
Ի՞նչ պատասխան ես կամենում ինձ տալ:

ՌԵՆԵ

Քանի որ, Սեֆոլկ, բարեհաճում ես
Ընտրել այս փոքրիկ ոչնչությունը
Քո տիրոջ համար որպես հարսնացու,
Ապա աղջիկս թող նրան լինի,
Երբ հաճո է Հենրիին, իրավ:
Բայց այն պայմանով, որ կարողանամ
Ես իմ սեփական կոմսություններում,— Անժուում, Մենում,—
Տիրություն անել հանգիստ ու խաղաղ, առանց պատերազմ:

ՍԸՖՈԼԿ

Թող սա աղջկա փրկագին լինի. ես ազատում եմ:
Դալով քո երկու կոմսություններին՝ ես հանձն եմ առնում,
Որ այսուհետև դրանք վայելես դու խաղաղությամբ:

ՌԵՆԵ

Ես էլ իմ հերթին, Հենրու անունով,
Քեզ՝ առաքյալիդ, ի նշան անկեղծ հավատարմության,
Տալիս եմ ահա նշանադրված աղջկաս ձեռքը:

ՍԸՖՈԼԿ

Ռենե, ընդունիր շնորհակալության խոսքը արքայի,
Ում ծառայում եմ ես ազնվորեն:

Առանձին:

Ա՜խ, թվում է ինձ, որ կարող էի այդ խնդրո շուրջը
Լինել խելամիտ սեփական միջնորդ:
Այս լուրերն ինձ հետ կտանեմ Անգլիա,
Որ ամուսնության ծեսն այնտեղ լինի:
Դե՜հ, մնա՜ս բարյավ. փառապանծ Ռենե,
Պահիր ադամանդն, ինչպես վայել է՝ ոսկյա դղյակում:

ՌԵՆԵ

Ես գրկում եմ քեզ ինչպես տիրոջդ՝
Թե այստեղ լիներ արքան քրիստոնյա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Մնացե՜ք բարյավ. բարի մաղթանքներ, աղոթք. աղաչանք.
Սրանցով միայն ձեզ պիտի հիշի դուստրը Ռենեի:

Ուզում է գնալ:

ՍԸՖՈԼԿ

Մնացե՜ք բարյավ, չքնաղ տիրուհի: Բայց դուք, Մարգարիտ,
Չե՞ք ուզում արդյոք ողջույն առաքել իմ թագավորին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հղում եմ նրան այնպիսի ողջույն,
Որ պատշաճում է անաղարտ կույսին, նրա սպասուհուն:

ՍԸՖՈԼԿ

Բառե՜ր քաղցրագին. բառե՜ր խիստ պարկեշտ,

Սակայն տիրուհի. ձեզ պետք է նորից անհանգստացնեմ...
Սիրո ի՞նչ գրավ առաքում եք դուք իմ թագավորին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, բարի՛ միլորդ, անաղարտ մի սիրտ,
Որ երբեք սիրով դեռ չի համակվել:

ՍԵՖՈԼԿ

Չի՞ էլ համբուրվել:

Համբուրում է Մարգարիտին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ համբույրը քեզ: Ես չեմ հանդգնում
Այսպիսի չնչին սիրո գրավական հղել արքային:

Գնում են Ռենեն ու Մարգարիտը:

ՍԵՖՈԼԿ

Օ՜, եթե աստված քեզ ինձ պարգևեր: Սպասի՛ր, Սեֆոլկ:
Պետք չէ քեզ բնավ մտնել բավիղն այս,
Ուր դարանում են մինոտավրոսը
Եվ խիստ զարշելի դավաճանությունը:
Դու Մարգարիտի զարմանահրաշ
Արժանիքներով կդյութես Հենրուն,
Հիշի՛ր, դու նրա արժանիքները,
Եվ արվեստները նսեմացնող հրապույրները.
Երբ նավ կնստես, հիշիր գեղեցիկ այս պատկերները,
Որպեսզի, երբ դու ծունր իջնես գահին,
Այդ սուրբ հրաշքով դու կարողանաս գրավել Հենրուն:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Դուքս Յորքի ճամբարը Անժուում:

Մտնում են Յորքը, Վորվիկը և ուրիշներ:

ՅՈՐՔ

Բերեք վհուկին, ում պետք է այրել խարույկի վրա:

Մտնում են Ժաննա դ'Արկը զինյալ պահապանի ուղեկցությամբ և մի հովիվ:

ՀՈՎԻՎ

Ա՜խ, Ժաննա, հորդ սիրտն ես սպանում:
Մի՞թե փնտրեցի քեզ ամենուրեք,
Որ դաժան բախտն իմ ցույց տար այս հողում
Քո անագորույն, վաղաժամ մահը:
Աղջի՜կս, Ժաննա, քեզ հետ կմեռնեմ:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Զառամյալ աղքատ, սուտ անզգամ,
Աշխարհ եմ եկել ես ազնիվ տնից,
Դու ո՛չ իմ հայրն ես, ո՛չ բարեկամս:

ՀՈՎԻՎ

Օ՜, լսի՛ր: Լորդեր, բայց տվեք ասել՝ նա սուտ է խոսում.
Ծխական ամբողջ համայնքը գիտի, որ նրա հայրն եմ:
Ա՜խ, դեռ ապրում է նրա խեղճ մայրը և կհաստատի.
Որ սա առաջին պտուղն է եղել իմ ամուսնության:

ՎՈՐՎԻԿ

Կի՛րք, ուրանո՞ւմ ես քո ծնողներին:

ՅՈՐՔ

Սա ցույց է տալիս նրա ապիրատ և ամորալի
Կյանքի պատկերը, և նա այսպես էլ կմեռնի մի օր:

ՀՈՎԻՎ

Ամո՜թ քեզ, Ժաննա, պետք չէ համառել: Ա՜խ, ասված գիտի,
Որ դու մարմնիս փոքրիկ մի մասն ես,
Քո բախտի համար ես շատ եմ լացել,
Ինձ մի՛ ուրանա, Ժաննա՜, կաղաչեմ:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Հեռացի՛ր, գեղջուկ: Կարողացել եք որսալ այս մարդուն.
Որպեսզի ազնիվ ծնունդս անարգեք:

ՀՈՎԻՎ

Այն առավոտյան, երբ պսակվեցի քո մայրիկի հետ,
Մի նոքլ տվեցի մեր քահանային.
Չոքիր իմ առաջ, առ օրհնությունս, աղջիկս բարի.
Չե՞ս լսում հորդ: Սև լիներ այն օրն, երբ աշխարհ եկար,
Ինչպես կուզեի, երբ մորդ կրծքից կաթ էիր ծծում՝

Լիներ օձի բույն կամ երբ հայրենի կանաչ դաշտերում
Իմ գառներն էիր արածացնում,
Քեզ արյունարբու գայլը հոշոտեր:
Հո՞րդ ես ուրանում, նզովյալ պոռնիկ,
Օ՜, այրե՛ք, այրե՛ք, կախելը քիչ է:

Գնում է:

ՅՈՐՔ

Դուրս տարե՛ք սրան, չափից ավելի երկար է ապրել.
Լցնելով աշխարհն ապականությամբ:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Թույլ տվե՛ք ասել, ո՞ւմ եք պարսավում:
Չեմ ծնվել հովվի խղճուկ հյուղակում,
Ես արքաների տոհմից եմ սերվել:
Ես սուրբ եմ, պարկեշտ, ընտրյալն երկնքի.
Երկնային ոգու հուրն է ինձ պսակել.
Որ երկրի վրա հրաշք արարեմ:
Չար ոգիներն ինձ չեն տեսել երբեք,
Բայց դուք, որ մոլի տարփանքով եղծված.
Անմեղ զոհերի արյուն եք թափում,
Եվ հազարերորդ անառակությամբ պղծում ամեն ինչ,
Զրկված հավիտյան աստծո շնորհից,
Կարծո՞ւմ եք հրաշք կարող են գործել
Չար ոգիների օգնությամբ միայն.
Ո՛չ, մոլորվո՞ւմ եք: Ժաննա դ'Արկը
Դեռ ջահել օրից կույս է մնացել,
Մաքուր է նույնիսկ իր խոհերի մեջ:
Նրա արյունը՝ հեղված դժնորեն,
Պետք է երկնքի դռների առջև իր վրեժն առնի:

ՅՈՐՔ

Լա՛վ, բավակա՞ն է, դեպ խարույկ տարեք:

ՎՈՐՎԻԿ

Լսե՛ք, պարոններ, եթե կույս է մի,
Փայտ մի՛ խնայեք, լցրեք խուրձ առ խուրձ:
Ձյութով տակառներ դրեք մահաբեր խարույկի վրա,
Որպեսզի նրա տառապանքները կարճատև լինեն:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Մի՞թե ոչ մի բան չի ազդում անգութ ձեր սրտի վրա:
Այդ դեպքում, Ժաննա, հայտնիր դու նրանց քո թուլությունը,
Որով քեզ օրենքն ընդմիշտ կփրկի.
61 Հղի եմ, արնոտ մարդասպաններ,
Եվ մի՛ սպանեք պտուղն արգանդիս,
Թեև հրում եք ինձ գիրկը մահվան:

ՅՈՐՔ

Աստվա՜ծ ողորմի. երեխայով՝ կո՞ւյս:

ՎՈՐՎԻԿ

Բյուր հրաշքներից սա մեծագո՞ւյնն էր,
Մի՞թե դու սրան հանգեցիր, ով կույս, քո սրբությունով:

ՅՈՐՔ

Շարլը և Ժաննան եղել են, անշո՛ւշտ, փորձված ձեռնածու,
Հավատում էի, որ արքայորդուն նա կապավիներ:

ՎՈՐՎԻԿ

Մեզ ապօրինի զավակներ պետք չեն.
Մանավանդ, երբ որ դոֆինը նրա հայրն է լինելու:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Մոլորված եք դուք, իմ երեխայի հայրն Ալանսոնն է,
Որ վայելում էր իմ սրտի սերը:

ՅՈՐՔ

73 Վա՜յ մեզ, Ալանսոն. դու տխրահռչակ Մաքիավելի.
Պետք է մահանա պտուղն անպայման,
Թեկուզ հազար կյանք հրաշքով ունենա:

ԺԱՆՆԱ Դ'ԱՐԿ

Թողություն տվեք, ես ձեզ խաբեցի,
Ո՛չ, մեղավոր չեն դուքսն ու դոֆինը,
Ինձ Նեապոլի արքան համոզեց...

ՎՈՐՎԻԿ

Ամուսնացած մարդ՝ հանդուրժելի չէ:

ՅՈՐՔ

Ահա քեզ աղջիկ: Օ՜, այնքան շատ են,
Որ նա չգիտի՝ ում մեղադրի:

ՎՈՐՎԻԿ

Սա ցույց է տալիս, որ նա եղել է ազատ ու շռայլ:

ՅՈՐՔ

Այնուամենայնիվ, կո՞ւյս է անարատ:
Պոռնի՛կ, բառերդ քեզ են անարգում և քո լակոտին.
Իզուր են արդեն աղերսանք ու լաց:

ԺԱՆՆԱ ԴԱՐԿ

Դե՛հ, տարե՛ք, ես ձեզ անեծքս եմ թողնում:
Թող փառավորյալ արևը երբեք չարձակի շողեր
Ձեր երկրի վրա, ուր ապրում եք դուք,
Թող մահվան ստվերն ու մութն անբաժանց
Այնքան ժամանակ ձեզ խիստ պարուրեն.
Որ դժբախտությունն ու վհատումը
Ձեզ մղեն դեպի մահ ու կախաղան:

Գնում է զինյալ պահապանի ուղեկցությամբ:

ՅՈՐՔ

Կտրատվես մեկեն ու մոխիր դառնաս,
Դժոխքի կեղտոտ, անիծյալ ծառա:

Մտնում է կարդինալ Բոֆորտը իր շքախմբով:

ԿԱՐԴԻՆԱԼ

Լորդ խնամակալ, ողջունում եմ ձեզ
Տերին մեծության լիազորությամբ:
Իմացեք, տյարք իմ, քրիստոնեական տերությունները,
Որ թշնամական այս կռիվներից տանջվում են սաստիկ,
Աղերսանքով խնդրում են կայուն մի խաղաղություն՝
Մեր և հանդուգն Ֆրանսիայի միջև:
Թագաժառանգը յուր շքախմբով մեզնից հեռու չէ,
Նա ընձեռում է այս խնդրո շուրջը խոսելու առիթ:

ՅՈՐՔ

Մի՞թե մեր ամբողջ եռանդն սպառեցինք այս բանի համար:
Ինչքան զինվորներ, դուքսեր, իշխաններ ընկան այս կռվում
Եվ հատուցեցին՝ ի սեր հայրենյաց իրենց արյունը,
Մի՞թե մենք պիտի կնքենք իգացյալ մի խաղաղություն,
Մի՞թե նենգությամբ, դավաճանությամբ ու խարդավանքով
Մենք չկորցրինք այն քաղաքների մեծագույն մասը,

Որ մեր պապերն են վաղուց նվաճել:
Ա՜խ, Կորվի՛կ, Կորվի՛կ, ես մի տխրությամբ գուշակում էի,
Որ ամբողջովին պետք է կորցնենք մեր տերությունը:

ԿՈՐՎԻԿ

Համբերությո՛ւն, Յորք, թե կնքելու ենք մի խաղաղություն,
Ապա այնպիսի սուղ պայմաններով պետք է այն լինի,
Որ ֆրանսիացիք շատ քիչ բան շահեն:

Մտնում են Շառլը, Բաստարդը, Ալանսոնը, Ռենեն և ուրիշներ:

ՇԱՌԼ

Անգլիո իշխաններ, քանի որ արդեն
Մենք ձեռք ենք բերել համաձայնություն,
Որով մեր երկրում պետք է հաստատվի զինադադարը.
Ուստի եկել ենք մենք իմանալու,
Թե դուք հաշտության ի՞նչ պայմաններ եք մեզ առաջարկում:

ՅՈՐՔ

Խոսի՛ր, կարդինալ, այրող ցասումը կոկորդս է սեղմում,
Ձայնս խեղդվում է, երբ մեր անիծյալ
Թշնամիներին տեսնում եմ նորից:

ԿԱՐԴԻՆԱԼ

Շառլ և դուք, լորդեր, լսեք վճիռը մեր.
Նկատի առնելով, որ Հենրի արքան
Խիստ բարեգութ է և անհիշաչար,
Համաձայնել է փրկել ձեր երկիրն աղետալի կռվից:
Հանդուրժում է նա, որ դուք պտղաբեր
Խաղաղությունը ճաշակեք իրավ,
Եվ դառնաք նրա հպատակները:
Եվ եթե դուք՝ Շառլ, հարկ վճարելով՝
Ենթարկվեք նրան որպես փոխարքա,
Ապա կօգտվեք ձեր արքայական բարձր տիտղոսից:

ԱԼԱՆՍՈՆ

Նա պետք է դառնա սոսկ իր ստվե՞րը:
31 Եվ զարդարելով ճակատն արքային ոչ վայել թագով,
Նա, ըստ էության մի մարդ է դառնում,
Որ չունի կշիռ, հեղինակություն:
Անհեթե՜թ, անմի՜տ առաջարկություն:

ՇԱՐԼ

Հայտնի է, լորդեր, որ ես Գալիայի
Մեծագույն մասին իշխում եմ վաղուց,
Եվ ճանաչում են ինձ այնտեղ արքա:
Մի՞թե մնացյալ հողերի համար, որ չեն նվաճված,
Ես պետք է զիջեմ իրավունքներս,
Ինչ է, թե միայն կոչվեմ փոխարքա:
Ո՛, ո՛չ: Լորդ-դեսպան, ավելի լավ է
Իմ ձեռքին պահեմ, ինչ այժմ ունեմ,
Քան՝ աչքս շատին, ես միանգամից զրկվեմ եղածից:

ՅՈՐՔ

Ո՛, հանդուգն Շառլ, դու չե՞ս գաղտնորեն միջնորդ ուղարկել,
Որպեսզի մեզ հետ հաշտություն կնքեն:
Եվ այժմ, երբ գործն համաձայնությամբ գլուխ է գալիս,
Քաշվել ես մի կողմ, չափում ձևո՞ւմ ես:
Քո հափշտակված տիտղոսն ընդունիր
Իբրև թանկ նվեր Հենրիի կողմից,
Դու չես նվաճել թագն իրավունքով:
Գիտցիր, անդադար պատերազմներով քեզ կչարչարենք:

ՌԵՆԵ

(Առանձին՝ Շառլին) Տեր իմ, իզուր ես այդպես համառում,
Պետք չէ պայմանի նկատմամբ լինել
Այսքան քմահաճ ու բծախնդիր: Հավատա դու ինձ.
Հարյուրից տասը՝ չենք կարող գտնել նման մի առիթ:

ԱԼԱՆՍՈՆ

(Առանձին՝ Շառլին) Ճշմարիտն ասած, նրբամտությամբ
Դու պետք է փրկես քո ժողովրդին նման սպանդից
Եվ անագորույն արնահեղումից,
Որ տեսնում ենք մենք մեր ամենօրյա թշնամությունից,
Ուստի, ընդունիր զինադադարի այս պայմանները,
Չէ՞ որ կարող ես ուզածդ պահին չեղյալ համարել:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ ես ասում, Շառլ, ընդունո՞ւմ ես դու մեր պայմանները:

ՇԱՐԼ

Այո, բայց միայն վերապահումով.

Որ չենք իշխելու մեր ամրոցներին:

ՅՈՐՔ

Ուրեմն երդվիր հավատարմորեն մեր վեհապետին
Եվ որպես ասպետ դու այսուհետև
Չես ըմբոստանա Անգլիո գահի դեմ:
Խոստացիր, որ դու, քո ավագանին
Չեն ապստամբվի մեր տերության դեմ:

Շառլը և նրա շքախումբը երդվում են:

Այսպես, արձակիր քո բանակները, երբ որ կամենաս,
Իջեցրու դրոշները, թող լռեն ընդմիշտ ձեր թմբուկները,
Քանզի մենք այստեղ պիտի հաստատենք
Ճշմարտանդես խաղաղությունը:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լոնդոն: Դահլիճ պալատում:

Մտնում են Սեֆոլկը՝ թագավորի հետ զրուցելով, Գլոստեր, էքսետեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ազնվաբարո կոմս, դուք Մարգարիտի չքնաղ դիմագիծն
Այնպես գծեցիք, որ հիացած եմ:
Այդ կույսն օժտված առաքինությամբ,
Որ բյուր թովչանքներ ունի մարմնի,
Վառեց կրծքիս տակ սիրո անհուն կիրք:
Եվ ինչպես ահեղ փոթորկի ալացք,
Որ հզոր նավն է քշում հոսանքին ուղիղ հակառակ,
Այդպես ինձ նրա համբավն է մղում ձեղեղաբեկվել,
Կամ թե հասնելու նրա մեծ սիրո նավահանգիստը:

ՍԵՖՈԼԿ

Ով բարի իմ տեր, սա թեթևակի պատմություն է մի,
Բայց մի նախերգանք՝ նրա արժանի գովաբանության:
Այդ հրաշք կույսի կատարելությամբ,—
Թե ունենայի մի հմուտ արվեստ,—
Ես կկազմեի հոյակապ մի գիրք,
Որ հրապուրվեր ընթացողն անգամ:
Նա չի արարված հանույքի համար,
Խիստ հեզամիտ է, խաղաղ ու բարի.

Ձեր իշխանության հլու կմնա,
Ձեզ կծառայի անկեղծ ու խոնարհ,
Եվ ձեզ կսիրի ինչպես տիրոջն իր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հենրին ուրիշ կերպ չէր էլ սպասում,
Լորդ-խնամակալ, հավանություն տուր,
Որ Մարգարիտը դառնա Անգլիայի և իմ թագուհին:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, եթե տայի՝ կնշանակեր աջակցել մեղքին:
Չէ՞ որ դուք արդեն, ողորմած իմ տեր,
Մի արժանավոր հարսնացու ունեք,
Ինչպե՞ս ետ առնենք մեր տված խոսքը,
Որ ձեր պատիվը չանարգվի բնավ:

ՍԵՖՈԼԿ

Ինչպես՝ կվարվեր տերը անօրեն իր խոստումներով,
Ինչպես՝ ասպետը հսկա կրկեսում,
Թեև երդվել է հաղթել մրցակցին,
Բայց նկատելով իր ուժն առավել, լքում է դաշտը:
Խեղճ կոմսի դուստրը հավասար չէ քեզ,
Եվ առանց մեղքի կարող ես տված խոստումն ետ առնել:

ԳԼՈՍՏԵՐ

Ասացեք, խնդրեմ, ինչ գերապատիվ
Առավելություն Մարգարիտն ունի:
Կոմս է նրա հայրն՝ ավել կամ պակաս,
Թեև փառահեղ տիտղոսներ ունի:

ՍԵՖՈԼԿ

Այո՛, դուք գիտեք, որ նրա հայրը
Երուսաղեմի և Նեապոլի արքան է ստույգ,
Եվ նա Ֆրանսիայում մեծ կշիռ ունի:
Պետք է նրա հետ ազգական լինել,
Որ ֆրանսիացիք մնան շարունակ մեզ հավատարիմ:

ԳԼՈՍՏԵՐ

Սա Արմանյակն էլ կարող է անել,
Քանզի դոֆինի մոտ ազգականն է:

ԷՔՍԵՏԵՐ

Բացի այդ, նրա հարստությունը ապահովում է ահագին օժիտ,
Եվ ավելի շատ Ռենեն կառնի, քան թե կբաշխի:

ՍԵՖՈԼԿ

Օժի՞տ, պարոններ: Մի՛ խայտառակեք ձեր թագավորին:
Մի՞թե նա այնքան սառը կլինի, գծուծ ու ագահ,
Որ հարստությունն համարի բարձր կատարյալ սիրուց:
Հենրին կարող է հարստացնել իր հարսնացուին
Եվ ոչ թե փնտրել մեծատան աղջիկ:
Այսպես խաղողի գյուղացիներն են
Առևտուր անում, երբ կին են ուզում,
Ինչպես շուկայում ձիեր, ոչխարներ կամ եզ վաճառող:
Ամուսնությունը դժվար խնդիր է,
Ոչ մի բարեխոս չի կարող լուծել,
Պետք չէ մեր կամքը նրան փաթաթել:
Ում որ ցանկանա վեհափառ արքան,
Թող նրա հետ էլ հարսանեկան առագաստ մտնի:
Ուստի, իշխաններ, քանի որ Հենրին սիրում է նրան,—
Եվ սա գլխավոր պատճառն է, անշո՛ւշտ,—
Մենք պարտ ենք տալու համաձայնություն,
Թող Մարգարիտը լինի հարսնացուն:
Ո՜, մի՞թե բռնի ամուսնությունը
Դժոխք չէ, կռվի բույն, մշտնջենավոր երկպառակություն:
Սիրո առագաստն երջանկություն է,
Եվ խաղաղության երկնային տիպար:
Ո՞ւմ պիտի ընտրենք Հենրիի համար, որ ինքն է արքա,
Երբ ոչ միայն հեզ Մարգարիտին՝ դուստրն արքայի:
Նրա աննման դեմքն ու ծնունդը,
Որ պատշաճում են լոկ թագավորին,
Նրա անվեհեր խիզախությունը և անվախ ոգին,—
Որ սովորաբար քիչ է կանանց մոտ,—
Կարդարացնեն մեր հույսերն համակ:
Հենրին զավակ է աշխարհակալի,
Եվ մեզ կծնի նոր աշխարհակալ,
Երբ վեհանձն, ուժեղ կնոջ հետ,
Ինչպիսին չքնաղ արքայադուստրն է, շղթայվի սիրով:
Հիշե՛ք, պարոններ և ձեր վճիռը արձակեք այստեղ,
Որ Մարգարիտը լինի թագուհին:

Չեմ կարող ասել, իմ ազնիվ Սեֆոլկ,
Պատճառն ինչ եղավ. ձեր զրո՞ւյցն ազդու,
Թե՞ պատանեկան տարիներն անհոգ,
Երբ ինձ չէր այրել բոցավառ սիրո կիրքը բորբոքուն,
Բայց իմ կրծքի տակ հույսի ու վախի տարտամ զգացմամբ
Ես մի խենթ տագնապ. և տկար եմ ես՝
Բուռն խոհերիս անդուլ տքնանքից:
Ահա թե ինչու, իմ ազնիվ միլորդ, մեկնեք Ֆրանսիա,
Հասեք այն բանին, որ համաձայնեն պայմանների հետ,
Եվ Մարգարիտը շնորհե իր ջերմ հավանությունը՝
Անգլիա մեկնելու, պսակն ընդունելու
Դառնալով Հենրու կինն հավատարիմ,
Իսկ ձեր ծախսերը, բավական խնամքը թող ժողովուրդը
Հոգա տասն անգամ: Դե՛հ, ճամփա ընկեք:
Մինչև տուն դառնաք՝ հազար ու մի հոգս ինձ պիտի տանջե:
Իսկ դուք, ծերեղբա՛յր, դուրս վանեք ձեզնից վիրավորանքը:
Թե՛ ձեր անցյալով իմ մասին դատեք,
Գիտեմ, ինձ պիտի հեշտությամբ ներեք
Այս անակնկալ որոշման համար:
Տարե՛ք ինձ հեռու, մի խաղաղ անկյուն,
Որ կարողանամ իմ տխրությանը հանձնվել մենակ:

Գնում է:

ԳԼՈՍՏԵՐ

Այո. տխրություն: Ես վախենում եմ սկզբից մինչև վերջ:

Գնում են Գլոստերը ու Էքսետերը:

ՍԵՖՈԼԿ

Հաղթեցիր, Սեֆոլկ, և դու գնում ես,
Ինչպես գնում էր ջահել Պարիսը դեպի Հունաստան.
Այն պայծառ հույսով, որ սեր կգտնի,
Բայց դու ավելի բախտավոր եղար. քան տրոյացին:
Այժմ կդառնա Մարգարիտն Հենրու
Կինն օրինավոր և կիշխի նրան,
Իսկ ես. ես՝ կիշխեմ և՛ թագավորին,
Եվ նոր թագուհուն, և՛ ամբողջ երկրին:

Գնում է:

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ

Մասն երկրորդ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԸ
ՀԱՄՖՐԻ, դուքս Գլոստեր, նրա հորեղբայրը
ԿԱՐԴԻՆԱԼ ԲՈՖՈՐՏ, Եպիսկոպոս Ուինչեստրի, թագավորի մեծ հո.
ՌԻՉԱՐԴ ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ, դուքս Յորքի
ԷԴՎԱՐԴ
ՌԻՉԱՐԴ } նրա որդիները
ԴՈՒՔՍ ՍՈՄԵՐՍԵՏ
ԴՈՒՔՍ ՍԵՖՈԼԿ
ԴՈՒՔՍ ԲՈՒԿԻՆԳԵՄ
ԼՈՐԴ ԿԼԻՖՈՐԴ } թագավորի կողմնակիցները
ԿՐՏՍԵՐ ԿԼԻՖՈՐԴ, նրա որդին
ԿՈՄՍ ՍՈԼՍԲԵՐԻ
ԿՈՄՍ ՎՈՐՎԻԿ } Յորքի կողմնակիցները
ԼՈՐԴ ՍՔԵԼՍ
ԼՈՐԴ ՍԵՅ
ՍԵՐ ՀԵՄՖՐԻ ՍՏԵՖՈՐԴ
ՎԻԼՅԱՄ ՍՏԵՖՈՐԴ, նրա եղբայրը
ՍԵՐ ՋՈՆ ՍՏԵՆԼԻ
ՎՈ
ՄԵՏՅՈՒ ԳՈՖ
ԿԱՊԻՏԱՆ
ՇԿԻՊԵՐ
ՎԵԿԱՊԵՏ
ՎԻՏՄՈՐ ՎԱԼՏԵՐ
ԵՐԿՈՒ ԱԶՆՎԱԿԱՆ, գերված Սեֆոլկի հետ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՅԴԵՆ, Քենտցի ազնվական
ՋՈՆ ՅՈՒՄ
ՋՈՆ ՍԱՈՒԹՎԵԼ } հոգևորականներ
ՌՈՋԵՐ ԲՈԼԻՆԲՐՈԿ, կախարդ
ԹՈՄԱՍ ՀՈՌՆԵՐ, զինագործ
ՊԻՏԵՐ, նրա աշակերտը
ՉԵԹԵՄՑԻ ԳՐԱԳԻՐ
ՍԵՆՏ ՕԼԲԵՆՍԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ
ՍԱՅՄԵՐ ՍԻՄՊԿՈՔՍ, խաբեբա

ՋԵԿ ՔԵԴ, խռովարար
ՋՈՐՋ ԲԵՎԻՍ
ՋՈՆ ՀՈԼԵՆԴ
ԴԻԿ, մսագործ
ՍՄԻԹ, ջուլհակ
ՄԱՅՔԼ
} նրա կողմնակիցները
ԵՐԿՈՒ ՄԱՐԴԱՍՊԱՆ
ՄԱՐԳԱՐԻՏ, Հենրի Վեցերորդի թագուհին
ԷԼԵԱՆՈՐ, դքսուհի Գլոստեր
ՋՈՐՋԵՆ ՄԱՐՋԵՐԻ, վհուկ
ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Լորդեր, լեդիներ, սպասավորներ, խնդրարկուներ, քաղաքապետեր, մի հերալդ, մի բարապան, ոստիկաններ, քաղաքացիներ, նավավարպետներ, բազեպաններ, պահապաններ, զինվորներ, սուրհանդակներ, ոգիներ և ուրիշներ:

Գործողությունը տեղի է ունենում Անգլիայի տարբեր մասերում:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Մի դահլիճ պալատում:

Շեփորներ: Հետո՝ բարձրաստիճանները: Մի կողմից մտնում են թագավորը, դուքս Գլոստերը, Սոլսբերին, Վորիկը, կարդինալ Բոֆորտը, մյուս կողմից՝ թագուհին, Սեֆոլկը, Յորքը, Սոմերսեթը և Բուկինգհեմը:

ՍԵՖՈԼԿ

Երբ արքայական ձեր հրամանով
Ես մեկնում էի դեպի Ֆրանսիա,
Դուք պատվիրեցիք ինձ՝ փոխանորդից, որ ձեր փոխարեն
Նշանադրվեմ արքայադուստր Մարգարիտի հետ:
Եվ հռչակավոր հին քաղաք Տուրում,
Ուր ներկա էին արքայք՝ Ֆրանսիո և Սիցիլիայի,
Եվ ազնիվ դուքսեր Բրետանայի և Կալաբրիայի
Ե՛վ Օռլեանի, և՛ Ալանսոնի, յոթ հայտնի կոմսեր,
Տասներկու բարոն, քսան բարեպաշտ եպիսկոպոսներ,
Ես կատարեցի պարտքս սրբազան՝ ինձ պսակեցին:
Արդ՝ խոնարհաբար ծունր իջնելով,
Հայացքս հառած մեր ավագանուն,
Ձեզ եմ փոխանցում իմ իրավունքը թագուհու վրա
Ձեր բարեշնորհ, ազնիվ ձեռքերին,
Որոնց ստվերն եմ ինքս պատկերում.
Նման թանկագին ընծա չի բերել և ոչ մի վասալ,
Նման թագուհի երբեք չի տեսել ոչ մի թագավոր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վեր կա՛ց, իմ Սեֆոլկ, ողջո՛ւյն թագուհի,
Ես քնքշորեն կարող եմ միայն
Սերս արտահայտել քնքույշ համբույրով:
Ո՜, աստվա՛ծ, որ ինձ կյանք ես պարգևել,

Տո՛ւր երախտիքով ալեցուն մի սիրտ,
Դու այս գեղեցիկ դեմքով բաշխում ես
Հոգուս՝ երկնային բյուր օրհնանքների մի ամբողջ աշխարհ,
Երբ մեր սրտերն են միանում իրար։

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Մեծ արքա Անգլիո, տեր իմ բարեգութ,
Այն զրույցները փոխադարձ ու ջերմ,
Որ ես մտովի՝ գիշեր թե ցերեկ, քուն թե արթմնի
Անց էի կացնում քեզ հետ միասին,
Իմ երազներում, իմ աղոթքներում, —
Ինձ ներշնչում են համարձակություն,
Որ ես իմ մտքի խիստ պարզ բառերով
Եվ ուրախ սրտով ողջույն հղեմ քեզ։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կախարդում է ինձ հայացքը նրա,
Բայց նրա խոսքի զարդն հրապուրիչ,
Բառերն օծված վեհ իմաստությամբ,
Ինձ ստիպում են՝ զարմանքից ապշած,
Անձնատուր լինել լացին խնդության.
Տյա՛րք իմ, ցնծագին ողջունեք սերս։

ԲՈԼՈՐԸ

(Ծունր իջնելով). Թող երկա՛ր ապրի մեր թագուհին՝ հույսը Անգլիայի։

Փողեր։

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Շնորհակալությո՛ւն։

ՍԵՖՈԼԿ

Լորդ-խնամակալ, ձեր թույլտվությամբ,
Ձե՛ք բարեհաճի բարձրաձայն կարդալ պայմանն հաշտության,
Որ տասնութ ամսով փոխադարձաբար
Կնքել են Շառլը ու երկիրը մեր։

ԳԼՈՒՍՏԵՐ

(Կարդում է) «Առաջին՝ Ֆրանսիայի թագավոր Շառլը և Վիլյամ դը լա Պոլը, մարկիզ Սեֆոլկը, Անգլիայի թագավոր Հենրիի դեսպանը համաձայնել են, որ վերոհիշյալ Հենրին ամուսնանում է Նեապոլի, Սիցիլիայի ու

Երուսաղեմի թագավոր Ռենեի դուստր լեդի Մարգարիտի հետ և նրան պսակում է թագուհի ոչ ուշ, քան սույն մայիսի երեսունը... Այնուհետև՝ նրանք համաձայնել են Անժու և Մեն դքսությունները ազատել ու հանձնել թագավորին՝ նրա հորը...»:

Թուղթն ընկնում է ձեռքից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քեզ ի՞նչ պատահեց. բարի՛ հորեղբայր:

ԳԼՈՒՍՏԵՐ

Տեր իմ. ներեցե՛ք, հանկարծ զգացի սրտի ծակոցներ.
Որ աղոտացրին լույսը աչքերիս. չեմ կարող կարդալ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարի՛ հորեղբայր, խնդրում եմ կարդալ:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Կարդում է) «Այնուհետև՝ համաձայնել են Անժու և Մեն դքսությունները ազատել ու հանձնել թագավորին՝ նրա հորը և Մարգարիտին ուղարկել անգլիական թագավորի անձնական հաշվին. առանց որևէ օժիտի»:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պայմաններն անշուշտ. հաճելի են մեզ: Ծունր իջի՛ր. մարկիզ.
Շնորհում ենք քեզ Սեֆոլկի դքսության բարձր տիտղոսը,
Հանձնում քեզ սուրը: Հորեղբոր զավակ. Յորք իմ հարազատ,
Ձեզ Ֆրանսիայից մենք ետ ենք կանչում
Մինչև որ տասնութ ամիսներն անցնեն:
Շնորհակալությո՛ւն ձեզ, Ուինչեստեր.
Հորեղբայր Գլոստեր. Բուկինգեմ ու Յորք,
Վորվիկ, Սոմերսետ և Սոլսբերի.
Ես իմ գոհության խոսքն եմ ուղղում ձեզ.
Որ շուք արժանին հատուցիք այստեղ՝ ի սեր թագուհու:
Դե՛հ. գնա՜նք, փութով անելիքն հոգանք թագադրության:

Գնում են թագավորը, թագուհին և Սեֆոլկը:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ազնիվ տյարք Անգլիո, սյուներ տերության.
Հեմֆրին ուզում է բանալ յուր վիշտը,
Ո՜. ո՛չ ձեր վիշտը և վիշտն հայրենյաց:
Մի՞թե Հենրին չէր, եղբայրն իմ ազնիվ.
Որ ռազմի դաշտում վաստակեց անխնա
Ե՛վ ջահելություն, և՛ խիզախություն. և՛ փող, և՛ զինվոր,
Հաճախ չմնա՞ց նա բաց երկնի տակ

Ձմռվա ցրտին ու տապին խանձող,
Որ նվաճելով Ֆրանսիան՝ դառնար տերն օրինավոր,
Մի՞թե չլարեց Բեդֆորդն ուղեղը, որ ձեռքին պահեր,
Ինչ նվաճել էր իմ Հենրին զենքով,
Մի՞թե դուք չէիք, Սոմերսեթ, քաջ Յորք.
Եվ Սոլսբերի, Բուքինգեմ, Վորվիկ,
Որ Ֆրանսիայում և Նորմանդիայում խոր վերք ստացաք,
Մի՞թե իմ քեռի Բոֆորտը ու ես,
Մեր արքայական խորհրդարանում
Գիշեր ու ցերեկ չէինք քննարկում,
Թե ինչպես պահել ահ ու դողի մեջ ֆրանսիացիներին.
Մի՞թե մեր արքան՝ դեռ անչափահաս. ի հեճուկս թշնամու,
Չթագադրվեց Փարիզ քաղաքում,
Մի՞թե Հենրիի հաղթանակները
Եվ քաջ Բոֆորտի զգոնությունը պետք է մահանան,
Եվ մի՞թե պիտի կորչեն ջանք ու փառք ու սխրանք ռազմի:
Օ՜, տյա՛րք իմ, դաշինքն այս ամոթալի
Եվ ամուսնությունն այս օրհասական
Սև բիծ են դնում ձեր փառքի վրա,
Ջնջում ձեր անունն հուշերի գրքից.
Ձեր խիզախության պատկերը քերում
Եվ այլանդակում հաղթանակների հուշարձանները,
Կարծես չեն եղել աշխարհի վրա:

ԿԱՐԴԻՆԱԼ

Իմ եղբոր որդի. ինչո՞ւ ես այսպես դու կրքոտ խոսում
Եվ ամենայն դեպք պատմում մեկ առ մեկ,
Մերն է Ֆրանսիան. այն դեռ կպահենք:

ԳԼՈՒՍԵՐ

Այո՛. հորեղբայր. մենք կարելույն չափ այն պետք է պահենք.
Բայց այդ չենք կարող: Ավա՜ղ, նորաթուխ մեր դուքս Սաֆոլկը,
Որ դյուրությամբ է մարդկանց հավատում,
Հանձնել է արդեն Մենը և Անժուն թշվառ Ռենեին,
Ում մեծ տիտղոսը չի հաշտվում նիհար իր քսակի հետ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Երդվում եմ հիմա Հիսուսի մահով,
Որ խաչվեց մի օր բոլորիս համար,
Ա՜խ, Նորմանդիայի բանալին էին այս երկրները,
Բայց դու ինչո՞ւ ես արտասվում, Վորվիկ, իմ կտրիճ զավա՛կ:

Ճակատամարտ Տրուաբերիի տակ:



Բաստիլի ամրոցը Փարիզում, XV դար:

ՎԱՐՎԻԿ

Վշտից, որ նրանք կորցրինք անդարձ:
Թե շողա մի հույս, որ նրանք նորից ետ ենք առնելու՝
Սուրս կթափի արյան տաք գետեր, ես չեմ արտասվի:
Մենը և Անժուն ես եմ գրավել:
Այդ քաղաքները իմ բազուկներն են նվաճել արյամբ.
Մի՞թե վերքերի գնով վաստակած այդ քաղաքները
Մենք պետք է հանձնենք խաղաղ խոսքերով:
Mort Dieu![1]

ՅՈՐՔ

Թող դուքս Սեֆոլկը խեղդամահ լինի,
Որ մթագնում է պատերազմասեր այս կղզու փառքը:
Թող ֆրանսիացիք սիրտն իմ ծվատեն՝
Միայն թե ի չիք դառնա դաշինքն այս:
Անգլիայի բոլոր արքաներն ազնիվ ստանում էին
Իրենց կանանց հետ ոսկու մեծ գումար և հարուստ օժիտ,
Մինչդեռ մեր Հենրին իր կայքն է տալիս,
Որն, ավա՜ղ, բնավ օգուտ չի բերում:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, ինչ անպատեհ, չլսված ծաղրանք.
Սեֆոլկը նրան բերելու համար
Ուզում է, անշուշտ, տասնհինգ բաժինք:
Նա՝ լավ կլիներ մնար Ֆրանսիայում,
Այնտեղ էլ քաղցից նվաղեր, քան թե...

ԿԱՐԴԻՆԱԼ

Միլորդ Գլոստեր, չափից ավելի շատ եք տաքանում.
Բոլորն արված է արքայի կամքով:

ԳԼՈՍՏԵՐ

Լորդ Ուինչեստեր, ձեր միտքը գիտեմ.
Ոչ թե խոսքերս են ձեզ վրդովեցնում,
Այլ պարզապես ի՛մ ներկայությունը:
Ոխն է դուրս հորդում: Գոռոզ կարդինալ, տեսնում եմ դեմքիդ
Մոլեգնությունը: Թե մնամ այստեղ երկար ժամանակ,
Մենք պետք է մեր հին վեճը սկսենք:
Ի՛նչ. մնա՜ք բարյավ, ազնիվ իշխաններ, երբ ես չեմ լինի,
Իմ խոսքերն հիշեք՝ շուտով Ֆրանսիան պետք է կորցնենք:

Գնում է:

---

[1] *Նզովում եմ տիրոջ մահով* (ֆրանս.):

ԿԱՐԴԻՆԱԼ

Գնում է ահա մեր խնամակալն անչափ մոլեգնած:
Դուք արդեն գիտեք, որ նա դարձել է երդվյալ թշնամիս:
Օ՜, ո՛չ, ավելին, նա թշնամի է նույնիսկ բոլորիդ.
Ես վախենում եմ, որ բարեկամ չէ նաև արքային:
Խորհե՛ք, իշխաններ, նա մոտ է արյամբ
Եվ գահի ժառանգ կարող է դառնալ.
Թե Հենրին շահեր յուր ամուսնությամբ մի ողջ կայսրություն
Եվ արևմուտքի երկրներն հարուստ,
Դարձյալ Գլոստերը դժգոհ կմնար:
Զգո՛ւյշ, իշխաննե՛ր, չթողնեք նրան ձեր սիրտը դյութի
Շողոմ խոսքերով, եղեք իմաստուն և շրջահայաց:
Ի՞նչ փույթ՝ ամբոխը սիրում է նրան
Ու կոչում. «Հեմֆրի, բարի դուքս Գլոստեր»:
Եվ ծափահարում, գոչում բարձրաձայն.
«Հիսո՛ւս, պահպանի՛ր մեր թագավորին,
Աստված պահպանի մեր բարի դուքսին»:
Ես վախենում եմ, որ կեղծ են, տյարք իմ, խոսքերն այս շողոմ,
Նա վտանգավոր հովանի կլինի:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Պետք չէ Հենրիին արդեն հովանի,
Զի այն տարիքն է բոլորել արքան, երբ ինքը իրեն կարող է իշխել:
Եղբա՛յր Սոմերսեթ, միացիր դու ինձ,
Եվ մենք միասին դուքս Սէֆոլկի հետ
Հեմֆրուն իր բազմից շուռ կտանք շուտով:

ԿԱՐԴԻՆԱԼ

Նման մի մեծ գործ պետք չէ ձգձգել.
Իսկույն կգնամ դուքս Սէֆոլկի մոտ:

Գնում է:

ՍՈՄԵՐՍԵՏ

Բուկինգեմ, թեև գոռոզ է Հեմֆրին,
Փորձանք է նրա դիրքը մեր գլխին,
Բայց պիտի հսկենք մենք կարդինալին,
Զի նա ավելի հանդուգն է ու չար,

Քան թե իշխանները ամբողջ Անգլիայի:
Եթե Գլոստերը պաշտոնանկ լինի՝ կդառնա իսկույն նա խնամակալ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ո՛չ, խնամակալ դու պետք է դառնաս կամ ես, Սոմերսետ,
Հակառակ Հեմֆրու և կարդինալի:

Գնում են Բուկինգեմը և Սոմերսետը:

ՍՈԼՍԲԵՐԻ

183 Գնաց առջևից գոռոզությունը, փառասիրությունն հետևեց նրան:
Քանի դեռ նրանք իրենց բարձրացման
Պարծում են հիմա սաստիկ զբաղված,
Ցավ է, հետևենք մեր տերությանը:
Երբեք չեմ տեսել, որ դուքս Գլոստերն
Իրեն վեր դասեր մի ազնվականից:
Բայց կարդինալը, հաճախ եմ տեսել, ասես թե լինի
Հանդուգն զինվոր, քան եկեղեցու ազնիվ ծառայող.
Հպարտ է, գոռոզ, կարծես բոլորի տերն է ինքնիշխան:
Անզգամի պես հայհոյել գիտի ու վիրավորել,
Նման չլինի երկրի ղեկավար:
Վորվի՛կ, իմ որդի՛, ծեր տարիներիս քա՛ղցր սփոփանք,
Քո արարքները, խոհեմությունը. անկեղծությունը
Քեզ ժողովրդի սիրելին դարձրին,
Քեզ հետ կմրցի միայն դուքս Հեմֆրին:
197 Յարք, սխրանքներդ Իռլանդիայում,
Ուր հաստատեցիր դու կարգ ու կանոն,
Հաղթանակներդ Ֆրանսիայի սրտում,
Ուր մեր տերության կուսակալն էիր,
Ներշնչեցին քո հանդեպ հարգանք ու խոնարհություն:
Լինենք միաբան՝ վասն հայրենյաց,
Ահա՛ թե ինչով կարող ենք սանձել
Գոռոզությունը Ուինչեստերի ու դուքս Սեֆոլկի.
Փառամոլությունը Բուկինգեմի ու Սոմերսետի:
Որքան կարող ենք, պետք է դուքս Հեմֆրուն միայն աջակցենք,
Զի պաշտպանում է շահերը երկրի:

ՎՈՐՎԻԿ

Ուստի, թող աստված օգնի Վորվիկին,
Քանզի սիրում է երկիրն հայրենի
Եվ ժողովրդի շահն է պաշտպանում:

ՅՈՐՔ

210 *(Առանձին)* Նույնն է Յորքն ասում, զի ավելի մեծ նպատակ ունի:

ՍՈԼՍԲԵՐԻ

Դե՛հ, անհապաղ, պետք է քննել հարցը գլխավոր:

ՎՈՐՎԻԿ

Գլխավո՛ր հարցը: Օ՜, Մենը, հայր իմ, կորցրել ենք, ավա՜ղ,
Որ դժվարությամբ Վորվիկը առավ,
Եվ պիտի պահեր, քանի դեռ շունչ կար նրա բերանում:
Գլխավոր հարցի մասին ես խորհում, Մենն է կարևոր:
Պետք է ետ առնեմ, հակառակ դեպքում, հա՜յր իմ, կմեռնեմ:

Գնում են Վորվիկն ու Սոլսբերին:

ՅՈՐՔ

Թշնամուն տրվեց Մենը և Անժուն.
Փարիզը կորցրինք, և Նորմանդիայի
Դիրքն է անկայուն նրանց կորստով:
Սեֆոլկը կնքեց հաշտության պայման,
Համաձայնել են իշխաններն արդեն, և Հենրին երկու դքսություններ
Հաճույքով փոխեց ինչ-որ մի դքսի սիրուն դստեր հետ:
Չեմ կարող նրանց ես մեղադրել,
Միևնույնը չէ՞ այդ մարդկանց համար՝
Չէ՞ որ տալիս են քոնը ուրիշին:
Ծովահենները չեն դողում իրենց ավարի վրա,
Առնում են նրանք փողով բարեկամ ու տալիս բոզին
Եվ իշխանի պես նստում խնջույքի՝ մինչև որ վատնեն
Կողոպուտն ամբողջ, իսկ թշվառ տերը կորցրած ապրանքի,
Լալիս է անօգ, ձեռքերը ջարդում և մի կողմ քաշված՝
Գլուխն օրորում, մինչև որ տանեն իր բարիքները,
Եվ նա պատրաստ է սովամահ լինել,
Բայց չի հանդգնում ձեռք տալ իր գույքին:
Այսպես էլ Յորքը, լեզուն կծելով, պետք է լուռ նստի՝
Մինչև որ ծախեն իր տիրույթները:
Ո՛չ: Թվում է ինձ՝ Ֆրանսիան, Իռլանդիան ու Բրիտանիան
Այնպես են ձուլված միս ու արյունիս,
237 Ինչպես մոխրացած ոստն Ալթեայի
Կալիդոն երկրի իշխանի սրտին:
Մենը և Անժուն տվին թշնամուն,
Այդ օրհասական լուրն է ինձ այրում,
Քանզի իմ միակ հույսն է Ֆրանսիան.

Հույսն իմ՝ ինչպես և բարեբեր Անգլիան:
Եվ կգա օրը, երբ կպահանջի Յորքն իրավունքն իր:
213 Ահա՛ թե ինչու ես պիտի կանգնեմ Նևիլների մոտ
Եվ սերս ցույց տամ հպարտ դուքս Հեմֆրուն:
Բայց ես կորսամ պահն հարմարավոր և կպահանջեմ
Անգլիայի թագը, քանզի ոսկեղեն նպատակն այս է:
Ո՛չ, չի կողոպտի իրավունքներս Լանկաստերն հպարտ,
Չի՛ բռնի մանկան ձեռքով գավազան,
Եվ չի զարդարի ճակատը թագով,
Ում աղոթասեր բնույթը հոգու պատշաճ չէ թագին:
Համբերի՛, դու Յորք, կգա ժամը, անշու՛շտ.
Երբ ուրիշները քնած կլինեն, դու հսկիր արթուն,
Զգտիր թափանցել երկիր իշխելու գաղտնիքների մեջ:
Սպասի՛ր: Հենրին մինչ իր կնոջից սիրո բերկրանքի հագուրդը կառնի.—
Այդ ամուսնությունն ավա՜ղ, թանկ նստեց տերության վրա.—
Մինչ Գլոստերը իշխանների հետ կսկսի զժտվել,
Դու բարձրացրու վարդը կաթնաթույր,
Թող նրա բույրով օդը արբենա:
Դրոշիս վրա սպիտակ է փողփողա զինանշանս,
Երբ կռվի մտնեմ Լանկաստերի զոռոզ տոհմի հետ,
Եվ ես կստիպեմ, որ թագն ինձ զիջի կամա ակամա,
Քանզի գրքային օրենքներով է Անգլիան կործանում:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նույն վայրը: Դահլիճ դուքս Գլոստերի պալատում:

Մտնում են դուքս Հեմֆրին և նրա կինը՝ Էլեանորը:

ԴՔՍՈՒՀԻ

Ինչո՞ւ է տերն իմ այսպես խոնարհվել, ասես թե լինի մի հասուն ցորեն՝
Գլուխը թեքել մայր Ցերերայի առատ շնորհից.
Ինչո՞ւ է մեծ դուքսն հոնքերը կիտել,
Կարծես հերքում է բարիքն աշխարհի,
Ինչո՞ւ է տերն իմ աչքերը հառել չարաշուք գետնին,
Կարծես տեսնում է իր մռայլության պատճառը այնտեղ:
Ի՞նչ ես դու տեսնում: Գուցե Հենրիի՞ թագը ոսկեձույլ՝
Զարդարված անթիվ փառքով աշխարհի:

Եթե այդպես է, դու ձգտի՛ր նրան, գետնաքարշ սողա՛,
Սողա, մինչև որ թագը զարդարի քո ճակատն նկարս:
Տարածի՛ր ձեռքդ, հասնի՛ր, տեր իմ, այդ վսեմ ոսկին,
Բայց մի՞թե ձեռքդ կարճ է, չի հասնում,
Այն դեպքում ես իմ ձեռքը կերկարեմ:
Եթե երկուսով մենք բարձրացնենք թագը ոսկեձույլ,
Գիտցիր, երկուսով մեր գլուխները կամբառնանք երկինք,
Եվ չենք խոնարհի մեր հայացքն երբեք
Եվ գեթ մի ակնարկ չենք նետի գետնին:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, Նել, քա՜ղցր Նել, թե սիրում ես ինձ,
Վանի՛ր փառասեր մտքերից որդը:
Ա՜խ, թե ուզենամ չարություն գործել
Իմ թագավորի և եղբորորդու՝ ազնիվ ու պարկեշտ Հենրու նկատմամբ.
Թող վերջին շունչն իմ այստեղ ավարտեմ, անցվոր աշխարհում:
Ա՜խ, այս գիշերվա խռովյալ երազն ինձ շատ է տանջում:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ երազ, ասա՛, ես կհատուցեմ
Իմ առավոտյան քաղցր երազով:

ԳԼՈՍՏԵՐ

Ինձ թվաց, թե մեկն այս գավազանը՝ սիմվոլն իմ դիրքի,
Երկու կես արեց, բայց նրա դեմքը ես պարզ չեմ հիշում,
Կարծես թե լիներ լորդ կարդինալը:
Կոտրած մասերի երկու ծայրերին
Տեսա Սեֆոլկի ու Սոմերսետի գլուխն արյունոտ:
Սա իմ երազն էր, աստված կիմանա՝ ինչ է գուշակում:

ԴՔՍՈՒՀԻ

Տեր իմ, փուչ բան է, սա ցույց է տալիս,
Թե ով կփորձի ծառի ճյուղ ջարդել Գլոստերի այգում,
Նա կհատուցի միայն իր գլխով:
Բայց լսիր, Հեմֆրի, սիրելի իմ դուքս.
Երազում տեսա, որ արքայական
Գահին եմ բազմել Վեստմինստերի շքեղ տաճարում,
Ուր արքաները, թագուհիներն են թագով պսակվում,
Ուր Հենրին տիկին Մարգարիտի հետ խոնարհվում է ինձ,
Եվ պսակում է ճակատս թագով:

ԳԼՈՍՏԵՐ

Պետք է նախատեմ քեզ, իմ Էլեանոր,
Փառասեր դու կին, անխի՜ղճ Էլեանոր,
Մի՞թե տերության երկրորդ կինը չե՞ս,
Կինը հովանու, որ սիրում է քեզ,
Մի՞թե աշխարհի հաճույքներն ամեն ծառաներդ չեն,
Որ վեր են քո բյուր ցանկություններից,
Բայց նորի՞ց դավ ես դու ուզում հյուսել,
Որ քո ամուսնուն և քեզ գլորես
Փառքի գագաթից անդունդն ամոթի:
Հեռացիր, ոչինչ չեմ ուզում լսել:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ, ի՞նչ, սիրելի՞ս, բարկանո՞ւմ ես դու քո կնոջ վրա
Լոկ այն պատճառով, որ նա քեզ պատմեց իր մեկ երազը:
Լա՛վ, հաջորդ անգամ ես լուռ կմնամ, որ չկշտամբես:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛չ, մի՛ վշտանա, բարկությունս անցավ:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Լորդ խնամակալ, նորին մեծության հաճելի է խիստ,
Որ պատրաստ լինեք մեկնել Սուրբ Օլբենս,
Ուր բազեներով մեր բարի արքան իր բազուհու հետ որսի է գնում:

ԳԼՈՍՏԵՐ

Ես հիմա կգամ: Դեհ, գնանք Նելլի,
Չէ որ ուզում ես...

ԴՔՍՈՒՀԻ

Այո՛, սիրելիս, քեզ կհետևեմ:

Գնում են Գլոստերն ու սուրհանդակը:

Պետք է հետևեմ: Չեմ կարող հիմա քեզ առաջնորդել,
Քանի դեռ Հեմֆրին ունի այդպիսի մտածելակերպ:
Թե ես լինեի տղամարդ, մի դուքս կամ թե արյունով արքային շատ մոտ,
Այնժամ այս տաղտուկ և ինձ խանգարող արգելքներն ամբողջ
Ես կփշրեի ու կհարթեի իմ ճանապարհը նրանց անգլուխ ուսի վրայով:
Բայց կին լինելով՝ ես պետք է դարձյալ

Փութամ խաղալու ճակատագրի շքեղ հանդեսում ստանձնած դերս:
Որտե՞ղ ես դու, Ջոն: Օ՜, մի՛ վախենա,
Մենք միայնակ ենք, ոչ մի մարդ չկա:

Մտնում է Ջոն Յումը

ՅՈՒՄ

Ձերդ վեհության Հիսուսն օգնական:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ ասացիր դու. վեհությո՜ւն, ա՜խ՝ ոչ:
Ծառայդ իմ, ասա՝ ձերդ մեծություն:

ՅՈՒՄ

Բայց աստծո բարի ողորմածությամբ, Յումի խորհրդով
Ձերդ մեծության տիտղոսն անկասկած պետք է բազմանա:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ ես ասում դու: Մի՞թե խորամանկ
Կախարդ Մարջերին, վհուկ Ռոջերը
Խոստացել են քեզ՝ ինձ նեցուկ լինել:

ՅՈՒՄ

Ձերդ մեծություն, նրանք խոստացան՝
Մի ոգի կանչել երկրի ընդերքից,
Որը պատրաստ է բոլոր հարցերիդ պատասխան տալու:

ԴՔՍՈՒՀԻ

Բա՛վ է: Կխորհենք այս հարցերի շուրջ:
Երբ Սուրբ Օլբենսից մենք վերադառնանք,
Գլուխ կբերենք գործն ամբողջովին:
Ահա՛ քո վարձը, վերցրո՛ւ, Ջոն Յում և ուրախացի՛ր
Ընկերներիդ հետ այս խիստ կարևոր գործի առիթով:

Գնում է:

ՅՈՒՄ

Ջոն Յումը պետք է դքսուհու ոսկով լավ ուրախանա,
Այդպես էլ կանեմ: Բայց զգո՛ւյշ դո՛ւ, Յում,
Շուրթերդ կնքիր,
Գործն է պահանջում համր ու անշշունչ գաղտնապահություն:
Հպարտ դքսուհին ոսկի է տալիս, որ ես վհուկին բերեմ իրեն մոտ,

Պետք է վերցնել՝ թեկուզ տալիս է ոսկին սատանան:
Ոսկի ճանճերը թռչում են ինձ մոտ և ուրիշ ափից.
Ես չեմ հանդգնում ասել, թե ոսկին գրպանս են դնում
Կարդինալն հարուստ և դուքս Սեֆոլկը՝ հնարամիտ ու մեծ:
Բայց դա այդպես է: Ճշմարիտն ասած:
Լավ ճանաչելով հպարտ դքսուհու փառատենչ ոգին,
Վարձել են ինձ, որ դքսուհու դեմ ես դավեր լարեմ
Ու խարդավանքի մասին շշուկով ականջը լցնեմ:
Ասում են՝ կյանքում ճարպիկ խաբեբան
Երբեք չի զգում միջնորդի կարիք.
Բայց ես Սեֆոլկի ու կարդինալի միջնորդն եմ դարձել:
Յո՛ւմ, զգո՛ւյշ եղիր: Դու հանդգնում ես
Նրանց երկուսին խաբեբա կոչել:
Այո՛, այդպես է գործի վիճակը: Բայց վախենում եմ.
Որ ես դքսուհուն խաբեբայությամբ կործանեմ ընդմիշտ
Եվ նրա հետ էլ՝ հռչակը դուքսի:
Ինչ փույթ. ես պետք է ստանամ ոսկի:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նույն վայրը: Սենյակ պալատում:

Մտնում են Պիտերը և խնդրարկուները:

Ա ԽՆԴՐԱՐԿՈՒ

Ավելի մոտիկ կանգնենք, պարոններ: Լորդ խնամակալը այս ճանապարհով անցնելու է հիմա, և մենք կարող ենք հանձնել մեր խնդրագրերը:

Բ ԽՆԴՐԱՐԿՈՒ

Իհարկե, աստված նրան պահի: Նա բարի մարդ է: Հիսո՛ւս, օրհնիր նրան:

ՊԻՏԵՐ

Կարծես գալիս է, հետն էլ՝ թագուհին: Ես, առաջինը ես եմ մոտենում:

Մտնում են Սեֆոլկն ու Թագուհին:

Բ ԽՆԴՐԱՐԿՈՒ

Ետ դարձիր, տխմա՛ր, սա դուքս Սեֆոլկն է և ոչ թե պարոն խնամակալը:

ՍԵՖՈԼԿ

Ի՞նչ ես կամենում, բարեկա՛մ, որևէ բա՞ն ես ինձանից խնդրում:

Ա. ԽՆԴՐԱՐԿՈՒ

Ներեցեք, տեր իմ, ձեզ լորդ խնամակալի տեղը դրեցի:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Կարդում է) «Լորդ խնամակալին»: Դու դիմում ես Նորին մեծությա՞նը: Ինձ տուր, տեսնեմ: Ի՞նչ ես խնդրում:

Ա. ԽՆԴՐԱՐԿՈՒ

Ձերդ մեծության թույլտվությամբ՝ ես բողոքում եմ Ջոն Գուդմենի՝ լորդ կարդինալի ծառայի դեմ, որովհետև նա խլել է իմ տունը, իմ հողը, իմ կնոջը և ամբողջ ունեցվածքս:

ՍԵՖՈԼԿ

Նույնիսկ կնո՞ջդ: Սա իսկապես անիրավություն է: Իսկ դու ի՞նչ ես ուզում: Տեսնե՛մ: *(Կարդում է)* «Ես բողոքում եմ դուքս Սեֆոլկի դեմ,
16 որովհետև նա ցանկապատել է Մելֆորդի արոտավայրերը»: Սա ի՞նչ է նշանակում, սրիկա՛:

Բ ԽՆԴՐԱՐԿՈՒ

Ես, պարոն, մեր ամբողջ քաղաքի անունից լոկ մի խեղճ խնդրարկու եմ:

ՊԻՏԵՐ

(Խնդրագիրը տալով). Բողոքս իմ տիրոջ՝ Թոմաս Հորների դեմ է: Իբրև նա ասել է, թե դուքս Յորքը գահի օրինավոր ժառանգն է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ: Ի՞նչ ես ասում: Դուքս Յո՞րքն է հայտարարել, թե ինքը գահի օրինավոր ժառանգն է:

ՊԻՏԵՐ

Ո՞վ, ի՞մ տերը: Ո՛չ, ազնիվ խոսք, ո՛չ նա: Իմ տերն ասում է, թե Յորքն է ասել, որ թագավորը գահն է հափշտակել:

ՍԵՖՈԼԿ

Հե՜յ, ո՞վ կա այստեղ: *(Ներս է մտնում մի ծառա)* Տարե՛ք այս մարդուն և ոստիկան ուղարկեցեք նրա տիրոջ ետևից: Մենք կլսենք ձեր գործը թագավորի ներկայությամբ:

Գնում են ծառան ու Պիտերը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դո՛ւք, որ փնտրում եք Նորին մեծության

Զույգ թևերի տակ խնամակալություն,
Գրեք վերստին ձեր պահանջները և դիմեք նրան:

Պատռում է նրանց խնդրագիրը:

Դո՛ւրս, անպիտաններ: Սեֆոլկ, վռնդե՛ք նրանց այստեղից:

Գնում են խնդրարկուները:

ԲՈԼՈՐԸ

Ի՞նչ արած, գնանք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ասա՛ ինձ, Սեֆոլկ, այսպե՞ս է կարգը,
Այսպե՞ս է արդյոք ծեսը արքունի.
Մի՞թե այսպես են այս կղզին վարում,
Այսպե՞ս է իշխում արքան Ալբիոնի:
Մի՞թե երեխա կմնա Հենրին
Եվ կիշխե նրան Հեմֆրին դժնադեմ:
Մի՞թե թագուհու տիտղոսն եմ կրում,
Որ դառնամ դուքսի հպատակն հլու:
Քեզ եմ ասում, Պոլ, երբ Տուր քաղաքում
Իմ սիրո պատվին՝ կոտրեցիր նիզակ,
Եվ Ֆրանսիո կանանց սիրտը գողացար,
Ես կարծում էի՝ թագավոր Հենրին քեզ նման քաջ է,
Սիրալիր ու կիրթ քո հասակն ունի:
Բայց, ավա՜ղ, նրա միտքն ամբողջովին սրբերն են առել,
Ճշնչում է նա «Ave-Maria», համրիչը ձեռքից չի գցում երբեք,
Նրա հեցուկն են առաքյալներն ու մարգարեները,
Նրա զենքերն են՝ դասերը սրբոց,
Նիզակախաղը՝ ուսումն երազած,
Եվ սերն է սրբոց պատկերքն արույրե:
Ա՜խ, ես կուզեի՝ կարդինալների ժողովն իմաստուն
Նրան պապ ընտրեր ու տաներ Հռոմ.
Որպեսզի եռյակ խույրով պսակվեր:
Սա է պատշաճում այս մոլեռանդին:

ՍԵՖՈԼԿ

Տիկի՛ն, համբերե՛ք: Ես պատճառ դարձա,
Որ Ֆրանսիայից դուք եկաք Անգլիա,
Ես էլ կջանամ, որ դուք գոհ լինեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Բացի ամբարիշտ խնամակալից այստեղ կան մարդիկ՝ Բոֆորտը գոռոզ,
Դուքս Սոմերսետը. դժկամակ Յորքը ու Բուկինգեմը,
Որոնցից նույնիսկ ամենափոքրը
Ավելի ուժեղ դիրք ունի երկրում, քան ինքը արքան:

ՍԵՖՈԼԿ

Սրանցից նույնիսկ ամենաուժեղն Անգլիայում չունի
Նեվիլների պես մեծ իշխանություն:
Չէ՞ որ Վորվիկը և Սոլսբերին դուքս չեն հասարակ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այս իշխաններից ոչ ոք ինձ այնպես
Չի նեղում, որչափ Հեմֆրու կինն հպարտ:
Նա սիրում տիկնանց շքախմբերով այնպես է սահում սրահից սրահ,
Ասես թե լինի երկրի տիրուհին, ոչ թե դքսուհի.
Իսկ արքունիքում օտարերկրացիք կարծում են, թե նա , նա՛ է թագուհին:
Այդ կինը դքսի ողջ եկամտով իր անձն է պճնում,
Մեր աղքատությունն ասես թե ծաղրում,
Մի՞թե չեմ ապրի այնքան ժամանակ, մինչև որ տեսնեմ վրեժս նրանից:
Չէ՞ որ այդ սարը, նողկալի կինը
Իր քծնողների զարշ միջավայրում պարծեցել է խիստ,
Թե իր հասարակ զգեստի քղանցքն ավելի արժե,
Քան թե հայրիկիս կալվածքներն ամբողջ.
Քանի դեռ Սեֆոլկն երկու դքսություն չէր տվել նրա աղջկա համար·

ՍԵՖՈԼԿ

Տիրուհի՛. ինքս եմ թակարդը լարել,
Եվ հրապուրիչ թռչնոց մի երամ դրել եմ այնտեղ.
Որ երբ նա լսի դայլայլը նրանց,
Չկարողանա տեղից բարձրանալ՝ ձեզ վշտացնի:
Մոռացե՛ք նրան, լսե՛ք. տիրուհի,
Ես հանդգնում եմ ձեզ տալ մի խորհուրդ.
Թեև Բոֆորտի աչքի լույսը չենք,
Բայց պետք է նրան և իշխաններին իսկույն միանանք,
Մինչև որ Հեմֆրին թագընկեց լինի:
Գալով դուքս Յորքին, ապա հազիվ թե
Վերջին գանգատից նա մի բան շահի:

Այսպես կչնչենք բոլորին հերթով,
Դեկը տերության ձեր ձեռքը կառնեք:

Շեփորներ: Մտնում են թագավորը, դուքս Գլոստերը, կարդինալ Բոֆորտը, Բուկինգեմը, Յորքը, Սոմերսետը. Սոլսբերին. Վորվիկը և դքսուհի Գլոստերը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ազնիվ իշխաններ, ես Սոմերսետի ու Յորքի միջև
Չեմ դնում երբեք ոչ մի խտրություն:

ՅՈՐՔ

Թե Ֆրանսիայում Յորքի գործերը վատ են ընթացել՝
Թող հրաժարվի իշխանությունից:

ՍՈՄԵՐՍԵՏ

Երբ Սոմերսետն հարմար չէ տեղին,
Ապա թող Յորքը կուսակալ լինի, զիջում եմ նրան.

ՎՈՐՎԻԿ

Դուք արժանի՞ եք, թե՞ ոչ, այդ մասին
Պետք չէ վիճարկել: Յորքն է արժանի:

ԿԱՐԴԻՆԱԼ

Փառասեր Վորվիկ, թող մեծը խոսի:

ՎՈՐՎԻԿ

Կոչում՝ կարդինալն ինձանից մեծ չէ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բայց ներկաները շատ մեծ են քեզնից:

ՎՈՐՎԻԿ

Վորվիկը կապրի բոլորից էլ շատ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Հանգիստ, զավա՛կս: Բուկինգեմ, ցույց տո՛ւր որևէ մի փաստ,
Որ Սոմերսետին մենք բարձր ենք դասում մեր ազնիվ Յորքից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Զի թագավորն է այդպես կամենում:

ԳԼՈՍՏԵՐ

Տիրուհի՛, արքան մեծ է բավական
Եվ նա կարող է իր կարծիքն ասել: Սա կնոջ գործ չէ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Երբ նա արդեն այր է մի հասուն,
Այս ձեզ նման խնամակալի կարիքը չունի:

ԳԼՈՍՏՐ

Ես հովանին եմ նրա տերության,
Երբ նա ուզի, ձեր մեծություն, տեղս կզիջեմ:

ՍԵՖՈԼԿ

Թող տեղդ, հետն էլ հանդգնությունդ:
Այն օրից, ինչ դու դարձար թագավոր
(Ո՞վ էր, ո՞ր արքան, եթե ոչ Հեմֆրին),
Երկիրն օրեցօր դու տարար անկման:
Մեզ ծովից այն կողմ դոֆինն էր հաղթում.
Իսկ մեր տերության իշխաններն ամեն
Ձեր մեծության ստրուկներն էին:

ԿԱՐԴԻՆԱԼ

Դու ժողովրդին խիստ թալանեցիր, և եկեղեցու
Գանձատունն հարուստ սատափիկ նիհարեց քո շորթումներից:

ՍՈՄԵՐՍԵՏ

Քո կնոջ զարդերն ու պալատներդ
Վնաս բերեցին մեր գանձարանին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Քո դաժանությունն այնպես էր պատժում հանցավորներին,
Որ օրենքն անգամ նսեմանում էր.
Այդ քեզ են հանձնում ողորմածության արդար օրենքի:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դու Ֆրանսիայում պաշտոն ես ծախել և քաղաքների առևտուր
Երբ հաստատվի այդ մեծ հանցանքը՝
Դու առանց գլխի պետք է ցատկոտես:

Գնում է Գլոստերը: Թագուհին գցում է իր հովհարը:

Տո՛ւր իմ հովհարը: Չե՞ս ուզում, բոզնի՞կ:

Ապտակում է դքսուհուն:

Ա՜խ, այդ դո՞ւք էիք. ների՛ք, դքսուհի:

ԴՔՍՈՒՀԻ

Այո՛, ես ինքս, գոռոզ ֆրանսուհի:
Թե ինձ հաջողվեր քո գեղեցկության ընդհուպ մոտենալ իմ եղունգներով,
139 Ապա՝ քո դեմքին կկնքեի տասը պատվիրանները:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարի հորաքույր, դուք հանգստացեք. նա սխալ վարվեց:

ԴՔՍՈՒՀԻ

Ո՞, սխալ վարվեց: Ողորմած արքա, պետք է սթափվել.
Ձեզ կքարորի և ձեզ կօրորի երեխայի պես:
Ա՜խ, թեև այստեղ տերը գլխավոր չի հագնում տաբատ,
Բայց Էլեանորը կտանի իր վրեժն ապտակի համար:

Գնում է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Կարդինալ, պետք է նրան հետևեմ.
Տեսնեմ, թե Հեմֆրին ինչ է անելու.
Այնպես նա խոցվեց, որ այժմ նրա կատաղությունը
Կարիք չի զգում ոչ մի խթանի.
Նա քառասմբակ վարգում է դեպի իր կործանումը:

Գնում է:

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Այժմ, իշխաններ, երբ իմ բարկությունն անց կացավ լրիվ.
Քանզի միայնակ ես զբոսնեցի բակում պալատի,
Եկա, որ խոսենք պետական գործից:
Գալով ձեր քինոտ և խիստ ստահող ամբաստանանքին,
Ապա ցույց տվեք և ես կենթարկվեմ օրենքին, արքա՛ իմ:
Թող աստված վարվի հոգուս հետ այնպես,
Ինչպես սիրում եմ իմ թագավորին ու իմ երկիրը:
Բայց դառնանք գործին, որ ձեռք ենք զարնել.
Ասում եմ, տեր իմ, բոլոր լորդերից Յորքն է միակը,
Որ Ֆրանսիայում կարող է լինել ձեր կուսակալը:

ՍԵՖՈԼԿ

Նախքան ընտրությունն՝ ինձ թողեք, որ ես
Ցույց տամ կարևոր մի քանի պատճառ,
Թե ինչու Յորքը բնավ հարմար չէ այդ տեղի համար:

ՅՈՐՔ

Կասեմ, թե ինչու հարմար չեմ, Սեֆոլկ.
Նախ՝ որ չեմ քծնում հպարտությանդ,
Ապա՝ եթե ինձ այդ պաշտոնը տան՝
Ինձ լորդ Սոմերսետն այնտեղ կպահի
Առանց պարենի, առանց դրամի,
Մինչև որ դոֆինն հաղթի այդ երկրում:
Ես վերջին անգամ նրա երգի տակ պարեցի այնքան,
Մինչև Փարիզը ընկավ հյուծվելով:

ՎՈՐՎԻԿ

Կարող եմ ասել, ոչ մի դավաճան
Նման նողկալի արարք չի գործել իր երկրի հանդեպ:

ՍԵՖՈԼԿ

Լռի՛ր, կամակոր ու համառ Վորվիկ:

ՎՈՐՎԻԿ

Ձաղրելի՛ պատկեր, ստիպում ես ինձ լռել քո առաջ:

Մտնում են Սեֆոլկի ծառաները և բերում են Հորներին ու Պիտերին:

ՍԵՖՈԼԿ

Ահա այն մարդը՝ դավաճանության ամբաստանությամբ,
Տա աստված, որ դուքս Յորքն արդարանա:

ՅՈՐՔ

Բայց կա՞ մեկն այստեղ՝ ինձ մեղադրող:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ ես ակնարկում, Սեֆոլկ, ասա ինձ, ովքե՞ր են սրանք:

ՍԵՖՈԼԿ

Ազնիվ վեհապետ, ձեր թույլտվությամբ, ահա այն մարդը,
Որ իր տիրոջը ամբաստանում է որպես դավաճան.
Ահա՛ և նրա բառերը բոլոր. Յորքն օրինավոր
Ժառանգն է գահի, իսկ դուք՝ թագավոր, բաց հափշտակող:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ով մա՛րդ, ասե՞լ ես դու այդ բառերը:



Փարիզը XV դարում. Բաստիլը ըստ Ֆ. Հոֆբաուերի:



Ռազմի տեսարաններ, XV դար:

ՀՈՐՆԵՐ

Ներեցեք, ձերդ ողորմածություն, ես երբեք չեմ ասել ու չեմ մտածել նման որևէ բան: Աստված է վկա, որ այս սրիկան ինձ զրպարտում է:

ՊԻՏԵՐ

(Ցույց տալով իր մատները) Երդվում եմ, իշխաններ, այս տասը ոսկորով, որ նա է ինձ ասել մի գիշեր, երբ ձեղնահարկում մաքրում էինք դուքս Յորքի զենքերը:

ՅՈՐՔ

Ստոր աղբանո՛ց, կեղտոտ սրիկա,
Այս խոսքիդ համար պետք է հատուցես միայն քո գլխով:
Ձերդ մեծություն, աղերսում եմ ձեզ
Նրան օրենքի խստությամբ պատժել:

ՀՈՐՆԵՐ

Ավա՜ղ, տեր իմ, թող ինձ կախեն, եթե երբևէ ես եմ ասել այս բառերը: Ինձ մեղադրողն իմ ենթավարպետն է: Օրերս, երբ նրան իր մեղքի համար պատժեցի, նա երդվեց, որ ինձ հետ հաշիվ կմաքրի: Այդ կարող են վկայել առողջախոս մարդիկ, ուստի, ձերդ վեհությանը պաղատում եմ, որ չկորցնեք մի ազնիվ մարդու՝ մի սրիկայի ամբաստանությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հորեղբայր, օրենքն ի՞նչ է պահանջում նման դեպքերում:

ԳԼՈՍՏԵՐ

Անավասիկ, տեր իմ, վճիռն իմ արդար.
Թող Սոմերսեթը լինի կուսակալ ողջ Ֆրանսիայում,
Զի կասկածում եք դուքս Յորքի վրա:
Գալով այս մարդկանց՝ սահմանեք մի օր
Եվ հարմար մի տեղ մենամարտելու,
Որովհետև տերն ապացույց ունի, որ ոխակալ է ծառան իր հանդեպ.
Այսպես է օրենքն ու վճիռն Հեմֆրու:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թող այսպես լինի: Իշխան Սոմերսետ,
Ձեզ հաստատում ենք որպես կուսակալ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ես խոնարհաբար շնորհակալ եմ, ձերդ մեծություն:

ՀՈՐՆԵՐ

Ես ընդունում եմ մարտն հոժարությամբ:

ՊԻՏԵՐ

Ավա՜ղ, տեր իմ, չեմ կարող կռվել: Ի սեր աստծո, ինձ զբաղեք:
Մարդկային ոխը խոտտակում է ինձ: Օ՛, աստվա՛ծ, ինձ խնայի՛ր:
Ես չեմ կարող նույնիսկ մի հարված հասցնել: Օ՛, աստվա՛ծ, իմ սիրտը...

ԳԼՈՍՏԵՐ

Սրիկա՛, պետք է դու մենամարտես
Կամ թե կախաղան շուտով բարձրանաս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տարեք նրանց բանտ: Թող մենամարտեն
Հաջորդ ամսվա հիշտ վերջին օրը:
Գնա՛նք, Սոմերսետ, քեզ պետք է նամփենք:

Շեփորներ: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Նույն վայրը: Գլոստերի պալատի այգին:

Մտնում են կախարդ Մարջերի Ջորդենը, Յումը, Սաութվելը և Բոլինբրոկը:

ՅՈՒՄ

Եկե՛ք, սիրելինե՛րս, ասում եմ ձեզ, որ դքսուհին ձեր խոստումի կատարմանն է սպասում:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

Պարոն Յում, պատրաստ ենք: Դքսուհին արդյոք ուզո՞ւմ է դիտել մեր ոգեհարցումը:

ՅՈՒՄ

Իհարկե: Այլ կերպ՝ ինչպես կլինի: Վստահեք նրա քաջությանը:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

Լսել եմ, որ այդ կինը աննկուն ոգի ունի: Բայց հարմար է, որ դուք, պարոն Յում, կանգնեք նրա գլխավերը, քանի դեռ մենք զբաղված կլինենք ներքևում: Եվ այսպես, գնացեք, տեր ընդ ձեզ, մեզ թողեք մենակ *(Գնում է Յումը)*: Մայրիկ Ջորդեն, պառկիր երեսդ գետինն ի վար, իսկ դու, Ջոն Սաութվել, սկսիր կարդալ: Դե՛հ, գործի անցնենք:

Վերը հայտնվում է դքսուհին Յումի ուղեկցությամբ:

ԴՔՍՈՒՀԻ

Շատ լավ, պարոննե՛ր: Ձեզ բարի գալուստ:
Ի՛ գործ: Երկարը տաք-տաք են ծեծում:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

Բարի տիրուհի՛, համբերե՛ք մի պահ, վհուկներն իրենց ճիշտ ժամը գիտեն:
Սևաքույր գիշեր, գիշերվա անբառ խորունկ լռություն,
Երբ հրդեհվում էր ամբողջ Տրոյան,
Երբ որ բվերն են կանչում ողբաձայն, երբ որ շներն են ոռնում անդադար,
Երբ ոգիներն են թափառում անտես,
Եվ ուրվականներն ելնում են իրենց գերեզմաններից,
Այդ ժամանակն է ամենահարմար այն ազնիվ գործի, որ ձեռնարկում ենք:
Տիրուհի, նստե՛ք ու մի՛ վախեցեք: Ում ամրացնում ենք,
Նրան էլ կառնենք մի կախարդական շրջանակի մեջ:

Կատարում են կախարդական արարողությունը և գծում մի շրջան:
Բոլինբրոկը կամ Սաութվելը կարդում են «Conjuro te»[1] և այլն:
Ահավոր որոտ ու կայծակ: Հայտնվում է ոգին:

ՈԳԻ

Adsum[2]:

ՋՈՐՋԵՆ

Լսի՛ր, ով Ասմաթ:
Հանուն աստծո ի հավիտենից, ում իշխանության
Եվ անվան առջև սասանում ես դու, պատասխանի՛ր ինձ.
Չի չես գնա դու, մինչև չխոսես:

ՈԳԻ

Հարց տուր՝ ինչ կուզես, միայն թե քեզնից արագ ազատվեմ:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

(Կարդալով հարցը թղթից) «Ամենից առաջ կուզեմ իմանալ՝
Ի՞նչ է սպասում մեր թագավորին»:

ՈԳԻ

Դուքսն ապրում է դեռ, որ թագավորին գահընկեց անի.
Բայց նա շատ կապրի և կմահանա բռնադատ մահով:

Երբ ոգին խոսում է, Սաութվելը գրում է պատասխանները:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

«Ի՞նչ է վիճակված Սեֆոլկին արդյոք»:

ՈԳԻ

Ջրից կմեռնի և ջուրն էլ նրա վերջը կդառնա:

---

[1] *Աղերսում եմ քեզ* (լատ.):
[2] *Ես այստեղ եմ* (լատ.):

ԲՈԼԻՆԲՐՈԿ

«Ի՞նչ է սպասում դուքս Սոմերսետին»:

ՈԳԻ

Թող հավերժ խույս տա նա դղյակներից:
Ավազուտներում կայրի ապահով,
Քան այն վայրերում, ուր դղյակներն են բարձրադիր կանգնած:
Դե՛հ, վերջացրո՛ւ, արդեն չեմ կարող, ժամն է գնալու:

ԲՈԼԻՆԲՐՈԿ

Իջի՛ր ի խավար և լիճն հրավառ:
Գնա՛, չար ոգի:

Որոտ ու կայծակ: Անհետանում է ոգին:
Հանկարծ զինյալ պահապանների ուղեկցությամբ մտնում են
դուքս Յորքը և դուքս Բուկինգեմը:

ՅՈՐՔ

Բռնե՛ք այս սատր դավաճաններին, հետներն էլ՝ իրենց խեչերանքներին.
Ջադո՛ւկ, քայլ առ քայլ հետևել ենք քեզ:
Օհո՜, տիրուհի, դուք էլ ե՞ք այստեղ:
Ձեզ թագավորը և պետությունը խորապես պարտ են այս գործի համար.
Ես չեմ կասկածում, որ լորդ հովանին
Ձեզ կհատուցի այս գործի համար հավուր պատշաճի:

ԴՔՍՈՒՀԻ

Վատ չէ այս գործը կիսով չափ անգամ,
Քան թե այն, որ դու՝ դուքս վտանգավոր,
Դավեր ես նյութում Հենրու նկատմամբ առանց պատճառի:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Առանց պատճառի՞. ի՞նչ կասեք սրանց:

Ցույց տալով նրանց թղթերը:

Դո՛ւրս տարեք նրանց: Թող զնդան դնեն
Ու պահեն զատ-զատ: Իսկ դուք, տիրուհի, գալու եք մեզ հետ:
Լսի՛ր, Ստեֆորդ, տա՛ր նրան քեզ հետ:
Մենք դատարանում կդիտենք ձեր այս խաղալիքները:
Դե՛հ, շուտ գնացեք:

Դքսուհին և Յումը զինյալ պահապանների ուղեկցությամբ գնում են,
իսկ ներքևից՝ Սաութվելն ու Բոլինբրոկը:

ՅՈՐՔ

Ազնիվ Բուկինգեմ, կարծես թե նրան լավ հետևեցիր:
Գեղեցի՛կ հնարք, որն օգուտ կտա մեր նպատակին:
Արդ՝ միլորդ, կարդանք վհուկի սատանայի,
Տեսնենք, թե ինչ կա:

Կարդում է:

«Դուքսն ապրում է դեռ, որ թագավորին գահընկեց անի.
Բայց նա շատ կապրի և կմահանա բռնալատ մահով»:
Իսկ և իսկ սա է՝
„Aio te, Aeacida, Romanos vincere posse".
Լավ, մի տես վերջը.
«Ի՞նչ է վիճակված Սեֆոլկին արդյոք»:
«Ջրից կմեռնի և ջուրն էլ նրա վերջը կդառնա»:
Ի՞նչ է սպասում դուքս Սոմերսեթին:
«Թող հավերժ խույս տա նա դղյակներից:
Ավազուտներում կապրի ապահով,
Քան այն վայրերում, ուր դղյակներն են կանգնած բարձրաբերձ»:
Այո՛, պարոննե՛ր,
Մեզ դժվարությամբ այս վհիռն հասավ,
Դժվարությամբ էլ պետք է հասկանալ:
Թագավորն այժմ առաջանում է դեպի Սենտ Օլբենս,
Հետն էլ ամուսինն այս չքնաղ կնոջ:
Որքան կարող են՝ ձիուց էլ արագ,
Այնտեղ են տանում լուրերն այս տխուր.
Որ բունում մի նաշ կդառնան Հեմֆրուն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Թույլ չի՞ տա արդյոք Յորքի մեծ դուքսը,
Որ ես այս անգամ լինեմ սուրհանդակ, հույս ունեմ, որ նա ինձ կհատուցի:

ՅՈՐՔ

Թե հաճո է ձեզ, իմ բարի իշխան: Հե՛յ, ո՞վ կա այնտեղ:

Մտնում է մի ծառա:

Խնդրիր Վորվիկին ու Սոլսբերուն,
Որ ինձ հետ ընթրեն՝ վաղն երեկոյան: Գնանք այստեղից:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Սենտ Օլբենս:

Մտնում են թագավորը, թագուհին, Գլոստերը, կարդինալը և Սեֆոլկը:
Բազեները միմյանց ձայն են տալիս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հավատացե՛ք ինձ, ազնիվ իշխաններ, յոթ տարուց ի վեր
Ես չէի տեսել այսպիսի հաջող թռչունների որս:
Բայց ի բարձունս փչում էր քամին,
4 Չէր կարող նույնիսկ ծեր բազեն թռչել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բայց ինչպե՜ս նախրեց, միլորդ, ծեր բազեն,
Եվ ինչպե՜ս նետվեց նա բոլորից վեր:
Ինչպե՜ս է աստծո արարքն երևում հենց իր արարած էակների մեջ.
Ե՛վ մարդ, և՛ թռչուն բարձունք են ձգտում:

ՍԵՖՈԼԿ

Ես չեմ զարմանում, որ լորդ հովանու
Բազեներն այսքան բարձրից են նախրում,
Չի նրանք գիտեն, որ իրենց տերը սիրում է նախրել բարձունքներն ի վեր,
Եվ յուր մտքերով իր բազեներից հեռու սլանալ:

ԳԼՈՍՏԵՐ

Միլորդ, միայն նենգ ու ստոր ոգին
Չի ձգտում նախրել թռչունից բարձր:

ԿԱՐԴԻՆԱԼ

Այո՛, տենչում է ամպերից նա վեր:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ դուք, կարդինալ, ի՞նչ եք մտածում,
Մի՞թե չեք ուզում երկինք համբառնալ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հավերժ բերկրանքի գանձատուն մտնել...

ԿԱՐԴԻՆԱԼ

Դու երկրի վրա գտար երկինքդ,
Քո աչքն ու միտքը գամված են թագին՝ գանձատանն հոգուդ:
Դու վտանգավոր լորդ խնամակալ, չարակամ իշխան,
Քծնում ես անվերջ և՛ թագավորին, և՛ ժողովրդին:

ԳԼՈՍՏԵՐ

Մի՞թե, կարդինալ, պատշաճում է քեզ գոռոզությունը.
Tantaene animis caelestibus irae?[1]
Պետք է բարեպաշտն այսպես տաքանա՞: Բարի հորեղբայր,
Դուցե թաքցնես քո չարությունը հենց քո սրբությամբ:

ՍԵՖՈԼԿ

Օ՜. չարություն չէ, բայց քիչ ավելի, քան ինչ վայել է
Մի արդար կռվի և նույնքան մի վատ ազնվականի:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչպես՝ ո՞վ. միլորդ:

ՍԵՖՈԼԿ

Այո՛, ինչպես՝ դուք:
Որ լորդ հովանու մեծ տիտղոս ունեք:

ԳԼՈՍՏԵՐ

Սեֆոլկ, Անգլիայում բոլորը գիտեն, որ լպիրշ ես դու:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ դու՝ փառասեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խնդրում եմ, հանգիստ, բարի թագուհի:
Պետք չէ գրգռել այս խիստ մոլեգին իշխաններին,
Զի երանելի հաշտարարներ են ի վերա երկրի:

---

[1] *Հնարավո՞ր է այդքան ահեղ ցասում այն հոգիներում, որոնք երկնքին են նվիրված* (լատ.)։

ԿԱՐԴԻՆԱԼ

Այո, թող կոչվեմ ես երանելի,
Զի խաղաղություն կարգում եմ սրով՝ ընդդեմ այս զոռոզ խնամակալի:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կարդինալին) Օ՜, սուրբ հորեղբայր, հավատա դու ինձ,
Երազում եմ ես դրան հասնելու:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Առանձին՝ Գլոստերին) Կարո՞ղ ես՝ փորձի՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կարդինալին) Դու խառնակիչներ չբերես մեզ հետ,
Սեփական անձդ թող պատասխանի վիրավորանքից:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Առանձին՝ Գլոստերին) Դու չես համարձակվի. եթե համարձակվես, ուրեմն՝ կգաս
Հենց այս երեկո ծայրը պուրակի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ եք զրուցում, բարի իշխաններ:

ԿԱՐԴԻՆԱԼ

Հավատա, Գլոստեր, եթե քո ծառան հավքը չբռներ խիստ հանկարծակի,
Մեր որսն ավելի հաջող կլիներ:
47 *(Առանձին՝ Գլոստերին)* Կբերես քեզ հետ քո սուրը ռազմի:

ԳԼՈՍՏԵՐ

Անշո՛ւշտ, հորեղբայր:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Առանձին՝ Գլոստերին) Տե՛ս, չմոռանաս՝ ծայրը պուրակի:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կարդինալին) Շատ լավ, կարդինալ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ եք զրուցում, հորեղբայր Գլոստեր:

ԳԼՈՍՏԵՐ

Շատախոսում ենք մեր բազեներից և ուրիշ ոչինչ:

(Առանձին՝ Կարդինալին) Երդվում եմ, տերտե՛ր, առավոտյան,
Դու հասցրել ես ինձ վիրավորանք,
Գիտցիր, ես պիտի մորուքդ խուզեմ,
Թե չեմ մոռացել ձեռքս սուր առնել:

ԿԱՐԴԻՆԱԼ

(Առանձին՝ Գլոստերին) Medice, teipsum.[1]
Լավ խնամակալ, ինքդ քեզ խնամիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քամին սաստկացավ, նրա հետ, տյարք իմ, ձեր բարկությունն էլ:
Այս ի՞նչ տաղտկալի երաժշտություն է սրտս սղոցում:
Երբ որ այսպիսի լարեր են բախվում՝ ներդաշնակության ոչ մի հույս չկա:
Թույլ տվեք, տյարք իմ, ձեզ հաշտեցնել:

Մտնում է Սենտ Օլբենսի մի քաղաքացի, գոչելով՝ հրա՜շք...

ԳԼՈՍՏԵՐ

Այս ի՞նչ աղմուկ է:
Ա՛յ մարդ, ի՞նչ հրա՜շք, ի՞նչ ես քարոզում:

ՔԱՂԱՔԱՑԻ

Ո՜, հրա՜շք, հրա՜շք...

ՍԵՖՈԼԿ

Մոտ եկ արքային ու պատմիր նրան հրաշքիդ մասին:

ՔԱՂԱՔԱՑԻ

Երդվում եմ, տեր իմ, չի անցել կես ժամ,
Երբ Սենտ Օլբենսի խորանի առաջ
Մի մարդ, որ կյանքում աչքի լույս չուներ, հրաշքով տեսավ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օրհնյալ է աստված, զի հավատացյալ հոգուն լույս կտա գրկում խավարի,
Իսկ վհատյալին՝ մխիթարություն:

Մտնում են Սենտ Օլբենսի քաղաքագլուխը իր պաշտոնյաների հետ.
Սիմպկոքսը, որին երկու հոգով բերում են բազկաթոռի մեջ,
նրա կինը և բազմաթիվ մարդիկ:

---

[1] *Բժի՛շկ, ինքդ քեզ բուժիր* (լատ.):

ԿԱՐԴԻՆԱԼ

Անա՛ գալիս են քաղաքացիներն արարողության.
Որպեսզի մարդուն ձեզ ներկայացնեն, ձերդ մեծություն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մեծ է այս մարդու սփոփանքն այստեղ՝ երկրային հովտում,
Բայց տեսողությամբ բազմապատկվում են նրա մեղքերը:

ԳԼՈՍՏԵՐ

Ճանապարհ բացե՛ք: Մո՛տ բերեք նրան,
Արքան ուզում է նրա հետ խոսել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարի մարդ, պատմիր, թե ինչպես եղավ,
Որ մենք էլ քեզ հետ մեծարենք աստծուն:
Ի՞նչ: Եղե՞լ ես կույր: Եվ տեսնո՞ւմ ես արդ:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ձերդ մեծություն, ես կույր եմ ծնվել:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Այո՛, նա կույր էր:

ՍԵՖՈԼԿ

Ո՞վ է այս կինը:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Այս մարդու կինն եմ, ձերդ մեծություն:

ԳԼՈՍՏԵՐ

Երբ լինեիր դու մայրը նրա,
Ապա ամեն ինչ կասեիր ճշտիվ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Որտե՞ղ ես ծնվել:

ՍԻՄՊԿՈՔՍ

Բերվիկում, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խե՜ղճ մարդ: Քեզ աստված բարությամբ նայեց.
Դու ամեն գիշեր և ամեն ցերեկ,
Հիշիր, թե ինչպես քեզ օգնեց աստված:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ասա՛, բարի մարդ. եկար սուրբ խորան դու պատահաբա՞ր,
Թե՞ աստված դրդեց, որ աղոթք անես,

ՍԻՄՊԿՈՔՍ

Ա՜խ, աստված գիտի՝ աղոթքի համար:
Ինձ հազար անգամ, նույնիսկ ավելի՝ սուրբ Օլբենն էր քնիս մեջ ասել.
«Սիմպկոքս, դու հաճախ իմ խորանն արի, քեզ կապաքինեմ»,

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Ճշմարտություն է: Հաճախ եմ լսել,
Թե այդ ձայնն ինչպես կանչում էր նրան:

ԿԱՐԴԻՆԱԼ

Ի՞նչ, դու և՛ կաղ ես:

ՍԻՄՊԿՈՔՍ

Այո՛, թող աստված ամենակարող օգնի թշվառիս.

ՍԵՖՈԼԿ

Ինչպե՞ս պատահեց:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ծառից վայր ընկա:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Սալորի ծառից, ձեր բարձրություն:

ԳԼՈՒՍՏԵՐ

Վաղո՞ւց դու կույր ես:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ես կույր եմ ծնվել:

ԳԼՈՒՍՏԵՐ

Եվ կարողացար ծառը մագլցե՞լ:

ՍԻՄՊԿՈՔՍ

Տեր իմ, մի անգամ իմ ամբողջ կյանքում, երբ ջահել էի:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Նա ճիշտ է ասում, և մագլցելը թանկ նստեց վրան:

ԳԼՈՍՏԵՐ

Դու, անշո՛ւշտ, շատ ես սալորներ սիրել
Եվ դրա համար կյանքդ ես վտանգել:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ավա՜ղ, բարի տեր, իմ կինն է սաստիկ սիրում սալորներ,
Եվ ինձ ստիպեց իմ կյանքի գնով ծառը մագլցել:

ԳԼՈՍՏԵՐ

Ճարպիկ խաբեբա՛, դրանով ոչինչ դու չես վաստակի:
Ցույց տուր աչքերդ, թարթիր, բաց արա,
Ըստ իս, հիմա էլ դու լավ չես տեսնում:

ՍԻՄՊԿՈՔՍ

Այո, շատ պարզ է, ինչպես ցերեկը,
Փա՜ռք քեզ, փա՜ռք աստված, փա՜ռք քեզ, Սուրբ Օլբենս:

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն, այդպե՞ս: Դե հիմա ասա թիկնոցիս գույնը:

ՍԻՄՊԿՈՔՍ

Կարմիր, ալ կարմիր, ինչպես արյունը:

ԳԼՈՍՏԵՐ

Շատ լավ ասացիր: Իսկ ի՞նչ գույն ունի իմ այս զգեստը:

ՍԻՄՊԿՈՔՍ

Սև է ածխի պես, սև, ինչպես սև սաթ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչպե՞ս: Դու գիտես՝ սաթն ինչ գույն ունի:

ՍԵՖՈԼԿ

Կարծում եմ, որ նա չի տեսել սև սաթ:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց նա տեսել է մինչև այս օրը
Բազում թիկնոցներ ու բազում զգեստ:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Մինչև այս օրը երբեք չի տեսել իր ամբողջ կյանքում:

ԳԼՈՍՏԵՐ

Ասա ինձ, ա՛յ մարդ, ի՞նչ է անունս:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ավա՜ղ, չգիտեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Նրա անունը:

ՍԻՄՊԿՈՔՍ

Չգիտե՛մ, պարոն:

ԳԼՈՍՏԵՐ

Կամ թե նրանը:

ՍԻՄՊԿՈՔՍ

Նույնպես՝ չգիտեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ անունդ ի՞նչ է:

ՍԻՄՊԿՈՔՍ

Սաընդեր Սիմպկոքս, թե հաճո է ձեզ, ձերդ մեծություն:

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն, Սաընդեր, այստեղ հանձինս քեզ նստած է, քրիստոնյա աշխարհի ամենաարիկա խաբեբան: Եթե դու կույր ծնված լինեիր, այնուամենայնիվ, կարող էիր իմանալ մեր բոլորի անունները, ինչպես և ճանաչել մեր զգեստների գույնը: Տեսողությամբ կարելի է զանազանել գույները, բայց հնարավոր չէ բոլորի անունը միանգամից տալ: Միլորդներ, Սենտ Օլբե-սը հրաշք կատարեց, բայց մի՞թե նա, ով կկարողանա վերադարձնել այս կաղի ոտքերը, հմո՞ւտ վարպետ չէ:

ՍԻՄՊԿՈՔՍ

Օ՜, տեր իմ, եթե կարողանայիք·

ԳԼՈՍՏԵՐ

Սենտ օլբենսցիներ, մի՞թե ձեր քաղաքում չկան դահիճներ ու այնպիսի բան, որ կոչվում է խարազան:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Ինչպես կարող է չլինել, տեր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ դեպքում, նրանցից մեկին այստեղ ուղարկեք:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Հե՜յ, դու, դահիճի ետևից վազիր:

Գնում է ծառաներից մեկը:

ԳԼՈՍՏԵՐ

Այժմ մի նստարան բերեք այստեղ: *(Բերում են մի նստարան):* Սըրիկա՛, եթե ուզում ես ինքդ քեզ փրկել մտրակից, ապա թռիր այս նստարանի վրայով և փախիր:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ա՜խ, առանց նեցուկ չեմ կարող կանգնել.
Պարո՛ն, ապարդյուն ինձ մի՛ չարչարեք:

Մտնում է մի դահիճ, ձեռքին խարազան:

ԳԼՈՍՏԵՐ

Լա՛վ, պարոն, մենք քեզ կստիպենք, որ գտնես ոտքերդ: Հե՜յ, դահի՛ճ, մտրակի՛ր, մինչև որ թռչի նստարանի վրայով:

ԴԱՀԻՃ

Լսում եմ, տեր իմ: Հանի՛ր բաճկոնդ:

ՍԻՄՊԿՈՔՍ

Ավա՜ղ, պարո՛ն, ի՞նչ անեմ, չեմ կարող կանգնել:

Դահճի հարվածից նա թռչում է նստարանի վրայով ու փախչում:
Նրան հետևում է ժողովուրդը, բացականչելով՝ հրա՜շք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Աստվա՜ծ, այս ամենն ինչպե՞ս ես տեսնում
Եվ դու ինչպե՞ս ես այդքան համբերում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ծիծաղելի՜ է, թե ինչպես փախավ:

ԳԼՈՍՏԵՐ

Հետապնդեցե՛ք այդ սրիկային, իսկ այս բոզին էլ այստեղից քշեք:

ՍԻՄՊԿՈՔՍԻ ԿԻՆԸ

Այսպես վարվեցինք՝ կարիքից դրդված:

ԳԼՈՍՏԵՐ

Թող նրանց մտրակեն բոլոր շուկաներում, քանի դեռ չեն հասել Բերվիկ, ուրտեղից եկել են:

Գնում են քաղաքագլուխը, դահիճը, Սիմպկոքսի կինը և ուրիշներ:

ԿԱՐԴԻՆԱԼ

Դուքս Հեմֆրին հրաշք կատարեց այսօր:

ՍԱՖՈԼԿ

Կաղին ստիպեց փախչել գլխիկոր:

ԳԼՈՍՏԵՐ

Ձերի մոտ իմը հրաշք չէ՞, օ՛, ո՛չ.
Դե դուք մեկ օրում փախցրիք, պարոն, քաղաքներ:

Մտնում է Բուկինգեմը.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ լուր է բերել մեր Բուկինգեմը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այնպիսի լուրեր, որ սիրտս է դողում:
Չար մարդկանց մի խումբ հովանու կնոջ՝
Լեդի Էլեանորի առաջնորդությամբ ու մասնակցությամբ.
Որն այս խուժանի գլուխն է անցել,
Ձեր տերության դեմ խիստ վտանգավոր չարիք է նյութում.—
Գործելով, ավա՜ղ, վհուկների հետ,
Բռնեցինք նրանց հանցանքի վայրում,
Երբ կանչում էին երկրի ընդերքից չար ոգիներին,
Եվ նրանց հարցնում թագավոր Հենրու կյանքից ու մահից,
Ձեր վեհության մոտիկ մարդկանցից.
Որոնց մասին դուք ավելի ստույգ կիմանաք հետո:

ԿԱՐԴԻՆԱԼ

Ուստի, ձեր կինը, լորդ խնամակալ, պետք է անհապաղ
Լոնդոնում կանգնի օրենքի առաջ:

Առանձին Գլոստերին:

Կարծեմ, այս լուրը ձեր զենքի ծայրը շեղեց մի այլ կողմ.
Այնպես որ, պարոն, հազիվ թե ինձ հետ այգում հանդիպեք:

ԳԼՈՍՏԵՐ

Փառամո՜լ տերտե՛ր, սիրտս մի՛ խոցիր,
Ա՜խ, ջլատել են ցավն ու կսկիծը ուժերս բոլոր:
Եվ ես պարտված եմ, արդ քեզ եմ զիջում, ինչպես, իմացիր,
Ես կզիջեի մի ձիապանի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, բարի աստված, ի՜նչ դժբախտություն և ի՜նչ աղետ են
Չար մարդիկ նյութում, դրանով իրենց կյանքը կործանում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Համֆրի, զարշ հոտ է փչում քո բույնից,
Նայի՛ր ինքդ քեզ, որ մնաս անբիծ:

ԳԼՈՍՏԵՐ

Տիկին, ինձ համար, երկինքն է վկա,
Ուրիշ մի արքա, մի երկիր չկա:
Գալով կնոջս իմ. ավա՜ղ, չգիտեմ, ինչ է պատահել,
Ինչ որ լսեցի՝ ինձ վիշտ պատճառեց:
Վեհանձն կին է, բայց, եթե իրավ
Մոռանալով նա առաքինություն՝ զտել է նրանից,
Ովքեր մրում են մեզ ձյութի նման,
Վտարեմ նրան իմ առագաստից, իմ տոհմիկ տնից,
Եվ կդարձնեմ օրենքին ավար,
Զի աղարտում է տոհմիս անունը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տյարք իմ, այս գիշեր կմնանք այստեղ,
Իսկ առավոտյան կմեկնենք Լոնդոն,
Որպեսզի գործը նայենք մանրախույզ,
Եվ պիղծ ու խառնակ հանցագործներին
Անզիջում կանչենք ի պատասխանի:
Պետք է կշռել այս դատն օրենքի արդար նժարով,
Որպեսզի տեսնենք, թե ով է արդար և ով չարանենգ:

Շեփորներ. Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Լոնդոն: Դուքս Յորքի պալատի պարտեզը:

Մտնում են Յորքը, Սոլսբերին ու Վորվիկը:

ՅՈՐՔ

Այժմ, իշխաններ, իմ բարի Վորվիկ ու Սոլսբերի,
Երբ ավարտել ենք ընթրիքը համեստ,
Թույլ տվեք այստեղ ձեզ հետ զրուցել,
Ձեզնից իմանալ ձեր կարծիքն անխախտ՝
Չունե՞մ իրավունք թագը կրելու:

ՍՈԼՍԲԵՐԻ

Տեր իմ, այդ մասին ուզում եմ լսել մանրամասնորեն:

ՎՈՐՎԻԿ

Սիրելի Յորք իմ, պատմիր մեկ առ մեկ,
Եթե քո պահանջն արդար է, իրավ, ապա Նեվիլներն աջակից են քեզ:

ՅՈՐՔ

Լսե՛ք, իշխաններ, էդվարդ Երրորդը յոթ զավակ ուներ.
Առաջնեկն էդվարդ, Սև արքայազն էր՝ իշխանն Ուելսի,
Երկրորդը ծնվեց Վիլյամ Հեթֆիլդը,
Ապա՝ Լիոնելը, դուքս Կլարենսը, նրանից հետո
Ջոնն աշխարհ եկավ, դուքս Լանկաստերը:
Հինգերորդն՝ էդմոնդ Լենգլին, դուքս Յորքը,
Վեցերորդն եկավ Թոմաս Վուդստոքը, դուքս Գլոստերը,
Իսկ վերջում ծնվեց Վիլյամ Վինձորը:
Սև արքայազն հորից շուտ մեռավ,
Միակ Ռիչարդին թողնելով ժառանգ:
Նա թագավորեց էդվարդ Երրորդի մահվանից հետո,
Մինչ դեռ Հենրի Բոլինբրոկը՝ դուքս Լանկաստերը,
Ժառանգը Ջոնի և ավագ որդին,
Թագադրված Հենրի Չորրորդի անվամբ,
Գահը չգրավեց, թագընկեց շարեց արքային օրինավոր,
Ուղարկեց նրա դժբախտ թագուհուն դեպի Ֆրանսիա,
Ռիչարդին՝ Պոմֆրետ, որտեղ, ինչպես դուք բոլորդ գիտեք,
Դավաճանորեն կյանքից զրկվեց:

ՎՈՐՎԻԿ

Հայր իմ, ինչ պատմեց դուքսն՝ ամբողջովին ճշմարտություն է:
Լանկաստերներն այս ձևով թագը հափշտակեցին,

ՅՈՐՔ

Որն այժմ նրանք պահում են ուժով, ոչ՝ իրավունքով:
Երբ մեռնի որդին Սև արքայազնի,
Գահն պետք է եկնի այդ նույն սերնդի զավակը հաջորդ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Բայց Վիլյամ Հեթֆիլդն անժառանգ մեռավ:

ՅՈՐՔ

Երրորդ զավակը, դուքս Կլարենսը, ումից ես հիմա
Գահն եմ պահանջում, ուներ Ֆիլիպա անունով աղջիկ,
Նա ամուսնացավ Մորտիմերի հետ, որ կոմսն էր Մարչի,

Իսկ նրանց որդին՝ Ռոջեր Մարչն ուներ
Երեք զավակներ՝ էդմոնդը, Աննան և էլեանորը:

ՍՈԼՍԲԵՐԻ

38 Բայց այս էդմոնդը Բոլինբրոկի տերության օրոք,
Ինչպես կարդացի, թագն է պահանջել,
Եվ նա կդառնար թագավոր անշուշտ, եթե Գլենդովերը
Չպահեր նրան բանտի խցիկում մինչև մեռնելը...
Բայց վերադառնանք մնացյալներին:

ՅՈՐՔ

Նրա ավագ քույր՝ Աննան, իմ մայրը,
Ժառանգը գահի ամուսնացավ Ռիչարդ Քեմբրիջի հետ,
Որ էդմոնդ Լենգլու որդին էր, այո՛,
Էդվարդ Երրորդի զավակն հինգերորդ:
Ես Աննայից եմ թագը պահանջում.
Միակ ժառանգից կոմս Մարչ Ռոջերի, որ Մորտիմերի զավակը եղավ,
Սա ամուսնացավ Ֆիլիպայի հետ,
Ում հայրն էր, տյարք իմ, դուքս Կլարենսը:
Ուստի, թե կարգ է, որ ավագ որդին պետք է գահ ելնի կրտսերից առաջ,
Ուրեմն, ես եմ թագավորն Անգլիո:

ՎՈՐՎԻԿ

Օ՛, չկա ավելի պարզ բան, քան թե սա:
Հենրին Ջոն Գոնտից՝ չորրորդ զավակից,
Թագն է պահանջում, իսկ Յորքն՝ երրորդից:
Եվ Լիոնելի սերունդը ազնիվ քանի դեռ ողջ է,
Նա չպետք է իշխի: Սերունդը ողջ է, փթթում է քո մեջ,
Քո որդոց սրտում, որ ասես լինեն հաստաբուն ծառի գեղեցիկ ոստեր:
Հայր, Սոլսբերի, ծունր իջնենք այստեղ
Եվ այս մեկուսի խաղաղ պարտեզում
Թող օրհնավոր մեր թագավորին
Մենք առաջինը ողջունենք պատվով,
Քանզի նա վերուստ իրավունք ունի թագը կրելու:

ԵՐԿՈՒՍՈՎ

Կեցցե՛ Ռիչարդը՝ թագավորն Անգլիո:

ՅՈՐՔ

Շնորհակալություն, բայց դեռ արքա չեմ,
Քանզի, ազնիվ տյարք, չեմ թագադրվել

Իմ Լանկաստերյան տոհմի արյունով չի ներկվել սուրս:
Բայց պետք չէ բնավ շտապփույթ գործել, այլ գաղտնի, զգույշ.
Այս վտանգավոր օրերին եղեք ինձ նման, տյա՛րք իմ.
Իբրև չեք տեսնում դուք Սոմերսետի լկտիությունը,
Ոչ էլ՝ Սեֆոլկի հանդգնությունը,
Աչք գոցեք դիտմամբ դուք կարդինալի լրբության առաջ,
Թող Բուկինգեմը, ոհմակը նրանց ձեր տեսողության դաշտից վրիպեն,
Քանի դեռ հոտի հովիվն է ապրում՝
Պարկեշտ իշխանը, բարի դուքս Հեմֆրին:
Նրանք փնտրում են նրա մահն հիմա:
Սակայն փնտրելով՝ կգտնեն իրենց մահն անագորույն,
Երբ իրավ է Յորքը գուշակում:

ՍՈԼՍԲԵՐԻ

Միլորդ, բավ է, արդ, պարզ է ամեն ինչ:

ՎՈՐՎԻԿ

Սիրտս ինձ ասում է, որ կոմս Վորվիկը
Մի օր դուքս Յորքին կթագադրի:

ՅՈՐՔ

Իսկ ես, իմ Նևիլ, հավատում եմ, որ
Ռիչարդի ձեռքով Վորվիկն Անգլիայում
Արքայից հետո մեծ մարդ կդառնա:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դատարանի դահլիճը:

Շեփորներ: Մտնում են թագավորը, թագուհին, Գլոստերը, Յորքը.
Սեֆոլկը և Սոլսբերին, զինյալ պահակի հսկողությամբ՝ դքսուհի Գլոստերը,
ապա՝ Մարջերի Ջորդեն. Սաութվելը, Յումը և Բոլինբրոկը

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մոտ ե՛կ, էլեանոր, դուքս Գլոստերի կին,
Ողորմած աստծո և Հենրու առաջ մեծ հանցանք ունես:
Ուրեմն, ընդունիր վճիռն օրենքի քո մեղքի համար,
Որ ինչպես աստծո գրքում է գրված, քեզ սպասում է լոկ մահապատիժ:

Ջորդենին և մյուսներին:

Իսկ դուք՝ չորս հոգով բանտ վերադարձեք,
Որտեղից կտանեն ձեզ կառափնարան:
Եվ Սմիթֆիլդում կայրեն վհուկին,
Իսկ ձեզ՝ երեքիդ՝ դեպի կախաղան:

Դքսուհի Գլոստերին:

Դու, տիկին, ազնիվ ցեղից ես սերվել,
Երեք օր մեղքդ բազմության առաջ քավելուց հետո,
Կապրես պատվազուրկ: Դու պետք է ապրես ցմահ աքսորյալ
Հեռու Մեն կղզում, որտեղ Ստենլին քեզ պիտի հսկի:

ԴՔՍՈՒՀԻ

Ես ողջունում եմ և՛ աքսոր, և՛ մահ:

ԳԼՈՍՏԵՐ

Քեզ. իմ էլեանոր, օրենքն է պատժում,
Իսկ ում օրենքն է պատժում խստագույն, չեմ կարող նրան արդարացնել:

Գնում են դքսուհին և մյուսները՝ զինյալ պահակի ուղեկցությամբ:

Աչքերս են լեցուն աղի արցունքով, սիրտս՝ կսկիծով:
Ա՜խ, այս տարիքիս այս պարսավանքը գլուխս է թեքում:
Ձերդ վեհությո՛ւն, ես աղերսում եմ, թույլ տվեք գնալ,
Չի մխիթարանք են վշտերս ուզում, իսկ տարիներս՝ խաղաղ ապաստան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կա՛ց, դուքս Գլոստեր, գնալուց առաջ
Տուր գավազանդ. Հենրին կլինի
Իր իսկ հովանին, իսկ բարի աստված՝
Հույսն իմ. նեցուկն իմ և իմ ռահվիրան,
Որ լույս շաղ կտա իմ ճանապարհին:
Տեր ընդ քեզ, Հեմֆրի: Ես սիրում եմ քեզ
Այժմ ոչ պակաս, քան երբ արքայիդ հովանին էիր:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ես չեմ նկատում որևէ պատճառ, որ ցույց է տալիս.
Թե հարկավոր է հասուն արքային մի խնամակալ. ինչպես մանկանը:
Թող կառավարեն աստված և Հենրին,
Տո՛ւր գավազանդ, իսկ թագավորին՝ իր տերությունը:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ գավազա՞նը: Անավասիկ, տեր:
Ես հոժարակամ վերադարձնում եմ.
Ինչպես ինձ տվեց քո հայրը՝ Հենրին:
Ես հոժարակամ այդ գավազանը դնում եմ անա քո ոտքերի տակ,
Ինչպես ուրիշներն այն կվերցնեին փառասիրության մոլուցքից դրդված·
Դե՛հ, մնա՛ս բարյավ, իմ բարի արքա. երբ ես չեմ լինի,
Թող պատվով փառք խաղաղությունը քո գահը հսկե:

Գնում է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Տյարք իմ, Հենրին է հիմա թագավոր, իսկ Մարգարիտը՝ նրա թագուհին:
Դուքս Հեմֆրին դարձավ խոտվիլյակն իր իսկ՝
Գզգզված ու հաշմ: Օ՜, միանգամից երկու մեծ հարված.
Նախ՝ կինն աքսորվեց, ապա՝ յուր ծառի մի ոստ հատվեց.
Ընկավ իր ձեռքից ցուպը պատվական:
Թող գավազանը Հենրու մոտ մնա, զի սկզբանե այդպես է եղել:

ՍԵՖՈԼԿ

Այսպես թոշնում է երկնածիր սոճին, կախելով ի վար ճյուղերն ազազուն,
Այսպես խամրում է գոռոզ դքսուհու հպարտությունը ջահել օրերում:

ՅՈՐՔ

Աստված նրա հետ: Թույլ տվեք ասել, ձերդ մեծություն,
Որ վճռված է մենամարտն այսօր:
Ահա բողոքարկուն ու պաշտպանյալը՝
Սաչ զինագործը և նրա ծառան պատրաստ են կռվին:
Արդյոք չեք ուզո՞ւմ այս մարտը տեսնել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հենց այդ պատճառով, իմ բարի իշխան, պալատն եմ թողել.
Որպեսզի տեսնեմ, թե ինչպես է այդ մարտը ավարտվում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, ի սեր աստծո, ձեր շուրջը նայեք, որ ամենայն ինչ լինի իր տեղում,
Թող վեճն էլ այստեղ իսկույն վերջանա,
Եվ աստված լինի արդարին նեցուկ:

ՅՈՐՔ

Չեմ տեսել երբեք ավելի վախկոտ

Կամ մենամարտից խուսափող մի մարդ, քան այս հայցվորն է,
57 Այս զինագործի ծառան, իշխաններ:

Մտնում են մի կողմից զինագործ Հոռները և նրա հարևանները: Նրանք խմում են Հոռների կենացը, մինչև նա հարբում է: Նա բեմ է գալիս ցուպը ձեռքին, որի ծայրին ամուր կապված է ավազով լեցուն մի պարկ: Նրա առջևում կանգնած է թմբկահարը, իսկ մյուս դռնից՝ Պիտերը՝ թմբկահարի հետ, նույնպիսի ցուպով: Նրան ողջունում են ենթավարպետները, որոնք խմում են նրա կենացը:

Ա. ՀԱՐԵՎԱՆ

Առա՛, դրացի Հոռներ, ես քո կենացն եմ խմում կանարյան գինով և մի՛ վախենա, դրացի, ամեն ինչ լավ կվերջանա:

Բ ՀԱՐԵՎԱՆ

Առա՛ և, դրացի, լիսաբոնյան մի գավաթ:

Գ ՀԱՐԵՎԱՆ

Առա՛ մի կում բունդ գարեջուր: Խմի՛ր, դրացի և մի՛ վախենա քո հակառակորդից:

ՀՈՌՆԵՐ

Դեպի՜ գործ: Եվ խաչը վկա, ես կխմեմ բոլորիդ կենացը, իսկ դու, Պիտեր, գլխիդ կտաս:

Ա. ԵՆԹԱՎԱՐՊԵՏ

Առա՛, Պիտեր, կենացդ եմ խմում, մի՛ վախենա:

Բ ԵՆԹԱՎԱՐՊԵՏ

Ուրախ կաց, Պիտեր և մի՛ վախենա քո տիրոջից: Կռվով պաշտպանիր ենթավարպետների պատիվը:

ՊԻՏԵՐ

Շնորհակալությո՛ւն բոլորիդ: Խմե՛ք և, խնդրում եմ, աղոթե՛ք ինձ համար: Կարծես թե խմել եմ իմ վերջին ումպը այս աշխարհում: Առա՛, Ռոբին, թե մեռնեմ, վերցրու իմ գոգնոցը, իսկ դու՝ Վիլ, մուրճս: Թո՛մ, քեզ եմ թողնում իմ ունեցած բոլոր փողերը: Օ՜, աստվա՛ծ, օրհնի՛ր ինձ: Աստված, ինձ օգնի՛ր, որովհետև ես չեմ կարող իմ տիրոջը հարվածել: Նա մենամարտել գիտե քաջ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Թողե՛ք խմելը, սկսե՛ք կռվել: Հե՜յ, տղա, անունդ:

ՊԻՏԵՐ

Պիտեր, անզիվ խոսք:

ՍՈԼՍԲԵՐԻ

Պիտեր, ոչինչ ավելի՞:

ՊԻՏԵՐ

Այսքան:

ՍՈԼՍԲԵՐԻ

Տես հա, տիրոջդ մի լավ հարվածես:

ՀՈՌՆԵՐ

Պարոններ, եկա ես այստեղ, այսպես ասած, իմ ենթավարպետի գրպարտությամբ, որպեսզի ցույց տամ, որ նա մի սրիկա է, իսկ ես՝ ազնիվ մարդ: Ինչ վերաբերում է դուքս Յորքին, թող մեռնեմ, թե չարություն եմ կամեցել նրան, թագավորին կամ թագուհուն: Ուստի, Պիտեր, պատրաստվիր հարվածն ընդունել:

ՅՈՐՔ

Փութացե՛ք, այս անզգամի լեզուն կապ ընկավ: Փողե՛ր: Ազդանշան մարտի:

Ազդանշան: Նրանք մենամարտում են, և Պիտերը գցում է նրան:

ՀՈՌՆԵՐ

Կա՛ց, Պիտեր, կա՛ց: Ես խոստովանում եմ, ես խոստովանում եմ դավաճանությունս:

Մեռնում է:

ՅՈՐՔ

Տարե՛ք նրա զենքը: Ա՛յ մարդ, շնորհակալություն հայտնիր աստծուն ու բունդ գինուն, որ տիրոջդ խելքն էր առել:

ՊԻՏԵՐ

Օ՜, աստվա՜ծ, մի՞թե ես հաղթեցի իմ թշնամուն այս ատյանի առաջ: Օ՜, Պիտեր, դու շահեցիր ճշմարտությունը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տարե՛ք մեր աչքից այս դավաճանին,
Զի նրա մահով մենք ճանաչեցինք հանցանքը նրա,
Եվ աստված արդար բացեց մեր առաջ
Անմեղությունը այս թշվառ մարդու,
Որին ուզում էր անարդարացի Հոռներն սպանել:
Եկ մեզ հետ, ա՛յ մարդ, ե՛կ, որ ստանաս պարգևդ արժանի:

Շեփորներ: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն։ Մի փողոց։

Մտնում են Գլոստերը և նրա սգազգեստ ծառաները։

ԳԼՈՍՏԵՐ

Այսպես, երբեմն ամենապայծառ օրն է մռայլում սևաքող մի ամպ.
Եվ հաջորդում է ամռանն հարաժամ
Ձմեռն անպտուղ, սառնաշունչ ու խենթ։
Ա՜խ, ինչպես տարվա եղանակները՝
Անցնում գնում են խնդություն ու հոգս։
Ժամը քանի՞սն է։

ԾԱՌԱ

Ճիշտ տասը, տեր իմ։

ԳԼՈՍՏԵՐ

Տասը այն ժամն է, որ պետք է տեսնեմ
Խստորեն պատժված իմ խեղճ դքսուհուն։
Հազիվ թե նրա ոտքերը քնքուշ
Տոկան քայլվածքը քարոտ փողոցում։
Սիրեցյա՜լ իմ Նել, ցավ կպատճառի
Այդ խուժանն անարգ քո ազնիվ հոգուն,
Երբ կծիծաղի չարախնդությամբ քո բախտի վրա,
Նա, որ դեռ երեկ քեզ էր ուղեկցում. քո հպարտ կառքին,
Երբ անցնում էիր դու հաղթանակած։
Բայց կամա՜ց, կարծես մոտենում է նա։
Պետք է պատրաստվել, որպեսզի լացող աչքերով դիտեմ վիշտը դքսուհու։

Մտնում է դքսուհի Գլոստերը, բոբիկ, սպիտակ պատանքը վրան,
մեջքին՝ ամոթանքի պիտակ փակցված, ձեռքին՝ վառվող մոմ։ Նրա հետ են
սըր Ջոն Ստենլին, շերիֆը և պահակներ։

ԾԱՌԱ

Եթե թույլ տաք՝ մենք ետ կխլենք նրան շերիֆից։

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛չ, չշարժվեք, թե կյանքդ թանկ է։ Թող անցնի գնա։

ԴՔՍՈՒՀԻ

Եկե՞լ ես, տեր իմ, որպեսզի տեսնես իմ ամոթանքը այս հանրընդհանուր։
Արդ ապաշխարանք դու էլ ես կրում,

Տե՛ս. թե ինչպես է ամբոխն հեզամիտ
Աչքն հառած դեմքիդ. ձեռքերը շարժում:
Աղերսում եմ ես, թաքնվի՛ր նրանց չար հայացքներից.
Եվ զոգ սենյակում ողբա ամոթն իմ.
Եվ դու նզովի՛ր մեր նենգ թշնամուն:

ԳԼՈՍՏԵՐ

Համբերի՛ր, իմ Նել. վիշտդ մոռացի՛ր:

ԴՔՍՈՒՀԻ

Ա՛խ, ուսուցանիր, որպեսզի ես ի՛նձ ընդմիշտ մոռանամ:
Կարծեմ, թե ես քո կինն եմ օրինաց.
Իսկ դու՝ մի իշխան. երկրի հովանի.
Ուրեմն. պետք չէր այսպես ինձ տանել խայտառակորեն.
Մեջքիս ամոթի պիտակ փակցված այս խաժամուժի շարախնդությամբ,
Որ արցունքներս և հառաչն իմ խոր տենչում է տեսնել:
Քայլելիս՝ անգութ քարերն են կտրում ոտքերս քնքուշ
Եվ ես սոսկում եմ. իսկ այդ ամբոխը չարակն է ժպտում,
Խորհուրդ է տալիս՝ ինձ քայլել զգույշ:
Ա՛խ, ինչպես տանեմ լուծն ամոթանքի.
Կարո՞ղ եմ. արդ. առաջվա նման աշխարհին նայել.
Եվ ինձ համարել արևի շողով ժպտացող մի կին:
Ո՛չ, ո՛չ, ցերեկս գիշեր կդառնա և լույսս՝ խավար.
Իմ փառքի մասին կդատեն միայն մռայլ դժոխքով.
Երբեմն կասեմ, որ ես եղել եմ կինը դուքս Հեմֆրու.
Որ մի իշխան էր. երկրի ղեկավար.
Բայց նա այնպիսի մի խղճուկ մարդ էր
Եվ այնպես վարեց գործերը երկրի. որ մի կողմ քաշվեց.
Իսկ նրա անբասիր դքսուհին դարձավ ծաղրի առարկա
Ամեն մի ստոր սրիկայի համար:
Բայց եղիր խոնարհ և իմ ամոթից մի՛ շիկնիր երբեք.
Եվ մի՛ վշտանա. քանի դեռ մահվան
Կացինը գլխիդ վրա չի կախվել. իսկ այդ բանն անշուշտ, կլինի շուտով.
Քանզի Սեֆոլկը ամենակարող մարդն է այն խմբում. որն ատում է քեզ:
Եվ զոռոզ Յորքը. Բոֆորտն ամբարիշտ՝ այդ ապօրինի ստոր քահանան,
Թևերիդ արդեն օղակ են դրել.
Որ ուր էլ թռչես՝ քեզ պիտի բռնեն:
Բայց մի՛ վախենա, քանի դեռ նրանք ոտքդ չեն կապել,
Եվ դու մի՛ ջանա թշնամիներից դավերը կանխել:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ա՜խ, Նե՛լ, համբերի՛ր, դու ճիշտ չես խոսում.
Առաջ ես նրանց կխշտացնեմ. հետո թող փորձեն ինձ վիրավորել:
Թե ունենայի հազար թշնամի,
Ամենքն էլ հազար անգամ զորավոր,
Էլի չեն կարող իմ մազին դիպչել.
Քանզի դեռ Հեմֆրին ազնիվ է, անմեղ:
Ա՜խ, դու ուզո՞ւմ ես, որ քեզ փրկեմ վիրավորանքից.
Բայց չէի կարող ջնջել աշխարհից քո ամոթանքը:
Դրժելով օրենքը՝ ես պիտի կյանքս սաստիկ վտանգեմ:
Սիրելի իմ Նել, միայն հանգիստը կդառնա նեցուկ:
Ես աղերսում եմ, որ դու դաշնակցես քո բարի սրտի համբերության հետ.
Այս քիչ օրերի տառապանքները շուտով կանցկենան:

Մտնում է մի հերալդ:

ՀԵՐԱԼԴ

Կանչում եմ ձերդ պայծառափայլությանը նորին մեծության պառլամենտ, որ հրավիրվում է Բերիում՝ գալիք ամսվա առաջին օրը:

ԳԼՈՒՍՏԵՐ

Սակայն նախապես չեն առել ինձնից համաձայնություն, զաղտնի են գործել: Շատ լավ: Ես ներկա կլինեմ:

Գնում է հերալդը:

Դե՛ն, մնա՜ս բարյավ, սիրելի իմ Նել:
Խնդրում եմ, շերիֆ, թող պատժի չափը չավելացնեն:

ՇԵՐԻՖ

Ձերդ մեծություն, թույլ տվեք ասել,
Այստեղ էլ ահա պարտքս է վերջանում:
Սըր Ջոն Ստենլին կուղեկցի նրան որոշված կղզին:

ԳԼՈՒՍՏԵՐ

Դուք պետք է, պարոն, իմ կնոջն հսկե՞ք:

ՍՏԵՆԼԻ

Այո՛, խնամքը ինձ է հանձնված:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ես թախանձում եմ, որ դուք նրա հետ
Շատ վատ չվարվեք, բայց ոչ այն բանից, որ աղերսում եմ:

Աշխարհը դարձյալ կարող է ժպտալ:
Կնոջս բաշխած քո բարությանը ես կհատուցեմ միայն բարությամբ.
Գնա՛, մնա՛ք բարյավ, պարոն Ստենլի:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ, դու գնում ես և ինձ չե՞ս ասում հրաժեշտի խոսք:

ԳԼՈՍՏԵՐ

Տե՛ս, թե ինչպես է արցունքս խեղդում: Չեմ կարող խոսել:

Գնում է Գլոստերը ծառաների հետ:

ԴՔՍՈՒՀԻ

Եվ դու գնացի՞ր. տանելով քեզ հետ հույսերս բոլոր:
Ա՜խ, ինձ այլևս ոչինչ չի մնում, մահն է բերկրանքն իմ,
Մահը, որից ես վախենում էի,
Մինչ տենչում էի երկրային կյանքի հավերժությունը:
Պարոն Ստենլի, տա՛ր ինձ այստեղից,
Հիմա ինձ համար նույնն է ամեն ինչ, ես չեմ աղերսում ոչ մի զթություն
Տա՛ր ինձ, ինչպես որ հրամայել են·

ՍՏԵՆԼԻ

Դեպի Մեն կղզին. որտեղ, տիրուհի,
Քեզ հետ կվարվեն՝ համաձայն դիրքիդ:

ԴՔՍՈՒՀԻ

Հենց դա էլ վատ է: Պատվազուրկ եմ ես,
Մի՞թե անպատիվ կվարվեն ինձ հետ:

ՍՏԵՆԼԻ

Կվարվեն, ինչպես հարկն է. տիրուհի,
Դուք Հեմֆրու կինն եք. ազնիվ դքսուհի:

ԴՔՍՈՒՀԻ

Դե՛ն. բարի շերիֆ. մնացե՛ք բարյավ,
Ապրեք ինձանից ավելի ուրախ, թեև ուղեկիցն եղաք ամոթիս:

ՇԵՐԻՖ

Իմ պարտքն է, տիկին, խնդրում եմ ներեք:

ԴՔՍՈՒՀԻ

Մնացե՛ք բարյավ. դուք կատարեցիք ձեր պարտքը արդեն:
Գնա՛նք, Ստենլի, ժամանակը չէ՞:

ՕՍՏԵՆՎԻ

Դուք ապաշխարանք տվել եք արդեն,
Դեն զցեք ձեզնից այդ պատանքն հիմա.
Դուք պետք է նախկին պատանքը հանեք:

ԴՔՍՈՒՀԻ

Իմ ամոթանքը չի կարող փոխվել այդ պատանքի հետ
Այն պիտի կախվի իմ ամենանոր, շքեղ զգեստից.
Որ միշտ երևա՝ ինչ էլ որ հագնեմ:
Տա՛ր ինձ. տենչում եմ իմ բանտը տեսնել:

Գնում են·

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Բերրիի Սենտ Էդմոնդսի աբբայություն:

Շեփորներ: Պառլամենտի դահլիճն են մտնում թագավորը, թագուհին, կարդինալ Բոֆորտը, Սեֆոլկը, Յորքը, Բուկինգհեմը, Սոլսբերին և Վորվիկը.

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես զարմանում եմ, թե մինչև հիմա ինչո՞ւ չի եկել լորդ Գլոստերը.
Նա սովորություն չունի, միլորդներ, վերջինը գալու:
Գուցե մի առիթ պահում է նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՞թե չեք տեսնում կամ չեք կամենում
Նկատել, թե նա ինչ տարօրինակ ձևով է փոխվել.
Ինչ վեհություն է շնորհել իրեն,
Ինչ լպիրշ դարձել և ինչ համարձակ,
Այդ զուսպ մարդը նման չէ իրեն:
Ու երբ մենք հեռվից, թեկուզ մի հայացք
Նետեինք վրան, նա ծունր էր իջնում,
Նրա հեզությամբ պալատն էր ապշել:
Բայց հիմա փորձե՞ք նրան հանդիպել, նույնիսկ առավոտյան,
Երբ որ մաղթում են մարդիկ բարի լույս,
Հոնքերն է կիտում և մի զայրացկոտ հայացք նետելով,
Անցնում է ձգված, չի էլ խոնարհվում՝
Արհամարհելով պարտքն իր արքային:
Երբ փոքրիկ շունն է ցույց տալիս ատամ՝ վրան չես նայում,
Սակայն մեծ մարդիկ սոսկում են, երբ որ առյուծն է մռնչում:
Իսկ Հեմֆրին փոքրիկ մարդ չէ Անգլիայում:

Հիշի՛ր, որ արյամբ քո հաջորդն է նա,
Եվ, եթե ընկնես՝ նա կբարձրանա:
Կարծում եմ՝ բնավ խոհեմություն չէ, երբ նա քո հանդեպ
Լցված է ոխով և քո մահվան մեջ իր շահն է փնտրում,
Թողնել, որ ազատ շուրջդ պտտվի,
Կամ մուտք ունենա բարձր ատյանում:
Նա մարդկանց սիրտն է շահել շողոմով.
Եվ երբ հանենա՝ ապստամբելով,
Կտանի ամբոխն նենց իր ետևից:
Հիմա գարուն է, մոլախոտերը
Դեռ չեն տարածել արմատներ հողում.
Եվ եթե նրանց անվնաս թողնես՝
Կխեղդեն այգու բույսերն անխնա:
Խոնարհանվեր մտատանջությունն իմ սիրոջ հանդեպ.
Ստիպում է ինձ, որ այս վտանգը տեսնեմ դուքսի մեջ.
Եթե կասկածս ապարդյուն է խիստ՝
Կոչիր այն կնոջ յոկ վախկոտություն
Եվ թե կարող ես՝ գործով փաստերով փարատիր վախս:
Ես խոստանում եմ դուքս Հեմֆրու առաջ մեղքերս բոլոր:
Իշխաններ Սեֆոլկ, Բուկինգեմ ու Յորք,
Ինձ մեղադրեք, եթե կարող եք
Կամ հաստատեք, որ իմ խոսքերը իրավացի են:

ՍԵՖՈԼԿ

Ձերդ մեծություն, դուք թափանցել եք դուքսի հոգու մեջ:
Եթե թույլ տրվեր ինձ առաջինը արտահայտվելու՝
Կարծում եմ, նույնը պետք է ասեի իմ թագավորին:
Արևս վկա. ամուսնո՛ւ դրդմամբ
Դքսուհին սարքեց դավն հրեշային:
Ասենք, թե Հեմֆրու մասը խառը չէ,
Բայց մեծարելով ծագումն իր բարձր.
Չէ՞ որ նա գահի ժառանգն է հաջորդ,
Այդ սնապարծը իր կնոջն անմիտ՝ կդրդեր, որ նա
Ստոր միջոցով մեր թագավորի մահը պատրաստե:
Փախի՛ր այն ջրից, որ չի աղմկում,
Գիտցիր, մունջ կատուն շատ մուկ է բռնում,
Բնավ չի հաչում, երբ մտնում է աղվեսը գառին:
Ո՛չ, ո՛չ, վեհապետ, դուքսը մութ մարդ է,
Լեցուն է նրա սիրտը նենգությամբ:

ԿԱՐԴԻՆԱԼ

Մի՞թե, օրենքին հակառակ՝ նա չէր
Անսովոր մահով պատժում այն մարդկանց,
Ովքեր աննշան մեղք էին գործում:

ՅՈՐՔ

Մի՞թե երբ դուքսը խնամակալ էր,
Մեծ գումար չառավ իր պետությունից,
Որպեսզի վարձ տար զորքին Ֆրանսիայում, բայց այն չուղարկեց,
Որի պատճառով ընդվզում էին քաղաքներն հաճախ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ի՞նչ են այս բոլոր չնչին մեղքերը
Այն հանցանքների համեմատությամբ, որ դեռ անհայտ են,
Բայց ժամանակը կհայտնաբերի դրանք Հեմֆրու մեջ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ազնիվ իշխաններ, գովելի է ձեր ներքին մղումը,
Երբ դուք ուզում եք այն փուշը պոկել,
Որ կարող է մեր ոտքն արյունոտել:
Բայց, խղճի մտոք, այնպես ազնիվ է
Մեր Գլոստերը արքայի հանդեպ,
Որ կարծես լինի մի անմեղ գառնուկ կամ թե աղավնի:
Դուքսն առաքինի ու բարի մարդ է, հազիվ թե չար բան
Մտքով անց կենա կամ թե իմ մահը թաքուն պատրաստե:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Չկա ավելի վտանգավոր բան, քան թե այդ սիրո վստահությունը:
Կարծո՞ւմ ես անմեղ աղավնի է նա, այլոց փետուրն է նրան սքողել:
Անմեղ գառնո՞ւկ է: Օ՜, նրա մորթին փոխ է առնված,
Քանզի բնությամբ նա անկուշտ գայլի ախորժակ ունի:
Չի՞ կարող արդյոք խաբեբա մարդը կրել մի դիմակ:
Ա՜խ, տեր իմ, զգո՜ւյշ, մեր բարօրությունն
Ասում է՝ պետք է սանձել թշնամուն:

Մտնում է Սոմերսետը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Արևշատություն տիրոջն իմ վսեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարով ես եկել, իշխան Սոմերսետ, ի՞նչ լուր Ֆրանսիայից:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ձեր ամբողջ տիրույթն այդ հողի վրա
Դուք կորցրեցիք: Ամեն ինչ կորա՛վ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վատ լուր ես բերել, իշխան Սոմերսետ, սակայն եղիցի կամքը աստծո:

ՅՈՐՔ

(Առանձին) Ավա՛ղ, վատ լուր է նաև ինձ համար,
Մեծ հույսեր էի կապում նրա հետ,
Ինչ խոստանում է Անգլիան պտղաբեր:
Այսպես խամրում է կոկոն ծաղիկս,
Իսկ տերևներս թրթուրն է ուտում.
Բայց ես կշտկեմ իմ գործը շուտով,
Կամ թե դամբարան ես կկառուցեմ իմ փառքի համար:

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Ձեզ կյանք բախտավոր, իմ տեր ու արքա,
Ներեցեք, որ ես ուշացա այսքան:

ՍԵՖՈԼԿ

Ո՛չ, ո՛չ, Գլոստեր, չափից ավելի դու շուտ ես եկել
Ու թե չես դարձել ավելի ազնիվ, քան առաջ էիր,
Քեզ կալանում եմ. դավաճանել ես պետությանը մեր:

ԳԼՈՍՏԵՐ

Սեֆոլկ, կալանքով ինձ չես զրկի,
Երբեք չես տեսնի դեմքս այլայլված,
Հեշտ չէ անաղարտ սիրտն ահաբեկել,
Վճիտ աղբյուրը կարող է պղծվել.
Բայց ես տիրոջս իմ չեմ դավաճանի.
Ո՞վ կարող է ինձ մեղքի մեջ գցել, ո՞րն է հանցանքս:

ՅՈՐՔ

Ասում են, երբ դու հովանի էիր,
Կաշառք ես առել ֆրանսիացիներից և զինվորների վարձը չես տվել:
Դրա պատճառով արքան կորցրեց ամբողջ Ֆրանսիան:

ԳԼՈՍՏԵՐ

Ասո՞ւմ են... Սակայն ովքե՞ր են դրանք:
Երբեք չեմ կորզել վարձը զինվորի,

Նույնիսկ մի պենի կաշառք չեմ առել:
Աստված է վկա, թե ինչպես էի
Գիշերներն անքուն ես անցկացնում,
Որ բարգավաճեր հայրենի Անգլիան:
Թե շորթել եմ ես իմ թագավորից նույնիսկ մի պենի.
Կամ յուրացրել անօրեն մի բան,
Թող կանգնեցնե՛ն ինձ դատի առաջ:
Ո՛չ: Իմ օրինական հատուկ պաշարից ես բաժին տվի պահակազորին,
Որ ժողովրդին հարկերից փրկեմ,
Եվ չխնդրեցի ոչ մի հատուցում:

ԿԱՐԴԻՆԱԼ

Միլորդ, կարիք կա՞ այդքան շատ խոսել:

ԳԼՈՍՏԵՐ

Ես ճիշտ եմ ասում. Աստված, ինձ օգնիր:

ՅՈՐՔ

Ասում են, երբ դուք հովանի էիք,
Հանցագործներին պատժելու համար կյանքի կոչեցիք տանջանքի ձևեր.
Եվ ամենուրեք Անգլիան հորջորջվեց բռնության երկիր:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց դուք լավ գիտեք, որ այդ ժամանակ
Իմ միակ մեղքը իմ գթությունն էր:
Ես մեղապարտի արցունք տեսնելիս՝ մեղմանում էի,
Նա աղոթքներով իր մեղքն էր քավում:
Ու թե չի դարձել նա մարդասպան
Կամ պիղծ ոճրագործ, որ ճամփին ազատ մարդ է կողոպտում,
Այդ նրանից է, որ ես չեմ տվել արժանի պատիժ:
Իրավ, մարդասպան ես հորջորջվեցի,
Քանզի ավելի բարբարոս չեղա, քան մի ոճրագործ:

ՍԵՖՈԼԿ

Այս մեղքերն հեշտ է արդարացնել:
Բայց ձեզ, իմացե՛ք, ամբաստանում են
Ավելի ծանր հանցանքների մեջ,
Որոնք չեք կարող հեշտությամբ հերքել:
Նորին մեծության անունից ես արդ կալանում եմ ձեզ
Ու մինչև դատը ձեզ պիտի հսկե լորդ կարդինալը:

Հորեղբայր Գլոստեր, ես հավատում եմ,
Որ կփարատեք կասկածները այդ,
Իմ խիղճն ասում է, որ անմեղ եք դուք:

ԳԼՈՍՏԵՐ

Ա՜խ, վտանգավոր օրեր են, տեր իմ:
Առաքինությունն այստեղ խեղդված է փառասիրությամբ,
Գութն ատելության ձեռքով է խաչված,
Կեղծ երդումներն են իշխում ամենուր,
Արդարությունն է երկրից աքսորված:
Գիտեմ, կյանքիս դեմ դավեր են նյութվում:
Եթե իմ մահով ես կարող եմ տալ հարազատ երկրիս բախտավորություն,
Եվ կապանք դնել բռնության վրա,
Ապա կընդունեմ մահն հոժարությամբ:
Բայց մահս նրանց խաղի նախերգն է,
Քանզի բյուր կյանքեր, որ դեռ չեն զգում վտանգն ահավոր,
Չեն կարող նրանց ողբերգությանը հագուրդ պատճառել:
Բոֆորտի կարմիր, փայլուն աչքերը
Գաղտնիքն են հայտնում չարակամ սրտի,
Սեֆոլկի խոժոռ դեմքն ասես լինի բուռն ատելություն,
Նենգ Բուկինգեմը սրտի վրայից
Նախանձոտության բեռն է շպրտում սրամիտ լեզվով.
Իսկ մռայլ Յորքը, որ հանդգնաբար ձգտում է լուսին,
Ում ձեռքն համարձակ ես ետ վանեցի.
Ուղղում է իմ դեմ կեղծ մեղադրանք.
Դուք էլ, թագուհի, այլոց հետ մեկտեղ,
Առանց պատճառի ինձ պարսավեցիք,
Եվ ձեր լավագույն ջանքն ի գործ դրիք,
Որ թշնամանա ինձ հետ իմ արքան, իմ բարի արքան:
Այո՛, բոլորդ եք այդ բանը խորհել, խորհել միասին.
Ինքս լուրն առա գաղտնի ժողովի.
Ուզում եք անմեղ կյանքս խորտակել:
Պետք չէ կեղծ վկա, որ անձիս հանդեպ վճիռ արձակի,
Ոչ էլ դրուժան, որ բազմապատկի իմ հանցանքները.
Քանզի իմաստուն առածն ասում է՝
Շանը ծեծելու փայտ միշտ կճարվի:

ԿԱՐԴԻՆԱԼ

Օ՛, իմ վեհապետ, նա անտանելի չար լեզու ունի.

Երբ այն մարդիկ, որ արքայական ձեր անձն են հսկում
Պավանանության փառքում դաշույնից, առար մատանիչի կատարությունից,
Խոսքեր են լսում իրենց հասցեին հանդիմանության ու կշտամբանքի,
Իսկ հանցագործի լեզուն չի սանձվում,
Պարզ է, արքային քիչ–քիչ կատաչեն:

ՍԵՖՈԼԿ

Միթե բազումում չհանդիմանե՞ց
Համառությամբ հյուսված անարգ բառերով,
Երբ նա է մեզ փառքում հրահրել, որ մենք զրպարտենք դուքս Գլոստերին,
Որպեսզի նրան զրկի իր դիրքից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Թող հանդիմանել պարտվողն իրեն:

ԳԼՈՒՍՏԵՐ

Հպարտությունից դուք շատ ավելի խոսքեր ասացիք: Այո, պարտվեցի:
Նզո՛վք հաղթողին, զի խաբեությամբ այս խաղը տարավ:
Իսկ նման պարտվողն իրավունք ունի ձեզ կշտամբելու:

ԲՈՒԿԻՆԳՀԵՄ

[illegible] է, միտքը նա խեղաթյուրել և ամբողջ օրը մեզ պահել այստեղ:
Միլորդ կարդինալ, տարե՛ք ձեր գերուն:

ԿԱՐԴԻՆԱԼ

Հե՛յ, տարեք դուքսին և խստիվ հսկեք:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ա՛խ, բարի Հենրի, դեռ քո մարմինը ամուր չի կանգնած
Ոտքերիդ վրա, բայց դու նետում ես քո անթացուպը:
Ավա՜ղ, քո հովվին խլում են քեզնից,
Գայլերն են ոռնում, որ քեզ հոշոտեն,
Ա՛խ, երանի թե վախս զուր լիներ, բայց չեմ կասկածում,
Իմ բարի արքա, ես սարսափում եմ կորստիդ համար:

Գնում է Գլոստերը պահակների ուղեկցությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչ ձեզ թվում է ավելի խոհեմ, այն էլ կատարեք,
Իհարկե այնպես, ինչպես եթե մենք լինեինք այստեղ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ. Մի՞թե, տեր իմ, ուզում եք լքել խորհրդարանը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո՛, Մարգարիտ, սիրտս է վշտով լի,
Նրա հեղեղն է հորդում աչքերս,
Վիշտն է պաշարել իմ մարմինն ամբողջ.
Ինչը կարող է վշտից ավելի ցավատանջ լինել։
Հորեղբայր Հեմֆրի, ես դեմքիդ վրա
Տեսնում եմ պատկերն առաքինության,
Հավատարմության ու ճշմարտության։
Իմ բարի Հեմֆրի, մի՞թե եկել է այն ժամը, որ ես
Պետք է կասկածեմ անկեղծությանդ։
Ա՜խ, ի՞նչ սև աստղ է նախանձում դիրքիդ,
Որ նշանավոր այս իշխանները, իմ Մարգարիտը
Քո անմեղ կյանքի մահն են որոնում։
Չար բան չես արել նրանցից մեկին։
Ա՜խ, նրանք տարան իմ բարի Հեմֆրուն,
Ինչպես տանում է մսագործն հորթին և հարվածում է,
Երբ նա շեղվում է սպանդանոցի արնահեղ ճամփից։
Եվ ինչպես կովն է տխուր վազ տալիս,
Նայում իր անմեղ հորթի ետևից,
Եվ նա չի կարող ոչ մի բան անել,
Բացի հորթուկի կորուստն ողբալուց,
Այսպես էլ ես եմ իմ անօգնական
Արցունքով ողբում անբախտ Գլոստերին
Եվ տխուր նայում նրա ետևից,
Բայց ես չեմ կարող հորեղբորս օգնել,
Քանզի ուժեղ են երդվյալ թշնամիք։
Բախտդ կսգամ և հառաչելով կասեմ աշխարհին՝
Ով է մատնիչը, բայց ո՛չ Գլոստերը։

Գնում է։

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ազնիվ իշխաննե՛ր, պաղ ձյունն է հալվում
Արեգակի տաք ճառագայթներից։
Եվ Հենրին պաղ է մեծ գործի հանդեպ,
Նա լի է անմիտ գթասիրությամբ,
Նրան խաբում է կեղծավոր դուքսը, ինչպես լաց լինող
Կոկորդիլոսը, որ հառաչելով ծուղակ է շինում
Իրեն կարեկցող ճամփորդի համար,

Կամ՝ ինչպես փայլուն խատուտիկ օձը,
Որ թավալվելով ծաղկավետ դաշտում,
Մանկանն է խայթում, իսկ նա կարծում է,
Թե օձն է բարի իր գեղեցկությամբ:
Ազնիվ իշխաննե՛ր, ինձ հավատացեք,
Եթե չլիներ ձեր բազումից էլ մեկը խելացի.
Իսկ ես այդ գործում համարում եմ ինձ բավական խելոք.
Աշխարհը դարձյալ պետք է ազատվեր այս Գլոստերից.
Եվ մենք՝ այն վախից, որ նա լցնում էր մեր սիրտն ու հոգին:

ԿԱՐԴԻՆԱԼ

Եվ դա կլիներ ամենից խոհեմ,
Բայց մահվան համար մեզ հարկավոր է ինչ-որ պատրվակ,
Նա պետք է պատժվի օրենքի ուժով:

ՍԵՖՈԼԿ

Բայց ես կարծում եմ, որ դա չէր լինի խոհեմություն.
Արքան կջանա նրա կյանքը փրկել,
Գուցե նույն բանն է ժողովուրդն ուզում:
Նրան պատժելու մեղադրանքը չափից թեթև է,
Միայն կասկածն է մեզ առաջնորդում:

ՅՈՐՔ

Ուրեմն, ելնելով այդ բանից, Սեֆոլկ,
Դու չես կամենում Գլոստերի մահը:

ՍԵՖՈԼԿ

Ա՜խ, Յորք, աշխարհում չկա մի այլ մարդ, որ ինձ պես ուզեր:

ՅՈՐՔ

(Առանձին) Յորքը նրա մահն ուզելու բազում
Պատճառներ ունի, քան մեկ ուրիշը:
Բայց լորդ կարդինալ և դուք՝ լորդ Սեֆոլկ,
Ձեր կարծիքն ասեք ինձ անկեղծորեն.
Գլոստերին թողնել Հենրու հովանի, մի՞թե նույնը չէ՝
Ինչ քաղցած արծվին պաշտպան են կարգում,
Որ նա պահպանի անմեղ վառեկին՝ գիշատիչ ցինից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրեմն, թշվառ վառեկը բնավ չի կարող խույս տալ վերահաս մահից:

ՍԵՖՈԼԿ

Այո՛, տիրուհի: Ի՞նչ անմտություն,
Երբ պահ են տալիս հավնոցն աղվեսին,
Նա, ով ճենգամիտ սպանության մեջ ամբաստանյալ է,
Իզուր է կարծում, որ անպատիժ է մեղքը մնալու,
Քանզի իր միտումն ի գործ չի դրվել:
Ո՛չ, ո՛չ, թող մեռնի՛, չէ՞ որ աղվես է,
Եվ իր բնությամբ՝ հավին թշնամի:
Այո՛, թող մեռնի, քանի դեռ երախն արնով չի ներկվել:
Չէ որ այսպիսի դիտավորություն Գլոստերն ուներ իմ տիրոջ հանդեպ:
Կարիք էլ չկա երկար մտածել,
Թե ինչպես պետք է նրան սպանել, ինչ ձև էլ ընտրենք՝
Խարամանկություն, որոգայթ, դարան, կամ ինչ ժամանակ՝
Քուն թե արթմնի, այդ միևնույն է, միայն թե մեռնի,
Քանզի խաբելուց այն մարդն է շահում, ով առաջինն է որոշել խաբել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Երիցս ազնիվ, փառապանծ Սեֆոլկ, դու խիզախաբար արտահայտվեցիր:

ՍԵՖՈԼԿ

Ո՛չ խիզախաբար, քանզի դեռևս ոչինչ չի արված,
Հաճախ գործն ու խոսքն իրար չեն բռնում,
Բայց համաձայն է սիրտս լեզվիս հետ,
Քանզի այս սխրանքն արժե գովեստի,
Եվ պետք է, փրկել իմ վեհապետին անարգ թշնամուց:
Մի բառ ասացեք, և ես կլինեմ այդ հոգևոր դուքսին խոստովանահայր:

ԿԱՐԴԻՆԱԼ

Բայց ես կուզեի, որ նա շուտ մեռներ,
Քան կստանձնեիք խոստովանահոր դերը սրբազան:
Թե համաձայն եք և հավանություն տալիս եք գործին,
Կգտնեմ ինքս ձեռներեց մի մարդ:
Այսպես եմ փրկում կյանքը իմ տիրոջ:

ՍԵՖՈԼԿ

Ահա՛ իմ ձեռքը, գործն արժանի է ի կատար ածել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ես նույնն եմ ասում:

ՅՈՐՔ

Ես էլ: Եվ հիմա, երբ մենք երեքով այսպես ենք վճռում,

Ի՞նչ փույթ, թե կուզեն մեր վճիռն հերքել:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մեծն իշխաններ, ես Իռլանդիայից եկել եմ այստեղ,
Որպեսզի հայտնեմ ապստամբների ընդվզման մասին,
Սրի են քաշում անգլիացիներին:
Օգնեք ժամ առաջ և սանձեք նրանց մոլեգնությունը,
Քանի դեռ վերքը անբուժելի չէ:
Երբ նոր է, վերքը՝ հեշտ կապաքինվի:

ԿԱՐԴԻՆԱԼ

Վերքը հայցում է պատշաճ օգնություն,
Ի՞նչ խորհուրդ կտաք այս ծանր գործում:

ՅՈՐՔ

Լորդ Սոմերսետին ուղարկեք այնտեղ որպես փոխարքա,
Այդ գործն ուզում է փորձված կուսակալ,
Իսկ նա Ֆրանսիայում հաջողակ էր խիստ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Եվ երբ Յորքը՝ իր ողջ հեռատես նրբամտությամբ,
Իմ տեղը լիներ որպես փոխարքա,
Կարծում եմ, այնտեղ երկար չէր մնա:

ՅՈՐՔ

Որ տանո՞ւլ տայի քեզ պես ամեն ինչ:
Ես ավելի շուտ կուզեի մեռնել,
Քան թե կորցրած ամբողջ Ֆրանսիան՝
Վերադառնայի խայտառակության ահագին բեռով:
Ցույց տուր մի սպի քո մաշկի վրա.
Քաջերն են կրում և՛ վերք, և՛ զրահ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Կայծից մոլեգին հրդեհ կբռնկի,
Եթե վառելիքն ու քամին նրան կերակուր բերեն:
Արդ. բավ է, Յորք իմ: Խաղաղվի՛ր և դու, անգին Սոմերսետ,
Քո բախտից է, Յորք, եթե լինեիր այնտեղ փոխարքա,
Ո՜. կարող էին գործերդ ավելի անհաջող գնալ:

ՅՈՐՔ

Ոչնչությունից ավելի՞ վատթար: Ամո՛թ բոլորիս:

ՍՈՄԵՐՍԵՏ

Քեզ համա՞ր ամոթ, որ շատ ես ուզում:

ԿԱՐԴԻՆԱԼ

Վատ չի լինի, Յորք, որ բախտդ փորձես,
Վայրի կեռները զենք են վերցրել
Եվ հողն են ներկում անգլիացու արյամբ.
Չէի՞ր կամենա քեզ հետ Իռլանդիա տանել մի ջոկատ,
Որ խիստ ընտրությամբ մենք հավաքել ենք կոմսություններից,
Եվ փորձել քո բախտն այդ պատերազմում:

ՅՈՐՔ

Կփորձեմ, միլորդ, երբ հաճենա իմ վեհապետը:

ՍԵՖՈԼԿ

Մեր կամքն է նրա գործակցության մեջ:
Ինչ որոշում ենք՝ հաստատում է նա:
Ուրեմն, ազնիվ Յորք, ձեռք զարկ այս գործին:

ՅՈՐՔ

Ես գոհ եմ: Բերեք իմ զինվորներին,
Մինչ այդ, կհոգամ գործերս բոլոր:

ՍԵՖՈԼԿ

Այդ ծանրությունը կառնեմ իմ վրա.
Բայց այժմ դառնանք նենգամիտ Հեմֆրուն:

ԿԱՐԴԻՆԱԼ

Բա՛վ է այդ մասին: Ես այդ գործն այնպես գլուխ կբերեմ,
Որ նա այլևս մեզ չխանգարի: Իշխաններ, գնա՛նք.
Օրը մթնում է, բայց ես, լորդ Սեֆոլկ, այդ գործի մասին
Դեռևս քեզ հետ խոսելիք ունեմ:

ՅՈՐՔ

Երկու շաբաթ անց՝ պետք է սպասեմ
Ես Բրիստոլում իմ զինվորներին,
Որպեսզի նավով Իռլանդիա տանեմ:

ՍԵՖՈԼԿ

Ես կհետևեմ այդ գործին, միլորդ:

Գնում են բոլորը, բացի Յորքից:

ՅՈՐՔ

Այժմ կամ երբեք, կոփիր վեհերոտ քո մտքերը, Յո՛րք,

Կասկածդ փոխիր վճռականությամբ.
Ինչին ձգտում ես՝ դու նրան հասիր, կամ ինչպես որ կաս
Հանձնվիր մահվան: Կյանքն է անարժեք,
Երբ դու չես հասնում քո նպատակին:
Թող գունատ դեմքով վախը բնակվի անտոհմ մարդկանց մեջ
Եվ արքայական սրտում չգտնի ոչ մի հանգրվան:
Գարնան հորդառատ անձրևի նման
Գալիս թափվում են արքա դառնալու մտքերն հոգուս մեջ,
Ուղեղս ավելի փութաջանորեն, քան աշխույժ մի սարդ,
Հյուսում է արագ՝ ոստայն թշնամու:
Շա՜տ լավ. իշխաննե՛ր, խորամանկությամբ
Ինձ արտաքսում եք գործիս հետ մեկտեղ.
Բայց վախենում եմ, որ տաքացրած ձեր կրծքի օձը՝
Վաղուց անոթի, ձեր սիրտը խայթի:
Զուր է ինձ պակաս՝ տալիս եք զինվոր,
Եվ ես հաճությամբ վերցնում եմ զայն:
Բայց դուք իմացեք, որ խելագարի ձեռքն եք զենք դնում:
Ես Իռլանդիայում իմ հզոր գունդը կկերակրեմ,
Իսկ Բրիտանիայում կբարձրացնեմ դաժան փոթորիկ,
Որ բյուր հոգիներ ուղարկի երկինք կամ դեպի դժոխք:
Եվ չի դադարի այս սև փոթորկի մոլեգնությունը,
Քանի դեռ ոսկյա պսակ չեմ կրել իմ գլխի վրա,
Եվ փառավորյալ արեգակի վառ շողերի նման
Չեմ մեղմացրել ցասումը մրրկի:
Իմ նպատակին հասնելու համար՝
Քենտում բնակվող Ջոն Քեդ անունով
Մի խիստ հանդուգն մարդու գնեցի,
Որ խռովություն կարող է գցել,
Իրեն կոչելով լորդ Ջոն Մորտիմեր:
Տեսել եմ, ինչպես այդ համառ Քեդը
Դիմադրում էր կեռներին վայրի,
Կռվում էր բորբոք, մինչև այն ատեն, երբ ոզնու սուր-սուր
Փշերի նման սլաքներն էին ցցվում ազդրերին:
Ու երբ, վերջապես, նրան փրկեցին, տեսա, թե ինչպես
Նա պարեց, կարծես վայրի մի մավր էր.
Ուժգին ցնցելով արնոտ նետերը զանգակների պես:
Նա քանի անգամ գզգզված մազով կեռնի շոր հագած՝
Զրույց է արել մեր թշնամու հետ,

Նորից աննկատ եկել է ինձ մոտ,
Բերելով նրանց դավերի մասին ճիշտ տեղեկություն:
Եվ այդ սատանան կարող է այստեղ ինձ փոխարինել,
Իր խոսացվածքով, դեմքով ու քայլքով
Նա շատ նման է արդեն վախճանված Ջոն Մորտիմերին:
Այսպես կիմանամ միտքն հասարակաց և այն, թե ինչ են
Նրանք մտածում իմ իրավունքի ու իմ տան մասին:
Ասենք, թե հանկարծ Քեդը բռնվեց. բայց ո՛չ մի տանջանք,
Ո՛չ մի կեղեքում, որ պետք է նրան խոր ցավ պատճառի,
Չի հարկադրի, որ խոստովանի, թե ես եմ դրդել. որ զենք վերցնի:
Իսկ եթե նրա գործը հաջողվի.
Ես չեմ կասկածում. այն դեպքում զորքով ես տուն կդառնամ,
Որ այդ սինլքոր, փուչ արարածի ցանածը հնձեմ. չէ՞ որ իմ հերթն է.
Քանզի կարծում եմ՝ չկա Գլոստեր.
Մեկուսացված է Հենրին՝ իմ տերը:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Բերիի Սենտ Էդմոնդսի աբբայություն: Հյուրասենյակ պալատում:

Ծածուկ մտնում են մի քանի մարդասպան, որոնք սպանել են դուքս Գլոստերին.

Ա ՄԱՐԴԱՍՊԱՆ

Դե՛հ, վազիր դեպի իշխան Սեֆոլկը և հայտնիր նրան,
Որ այն աշխարհը ճամփեցինք դուքսին, ինչպես ասել էր:

Բ ՄԱՐԴԱՍՊԱՆ

Օ՜, ի՛նչ արեցինք: Դու լսե՞լ էիր,
Որ մարդ կարող էր այսպես երջանիկ ավանդել հոգին:

Ա ՄԱՐԴԱՍՊԱՆ

Ահա գալիս է իշխան Սեֆոլկը:

Մտնում է Սեֆոլկը:

ՍԵՖՈԼԿ

Տղաներ, գործը գլուխ բերեցի՞ք:

Ա ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այո՛, բարի տեր. նա շունչը փչեց:

ՍԵՖՈԼԿ

Հրաշալի՜ է: Գնա՛նք իմ տունը.
Այս խիստ համարձակ արարքի դիմաց պետք է հատուցեմ:
Արքան ու բոլոր իշխաններն այժմ հեռու չեն մեզնից:
Կարգի բերեցի՞ք դուքսի մահիճը,
Ամեն ինչ արի՞ք դուք տեղը տեղին, ինչպես ասել եմ:

Ա. ՄԱՐԴԱՍՊԱՆ

Այո՛, բարի տեր:

ՍԵՖՈԼԿ

Չքվե՛ք այստեղից:

Շտապ դուրս են գալիս մարդասպանները:
Շեփորներ: Մտնում են թագավորը, թագուհին, կարդինալ Բոֆորտը,
Սոմերսետը, իշխաններ և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնացե՛ք, կանչեք մեր հորեղբորը.
Թող անմիջապես մեզ ներկայանա.
Ասեք, որ այսօր մենք որոշել ենք
Հարցուփորձ անել, թե նա մեղք ունի:

ՍԵՖՈԼԿ

Իսկույն կկանչեմ, իմ բարի արքա:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տյա՛րք իմ, ձեր տեղը գրավե՛ք իսկույն, և խնդրում եմ ձեզ,
Որ մեր հորեղբոր նկատմամբ լինեք զգաստ, արդարացի
Երբ նրա հանցանքն ակներևաբար մեզ պարզ կդառնա,
Այնժամ կարող եք վճիռ արձակել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Թող աստված չարի գործը խափանի
Եվ ազնիվ մարդուն ազատի պատժից.
Աստված տա, ամեն կասկած փարատվի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Շնորհակալությո՛ւն, բարի՛ Մարգարիտ, խոսքերիդ համար:

Մտնում է Սեֆոլկը:

Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես գունատ,

Ինչո՞ւ ես դողում. ի՞նչ կա, ի՞նչ եղավ,
Որտե՞ղ է, Սեֆո՛լկ, մեր հորեղբայրը:

ՍԵՖՈԼԿ

Իր մահճում մեռած... Գլոստերը չկա՜...

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Տեր մի՛ արասցե, այդ ի՞նչ ասացիր:

ԿԱՐԴԻՆԱԼ

Աստծո դատաստանն անքննելի է: Գիշերն երազիս
Դուքսն համրացել էր, չէր կարողանում մի բառ շշնջալ:

Թագավորն ուշագնաց է լինում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ եղավ, տեր իմ, օգնե՛ք, իշխաննե՛ր, մեռնո՜ւմ է արքան:

ՍՈՄԵՐՍԵՏ

Շտապ բարձրացրեք նրա մարմինը ու քիթն ոլորեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հե՜յ, վազե՛ք, եկե՛ք, բա՛ց աչքդ, Հենրի:

ՍԵՖՈԼԿ

Ուշքի է գալիս, համբերեք մի քիչ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Աստվա՜ծ երկնային...

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչպե՞ս ես զգում, ողորմած տեր իմ:

ՍԵՖՈԼԿ

Սփոփվե՛ք, տեր իմ, սփոփվե՛ք, Հենրի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սեֆո՞լկն է փորձում ինձ մխիթարել.
Մի՞թե նա չեկավ, որ ագռավի պես վրաս կռավեր
Ու չարագուշակ ձայնով կողոպտեր ուժը իմ կյանքի.
Եվ նա կարծում էր, որ ցախսարեկի դայլայլիկներով
Եվ դատարկ սրտի մխիթարությամբ
Կարող է խեղդել իր ձայնն ագռավի:
Չե՛ս կարող երբեք անուշ խոսքերով թույնը թաքցնել,

Ես քեզ ասում եմ՝ ձեռքդ հեռո՛ւ տար, քանզի այդ ձեռքը
Ավելի շատ է ինձ վախեցնում, քան խայթոցն օձի:
Դու՝ բանբեր մահվան, չքվի՛ր իմ աչքից:
Ակնագնդերիդ խորքում ցոլում է արնոտ բռնության
Դաժանությունը, որն սպառնում է ամբողջ աշխարհին:
Ա՜խ, ինձ մի՛ նայիր. աչքերդ են խոցում,
Բայց ո՛չ, մի՛ գնա. մոտ ե՛կ, բասիլիսկ.
Եվ քո հայացքով սպանիր զոհիդ:
Մահվան շուքի տակ ես պիտի գտնեմ մխիթարություն,
Ինձ համար կյանքը կրկնակի մահ է, քանի որ մեռավ իմ հորեղբայրը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչո՞ւ եք, տեր իմ, այդպես կշտամբում իշխան Սաֆոլկին:
Թեպետև դուքսն էր նրա թշնամին.
Բայց նա իսկական քրիստոնյայի պես սգում է նրան.
Գալով ինձ՝ թեկուզ բարեկամս չէր,
Թե կարող էին հորդ արցունքներս, մռմռոցով հոգոց
Հեկեկանքները կամ թե արնաքամ հառաչանքներս
Նորից ետ բերել նրա կյանքն ազնիվ,
Ապա կուզեի ողբից կուրանալ, հառաչանքներից
Եվս տկարանալ և արյունահեղձ հեծեծանքներից
Թանթրվենիկի պես սաստիկ գունատվել:
Ի՞նչ պետք է խորհի աշխարհն իմ մասին.
Հայտնի է, որ մենք բարեկամ չէինք: Նախանձոտ մարդիկ
Կարող են ասել, որ ես եմ դուքսի մահվան պատճառը.
Եվ բամբասանքի չար լեզուներն ինձ կզրպարտեն,
Իսկ արքայաշուք ապարանքները
Կլցվեն անձս նշավակելու կշտամբանքներով:
Տե՛ս, ի՞նչ շահեցի ես նրա մահից: Վա՜յ ինձ, անբախտի՛ս,
Լինել թագուհի և թագադրվել խայտառակությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վա՜յ ինձ, Գլոստեր. անբա՜խտ հորեղբայր:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Վա՜յ ինձ. ավելի ես անբախտ եղա, քան հորեղբայրը:
Ի՞նչ: Հեռանո՞ւմ ես իմ մոտից, տեր իմ,
Եվ թաքցնում ես քո հայացքն ինձնից.
Բայց ես գարշելի բորոտ չեմ, նայի՛ր,
Մի՞թե չես լսում, խուլ ես իժի պես,

Օ՜, թունոտ դարձիր դու նրա նման և քո անպաշտպան կնոջն սպանիր:
Մի՞թե քո բոլոր ուրախություններն իր հետ գերեզման Գլոստերը տարավ.
Ուրեմն, դու ինձ չե՞ս սիրել երբեք:
Դու նրա համար արձան կառուցիր ու երկրպագիր.
Իսկ իմ պատկերից գինետան շքեղ ցուցանակ շինիր:
Այդ բանի համար քիչ մնաց, տեր իմ, որ խորտակվեի փոթորկոտ ծովում,
Երբ երկու անգամ անհաշտ քամին իմ նավը քշեց
Անգլիայի ափից դեպի հակառակ՝ տունն իմ հայրենի:
Եվ մի՞թե սա չէր բախտը գուշակում,
Որ քամին ասեր. «Մի՛ փնտրիր երբեք բույնը կարիճի
Եվ ոտք մի դնի անհյուրընկալ, բիրտ հողի վրա»:
Ա՜խ. ի՞նչ արեցի ես այն ժամանակ, երբ ոչ մի քամու՝
Նզովքի խոսքեր շաղ տվի բարի քամու հասցեին
Եվ մեկ էլ նրան՝ ով ազատ բաց թողեց քամուն պղնձյա քարանձավներից:
Խնդրեցի, որ ինձ այդ քամին տանեն ափերն Անգլիայի.
Կամ թե հարվածեն մի խոժոռ ժայռի: Բայց. այնուհանդերձ.
Էոլը չուզեց, որ ինքը դառնա մարդասպան.
Զիջելով քեզ այդ գործն ամոթաբեր:
Ո՜հ, ալեծածան, գեղեցիկ ծովը մերժեց ինձ տանել
Իր մութ անդունդը, գիտենալով. որ քո դաժան սրտով
Ինձ խեղդելու ես ցամաքի վրա, արցունքի ծովում:
Սուր ժայռը սեղմվեց ներքևում ու լույծ ավազների մեջ,
Եվ չկամեցավ յուր կոշտ քարերով մարմինս ջարդել.
Որպեսզի սիրտդ, ավելի կարծր, քան ժայռն ապառաժ,
Ջարդեր իմ կյանքը քո ապարանքում:
Երբ փոթորիկը քո ափերից մեզ քշում էր հեռու,
Ես կանգնած էի մեծ նավի վրա
Ու նայում էի, թե ինչպես էին կորչում կավճափայլ զահավանդները,
Իսկ երբ մութ երկինքն սկսեց խլել
Իմ ակնակառույց տեսողությունից երկրիդ պատկերը.
Պոկեցի մանյակն իմ պարանոցից.
(Սիրտս էր ագուցված ադամանդներով)
Ու լուռ նետեցի երկրիդ ուղղությամբ:
Ծովը փոթորկոտ ընդունեց ընծան, և ես ցանկացա,
Որ ծովի նման քո կուրծքն ընդուներ իմ սիրտը անկեղծ:
Եվ ես կորցրի գեղեցիկ Անգլիան,
Բայց իմ աչքերին ավելի հրաման, որ անմիջապես
Հեռանեն սրտիս. և ես կոչեցի նրանց կույր աչքեր,

Քանզի կարծրին տեսքը Ալբիոնի: Ես հաճախ էի խնդրում Սեֆոլկին,
Որ նստեր ինձ մոտ ու իր գեղեցիկ լեզվով կախարդեր
(Ինչ էլ քո դժբախտ անկայունության գործիք ծառայեց),
Ինչպես Ասկանիոսը, երբ խելագարվող Դիդոնին պատմեց
Իր հոր սխրանքը, թե ինչպես այդ մարդն հրդեհեց Տրոյան:
Մի՞թե նրա պես չեմ խելագարվել և մի՞թե նենգ չես նրա հոր նման:
Ավա՜ղ, չեմ կարող այլևս համբերել: Մեռի՛ր, Մարգարիտ,
Հենրին տխրում է, որ ապրում ես դեռ:

Ձայներ բեմի ետևից: Մտնում են Վորվիկը և Սոլսբերին:
Ժողովուրդը խռնվում է դռների մոտ:

ՎՈՐՎԻԿ

Լուրեր են շրջում, հզոր վեհապետ,
Որ սպանել են դավաճանորեն բարի Գլոստերին
Դուքսին Սեֆոլկի ու կարդինալի նենգ դրդումներով:
Ժողովուրդն ասես բույլ մեղուների պարս է զայրացած,
Որ կորցնելով հարազատ մորը, ցիրուցան եղած՝
Անկարգ, անկանոն խայթում է, մարդկանց վրեժով լցուն:
Ես մեղմացրի նրանց կատաղի խռովությունը,
Մինչև որ նրանք ստույգ իմանան պատճառը մահվան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Որ մեռած է նա, իմ բարի Վորվիկ, իրավ է անշուշտ:
Բայց ինչպե՞ս մեռավ, այդ աստված գիտի և ոչ թե Հենրին:
Մտի՛ր սենյակը ու դիտի՛ր նրա մարմինը անշունչ,
Պարզի՛ր, թե ինչու նա հանկարծ մեռավ:

ՎՈՐՎԻԿ

Շատ բարի՛, տեր իմ: Սոլսբերի, մնա՛ բիրտ ամբոխի մոտ,
Մինչև որ դառնամ:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՜, դու դատավոր ամենաբարձրյալ, միտքս ե՛տ մղիր,
Միտք, որ ջանում է հոգուս համոզել,
Որ բռնի ձեռքեր բարձրացել էին Գլոստերի վրա:
Եթե կասկածն իմ ճիշտ չէ, ինձ ների՛ր,
Զի վերջին դատը քեզ է շնորհված:
Ես կուզենայի հազար համբույրով
Տաքացնել նրա շուրթերն անարյուն

Ու դեմքն հեղեղել աղի արցունքի խորունկ օվկիանով.
Որպեսզի սերս շշնջամ նրա համր ու խուլ մարմնին
Եվ իմ մատներով շոշափեմ նրա ձեռքերն անզգա:
Բայց զուր է վշտիս այս աղերսանքը,
Քանզի դիտելով դեմքը հեղեղեն,
Ես պետք է ցավս խիստ բազմապատկեմ:

Մտնում է Վորվիկը: Բերում են մահիճը, որի վրա պառկած է մահացած Գլոստերը:

ՎՈՐՎԻԿ

Ե՛կ այս կողմ, տեր իմ, նայի՛ր մարմնին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Որպեսզի տեսնեմ, թե որքան խորն է իմ գերեզմա՞նը:
Նրա հոգու հետ թռա՞ն գնացին երկրային բոլոր սփոփանքներս.
Քանզի նայելիս՝ տեսնում եմ կյանքս մահվան վտանգում:

ՎՈՐՎԻԿ

Տեր իմ, ինչպես որ ճշմարտություն է՝
Հոգուս ձգտումը ապրել հավիտյան այն Արքայի հետ,
Որ ընդունել է մարդկային կերպար,
Որպեսզի փրկի իր Հոր բարկացայտ անեծքներից մեզ,
Այդպես էլ, իրա՛վ, հավատում եմ ես,
Որ մի բռնի ուժ ձեռք է բարձրացրել երիցս ազնիվ մի դուքսի վրա:

ՍԵՖՈԼԿ

Խիստ հանդիսավոր, ահարկու երդում.
Ի՞նչ ապացույցներ Վորվիկը ունի այս երդման համար:

ՎՈՐՎԻԿ

Նայի՛ր, թե արյունն ինչպես է նրա դեմքը ողողել.
Հաճախ եմ տեսել բնական ձևով մահացած մարդու,
Որ մոխրանման կերպարանք ունի,
Դժգույն է, նիհար և արնաթորույս՝ ամբողջ արյունը հորդել է սիրտը,
Որ մաքառելով գալիք մահվան հետ,
Նրանից ուժ է իզուր աղերսել իր թշնամու դեմ:
Արյունն է սառչում սրտի հետ մեկտեղ
Եվ երբեք նորից չի վերադառնում գեղեցկությունը, շիկնանքն այտերի:
Բայց, նայի՛ր, դուքսի դեմքն է սևացած և արյամբ լեցուն,
Նա չուներ նման դուրս ցցված աչքեր,
Որոնք նայում են խեղդված մարդու պես ահ ու զարզանդով,
Բիզ-բիզ ցցվել են նրա մազերը

Եվ դժվարությամբ լայնացել ռունգերն հոգեվարքի մեջ:
Նայի՛ր, ինչպես է ձեռքերը սրկել, կարծես կովել է
Իր կյանքի համար, բայց բռնի մի ուժ սանձել է նրան:
Նայի՛ր, մազերն են թափված սավանին,
Նրա գեղեցիկ, համաչափ խուզված մորուքն են փետել.
Այնպես կոպտորեն, ինչպես մրրիկն է ամռան բերքն հնձում:
Որ սպանվել է ազնիվ դուքսն այստեղ՝
Այս բոլորն ստույգ ապացույց ունեն:

ՍԵՖՈԼԿ

Բայց ո՞վ է, Վորվիկ, սպանել դուքսին,
Ես հսկում էի դուքս Բոֆորտի հետ նրան թշնամուց,
Իսկ մենք, կարծում եմ, մարդասպաններ չենք:

ՎՈՐՎԻԿ

Բայց դուք երկուսով Գլոստերի երդվյալ թշնամին էիք
Եվ ձեզ էր հանձնված այդ ազնիվ դուքսի հսկողությունը.
Դուք, հավանաբար, բարեկամի պես չեք հսկել նրան,
Կասկածից վեր է, որ նրան այստեղ գտավ թշնամին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք կասկածո՞ւմ եք, որ այս լորդերը
Մեղք ունեն դուքսի անժամ մահվան մեջ:

ՎՈՐՎԻԿ

Երբ թարմ արյան մեջ տեսնես մի երինջ,
Կողքին էլ կանգնած մի բիրտ մսագործ, ձեռքին կացինը,
Պե՞տք է կասկածել, թե ով է մորթել խեղճ անասունին:
Երբ ցինի բնում գտնես մի կաքավ,
Դու կհասկանաս, թե ով է խեղդել անմեղ թռչունին,
Թեպետև ցինը ճախրում է՝ կտցին արյան ոչ մի հետք:
Նման կասկածի առիթ է տալիս ողբերգությունն այս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրեմն, Սեֆոլկ, թե մսագործ ես, ո՞ւր է դանակդ,
Իսկ Բոֆորտը՝ ցին, որտե՞ղ են նրա սուր մագիլները:

ՍԵՖՈԼԿ

Ես քնած մարդուն մորթելու համար դանակ չեմ պահում,
Բայց ահա սուրս՝ սաստիկ քինահույզ, որ ժանգոտվել է պարապ մնալուց.
Նա պետք է մաքրել այն սրտի արյամբ,

Ով զրպարտում է ինձ ոճրագործի կարմրաշառայլ շարախոսությամբ:
Ասա, թե ունես համարձակություն, գոռոզ լորդ Վորվիկ,
Որ ես մեղք ունեմ դուքսի մահվան մեջ:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ չի հանդգնի իշխան Վորվիկը, երբ առիթ տա ստոր Սեֆոլկը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Նա չի հանդգնի ոխակալ ոգու զայրույթը մեղմել
Եվ միշտ կմնա անկոչ մեջ ընկնող,
Թեկուզ Սեֆոլկը տասն հազար անգամ նրան առիթ տա:

ՎՈՐՎԻԿ

Լռե՛ք, տիրուհի, եթե թույլ կտաք ձեզ դիմել այսպես:
Չէ՞ որ ամեն բառ, որով ուզում եք պաշտպանել նրան,
Ձեր արքայական դիրքը կաղարտի:

ՍԵՖՈԼԿ

Բթամի՛տ, ստո՛ր, անարգվա՛ծ իշխան,
Եթե կա մի կին, որ դավաճանեց՝ գիտցիր, քո՛ մայրն էր,
Որ իր հանցապարտ անկողինն առավ
Մի խոժոռադեմ անտաշ ռամիկի ու ազնիվ բույնին
Պատվաստեց մի շյուղ, ում եպերելի պտուղն ես, Վորվիկ,
Ո՛չ Նեվիլների ազնիվ ժառանգը:

ՎՈՐՎԻԿ

Եթե ինձանից քեզ չպաշտպաներ քո մեղքն ահավոր,
Կուզեի դահճից գողանալ նրա իրավունքները
Ու քեզ ազատել տասն հազար ստոր նախատինքներից,
Ու թե իմ տիրոջ ներկայությունը ինձ չմեղմացներ,
Քեզ կստիպեի, երկչո՛տ ոճրագործ,
Որ դու ծնրադիր թողություն մուրաս խոսքերիդ համար,
Բարձրագոչ ասես, որ կասկածում ես մայրիկիդ վրա,
Զի դու ես ծնվել անօրեն զավակ:
Երբ վախկոտության հարկը կընդունես՝
Քեզ կտամ վարձդ և անարգ հոգիդ կուղարկեմ դժոխք,
Դու քնած մարդկանց արնախո՛ւմ հրեշ:

ՍԵՖՈԼԿ

Երբ արթուն լինես՝ նոր պիտի հեղեմ քո արյունը պիղծ,
Թե տղամարդ ես՝ դո՛ւրս եկ այստեղից:

ՎՈՐՎԻԿ

Դե՛հ, գնա՛նք իսկույն, թե չէ քաշ կտամ:
Թեև անպետք ես, բայց պիտի կռվեմ քեզ հետ, սրիկա՛:
Թող հոգեհանգիստ լինի դա Հեմֆրուն:

Գնում են Սեֆոլկն ու Վորվիկը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Անաղարտ սիրտն է ավելի անխոց, քան թե ամրակուռ լանջազրահը,
Երիցս հզոր՝ սուրն արդարամտի,
Բայց ում խղճմտանքն անիրավ գործով ապականված է,
Թեկուզ երկաթյա զրահ էլ հագնի՝ նա մերկ է, անզեն:

Աղմուկ բեմի ետևից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ի՞նչ աղմուկ է:

Մտնում են Սեֆոլկն ու Վորվիկը՝ սրերը մերկացրած:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս ի՞նչ եմ տեսնում, մեր ներկայությամբ
Դուք ձեր կատաղի սրե՞րն եք հանել:
Ի՞նչ հանդգնություն: Այս ի՞նչ մոլեգին աղմուկ եմ լսում:

ՍԵՖՈԼԿ

Հզո՛ր վեհապետ, խուժան ամբոխով
Դավաճան Վորվիկն հարձակվեց վրաս:

ՍՈԼՍԲԵՐԻ

(Դիմելով դրան առաջ խռնված ժողովրդին) Մի՛ կողմ քաշվեցեք,
Թող ձեր կարծիքը արքան իմանա:
Հզո՛ր թագավոր, ինձ ժողովուրդն է ուղարկել ձեզ մոտ,
Որպեսզի ասեմ, եթե նենգամիտ Սեֆոլկին իսկույն
Մահով չպատժեք կամ թե չարտաքսեք չքնաղ Անգլիայից,
Ուժով կխլեն նրան պալատից
Եվ դանդաղընթաց ու դաժան մահին կհանձնեն նրան:
Բոլորն ասում են, որ բարի դուքսին նա է սպանել,
Բոլորն ասում են, որ այդ մարդու մեջ ձեր մահն են տեսնում,
Եվ միայն սիրո, հավատարմության բնազդը մաքուր,
Որ զերծ է համառ ներհակ միտումից

Եվ ձեր բաղձալի տենչը կասելուց.—
Դրդում է նրանց, որ դուք աքսորեք այդ չարագործին:
Բոլորն ասում են՝ ձեր արքայական անձով մտահոգ,
Որ եթե արքան ցանկանար քնել
Եվ մահապատժով սպառնար նրան.
Ով կհանդգներ անդորրը խռովել,
Ապա կերևար երկժանի լեզվով թունավոր մի օձ,
Կսահեր ձեզ մոտ անշշուկ ու լուռ:
Դրա համար էլ նրանք ջանում են, որ զարթնեք իսկույն,
Չի վտանգներով լեցուն ձեր նիրհը կդառնա հավերժ:
Նրանք ջանում են ձեզ փրկել օձից,
Ում խիստ թունալի և օրհասական
Խայթոցը խլեց դավանանորեն
Ձեր շատ սիրելի հորեղբոր կյանքը,
Ով հազար անգամ բարձր էր Սեֆոլկից:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Բեմի ետևից) Միլորդ Սոլսբերի. բեր պատասխանը մեր թագավորից:

ՍԵՖՈԼԿ

Ես չեմ զարմանում, որ ժողովուրդը վայրենի ու բիրտ
Այսպիսի դիմում հղի արքային:
Սակայն դուք, միլորդ, ձեր ծառայությանն
Առաջարկեցիք սիրով այդ մարդկանց,
Որպեսզի ցույց տաք, թե ի՜նչ հրաշալի ատենախոս եք.
Բայց մեծ պատիվ չէ, երբ ձեզ, Սոլսբերի,
Թիթեղագործն է ուղարկում դեսպան թագավորի մոտ:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

(Բեմի ետևից) Պատասխան տվե՛ք, այլապես ուժով մենք ներս
կխուժենք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնա՛, Սոլսբերի, իմ կողմից հայտնիր,
Որ զգացված եմ նրանց քնքշալի հոգածությունից:
Եվ եթե նույնիսկ ինձ չհայցեին՝
Ես նրանց իղձը կկատարեի,
Չի ամեն վայրկյան սիրտս էր գուշակում,
Որ աղետ կգա իմ տերությանը միայն Սեֆոլկից:
Ահա՛ թե ինչու երդվում եմ աստծով

Ում խիստ անարժան փոխանորդն եմ ես,
Որ նա կարող է՝ մահն աչքի առաջ՝
Երեք օր միայն օդն ապականել իմ տերության մեջ:

Գնում է Սոլսբերին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜. Հենրի, թույլ տուր չքմեղացնել ազնիվ Սեֆոլկին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ասում ես՝ ազնի՞վ, անազնի՛վ իմ կին:
Արդ բավ է, քանզի քո միջնորդությամբ
Բազմապատկում ես զայրույթս միայն:
Ես դատարկ տեղը խոսք չեմ շռայլում.
Երդվել եմ՝ և վե՛րջ. անդրդվելի եմ:

Սեֆոլկին:

Թե երբևէ օր անց քեզ տեսնեմ նորից
Իմ տերության մեջ, դու չես ազատվի,
Թեկուզ փրկագին ողջ աշխարհը տաս:
Եկե՛ք. գնա՛նք. Վորվիկ, իմ բարի՜ Վորվիկ,
Քեզ հետ խոսելու շատ բաներ ունեմ:

Գնում են բոլորը, բացի թագուհուց ու Սեֆոլկից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Թող ձեզ ուղեկցեն վիշտն ու աղետը.
Թող սրտի դաժան դժկամությունը
Ու տառապանքը լինեն ձեր խաղի ընկերն անբաժան:
Որտեղ երկուս եք՝ թող սատանան էլ երրորդը լինի.
Թող եռապատիկ վրեժը հսկի ոտնահետքը ձեր:

ՍԵՖՈԼԿ

Վե՛րջ տուր անեծքին, անգին թագուհի.
Թույլ տուր Սեֆոլկին հրաժեշտ տալ քեզ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Վա՜յ քեզ, երկչոտ կին. փոքրոգի էակ.
Մի՞թե ուժ չունես, որ նզովք նետես թշնամիներին:

ՍԵՖՈԼԿ

311 Ինչո՞ւ անիծել, թող ժանտամահը նրանց համբուրի:
Եթե կարող էր նզովքն սպանել, ինչպես հառաչը մանրագորայի,
Ես կգտնեի այնպիսի կծու թունավոր բառեր,
Սաստիկ անախորժ ու սարսափելի ականջի համար.
Եվ ատամներս իրար սեղմելով,
Կշշնչայի իմ բազմահոլով ատելությունը,
Ինչպես տխրադեմ, նիհար նախանձը՝ պժգալի ու զարշ իր քարանձավում:
Լուրջ խոսքերիս մեջ պիտի զայարվեր կատաղի լեզուս,
Եվ պիտի փայլեր կայծքարի նման բոցն իմ աչքերի,
Եվ խելագարի վարսերի նման պիտի կանգնեին մազերս բիզ-բիզ.
Նույնիսկ իմ ննջված սիրտը կշարժվեր.
Եթե ես նրանց խիստ չանիծեի:
Թող ըմպելիքի փոխարեն խմեն մաղձը դառնաղի
Եվ թող ճաշակեն մահից ավելի դժվարահամ բան.
Թող նոճիների պուրակը լինի նրանց հովանի,
Թող նրանց աչքերն հավիտյան տեսնեն մահակիր ու չար բասիլիսկները.
Թող նրանց քնքուշ հպումը թվա ցավալի ու բիրտ,
Ինչպես մողեսի խայթոցն անախորժ,
Եվ թող նվագը նրանց ականջին թվա օձերի շառաչուն ֆշշոց.
Համերգն էլ՝ բվի ողբաձայն մի կանչ,
Եվ մութ դժոխքի սարսափներն ամեն...

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Բա՛վ է, սիրելիս, դու տանջում ես քեզ,
Չէ՞ որ դառնագին անեծքներն ասես արևներ լինեն՝
Հայելու դիմաց կամ անչափ լցված բյուր հրացաններ,
Որ ետ են դառնում ուժգնությամբ դեպի քեզ:

ՍԵՖՈԼԿ

Դու հրամայեցիր, որ ես անիծեմ, ուզում ես վե՞րջ տամ.
Երդվում եմ երկրով, որտեղից, ավա՜ղ. աքսորում են ինձ,
Որ կարող էի ձմռան մի գիշեր անվերջ անիծել,
Թեկուզ անզգեստ ու մերկ կանգնեի լեռան կատարին.
Ուր խայթիչ ցուրտը սեզեր է այրում,
Եվ այդ գիշերն ինձ զվարճանքների վայրկյան կթվար:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, բավական է, աղերսում եմ քեզ, ձեռքդ ինձ մեկնիր,

Որ կարողանամ իմ ողբազգաց արցունքով ցողել,
Եվ թող երկնային անձրևներ այստեղ չթափվեն երբեք,
Չմաքրեն տանեն իմ այրող վշտի հուշարձանները:
Օ՜, կուզենայի այս տաք համբույրը քո ձեռքին դաջվեր,

Համբուրում է ձեռքը:

Որ դու նայելով դրոշմին, Սեֆոլկ,
Հիշեիր նրան, ով հազար անգամ քեզ է հառաչում:
Ուրեմն գնա, որ կարողանամ վիշտս ճանաչել,
Քո ներկայությամբ ես այն չեմ զգում.
Կուշտ մարդն աղքատի մասին չի դատում:
Քեզ ետ կկանչեմ կամ, վստահ եղիր,
Ինքս ինձ պետք է մատնեմ աքսորի.
Առանց քեզ ես էլ մի տարագիր եմ,
Գնա՛. գնա՛. գնա՛, մի՛ խոսիր ինձ հետ,
Օ՜, ո՛չ, մի՛ գնա... Ա՜խ, այդպես երկու թիապարտ ընկեր
Գրկում են իրար, փարվում սիրալիր և հազար անգամ հրաժեշտ տալիս.
Հարյուրապատիկ հեշտ է մահանալ, քան թե բաժանվել,
Բայց մնա՜ս բարյավ, քեզ հետ հրաժեշտ տալիս եմ կյանքիս:

ՍԵՖՈԼԿ

Այսպես տասն անգամ աքսորում են ինձ՝ դժբախտ Սեֆոլկիս,
Մեկ անգամ՝ արքան, ինը անգամ՝ դու:
Ես չէի սիրի այս հողը, թե դու չապրեիր այստեղ:
Եվ անապատն ինձ կթվա մարդկանց բնակատեղի,
Թե անբախտ Սեֆոլկն ապրեր երկնային քո ապարանքում,
Չէ՞ որ ինձ համար քո ապրած տեղը մի ողջ աշխարհ է,
Ուր կան մարդկային բազում հաճույքներ:
Քո տեղն առանց քեզ ցուրտ է, ամայի,
Բա՛վ է, չեմ կարող: Վայելի՛ր կյանքդ,
Քո հավերժ կյանքով ես կուրախանամ:

Մտնում է Վոն:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞ւր ես շտապում, խնդրում եմ, ասա՛, ի՞նչ լուրեր ունես:

ՎՈ

Ես շտապում եմ թագավորի մոտ, որպեսզի հայտնեմ,
Որ մահամերձ է կարդինալը մեր,
Ում հանկարծ բռնեց հիվանդությունը.

Աչքերը չռած, նա օդ է որսում,
Անիծում աստծուն ու բոլոր մարդկանց,
Մերթ նա խոսում է Հեմֆրու հոգու հետ,
Մերթ թագավորին կանչում է իր մոտ
Ու կարծես նրան՝ բարձին հասարակ,
Տանրաքեռ հոգու իր գաղտնիքներն է անկապ շշնջում:
Ես շտապում եմ թագավորի մոտ,
Ասելու, որ նա այժմ էլ բարձրաձայն կանչում է նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա՛ և հայտնիր այս ծանր լուրը մեր թագավորին:

Գնում է Վոն:

Ի՞նչ է այս կյանքը, և այս ի՞նչ լուր է,
Բայց ես ինչո՞ւ եմ թշվառ վայրկյանի կորուստը թախծում,
Երբ զանձն իմ հոգու խլում են ինձնից:
Ա՜խ, ինչո՞ւ, Սեֆոլկ, ես արտասվում եմ քեզ համար միայն
386 Ու ես չեմ մրցում հարավի ամպոտ անձրևների հետ:
Նրանց արցունքը հողն է սնուցում, իսկ իմը՝ վիշտս:
Այժմ դու գնա, ուր որ է արքան հիմա կերևա,
Եթե քեզ տեսնի իմ կողքին, գիտցիր, կործանված ես դու:

ՍԵՖՈԼԿ

Ես քեզնից հեռու չեմ կարող ապրել,
Բայց քո տաք գրկում, հայացքիդ ներքո
Իմ մահը ասես քաղցր քուն լինի:
Ծնկներիդ վրա կհանգչի հոգիս
Այնպես մեղմորեն, այնպես հեզաբար,
Ինչպես օրոցքում մեռնող մանկիկը՝ մոր կուրծքը շուրթին:
Ա՜խ, քեզնից հեռու ես պիտի կանչեմ խելագարի պես,
Որ ինձ մոտ դու գաս՝ աչքերս զոցես
Ու քո շուրթերով փակես բերանս,
Որպեսզի թռչող հոգիս ետ բերես,
Թե չէ մարմնիդ մեջ իմ հոգին կապրի,
Կամ թե դրախտում:
Քեզ մոտ մեռնելը կատակ է միայն,
Իսկ քեզնից հեռու՝ մահից ավելի խոր տառապանքներ.
Թող մնամ քեզ մոտ, ինչ կուզե լինի:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկույն հեռացի՛ր: Թեև բաժանումն այրող դեղ է մի,
Բայց այն դնում են մահացու վերքին:
Դեպի Ֆրանսիա, սիրելի Սեֆոլկ, թող ես քեզանից նոր լուրեր առնեմ:
Ուր էլ որ լինես այս մեծ աշխարհում՝
Օ՜, իմ Իրիդան քեզ պետք է գտնի:

ՍԵՖՈԼԿ

Գնում եմ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Քեզ հետ իմ սիրտն ես տանում:

ՍԵՖՈԼԿ

Նման մի գոհար երբեք չի տեսել
Այսպիսի խղճուկ ոչ մի զարդատուփ:
Մենք բաժանվում ենք երկու կես արված մեկ նավի նման.
Այս ճանապարհով գնում եմ դեպ մահ...

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ես՝ այս կողմը:

Գնում են տարբեր ուղղություններով:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Կարդինալի ննջասենյակը:

Մտնում են թագավորը, Սոլսբերին ու Վորվիկը: Կարդինալը պառկած է, անկողնում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչպե՞ս ես զգում, խոսի՛ր կարդինալ, քո արքայի հետ:

ԿԱՐԴԻՆԱԼ

Եթե դու մահն ես՝ քեզ կտամ Անգլիո գանձերը բոլոր,
Որ կարողանաս վերստին գնել նման մի կղզի,
Միայն թե կյանք տուր ու ցավս ամոքիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ա՜խ, սա նշան է միայն վատ կյանքի,
Երբ սարսափով ես նայում դու մահվան:

ՎՈՐՎԻԿ

Կարդինա՛լ, քեզ հետ խոսում է արքան:

ԿԱՐԴԻՆԱԼ

Տվեք ինձ դատի, եթե ուզում եք,
Մի՞թե չի մեռել նա իր անկողնում.
Իսկ ուրիշ որտեղ նա պետք է մեռներ:
Կարո՞ղ եմ մարդկանց ստիպել ապրել:
Օ՜, ինձ մի՛ տանջեք, կասեմ ամեն ինչ:
13 Հարությո՞ւն առավ, ո՞ւր է, ցույց տվեք,
Գանձերս կտամ, որ տեսնեմ նրան:
Նա աչքեր չունի, լցված է հողով: Սանրե՛ք մազերը:
Օ՜, նայե՛ք, նրանք բիզ-բիզ են կանգնել ձյութած ճյուղի պես,
Որպեսզի բռնեն իմ թռչող հոգին, ջո՛ւր տվեք խմեմ...
Թող դեղագործը բերի վաղուցվա առած իմ թույնը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, դու երկնային շարժիչ հավիտյան,
Նայիր բարությամբ այս խեղճ էակին,
Օ՜, վանի՛ր հեռու սատանային չար,
Որ համառորեն ջանում է տիրել անբախտի հոգուն
Ու սրտից հանիր այս մռայլադեմ վհատությունը:

ՎՈՐՎԻԿ

Տե՛ս, թե ինչպե՜ս է կրճտացնում իր ատամները մահվան ցավի մեջ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Մի՛ տանջեք նրան, թող խաղաղությամբ ավանդի հոգին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թող հանգչի խաղաղ, եթե այսպես է աստված կամենում:
Կարդինա՛լ, թե դու դրախտի մասին խորհում ես հիմա,
Ձեռքդ բարձրացրու որպես թե հույսի արտահայտության,
Մեռնում է, ձեռքն էլ նույնիսկ չի շարժում: Օ՜, աստվա՛ծ, ների՜ր:

ՎՈՐՎԻԿ

Ով հրեշային կյանք է ունեցել՝ նա էլ մեռնում է այսպես տանջալից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՛ կարգիր այլոց դու քեզ դատավոր,
Չէ՞ որ բոլորս էլ մեղավորներ ենք,
Փակե՛ք աչքերը և վարագույրը դանդաղ իջեցրեք,
Թող մենք էլ գնանք, հանձնվենք խոհին։

Գնում են։

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Քենտի ծովեզերք:

Տագնապ: Ծովամարտ: Թնդանոթաձգություն: Մտնում են մի կապիտան, մի շկիպեր, մի դեկապետ, Վիտմոր Վոլտերը և ուրիշներ: Նրանց հետ են Սեֆոլկը և գերիներ:

ԿԱՊԻՏԱՆ

Սուզվում է ծովի գիրկը պենազարդ
Մեղքերով լեցուն շատախոս օրը.
Շուտով գայլերի կաղկանձն ահարկու
4 Կարթնացնի նիհար, քնձոտ ձիերին.
Որ քարշ են տալու այս եղերական տխուր գիշերը:
Նրանք քնարեր, համրասահ ու նեղգ.
Անուժ թևերով կգրկեն մարդկանց գերեզմանները
Եվ կներշնչեն միգոտ երախով տարափոխանցիկ, գարշահոտ մութը:
Աստ բերեք գերած մեր զինվորներին:
Քանի դեռ Դուվրում խարիսխ ենք ձգել,
Թող տան փրկագինն ավազի վրա.
Կամ արյամբ ներկեն գույնը ավազի:
Հե՜յ, շկիպե՛ր, քեզ եմ ձրիաբար հանձնում այս ռազմագերուն,
Իսկ քեզ, դեկապետ, սա որպես նվեր.
Նա էլ՝ քեզ, Վիտմոր, չաղ բաժին ընկավ:

Ցույց տալով Սեֆոլկին:

Ա. ԱԶՆՎԱԿԱՆ

Ի՞նչ է, շկիպեր,թույլ տուր իմանալ, իմ փրկագինը:

ՇԿԻՖԵՐ

Մեկ հազար կրոն կամ թե գլուխդ:

ՂԵԿԱՊԵՏ

Նույնքան էլ քոնն է, թե ոչ կմեռնես:

ԿԱՊԻՏԱՆ

Կարծում եք շա՞տ է երկու հազարը.
Դեռ ազնվական ծագո՛ւմ էլ ունեք:
Հե՛յ, կտրեք սրանց կեղտոտ կոկորդը: Դուք պետք է մեռնեք:
Կարծում եք այսքան չնչին գումարով
Դուք կհատուցե՞ք այն խիզախ մարդկանց,
Որ մենք կորցրինք ճակատամարտում:

Ա. ԱԶՆՎԱԿԱՆ

Ես կտամ, պարոն, կյանքս խնայեք:

Բ ԱԶՆՎԱԿԱՆ

Ես՝ նույնպես, իսկույն կգրեմ մերոնց:

ՎԻՏՄՈՐ

Կռվի մեջ կորցրի իմ աչքի մեկը:

Սեֆոլկին:

Ես պետք է քեզնից իմ վրեժն առնեմ: Դու պետք է մեռնե՛ս:
Ուրիշներին էլ ես կուղարկեի ծովի հատակը:

ԿԱՊԻՏԱՆ

Պետք չէ՛ շտապել: Փրկագինը ա՛ռ և թույլ տուր ապրի:

ՍԵՖՈԼԿ

Նայիր այս ոսկյա շքանշանիս,
Ազնվական եմ: Գին դիր՝ կստանաս:

ՎԻՏՄՈՐ

Ես նույնպես ունեմ ազնվական ծագում,
Ինձ անվանում են սըր Վիտմոր Վալտեր:
Ի՞նչ է, դողում ես, սարսափում մահից:

ՍԵՖՈԼԿ

Ես քո անունից երկյուղ եմ կրում, զի մահվան ձայնն եմ լսում նրան
Մի բախտագուշակ նայել է աստղիս,

Եվ ասել, որ ես կմեռնեմ ջրում,
Բայց դու չես թափի արյան մի կաթիլ.
37 Քո անունն սառույց հնչում է Գոթիե։

ՎԻՏՄՈՐ

Գոթիե կամ Վիտմոր։ Արդ միևնույնն է։
Դեռ ոչ մի ստոր խայտառակություն չի նսեմացրել մեր անունն ազնիվ.
Ամեն մի արատ սրով ենք մաքրում։
Ու թե ես պիտի վաճառորդի պես վրեժս ծախեմ՝
Թող սուրս ջարդեն, պատիվս եղծեն
Եվ թող ինձ ստոր վախկոտ անվանեն։

Բռնում է Սեֆոլկին։

ՍԵՖՈԼԿ

Սպասիր, Վիտմոր, գերիդ իշխան է,
Ես դուքս Սեֆոլկն եմ, Վիլյամ դը Պոլը։

ՎԻՏՄՈՐ

Ինչպե՞ս, Սեֆոլկը ցնցոտիներո՞վ։

ՍԵՖՈԼԿ

Այո, բայց քուրջերն իմ բաժինը չեն,
Զևսն էլ է քայլել երբեմն ծպտյալ։

ԿԱՊԻՏԱՆ

Զևսը չի մեռել, բայց դու կմեռնես։

ՍԵՖՈԼԿ

Ստոր, աննշան կարճակեր ռամիկ, գիտցիր, թագավոր Հենրու արյունը՝
Լանկաստերների արյունը ազնիվ,
Չի կարող հեղել մի խեղճ ձիապան։
Դու չէի՞ր արդյոք բռնում ասպանդակն իմ ազնիվ ձիու,
Դու չէի՞ր արդյոք գլխաբաց վազում
Տապճակով ծածկված իմ ջորու կողքով
Եվ քեզ համարում անչափ բախտավոր, երբ նշան էի անում ես գլխով։
Քանի՜ անգամ ես ինձ գավաթ բերել և ծունր իջած՝
Կերակուր խնդրել, երբ քեֆ եմ արել իմ թագուհու հետ։
Հիշի՛ր, և խելքդ գլուխդ պահիր, սանձիր թերածին հպարտությունդ։
Դու չէի՞ր կանգնում նախասրահում և, ըստ արժանվույն,
Սպասում էիր, թե երբ դուրս կգամ։

Այս ձեռքը, որ քեզ փորձանքից փրկեց,
Հիշի՛ր ու սանձի՛ր ապստամբ լեզուդ:

ՎԻՏՄՈՐ

Ասա՛, կապիտան, պետք չէ՞ դաշունել այս անզգամին:

ԿԱՊԻՏԱՆ

Նախ՝ թող բառերս խոցեն այս մարդուն. ինձ վիրավորեց:

ՍԵՖՈԼԿ

Ստոր սրիկա, բառերդ բութ են ուղիղ քեզ նման:

ԿԱՊԻՏԱՆ

Տարեք այստեղից, գլխատեք նրան մեր նավի վրա:

ՍԵՖՈԼԿ

Դու ձեռք չե՞ս քաշում քո հիմար գլխից:

ԿԱՊԻՏԱՆ

Այո՛, Վիլյամ Պոլ:

ՍԵՖՈԼԿ

Ի՞նչ ասացիր, Պո՞լ:

ԿԱՊԻՏԱՆ

Պո՛լ, Պո՛լ, Պո՛լ, նեխած ջրափոս,
Փողոցի առու, կեղտոտ կոյուղի,
Քո աղտն ու ցեխը արծաթանման ակն են պղտորում,
Ուրկից խմում է բովանդակ Անգլիան:
Այժմ կփակեմ բացված երախդ,
Որ խժռել էր թագավորության ողջ գանձատունը,
Եվ քո շուրթերը, որ համբուրել են չքնաղ թագուհուն,
Արդ՝ պետք է ավլեն կեղտոտ գետինը:
Դու, որ ժպտադեմ նայեցիր մեռնող բարի Գլոստերին,
Զուր պետք է ցույց տաս ցից ատամներդ ծաղրաշունչ քամուն,
Որ պետք է սուլի քեզ անգոսնելով:
Դու պետք է դառնաս փեսան դժոխքի,
Զի հանդգնեցիր պսակել Հենրուն անարժան մարդու աղքատ դստեր հետ,
Մի խղճուկ արքա, որ չուներ ո՛չ թագ, ո՛չ հարստություն, ո՛չ հպատակներ:
Դու սատանայի խորամանկությամբ սաստիկ բարձրացար
Եվ խիստ փառասեր Սուլլայի նման հագեցար մորդ սրտի արյունով,

Դու Մենն ու Անժուն ծախիր թշնամուն,
87 Դու Նորմանդիայի ապստամբներին լեզու տվեցիր,
Որ նրանք այսօր արհամարհանքով մեզ տեր չեն կոչում,
Իսկ պիկարդացիք, մորթելով իրենց կուսակալներին,
Առել են արդեն մեր ամրոցները
Եվ տուն են քշում քրչոտ, վիրավոր մեր զինվորներին:
Իսկ Նեվիլները, Վորվիկն արքայազն,
Ում սրերն ահեղ զուր չեն մերկացել,
Զինվել են քո դեմ ատելությունից:
Այրվում է հիմա վրեժխնդրության
96 Սրտերի մեջ Յորքի տունն անգահ, քանզի սպանեց
Անմեղ արքային մի արյունարբու, զոռոզ բռնակալ:
98 Եվ նա հուսալի դրոշների վրա առաջ է տանում մեր կես-արևը,
Որ ի հեճուկս բարձր ամպերի
Ավելի պայծառ, վեհորեն շողա:
Ժողովուրդն այստեղ Քենտում զինվել է:
102 Գիտցի՛ր, սողոսկեց պալատն արքայի
Լոկ քո միջոցով խայտառակություն և աղքատություն:
Սորվի՛ր: Տարեք սրան այստեղից:

ՍԵՖՈԼԿ

Օ՜, ես կուզեի մի աստված լինել, որ իմ որոտը
Պարպեի նվաստ, անզգամ, գձուծ այս մարդկանց գլխին:
Դատարկ գործերով հպարտանում են լոկ ստոր մարդիկ,
Եվ այս սրիկան, լինելով խղճուկ նավի կապիտան,
Ինձ սպառնում է ավելի ուժեղ ու հանդգնորեն,
109 Քան Բարգուլոսը՝ Իլլիրիայի ծովահենն ահեղ:
Բոռը չի ծծում արծվի արյունը, բայց գողանում է փեթակից մեղրը.
Անկարելի է, որ մեռնեմ անարգ ստրուկի ձեռքով, ինչպիսին դու ես:
Քո բառերն իմ մեջ զայրույթ են վառում, բայց ոչ՝ խղճմտանք:
Ես մեր թագուհու հանձնարարությամբ մեկնում եմ Ֆրանսիա,
Դու պետք է նեղուցն ինձ անցկացնես ապահովապես:

ԿԱՊԻՏԱՆ

Հե՜յ, Վիտմո՛ր:

ՎԻՏՄՈՐ

Գնա՛նք: Քեզ կանցկացնեմ ես այն աշխարհը:

ՍԵՖՈԼԿ

Gelidus timor occupat artus:[1]
Ես վախենում եմ միայն քեզանից:

ՎԻՏՄՈՐ

Գնալուց առաջ՝ դեռ դու կունենաս վախի առիթներ:
Ի՞նչ, վախենո՞ւմ ես: Հնազանդվո՞ւմ ես:

Ա. ԱԶՆՎԱԿԱՆ

(Սեֆոլկին) Ողորմա՛ծ իմ տեր, թախանձե՛ք նրան
Եվ քնքշությամբ նրա հետ խոսե՛ք:

ՍԵՖՈԼԿ

Սեֆոլկի լեզուն կոպիտ է, դաժան ու հրամայող
Եվ նա չգիտի երբեք թախանձել:
Աստված էլ չանի, որ նման մարդկանց,
Ինչպիսին սա է, պատվենք ու հարգենք մեր քաղցր խոսքով:
Ո՛չ: Կնախընտրեմ կոճղը գլխատման,
Քան ծունկի կգամ այն մարդու առաջ,
Ով ո՛չ աստված է, ո՛չ էլ թագավոր:
Ես հոժարակամ կելնեմ արյունոտ, սուր ցցի վրա,
Քան թե կկանգնեմ մի կոպիտ, անտաշ ստրուկի առաջ:
Ազնվականը վախ չունի երբեք,
Պատրաստ եմ տանել ավելի մեծ վիշտ, քան՝ կպատճառես:

ԿԱՊԻՏԱՆ

Դուրս տարեք սրան, հերի՛ք բարբաջի:

ՍԵՖՈԼԿ

Գնա՛նք, զինվորներ, ցույց տվեք մարդկանց,
Թե դուք ինչպիսի վայրագություններ կարող եք անել,
Որպեսզի մահս հիշվի հավիտյան:
Հաճախ մեռնում են մեծամեծ այրերն ստոր ձեռքերով.
135 Մի եղեռնագործ, հելուզակ գերու դաշույնով ընկավ չքնաղ Տուլլիուսը,
136 Իսկ պոռնկորդի Բրուտոսի ձեռքով՝ Հուլիոս Կեսարը:
Մեծ Պոմպեոսի գլուխը կերան ցեղերը վայրի,
Իսկ ես մեռնում եմ այս ծովահենի արյունոտ ձեռքով:

Գնում է Վիտմորը Սեֆոլկի և ուրիշների հետ:

[1] *Սառցե վախն է թափանցում իմ սիրտը* (լատ.):

Իսկ մեզ ճանճ է՝ փրկագին տվող
Սրանցից մեկին ազատ արձակել։
Հե՜յ, դու ինձ նետ եկ, իսկ նա թող գնա։

Գնում են բոլորը, բացի առաջին ազնվականից։
Վերադառնում է Վիտմորը, հարշ տալով Սեֆոլկի դիակը։

ՎԻՏՄՈՐ

Թող այստեղ մնա գլուխն անիծյալ և մարմինն անկյանք,
Մինչև որ նրա չքնաղ սիրուհին կճանճնի նողին։

Գնում է։

Ա. ԱԶՆՎԱԿԱՆ

Օ՜, վայրագ, դաժան, արնոտ տեսարան.
Պետք է հասցնեմ դիակն արքային։
Օ՜, եթե ո՛չ նա, բարեկամները վրեժը կառնեն,
Եվ թագուհին էլ, որին սիրում էր։

Գնում է՝ տանելով մարմինը։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Բլեքհիթ։

Մտնում են Ջորջ Բեվիսը և Ջոն Հոլենդը։

ՋՈՐՋ

Գնա՛, քեզ համար մի սուր ճարի, թեկուզ փայտից։ Նրանք երկու օր է, ինչ ոտքի են կանգնել։

ՋՈՆ

Ուրեմն, քնելու խիստ կարիք ունեն։

ՋՈՐՋ

Ես ասում եմ քեզ, որ դերձակ Ջեկ Քեդը միտք ունի պետության վերարկուն նորոգել, դարձնել ու նոր խավ տալ։

ՋՈՆ

Ժամանակն է նրան վերարկուն փոխելու, որովհետև խավը թափվել է։ Հավատա, ի՜նչ ազնվականներ են Անգլիայի գլուխն անցել, մի լավ օր չենք տեսնում։

ՋՈՐՋ

Օ՜, եղկելի ժամանակներ. վարպետությունը այլևս ոչ մի արժեք չունի արհեստների մեջ։

ՋՈՆ

Ազնվականները արհամարհում են կաշվե գոգնոցները։

ՋՈՐՋ

Իսկ թագավորի խորհրդատուները լավ խորհուրդ տվող չեն։

ՋՈՆ

Իրավացի ես։ Բայց ասում են՝ աշխատիր գործդ կատարել։ Սա նշանակում է, որ պետք է իշխեն աշխատող մարդիկ, ուրեմն, մենք պիտի իշխող դառնանք։

ՋՈՐՋ

Ճիշտ նշանին խփեցիր, որովհետև խիզախ մտքի նշանը ամուր ձեռքն է։

ՋՈՆ

Ես տեսնո՜ւմ եմ նրանց։ Ես տեսնո՜ւմ եմ նրանց։ Ահա՛ Բեստի տղան, ուինգեմցի կաշեգործը…

ՋՈՐՋ

Մենք նրան կտանք մեր թշնամու կաշին, որ դաբաղի ձեռնոցի համար։

ՋՈՆ

Ահա՛ մսագործ Դիկը…

ՋՈՐՋ

Ուրեմն, մեղքը գետին կտապալի եզան պես և կկտրի անարդարության կոկորդը հորթի պես։

ՋՈՆ

Ահա՛ ջուլհակ Սմիթը…

ՋՈՐՋ

Argo։ Նրանց կյանքի թելը շուտով կկտրի։

ՋՈՆ

Դնա՜նք, պնա՜նք, խառնվենք նրանց։

Թմբուկներ։ Մտնում են Քեդը, մսագործ Դիկը, ջուլհակ Սմիթը և ամբոխը։

ՔԵԴ

Մենք՝ Ջոն Քեդը, այսպես կոչված մեր ենթադրյալ հոր անունով...

ԴԻԿ

(Առանձին). Ավելի շուտ՝ գողացված կետ ձկան անունով...

ՔԵԴ

Մեր թշնամիները կտապալվեն մեր առաջ... Ոգևորված թագավորներին ու իշխաններին տապալելու ձգտումով... Ասա՛, որ լռեն...

ԴԻԿ

Լռությո՛ւն:

ՔԵԴ

Իմ հայրն էր Մորտիմերի ցեղից...

ԴԻԿ

(Առանձին) Մի ազնիվ մարդ ու բարի պատշար:

ՔԵԴ

Մայրս Պլանտագենետների տոհմից է սերվել...

ԴԻԿ

(Առանձին) Լավ եմ ճանաչում: Մի մանկաբարձ էր:

ՔԵԴ

Կինս Լեսյաց տոհմից էր սերվել...

ԴԻԿ

(Առանձին) Գիտեմ. շարշու աղջիկ էր: Ժանյակ էր ծախում:

ՍՄԻԹ

(Առանձին) Բայց քանի որ նա կապոցը մեջքին չի կարող քարշ գալ, տանը ուրիշի լվացքն է անում:

ՔԵԴ

Հետևաբար. ես սերվել եմ ազնիվ տոհմից:

ԴԻԿ

(Առանձին). Այո՛, իհարկե, դաշտն ազնիվ տեղ է, և նա էլ այնտեղ լույս աշխարհ եկավ, ցանկապատի տակ, քանի որ հայրը ուրիշ տուն չուներ, բացի բանտից:

ՔԵԴ

Կտրի՛ճ եմ:

ՍՄԻԹ

(Առանձին) Իհարկե, մուրացկանին պետք է խիզախություն:

ՔԵԴ

Ես շատ բան կարող եմ տանել:

ԴԻԿ

(Առանձին) Ոչ ոք չի առարկի: Հաճախ եմ տեսել, թե ինչպես երեք օր նրան անընդհատ մտրակում էին շուկայում:

ՔԵԴ

Ես չեմ վախենում հրից ու սրից:

ՍՄԻԹ

(Առանձին) Նա ինչո՞ւ վախենա սրից: Նրա զգեստը շատ բան է տեսել:

ԴԻԿ

(Առանձին) Բայց ինձ թվում է, որ կրակից պիտի վախենա, որովհետև տուժել է. ձեռքը խարանել են ոչխար գողանալիս:

ՔԵԴ

Արիացեք, որովհետև ձեր հրամանատարը քաջ մարդ է ու երդվել է բարեփոխություններ մտցնել: Անգլիայում յոթ ու կես պենիանոց հացը պետք է վաճառվի մեկ պենիով. մի գավաթ գարեջուրը ոչ թե երեք, այլ տասն անգամ կչափվի և քրեական հանցագործ կհամարեմ նրան, ով թույլ գարեջուր խմի: Տերության մեջ բոլորը կհանաչվեն հավասար, և իմ ձին կարածի Չիպսայդում: Իսկ ես կդառնամ թագավոր...

ԲՈԼՈՐԸ

Աստվա՜ծ պահի ձեր մեծությանը:

ՔԵԴ

Շնորհակալությո՜ւն, բարի՛ մարդիկ: Այն ժամանակ փող չի լինի, բոլորը կուտեն-կխմեն իմ հաշվին, կհագնեն միևնույն զգեստը և կապրեն հաշտ ու խաղաղ, եղբայրների պես և ինձ կերկրպագեն որպես ձեր տերը:

ԴԻԿ

Մեր առաջին գործը այն կլինի, որ սպանենք բոլոր օրենսգետներին:

Ո՛չ: Այդ բանը միտք ունեմ ինքս անելու: Մի՞թե ցավալի չէ, որ մի անմեղ գառան մորթուց պատրաստում են մագաղաթ: Իսկ մագաղաթը, երբ հոռի և անընթեռնելի գրերով մրոտում են, կարող է մի մարդ կոր-
74 ծանել: Ասում են՝ մեղուն խայթում է, բայց ես ասում եմ՝ խայթում է մեղրամոմը, որովհետև մեկ անգամ միայն մատս դրել եմ մեղրամոմի վրա: Եվ այն օրից հանգիստ չունեմ: Հե՜յ, ո՞վ է գալիս, ո՞վ կա այստեղ:

Մտնում են մի քանի մարդիկ, բերելով Չեթեմցի գրագրին:

ՍՄԻԹ

Չեթեմցի գրագիրն է: Նա կարող է գրել, կարդալ ու հաշվել:

ՔԵԴ

Օ՜, խայտառակությո՛ւն:

ՍՄԻԹ

Մենք նրան բռնեցինք այն ժամանակ, երբ նա ուղղում էր տղաների տետրակները:

ՔԵԴ

Ա՜յ, դու սրիկա:

ՍՄԻԹ

Գրպանում մի գիրք կա, տառերն էլ կարմիր:

ՔԵԴ

Նշանակում է՝ կախարդ է:

ԴԻԿ

Այո՛: Եվ նա կարող է պարտամուրհակներ կազմել ու գրել դատական ոճով:

ՔԵԴ

Շա՜տ ցավալի է: Երդվում եմ պատվովս՝ աչքիս վատ մարդ չի երևում: Եթե ես նրան չճանաչեմ մեղապարտ, նա չի գլխատվի: Հե՜յ, այս կողմ արի, ես քեզ հարցուփորձ պիտի անեմ: Ի՞նչ է անունդ:

ԳՐԱԳԻՐ

92 Էմանուել:

ԴԻԿ

Հենց այս անունը գրում են նամակների ճակատին: Այդ բանը քեզ վրա թանկ կնստի:

ՔԵԴ

95 Կա՛ց: Քո անունը տառերո՞վ ես գրում, թե՞ քո նշանն ունես, ինչպես ազնիվ հասարակ մարդիկ:

ԳՐԱԳԻՐ

Պարոն, փա՛ռք աստծո, ես լավ կրթություն եմ ստացել և կարող եմ անունս գրել:

ԲՈԼՈՐԸ

Նա խոստովանե՛ց: Տարե՛ք նրան: Նա մի սրիկա է ու դավաճան:

ՔԵԴ

Ես ասում եմ՝ տարեք նրան, կախեք իր գրչի հետ, թանաքամանն էլ վիզը գցեք:

Ամբոխի միջից մի մարդ դուրս է քաշում գրագրին:
Մտնում է Մայքլը:

ՄԱՅՔԼ

Որտե՞ղ է մեր հրամանատարը:

ՔԵԴ

Այստեղ եմ, զինվո՛ր իմ:

ՄԱՅՔԼ

Փախե՛ք, փախե՛ք, փախե՛ք: Պարոն Հեմֆրի Ստեֆորդը և իր եղբայրը թագավորական զորքի հետ մի րոպե չանցած այստեղ կլինեն:

ՔԵԴ

Կա՛ց, սրիկա՛, կա՛ց, թե ոչ գետին կտապալեմ: Նա կկռվի իրենից ոչ պակաս մի մարդու հետ: Նա ասպետ է, այնպես չէ՞:

ՄԱՅՔԼ

Հենց այդպես:

ՔԵԴ

Որպեսզի հավասարվեմ նրան, ես ինքս ինձ ասպետ կկարգեմ
111 *(ծունր է իջնում)*: Վե՛ր կաց, սըր Ջոն Մորտիմեր *(բարձրանում է)*: Այժմ
գնանք նրան ընդառաջ:

Մտնում են սըր Հեմֆրին ու նրա եղբայր Վիլյամը
զինվորների ու թմբկահարների ուղեկցությամբ:

ՍՏԵՖՈՐԴ

Խռովյա՜լ ամբոխ, դուք Քենտի փրփուր ու գարշահոտ կեղտ,
Դուք կախաղանի արժանի մարդիկ, զենքը վար դրեք,
Վերադարձեք տուն ու երես թեքեք այս ծիապանից:
Արքան կների ձեզ բարի սրտով, եթե ետ կանգնեք:

ՎԻԼՅԱՄ

Բայց նրա ցասումն արյան կփոխվի, եթե համառեք:
Անձնատո՛ւր եղեք, թե ոչ կմեռնեք:

ՔԵԴ

Հարկ չեմ համարում դիմել մետաքսյա
Զգեստով պճնված այդ ստրուկներին:
Ձեզ հետ եմ խոսում, իմ բարի մարդիկ,
Ում վրա պետք է տարածվի կարգը իմ իշխանության:
Հույս ունեմ կգա այդ ժամանակը, զի օրինավոր ժառանգն եմ գահի:

ՍՏԵՖՈՐԴ

Սրիկա՛, հայրդ զան էր սվաղում,
Իսկ ինքդ հիմա ոչխար ես խուզում:

ՔԵԴ

Չէ որ Ադամն է եղել պարտիզպան:

ՎԻԼՅԱՄ

Դրանից քեզ ի՞նչ:

ՔԵԴ

Այն, որ Մարչի կոմս
Էդմոնդ Մորտիմերն առավ իրեն կին դուքս Կլարենսի աղջկան:

ՍՏԵՖՈՐԴ

Հետո՞:

ՔԵԴ

Եվ նա ունեցավ նրանից զույգ տղա:

ՎԻԼՅԱՄ

Ստո՛ւմ ես:

ՔԵԴ

Հարց է, թե ով է ստում:

Բայց քեզ ասում եմ ճշմարտությունը։
Երկվորյակներից ավագ տղային,
Որ հանձնված էր ծծմոր խնամքին,
Գողացավ տարավ մուրացիկ մի կին։
Եվ չիմանալով իր տոհմի մասին,
Նա քարտաշ դարձավ, երբ հասակ առավ։
Տղան եմ նրա. կարող ես, հերքիր։

ԴԻԿ

Ո՛չ, ամենայն ինչ ճշմարտություն է, և նա կդառնա թագավորը մեր։

ՍՄԻԹ

Սը՛ր, նա իմ հոր տան ծխնելույզն էր շինում և մինչև օրս կան այդ աղյուսները, որոնք վկայում են իսկությունը։ Ահա՛ թե ինչու՝ լավ է չվիճենք։

ՍՏԵՖՈՐԴ

Դուք հավատո՞ւմ եք այս խարբերայի ստոր խոսքերին,
Որ չի իմանում, ինչ է դուրս տալիս։

ԲՈԼՈՐԸ

Մենք հավատում ենք։ Դրա համար էլ կորե՛ք այստեղից։

ՎԻԼՅԱՄ

Քե՛դ, սա՛, Յո՞րքն է քեզ խելքից հանել։

ՔԵԴ

(Առանձին) Նա ստում է, որովհետև ինքս եմ հնարել։ *(Բարձր)*. Գնա, ա՛յ մարդ ու իմ կողմից արքային ասա. որ ի սեր իր հոր՝ Հենրի Հինգերորդի, ում օրոք ֆրանսիական ոսկեդրամը երեխաների խաղալիք էր դարձել, համաձայն եմ, որ նա թագավորի. բայց ես պետք է դառնամ նրա խնամակալը։

ԴԻԿ

Բացի այդ, մենք պահանջում ենք լորդ Սեյի գլուխը, որովհետև նա ծախել է Մենի դքսությունը։

ՔԵԴ

Հրաշալի՛ միտք։ Այդ բանը առիթ դարձավ, որ Անգլիան կորցներ իր զորությունը և քայլեր գավազանի օգնությամբ, եթե ձեռք չմեկնեի։ Արքա եղբայրներ, ես ձեզ ասում եմ, որ այդ լորդ Սեյը թլպատել ու ներ-

քինիացրել է պետությունը: Բացի այդ, նա խոսում է ֆրանսերեն, նշանակում է՝ դավաճան է:

ՍՏԵՖՈՐԴ

Օ՜, ողորմելի, բիրտ տգիտություն:

ՔԵԴ

Ո՛չ, պատասխանի՛ր, եթե կարող ես. ֆրանսիացիները մեր թշնամիներն են, ուստի, հարց եմ տալիս քեզ. մի՞թե նա, ով խոսում է թշնամու լեզվով, կարող է բարի խորհրդատու լինել:

ԲՈԼՈՐԸ

Ո՛չ, ո՛չ: Մենք նրա գլուխն ենք ուզում:

ՎԻԼՅԱՄ

Երբ քաղցր բառերն անզոր են դառնում՝
Պետք է հարձակվել արքայի զորքով:

ՍՏԵՖՈՐԴ

Հե՜յ հերալդ, մտիր ամեն մի քաղաք,
Հռչակիր նրանց երկրի դավաճան, ովքեր Քեդի հետ զենք են վերցրել:
Թող նրանց կախեն իրենց դռան մոտ՝
Իրենց տղայոց ու կնոջ առաջ,
Ովքեր փախչում են դեռ մարտն անավարտ:
Ովքեր արքայի բարեկամներն են՝ թող ինձ հետևեն:

Գնում են երկու Ստեֆորդները զինվորների հետ:

ՔԵԴ

Իսկ ով սիրում է հասարակ մարդկանց՝ թող ինձ հետևի:
Այժմ ցույց տվեք ինձ՝ ազատության քաջասիրտ այրեր,
Չեն փախչի մեզնից ո՛չ ազնվական, ո՛չ իշխան, ո՛չ դուքս.
Պետք է խնայել այն մարդկանց միայն,
Ովքեր հագնում են կարկատած կոշիկ,
Նրանք խնայող, ազնիվ մարդիկ են,
Նրանք կուզեին մեր կողմը անցնել, բայց չեն հանդգնում:

ԴԻԿ

Նրանք շարք կազմած՝ գալիս են մեր դեմ:

ՔԵԴ

Իսկ մենք խառնակ վիճակում շատ ավելի պատրաստ ենք: Դե՛հ, քայլե՛նք առաջ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Բլեքհիթի մի այլ վայր:

Ռազմի թնդյունի մեջ սպանված են եղբայր Ստեֆորդները:
Մտնում են Քեդը և ուրիշներ:

ՔԵԴ

Որտե՞ղ է Դիկը՝ աշֆորդցի մսագործը:

ԴԻԿ

Այստեղ եմ, պարո՛ն:

ՔԵԴ

Նրանք ընկան քո առջև ոչխարների ու եզների պես, և դու վարվեցիր
նրանց հետ այնպես, ինչպես քո սեփական սպանդանոցում: Ահա թե
6 ինչու ցանկանում եմ քեզ հատուցել: Թող մեծ պասը կրկնակի երկար
տևի, քան այժմ է ու քեզ արտոնություն տրվի սպանելու հիսունինը
անասուն մեկ շաբաթում:

ԴԻԿ

Ավելին չեմ կամենում:

ՔԵԴ

Եվ, ճշմարիտն ասած, պակասին էլ արժանի չես: Ես պետք է կրեմ այս հաղթանակի նշանը (*Հագնում է Հեմֆրու լանջապանը*), իսկ նրանց մարմինը թող ձիս քարշ տա այնքան ժամանակ, քանի դեռ չեմ մտել Լոնդոն, որտեղ քաղաքագլխի սուրը կտանենք մեր առջևով:

ԴԻԿ

Եթե միտք ունենք հաջողության հասնել ու բարի գործ անել, պետք է ջարդել զնդանների դռները ու ազատ արձակել բանտարկյալներին:

ՔԵԴ

Մի՛ վախենա, ես քեզ կպահովեմ: Դե՛հ, գնանք Լոնդոն:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Մի դահլիճ թագավորական պալատում:

Մտնում են թագավորը՝ ձեռքին աղերսագիրը, թագուհին՝ տեսնելով Սեֆոլկի գլուխը՝ արտասվում է, Բոկինգեմը, լորդ Սեյը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հաճախ եմ լսել, որ վիշտն է մեղմում մարդկային ոգին
Եվ նրան դարձնում վեհերոտ ու թույլ:
Ուրեմն, խորհիր վրեժի մասին, հերի՛ք արտասվես:
Բայց ո՞վ կարող է արցունքը զսպել սիրո առջև:
Ես պիտի սեղմեմ բաբախող սրտիս նրա գլուխը,
Ո՞ւր է մարմինը, որ փարվեմ նրան:

ԲՈԿԻՆԳԵՄ

(Արքային) Ձեր մեծություն, ի՞նչ պատասխան եք տալու ապստամբների աղերսագրին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Պետք է ուղարկեմ մի եպիսկոպոս,
Որ լեզու գտնի այդ ամբոխի հետ:
Թող աստված չանի, որ այսքան անմեղ հոգիներ ընկնեն սրի հարվածից:
Իսկ ես Քեդի հետ կխոսեմ փոքրով,
Քան թե արյան մեջ կփաշենք նրանց:
Բայց կաց մի՛ վայրկյան, վերստին կարդամ աղերսագիրը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, արյունարբու վայրի սարուկներ,
Մի՞թե, ասացեք, այս չքնաղ դեմքը,
Որ ղեկավարվել գիտեր ինձանով, մոլորակի պես,
Չէ՞ր կարող նրանց զայրույթը մեղմել,
Ովքեր այդ մարդուն արժանի չէին երբեք նայելու:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լորդ Սեյ, Ջեկ Քեդը գլուխդ է ուզում:

ՍԵՅ

Հույս ունեմ՝ մինչ այդ կսպանեք նրան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ է, տիրուհի:
Դու դեռ ողբո՞ւմ ես մահը Սեֆոլկի:
Վախենում եմ ես, սեր իմ, թե մեռնեմ,
Դու լաց չլինես ինձ վրա այդպես:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՜, ո՛չ, սիրելիս, ես չէի ողբա, վշտից կմեռնեի:

Մտնում է մի սուրհանդակ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ է պատահել, ի՞նչ լուր ես բերել:
Ինչո՞ւ ես այդպես խիստ անապարում:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

27 Ապստամբները Սաութվորկ մտան: Փութացե՛ք, տեր իմ.
Քեզն հռչակել է իրեն Մորտիմեր.
Իբրև սերվել է դուքս Կլարենսի մեծանուն տոհմից:
Ձեզ հափշտակիչ, գող է անվանում,
Երդվել է իրեն արքա հռչակել Վեստմինստերում,
Նրա բանակն են կազմում անողորմ, վայրի գյուղացիք
Եվ քուրջեր հագած բիրտ խաժամուժը:
Նրանք թև առած Ստեֆորդների դժնդակ մահից՝
Նետվում են առաջ համարձակորեն և բոլորին էլ՝
Լինեն գիտնական, թե՛ ազնվական, թե՛ պալատական կամ թե՛ օրենսգետ,
Նրանք կոչում են ազահ թրթուրներ և մտադիր են նրանց սպանել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՜, անգութ մարդիկ, չեն էլ հասկանում, թե ինչ են անում:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

39 Ողորմած տեր իմ, մեկնիր Կիլինգվորթ,
Մինչև նրանց դեմ մենք բանակ հանենք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, թե կենդանի լիներ Սեֆոլկը,
Քենացի այդ բոլոր ապստամբներին իսկույն կսաստեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դավաճանները ատում են քեզ, Սեյ:
Ուրեմն, մեզ հետ մեկնիր Կիլինգվորթ:

ՍԵՅ

Ասել է՝ ձգել ձեզ վտանգի մեջ:
Իմ տեսքը նրանց ատելի է խիստ.
Ես լավ է մնամ այս մեծ քաղաքում
Եվ այրեմ քաքուն, որքան կարող եմ:

Մտնում է երկրորդ սաւրճանդակը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քեդը Լոնդոնի կամուրջը առավ,
Փախչում են մարդիկ՝ թողած տները.
Ավարի ծարավ խաժամուժն անզուք
Դավաճանի հետ երդվել է, տեր իմ,
Կողոպտել քաղաքն ու ձեր պալատը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Պետք չէ ճապաղել, մեկնեցեք ձիով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնա՛նք, Մարգարիտ, աստված մեր հույսն է, մեր օգնականը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, Սեֆոլկի հետ մեռավ իմ հույսը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Սեյին) Դե՜հ. մնաս բարյավ, սիրելի իշխան,
Պետք չէ վստահել ապստամբներին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ոչ ոքի, որ ձեզ վախից կմատնեն:

ՍԵՅ

Ես հավատում եմ անմեղությանս՝
Ուստի և՛ քաջ եմ, և՛ վճռական:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նույն վայրը: Թաուեր:

Պարսպի վրա երևում են լորդ Սքեյլսը, ներքևում՝ երկու կամ երեք քաղաքացի

ՍՔԵՅԼՍ

Հը՞, ի՞նչ է, Ջեկ Քեդին սպանե՞լ են:

Ա. ՔԱՂԱՔԱՑԻ

Ո՛չ, միլորդ։ Երևի դեռ չեն սպանել։ Ապստամբներն գրավել են կամուրջը, սպանում են բոլոր նրանց, ովքեր ընդդիմանում են։ Քաղաքագլուխը հայցում է ձերդ ողորմածության օգնությունը Թաուերից, որպեսզի քաղաքը պաշտպանի ապստամբներից։

ՍՔԵԼՍ

Կարող եմ ձեզ տալ մի փոքրիկ ջոկատ,
Զի դավաճանը ինձ էլ է նեղում։
Նրանք փորձեցին Թաուերն առնել։
Մեկնե՛ք, Սմիթֆիլդ, հավաքե՛ք մարդիկ.
Կուղարկեմ այնտեղ ձեզ Մետյու Գոֆին։
Քաջ կռվեք հանուն ձեր թագավորի,
Ձեր հայրենիքի ու ձեր գոյության,
Դե՛ն, մնա՛ք բարյավ, ես պիտի գնամ։

Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Լոնդոն։ Կենոն-ստրիտ։

Մտնում է Ջեկ Քեդը իր կողմնակիցների հետ։ Նա գավազանով հարվածում է Լոնդոնի քարին։

ՔԵԴ

Հիմա Մորտիմերն է այս քաղաքի տերը։ Եվ այստեղ՝ Լոնդոնի քարին նստելով, ես պատվիրում և հրամայում եմ, որ ի հաշիվ քաղաքի, մեր իշխանության առաջին տարին Լոնդոնի շատրվաններից ցայտեն միայն կարմիր գինի։ Եվ, այնուհետև, ով ինձ չկոչի լորդ Մորտիմեր, նա դավաճան է։

Վազ տալով ներս է մտնում մի զինվոր։

ԶԻՆՎՈՐ

Ջեկ Քե՛դ, Ջեկ Քե՛դ...

ՔԵԴ

Գետին տապալեք սրան։

Սպանում են զինվորին։

ՍՄԻԹ

Եթե այս մարդը մի քիչ խելք ունենար, ձեզ այլևս չէր անվանի Ջեկ Քեդ: Կարծեմ, նրան մի լավ դաս տվին:

ԴԻԿ

Տեր իմ, Սմիթֆիլդում ժողոված զորք կա:

ՔԵԴ

Այն դեպքում գնանք ու կռվենք նրանց հետ: Բայց նախ՝ գնա և այրիր Լոնդոնի կամուրջը, և, եթե կարող ես, այրիր նաև Թաուերը: Դեհ, գնանք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Լոնդոն: Սմիթֆիլդ:

Տագնապ: Մեսյու Գոֆը, ինչպես նաև թագավորի կողմնակիցները սպանված են: Մտնում է Ջեկ Քեդը իր համախոհների հետ:

ՔԵԴ

Այսպես, պարոններ: Այժմ թող ձեզնից մի քանիսը գնան ու քարու-
2 քանդ անեն Սավոյի պալատը, իսկ մյուսները՝ դատարանի շենքերը:
Ամեն ինչ կործանեք:

ԴԻԿ

Մի խնդիրք ունեմ, ձեր մեծություն:

ՔԵԴ

Այդ մի բառիդ համար քեզ կշնորհեի լորդի տիտղոս, եթե կամենայիր:

ԴԻԿ

7 Ես կկամենայի, որ Անգլիայի օրենքները դուրս գային միայն ձեր բե-
րանից:

ՋՈՆ

(Առանձին) Հիվանդ կլինեին այդ օրենքները, քանզի օրենքները բերանն են խոցել նիզակով, և մինչև այսօր վերքը ապաքինված չէ:

ՍՄԻԹ

(Առանձին). Ո՛չ, Ջոն, դա կլինի գարշահոտ օրենք, որովհետև նրա բերանից փչում է նեխված պանրի հոտ:

ՔԵԴ

Այդ մասին ես արդեն խորհել եմ և այդպես էլ լինելու է: Գնացե՛ք, այրե՛ք տերության բոլոր արձանագրությունները, բերանս պիտի դառնա Անգլիայի խորհրդարանը...

ՋՈՆ

(Առանձին) Ուրեմն, մենք կունենանք խայթիչ օրենքներ, եթե նրա ատամները չքաշեն:

ՔԵԴ

Եվ, այսուհետև, ամեն ինչ ընդհանուր է լինելու:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տե՛ր իմ, ինչպիսի՜ ավար, ինչպիսի՜ ավար: Ահա՛ լորդ Սեյը, այն մարդը, որ Ֆրանսիայում ծախեց քաղաքները: Նա, որ ստիպեց մեզ համաերեսուն անգամ տասնհինգ տոկոսանոց հարկեր վճարել: Եվ ամեն մի ֆունտ-ստեռլինգից մի-մի շիլինգ կորզեց վերջին պատերազմի ծախսի համար:

Մտնում է Ջորջ Բեվիսը՝ բերելով լորդ Սեյին:

ՔԵԴ

Շատ լավ, այդ բանի համար նա պետք է տասն անգամ գլխատվի: Սե՛յ, նայիր ինձ, դու շղարշե մահուդյա սռնձալարի լորդ, այժմ դարձել ես մեր արքայական իրավասության ենթական: Ի՞նչ կարող ես պատասխանել իմ մեծությանը այն բանի համար, որ դու Նորմանդիան հանձնեցիր մսյո Բեզիմեքյուին՝ Ֆրանսիայի թագաժառանգին: Ի գիտություն քեզ՝ այս մարդկանց ներկայությամբ ու իմ՝ լորդ Մորտիմերիս, ես այն ավելն եմ, որով մաքրելու եմ պալատը այնպիսի զարշանքությունից, ինչպիսին դու ես: Դու նենգ մարդուց էլ ավելի ապականեցիր տերության ջահելներին՝ բացելով վարժարաններ: Մինչդեռ մեր նախահայրերը չգիտեին ուրիշ գրքեր, բացի հաշվեփայտից: Դու գրքերի տպագրությունն էլ մտցրիր: Դու, հակառակ թագավորի, նրա թագի ու արժանապատվության, կառուցեցիր թղթի գործարան: Կապացուցեն, որ դու շրջապատել ես քեզ այնպիսի մարդկանցով, ովքեր սովորաբար խոսում են գոյականների ու բայերի մասին և նույնպիսի զարշելի բառեր են օգտագործում, որ չի կարող հանդուրժել քրիստոնեական ոչ մի ականջ: Դու կարգեցիր հաշտարար դատավորներ, որոնք խեղճ մարդկանց կանչում էին այնպիսի պատասխանատվության, որ նրանք ի վիճակի չէին պատասխանելու:

Բացի այդ, դու խեղճ ժողովրդին բանտ էիր նետում, և, որովհետև նրանք կարդալ չգիտեին, կախաղան էիր բարձրացնում և հենց միայն այդ բանի համար նրանք արժանի էին ապրելու: Քո հեծած ձին տապնակածածկ ունի, այդպես չէ՞:

ՍԵՅ

Դրանով ի՞նչ ասել կուզես:

ՔԵԴ

Այն, որ չպետք է քո ձին ծածկեր վերարկուով, երբ քեզնից արժանի մարդիկ քայլում են տաբատներով ու բանկոններով:

ԴԻԿ

Եվ տարիներով նույն շորը հագնում, օրինակ՝ ես, մսագործս մեկը:

ՍԵՅ

Լսիր, Քենտի ժողովուրդ...

ԴԻԿ

Ի՞նչ կասես Քենտի մասին:

ՍԵՅ

Միայն սա. bona terra, mala gens[1].

ՔԵԴ

Տարե՛ք, տարե՛ք սրան, տե՛ս, լատիներեն էլ է խոսում:

ՍԵՅ

Լսե՛ք, թե ինչ եմ ցանկանում ասել,
Հետո ուղարկեք ինձ որտեղ կամիք.
62 Հուլիոս Կեսարի «Մեկնություններ»-ում
Քենտը նշվում է այս կղզու վրա բարեկարգ մի վայր:
Զքնաղ երկիր է, հարուստ ու բերրի,
Մարդիկ ձեռնառատ, ժրաջան ու քաջ,
Եվ այս բոլորն ինձ հույս է ներշնչում,
Որ ձեզ զգացումն օտար չէ խղճի:
Չեմ ծախել Մենը, ո՛չ էլ՝ Նորմանդիան,
Բայց կյանքիս գնով դրանք ետ կառնեմ,
Ես դատել եմ միշտ գթառատ սրտով,

[1] *Հողը բերքատատ է, ժողովուրդն է վատ* (լատ.):

Լացն ու աղերսանքն իմ սիրտն են շարժել, կաշառքը՝ երբեք.
Ու թե մի բան եմ խնդրել ձեր ձեռքից, այդ լոկ արել եմ ես նրա համար.
Որ դուք և արքան և տերությունը միշտ հաստատ մնան.
Ես գիտուններին բյուր շնորհներ եմ պարգևել առատ,
Քանզի գրքերով ինքս բարձրացա։
Աստծո անեծքն է տգիտությունը,
Իսկ գիտությունը՝ թևերը նրա,
Որ ամբառնում են մեզ դեպի երկինք։
Թե չեք ժառանգել դուք դևի ոգին.
Ապա ե՛տ կանգնեք ինձ սպանելու ահավոր մտքից,
Այս լեզուն օտար արքաների հետ գործի եմ դրել ձեզ համար միայն...

ՔԵԴ

Լռի՛ր, երբևէ կռվե՞լ ես ռազմի զգեստներ հագած։

ՍԵՅ

Բարձրադիրք մարդու ձեռքը երկար է,
Հաճախ չեմ տեսել թշնամիներիս, բայց տապալել եմ նրանց անվրեպ։

ՋՈՐՋ ԲԵՎԻՍ

Օ՜, նիվաղային երկչոտ արարած,
Դու հարվածել ես մարդկանց թիկունքի՞ց։

ՍԵՅ

Ձեր բարեկեցիկ ապրուստի համար, տեսեք, այտերս խիստ գունատվել են։

ՔԵԴ

Մի ապտակ հասցրու նրա ականջին, որ նորից շիկնեն։

ՍԵՅ

Խեղճ մարդկանց դատը գլուխ բերելուց՝
Ես քայքայեցի առողջությունս բանտում նստելով։

ՔԵԴ

Քեզ կտանք կանեփե արգանակ ու կապաքինենք կացնով։

ԴԻԿ

Ինչո՞ւ ես այսպես դողում, մարդ աստծո՛։

ՍԵՅ

Հիվանդությունը և ոչ թե ահն է խլել իմ ուժը։

ՔԵԴ

Մի՛ տեսեք, տեսե՛ք, նա գլխով նշան է անում, կարծես ուզում է ասել՝ կփոխհատուցեմ ձեզ: Այս տեսեք, նրա գլուխը ավելի ամուր կկանգնի՞ ցցի ծայրին, թե՞ ոչ: Տարե՛ք նրան և գլխատեք:

ՍԵՅ

Ասե՛ք, ինչո՞վ եմ ձեզ վիրավորել,
Մի՞թե ձգտել եմ ես հարստության կամ փառք եմ ուզել,
Մի՞թե լցված են իմ սնդուկները գողացված ոսկով,
Մի՞թե չափից դուրս շքեղ է զգեստս,
Ես ո՞ւմ եմ արդյոք չարիք պատճառել, որ մահս եք ուզում:
Այս անմեղ ձեռքերն արյուն չեն տեսել,
Իմ հոգում չկան նենգապիղծ մտքեր,
Օ՜, թողեք ապրեմ:

ՔԵԴ

(Առանձին) Այս բառերն արթնացնում են հոգուս մեջ խղճի խայթ, բայց ես կսանձեմ այդ զգացմունքը: Նա պետք է մեռնի հենց այն բանի համար, որ այդպես լավ է պաշտպանում իր կյանքի դատը: *(Բարձր)* Տարե՛ք նրան: Նրա լեզվի տակ սատանա կա: Նա չի խոսում աստծո անունով: Գե՛ն, տարե՛ք նրան և անմիջապես գլուխը կտրեք: Իսկ հետո քանդեք նրա փեսայի՝ սըր Ջեմս Կրոմերի տունը: Նրա գլուխն էլ կտրեք և երկուսի գլուխը ցցերին հագցրած բերեք այստեղ:

ԲՈԼՈՐԸ

Ամեն ինչ կանենք:

ՍԵՅ

Հայրենակիցնե՛ր, ի՞նչ է սպասում ձեր մահից հետո
Ձեր թռչող հոգուն, թե աղոթելիս՝
Աստված էլ ձեզ պես կարծրասիրտ լինի:
Ուստի, գթացեք, մի՛ խլեք կյանքն իմ:

ՔԵԴ

Դո՛ւրս տարեք սրան ու հրամանս ի կատար ածեք:

Գնում են մի քանի մարդ, տանելով լորդ Սեյին:

Տերության ամենահարուստ իշխանը իր գլուխը չի պահի իր ուսերի վրա, եթե ինձ հարկ չտա, և ոչ մի կույս չի հարսնանա, եթե ինձ չընծայի իր կուսությունը: Բոլոր տղամարդկանց կանայք ինձնից կախում կու-

նենան in capite[1] և մենք պարտավորեցնում ու հրամայում ենք, որպեսզի նրանց կանանց տրվի լեզվի ու սրտի լրիվ ազատություն:

ԴԻԿ

Տեր իմ, ե՞րբ ենք գնալու Չիպսայդ, որ տապարներով վճարենք վերցրած ապրանքները:

ՔԵԴ

Հենց հիմա:

ԲՈՒԹՐԸ

Լավ կլինի:

Մտնում է մի ապստամբ՝ բերելով գլուխները:

ՔԵԴ

Բա սա ավելի լավը չէ՞: Թող նրանք համբուրվեն, որովհետև միմյանց շատ էին սիրում: Իսկ այժմ հեռացրե՛ք, քանի դեռ նրանք մեկմեկու հետ չեն խորհրդակցել, որ ավելի շատ քաղաքներ ծախեն ֆրանսիացիներին: Զինվորնե՛ր, հետաձգե՛ք քաղաքի կողոպուտը մինչև գիշեր: Գավազանների փոխարեն այս գլուխները մեր առջև գցած՝ մենք ձիով անցնենք փողոցներով և ամեն անկյունում նրանց ստիպենք, որ համբուրվեն: Գնացի՛նք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Լոնդոն: Սաութվորկ:

Տագնապի ու ավարի ազդանշան: Նորից մտնում է Քեդը իր խաժամուժով:

ՔԵԴ

Դեպի՜ վեր, Ֆիշստրիտ փողոցով ցած իջեք Սուրբ Մագնուսի փողոցի անկյունը, սպանեք բոլորին ու տապալեք գետին: Լցրե՛ք նրանց Թեմզան: *(Փողեր՝ բանակցության):* Այս ի՞նչ աղմուկ եմ լսում: Ո՞վ է այսպես լրբորեն հանդգնել, որ ավարի կամ բանակցության փող է հնչեցնում, երբ ես հրամայել եմ սպանել թշնամուն:

Մտնում են Բուկինգեմը ու Ծեր Կլիֆորդը զորքի ուղեկցությամբ:

[1] *Իրենց կյանքով* (լատ.):

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Նրանք են, ովքեր համարձակորեն կամենում են քո անդորրը խռովել։
Գիտցի՛ր, արքա՛ն է մեզ որպես դեսպան
Ուղարկել այստեղ, ժողովրդի մոտ, ում խաբել ես դու։
Մենք շնորհում ենք ներում բոլորին,
Ովքեր քեզ լքած՝ կգնան տնե՛րը խաղաղությամբ։

ՏԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Ի՞նչ եք ասում դուք, հայրենակիցնե՛ր.
Չե՞ք հնազանդվում կամ չե՞ք խոնարհվում
Ձեզ առաջարկվող գթության առաջ։
Թե՞ ցանկանում եք, որ մի ապստամբ ձեզ մահվան հանձնի։
Նա, ով սիրում է մեր թագավորին, սպասում ներում,
Թող իր գլխարկը դեպի վեր նետե և ասի՝ աստվա՜ծ պահե արքային։
Իսկ ով ատում է նրան և նրա փառավոր հորը,
Ումից դողում էր ամբողջ Ֆրանսիան,
Թող զենք շարժելով մեր կողքից անցնի։

ԲՈԼՈՐԸ

Աստվա՜ծ, պահի՛ր թագավորին։ Աստվա՜ծ, պահի՛ր թագավորին։

ՔԵԴ

Ի՞նչ։ Մի՞թե դուք՝ Բուկինգեմ ու Կլիֆորդ, այսքան քաջություն ունեք. իսկ դուք, ստոր գյուղացիներ, հավատո՞ւմ եք նրանց կամ թե ուզում եք, որ ձեզ կախաղան բարձրացնեն, փակցնելով կարծեցյալ ներումը ձեր կրծքին։ Մի՞թե իմ սրով ջարդեցի Լոնդոնի դարպասը, որ դուք ինձ լքեք Ուայտ Հարտի մոտ, Սաութվորկում։ Ես կարծում էի, թե դուք վար չեք դնի ձեր զենքերը, մինչև չնվաճեք ձեր վաղեմի ազատությունը։ Բայց դուք բոլորդ էլ դուրս եկաք վախկոտ և դասալիք։ Ձեզ հաճելի է ապրել որպես ստրուկներ ազնվականների մոտ։ Թող նրանք ծանր բեռով ջարդեն ձեր մեջքը, տնից դուրս քշեն ու ձեր աչքի առաջ բռնաբարեն ձեր կանանց ու աղջիկներին։ Ինչ ինձ է վերաբերում՝ ապա ես մենակ էլ մի հնար կգտնեմ։ Աստծո անեծքը թո՛ղ թափվի ձեր բոլորի գլխին։

ԲՈԼՈՐԸ

Մենք կհետևենք Քեդին։ Մենք կհետևենք Քեդին։

ՏԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Ա՜խ, մի՞թե Հենրի Հինգերորդն ունի Ջեկ Քեդ անունով մի արու զավակ,
Որ բղավում եք. «Ուզում ենք գնալ նրա ետևից»,

Մի՞թե կտանի նա ձեզ Ֆրանսիա,
Եվ դուք կդառնաք մի դուքս կամ թե կոմս:
Ավա՜ղ, նա չունի նույնիսկ մի խրճիթ,
Մի փախչելի անկյուն, որ պատսպարվի:
Ինքն էլ չգիտե, ինչու է ապրում,
Կողոպտում է ձեզ, մերձավորներիդ:
Մի՞թե ամոթ չէ, երբ դուք վիճում եք,
Վախկոտ թշնամին՝ ձեզանից պարտված,
Գալիս է, որ ձեզ պարտության մատնի:
Ինձ թվում է, որ այս քաղաքային խառնակության մեջ,
Տեսնում եմ նրանց, ովքեր Լոնդոնում տնօրինում են
Հանդիպած մարդուն կոչելով՝ գեղջուկ:
Ավելի լավ է, որ տասը հազար խառնածին Քեդեր
Կորչեն մի գիշեր, քան թե թշնամուց խնդրեք գթություն:
Դեպի Ֆրանսիա՜, դեպի Ֆրանսիա՜, և դուք ետ առեք
Կորսված հողերը՝ ձեր տունն հարազատ:
Հենրին փող ունի, իսկ դուք՝ քաջություն,
Աստված մեր կողմն է և մի՛ կասկածեք հաղթության վրա:

ԲՈԼՈՐԸ

Ապրի՛ Կլիֆորդը: Գնա՜նք թագավորի ու Կլիֆորդի ետևից:

ՔԵԴ

(Առանձին) Երբևէ փետուրն այսպես հեշտորեն տարուբերվե՞լ է, ինչպես այս ամբոխը: Հենրի Հինգերորդի անունը նրանց քաշում է դեպի հազար դժբախտությունները և ստիպում է նրանց լքել ինձ ստորաբար: Ես տեսնում եմ, թե նրանք ինչպես գլուխ գլխի տված՝ խորհրդակցում են, որ ինձ բռնեն անսպասելիորեն: Իմ սուրը կհարթի ճանապարհս. միտք չունի այստեղ մնալ: Ի հեճուկս սատանաների ու դժոխքի՝ կբացեմ ճանապարհս ամբոխի միջով, և թող երկինքը ու պատիվս ինձ վկա լինեն, որ ոչ թե իմ թուլությունը, այլ միայն իմ կողմնակիցների ստոր ու ամոթալից դավաճանությունը ինձ ստիպում է նահանջել:

Կռվելով գնում է:

ԲԱԿԻՆԳԵՄ

Ի՞նչ: Փախչո՞ւմ է նա, վազե՛ք ետևից:
Ով նրա գլուխն արքային բերի՝
Նա տասը հազար ոսկի կստանա:

Գնում են մի քանի մարդ:

Գնա՛նք զինվորներ ու գտնենք միջոց
Ձեզ հաշտեցնելու ձեր արքայի հետ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Կենիլվորթի դղյակը:

Շեփորներ: Դղյակի սանդղավանդի վրա երևում են թագավորը, թագուհին և Սոմերսետը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Արդյո՞ք եղե՞լ է երկրի երեսին մի այլ թագավոր,
Որ գահ ունենար և կարողություն հրամայելու,
Եվ ինձնից էլ քիչ բախտից գոհանար:
Ես հազիվ էի իմ օրորոցից ոտք դրել գետնին,
Երբ ինձ՝ մանկանս, կարգեցին արքա:
Ոչ մի հպատակ այնպես չի տենչում թագավոր լինել,
Ինչպես տենչում եմ ես մի հասարակ հպատակ դառնալ:

Մտնում են Բուկինգհեմը և Տեր Կլիֆորդը:

ԲՈՒԿԻՆԳՀԵՄ

Տեր իմ, ձեզ ողջույն և ուրախ լուրեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ. բռնվա՞ծ է դավաճան Քեյդը,
Թե՞ նահանջում է, որ ուժ հավաքի:

Բերում են Քեյդի կողմնակիցների մի խումբ՝ վզներին օղապարան:

ՏԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Նա փախավ, տեր իմ: Եվ նրա զորքն է անձնատուր լինում.
Տեսեք, թե նրանք ինչ խոնարհությամբ կանգնել են ձեր դեմ.
Օղակը վզին և սպասում են ձեր արդար վճռին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Երկի՛նք, բաց արա դռներդ հավերժ,
Որ իմ օրհնանքի, շնորհակալության ընծան ընդունես:
Զինվորնե՛ր, ձեր կյանքն այսօր փրկեցիք և ցույց տվեցիք,

Թե դուք ինչպես եք սիրում ձեր երկիրն ու թագավորին:
Թող շարունակվի ձեր նման բարի մտադրությունը,
Եվ ես, ինչպիսի փորձանք էլ տեսնեմ,
Գիտցեք, ձեր հանդեպ չեմ լինի անգութ:
Ես ձեզ ներում եմ: Իմ բարի խոսքով
Թող ամեն զինվոր իր տունը գնա:

ԲՈԼՈՐԸ

Աստվա՜ծ պահի՛ թագավորին: Աստվա՜ծ պահի՛ թագավորին:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թույլ տվեք, տեր իմ, ձեզ ծանուցանել,
Որ Իռլանդիայից դուքս Յորքն եկավ:
26 Գալլոուգլասների ու քաջ կեռների հզոր բանակով
Եկել է հաստատուն նա այս կողմերը:
Զենք է վերցրել նա այն մտքով,
Որ ձեզնից ընդմիշտ նա հեռացնի դուքս Սոմերսեթին.
Ում համարում է, ստույգ դավաճան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այսպիսով, այսօր իմ, իմ տերությունը ընկել է Յորքի ու Քեդի միջև՝
Նման այն նավին, որ խուսափելով ահեղ փոթորիկից, փնտրում է անդորր:
Բայց այդ փորձությունից նավը խուժում են ծովահենները:
Հենց նոր ես ետ մղեցի Քեդին իր մարդկանցով.
Բայց ահա Յորքն է զինված հայտնվում:
Ես խնդրում եմ քեզ, Բուկինգհեմ, գնա հանդիպիր նրան,
Հարցրու, թե ինչո՞ւ նա զենք է վերցրել.
Եվ ասա նրան, որ դուքս Էդմոնդին ես բերդ կուղարկեմ,
Իսկ դու, Սոմերսեթ, կմնաս այստեղ,
Քանի դեռ Յորքի զորքը չի ցրվել:

ՍՈՄԵՐՍԵՏ

Տեր իմ, իմացեք, որ երկրի համար ես սիրահոժար
Անձս եմ զիջանում ոչ միայն բանտին, այլև իսկ մահվան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչ էլ որ լինի, պետք չէ Յորքի հետ խոսել կոպտորեն,
Քանզի կատաղի բնություն ունի և չի հանդուրժում խստագին բառեր:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Շատ բարի, տեր իմ և մի՛ կասկածեք,
Ամեն ինչ կանեմ հօգուտ արքայիս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնա՛նք, Մարգարիտ, պետք է սովորել լավագույն ձևով երկիրը վարել,
Թե ոչ կանիծի Անգլիան իմ դժբախտ իշխանությունը:

Փողեր: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Քենտ· Այդենի պարտեզը:

Մտնում է Քեդը:

ՔԵԴ

Անիծվի՜ փառասիրությունը, ամո՜թ քեզ, Քե՛դ: Զենքիս սուր ունեմ, բայց քիչ է մնում, որ քաղցից մեռնեմ: Հինգ օր է արդեն, ինչ թաքնվում եմ այս անտառներում և չեմ համարձակվում դուրս գալ, որովհետև ամբողջ երկիրն ինձ է որոնում: Բայց այժմ քաղցը ինձ այնպես է նեղում, որ թեկուզ ինձ խոստանան հազար տարվա կյանք, միևնույն է, այլևս չեմ կարող համբերել: Ահա՛ թե ինչու աղյուսե պատը մագլցելով, իջա այս այգին. գուցե ճարեմ ուտելու խոտ կամ աղցան, որ վատ չէ մարդու ստամոքսը զովացնելու այս շոգ եղանակին: Կարծեմ, «աղցան» բառը ստեղծվել է, որ ինձ բարիք շնորհի, քանզի երկար ժամանակ, եթե աղցանի լայն բերքը չծառայեր ինձ իբրև սաղավարտի փոխարեն, գանգս արևից կճեղքվեր, իսկ մյուս դեպքում՝ արշավանքի ժամանակ, երբ ես մեռնում էի ծարավից, այն ծառայել է ինձ որպես ջրաման և այժմ էլ պետք է իմ քաղցը մեղմի:

Մտնում է Այդենը, ետևից՝ նրա ծառաները:

ԱՅԴԵՆ

Ա՜խ, ո՞վ կարող է ապրել պալատի վազվզուքի մեջ,
Եվ հանույք զգալ նման զբոսանքից:
Հորս ժառանգած կալվածքն այս փոքրիկ
Ինձ համար արժե մի ողջ տերություն:
Ես չեմ բարձրանում այլոց անկումով,
Չեմ ձգտում դառնալ հարստության տեր,

Ինչ էլ որ ունեմ՝ բավ է ինձ համար,
Աղքատն իմ շեմից հեռանում է գոհ:

ՔԵԴ

(Առանձին) Ահա այգու տէրը: Նա եկել է, որ ինձ բռնի որպես մի թափառաշրջիկի, որն առանց թույլտվության մտել է նրա կալվածքը: Ա՜խ, դո՛ւ, սրիկա՛, ուզո՞ւմ ես ինձ բռնել ու գլխիս համար պարգևներից ստանալ հազար ոսկի՞: Բայց իրարից բաժանվելուց առաջ ես քեզ կստիպեմ, որ խժռես երկաթը, ինչպես կխժռեիր ջայլամը և կուլ տաս իմ սուրը, ինչպես կուլ կտայիր քորոցը:

ԱՅԴԵՆ

Ով էլ որ լինես, քեզ չեմ մատնելու.
Չէ որ, կոպիտ արջ, քեզ չեմ ճանաչում:
Մի՞թե հերիք չէ, որ ցանկապատից ցատկել ես այգիս
Եվ գողի նման բերքս ես խժռում.
Դեռ սպառնո՞ւմ ես լպիրշ խոսքերով:

ՔԵԴ

Քեզ սպառնա՞լ: Այո՛: Երդվում եմ ազնվագույն արյամբ, որ երբևէ հեղվել է, մորուքդ կփետեմ: Ապա ինձ մի լավ նայիր: Հինգ օր է, բերանս մսի կտոր չեմ դրել, բայց փորձիր ինձ մոտենալ նույնիսկ քո հինգ ծառաներով: Թող աստված այս խոտն ինձ շատ համարե, թե ձեզ բոլորից դռան մեխերի պես չզարնեմ գետնին:

ԱՅԴԵՆ

Օ՜, ո՛չ: Քանի դեռ կանգուն է Անգլիան,
Չեն ասի Քենտի Էսքվայր Այդենը
Կռվեց տառապյալ սովամահի հետ:
Հակակշռիր քո խիստ սևեռուն հայացքը իմին
Ու թե կարող ես դիմագրավիր ինձ քո աչքերով:
Նայի՛ր. բաղդատիր անդամ առ անդամ,
Դու ինձնից անչափ փոքր ես ու նվազ,
Ձեռքդ բռունցքիս մի մասի չափ է,
Ոտքդ իմ գերան ոտքի համեմատ՝ լոկ մի փայտիկ.
Իմ ոտնաթաթը քո ամբողջ մարմնի ուժն է սպառնակում,
Ու թե բազուկս հանկարծ վեր քաշեմ,
Գիտցիր, փորված է քո գերեզմանը երկրի երեսին:

Գալով բառերին՝ պետք չէ ցույց տալու,
Թե ում խոսքն ունի առավելություն:
Թող սուրս խոսի՛ կամ լռի՛ լեզուս:

ՔԵԴ

Երդվում եմ իմ խիզախությամբ, սա ամենակատարյալ քաջամարտիկն է, որի մասին երբևէ լսել եմ: Օ՜, իմ դաշո՛ւյն, երբ բթանա քո սուր շեղբը և չկարողանա այս հաստամարմին շատախոսին կտոր-կտոր անել, եզան լեշի պես, ապա դու չպետք է ներենս քո պատյանի մեջ: Ես ծընրադիր կաղերսեմ աստծուն, որ քեզ նայի մեխ դարձնի: *(Նրանք կռվում են: Քեդն ընկնում է):* Օ՜, ես մեռնում եմ: Ա՜խ, քա՜ղցը, քա՜ղցը սպանում է ինձ: Թող տասը հազար սատանա գան ու կանգնեն իմ դեմ, ինձ տվեք այն տասը բաժին նաշը, որից զրկել եք, և ես բոլորի հախից կգամ: Զարացի՛ր, այգի և դարձի՛ր այն բոլոր մարդկանց գերեզմանը, ովքեր ապրում են այս տանը, որովհետև այստեղից թռավ Քեդի անպարտելի ոգին:

ԱԳՆԵՍ

Մի՞թե դավաճան, զազրելի Քեդին ես սպանեցի:
Դաշո՛ւյն իմ, խիզախ արարքիդ համար քեզ տեղ է, օրհնեմ.
Ու թե ես մեռնեմ՝ դու պետք է շողաս իմ շիրմի վրա.
Ձեն մաքրի ցեղից աս արյունն երբեք,
Բայց այն կփրեն, ինչպես ներողի կարմրավուն բիծը.
Որ ազդարարի քո անթիվ փառքը:

ՔԵԴ

Ագնե՛ս, մնա՛ս բարով: Դու հաղթանակեցիր քո ճակատագրական ժայռանիր Քենտին իմ անունից, որ ինձ կործանելով՝ կորցրեց իր ամենապայծառ զավակին և հողորիր աշխարհի բոլոր մարդկանց, որ վախկոտներ դառնան, քանզի ես, որ երբեք չեմ վախեցել, պարտվեցի ոչ թե ուժից, այլ քաղցից *(մեռնում է):*

ԱԳՆԵՍ

Ո՜վ արդար երկինք, Եղի՛ր դատավոր.
Տե՛ս, թե ինչպես է ինձ վիրավորում:
Սատկի՛ր, անզգամ: Դու անե՜ծք նրա, ով ծնել է քեզ:
Ինչպես խոցեցի մարմինդ սրով,
Այնպես ուզում եմ քո հոգին խոցել խավար դժոխքում:

Քեզ բերանքսիվար ես պիտի քարշ տամ մինչև աղբան
Որն էլ կդառնա գերեզմանը քո,
Որտեղ կկտրեմ գլուխդ անամոթ:
Եվ այն կտանեմ հաղթականորեն թագավորին մեր.
Թողնելով քո դին ագռավներին կեր:

Գնում է, քարշ տալով Բեկի դիակը.

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հարթավայր Դարտֆորդի ու Բլեքհիթի միջև:

Մտնում է Յորքը իռլանդական բանակի հետ, թմբուկների ու դրոշների ուղեկցությամբ:

ՅՈՐՔ

Յորքը եկել է Իռլանդիայից, որպեսզի հայցե իր իրավունքը
Ու խլի թագը թուլակամ Հենրուց:
Բարձրաձայն զարկե՛ք զանգերը բոլոր, վառե՛ք կրակներ
Ավելի պայծառ՝ ի պատիվ Անգլիո սուրբ արքայի:
Օ՛, sancta majestas[1]: Ո՞վ չի առնի քեզ թանկարժեք գնով:
Թող նա խոնարհվի, ով երկիր վարել չի կարողանում:
Այս ձեռքը ծնվեց, որ ոսկի բռնի.
Բառերն են դառնում զորավոր բռունցք,
Երբ որ սեղմում են սուր կամ գավազան:
Եթե կրծքիս մեջ սիրտ է բաբախում՝
Ես պետք է բռնեմ ոսկյա մականը.
Դրանով ցնցեմ Ֆրանսիո շուշանը:

Մտնում է Բուկինգեմը:

Այդ ո՞վ հայտնվեց: Բուկինգեմ, եկար, որ ինձ խանգարե՞ս:
Արքան է, անշուշտ, նրան ուղարկել: Պետք է ձևանալ:

---

[1] *Օ՛ սրբազան մեծություն* (լատ.):

ԲՈՒԿԻՆԳՀԵՄ

Յո՛րք, եթե ունես բարի նպատակ,
Ապա ընդունիր իմ ողջույնն ազնիվ:

ՅՈՐՔ

Ես ընդունում եմ ողջույնդ, Հեմֆրի:
Դեսպա՞ն ես արդյոք, թե՞ քո ցանկությամբ եկել ես ինձ մոտ:

ԲՈՒԿԻՆԳՀԵՄ

Մեր վեհափառի՝ Հենրու դեսպանն եմ:
Եկել եմ քեզ մոտ՝ տեսնեմ, թե ինչպես
Զենք ես վերցրել խաղաղ օրերին.
Ինչո՞ւ, լինելով ինձ պես հպատակ,
Ուխտադրժորեն հավաքել ես դու այսպիսի մի ուժ,
Եվ հանդգնել ես այն մոտեցնել Հենրու պալատին:

ՅՈՐՔ

(Առանձին) Օ՜, այնքան խոր է իմ բարկությունը,
Որ նույնիսկ խոսել չեմ կարողանում:
Կարողանայի՜ ժայռերը ջարդել, կռվել նրանցով,
Ա՜խ, քարերն անարգ՝ ինձ զայրացրին,
Բայց Այաքսի պես ես կարող էի
Ցասումս թափել եզների կամ թե այծերի վրա:
Ես իմ ծնունդով բարձր եմ արքայից,
Ինքս եմ ավելի նման արքայի
Եվ արքայորեն խորհելու ունակ:
Բայց պետք է մի քիչ խոնարհ ձևանալ, քանի դեռ Հենրին
Չի տկարացել, իսկ ես՝ զորացել: Ների՛ր, Բուկինգհեմ,
Որ պատասխանս մի քիչ ուշացավ,
Քանզի հոգիս է տանջում խոր վիշտը:
Ես զորք եմ բերել լոկ այն պատճառով,
Որ հեռացնեմ նենգ Սոմերսետին մեր թագավորից,
Ով թշնամի է Նորին մեծությանն ու տերությանը:

ԲՈՒԿԻՆԳՀԵՄ

Հարկ չկա լինել խիստ անձնապաստան:
Եթե դու չունես մի այլ նպատակ,
Ապա՝ պահանջդ չի մերժի արքան.
Դուքս Սոմերսետը բերդում է արդեն:

ՅՈՐՔ

Երդվիր քո պատվով, որ բանտում է նա:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Երդվում եմ, որ նա բերդ է ուղարկված:

ՅՈՐՔ

Այդ դեպքում զորքիս ազատ կթողնեմ:
Խիզախ զինվորներ, շնորհակալությո՛ւն, կարող եք ցրվել:
Վաղը կհանդիպենք Սենտ Ջորջի դաշտում,
Որտեղ կստանաք ձեր առատ վարձը ու թանկ նվերներ:
Թող վեհափառն իմ, ողորմած Հենրին ինձնից վերցնի իմ ավագ որդուն,
Ո՛չ, թեկուզ բոլոր իմ զավակներին,
Գրավ կդնեմ վասն յուր սիրո, հպատակության:
Ես սիրահոժար կուղարկեմ նրանց:
Ամեն ինչ կտամ՝ հող, ինչք, ձի ու զենք,
Միայն թե մեռնի դուքս Սոմերսետը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Յորք, դրվատում եմ քո քնքշաբարո խոնարհությունը:
Արդ՝ գնանք մեկտեղ վրանն արքայի:

Մտնում է Հենրին շքախմբի հետ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բուկինգհեմ, իրա՞վ չունի չար մտքեր,
Որ քեզ թևանցուկ՝ քայլում է այսպես:

ՅՈՐՔ

Տեր իմ, կատարյալ հնազանդությամբ ու խոնարհումով՝
Կանգնում է ահա Յորքը ձեր առաջ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ նպատակով դու զորք ես բերել:

ՅՈՐՔ

Որպեսզի քշեմ նենգ Սոմերսետին,
Կռվեմ ապստամբ հրեշ Քեդի դեմ,
Բայց ես լսեցի, որ պարտվել է նա:

Մտնում է Այդենը, ձեռքին՝ Քեդի գլուխը:

ԱՅԳԵՆ

Թե թույլ է տրված նման հասարակ ու կոպիտ մարդուն
Ներկայանալու շնորհափայլին.—
Ահա դնում եմ ձեր ոտքերի տակ
Դավանանս Քեզի գլուխն արյունոտ,
Ում սպանեցի մենամարտելիս:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Քեզի՞ գլուխը: Աստվա՛ծ, դու որքան արդարամիտ ես:
Օ՛, թույլ տուր տեսնել այս դեմքը մենակ,
Որ դեռ կենդանի ինձ վիշտ պատճառեց:
Ասա՛, բարեկա՛մ, ինչպե՞ս այն մարդն ես,
Ով չարագործի գլուխը կտրեց:

ԱՅԳԵՆ

Այո, վեհապետ, ձեր թույլտվությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ է անունդ և ի՞նչ դիրք ունես:

ԱՅԳԵՆ

Ինձ անվանում են Ալեքսանդր Այդեն, ապրում եմ Քենտում,
Հասարակ էսքվայր, ով շատ է սիրում իր թագավորին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Թույլ տվեք, տեր իմ, չէի սխալվի,
Եթե հատուցվեր այս խիզախությունն ասպետի կոչմամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդեն, ծունր իջիր: Բարձրացի՛ր, ասպետ.
Մենք տալիս ենք քեզ պարգև հազար մարկ
Եվ կամենում ենք, որ այսուհետև դու մեզ ծառայես:

ԱՅԳԵՆ

Թող հարյուր տարի Այդենը ապրի,
Որ փոխհատուցի նման պարգևին,
Եվ հավատարիմ մնա տիրոջն իր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Նայի՛ր, Բուկինգեմ, գալիս է դուքսը իմ թագուհու հետ.
Թագուհուն ասա, որ Սոմերսետին թաքցնի Յորքից:

Մտնում են թագուհի Մարգարիտը ու Սոմերսետը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հազար Յորք լինի՝ նա չի թաքնվի
Եվ խիզախաբար կնայի նրան երես առ երես:

ՅՈՐՔ

Ի՞նչ: Սոմերսետը շրջում է ազա՞տ,
Օ՜, Յորք, արձակի՛ր վաղուց շղթայած գաղտնի մտքերդ,
Թող հավատարիմ մնա քո սրտին քո ցասկոտ լեզուն:
Պե՞տք է հանդուրժեմ դուքս Սոմերսետի ներկայությունը:
Խարդա՛խ թագավոր, ինչո՞ւ դրժեցիր քո խոստումը ինձ,
Չէ՞ որ գիտեիր, չեմ կարող տանել վիրավորանքը:
Ինչո՞ւ կոչեցի ես քեզ թագավոր: Ո՛չ: Թագավոր չե՛ս:
Նա, ով չի կարող հաշիվը մաքրել դավաճանի հետ՝
Ի վիճակի չէ կառավարելու երկիր ու մարդկանց:
Բնավ հարմար չէ թագը քո գլխին:
Դու պետք է բռնես ուխտավորի ցուպ,
Ոչ թե՝ արքայոց ահարկու մական.
Ոսկյա պսակը պետք է ժանեզրե իմ այս ճակատը.
99 Ում խորշոմները, ժպիտն Աքիլլեսի
Նիզակի նման կարող են խոցել կամ վերք դարմանել:
Ահա՛ այն ձեռքը, որ պետք է բարձր պահի մականը
Եվ իշխանական բազում օրենքներ հրովարտակի:
Զիջի՛ր տեղդ ինձ: Երկի՜նքը վկա, չես իշխի նրան,
Ում երկնեց աստված արքա լինելու:

ՍՈՄԵՐՍԵՏ

Օ՜, նենգավոր ստոր դավաճան: Կալանում եմ քեզ,
Զի թագավորին դավաճանել ես և նրա թագին:
Մեղքերդ քավիր. ժպի՜րհ արարած և ծունր իջիր վասն գթության:

ՅՈՐՔ

Ա՜խ, դու ուզում ես, որ ծունր իջնեմ: Նախ՝ նրանց հարցրու,
Մի՞թե կուզենան, որ ծունր իջնեմ այդ մարդու առաջ:
Հե՜յ, տղա՛, կանչի՛ր իմ որդիներին:

Թիկնապահներից մեկը վազելով, դուրս է գնում:

Ես գիտեմ, նրանք գրավ կդնեն իրենց սրերը,
Բայց ինձ չեն թողնի հսկողության տակ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Կանչեք, թող շուտ գա Կլիֆորդն այստեղ.
Որպեսզի տեսնի. մի՞թե կարող են
Յորքի բները երաշխավորել դավաճան հորը:

Մտնում է Բուկինգեմը:

ՅՈՐՔ

Ա՛յ, արնաշաղախ նեապոլեցի,
Դու Նեապոլի վտարյալ դուստր,
Արնոտ խարազան հարազատ կղզու:
Իմ որդիք բարձր են քեզնից ծնունդով
Եվ իրենց հորը կերաշխավորեն:
Անե՜ծք այն մարդուն, ով ուրանում է իր որդիներին:
Տեսե՛ք, գալիս են և նրանք պետք է ամեն ինչ շտկեն:

Մտնում են Էդվարդն ու Ռիչարդը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ահա՛ գալիս է և Տեր Կլիֆորդը,
Որ գրավականը ի չիք դարձնի:

Մտնում են Կլիֆորդը և նրա տղան:

ԿԼԻՖՈՐԴ

Ողջո՛ւյն արքային, տիրոջն իմ բարի:

ՅՈՐՔ

Շնորհակալությո՛ւն, ի՞նչ լուր, Կլիֆո՛րդ:
Մեզ մի՛ վախեցնի դաժան հայացքով,
Մենք ենք քո տերը, ծունր իջիր նորից,
Սխալիդ համար մենք ներում ենք քեզ:

ԿԼԻՖՈՐԴ

Սա՛ է իմ արքան, ես չեմ սխալվում,
Դու ես սխալվում, միտքս շուռ տալով,
Տարեք գժանոց, մի՞թե խենթացավ այս մարդը, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո, Կլիֆորդ, փառասիրությունն ու խենթ բնույթը
Դրդեցին նրան, որ ապստամբվի իր արքայի դեմ:

ԿԼԻՖՈՐԴ

Դավաճան է նա, բերդ տարեք նրան
Եվ խելապատակ գլուխը կտրեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Նա բանտարկված է, բայց չի կամենում մեղքերը քավել:
Ասում է, իրեն իր որդիները պետք է խոսքերով իրենց պաշտպանեն:

ՅՈՐՔ

Այսպես չէ՞, որդիք:

ԷԴՎԱՐԴ

Այո՛, ազնիվ հայր, թե մեր բառերը կարող են օգնել:

ՌԻՉԱՐԴ

Երբ մեր խոսքերն անզոր դառնան՝ մենք կգործածենք մեր սրերն այնժամ.

ԿԼԻՖՈՐԴ

Դավաճանների այս ի՞նչ հոտեր եք խնամել այստեղ:

ՅՈՐՔ

Նայիր հայելուն և այսպես կոչիր դեմքն երևացող:
Ե՛ս եմ քո արքան, իսկ դու՝ մի ստոր քարսիրտ դավաճան:
144 Կանչեք իմ երկու քաջասիրտ արջերին,
Որ իրենց շղթան թափահարելով՝
Վախեցնեն դարանող այս շան ոհմակը:
Թող գան Վորվիկը և Սոլսբերին:

Մտնում են կոմս Վորվիկը և Սոլսբերին:

ԿԼԻՖՈՐԴ

Մի՞թե սրանք են քո քաջ արջերը: Մենք կհալածենք
Ձագերդ մահով, և արջապահիդ կսեղմի շղթան,
Եթե հանդգնես նրանց բաց թողնել:

ՌԻՉԱՐԴ

Հաճախ եմ տեսել, թե ինքնավստահ կատաղի շունը
Ինչպես է կծում, երբ որ չեն թողնում գազանին մոտենալ.
Բայց նա զգալով քաջ արջի բրդոտ թաթի հարվածը
Սեղմում է պոչը ոտքերի միջև, բարձր վնգստում:
Ահա այսպիսի խայտառակություն ձեզ կվիճակվի,
Թե Վորվիկի հետ փորձեք բաղդատվել:

ԿԼԻՖՈՐԴ

Կորի՛ր աչքիցս, չարության դու կույտ և չմարսված մսի մի կտոր
Գարշելի հոգով ու արտաքինով:

ՅՈՐՔ

Քեզ կտապակենք դժոխքի կրակով:

ԿԼԻՖՈՐԴ

Զգո՜ւյշ, որ չայրվես քո իսկ կրակից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վորվիկ, մոռացա՞ր ծնկներդ ծալել,
Ամո՛թ, Սոլսբերի, արծաթ մազերիդ,
Խելագար որդու խելառ առաջնորդ:
Մահվան մահճում էլ ուզո՞ւմ ես խաղալ ոճրագործի դեր,
Եվ աչքդ լարած փնտրել քեզ համար միայն տառապանք:
Ո՞ւր է հավատքը, ազնվությունը,
Թե՞ արտաքսվել են ձյունազարդ գլխից.
Ապա որտե՞ղ են ապաստան գտել այս երկրի վրա:
Մի՞թե չես ուզում փորել գերեզման,
Որպեսզի թաղես պատերազմն ընդմիշտ
Եվ չմրոտես արժանապատիվ քո ծերությունը:
Ինչո՞ւ, թեև ծեր, կարիք ունես դեռ դու փորձառության,
Իսկ եթե ունես՝ ինչո՞ւ ես ուզում այն չարաշահել:
Ամո՜թ, օ՜, ամո՛թ: Երկյուղածորեն ծունր իջիր, ծերո՛ւկ,
Զառամ տարիքդ քեզ գլորում է դեպի գերեզման:

ՍՈԼՍԲԵՐԻ

Տեր իմ. ես ինքս եմ այս հռչակավոր
Դուքսի իրավունքն հանահի նժարել.
Եվ, խղճի մտոք, գտնում եմ, որ նա
Ստույգ ժառանգն է անգլիական գահի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու ինձ չե՞ս երդվել հավատարմություն:

ՍՈԼՍԲԵՐԻ

Այո, երդվել եմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եվ դու դրժո՞ւմ ես
Քո այդ երդումը երկնքի առաջ:

ՍՈԼՍԲԵՐԻ

Ո՛, երդվել մեղքին՝ մեղք է կրկնակի.
Բայց մեծանում է մեղքը ավելի,
Ով մի հանցավոր երդում է պահում:
Ո՞ւմ կարող ես դու ստիպել, որ նա թալանի մարդու.
Գողանա կույսի պարկեշտությունը,
Շորթի որբուկից կալվածքն հայրենի
Եվ որբևայրուց՝ իր սովորույթը այն բանի համար,
Ով հանդիսավոր երդում է տվել հանցագործ դառնալ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դավաճանն երբեք կարիք չի զգում իմաստակության:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կանչե՛ք, թող զինվի դուքս Բուկինգեմը:

ՅՈՐՔ

Կանչի՛ր քո դուքսին, բարեկամներին,
Ես որոշել եմ՝ մեռնել կամ իշխել:

ԿԼԻՖՈՐԴ

Կմեռնես, եթե ճիշտ է երազը:

ՎՈՐՎԻԿ

Դու լավ է նորից անկողին մտնես ու երազ տեսնես,
Որպեսզի փախչես փոթորկից ռազմի:

ԿԼԻՖՈՐԴ

Ես որոշել եմ ավելի ահեղ փոթորիկ կրել,
Քան դու կարող ես այն ցանկալ այսօր:
Այն պիտի գրեմ քո սաղավարտին,
Երբ քեզ ճանաչեմ արնապիղծ տոհմիդ զինանշանով:

ՎՈՐՎԻԿ

Երդվում եմ ահա իմ հոր՝ Նեվիլի զինանշանով.
Արջով՝ շղթայված խորդուբորդ սյունից,
Կանգնել է ետին ոտքերի վրա,
Ես այսօր պետք է խիստ բարձր պահեմ իմ սաղավարտը.
Ինչպես սեգ լեռան կատարի մայրին,
Որ իր սաղարթն է պահում քամու դեմ,
Որպեսզի սոսկաս նրա գոռ տեսքից:

ԿԼԻՖՈՐԴ

Լռի՛ր, կպոկեմ զինանշանդ քո սաղավարտից
Եվ քամահրանքով ես կտրորեմ իմ ոտքերի տակ,
Ի հեճուկս քո, արջի պաշտպանյա՛լ:

ԿՐՏՍԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Ուրեմն, ի զե՛ն, հաղթապանծ հա՛յր իմ, մենք պիտի ճնշենք
Ապստամբներին ու նրանց բոլոր համախոհներին:

ՌԻՉԱՐԴ

Վա՜հ, հազար ամոթ, եղե՛ք բարեգութ, մի՛ հակառակվեք,
Դուք պետք է ընթրեք Քրիստոսի մոտ:

ԿՐՏՍԵՐ ԿԼԻՖՈՐԴ

214 Օ՜, պիղծ այլանդա՛կ, այդ բան չգիտե՞ս:

ՌԻՉԱՐԴ

Թե ոչ երկնքում, ապա դժոխքում դուք պետք է ընթրեք:

Գնում են տարբեր ուղղություններով:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Սենտ Օլբենս:

Տագնապ: Մտնում է Վորվիկը:

ՎՈՐՎԻԿ

Էհե՜յ, Կլիֆորդ, Վորվիկն է կանչում
Ու թե չես կարող թաքնվել արջից,
Երբ շեփորն ահեղ զարկում է տագնապ,
Երբ օդն է լցվում մեռնող զինվորի հառաչանքներով,
Ես քեզ եմ ասում՝ ե՛կ, կռվիր ինձ հետ,
Հյուսիսի իշխան, գոռոզ բռնակալ,
Ձայնս է խռպոտվել քո մեծությանը կանչելով ի մարտ:

Մտնում է Յորքը:

Ի՞նչ է պատահել, իմ ազնիվ իշխան, ինչո՞ւ ես քայլում դու առանց ձիու

ՅՈՐՔ

Ավա՜ղ, Կլիֆորդի մահաբեր ձեռքով իմ ձին սպանվեց,

Բայց հատուցեցի ճիշտ և ճիշտ նրան՝
Գիշակեր ցինի ու ագռավների կեր դարձավ նրա
Չքնաղ նժույգը, որ շատ էր սիրում:

Մտնում է Տեր Կլիֆորդը:

ՎՈՐՎԻԿ

Երկուսից մեկի ժամն է մոտեցել:

ՅՈՐՔ

Կա՛ց, Վորվիկ, փնտրիր քեզ համար այլ որս,
Ես պիտի խփեմ հենց այս եղջերվին:

ՎՈՐՎԻԿ

Սա ազնիվ բան է. չէ՞ որ կռվում ես դու գահի համար:
Առնախում Կլիֆորդ, որքան տենչում եմ քեզ մահ պարգևել,
Նույնքան իմ սիրտն է տխրում մոլեգին,
Որ չեմ կարող քեզ սպանել այսօր:

Գնում է:

ԿԼԻՖՈՐԴ

Ի՞նչ ես դու տեսնում իմ աչքերի մեջ,
Որ հապաղում է քո հարվածը, Յո՛րք:

ՅՈՐՔ

Ես կսիրեի քո քաջությունը,
Թե չլինեիր երդվյալ թշնամիս:

ԿԼԻՖՈՐԴ

Քո քաջությունն էլ կարիք չէր զգա փառաբանության ու գովասանքի,
Թե այն չերևար դավաճանության ու ամոթանքի բացահայտ լույսով:

ՅՈՐՔ

Ուրեմն, թող ինձ այն դառնա նեցուկ՝ ընդդեմ քո սրի,
Զի արդարության և իրավունքի համար է շողում:

ԿԼԻՖՈՐԴ

Գործեք իրար հետ հոգի ու մարմին:

ՅՈՐՔ

Դե՛հ, հավկիթ ածան, իսկույն պատրաստվիր:

Կռվում են: Կլիֆորդն ընկնում է:

ԿԼԻՖՈՐԴ

La fin couronne les oeuvres[1]:

Մեռնում է:

ՅՈՐՔ

Քեզ խաղաղություն բերեց կռիվը, քանզի լռեցիր,
Թող խաղաղ հանգչի համբառնյալ հոգին,
Երբ այդպես է կամքը մեր աստծո:

Գնում է:
Մտնում է Կրտսեր Կլիֆորդը:

ԿՐՏՍԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Խառնաշփոթությո՜ւն և հազա՜ր ամոթ,
Վախը ծնում է խռովք ու խուճապ,
Սա է մեր գործին պարտություն բերում:
Օ՛, դու պատերազմ, ուստր դժոխքի,
Քեզ մոլեգնացայտ երկինքն է շինում իր համար գործիք,
Թափիր դու մեռնող սառնաշունչ կրծքին քինախնդրության կիզիչ ածուխը,
Թող ոչ մի զինվոր չփախչի մարտից.
Ով ճշմարտապես
Իր բախտն է կապել քեզ հետ, պատերա՛զմ, նա եսասեր չէ:
Իսկ ով իր անձն է սիրում կաթոգին,
Նա պատահմամբ է քաջ մարտիկ դառնում:
Օ՛, թող կործանվի այս աշխարհը պիղծ:

Տեսնում է իր հոր դիակը:

Վերջի՛ն դատաստա՛ն, թող քո բոցերը ժամանակից շուտ
Այրեն միասին երկինք ու երկիր,
Թող ահեղորեն հնչե՛ն օրհասի փողերը ուժգին՝
Խեղդելով երկրի ձայները խղճուկ:
Մի՞թե կորցրիր, հայր իմ սիրելի,
Ջահելությունդ խաղաղ օրերին
Ու ձեռք բերեցիր իմաստուն կյանքիդ զգեստն արծաթյա
Եվ քո ծերության օրերն հարգարժան,
Որ սպանվեիր ոճրագործ մարտում:

---

[1] *Ավարտն է պսակում գործը* (ֆրանս.):

Ա՜խ, սա տեսնելիս՝ սիրտս է քարանում.
Եվ քանի դեռ այս դաժան պատկերը կմնա իմ մեջ՝
Քարսիրտ կդառնամ: Յորքը ծեր մարդկանց սրի է քաշում,
Ես էլ թշնամուս մանկանց կմորթեմ:
Լույսի արցունքը հոգուս կրակին չինչ ցող կթվա,
Գեղեցկությունը, որ բռնակալի կամքն է նվաճում,
Բոցե ցասումիս՝ առատ վուշ ու յուղ:
Արդ՝ դուրս եմ վանում խիղճը իմ հոգուց՝
Եվ հանդիպելով Յորքի տղային,
61 Ես պիտի նրան այնպես կտրատեմ. ինչպես Մեդեան ջահել Աբսիրտին:
Ես դաժանորեն փառք եմ փնտրելու:
Գնա՛նք, հին տոհմիս իմ նոր ավերակ:

Բարձրացնում է հոր դիակը:

64 Ինչպես Էնեասը տարավ Անքիզին՝
Այսպես քաջաբար ես քեզ կտանեմ,
Բայց նա կրում էր կենդանի մի բեռ,
Իսկ ես ավելի ծանրագույն մի վիշտ:

Գնում է:

Մտնում են կռվելով Սոմերսետն ու Ռիչարդը: Սոմերսետն սպանվում է:

ՌԻՉԱՐԴ

Դե՛հ, մնա այստեղ: Իր դժբախտ մահով
Փոքրիկ գինետան՝ «Օլբենսի դղյակ» ցուցափեղկի տակ
70 Դուքս Սոմերսետը խիստ փառաբանեց թշվառ վհուկին:
Սո՛ւր, չափավորիր քո բարկությունը, սիրտ իմ, մոլեգնի՛ր,
Քահանաները աղոթք են կարդում թշնամու համար,
Իսկ իշխանները սպանում նրան:

Գնում է:

Տագնապ: Մարտի աղմուկ: Մտնում են թագավորը, թագուհին և ուրիշներ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Շտապի՛ր, տեր իմ, շատ ես հապաղում: Ամո՜թ քեզ, փախի՛ր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կա՛ց, կա՛ց, Մարգարիտ: Կարո՞ղ ես փախչել երկնի հայացքից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչի՞ց ես շինված: Չես ուզում կռվել և ոչ էլ փախչե՞լ:
Արդ՝ արիություն ու խոհեմություն հանդես կբերենք՝
Երբ թշնամուն մենք ճանապարհ տանք և ըստ կարելվույն
Փրկվենք մահից, իսկ փրկությունը փախուստի մեջ է:

Հեռվից՝ տագնապի ձայն:

Եթե դու գերվես՝ մենք կգլորվենք
Մեր բախտի վիհը, իսկ եթե փրկվենք,—
Չեմ տարակուսում, թե դու չալարես,—
Կհասնենք Լոնդոն, ուր սիրում են քեզ,
Ուր այս սխալը կարող է շտկվել,
Որ այստեղ հանկարծ հասավ մեր բախտին

Մտնում է Կրտսեր Կլիֆորդը:

ԿՐՏՍԵՐ ԿԼԻՖՈՐԴ

Եթե իմ սրտում չզգար նոր վտանգ, ես ավելի շուտ
Կանիծեի աստծուն, քան թե կասեի՝ այստեղից փախեք:
Բայց պետք է փախչենք, ո՜, անբուժելի
Խռովք է ընկել մեր զորքի սրտում,
Փրկե՛ք ձեր կյանքը, մենք պետք է ապրենք,
Որպեսզի տեսնենք այն օրը ուրախ,
Երբ մեր թշնամուն բախտն է հարվածում:
Շտապե՛նք, տեր իմ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դաշտավայր Սենտ Օլբենսի մոտ:

Տագնապ: Նահանջ: Մտնում են Յորքը, Ռիչարդը, Վորվիկը և զորքը թմբուկների և դրոշակների ուղեկցությամբ:

ՅՈՐՔ

Որտե՞ղ է հիմա դուքս Սոլսբերին,
Ի՞նչ է պատահել այդ ծեր առյուծին,
Որ մոռանալով իր հին վերքերը
Եվ ժամանակի սուր խոզանակը,
Ուզում է կռվել մի դեռափթիթ պատանու նման,

Որ հույս է կապում պատեհության հետ:
Այս ուրախ օրը մեզ չի պատկանում
Քանզի, եթե նա ընկել է մարտում, մեզ չիք հաղթանակ:

ՌԻՉԱՐԴ

Իմ փառապանծ հայր, ես երեք անգամ օգնեցի նրան,
Որ նա ձի նստեր և երեք անգամ բռնեցի նրան,
Որ չսայթաքեր և երեք անգամ մարտից դուրս տարա,
Եվ համոզեցի, որ պետք չէ կռվել. բայց, այնուհանդերձ,
Որտեղ վտանգ կար, հենց այնտեղ նրան ես հանդիպեցի,—
Ինչպես շքեղ զորքն համեստ տնակում,
Այդպես էլ նրա կամքն էր բռնանում թույլ մարմնի վրա.
Բայց քաջ ռազմիկը. տեսե՛ք, գալիս է:

Մտնում է Սոլսբերին:

ՍՈԼՍԲԵՐԻ

Իմ սուրը վկա, դու խիզախությամբ կռվեցիր այսօր,
Մենք էլ՝ ոչ պակաս, շնորհակալությո՛ւն, իմ ազնիվ Ռիչարդ,
Եվ աստված գիտե, թե քանի տարի դեռ պիտի ապրեմ,
Բայց նա կամեցավ, որ երեք անգամ
Դու ինձ փրկեիր վերահաս մահից:
Բայց մենք ամեն ինչ դեռ չենք վաստակել,
Բավ չէ, որ փախավ ոսոխն այս անգամ,
Նա ընդունակ է նորից կռվելու:

ՅՈՐՔ

Կարենք անվտանգ. թե հետապնդենք անարգ թշնամուն:
Ես վախենում եմ, որ թագավորը փախել է Լոնդոն.
Որպեսզի իսկույն պառլամենտ կանչի:
Պետք է շտապել, քանի դեռ վճիռ չի կայացրել:
Ի՞նչ կասեք, Վարվիկ. չպե՞տք է գնանք նրանց ետևից:

ՎԱՐՎԻԿ

Նրա՞նց ետևից: Ո՛չ, ո՛չ, առջևից. եթե կարող ենք:
Երդվում եմ, այարք իմ, փառապանծ օր էր.
Դուքս Յորքը շահեց Օլբենսի մարտը,
Որ բազադրվեց սուրբ հավերժությամբ:
Հնչեցրե՛ք փողեր, ո՛ն անդր, Լոնդոն,
Թող տեսնենք նման բազում փառատոն:

Գնում են:

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ

Մասն երրորդ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԸ
ԷԴՎԱՐԴ, Ուելսի իշխանը, նրա որդին
ԼՅՈՒԴՈՎԻԿ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ, Ֆրանսիայի թագավորը

ԴՈՒՔՍ ՍՈՄԵՐՍԵՏ
ԴՈՒՔՍ ԷՔՍԵՏԵՐ
ԿՈՄՍ ՕՔՍՖՈՐԴ
ԿՈՄՍ ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ
ԿՈՄՍ ՎԵՍՏՄՈՐԼԵՆԴ
ԼՈՐԴ ԿԼԻՖՈՐԴ
— թագավոր Հենրու կողմնակիցները

ՌԻՉԱՐԴ ՊԼԱՆՏԱԳԵՆԵՏ, դուքս Յորքը

ԷԴՎԱՐԴ, կոմս Մարչը, հետագայում՝ Էդվարդ Չորրորդ թագավորը
ԷԴՄՈՆԴ, կոմս Ռետլենդ
ՋՈՐՋ, հետագայում՝ դուքս Կլարենս
ՌԻՉԱՐԴ, հետագայում՝ դուքս Գլոստեր
— նրա որդիները

ԴՈՒՔՍ ՆՈՐՖՈԼԿ
ՄԱՐԿԻԶ ՄՈՆՏԵԳՅՈՒ
ԿՈՄՍ ՎՈՐՎԻԿ
ԿՈՄՍ ՓԵՄԲՐՈԿ
ԼՈՐԴ ՀԵՍՏԻՆԳՍ
ԼՈՐԴ ՍՏԵՖՈՐԴ
— դուքս Յորքի համախոհները

ՍԸՐ ՋՈՆ ՄՈՐՏԻՄԵՐ
ՍԸՐ ՀՅՈՒԳ ՄՈՐՏԻՄԵՐ
— դուքս Յորքի հորեղբայրները

ՀԵՆՐԻ, կոմս Ռիչմոնդ, պատանի
ԼՈՐԴ ՌԻՎԵՐՍ, լեդի Գրեյի եղբայրը
ՍԸՐ ՎԻԼՅԱՄ ՍՏԵՆԼԻ
ՍԸՐ ՋՈՆ ՄՈՆՏԳՈՄԵՐԻ
ՍԸՐ ՋՈՆ ՍՈՄԵՐՎԻԼ
ՌԵՏԼԵՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ
ՅՈՐՔԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽԸ
ԹԱՈՒԵՐԻ ԲԵՐԴԱՊԱՀԸ
ՄԻ ԱԶՆՎԱԿԱՆ
ԵՐԿՈՒ ԲԱՆՏԱՊԱՀ
ՄԻ ՈՐՍՈՐԴ
ՀԱՅՐԱՍՊԱՆ ԶԻՆՎՈՐ
ՈՐԴԵՍՊԱՆ ԶԻՆՎՈՐ

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ
ԼԵԴԻ ԳՐԵՅ, հետագայում՝ էդվարդ Չորրորդի թագուհին
ԲՈՆԱ, Ֆրանսիայի թագուհու քույրը

Զինվորներ, թագավոր Հենրու և թագավոր էդվարդի սպասավորներ ճակներ և ուրիշներ:

Գործողությունը տեղի է ունենում Ֆրանսիայում ու Անգլիայում:

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Պառլամենտի դահլիճը:

Թմբուկներ: Մտնում են Յորքը, Էդվարդը, Ռիչարդը, Նորֆոլկը, Մոնտեգյուն, Վորվիկը և զինվորներ:

ՎՈՐՎԻԿ

Ես զարմանում եմ, թե ինչպես փախավ արքան մեր ձեռքից:

ՅՈՐՔ

Երբ մենք հյուսիսցի ձիավորներին հալածում էինք,
Նա ճարպկորեն փախուստի դիմեց՝
Մենակ թողնելով իր զինվորներին:
Եվ այստեղ մեծ լորդ Նորթեմբերլենդը,
Ում զինվորական խողությունը
Չէր կարող տանել նահանջի տագնապ,
Թև ավեց նորից հուսահատ զորքին
Եվ մեր գլխավոր ճակատամարտի կենտրոնը նետվեց
Լորդեր Կլիֆորդի ու Ստեֆորդի հետ,
Եվ նրանք ընկան սաստիկ հասարակ զինվորի սրից:

ԷԴՎԱՐԴ

Ստեֆորդի հայրը՝ դուքս Բուկինգեմը,
Կամ սպանվել է, կամ թե մահացու վիրավորված է,
Դիպուկ հարվածով ճեղքեցի նրա երեսակալը,
Ահավասիկ, հայր, արյունը նրա:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Ահա՛, եղբայր իմ, կոմս Ուիլտշիրի արյունը կեղտոտ:

17 577

Ում հանդիպեցի կատաղի մարտում:

ՌԻՉԱՐԴ

Խոսի՛ր իմ տեղակ և պատմի՛ր նրանց սխրանքիս մասին:

Ներքև գցելով դուքս Սոմերսետի գլուխը:

ՅՈՐՔ

Սիրելի Ռիչարդ, դու տարբերվում ես իմ որդիներից:
Մի՞թե մեռած եք, ձերդ մեծություն, իշխան Սոմերսետ:

ՆՈՐՖՈԼԿ

19 Ջոն Գոնտի տոհմն էլ այսպիսի տխուր վախճան կունենա:

ՌԻՉԱՐԴ

Հույս ունեմ՝ թռցնել Հենրու գլուխն էլ:

ՎՈՐՎԻԿ

Ես էլ հույս ունեմ, հաղթապանծ դուքս Յորք,
Եվ դու քանի դեռ չես նստել գահին,
Որ լանկաստերներն հափշտակել են,
Երկինքը վկա, այս աչքերն երբեք չպիտի գոցվեն:
25 Ահավասիկ վախկոտ Հենրու պալատը,
Եվ գահն արքունի, տիրացի՛ր, Յորք իմ:
Քեզ է պատկանում և ոչ թե Հենրու ժառանգորդներին:

ՅՈՐՔ

Օգնիր, որ տիրեմ, սիրելի Վորվիկ,
Քանզի մենք այստեղ մտել ենք ուժով:

ՆՈՐՖՈԼԿ

Իսկ ով խուսափի՝ արժան է մահվան:

ՅՈՐՔ

Շնորհակալություն, բարեսիրտ Նորֆոլկ: Մնացեք ինձ մոտ,
Ազնիվ իշխաններ: Դուք էլ զինվորներ, այստեղ գիշերեք:

ՎՈՐՎԻԿ

Ու երբ արքան գա՝ ձեռք չտաք նրան,
Քանի դեռ ուժով ձեզ դուրս չի քշել:

Զինվորները գնում են:

ՅՈՐՔ

Թագուհին այսօր կանչել է այստեղ գերագույն ատյան,
Բայց չի կասկածում, որ մենք կլինենք խորհրդում ներկա:
Մենք կնվաճենք մեր իրավունքը խոսքով կամ սրով:

ՌԻՉԱՐԴ

Զենքը մեր ձեռքին կմնանք այստեղ:

ՎՈՐՎԻԿ

Սա պետք է կոչվի արյունոտ ատյան,
Եթե չդառնա Յորքը թագավոր,
Եվ երկչոտ Հենրին չընկնի իր գահից,
Ում վախկոտությամբ մեզ ծաղրում էին մեր ոսոխները:

ՅՈՐՔ

Ինձ մոտ մնացեք, ազնիվ իշխաններ, եղեք համարձակ.
Ես միտք եմ դրել իմ իրավունքը լրիվ ստանալ:

ՎՈՐՎԻԿ

Ո՛չ թագավորը, ո՛չ նրա սաստիկ սիրեցյալ մարդը.
Թեկուզ նա լինի Լանկաստերների կողմնակիցն հպարտ,
Չեն համարձակվի ձեռքն իրենց շարժել,
Եթե Վորվիկը զանգերն իր քաշի:
Ես պետք է գահին բարձրացնեմ քեզ.
Թող փորձեն քո տունկն արմատով պոկել,
Դեհ, վճռիր, Ռիչարդ, ձեռքդ թագին դիր:

Վորվիկը առաջնորդում է Յորքին դեպի գահը, Յորքը նստում է գահին:
Փողեր: Մտնում են թագավոր Հենրին, Կլիֆորդը, Նորթեմբերլենդը, Վեստմորլենդը, Էքսեթերը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իշխաննե՛ր, նայեք, որտեղ է բազմել խռովարարը,
Ա՛, գահի վրա: Նա կարծում է, թե Վորվիկի ուժով,
Որ մի նենգամիտ ազնվական է,
Կարող է տիրել գահը արքայից, դառնալ թագավոր:
Կոմս Նորթեմբերլենդ, դժնդակ Յորքն է քո հորն սպանել,
Քո հորը՝ նույնպես, իմ բարի Կլիֆորդ: Չէ՞ որ երդվեցիք
Դուք վրեժ առնել այդ ստոր մարդուց, նրա ողջ տոհմից:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Այլապես ինձնից թող երկինքն առնի իր վրեժն արդար:

ԿԼԻՖՈՐԴ

Վրեժի հույսը ստիպում է ինձ ձեռքիս սուր պահել:

ՎԵՍՏՄՈՌԼԵՆԴ

Ի՞նչ: Մի՞թե պետք է այս բանն հանդուրժենք.
Եկեք համարձակ նրան տապալենք,
Սիրտս այրվում է զայրույթի հրով,
Օ՜, ես չեմ կարող այլևս համբերել:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Համբերիր, ազնիվ իմ կոմս Վեստմոռլենդ:

ԿԼԻՖՈՐԴ

Համբերությունն է վախկոտի համար, ինչպիսին Յորքն է,
Նա չէր հանդգնի գահի բարձրանալ.
Եթե ձեր հայրը կենդանի լիներ:
Ողորմած տեր իմ, թույլ տվեք այստեղ
Հարձակվենք Յորքի ամբողջ տան վրա:

ՆՈՐԹՈՒՄԲԵՐԼԵՆԴ

Դու լավ ասացիր, հորեղբոր որդի, այդպես էլ պետք է:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՞թե չգիտեք, որ այս քաղաքը սիրում է նրանց,
Եվ իրենց մեջքին զինվորներ ունեն:

ԷՔՍԵՏԵՐ

Բայց երբ սպանվի դավաճան դուքսը, նրանք կփախչեն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ա՜խ, Հենրու սիրտը չի ուզում երբեք,
Որ սպանդանոց ատյանը դառնա,
Ազնիվ Էքսետեր, ինձ զենք կլինեն խոժոռ հայացքը,
Սպառնալիքը և բառերն հզոր:
Դո՛ւ, խռովյալ Յորք, իջի՛ր իմ գահից,
Ոտքերիս առաջ ծնկաչոք խնդրիր մեղքիդ թողություն,
Ես եմ քո արքան:

ՅՈՐՔ

Ո՛չ, ես եմ քոնը:

ԷՔՍԵՏԵՐ

Ամո՜թ քեզ, իջի՛ր: Չէ՞ որ նա դարձրեց քեզ Յորքի դուքս:

ՅՈՐՔ

Ժառանգությունս էր այս դքսությունը և կոմսությունը:

ԷՔՍԵՏԵՐ

Բայց դավաճանեց քո հայրը գահին:

ՎՈՐՎԻԿ

Դու, նենգ Էքսետեր, դավաճանեցիր.
Քանզի գնում ես նրա ետևից. ով թագն հափշտակեց:

ԿԼԻՖՈՐԴ

Իսկ ո՞ւմ պետք է նա հետևեր. Վորվիկ, թե ոչ՝ օրինաց մեր թագավորին:

ՎՈՐՎԻԿ

Իրա՛վ ես. Կլիֆորդ. օրինավորը Ռիչարդն է, Յորքը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես պիտի կանգնեմ, դո՞ւ գահիս նստես:

ՅՈՐՔ

Այդպես պիտի լինեն, այդպես կլինի: Գոհացի՛ր դրանով:

ՎՈՐՎԻԿ

Դու դարձիր դուքսը Լանկաստերների և թող նա դառնա թագավորը մեր:

ՎԵՍՏՄՈՌԼԵՆԴ

Նա և՛ արքան է, և՛ Լանկաստերի դուքսն օրինավոր:
Այդ հաստատում է լորդ Վեստմորլենդը:

ՎՈՐՎԻԿ

Իսկ ես հերքում եմ: Դուք մոռացել եք,
Որ կռվի դաշտից մենք ձեզ քշեցինք.
Մեր քաջ սրերից ձեր հայրերն ընկան,
Դրոշներ պարզած քաղաքի միջով հասանք պալատի բաց դարպասներին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Վորվիկ, հիշում եմ ես դա տխրությամբ,
Եվ հոգիս վկա, քո տոհմը նրա մահը կզղջա:

ՎԵՍՏՄՈՐԼԵՆԴ

Պլանտագենետ, կխլեմ քեզնից, քո որդիներից,
Քո ազգ ու տակից ավելի շատ կյանք,
Քան թե հայրս ուներ արյան կաթիլներ իր երակներում:

ԿԼԻՖՈՐԴ

Վե՛րջ տանք խոսքերի այս կռվին, Վորվիկ,
Թե ոչ՝ բառերիս տեղակ կառաքեմ քեզ մի սուրհանդակ,
Որն ինձնից առաջ կլուծի քեզնից վրեժը իմ հոր:

ՎՈՐՎԻԿ

Թշվառ Կլիֆորդ, քամահրում եմ ես
Քո սպառնալիքն անարժեք սաստիկ:

ՅՈՐՔ

Դուք կամենո՞ւմ եք, որ ապացուցենք իրավունքը մեր:
Եթե չեք ուզում այն կպաշտպանենք դաշտում սրերով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ո՞րն է, դավաճան, քո իրավունքը:
109 Հայրդ եղել է Յորքի լոկ դուքսը, ինչպես հիմա դու,
Իսկ քո մեծ հայրը՝ Ռոջեր Մորտիմե՛րը Մարչի կոմսն էր.
Իմ հայրն էր Հենրի Հինգերորդ արքան,
Որ ծունկի բերեց թագաժառանգին
Ու ֆրանսիական քաղաքներն առավ:

ՎՈՐՎԻԿ

Մի խոսիր նորից Ֆրանսիայի մասին՝
Ամեն ինչ այնտեղ դու տանուլ տվիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ոչ թե՝ ես, այլ նա՝ խնամակալը.
Երբ ինձ կարգեցին երկրի թագավոր՝ նոր էր լրացել իմ ինն ամիսը:

ՌԻՉԱՐԴ

Դուք բավականին հասուն եք հիմա,
Բայց կորցնում եք դարձյալ ամեն ինչ:
Հա՛յր, խլիր թագը հափշտակիչից:

ԷԴՎԱՐԴ

Սիրելիդ հայր իմ, թագը դիր գլխիդ:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

(Յորքին) Բարեկամ եղբայր, դու զենք ես սիրում,
Վերջ տանք խոսքերի այս էժան կռվին:

ՌԻՉԱՐԴ

Թմբուկներ զարկեք, որ արքան փախչի:

ՅՈՐՔ

Լռե՛ք, իմ որդիք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լռի՛ր դու և թող, որ խոսի արքան:

ՎՈՐՎԻԿ

Թող Պլանտագենետն սկզբում խոսի, իսկ դուք՝ իշխաննե՛ր,
Ունկնդրեք նրան խորին լռությամբ և ուշի-ուշով,
Իսկ ով ընդմիջե՝ նա ողջ չի մնա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՞թե կարծում ես, որ ես կլքեմ գահն իմ արքունի,
Որտեղ բազմել են իմ պապն ու հայրը:
Ո՜, ո՛չ: Սովը կամայացնի իմ տերությունը:
Թող այս դրոշներն ինձ պատանք դառնան,
Որ ծածանվում են մեր կղզուց այն կողմ.
Իսկ այժմ այստեղ՝ մեծ վշտիս վրա:
Ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ դուք վախենում եք. չէ՞ որ, իշխաններ,
Իմ իրավունքը ավելի մեծ է, քան թե Յորքինը:

ՎՈՐՎԻԿ

Ապացույց. Հենրի և դու կլինես թագավորը մեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հենրի Չորրորդը գահը նվաճեց...

ՅՈՐՔ

Իր օրինավոր թագավորի դեմ ապստամբելով:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Առանձին) Ի՞նչ ասեմ... Թույլ է իմ իրավունքը:
(Բարձրաձայն) Բայց մի՞թե, ասա՛, արքան չի՞ կարող
Ընտրել մի ժառանգ:

ՅՈՐՔ

Ի՞նչ ասել կուզեք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Եթե կարող է՝ ես օրինավոր ձեր թագավորն եմ,
Չէ՞ որ Ռիչարդը իշխանների մոտ
Թողեց իր թագը Հենրի Չորրորդին,
Ում ժառանգն հայրս էր, իսկ ես՝ նրանը:

ՅՈՐՔ

Բայց նա ընդվզեց թագավորի դեմ
Եվ բռնի ուժով ստիպեց նրան, որ գահը լքի:

ՎՈՐՎԻԿ

Ասենք, այս բանը չարեց հարկադիր,
Բայց բո՞ւյլ է տրված, որ նա հենց վնաս հասցնե թագին:

ԷՔՍԵՏԵՐ

Ո՛չ, նա կարող է թագից հրաժարվել,
Որ հաջորդ ժառանգն անցնի ու տիրե:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՞թե, Էքսետեր, դու էլ ես մեզ դեմ:

ԷՔՍԵՏԵՐ

Նա ճիշտ է, արքա, ուստի՝ ինձ ներիր:

ՅՈՐՔ

Ի՞նչ եք փսփսում, ասեք բարձրաձայն:

ԷՔՍԵՏԵՐ

Իմ խիղճն ասում է, որ Յորքն է արքան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

(Առանձին) Բոլորն ինձանից երես են թեքում,
Եվ նրա կողմն են անցնում մեկառմեկ:

ՆՈՐԹՈՒՄԲԵՐԼԵՆԴ

Պլանտագենետ, չնայած բոլոր քո սխրանքներին,
Մի կարծիր Հենրին այսպես հեշտորեն գահընկեց կանես:

ՎՈՐՎԻԿ

Նա ի հեճուկս ամենայն մարդոց՝

Պետք է շուտափույթ զահրնկեց լինի:

ՆՈՐԹՈՒՄԲԵՐԼԵՆԴ

Դու մոլորված ես: Թեև դու մեծ ուժ ունես հարավում,
Սեֆոլկում, Քենտում, Էսեքսում, Նորֆոլկում,
Եվ դու նրանցով դարձել ես այսքան հանդուգն ու ժպիրհ,
Սակայն չես կարող, կամքիս հակառակ,
Գահ բարձրացնել Պլանտագենետին:

ԿԼԻՖՈՐԴ

Թագավոր Հենրի, արդար է, թե ոչ քո իրավունքը,
Քեզ կպաշտպանեմ, երդվում եմ, կռվով,
Թող բացվի հողը, ինձ ողջ-ողջ կուլ տա,
Թե ես խոնարհվեմ այն մարդու առաջ,
Ով անժամանակ իմ հորն սպանեց:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, իմ Կլիֆորդ, իմ սիրտն սրտին կյանք պարգևեցիր:

ՅՈՐՔ

Հենրի Լանկաստեր, զիջի՛ր քո թագը:
Իշխաննե՛ր, ի՞նչ եք այդպես փսփսում:

ՎՈՐՎԻԿ

Հենրի, ճանաչիր Յորքին թագավոր,
Թե ոչ այս շենքը կլցնեմ զորքով,
Եվ գահի վրա կգրեմ քո պիղծ ու գոլ արյունով
Իմ ազնիվ Յորքի իրավունքները:

Ոտքով հարվածում է հատակին: Երևում են զինվորներ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լսի՛ր ինձ, Վորվիկ, լսի՛ր լոկ մի բառ.
Տո՛ւր ինձ իրավունք երկիրն իշխելու կյանքիս ընթացքում:

ՅՈՐՔ

Հաստատիր թագն ինձ ու ժառանգներիս՝
Դու մինչև մահդ կլինես արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես գոհ եմ: Ռիչարդ Պլանտագենետը
Գահն կբարձրանա իմ մահից հետո:

ԿԼԻՖՈՐԴ

Ի՞նչ վիրավորանք հարազատ որդուդ:

ՎՈՐՎԻԿ

Բայց ի՞նչ բարություն վասն յուր անձի ու մեր հին կռվում:

ՎԵՍՏՄՈՌԼԵՆԴ

Թուլամիտ, երկչոտ ու եղկատ Հենրի:

ԿԼԻՖՈՐԴ

Ի՞նչ վիրավորանք հասցրիր և՛ քեզ, և՛ մեզ բոլորիս:

ՎԵՍՏՄՈՌԼԵՆԴ

Չեմ կարող հաշտվել այս պայմանի հետ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ես՝ նույնպես:

ԿԼԻՖՈՐԴ

Գնանք, իմ ազնիվ եղբայր:
Եվ այս ամենը պատմենք թագուհուն:

ՎԵՍՏՄՈՌԼԵՆԴ

Օ՜, մնաս բարով, թուլամիտ արքա,
Ում սառն արյան մեջ չի շողում նույնիսկ պատվի ոչ մի կայծ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Այսուհետ դարձիր Յորքի տան ավար,
Ու շղթայակապ մեռիր իգացյալ արարքիդ համար:

ԿԼԻՖՈՐԴ

Դու պետք է հաղթես այս ահեղ կռվում,
Թե ոչ՝ անգոսված ու մենակ կապրես:

Գնում են Նորթեմբերլենդը, Կլիֆորդը ու Վեստմոռլենդը:

ՎՈՐՎԻԿ

Ետ դարձիր, Հենրի, մի՛ նայիր նրանց:

ԷՔՍԵՏԵՐ

Նրանք տենչում են վրեժխնդրություն և չեն հանձնվի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ա՜խ, իմ Էքսետե՛ր:

ՎՈՐՎԻԿ

Ինչո՞ւ եք, տեր իմ, այսպես հառաչում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ոչ թե ինձ, Վորվիկ, այլ որդուս համար,
Որ զրկվեց ընդմիշտ գահ բարձրանալու ժառանգությունից:
Բայց թող լինի այն, ինչ պետք է լինի: Ես այստեղ հավերժ
Կարգում եմ թագն իմ քեզ՝ Պլանտագենետ, քո ժառանգներին,
Բայց մի պայմանով. դու պետք է երդվես,
Որ կդադարեն եղբայրասպան գժտությունները
Եվ մինչև մահս՝ ինձ պիտի հարգես
Որպես արքայիդ ու վեհապետիդ,
Ձեռք պիտի քաշես դավաճանական
Ու թշնամական այն արարքներից,
Որոնք կարող են քեզ իշխանության գլուխ կանգնեցնել:

ՅՈՐՔ

Ես սիրահոժար երդում եմ տալիս և խոսքիս տերն եմ:

ՎՈՐՎԻԿ

Թող երկար ապրի մեր Հենրի արքան: Յո՛րք, գրկախառնվիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ե՛վ քեզ երկար կյանք, և՛ քո քաջ որդոց:
Արդ՝ ձեռք մեկնեցեք, Լանկաստեր ու Յորք:

ԷՔՍԵՏԵՐ

Թող նա անիծվի, ով պետք է նրանց թշնամի դարձնի:

Փողեր: Իշխանները առաջանում են:

ՅՈՐՔ

Մնացե՛ք բարյավ, ողորմած իմ տեր:
Ես պետք է շտապ ամրոցս գնամ:

ՎՈՐՎԻԿ

Ես պիտի հսկեմ Լոնդոնն իմ զորքով:

ՆՈՐՖՈԼԿ

Ես դեպի Նորֆոլկ՝ իմ ընկերներով:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Իսկ ես՝ դեպի ծով, որտեղից եկա:

Գնում են Յորքը որդիների հետ. Վորիկը, Նորֆոլկը, Մոնտեգյուն. զինվորներն ու շքախումբը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ ես վշտիս հետ գնում եմ պալատ:

Մտնում են թագուհի Մարգարիտը և Ուելսի իշխանը:

ԷՔՍԵՏԵՐ

Ահա՛ թագուհին: Նրա հայացքում կա մի խոր զայրույթ:
Ես պիտի խույս տամ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես էլ՝ Էքսետեր:

Ուզում է գնալ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՛ գնա, ես քո ետևից կգամ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Համբերող եղիր. քնքուշ թագուհի. քեզ հետ կմնամ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, ո՞վ կարող է համբերող լինել այս պարագայում:
Թշվա՜ռ արարա՛ծ: Ավելի լավ էր օրիորդ մնայի,
Քան թե երբևէ հանդիպեի քեզ
Ու այս տղային աշխարհ բերեի.
Քանզի դու եղար անմարդկային հայր:
Նա ինչո՞ւ համար պետք է կորցներ գահ բարձրանալու իր իրավունքը:
Եթե դու նրան սիրեիր ինձ պես. նույնիսկ՝ կիսով չափ.
Եվ ի սեր նրա տանեիր բոլոր այն տանջանքները,
Որ ես ունեցա նրան ծնելիս՝
Եվ կերակրեիր, ինչ ես՝ իմ արյամբ.
Այն ժամ կտայիր քո արյունն ամբողջ.

Միայն թե դուքսին չճանաչեիր քեզ որպես ժառանգ.
Զրկելով, ավա՜ղ, քո միակ որդուն իր իրավունքից:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Հայր իմ, չես կարող ինձ գահից զրկել:
Թե դու ես արքան՝ ես չե՞մ ժառանգը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ների՛ր, Մարգարիտ, ների՛ր ինձ, որդյա՛կ,
Վորվիկն ու Յորքը ինձ ստիպեցին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Քեզ ստիպեցի՞ն: Դու լինես արքա ու քեզ ստիպե՞ն.
Ես ամաչում եմ խոսքերիդ համար:
Ա՜խ, երկչոտ մարդուկ, դու կործանեցիր քեզ, որդուդ և ինձ.
Տվեցիր Յորքին մի այնպիսի ուժ,
Ում թույլտվությամբ միայն կարող ես դու թագը կրել:
Գահը կտակել այդ անգութ դուքսին և նրա որդոց,
Նշանակում է, որ մարդն իր ձեռքով իր փոսն է փորում
Եվ իջնում այնտեղ ժամանակից վաղ:
Նայի՛ր, Վորվիկը լորդ կանցլերն է, Կալեի տերը,
248 Իսկ Ֆոլկոնբրիջը նեղուցն է հսկում,
Յորքը տերության խնամակալն է, և քեզ կարծո՞ւմ ես սաստիկ ապահով
Դողահար գառը կզգա՞ ապահով, երբ շրջապատեն գայլերն արնախում
Ես, կարճմիտ կինս, շատ ավելի շուտ կուզեի նետվել տեգերի ծայրին,
Քան համաձայնել քո վճռի հետ:
Բայց դու ընտրեցիր պատվից առավել քո խղճուկ կյանքը,
Եվ դրա համար ես հեռանում եմ քո մահճակալից
Եվ քո սեղանից, մինչև չես ջնջի
Խորհրդարանի գործողությունն այդ,
Որով զրկվում է իմ որդին գահից:
Հենրի. հյուսիսի այն իշխանները, որ չեն կամենում
Կանգնել դրոշիդ տակ, ինձ կհետևեն՝ թե դրոշ պարզեմ,
Եվ կծածանեմ՝ ի հեճուկս քո խայտառակության
Եվ Յորքի ողջ տան հավերժ կործանման:
Ես լքում եմ քեզ: Գնա՛նք, զավա՜կս,
Մեր զորքերն արդեն պատրաստ են, գնանք, միանանք նրանց:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Լսի՛ր ինձ մի պահ, քնքուշ Մարգարիտ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դու շատ խոսեցիր, հեռացիր ինձնից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Սիրելի էդվարդ, ի՞նչ մոտ չես մնա:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Որ քո թշնամիք սպանե՞ն նրան:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Երբ հաղթանակով ես դառնամ կռվից՝ քեզ կհանդիպեմ,
Ձեր մեծություն, իսկ այժմ պետք է մորս հետ գնամ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա՛նք, զավա՛կս, պետք չէ՛ հապաղել:

Գնում են թագուհի Մարգարիտը և Ուելսի իշխանը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թշվա՛ռ թագուհի: Ա՜խ, ինչպես նրա
Սերն իմ նկատմամբ ու որդուս հանդեպ
Ստիպեց նրան, որ արտահայտվի այսպես կատաղի:
Թող վրեժ առնի զարշելի դուքսից,
Ում ագահ ոգին թևառած տենչից՝
Ճախրում է բարձր իմ գահի վրա,
Որ իմ ու որդուս մարմինն հոշոտեն քաղցած անգղի պես:
Այս երեք լորդի մեծ կորուստները սիրտս են ծվատում,
Կգրեմ իսկույն և անկեղծորեն նրանց կաղերսեմ:
Գնա՛նք, էքսետեր, դու պետք է լինես իմ սուրհանդակը:

ԷՔՍԵՏԵՐ

Տեր իմ, հույս ունեմ, որ կհաշտեցնեմ նրանց բոլորին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի դահլիճ Սենդալ ամրոցում, Ուեկֆիլդի մոտ, Յորքշիրում:

Մտնում են էդվարդը, Ռիչարդը և Մոնտեգյուն:

ՌԻՉԱՐԴ

Թեև կրտսերն եմ՝ թույլ տուր ինձ, եղբա՛յր...

ԷԴՎԱՐԴ

Ես ավելի լավ կարող եմ խաղալ դերն ճոետորի։

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Բայց իմ փաստերն են սաստիկ զորավոր։

Մանում է Յորքը։

ՅՈՐՔ

Ի՞նչ է, վիճում եք, ճարազատնե՛րս։
Ո՞վ է սկսել. ինչո՞ւ եք վիճում։

ԷԴՎԱՐԴ

Վեճ չէ՛, մի փոքրիկ տարաձայնություն։

ՅՈՐՔ

Իսկ ինչի՞ շուրջը։

ՌԻՉԱՐԴ

Ձերդ մեծություն, ձեր զավակների,
Ձեր թագի շուրջը, որ ձե՛րն է. ճայր իմ։

ՅՈՐՔ

Օ՛. ոչ, Հանի դեռ չի մեռել Հենրին։

ՌԻՉԱՐԴ

Հա՛յր, կախում չունի ձեր իրավունքը ո՛չ նրա կյանքից. ո՛չ էլ մահվանից։

ԷԴՎԱՐԴ

Դուք եք ժառանգը, ուստի, օգտվեք այդ իրավունքից։
Հենց որ բաց թողնեք՝ լանկաստերներր շունչ կառնեն նորից,
Դիտցե՛ք, ի վերջո, ձեզանից կանցնեն։

ՅՈՐՔ

Երդվել եմ, որ նա պիտ խաղաղ իշխե։

ԷԴՎԱՐԴ

Բայց ի սեր գանի՝ երդում կդրժեն. ես կդրժեի
Նման բյուր երդում, միայն մեկ տարի գահն ինձ պատկաներ։

ՌԻՉԱՐԴ

Ո՛չ, աստված չանի երդմնազանց լինեք։

ՅՈՐՔ

Կզրժեմ, եթե կավեմ բացահայտ:

ՌԻՉԱՐԴ

Եթե ինձ չսեք, ես կապացուցեմ ճիշտ հակառակը:

ՅՈՐՔ

Չես կարող, որդի՛ս, անհնարին է:

ՌԻՉԱՐԴ

Երդումն ուժ չունի, երբ այն չի տրվել
Ճշմարիտ, արդար օրենքի առաջ,
Որն իշխանություն և կշիռ ունի երդվյալի վրա:
Հենրին անօրեն գահն է գրավել,
Ու քե ինձանից ձեր երդումն ուզի՝
Ապա այն, հայր իմ, ոչ մի ուժ չունի: Ուրեմն, ի՛ զեն:
Ապա մտածիր, ի՛նչ քաղցր բան է թագ ունենալը:
Նրա ոսկեզօծ շրջանակի մեջ դրախտն է գոցված՝
Բյուր երջանկությամբ, որ գովերգում են բանաստեղծները:
Պետք չէ հապաղել: Հանգիստ չեմ առնի, քանի դեռ, հայր իմ
Սպիտակ վարդը չեմ ներկել Հենրու սրտի գաղջ արյամբ:

ՅՈՐՔ

Հերի՛ք է, Ռիչարդ: Ես պետք է դառնամ
Մեր երկրի արքան կամ մահն հանդուրժեմ.
Դու, եղբա՛յր, պետք է Լոնդոն շտապես,
Եվ լորդ Վորվիկին դրդես այս գործին,
Դու, Ռիչա՛րդ, գնա դուքս Նորֆոլկի մոտ
Եվ գաղտնի պատմիր մեր վճռի մասին,
Դու, էդվա՛րդ, մեկնիր լորդ Քոբեմի մոտ,
Նրա հետևից ինքնակամորեն կգնան քենտցիք,
Ես վստահում եմ այդ զինվորներին՝ ազնիվ են, խոհեմ և արիասիրտ:
Մինչ դուք կզբաղվեք, ինչ է ինձ մնում,
Եթե ոչ՝ փնտրել ապստամբության պատեհ ժամանակ:
Տե՛ս, հա՛, չիմանան հարձակման մասին
Ո՛չ թագավորը, և ո՛չ էլ նրա կողմնակիցները:

Մտնում է մի սուրհանդակ:

Բայց կացե՛ք, ի՞նչ լուր: Ինչո՞ւ ես այդպես հևիհև եկել:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Տեր իմ, ճյուսիսի բոլոր կոմսերը և իշխանները թագուհու դրդմամբ
Մտադրվել են ձեզ շրջապատել ձեր իսկ ամրոցում:
Նա մոտ է արդեն: Քսան հազար մարդ ձեռքի տակ ունի,
Ուստի, պաշտպանիր ամրոցը, տեր իմ:

ՅՈՐՔ

Այո, իմ սրով: Ի՞նչ, մտածո՞ւմ ես, որ մենք վախեցանք,
Էդվարդ ու Ռիչարդ, մնացեք ինձ մոտ,
Եղբայր Մոնտեգյու, շտապի՛ր Լոնդոն,
Թող Վորվիկն ազնիվ, Քոբեմը բարի և ուրիշ լորդեր,
Որոնց կարգել ենք արքային պաշտպան,
Ուժեղացնեն իրենց դիրքերը խելացիորեն,
Չվստահելով կարճամիտ Հենրու և ոչ մի երդման:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Պետք չէ վախենալ՝ գնում եմ նրանց ես համոզելու,
Արդ, խոնարհաբար ես թողնում եմ ձեզ:

Գնում է:

Մտնում են սըր Ջոն Մորտիմերը և սըր Հյու Մորտիմերը:

ՅՈՐՔ

Սըր Ջոն և սըր Հյու, իմ հորեղբայրներ,
Ամրոց եք մտնում այն ուրախ ժամին,
Երբ մեզ թագուհին կուզե պաշարել:

ՋՈՆ

Իզուր է ջանում, մենք կհանդիպենք նրա հետ դաշտում:

ՅՈՐՔ

Ի՞նչպես, հինգ հազար զինվորով միայն:

ՌԻՉԱՐԴ

Այո, հինգ հազար, եթե հարկ լինի:
Ինչո՞ւ վախենալ, կինն է առաջնորդ:

Հեռվից լսվում են քայլերգի հնչյուններ:

ԷԴՎԱՐԴ

Լսում եմ նրանց թմբուկի ձայնը, պետք է մեր զորքին
Շուտ դասավորել և անմիջապես կռվի դաշտ մեկնել:

Քանի՝ հինգի դեմ։ Չնայած մեծ է տարբերությունը,
Բայց չեմ կասկածում, ազնիվ հորեղբայր, որ մենք կհաղթենք,
Ես Ֆրանսիայում հաճախ եմ շահել ճակատամարտեր,
Երբ կռվում էի տասն անգամ ուժեղ իմ թշնամու դեմ,
Եվ ինչո՞ւ հիմա ինձ չպսակեմ հաղթանակներով։

Տագնապ։ Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Ռազմադաշտ՝ Սենդալ ամրոցի և Ուեկֆիլդի միջև։

Տագնապ։ Ընդհարում։ Մտնում են Ռետլենդը և նրա դաստիարակը։

ՌԵՏԼԵՆԴ

Ա՜խ, ես ո՞ւր փախչեմ, որպեսզի խույս տամ թշնամիներից,
Նայի՛ր, գալիս է Կլիֆորդն արնախում։

Մտնում է Կլիֆորդը իր զինվորների հետ։

ԿԼԻՖՈՐԴ

Հե՜յ, մի կողմ քաշվի՛ր, խղճո՛ւկ վանական,
Գիտցիր՝ քո դիրքն է փրկում քո կյանքը։
Իսկ սա՝ անիծյալ դուքսի լակոտը,
Ում հայրն սպանեց հորս, պիտ մեռնի։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Եվ ես կկիսեմ ճակատագիրը նրա հետ, միլո՛րդ։

ԿԼԻՖՈՐԴ

Զինվորներ, տարե՛ք նրան։

ԴԱՍՏԻԱՐԱԿ

Ա՜խ, մի՛ սպանիր մանկանն այս, միլո՛րդ,
Քեզ կնզովեն աստված ու մարդիկ։

Քարշ տալով տանում են նրան զինվորները։

ԿԼԻՖՈՐԴ

Մեռե՞լ է արդեն, թե նա երկյուղից
Աչքերն է փակել, կբանամ զոռով։

ՌԵՏԼԵՆԴ

Այսպես նայում է վանդակված առյուծն իր խղճուկ զոհին,
Որ թպրտում է նրա գիշատիչ ծանր թաթի տակ,
Այսպես ծաղրում է իր որսի վրա,
Այսպես մոտենում, որ պատառոտի նրա մարմինը:
Ազնիվ Կլիֆորդ, ավելի լավ է սպանես սրով,
Քան թե ինձ նայես այս սպառնալից, դաժան հայացքով:
Բարի Կլիֆորդ, լսիր իմ խոսքը մեռնելուց առաջ,
Ես մի աննշան ոչնչություն եմ քո խենթ զայրույթին,
Տղամարդկանցից քո վրեժը ա՛ռ, թող ինձ կենդանի:

ԿԼԻՖՈՐԴ

Իզո՛ւր ես խոսում, թշվառ պատանի, իմ հոր արյունը
Այն անցքն է փակել, որով կարող էր խոսքդ թափանցել:

ՌԵՏԼԵՆԴ

Թող հորս արյունը այն բացի նորից,
Նա տղամարդ է. չափվիր նրա հետ:

ԿԼԻՖՈՐԴ

Թե եղբայրներդ այստեղ լինեին,
Հերիք չէր անի բոլորիդ կյանքը վրեժիս համար,
Թե ես քանդեի քո նախնիների գերեզմանները
Եվ անարգանքի սյունին գամեի նրանց դագաղներն այնքա՛ն զարշահոտ,
Դարձյալ չէր մարի հուրը զայրույթիս,
Չէր թեթևանա իմ սիրտը այրվող:
Ամեն մի էակ, որ Յորքի տնից աշխարհ է գալիս՝
Ֆուրիայի նման տանջում է հոգիս,
Եվ ես քանի դեռ չեմ ջնջել նրանց տոհմը նզովյալ
Եվ չեմ թողել ողջ նրանցից մեկին՝ ես պիտի ապրեմ դժոխքում, ուստի...

Սուր է բարձրացնում նրա վրա:

ՌԵՏԼԵՆԴ

Ո՜, թող աղոթեմ մեռնելուց առաջ,
Աղաչո՜ւմ եմ քեզ, ինձ գթա՜, միլո՛րդ:

ԿԼԻՖՈՐԴ

Կարող եմ սրով քեզ գութ պարգևել:

ՌԵՏԼԵՆԴ

Քեզ ոչ մի վնաս ես չեմ հասցրել,
Ինչո՞ւ ես ուզում դու ինձ սպանել:

ԿԼԻՖՈՐԴ

Հայրդ չի՞ վնասել:

ՌԵՏԼԵՆԴ

Բայց այն ժամանակ ես չէի ծնվել:
Դու զավա՛կ ունես... Ի սե՛ր քո որդու՝ կյանքս խնայիր...
Թե ոչ՝ իմացիր, սաստված է արդար,
Եվ քո զավակը կմեռնի ինձ պես...
Ա՛խ, թող իմ կյանքը անց կենա բանտում.
Ու թե առիթ տամ՝ քեզ չարանալու՝
Այն ժամ սպանիր, արդ չունես պատճառ:

ԿԼԻՖՈՐԴ

Ի՞նչ. չունե՞մ պատճառ... Հայրդ չսպանե՞ց իմ հորը, մեռի՛ր:

Դաշունահարում է:

ՌԵՏԼԵՆԴ

Di faciant laudis summa sit ista tuae![1]

Մեռնում է:

ԿԼԻՖՈՐԴ

Օ՛, Պլանտագենետ, գալիս եմ ահա:
Թող քո զավակի այս տաք արյունից
Զենքս ժանգոտվի, մինչև որ քոնն էլ խառնեմ նրա հետ,
Եվ նոր կսրբեմ սուրն իմ արյունից:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Ռազմադաշտի մի այլ վայր:

Տագնապ: Մտնում է դուքս Ռիչարդ Յորքը:

ՅՈՐՔ

Թագուհու բանակն հաղթանակ տարավ,

[1] *Եվ թող աստվածները սա բարիք դիտեն քեզ համար* (լատ.):

Հորեղբայրներս ընկան ինձ համար,
Փախչում են բոլոր կողմնակիցներս դաժան թշնամուց,
Ինչպես մակույկը՝ քամուց հալածված,
Կամ թե զառնուկը՝ հյուծված գայլերից։
Ա՜խ, աստված գիտի, թե ինչ պատահեց իմ որդիներին։
Բայց որ ծնվել են այն մարդկանց նման,
Ովքեր պատրաստ են փառքին ծառայել,
Կյանքով կամ մահով, ես հաստատ գիտեմ։
Եվ երեք անգամ Ռիչարդը բացեց ճամփա՝ դեպի ինձ,
Երիցս գոռաց՝ արիացի՛ր հայր,
Եվ երեք անգամ ջանել էդվարդս էկավ իմ կողմը,
Ձեռքին մի լայն թուր և կոթը ներկված
Թշնամու արյամբ, ում նա հանդիպեց։
Երբ նահանջեցին զինվորներն անգամ քաջ ու անընկուն,
Ռիչարդը գոչեց. «Հարձակվե՛ք, չենք տա մեր հողից մի թիզ»,
Եվ նորից գոչեց. «Թա՛գ կամ գերեզմա՛ն»:
«Փառաշուք դամբան կամ թե գավիառն»:
Բայց, ավա՜ղ, իզուր, այսպես կարապն է երբեմն անօգուտ
Մահում ջրերի հոսանքին ընդդեմ, կորցնում ուժը։
Ա՜խ, օրհասական հետապնդումը շարունակվում է,
Եվ ես տկար եմ։ Չեմ կարող փախչել նրանց զայրույթից,
Բայց թե ուժերս լինեին տեղում
Ես չէի փախչի հետապնդումից։
Կյանքիս ժամացույցն ավազն է վերջին քափում անխնա,
Այստեղ կմնամ, այստեղ էլ պիտի վախճանս գտնեմ։

Մտնում են թագուհի Մարգարիտը, Կլիֆորդը, Նորթեմբերլենդը, երիտասարդ իշխանը և զինվորներ։

Դե՛ն. առա՜ջ եկեք. արձախում Կլիֆորդ և Նորթեմբերլենդ,
Ես հանդգնում եմ ձեր անհանգիստի
Կատաղությունը նորից բորբոքել.
Ես ձեր թիրախն եմ և սպասում եմ ձեր հարվածներին։

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Մեր գթությանը անձնատուր եղիր, ամբարտավա՛ն Յորք։

ԿԼԻՖՈՐԴ

Այն գթությա՞նը, որ ռազմի դաշտում

Մատուցեց հուրս նրա ձեռքն անգութ:
33 Բայց Ֆայետոնը արևի կառքից գահավիժեց վար՝
Միջօրեն դարձրեց խավար իրիկուն:

ՅՈՐՔ

Գիտցիր, աճյունս փյունիկի նման կարող է փոխվել
Ջահել փյունիկի և ձեր բոլորից նա վրեժ կառնի:
Այս հույսով՝ աչքս երկինք եմ հառնում՝
Արհամարհելով ամեն սպառնալիք.
Ինչո՞վ կարող եք ինձ վշտացնել:
Ինչո՞ւ եք կանգնել. դե՛հ, ինձ մոտեցե՛ք.
Դո՞ւք այդքա՞ն շատ եք և վախենո՞ւմ եք:

ԿԼԻՖՈՐԴ

Այսպես երկչոտն է մի կերպ պաշտպանվում.
Երբ նա այլևս չի կարող փախչել.
Այսպես աղավնին սուր մագիլներն է կտցում բազեի,
Այսպես գողն անհույս՝ կորցրած ամեն ինչ,
Լուտանք է թափում ոստիկանի վրա:

ՅՈՐՔ

Կլիֆո՛րդ. խորհիր մի անգամ դարձյալ,
Եվ դու մտովի վազ տուր նախընթաց օրերիս միջով,
Ու թե կարող ես՝ առանց շիկնելու նայիր իմ դեմքին,
Եվ լեզուդ կծիր. որ անվանում է այն մարդուն վախկոտ,
Ում հայացքն ահեղ ստիպում էր քեզ փախչել վհատյալ:

ԿԼԻՖՈՐԴ

Չեմ ուզում քեզ հետ վիճել բառ առ բառ,
Բայց մեկի դիմաց չորս հարված կուտես:

Մերկացնում է սուրը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Կա՛ց, քաջ Կլիֆորդ. զի բյուր պատճառներ ստիպում են ինձ.
Որ դավաճանի կյանքն երկարացնեմ:
Կատաղությունից դու խլացել ես.
Դե՛հ. հետը խոսիր, կոմս Նորթեմբերլենդ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Կա՛ց, Կլիֆորդ, կա՛ց: Այդ մարդու համար շատ մեծ պատիվ է
Սիրտը խոցելիս՝ մատդ արյունոտես:

Ի՞նչ քաջություն է, երբ մի կատաղի շուն է գռմռում,
Ձեռքդ մտցնես նրա երախը, երբ կարելի է քացով ետ մղել,
Չէ՞ որ կռվի մեջ ներելի բան կա՝
Թե տասը կռվեն մեկ մարդու դիմաց՝ արիությունը չի աղարտվելու:

Նրանք հարձակվում են Յորքի վրա, որը կատաղի դիմադրում է:

ԿԼԻՖՈՐԴ

Այսպես կտցարն է զարնվում թակարդին:

ՆՈՐԹՈՒՄԲԵՐԼԵՆԴ

Այսպես ճագարն է թպրտում ցանցում:

ՅՈՐՔ

Այսպես գողերն են ավարի վրա խիստ ուրախանում,
Եվ այսպես ազնիվ մարդն է հանձնվում ավազակներին:

ՆՈՐԹՈՒՄԲԵՐԼԵՆԴ

Ձերդ մեծություն, ի՞նչ անենք սրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Փառապանծ Կլիֆորդ և Նորթումբերլենդ,
Թող նա այս փոքրիկ բլրին կանգնի.
Լեռներ էր ուզում գրկել ձեռքերով,
Բայց նրան մնաց ստվերը միայն:
Ի՞նչ: Ուզեցե՞լ ես թագավոր դառնալ
Դու ես պարծեցել մեր պառլամենտում
Եվ պարծեցել ես քո բարձր տոհմով:
Որտե՞ղ են, ասա՛, էդվարդն անառակ ու խիզախ Ջորջը,
Որ պետք է հիմա մեջքիդ կանգնեին,
Որտե՞ղ է քո այդ հրա՜շք սապատավոր քաջ որդի Դիկը,
Որ քրթմնջալով իր հորը մղեց ապստամբության
Կամ թե. որտե՞ղ է քո շատ սիրելի փոքրիկ Ռետլենդը,
Նայի՛ր, ներկել եմ այս թաշկինակը քո որդու արյամբ,
Որ նրա կրծքից հեղեց իր սրով խիզախ Կլիֆորդը,
Ու թե կարող են աչքերդ արտասվել զավակիդ մահով.
Ա՛ռ թաշկինակը, որ չորացնես դալուկ այտերդ:
Ավա՜ղ, թշվա՛ռ Յորք, թե քեզ չատեի մահացուորեն,
Ապա կողբայի խղճուկ վիճակդ:
Դե՛հ. Յորք, վշտացի՛ր, որ զվարճանամ:

Մի՞թե կատաղի քո սիրտն այնպես է քո ներսը այրել,
Որ որդուդ համար չես կարող թափել մի կաթիլ արցունք,
Ինչո՞ւ, մա՛րդ, այսպես համբերող եղար: Դու պետք է վաղուց
Խելագարվեիր, և քեզ կծաղրեմ, որ խելագարվես:
Զա՛րկ ոտքդ գետնին, զառանցի՛ր, գոռա՛,
Որ կարողանամ երգել ու պարել:
Դու վարձ ես ուզում, տեսնում եմ. ինձնից, որ զվարճացնես:
Յորքն առանց թագի չի կարող խոսել, թա՛գ տվեք նրան:
Եվ դուք՝ իշխաններ, ծունր իջեք խոնարհ,
Բռնեք ձեռքերը, որ միջոց գտնեմ թագադրելու:

Թղթե մի թագ են դնում գլխին:

Իսկապես հիմա նա թագավորի հպարտ տեսք ունի,
Ա՛յ, սա՛ էր խլել գահը Հենրիից և որդեգրել իրեն ժառանգորդ:
Սակայն, դա ինչո՞ւ, մեծ Պլանտագենետ,
Այսպես շուտափույթ թագադրվեցիր,
Ինչո՞ւ դրժեցիր քո հանդիսավոր երդումը, ասա՛:
Որքան հիշում եմ, պետք է իջնեիր,
Երբ Հենրին թոթվեր մահվան չար ձեռքը:
Եվ դու ուզո՞ւմ ես զարդարել Հենրու փառքով գլուխդ
Եվ հափշտակել նրա ճակատից ոսկեզօծ թագը,
Երբ նա ապրում է և հակառակ է քո սուրբ երդմանը:
Օ՜, այս հանցանքը երբեք չի ներվի:
Թող կորչի՛ թագը և նա՝ թագի հետ. մինչև շունչ քաշեմ՝ վերջ տվեք նրան:

ԿԼԻՖՈՐԴ

Եվ դա իմ պարտքն է, ի հարգանք հորս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց կա՛ց, թող լսեմ աղոթքը նրա:

ՅՈՐՔ

Ֆրանսիո էգ գայլ, բայց ավելի չար, քան թե այդ երկրի գայլերը բոլոր,
Դու լեզու ունես ավելի թունոտ, քան ատամն իժի:
Օ՜, դա վայել չէ կանացի սեռին,
Ինչպես սանձարձակ ամազոնուհի,
Զարախնդալու այն մարդկանց վշտով, ում բախտն է գետնել:
Եթե չլիներ դիմակի նման դեմքդ անփոփոխ,
Որ թաքցնում է արարքներդ չար,
Գուցե փորձեի, գոռոզ թագուհի, քեզ կարմրացնել:

Բա՞վ է, թե ասեմ՝ ուրկից ես եկել և ում ճզովյալ
Տոհմից ես սերվել, որ դու ամաչես, թե ամոթ ունես:
119 Քո հայրն է կրում Երուսաղեմի, զույգ Սիցիլիայի
Եվ Նեապոլի թագավորության խորհրդանշանը,
Սակայն խիստ աղքատ, քան մի անգլիացի ազատականեր:
Մի՞թե այդ թշվառ թագավորի մոտ
Սովորեցիր մարդկանց ոտնակոխ անել,
Բայց ինձ հավատա, այդ բանից չունես դու ոչ մի օգուտ,
Դու հաստատում ես միտքը առածի.
Որ աղքատ հեծյալն իր ձին քշում է մինչև սատկելը:
Հպարտ է կինը յուր գեղեցկությամբ,
Բայց աստված գիտի, որ այդ շնորհից քեզ ինչ է տրված.
Կինն սքանչելի նաև է իր սուրբ առաքինությամբ,
Դու հակառակն ես ցույց տալիս քեզնով,
Նա զուսպ կեցվածքով պարզկն է երկնի,
Իսկ դու քո վարքով՝ զարշանք ու նողկանք:
Դու անհաղորդ ես ամեն բարության,
Հակապատկերն ես դու մեր էության,
Ինչպես հարավը՝ սառը հյուսիսին:
Օ՜, վագրունու սիրտ՝ կնոջ կրծքի տակ,
Ինչպե՞ս կարող ես մանկան կենսատու արյունը ոքել
Եվ հրամայել, որ հայրը սրբի աչքերն արցունքոտ ու դեռ կին կոչվել:
Կանայք քնքուշ են, զթասիրտ ու հեզ,
Իսկ դու՝ կարծրասիրտ, անողորմ, դաժան, անխիղճ ու վայրագ,
Դու ուզում էիր, որ ես կատաղեմ, քո ցանկությունն եմ կատարում ահա,
Դու տենչում էիր, որ ես արտասվեմ.
Նայի՛ր, անզգամ. սիրտս է հեկեկում:
Կատաղի հողմը բերում է անդուլ, անդադար հեղեղ,
Բայց երբ հանդարտվի՝ անձրև կտեղա:
Այս արցունքները սիրեցյալ որդուս համար են թափվում,
Եվ պահանջում է ամեն մի կաթիլ վրեժը մահվան,
Վրե՜ժ, քեզանից, սոր Կլիֆորդ, և վրե՜ժ քեզնից, կին ուխտադրուժ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Սատանան տանի, բայց նրա վշտով այնպես եմ տանջվում,
Որ հազիվ եմ ես արցունքս զսպում:

ՅՈՐՔ

Օ՜, նույնիսկ քաղցած մարդակերները չէին մոտենա

Մանկանն իմ անմեղ և չէին ներկվի նրա արյունով:
Բայց դուք ավելի անմարդկային եք,
Ավելի դաժան, քան թե Վրկանա վագրերն անողորմ:
Նայի՛ր, թագուհի դաժան, անողո՛ք,
Մի չարաբախտ հոր արտասուքներին.
Օ՛, դու ես ներկել որդուս արյունով այս թաշկինակը,
Ես լվանում եմ իմ արցունքներով:
Վերցրո՛ւ թաշկինակն ու հպարտացիր:
Ու թե դժնդակ այս պատմությունը դու պատմես մարդկանց
Ուղղամտորեն, երկի՛նքը վկա, նրանք կարտասվեն,
Այո՛, նույնիսկ իմ թշնամիները չեն կարող զսպել
Իրենց արցունքը և պիտի ասեն, ավա՛ղ, գործ էր չար,
Վերցրո՛ւ իմ թագը, հետն էլ՝ անեծքս,
Դժբախտության մեջ գտնես այնպիսի մխիթարություն,
Ինչպիսին անգութ ձեռքդ ինձ տվեց:
Կարծրասի՛րտ Կլիֆո՛րդ, հավերժ արտաքսիր ինձ այս աշխարհից.—
Թող թռչի հոգիս դեպի երկինքը,
Թող իմ արյունը թափվի ձեր գլխին:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Եթե նա լիներ տոհմիս դահիճը՝
Դարձյալ նրա հետ ես կարտասվեի,
Տեսնելով նրա սիրտը ծվատված:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ, Նորթեմբերլենդ, դու լա՞ց ես լինում,
Հիշի՛ր, թե ինչքա՛ն ցավ է պատճառել,
Եվ կչորանան մի ակնթարթում քո արցունքները:

ԿԼԻՖՈՐԴ

Սա՛ հորս, սա՛ էլ եղբորս համար:

Դաշունահարում է Յորքին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Սա՛ էլ մեղմասիրտ արքայի համար:

Դաշունահարում է նրան:

ՅՈՐՔ

Ողորմա՜ծ աստված, բա՛ց քո գթության դարպաս
Քեզ է որոնում՝ հոգիս թռչելով վերքերի միջից:

Մեռնում է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Թռցրե՛ք գլուխը և դրեք Յորքի դարպասի վրա․
Թող Յորքը հսկի քաղաքն հարազատ:

Փողեր: Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Հարթավայր Մորտիմեր Խաչի մոտ, Օքսֆորդշիրում:

Թմբուկներ: Մտնում են Էդվարդն ու Ռիչարդը՝ իրենց զորքի հետ.

ԷԴՎԱՐԴ

Ինչպե՞ս փրկվեց մեր հայրն արքայական,
Հաջողվեց նրան Նորթեմբերլենդի ու լորդ Կլիֆորդի
Հետապնդումից խուսափե՞լ, թե՞ ոչ:
Եթե գերվել է կամ թե սպանվել՝
Մեզ պիտի հասներ այդ լուրը տխուր,
Իսկ թե փրկվել է՝ նրա փրկության
Լուրն ավետալի մեզ պիտի հասներ:
Քեզ ի՞նչ պատահեց, ինչո՞ւ տխրեցիր:

ՌԻՉԱՐԴ

Չեմ կարող ժպտալ, քանի դեռ, Էդվա՛րդ:
Ես չեմ համոզվել, ի՞նչ է պատահել մեր հորն անվեհեր:
Տեսա, թե ինչպես նա ռազմի դաշտում
Շրջագայում էր, փնտրում Կլիֆորդին,
Ինձ թվաց, որ նա մտավ թշնամու զորագունդը հոծ.
Ինչպես առյուծը՝ արջառների մեջ,
Կամ ինչպես արջը՝ շներով սեղմված.
Որ կսմթելով երկու-երեք շուն,
Դրդում է նրանց ցավից վնգստալ,
Մինչ մյուս շները, քաշված մի անկյուն, վրան են հաչում:
Այսպես մեր հայրը դատաստան տեսավ իր թշնամու հետ,
Այսպես էլ փախավ ստոր թշնամին մեր խիզախ հորից:

Մեծ բախտ է լինել նման նոր զավակ:
Նայիր, ինչպես է բացում արշալույսն իր ոսկյա դուռը,
Հրաժեշտ տալիս հաղթող արևին.
Ա՜խ, ինչ նման է նա ջահելության ծաղիկ հասակին,
Նա, որ պճնազարդ պատանու նման գնում է դեպի սիրած աղջիկը:

ԷԴՎԱՐԴ

26 Աչքի՞ս է թվում, թե՞ ես տեսնում եմ երեք արևներ:

ՌԻՉԱՐԴ

Երեք փառապանծ, փայլուն արևներ, յուրաքանչյուրը կատարյալ արև.
Չեն զատված նրանք թանձր ամպերով,
Բայց ջոկ-ջոկ գունատ են փայլուն երկնքում:
Նայի՛ր, օ՜, նայիր, նրանք ձուլվում են, զգվում իրարու,
Կարծես երդվում են՝ լինել միաբան,
Տե՛ս, նրանք դարձան մի կանթեղ, մի լույս, մի վառ արեգակ:
Երկինքը ինչ-որ բան է գուշակում:

ԷԴՎԱՐԴ

Սա զարմանալի՜ տարօրինա՜կ է: Ես դեռ չեմ տեսել երբեք նման բան:
Այն մեզ կանչում է կարծես թե մարտի,
Մեզ՝ խիզախ Յորքի հարազատ որդոց,
Որ հռչակված ենք յուրաքանչյուրս մեր արժանիքով,
Բայց պիտի զուգենք մեր շողերն ի մի
Եվ լուսավորենք արևի նման այս հողագունդը:
Ինչ էլ գուշակի՝ սրանից հետո ես պիտի կրեմ վահանիս վրա
Երեք մաքրափայլ շողշողուն արև:

ՌԻՉԱՐԴ

Թույլ տուր քեզ ասել, որ լավ է կրես դու երեք լուսին,
Զի դու սիրում ես կնոջն ավելի, քան տղամարդուն:

Մտնում է մի սուրհանդակ:

Ո՞վ ես, ինչո՞ւ է դեմքդ ամպամած,
Քո լեզվի ծայրին բա՞ն կա չարագույժ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ա՜խ, ես այն դժբախտ մարդկանցից մեկն եմ,
Ովքեր տեսել են, ինչպես սպանվեց ազնիվ դուքս Յորքը՝
Ձեր խիզախ հայրը, տերն իմ սիրելի:

ԷԴՎԱՐԴ

Օ՜, էլ մի՛ խոսիր, շատ բան ասացիր…

ՌԻՉԱՐԴ

Ինչպես մահացավ. պատմիր մեկ առ մեկ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Բազում թշնամիք պաշարել էին ձեր հորն անվեհեր,
Բայց նա կանգնել էր նրանց հանդիման, ինչպես Հեկտորը՝
Հույների դիմաց, որ ձգտում էին Տրոյա ներխուժել:
Բայց Հերկուլեսը՝ ինքն էլ կզիջեր գերազանց ուժին.
Թեպետ փոքրիկ է կացինը, տյա՛րք իմ,
Բայց բյուր հարվածով գետին կգցի հաստաբուն կաղնուն:
Բազմաթիվ ձեռքեր որսացին դուքսին, բայց նա սպանվեց
Անհաշտ Կլիֆորդի և մեր թագուհու զայրագին ձեռքով,
Ով թագադրեց չարախնդությամբ վեհափառ դուքսին,
Ծիծաղեց նրա վշտահար դեմքին ու երբ նա ցավից խորունկ հեկեկաց՝
Անխիղճ թագուհին այտերն արցունքոտ սրբելու համար
Նրան շպրտեց մի լաթի կտոր.
Որ թաթախված էր քնքուշ Ռետլենդի անմեղ արյան մեջ,
Ում սպանել էր դաժան Կլիֆորդը և բյուր անպարկեշտ
Ծաղրանքից հետո կտրեցին. ավա՜ղ. գլուխը նրա,
Մեխելով Յորքի դարպասի վրա: Այնտեղ է հիմա դուքսի գլուխը.
Չեմ տեսել նման ողբալի պատկեր:

ԷԴՎԱՐԴ

Սիրելի՜ մեր հա՛յր, դու մեր հենարա՜ն,
Արդ՝ չունենք նեցուկ, ոչ էլ՝ գավազան:
Օ՜, պիղծ Կլիֆորդ, կատաղի Կլիֆորդ,
Դու սպանեցիր ողջ եվրոպայի վարդն ասպետության,
Դու լոկ նենգությամբ հաղթեցիր նրան,
Նա մենամարտում քեզ պիտի գետներ:
Հոգուս պալատը դարձել է զնդան:
Ա՜խ, երբ նա պետք է փախչի այնտեղից,
Որ այս մարմինս քիչ հանգստանա ի վերա երկրի:
Ես, այսուհետև, չեմ ճաշակելու ոչ մի խնդություն,
Երբե՛ք, օ՜. երբեք էլ չեմ տեսնելու ոչ մի պայծառ օր:

ՌԻՉԱՐԴ

Չեմ կարող, եղբա՛յր. արցունքներ թափել,
Քանզի մարմնիս խոնավությունը

Չի մարի սրտիս բորբոքված քուրան,
Չի կարող լեզուս թեթևացընել բեռը իմ սրտի,
Չէ որ նույն ինքը՝ շունչը իմ խոսքի
Հույժ կբորբոքե կրծքիս տակ այրող ածուխը դարձյալ,
Կայրե ինձ բոցով և պիտի ջանա արցունքըս մարել:
Վիշտը լացով է միշտ թեթևանում. լացն՝ երեխային, ինձ՝ վրեժ և սուր:
Օ՜, հայր իմ, ես քո անունն եմ կրում և պիտի լուծեմ վրեժդ մահվան,
Կամ պիտի ընկնեմ՝ ինձ հռչակելով այս խիզախությամբ:

ԷԴՎԱՐԴ

Մեր խիզախ դուքսը թողեց փառավոր իր անունը քեզ,
Իսկ ինձ մնացին նրա աթոռը և դքսությունը:

ՌԻՉԱՐԴ

Թե արքայական այդ արծվի ձագն ես,
Ի ցույց դիր տոհմդ՝ անթարթ նայելով արևի վրա.
Մի՛ ասա՝ աթոռն ու դքսությունը, այլ՝ նրա գահը և տերությունը:
Երկուսն էլ քո՛նն են կամ դու չես սերվել դուքս Յորքի տոհմից:

Քայլերգ: Մտնում են Վորվիկը, Մոնտեգյուն իրենց զորքով:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ կա, իշխաննե՛ր. ի՞նչ լուրեր ունեք, ինչպե՞ս է արդյոք իրաց վիճակը:

ՌԻՉԱՐԴ

Մեծ իշխան Վորվիկ, երբ մենք պատմենք լուրն աղետալի
Եվ ամեն բառով մեր սիրտը խոցենք,
Մինչև ավարտվի ողջ պատմությունը,
Ապա բառերը վերքից ավելի կբազմապատկեն մեր տառապանքը:
Փառապանծ Վորվիկ, Յորքն սպանված է:

ԷԴՎԱՐԴ

Ա՜խ, Վորվի՜կ, Վորվի՜կ: Պլանտագենետը,
Որին դու այնպես սիրելի էիր, ինչպես փրկությունն՝ իր հոգու համար,
Սպանվեց դաժան Կլիֆորդի ձեռքով:

ՎՈՐՎԻԿ

Տասն օր է, ինչ այս լուրը խեղդել եմ արցունքներիս մեջ,
Եվ արդ, որպեսզի ես բազմապատկեմ ձեր վիշտն անսփոփ,
Եկա, որ պատմեմ ձեզ այն բոլորը, ինչ որ պատահեց այն օրից ի վեր:
Ուեկֆիլդի մոտ տեղի ունեցած մարտերից հետո,

Ուր ձեր քաջ հայրը ավանդեց հոգին,
Դժբախտ պարտության ու ձեր հոր մահվան գույժը ինձ հասավ,
Ինչպես կարող էր փոստի սրընթաց կառքը հասցնել:
Եվ ես Լոնդոնում, որպես արքայի ազնիվ պահապան,
Ոտքի կոչեցի իմ զինվորներին, բարեկամներիս,—
Ինձ թվաց՝ շատ լավ վճիռ եմ արել,—
Ուղևորվեցի դեպի Սենտ Օլբենս, որպեսզի կտրեմ թագուհու ճամփան:
Եվ տարա ինձ հետ մեր թագավորին:
Իմ դիտազորներն ինձ հաղորդեցին,
Որ մեր թագուհին առաջանում է դիտավորությամբ,
Որպեսզի ջնջի խորհրդարանում մեր կայացրած վճիռը վերջին՝
Ձեր ժառանգության ու թագավորի երդումի մասին:
Կարճ ասած, տյարք իմ, մենք հանդիպեցինք Սենտ Օլբենսի մոտ,
Մեր ջոկատները միմյանց մերձեցան,
Եվ երկու կողմերն ուժգին բախվեցին:
Բայց թագավորի սառնությո՞ւնն արդյոք,
Որ հետևում էր քնքուշ հայացքով ըմբոստ կնոջը,
Մարեց իմ զորքի բուռն զայրույթը,
Թե՞ հաջողության լուրը թագուհու,
Կամ թե սարսափը անխիղճ Կլիֆորդի,
Որ սպառնում էր արյամբ ու մահով դատաստան տեսնել գերիների հետ:
Չգիտե՛մ, սակայն ես պիտի ասեմ նրանց զենքերը
Շողշողում էին կայծակի նման,
Իսկ մեր զորքինը՝ ասես թե լիներ բվի ծույլ թռիչք,
Կամ ծույլ կամնավար՝ իր տոպանի հետ,
Զի խփում էին այնպես մեղմագին, կարծես՝ լինեին լավ բարեկամներ:
Թև ավի նրանց մեր արդար գործով,
Խոստացա մեծ վարձ, հատուցում, բայց զո՜ւր.
Մեր զորքը, սակայն չէր կռվում սրտանց,
Եվ մենք կորելով մեր հաղթանակի հույսը նրանցից՝
Շուտափույթ փախանք: Արքան շտապեց դեպի թագուհին,
Ձեր եղբայր Ջորջը, Նորֆոլկը ու ես
Սուրհանդակի պես փութացինք, որ ձեզ ժամ առաջ հասնենք,
Զի մենք իմացանք՝ զորք եք հավաքում հարձակման համար:

ԷԴՎԱՐԴ

Ո՞ւր է Նորֆոլկը, սիրելի Վորվիկ,
Ե՞րբ վերադարձավ Ջորջը Բուրգունդից:

ՎՈՐՎԻԿ

Դուքսը իր զորքով հեռու է մեզնից ուղիղ վեց մղոն,
Կալով լորդ Ջորջին՝ ապա վերջերս նրան ուղարկեց
Ձեր մորաքույրը՝ Բուրգունդիայի ազնիվ դքսուհին,
Որ այս կարեոր ու դաժան կռվում ձեզ պաշտպան կանգնի:

ՌԻՉԱՐԴ

Թերևս նրանք ուժեղ են եղել, որ քաջ Վորվիկը դիմեց փախուստի.
Հաճախ եմ լսել, թե նա ինչպիսի խիզախությամբ է հետամուտ լինում,
Սակայն չեմ լսել, որ խայտառակեր իրեն նահանջով:

ՎՈՐՎԻԿ

Հիմա էլ, Ռիչա՛րդ, դու այն չես լսի:
Շուտով կիմանաս, որ աջ ձեռքս հզոր
Կարող է գրավել թուլամիտ Հենրու թագը ոսկեձույլ
Եվ սարսափազդու մականը խլել նրա բռունցքից,
Թեկուզ այս կռվում քաջի այնպիսի համբավ վայելի,
Ինչպիսին նրա բարեպաշտությունն ու հեզությունն են:

ՌԻՉԱՐԴ

Ես դա լավ գիտեմ, սիրելի Վորվիկ, ինձ մի՛ պարսավիր,
Քո փառքի հանդեպ ունեցած սերս է ստիպում խոսել:
Սակայն ինչ անել այս խռովահույզ մռայլ օրերին,
Մի՞թե մենք պիտի մի կողմ շպրտենք զենքն ու զրահը,
Եվ մեր մարմինը փաթթենք սգակիր պատմուճանի մեջ,
Համրելով և մեր «Ավե Մարիան» տերողորմյայով.
Թե՞ պիտի գծենք մեր աղոթքները
Վրիժահույզ զենքով մեր ոսոխների սաղավարտներին,
Եթե այդ բանին դուք համաձայն եք, ասացեք՝ այո:
Ուրեմն, ի՜ զեն, ազնիվ իշխաններ:

ՎՈՐՎԻԿ

Դրա համար էլ ես ձեզ փնտրեցի
Եվ դրա համար իմ բարի եղբայր Մոնտեգյուն եկավ:
Լսեք ինձ. լորդեր, ժպիրհ թագուհին,
Հանդուգն Կլիֆորդն ու ամբարտավան Նորթըմբերլենդը,
Ինչպես և բազում հպարտ թռչուններ՝ ճիշտ նույն բնությամբ,
Լավ մշակեցին մեղրամոմի պես կակուղ արքային:
Նա հոժարակամ երդվեց՝ ձեզ տալու ժառանգությունը,
Եվ այդ երդումը արձանագրվեց խորհրդարանում:

Հիմա Լոնդոն է ոհմակն շտապում,
Որպեսզի ընդմիշտ խափանի երդումն ու այն բոլորը,
Ինչ հակառակ է Լանկաստերի տան:
Նրանք, կարծեմ թե երեսուն հազար զինվորներ ունեն,
Բայց դու, Մարչի կոմս, թե կարողանաս ժողովել մի գունդ
Քո բարեկամներ ուելսցիներից՝ խանդակաթ ու քաջ,
Ապա Նորֆոլկի ու իմ օգնությամբ
Մեր զորքի թիվը կարող ենք հաշվել քսանհինգ հազար:
Արդ՝ մեր ճանապարհն ուղղենք դեպ Լոնդոն,
Մի անգամ նորից հեծնենք փրփրաքաշ մեր նժույգները,
Մի անգամ նորից բղավենք՝ խփի՛ր անարգ թշնամուն.
Բայց ոչ մի անգամ նորից չբռնենք փախուստի ճամփան:

ՌԻՉԱՐԴ

Արդ՝ մեծ Վորվիկի ձայնն եմ ես լսում,
Թող նա չտեսնի՛ արևոտ մի օր,
Ով կամենում է փախուստ ու նահանջ,
Երբ քաջ Վորվիկը նետվում է առաջ:

ԷԴՎԱՐԴ

Վորվիկ, ես պիտի հենվեմ քեզ վրա,
Եվ եթե մահը քեզ հարված հասցնե՝ լեզուս պապանձվի,
Այդ նույն հարվածով Էդվարդն էլ կընկնի:

ՎՈՐՎԻԿ

Մարչի կոմսն էիր, արդ Յորքի դուքսն ես,
Քո հաջորդ քայլը՝ թագն է Անգլիայի:
Պետք է հռչակվես դու սուրբ թագավոր
Այն քաղաքներում, ուր մենք կլինենք,
Եվ ով չի նետի ուրախությունից գլխարկը վերև՝
Նա պետք է գլխով տուգանքն հատուցե:
Թագավոր Էդվարդ, քաջասիրտ Ռիչարդ, եղբայր Մոնտեգյու,
Հերիք է այստեղ մենք փառք երազենք,
Թող փողեր հնչե՛ն, շտապ դեպի՛ գործ:

ՌԻՉԱՐԴ

Թող արդ՝ Կլիֆորդ, սիրտդ կարծրանա պողպատի նման,
Արդեն ցույց տվիր քո անխիղճ սիրտը քո արարքներով,
Ես այն կխոցեմ կամ ինքս կընկնեմ:

ԷԴՎԱՐԴ

Թող թմբուկ զարկե՛ն։ Աստվա՜ծ, Սուրբ Գևորգ, դու՛ մեզ պահապան։

Մտնում է մի սուրհանդակ։

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ կա, ի՞նչ լուրեր։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ինձ ուղարկել է Նորֆոլկի դուքսը՝ ձեզ հաղորդելու,
Որ մոտենում է թագուհին զորքով,
Եվ նա խնդրում է շուտափույթ վճիռ։

ՎՈՐՎԻԿ

Հարմար է պահը, ի՜ զեն, իմ քաջեր։

Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Յորք քաղաքի առաջ։

Փողեր։ Մտնում են թագավոր Հենրին, թագուհի Մարգարիտը, Ուելսի իշխանը, Կլիֆորդը և Նորթեմբերլենդը՝ թմբուկների և փողերի ուղեկցությամբ։

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ողջո՜ւյն ձեզ, տեր իմ, փառապանծ Յորքում,
Ահա՛ գլուխը դժնի թշնամու,
Որ ջանում էր ձեր թագով զարդարվել.
Չե՞ք զվարճանում դուք այդ պատկերով։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչպես ժայռերը նավաբեկության ժամին նավաստուն՝
Այս տեսարանն ինձ վիշտ է պատճառում.
Աստված, խափանի՛ր վրիժառությունդ, մեղք չունեմ ընավ,
Ես միտք չունեի երդումս դրժել։

ԿԼԻՖՈՐԴ

Վեհափառ տեր իմ, պետք է դեն նետել չափից ավելի
Այս մեղմությունը և վտանգավոր կարեկցությունը։
Ո՞ւմ պետք է ուղղեն առյուծներն իրենց հայացքներն ազնիվ.

Եթե ոչ նրան, ով կողոպտում է նրանց որջերը.
Ո՞ւմ ձեռքն անտառի արջը կլիզե,
Եթե ոչ նրա, ով սպանում է ձագին մոր առաջ.
Ո՞վքեր են փախչում դարանող օձի թունոտ խայթոցից,
Եթե ոչ նրանք, ովքեր ճզմում են օձը ոտքերով:
Աննշան որդը շարժվում է նույնիսկ, երբ տրորում են,
Աղավնիներն էլ կտցում են՝ ձագերն առած թևի տակ:
Փառասեր Յորքը նշան էր բռնել ուղիղ քո թագին,
Դու ժպտում էիր, երբ խոժոռում էր նա իր ճակատը:
Նա՝ դուքս լինելով, ուզում էր որդուն կարգել թագավոր,
Եվ բարձրացնել իր ժառանգներին, ինչպես սիրող հայր,
Իսկ դու՝ մեր արքան, համաձայնել ես
Քո շնորհալի զավակին զրկել ժառանգությունից,
Վարվելով հետը անխիղճ հոր նման:
Անմիտ կենդանին կեր է հայթայթում իր ձագուկներին,
Թեև փախչում են նրանք մարդկային ահավոր դեմքից,
Բայց, այնուհանդերձ, ո՞վ չի նկատել,
Թե նա ինչպես է ի սեր ձագերի կռվում թևերով,
Որ ծառայում են փախուստի համար,
Եվ իրեն զոհում՝ հանուն ձագերի, երբ մեկն է փորձում մագլցել բույնը.
Ամո՜թ քեզ, տեր իմ, ամո՜թ, վեհապետ: Անմիտ կենդանուց
Վերցրու օրինակ, մի՞թե հանցանք չէ, որ բարի տղան
Հոր մեղքով կորցներ իր ժառանգության իրավունքն ստույգ,
Եվ հետագայում իր մանկանն ասեր.
«Այն ինչ պապիս հայրն ու պապս են շահել,
Հայրս կորցրեց անխոհեմ կերպով»:
Ա՜խ, ի՞նչ ամոթանք: Նայի՛ր, քո որդուն,
Եվ թող պատանու առնական դեմքը, որ գուշակում է
Հաջողակ մի բախտ, կոփի քո փափուկ, անկայուն սիրտը,
Որպեսզի պահես այն, ինչ որ քոնն է,
Եվ այն շնորհես հարազատ որդուդ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կլիֆորդն ասես լիներ հռետոր,
Չի հզոր փաստեր լույս աշխարհ բերեց:
Կլիֆո՛րդ, ասա՛, երբեք չես ասել.
Անօրեն վաստակն օգուտ չի բերում
Եվ մի՞թե, ասա, նա է բախտավոր,

Ում թշվառ հայրը դժոխք է գնում ժլատության համար:
Ես կամենում եմ, ինձանից հետո իմ որդուն թողնել մի բարի անուն
Եվ կուզենայի, որ հայրս ինձ թողներ նման մի անուն:
Մնացյալն անչափ շատ թանկ է նստում՝
Դրա պահպանումն հազար հոգս ունի,
Իսկ տիրապետումն ավա՜ղ. դույզն հաճույք:
Հորեղբոր որդի, սիրեցյալ իմ Յորք, քո բարեկամներն
Անգամ չգիտեն, թե քո գլուխն ինձ ինչպե՜ս է տանջում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Տեր իմ, արիացի՛ր, մոտ է թշնամին:
Ա՜խ, փոքրոգությամբ թուլացնում ես կողմնակիցներիդ:
Դու խոստացել ես ասպետություն տալ մեր քաջ տղային,
Ուրեմն, հանի՛ր սուրդ պատյանից: Էդվա՛րդ, ծունր իջիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բարձրացի՛ր ասպետ, Պլանտագենետ և լսի՛ր հորդ.
Թող սուրդ շողա ի պաշտպանություն լոկ արդարության:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Հայր իմ բարեսիրտ, ձեր թողտվությամբ.
Ես սուրս եմ հանում, որպես ձեր թագի օրինաց ժառանգ
Եվ մինչև ի մահ ես պիտի կռվեմ այս գժտության մեջ:

ԿԼԻՖՈՐԴ

Այսպես կխոսեր արքայազն արի:

Մտնում է մի սուրհանդակ,

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Փութացե՛ք, տոհմիկ հրամանատարներ,
Քանզի երեսուն հազար զինվորով
Վարվիկն է գալիս՝ Յորքին օգնելու:
Այն քաղաքներում, ուրկից անցնում են,
Յորքին արքա են նրանք հռչակում,
Շատերն անցնում են այդ մարդու կողմը:
Կռվի պատրաստվեք՝ նրանք շատ մոտ են:

ԿԼԻՖՈՐԴ

Տեր իմ, կուզեի, որ թողնեք դաշտը,
Քանզի առանց ձեզ՝ թագուհին գործը հաջող կտանի:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, տեր իմ. մեզ թողեք մեր բախտին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Նույնն է մեր բախտը. ես պիտի մնամ:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Այն դեպքում՝ կռվի վճռականությամբ:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Վեհափառ հայր իմ, դու զգուշիր ազնիվ լորդերին,
Եվ սիրտ տուր նրանց. ովքեր կռվում են հանուն քո դատի,
Բարեսիրտ հայր իմ, դուրս քաշիր սուրդ, կանչիր՝ Սուրբ Գևորգ:

Քայլերգ: Մտնում են Էդվարդը, Ջորջը, Ռիչարդը, Վորվիկը,
Նորֆոլկը, Մոնտեգյուն և զինվորներ:

ԷԴՎԱՐԴ

Երդմնազա՛նց Հենրի, ծնկաչոք հայցիր ինձնից գթություն.
Հանձնիր քո թագը, որ դնեմ գլխիս,
Կամ բախտդ փորձիր մահացու կռվում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա՛ ու կռվիր սիրուհուդ համար, հանդո՛ւգն տղա,
Ո՞վ է թույլ տվել, որ դու լրբորեն այսպես բարբաջես
Քո օրինավոր թագավորի դեմ:

ԷԴՎԱՐԴ

Թագավորը ե՛ս եմ, թող նա ծունր իջնի՛:
Նա՛ է ինձ ընտրել իրեն որդեգիր,
Բայց հետո ինքը երդումը դրժեց: Ես իմացել եմ.
Նրա փոխարեն դո՛ւ ես քեզ կարգել Անգլիո թագավոր:
Դո՛ւ ստիպեցիր, որ պառլամենտի մի նոր վճռով
Նա իմ փոխարեն սեփական որդու անունը դնի:

ԿԼԻՖՈՐԴ

Իրավացի է:
Ո՞վ պետք է հորը հաջորդի՝ տղան:

ՌԻՉԱՐԴ

Դո՞ւ էլ ես այստեղ, արնոտ մսագործ,
Ցունչս է կտրվում, չեմ կարող խոսել:

ԿԼԻՖՈՐԴ

Այո՛, այստեղ եմ, գարշ սապատավոր, պատրաստ եմ ահա
Քեզ և քո նման հանդուգն մեկին պատասխան տալու:

ՌԻՉԱՐԴ

Դո՞ւ ես սպանել ջահել Ռետլենդին:

ԿԼԻՖՈՐԴ

Ես՝ ծերուկ Յորքին. բայց չեմ հագեցել:

ՌԻՉԱՐԴ

Ի սեր աստծո՜, իշխաննե՛ր, ի մարտ:

ՎՈՐՎԻԿ

Հենրի, չե՞ս զիջում քո թագը, ասա՛:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Լեզուդ քեզ քաշի, շատախոս Վորվիկ.
Երբ հանդիպեցինք մենք Սենտ Օլբենսում՝
Ոտքերդ ավելի լավ ծառայեցին, քան թե ձեռքերդ:

ՎՈՐՎԻԿ

Այնժամ ես փախա, այժմ հերթն է քո:

ԿԼԻՖՈՐԴ

Այն ժամանակ էլ այդպես ասացիր,
Բայց նորից փախար:

ՎՈՐՎԻԿ

Սակայն, Կլիֆորդ,
Քո խիզախությունն ինձ չփախցրեց:

ՆՈՐԹԵՄԲԵՐԼԵՆԴ

Ես ոչ էլ քոնը, որ քեզ կստիպեր տեղում մնալու:

ՌԻՉԱՐԴ

Քեզ՝ Նորթեմբերլենդ, ես շատ եմ հարգում,
Թո՛ղ քո այս վեճը, զի դժվարությամբ
Հազիվ եմ ճնշում հոգուս խռովքը
Չար մանկասպան Կլիֆորդի հանդեպ:

ԿԼԻՖՈՐԴ

Ես սպանել եմ քո հորը նույնպես և դու կոչում ես նրան երեխա՞:

ՌԻՉԱՐԴ

Այո՛, սպանեցիր վախկոտի նման, դավաճանի պես,
Ինչպես՝ մեր եղբայր քնքուշ Ռետլենդին:
Բայց մայրամուտից առաջ կատիպեմ, որ դու նզովես քո այդ արարքը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վե՛րջ տվեք վեճին, հիմա ինձ լսեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դու սատի՛ր նրանց կամ շուրթդ փակիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Խնդրում եմ, լեզվիս փականք չդնել:
Թագավորն եմ ես, և կամքս է ազատ:

ԿԼԻՖՈՐԴ

Տեր իմ, այս վերքը, որ պատճառ դարձավ մեր հանդիպմանը,
Երբեք չեն կարող բառերը բուժել: Ուրեմն, լռի՛ր:

ՌԻՉԱՐԴ

Ուրեմն, դահի՛ճ, սուրդ մերկացրու:
Երդվում եմ սատծով, ես համոզված եմ,
Որ դու խիզախ ես միայն քո լեզվով:

ԷԴՎԱՐԴ

Ասա՛ ինձ, Հենրի, մի՞թե չես տալիս իմ իրավունքը.
Չի՛չի՛ր քո թագն ինձ, թե ոչ՝ բյուր մարդիկ,
Որ այս առավոտ նախաճաշեցին, երբեք չեն ճաշի:

ՎՈՐՎԻԿ

Եթե դու մերժես՝ նրանց արյունը կթափվի գլխիդ.
Չէ՞ որ դուքս Յորքը զենք է վերցրել ի պաշտպանություն ճշմարտության:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Եթե այն ճիշտ է, ինչ ճշմարիտ է Վորվիկն անվանում.
Ուրեմն, չկա և ոչ մի սխալ, ամեն ինչ ճիշտ է:

ՌԻՉԱՐԴ

134 Ով էլ որ աշխարհ քեզ բերած լինի, այստեղ է ահա քո մայրը կանգնած,

Քեզ ճանաչեցի քո մոր չար լեզվից:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց դու նման չես քո հորն ու մորը,
Դու արատապիղծ. գարշելի դաժնվոր.
Քեզ ճակատագիրն այնպես է ծնել,
Որ քեզնից փախչեն, ինչպես դոդոշից կամ թե մողեսի դաժան խայթոցից:

ՌԻՉԱՐԴ

Դու Նեապոլի հասարակ երկաթ, բայց մեր անգլիական ոսկով սքողված,
Հայրդ կրում է արքայի տիտղոս
(Կարծես ճեղուցը ծովի տեղ կանչենք),
Եվ դու ի՞նչպես է, որ չես ամաչում:
Չէ՞ որ դու գիտես քո պիղծ ծագումը, բայց թույլ չես տալիս,
Որ քո չար լեզուն երևան հանի խառնածին սիրտդ:

ԷԴՎԱՐԴ

Այո՛, կառնեի մի խորոմ ծղոտ հազար կրոնով,
Միայն թե այս լիրբն իրեն ճանաչեր:
Հելենան քեզնից չքնաղ էր անչափ,
Թեև էրիկդ նույնպես Մենելավ կարող է լինել.
Բայց կրտսեր եղբայրն Ագամեմնոնի իր նենգ կնոջից
Այնպես չխոցվեց, ինչպես այս խղճուկ արքան քեզանով:
Նրա հայրն հաղթեց Ֆրանսիո հողում,
Արքային սանձեց և ծունկի բերեց թագաժառանգին:
Թե նրա որդին, ըստ պատշաճ դիրքի, իրեն կին ընտրեր,
Նա պիտի պահեր ցայսօր այդ փառքը,
Բայց երբ աղքատին առավ անկողին,
Այդ ամուսնությամբ հարգելով քո խեղճ, չքավոր հորը,
Նույնիսկ արևը հորդ անձրև տեղաց
Ու տարավ նրա հոր անեծքները այս ծովից այն կողմ
Եվ խռովության ամպեր նա դիզեց
Իր գահի շուրջը՝ հարազատ տան մեջ:
Քո հպարտությունն առիթ չէր դառնա այս գժտությանը,
Թե դու լինեիր խոնարհ ու բարի.
Մեր իրավունքը դեռ պիտի ննջեր
Եվ, կարեկցելով բարի արքային,
Մենք կձգձգեինք մեր դատն առայժմ:

ՋՈՐՋ

Բայց երբ մենք տեսանք, որ մեր արևը գարունդ է բացում.
Իսկ քո ամառը մեզ բերք չի տալիս,
Կտրեցինք կացնով շորթող արմատդ,
Թեև սուր ծայրը մեզ երբեմն հասավ:
Բայց դու իմացիր. մենք սկսել ենք հարվածներ տեղալ,
Եվ չենք դադարի այնքան ժամանակ,
Քանի դեռ արյամբ մենք չենք ողողել քո արմատները:

ԷԴՎԱՐԴ

Այս որոշումով մարտի եմ կանչում,
Եվ չեմ կամենում ձեզ հետ բանակցել,
Քանզի չես թողնում, որ արքան խոսի:
Հնչեցրե՛ք փողեր, թող մեր արնավառ դրոշները ծփան.
Հաղթանա՜կ կամ մա՛հ...

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Սպասի՛ր, Էդվարդ...

ԷԴՎԱՐԴ

Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում, կռվարար դու կին, հազար կյանք արժեն
Այս բառերն այսօր, ձեզ պետք է մերժեմ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Ռազմադաշտ՝ Տաուտոնի ու Սեքստոնի միջև, Յորքշիրում:

Տագնապ: Ճաչ ու շառաչ: Մտնում է Վորվիկը:

ՎՈՐՎԻԿ

Հոգնաբեկ, ինչպես վազող մի մարզիկ,
Ուզում եմ պառկել՝ մի քիչ շունչ առնել:
Այն հարվածները, որ ինձ հասցրին ու ես պարձրի.
Զրկել են ուժից ամուր ջղերս,
Եվ ի հեճուկս իմ կատաղության՝
Ես պետք է այստեղ քիչ հանգստանամ:

Վազելով մտնում է Էդվարդը:

ԷԴՎԱՐԴ

Ժպտա ինձ երկինք կամ թե անգութ մահ՝ շանթի՛ր անխնա,
Կնճռոտվել է այս աշխարհն արդեն, Էդվարդի արևն ամպի տակ մտավ:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ եղավ. տեր իմ, ինչպե՞ս է գործը, մի՞թե դեպի լավ ոչ մի հույս չկա.

Մտնում է Ջորջը:

ՋՈՐՋ

Ամեն ինչ կորավ, հույսի շող չկա, մեր շարքը խառնվեց,
Հետապնդում է մեզ կործանումը,
Ի՞նչ խորհուրդ կտաս, ո՞ւր փախչենք, ասա՛:

ԷԴՎԱՐԴ

Փախուստից բնավ օգուտ չես քաղի, նրանք թև առած հետապնդում են,
Թույլ ենք, չենք կարող նրանցից խույս տալ:

Մտնում է Ռիչարդը:

ՌԻՉԱՐԴ

Ա՛խ, ինչո՞ւ, Վորվիկ, դու ետ քաշվեցիր,
Չէ՞ որ քո եղբոր արյունը խմեց ծարաված հողը,
Ում սուր գեղարդով խոցեց Կլիֆորդը,
Եվ նա վերահաս մահվան մեջ գոչեց՝
Վորվի՛կ, իմ եղբա՛յր, վրեժս լուծի՛ր,
Ասես թե հեռվից լսվեց ողբագին մի տխուր հառաչ,
Եվ իշխանն ազնիվ նրանց ձիերի սմբակների տակ՝
Լվացված նրա ծխացող արյամբ, ավանդեց հոգին:

ՎՈՐՎԻԿ

Թող հողն հագենա մեր տոհմի արյամբ,
Ձիուս կսպանեմ՝ փախչել չեմ ուզում:
Ինչո՞ւ մենք ողբանք մեր կորուստները քնքուշ կնոջ պես,
Երբ մոլեգնում է վայրագ թշնամին
Եվ նայենք, ինչպես դերասանները,
Իբրև թե կատակ ներկայացնում են մի ողբերգություն:
Այստեղ ծնկաչոք երդվում եմ աստծուն,
Որ չեմ ունենա հանգիստ ու դադար,
Քանի դեռ մահը աչքս չի փակել,
Քանի դեռ բախտը ինձ թույլ չի տվել վրեժս հանել:

ԷԴՎԱՐԴ

Օ՜, Վորվի՛կ, քեզ հետ ես ծունր եմ իջնում.
Եվ այս երդումով ձուլում հոգիս քեզ,
Ու մինչ իմ ծունկը վեր կբարձրանա հողի ցուրտ դեմքից.
Ես քեզ եմ նետում իմ ձեռքն ու սիրտը,
Քեզ՝ բախտ արքայոց:
Աղերսո՜ւմ եմ քեզ, երբ քո կամքով
Պետք է մարմինս կողոպուտ դառնա թշնամիներիս,
Բաց քո պղնձյա դռներն երկնքի,
Տուր քո կածանով մեղապարտ հոգիս:
Այժմ, իշխաններ, ցնոր հանդիպում՝
Թեկուզ այն լինի՝ ի վերա երկրի կամ թե երկնքում:

ՌԻՉԱՐԴ

Եղբա՛յր, տուր ձեռքդ. և ազնիվ Վորվիկ,
Թույլ տուր քեզ գրկել հոգնած ձեռքերով.
Ես, որ չեմ տեսել երբեք արցունքներ,
Արդ լաց եմ լինում, զի մեր նորածիլ գարնանը պետք է ձմեռն ավերի:

ՎՈՐՎԻԿ

Օ՜ն, մնաք բարով. ազնիվ իշխաններ:

ՋՈՐՋ

Գնա՛նք բոլորս մեր ջոկատները:
Թող փախչեն նրանք, ովքեր չեն ուզում մեզ հետ մարտնչել.
Իսկ նրանք, ովքեր կմնան մեզ մոտ՝ կլինեն նեցուկ:
Բան է, թե հասնենք մենք հաջողության՝
Նրանք կստանան այնպիսի պարգև,
Ինչպիսին՝ մարզիկն օլիմպիական շահած խաղերում.
Թող սա քաջություն հաղորդի նրանց վհատյալ հոգուն.
Դեռ հույս կա կյանքի ու հաղթանակի,
Պետք չէ հապաղել. դեպի նո՜ր գրոհ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Ռազմադաշտի մի այլ վայր:

Ռազմի շաչ ու շառաչ: Մտնում են Ռիչարդն ու Կլիֆորդը:

ՌԻՉԱՐԴ

Վերջապես, Կլիֆո՛րդ, մենակ ես ինձ հետ.
Այս աջս ազնիվ Յորքի համար է, իսկ սա՝ Ռետլենդի:

Գիտցիր, երկուսն էլ վրեժ են ուզում,
Թեկուզ պաշարված լինես պղնձյա ամուր պարսպով:

ԿԼԻՖՈՐԴ

Վերջապես, Ռիչարդ, մենակ ես ինձ հետ.
Այս աջն սպանեց քո հորը՝ Յորքին,
Իսկ սա՝ քո ջահել եղբորը մորթեց:
Իսկ սա՝ այն սիրտն է, որ նրանց մահով ուրախանում է
Եվ քաջալերում քո հորն ու եղբորն սպանող ձեռքը,
Որ նույնպես քեզ հետ հաշիվն իր մաքրի, ուստի պատրաստվի՛ր..

Նրանք կռվում են: Մտնում է Վորվիկը: Կլիֆորդը փախչում է:

ՌԻՉԱՐԴ

Ո՛չ, Վորվիկ, ընտրիր մի ուրիշ երե,
Ես ինքս պիտի այս գայլին որսամ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ռազմադաշտի մի այլ վայր:

Տագնապ: Մտնում է թագավոր Հենրին:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այս ճակատամարտն ասես թե լինի մաքառող մի այգ.
Երբ օրհասական ամպերն են կռվում բացվող լույսի հետ,
3 Երբ հովիվ տղան թեթև փչում է մատների վրա
Ու չի իմանում՝ գիշե՞ր է, թե՞ լույս:
Մերթ ճակատամարտն այս կողմն է թեքվում
Այն մեծ ծովի պես, որ պալարվում է քամուն հակառակ.
Մերթ էլ մի այլ կողմ՝ նույն ծովի նման,
Որ նահանջում է քամու զայրույթից:
Մերթ զորանում է մակընթացությունն, ապա՝ խենթ հողմը,
Մերթ մեկն է տիրում, մերթ մյուսը իշխում,
Նրանք փորձում են միմյանց հաղթել,
Սակայն ոչ մեկն էլ վերջում չի զիջում,
Այսպես է, ավա՛ղ, այս դաժան կռվի զուգակշիռը:
Ես պետք է նստեմ այստեղ՝ այս փոքրիկ բլրի գագաթին,

Եվ թող նա հաղթի, ում կամենում է աստված ողորմած:
Ա՜խ, իմ թագուհին, Կլիֆորդը նույնպես
Ինձ մարտի դաշտից հեռու պահեցին: Նրանք երդվեցին,
Որ առանց ինձ էլ հաջող կընթանան գործերն ամենուր:
Ավելի լավ է կյանքից հեռանամ, թե կամքն է աստծո.
Ի՞նչ է աշխարհը. թե ոչ՝ վիշտ ու ցավ:
Աստվա՜ծ, կլինեի կյանքս երջանիկ,
Թե ես ապրեի ջահել հովվի պես:
Ա՜խ, ինչպե՜ս հիմա կուզեի նստել բլրի գագաթին
Եվ փորագրել ջանասիրությամբ մի արևացույց,
Որպեսզի տեսնեմ, թե րոպեներն ինչպես են վազում,
Եվ քանի րոպեն մեկ ժամ է կազմում,
Եվ քանի ժամը՝ կատարյալ մի օր,
Եվ քանի օրը՝ մեկ ամբողջ տարի,
Եվ քանի տարի մարդուն է տրված:
Երբ այս ամենը ստույգ իմանամ՝ ես կբաժանեմ ժամանակն այսպես.
Այսքան ժամ պետք է ոչխարիս հոտին,
Այսքան ժամ պետք է հանգստիս համար,
Այսքան ժամ պետք է իմ զվարճանքին,
Եվ այսքան օրից իմ ոչխարները պետք է ծանրանան,
Այսքան շաբաթից խեղճ հիմարները գառնուկ կծնեն,
Եվ այսքան ամսից ես պետք է խուզեմ գառներիս բուրդը:
Այսպես կանցնեին րոպեներ, ժամեր, ամիսներ, տարի,
Կմոտենային այն նպատակին, ինչի համար են նրանք ստեղծված՝
Տանելու ներմակ մազերս, ավա՜ղ, մի ցուրտ գերեզման:
Ա՜խ, ես կուզեի կյանքն այսպես լիներ.
Այնքան քաղցրաբույր, այնքան գեղեցիկ:
Մի՞թե սրտափուշ մացառն ավելի ստվեր չի բաշխում ջահել հովիվին,
Որ պահպանում է իր հոտն անզգույշ,
Քան ականակիտ, ասեղնագործված նուրբ ամպհովանին
Այն թագավորի, որ վախենում է իրեն հպատակ դավաճաններից:
Օ՜, հազար անգամ.
Մի՞թե տնական կաթնաշոռն հովվի,
Կաշվե ամանի սառնորակ ջուրը,
Նրա քունն անույշ՝ ծառի ստվերում,
Որ քաղցր են դարձնում կյանքն աստղերի տակ,
Թանկ չեն իշխանի ընտիր կերակրից,
Ոսկյա գավաթի բոցափայլ գինուց.

Եվ չքնաղազարդ նուրբ մահճակալից, ուր ընկղմվում է նրա մարմինը,
Բայց, ավա՜ղ, հոգսի, անխտանության,
Պախանանության որոգայթն ընկած:

Տագնապ: Մտնում է հայրասպան որդին: Նա քարշ է տալիս հոր դիակը:

ՏՂԱՆ

Վատ է այն քամին, որ փչում է զուր:
Գուցե այս մարդը շատ ոսկի ունի, ում սպանեցի ես ձեռնամարտում:
Ես, որ նրան եմ կողոպտում հիմա,
Մինչևիրիկունկարող եմ զիջել իմ կյանքն ու փողը
Այլ անծանոթի, ինչպես այս թշվառ, մեռած մարդը՝ ինձ:
Ո՞վ է սա, աստվա՛ծ, հորս դեմքն ունի.
Ում սպանեցի չճանաչելով:
Օ՜, ծանր օրեր՝ ընդունակ միայն ոճրագործության:
Ինձ թագավորը կանչեց Լոնդոնից:
Հայրս լինելով Վորվիկի մարդը,
Յորքի հետ եկավ՝ իր տիրոջ կամքով,
Իսկ ես, ում նա էր, ավա՜ղ, կյանք ավել,
Խլեցի նրա կյանքը իմ ձեռքով:
Ների՛ր ինձ, աստված, ես չեմ իմացել, թե ինչ եմ անում.
Ների՛ր ինձ, հայր իմ, քեզ չեմ ճանաչել,
Թող արցունքներս մաքրեն, լվանան այս հետքերն արնոտ.
Կանգ առե՛ք, բառեր, թող նրանք հորդեն հագենալու չափ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Օ՜, ողորմելի՜, թշվառ տեսարան, օ՜, արյունալի՜, բիրտ ժամանակներ,
Երբ առյուծներն են պայքարում իրենց որջերի համար,
Անմեղ գառներն են տառապում նրանց ընդհարումներից.
Ողբա՛, անբախտ մարդ, կարտասվեմ քեզ հետ,
Եվ թող մեր սիրտը և մեր աչքերը լացից կուրանան, վշտից այրվեն,
Ինչպես նենգապալ պառակտումներից:

Մտնում է մի որդեսպան հայր: Ձեռքերի վրա բերում է որդու մարմինը:

ՀԱՅՐԸ

Դո՛ւ, որ քաջաբար պաշտպանվում էիր,
Տո՛ւր քո ոսկին ինձ, թե ոսկի ունես,
Ես այն գնեցի բյուր հարվածներով:
Բայց կա՛ց, թշնամու դեմքը չէ՞ արդյոք,

Ա՜խ, ո՛չ, զավա՜կս է, միա՜կ զավակս...
Ա՜խ, եթե կյանքի նշույլ կա քո մեջ, բա՛ց քո աչքերը,
Նայի՛ր, թե ինչպես խելահեղ սրտիս արցունքներն առատ
Հորդում են այս թաց վերքերի վրա,
Որ սպանում են իմ սիրտն ու աչքը:
Աստվա՛ծ, գթություն շաղ տուր այս թշվառ օրերի վրա:
Ա՜խ, ի՛նչ նենգություն, ի՛նչ վայրենություն և ի՛նչ կատաղած՝
Խռովյալ, մոլար և անբնական,
Ծնում են ավա՜ղ, այս մահատեսիլ գժտությունները:
92 Օ՜, իմ զավակս, քեզ կյանք տվեցի չափազանց կանուխ
Եվ չափազանց ուշ կյանքդ խլեցի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Վշտի վրա՝ վիշտ, չափից ավելի,
Օ՜, կարենայի մահովս կասեցնել այս պիղծ արարքը,
Օ՜, գթա՛, գթա՛, երկինք դու բարի:
Դեմքին կան վարդեր՝ կարմիր ու ճերմակ,
Կռվող կողմերի մահաբեր գույներ:
Մեկը նրա ալ արյան գույնն ունի,
Մյուսը՝ գունատ այտն ասես լինի:
Թող այս վարդերից մեկը թառամի, մյուսը՝ փթթի:
Երբ դուք կռվեք՝ ապա բյուր կյանքեր հավերժ կխամրեն:

ՏՂԱՆ

Ինչպես կնայի մայրս ինձ վրա, երբ հորս մահվան սև բոթը առնի,
Ինձ խիստ կանարգի անսփոփ վշտով:

ՀԱՅՐԸ

Ինչպես կնայի կինս ինձ վրա, երբ որ իմանա իր որդու մահը.
Արցունք կհորդի հավերժ անսփոփ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՛նչ պիտի անի իմ ողջ երկիրը՝ այս աղետալի տանջանքի համար,
Ինձ կնզովի անսփոփ վշտով:

ՏՂԱՆ

Եղե՞լ է այսպես որդին հոր վրա:

ՀԱՅՐԸ

Թախծե՞լ է այսպես հայրը իր որդուն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ե՞րբ է թագավորն այսպես ողբացել իր ժողովրդին,
Խորն է ձեր վիշտը, բայց հազար անգամ իմ վիշտն առավել:

ՏՂԱՆ

Քեզ պիտի տանեմ մի այնպիսի տեղ, ուր լաց կլինեմ՝ որքան սիրտս ուզի:

Գնում է, տանելով հոր մարմինը:

ՀԱՅՐԸ

Թող այս ձեռքերը քեզ պատանք լինեն,
Իսկ սիրտս՝ տղա՛ս, քո գերեզմանը,
Քանզի սրտիս մեջ քո պատկերն է միշտ,
Հառաչող կուրծքս՝ քեզ թաղման կոչնակ:
Քեզ կորցնելով՝ կողբա քո հայրը
Գերեզմանային այնպիսի վշտով,
Ինչպիսին տեսավ ծեր Պրիամոսը, երբ որ կորցրեց իր որդիներին:
Ես քեզ այստեղից հեռու կտանեմ, թող նրանք կռվեն, որքան կամենան,
Վա՜յ ինձ, ում պետք չէր, նրան սպանեցի:

Գնում է. տանելով որդու մարմինը ձեռքերի վրա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Տխրամի՜տ մարդիկ, վշտից՝ կորացած,
Բայց ձեզնից տխուր՝ ահա մի արքա...

Տագնապ: Ռազմի շաչ ու շառաչ: Մտնում են թագուհի Մարգարիտը,
Ուելսի իշխանը և Էքսեթերը:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Փախի՜ր, հայր, փախի՛ր, զի փախան բոլոր բարեկամներդ,
Վորվիկն է կատաղել վայրի ցուլի պես:
Գնա՜նք, մեզ մահն է հետամուտ լինում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ձի նստիր, տեր իմ, շտապենք Բերվիք:
Ռիչարդն ու Էդվարդն արդեն գալիս են
Եվ ինչպես երկու վազկան քերծեներ,
Որ նախանձում են վախից խիստ փախչող նապաստակներին,
Ցասկոտ, հրափայլ աչքերում՝ զայրույթ,
Եվ արնոտ սուրը ձեռքերին սեղմած,
Գալիս են դեպ մեզ, փախչե՜նք այստեղից:

ԷՔՍԵՏԸՐ

Շտապե՜նք, քանզի վրեժ են բերում:
Օ՜, ոչ, կանգնելու հարկ չկա հիմա...
Դեն, ինձ հետևեք, գնում եմ առաջ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Արդ, տար ինձ քեզ հետ, բարի Էքսետեր,
Բայց ոչ թե վախից, այլ վասն նրա,
Որ թագուհին է այսպես կամենում, շտապե՜նք առաջ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Նույն վայրը:

Մարտի շաչ ու շառաչ: Մտնում է վիրավոր Կլիֆորդը:

ԿԼԻՖՈՐԴ

Այստեղ վառվելով, այստեղ էլ մոմս մարում է դանդաղ:
Վառվելով՝ նա լույս տվեց արքային:
Օ՜, իմ Լանկաստեր, քո կործանումից ես ավելի շատ երկյուղ եմ կրում,
Քան թե այն պահից, երբ հեռանում է հոգին մարմնից:
Իմ սերն ու վախը կապեցին քեզ հետ բյուր բարեկամներ,
Բայց ես ընկնում եմ, և այդ կապն ամուր պիտի քանդվի,
Եվ կթուլանա թագավոր Հենրին, կհզորանա ամբարիշտ Յորքը:
Եվ ստոր մարդկանց պարսն է բազմանում
Ամռան անհրես ճանճերի նման,
Եվ ո՞ւր են թռչում այդ մոծակները, դեպի՛ արևը,
Իսկ ո՞վ է հիմա երկնքում փայլում. Հենրու թշնամի՛ք:
Օ՜, Ֆեբոս, թե դու հանձն չառնեիր,
Որ Ֆայետոնը սանձվեր հրեղեն քո նժույգներով,
Չէր խանձի երկիրն այրող քո կառքը:
Ա՜խ, Հենրի, թե դու երկիրն իշխեիր արքաների պես
Կամ ինչպես հայրդ կամ թե քո պապը,
Զիջելով Յորքին հողի մի կտոր՝
Նա չէր բազմանա ամռան ճանճի պես:
Եվ ես տասն հազար այրիների հետ
Չէի արտասվի մեր դաժան մահը այս անբախտ երկրում,
Դու կպահեիր քո գահը հաստատ:

Բայց մոլախոտերն արագ են աճում բարեշունչ օդում,
Եվ ավազակը ճանկռում է դառնում, երբ օրենքն է մեղմ։
Զուր է իմ ողբը, անբուժելի են այրող վերքերս։
Ես ճամփա չունեմ, ոչ էլ զորություն՝ փախչելու համար։
Անխիղճ թշնամին ինձ չի կարեկցի,
Ցի չեմ վաստակել իմ իրավունքը գթության համար։
Օդն է թափանցում իմ մահացու վերքերիս խորքը,
Արյան կորստից նվաղում եմ ես։
Եկե՛ք, զորող Յորք, Վորվիկ ու Ռիչարդ,
Ձեր հորն սպանեցի, կուրծքս խոցեք արդ։

Ուշաթափ ընկնում է։

Տագնապ։ Ավարտի ազդանշան։ Մտնում են էդվարդը, Ջորջը, Ռիչարդը, Մոնտեգյուն, Վորվիկը և զինվորներ։

ԷԴՎԱՐԴ

Այժմ շունչ առնենք, ազնիվ իշխաններ,
Մեզ բարի բախտը պարգևեց դադար
Եվ պատերազմի կնճիռները հարթեց խաղաղ հայացքով։
Մեր ջոկատները հետապնդում են արնոտ թագուհուն,
Որն ուզածի պես վարում է Հենրուն, թեև այս մարդն է թագավորն երկրի։
Այսպես առագաստն՝ անչափ ուռեցված հողմահուզանքից,
Հրամայում է վանառանավին, որպեսզի գնա հոսանքին ընդդեմ։
Զի՞ փախել արդյոք Կլիֆորդը նրանց հետ։

ՎՈՐՎԻԿ

Անհնարին է, չէր կարող խույս տալ,
Քանզի ձեր եղբայր Ռիչարդը արդեն, այդ բանն ասում եմ նրա երեսին,—
Նշել է նրա պիղծ գերեզմանը,—
Ուր էլ նա լինի՝ մեռած է, անշուշտ։

Կլիֆորդը հառաչում է ու մեռնում։

ԷԴՎԱՐԴ

Այդ ո՞ւմ հոգին է, որ դժվարությամբ մարմինն է լքում։

ՌԻՉԱՐԴ

Մահագու՜յժ հառաչ՝ երբ կյանքն է պարտվել դառնաշունչ մահից։

ԷԴՎԱՐԴ

Նայի՛ր, թե ով է։ Ճակատամարտը հանգել է արդեն,

Ով էլ նա լինի՝ ազնիվ բարեկամ կամ թե թշնամի,
Պետք է գթությամբ օգնություն ցույց տալ:

ՌԻՉԱՐԴ

Ե՛տ առ գթության քո վեհոտ խոսքը, զի Կլիֆորդն է,
Ով չէր զոհանում, որ ճյուղն է կտրել՝ կյանքը Ռեթլենդի,
Երբ նոր էր նրա սաղարթը բացվում
Եվ խրել արնոտ դանակն արմատին,
Որից այն մատղաշ ոստն էր կյանք առել,
Նկատի ունեմ մեր նորը վսեմ...

ՎՈՐՎԻԿ

Յորքի դարպասից գլուխն առեք վար՝ ձեր նոր գլուխը,
Որն այդ դարպասին Կլիֆորդը մեխեց, թող տեղը դրվի
Նրա գլուխը. ակն ընդ ական, թող այդպես լինի:

ԷԴՎԱՐԴ

Թող այստեղ բերեն այդ բուն ողբաձայն,
Որ գուշակում էր անկումը մեր տան,
Մահը կտրել է նրա ձայնն արդեն խիստ սպառնալից,
Եվ նրա լեզուն՝ չարագույժ ու գեշ լռել է ընդմիշտ:

Զինվորները դիակը բերում են առաջ:

ՎՈՐՎԻԿ

Կարծեմ, կորցրել է գիտակցությունը.
Խոսի՛ր, Կլիֆորդ, մեզ չե՞ս ճանաչում:
Սև մառայլ մահը ամպեր է ձգել նրա սիրոծ կյանքի շողերի վրա,
Նա մեզ չի տեսնում, նա մեզ չի լսում:

ՌԻՉԱՐԴ

Օ՜, թե կարենար, գուցե կարող է.
Նա ձևանում է նմառոտ մեռած,
Որպեսզի խույս տա այն դառն ու կծու խոշտանգումներից,
Ինչպիսիք նա էր մեր հորն ենթարկում մահվան չար ժամին:

ՋՈՐՋ

Եթե այդպես է, տառապիր նրան դառն խոսքերով:

ՌԻՉԱՐԴ

Կլիֆո՛րդ, ներցի՛ր, բայց չես ստանա ո՛չ մի գթություն:

ԷԴՎԱՐԴ

Կլիֆո՛րդ, քավություն հայցիր, բայց իզո՜ւր:

ՎՈՐՎԻԿ

Կլիֆո՛րդ, խորհիր մեղքիդ թողություն:

ՋՈՐՋ

Մենք կմտածենք դժոխքի տանջանք մեղքերիդ համար:

ՌԻՉԱՐԴ

Դու սիրում էիր փառապանծ Յորքին... Նրա որդին եմ:

ԷԴՎԱՐԴ

Դու խղճում էիր ջահել Ռետլենդին. խղճում եմ ես քեզ:

ՋՈՐՋ

Ո՞ւր է ձեր պաշտպան Մարգարիտն հպարտ:

ՎՈՐՎԻԿ

Կլիֆո՛րդ, սրանք այպանում են քեզ,
Հայհոյի՛ր նրանց, վարժ ես այդ բանին:

ՌԻՉԱՐԴ

Նա չի հայհոյում, ուրեմն, աշխարհում գործերը վատ են,
Երբ Կլիֆորդը էլ չի նզովում բարեկամներին,
Այդ բանից պետք է մենք գլխի ընկնենք, որ նա մեռած է:
Իմ հոգին վկա, թե հնար լիներ աջ ձեռքի գնով
Շնորհել սրան երկու ժամվա կյանք,
Ձեռքս կտայի, որ այպանեի նրան չարությամբ,
Եվ խեղդեր արյունն այդ արքային,
Ում ծարավն անհագ չմարվեց Յորքով ու Ռետլենդով:

ՎՈՐՎԻԿ

Բայց նա մեռած է, կտրեք գլուխը
Եվ դրեք այնտեղ, որտեղ ձեր հորն է:
Այժմ հաղթական քայլքով դեպ Լոնդոն.
Ուր դու Անգլիայի թագը կընդունես:
Այստեղից ծովով կանցնեմ Ֆրանսիա,
Լեդի Բոնայի ձեռքը կխնդրեմ քեզ համար. Էդվա՛րդ,
Եվ դու այսպիսով ամուր կկապես երկու երկրներ:
Ֆրանսիայի հետ բարեկամ դարձար՝
Էլ չես վախենա ցիրուցան եղած թշնամիներից,

Որ հույս ունենք մեզ նորից վնասել:
Թեև չեն կարող քեզ վիշտ պատճառել,
Բայց պետք է իրենց տհաճ բզզյունով խիստ վիրավորեն քո ականջները:
Ամենից առաջ՝ ուզում եմ տեսնել քեզ թագադրված,
Ապա՝ ես ծովով Բրետան կհասնեմ,
Որ քո պսակը ես գլուխ բերեմ, թե հաճելի է իմ սիրոջն այսպես:

ԷԴՎԱՐԴ

Թող այդպես լինի. ինչպես ուզում ես, սիրելի Վորվիկ,
Քանզի իմ գահը պետք է բարձրանա ուսերիդ վրա.
Ես ձեռք չեմ զարնի որևէ գործի,
Եթե այն բնավ քո սրտովը չէ, դեմ է խորհրդիդ:
Ռիչա՛րդ, այժմվանից հաստատում եմ քեզ Գլոստերի դուքս,
Քեզ, Ջորջ՝ Կլարենսի, իսկ դու՝ քաջ Վորվիկ,
Ամենուր կիշխես ինչպես կամենաս:

ՌԻՉԱՐԴ

106 Թող Ջորջը լինի Գլոստերի դուքսը, իսկ ես՝ Կլարենսի,
Քանզի Գլոստերի դքսությունում կա չարագույշ մի բան:

ՎՈՐՎԻԿ

Լռի՛ր, ի՞նչ անմիտ բաներ ես ասում,
Դու պետք է լինես Գլոստերի դուքսը: Իսկ այժմ՝ Լոնդոն,
Ուր կվայելենք մեզ միշտ պատկանող մեծարանք ու շուք:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Անտառ-արգելանոց հյուսիսային Անգլիայում։

Մտնում են երկու պահակ, ձեռքերին՝ աղեղնազեն։

Ա ՊԱՀԱԿ

Թաքնվենք այս խիտ թփուտների տակ,
Շուտով բացատից կանցնի այն հոտը.
Մենք դարանամուտ նշան կբռնենք
Հոտն առաջնորդող արու եղջերվին։

Բ ՊԱՀԱԿ

Երբ ես կանգնեմ բլրի գագաթին, այնժամ կարող ենք ճիշտ նշան բռնել։

Ա ՊԱՀԱԿ

Պետք չէ, քանի որ աղեղնազենիդ ձայնից կփախչեն
Եղջերուները, և զուր կկորչի արձակած նետս։
Պետք չէ։ Այստեղից ավելի դիպուկ նշան կբռնենք։
Որպեսզի անցնի ժամանակն արագ՝ ես քեզ կպատմեմ,
Թե ինչ պատահեց մի անգամ ինձ հետ մեր կանգնած տեղում։

Բ ՊԱՀԱԿ

Նայի՛ր. անծանոթ մի մարդ է գալիս։
Սպասիր, թող նա այստեղից անցնի։

Մտնում է թագավոր Հենրին՝ շորերը փոխած, ձեռքին՝ աղոթագիրք։

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես ծպտյալ փախա Շոտլանդիայից,

Որ իմ փափագող հայացքն ողջունի երկրիս հարազատ·
Ո՛չ, Հարի, Հարի, սա երկիրդ չէ,
Քո տեղն առել են, քո գայիսոնը խլել են քեզնից,
Եվ քո ճակատից քեզ օծած անուշ մեռոնն է թափվել:
Ոչ ոք ծնրադիր էլ քեզ չի կոչի հիմա թագավոր,
Ոչ մի հեզամիտ աղերսարկու արդ քեզ չի պաղատի.
Որ նեցուկ կանգնես արդարությանը,
Ոչ ոք չի ուզում պաշտպանություն,
Ինչպե՞ս կարող եմ օգնել ուրիշին, երբ ինքս եմ անօգ:

Ա ՊԱՀԱԿ

Ահա՛ եղջերուն՝ քանի մորթու համար
Պահակին, անշուշտ, առատ վարձ կտան:
Նախկին արքան չէ՞, շուտ բռնենք նրան:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ե՛կ, քեզ համբուրեմ, բիրտ ձախորդությո՛ւն,
Քանզի իմաստուն մարդիկ ասում են՝ սա է ամենից իմաստուն քայլը:

Բ ՊԱՀԱԿ

Պետք չէ հապաղել, առաջը կտրենք:

Ա ՊԱՀԱԿ

Սպասի՛ր, տեսնենք, ինչ է բարբաջում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իմ կինն ու որդին օգնության համար փախան Ֆրանսիա:
Այնտեղ է մեկնել, ինչպես լսեցի, մեծն Վորվիկը,
Որպեսզի ուզե Լյուդովիկոսի քրոջն՝ Էդվարդին:
Եթե այս լուրերն ստույգ են իրա՛վ,
Ապա ձեր ջանքերն ապարդյուն կանցնեն
Իմ խեղճ թագուհի և իմ խեղճ զավակ,
Քանզի Վորվիկը չափազանց ճարտար ատենախոս է,
Իսկ Լյուդովիկոսն այնպիսի արքա,
Ում հեշտ է դյութել ստաշարժ խոսքով:
Սակայն այդ հաշվով՝ իմ Մարգարիտն էլ կարող է նրա սիրտն հրապուրել,
Զի կարեկցության արժանի կին է:
Ա՜խ, թագավորի կուրծքը կմաշվի նրա հառաչից,
Եվ կթափանցեն տաք արցունքները նրա սիրտը քար,
Եվ նրա վշտից վագրը կմեղմվի, և կտանջվեր
Ներոնը ցավից, ստի խայթ կզգար, թե լսեր նրա հոգու տրտունջը

Ու տեսներ նրա արցունքներն աղի:
Բայց, ավա՜ղ, գնաց նա աղերսելու, մինչդեռ Վորվիկը գոհ արեց նրան,
Կինն կկանգնի արքայի կողքին՝ օգնություն կուզե Հենրիի համար.
Վորվիկն հարսնացու՝ տանել Էդվարդին.
Կինն ողբալով՝ կասի, որ Հենրին գահընկեց եղավ,
Իսկ նա ժպտադեմ՝ կկարգի նրան,
Իմ խեղճ թագուհին վշտից չի կարող շշնջալ մի բառ.
Մինչդեռ Վորվիկը կպահանջի նրա իրավունքները.
Կբերի հզոր խիստ ապացույցներ
Եվ թագավորից հեռու կպահի ազնիվ թագուհուն.
Եվ կխոստանա քրոջ ձեռքն ուզել և ուրիշ բաներ.
Որ կպաշտպանեն Էդվարդի թագը:
Ա՜խ, իմ Մարգարիտ, այդպես կլինի, և դու, խեղճ հոգի,
Պետք է մոռացվես, ինչպես եղել ես լքված ու անօգ:

Բ ՊԱՀԱԿ

Ասա՛, ո՞վ ես դու, որ թագավորից ու թագուհուց ես այսպես բարբաջում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես ավելին եմ, քան երևում եմ և այնչափ նվազ, քան թե ծնվել եմ:
Մարդ եմ: Ավելի սակավ չեմ կարող,
Մարդիկ խոսում են թագավորներից, ինձ էլ է տրված այդ իրավունքը:

Բ ՊԱՀԱԿ

Այնպես ես խոսում, կարծես արքան ես:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այսպես եմ հոգով և դա բավ է ինձ:

Բ ՊԱՀԱԿ

Թե դու արքան ես, ո՞ւր է քո թագը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այն իմ սրտում է և ոչ՝ ճակատիս
Եվ չի զարդարված ադամանդներով, լալ ու սուտակով:
Տեսանելի չէ: Թագս կոչվում է գոհունակություն,
Թագավորներից քչերն հազիվ թե իրենց ճակատն այդ թագով պսակեն:

Բ ՊԱՀԱԿ

Շատ բարի, եթե դու թագավոր ես և պսակված ես այդ գոհության հետ,

Ապա քո թագից գոհ պիտի լինես, որ տանում ենք քեզ:
Հաշվենք թե, իրոք, այն թագավորն ես,
Ում Էդվարդ արքան գահընկեց արավ,
Բայց չէ՞ որ նրան երդում ենք տվել հպատակության,
Ահա՛ թե ինչու մենք քեզ բռնում ենք որպես թշնամի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Իսկ չի պատահել, որ դուք երդվել եք և հետո՝ դրժել:

Բ ՊԱՀԱԿ

Երբե՛ք, ո՛, երբեք: Այժմ էլ չենք դրժի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դուք որտե՞ղ էիք բնակվում առաջ, երբ ես Անգլիայի թագավորն էի:

Բ ՊԱՀԱԿ

Այստեղ, ուր այժմ էլ մենք բնակվում ենք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ես հազիվ էի ինը ամսական, երբ ինձ օծեցին երկրի թագավոր:
Իմ հայրն ու պապը արքա են եղել,
Դուք էլ ինձ մի օր հպատակության երդում եք տվել,
Ասեք, չե՞ք դրժել ձեր ուխտը երբեք:

Ա ՊԱՀԱԿ

Այն ժամանակ՝ ոչ, երբ իշխում էիր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ի՞նչ է, մեռած եմ. մի՞թե չեմ շնչում ես մարդու նման:
Պարզամի՛տ մարդիկ, նույնիսկ չգիտեք՝ ինչն է ուխտը ձեր,
Նայեք, ինչպես եմ այս թեթև փետուրն իմ դեմքից վանում,
Բայց քամին նորից իմ կողմն է բերում:
Մերթ իմ տաք շնչից՝ ինձ է ենթարկվում, մերթ քամուն զիջում.
Բայց նա հլու է միշտ հզոր հողմին:
Պարզամի՛տ մարդիկ. փետուրի նման դյուրադարձ եք հար,
Բայց դուք մի՛ դրժեք ձեր ուխտը երբեք.
Իմ աղերսանքը թող ձեզ չգցի ծանր մեղքի տակ:
Տարե՛ք ինձ հիմա, ուր որ կամենաք՝
Հնազանդվում է ձեզ թագավորը:
Եղեք արքաներ՝ հրամայեցեք, ձեզ կհնազանդվեմ:

Ա ՊԱՀԱԿ

Մենք հավատարիմ հպատակներն ենք էդվարդ արքայի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Մի՞թե դուք նորից Հենրուն կենթարկվեք,
Երբ էդվարդը գահընկեց լինի:

Ա ՊԱՀԱԿ

Հանո՜ւն աստծո ու թագավորի՝ մենք բռնում ենք ձեզ
Ու տանում մեզ հետ ոստիկանի մոտ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Հանո՜ւն աստծո՝ այժմ ինձ տարեք, ձեր թագավորի անունն եմ հարգում:
Ինչ կամենում է, բարեգութ աստված՝
Թող այնպես վարվի թագավորը ձեր.
Ինչ ուզում է նա՝ ես կկատարեմ հնազանդորեն:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Լոնդոն: Մի դահլիճ պալատում:

Մտնում են թագավոր էդվարդը, Գլոստերը, Կլարենսը և լեդի Գրեյը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Եղբայր Գլոստեր, Սենտ-Օլբենսի տակ
Այս ազնիվ լեդու ամուսինն ընկավ,—Սըր Ջոն Գրեյը,—
Իսկ կալվածքները հաղթողն է առել:
Արդ՝ նա խնդրում է, որպեսզի ետ տանք այն կալվածքները:
Ճշմարիտն ասած, չենք կարող մերժել,
Քանզի պատվավոր ազնվականը
7 Կյանքը կորցրեց Յորքի տան համար մղվող պայքարում:

ԳԼՈՍՏԵՐ

Ձեր մեծություն, դուք ճիշտ կվարվեք,
Երբ չմերժեք նրա պահանջը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Իհարկե, սակայն պետք է սպասել:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Ուրեմն այսպես: Տեսնում եմ, լեդին
Պետք է շնորհի որոշակի բան,
Որ թագավորը չմերժի նրան:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Լավ հոտ է առել՝ որսն է ճանաչում:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Լռի՛ր:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այրի, կնայենք ձեր խնդրանքն, անշո՛ւշտ,
Ուրիշ օր եկեք՝ վճիռն իմանալու:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Բարեշնորհ տեր, չեմ կարող սպասել.
Ձե՞ք բարեհաճի, հենց հիմա վճռել:
Ինչ էլ որոշեք՝ ես գոհ կմնամ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Այդպե՞ս է, այրի՛. այնժամ կստանաս ողջ կալվածքները,
Սակայն այն դեպքում, երբ կատարես դու նրա կամքը.
Ամո՛ւր կաց, թե ոչ՝ հարված կստանաս:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Նա վախենալու առիթներ չունի. բացի պառկելուց:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Աստված չարացնե. քանզի կօգտվի Էդվարդն այդ բանից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այրի՛, դու քանի՞ երեխա ունես:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Կարծես ուզում է այրուց ունենալ նա մի երեխա:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Քիթս կկտրեմ՝ թե չի կամենում երկուսն ընծայել:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ողորմած տեր իմ, ես երեք ունեմ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Զորքը կունենաս, թե լսես նրան:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ցավալի է, որ նրանք կորցնեն հոր կալվածքները:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Գթացե՛ք, տեր իմ, և կալվածքները ետ տվեք նրանց:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ազնիվ իշխաններ, մեզ թողեք մենակ, ես պիտի փորձեմ այս կնոջ խելքը:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Այո, կթողնենք մենք քեզ միայնակ,
Չի հաճո է քեզ երկուսով մնալ:
Ջահելությունդ շուտով կանց կենա՝
Թողնելով բախտիդ մի զույգ անթացուպ:

Մի կողմ գնալով Կլարենսի հետ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Տիկին, ինձ ասա, սիրո՞ւմ ես արդյոք քո զավակներին:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Այո, սիրում եմ, ինչպես՝ ինքս ինձ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Չե՞ս ուզում նրանց բարություն անել:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ի սեր իմ որդոց պատրաստ եմ կրել բազում զրկանքներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ի սեր քո որդոց՝ դու ետ կստանաս կալվածքներն ամբողջ:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Դրա համար էլ ձեզ մոտ եմ եկել, ձերդ մեծություն:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Քեզ կասեմ, թե ինչ ձևով կարող ես նորից ձեռք բերել այդ կալվածքները:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ձերդ մեծության ծառան կլինեմ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ի՞նչ ծառայություն ինձ կմատուցես,
Երբ ամուսնուդ կալվածքները ետ տամ:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ինչ որ կամենաք, թե կարող եմ ես:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց պիտի մերժես, երբ որ իմանաս, թե ինչ եմ ուզում:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ո՛չ, բարեգութ տեր, եթե կարող եմ, չեմ մերժի երբեք:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց դու չես կարող ասածս անել:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Այո, միայն թե դուք հրամայեք:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Նա ոտքը ամուր դրել է գետնին,
Իսկ հորդ անձրևը քարն էլ կծակի:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Նա կարմրել է կրակի նման,
Եվ պիտի հալվի այրին մոմի պես:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ինչո՞ւ չեք խոսում. ո՞րն է, ասացեք իմ անելիքը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դա դյուրին բան է՝ սիրել արքային:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ինչպե՞ս չսիրել, երբ հպատակն եմ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Երբ այդպես է, ես հոժարակամ կտամ ամուսնուդ կալվածքներն ամբողջ:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ձեզ հազար անգամ շնորհակալություն, դե՛հ, մնաք բարյավ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Գործարքը կարծես գլուխ է գալիս,

Եվ այդ դաշինքը կնքում է այրին խոր ակնածանքով:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց դու սպասի՛ր. ես կամենում եմ ճաշակել սիրո քաղցր պտուղը:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ես էլ եմ ուզում, սիրեցյալ իմ տեր:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց վախենում եմ՝ ինձ չես հասկանում:
Ի՞նչ ես մտածում, ինչպիսի՞ սեր եմ քեզնից սպասում:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Սեր՝ մինչև մահ, հլու, և՛ խոնարհ, և՛ երախտապարտ,
Սեր, որ փնտրում է ողջախոհ կինը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Երդվում եմ, նման սեր չեմ հասկացել:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ինչի մասին, որ դուք մտածել եք, երբեք չեմ խորհել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այժմ կարող ես դու գլխի ընկնել, թե ինչ եմ ուզում:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ձեր մեծություն, թե չեմ սխալվում,
Ինչի ձգտում եք, չեք տեսնի բնավ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ճշմարիտն ասած, ուզում եմ քեզ հետ միասին պառկել:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ճշմարիտն ասած, ես նախընտրում եմ պառկել մութ բանտում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ուրեմն, ամուսնուդ կալվածքներն ամբողջ ետ չե՛ս ստանա:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Այրու սուրբ պատվով ես չեմ կամենում կալվածքներն առնել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց դու մեծ վնաս կտաս քո որդոց:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Իսկ դուք ձեր վճռով վնաս կհասցնեք և՛ ինձ, և՛ նրանց:
Բայց, զորավոր տեր, ձեր ուրախ կատակն
Երբեք չի կապվում տխուր խնդրանքիս,
Աղերսո՜ւմ եմ ձեզ, ինձ պատասխանեք՝ այո՛ կամ թե՝ ոչ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այո՛, թե ասես խնդրանքիս՝ այո՛,
Ո՛չ, Եթե ասես իմ պահանջին՝ ո՛չ:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ո՛չ, տեր իմ, ո՛չ, էլ խնդիրք չունեմ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Դուր չեկավ այրուն, հոնքերն է կիտում:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Ամենատխմար սիրաբանողը ամբողջ աշխարհում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Նրա հայացքում կա պարկեշտություն,
Եվ խոսքերի մեջ՝ անզուգական խելք.
Այս կատարյալ կինն իրավունք ունի արքայից սիրո:
Այսպես թե այնպես՝ նա պետք է լինի
Տարփածի սերն իմ կամ իմ թագուհին:
Ի՞նչ կասես, երբ քեզ Էդվարդ թագավորն առնի որպես կին:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Ավելի հեշտ է այդ բանը ասել, քան թե կատարել:
Տեր իմ, հարմար եմ լոկ ձեր կատակին
Եվ արժանի չեմ ձեզ կին լինելու:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Օ՜, չքնաղ այրի. երդվում եմ թագով,
Ինչ որ ասացի՝ սիրտս է որոշել.
Ես կամենում եմ քեզ տիրել միայն:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Դա ավելին է, քան կարող եմ ես:
Ես շատ չնչին եմ թագուհու համար
Եվ նույնքան բարձր ձեզ հարճ լինելու:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այրի. մի՛ խաղա իմ խոսքերի հետ, ես ուզում էի ասել՝ թագուհի:

ԼԵԴԻ ԳՐԵՅ

Տհաճ կլինի, երբ տղաներս ձեզ ասեն հայրիկ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց ո՛չ ավելի, քան երբ դուստրերս քեզ ասեն մայրիկ:
Դու մի այրի ես, ունես զավակներ,
Աստվածածինը թող վկա լինի՝ թեև ամուրի,
Բայց դուստրեր ունեմ: Մեծ բախտ է լինել տղաների հայր,
Ինձ մի՛ առարկիր, դու պետք է լինես իմ սուրբ թագուհին:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին՝ Կլարենսին) Տեր հայրն ավարտեց խոստովանանքը:

ԿԼԱՐԵՆՍ

(Առանձին՝ Գլոստերին) Յուր խաղից դրդված՝ նա դարձավ տեր հայր:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ձե՞ք ուզում լսել, թե ինչի մասին էինք զրուցում:

ԳԼՈՍՏԵՐ

Դուր չեկավ այրուն, հոնքերն է կիտել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Գուցե ձեզ թվա խիստ օտարոտի, ես պսակվեցի լեդի Գրեյին:

ԿԼԱՐԵՆՍ

Ո՞ւմ հետ, տեր արքա:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ինձ հետ, Կլարենս:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, դա կլիներ ամենաքիչը տասնօրյա հրաշք:

ԿԼԱՐԵՆՍ

Մեկ օր ավելի, քան սովորաբար հրաշքն է տևում:

ԳԼՈՍՏԵՐ

Դա կլինի խիստ մի ուրիշ հրաշք:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Կատակե՛ք, եղբայրք, ձեզ պիտի հայտնեմ,
Որ նրա խնդրանքն հարգել եմ արդեն՝
Տալով ամուսնու կալվածքներն ամբողջ։

Մտնում է մի ազնվական։

ԱԶՆՎԱԿԱՆ

Ողորմա՛ծ տեր իմ, բռնել են արդեն թշնամի Հենրուն
Եվ որպես գերի բերել են ամրոց, դարպասների մոտ։

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բերդ տարեք նրան։ Գնա՛նք, եղբայրներ,
Տեսնենք, թե ով է թշնամուն բռնել
Եվ ինչ հրաշքով։ Այրի՛, մեզ հետ եկ։
Իշխաննե՛ր, հարգանք մատուցեք լեդուն։

Գնում են բոլորը, բացի Գլոստերից։

ԳԼՈՍՏԵՐ

Այո՛, էդվարդն է կանանց մեծարում։
Ես կուզենայի, որ նա խիստ հյուծվեր,
Որպեսզի նրա մեջքից չընձյուղվեր
Ոչ մի հուսատու, խոստումնալից ճյուղ,
Որ կպատնեշեր իմ ոսկյա օրը իմ երազներից։
Իմ և իմ հոգու տենչանքի միջև,—
Թաղված են արդեն չվայտ էդվարդի իրավունքները,—
Դեռ բարձրանում են դուքս Կլարենսը, Հենրին ու նրա ջահել զավակը,
Եվ բոլոր անհայտ այն ժառանգները, որ պիտի ելնեն նրանց մարմնից։
Նրանք ինձնից շուտ կզրավեն տեղը.
Քան թե կարող եմ ես նստել այնտեղ,—
Այս բանն իմ մտքին պաղ ջուր է լցնում։
Ուրեմն, պետք է երազել միայն իշխանության,
Նման այն մարդու, որ հրվանդանի եզերքին կանգնած,
Նայում է հեռու ճշմարվող ափին,— որտեղ կուզենար
Իր ոտքը դնել,— և ցանկանում է, որ իր քայլերը
Համասար լինեն իր հայացքի հետ.
Նա ծովն է սաստում, որ բաժանում է իրեն այնտեղից
Եվ ասում. «Ջուրը կքամեմ ծովից,
Որպեսզի ճամփաս անցնի ցամաքով»։
Այդպես ձգտում եմ հեռավոր թագին,

Այդպես փշրում եմ իմ ճանապարհի ամեն մի արգելք,
Եվ այդպես ասում. «Ես կխորտակեմ ամեն խոչընդոտ»՝
Շոյելով հոգիս անհնար հույսով:
Իմ հայացքն ունի շանթից ավելի փութաշարժ թռիչք,
Եվ սիրտն՝ իմ շատ խիստ ինքնաբավություն.
Ո՛չ իմ ձեռքերը, ո՛չ իմ ուժերը չեն կարող նրանց հավասար լինել:
Բայց ասենք չկա թագավորություն Ռիչարդի համար.
Ուրիշ ի՞նչ բերկրանք պետք է ընծայի աշխարհը նրան:
Կարո՞ղ եմ արդյոք կնոջ գրկի մեջ շինել երկինքն իմ,
Եվ իմ մարմինը պատել զունազեղ զարդարանքներով
Եվ չքնաղ կանանց կախարդել խոսքով ու արտաքինով:
Օ՜, խեղճ երազանք, որ ձեռք կբերվի
Ավելի դժվար, քան քսան ոսկյա շողշողուն թագեր:
Սերն ինձ ուրացավ մորս արգանդում:
Որ ես անհաղորդ մնամ քնքշանքից նրա օրենքին,
Նա աղավաղեց հեղհեղուկ բնույթս ասես կաշառքով,
Որ չոր թփի պես ձեռքս կծկվեր,
Որ մեջքիս ելներ չարաստեղծ մի լեռ,
Որ հոգիս ծաղրեր այս խեղությանը,
Որ զույգ ոտքերս ձևեր անկանոն,
Որ ես լինեի աննմանամաս, ինչպես քաոսը կամ ինչպես արջի
Ձագը նորածին, որը չի կրում իր մոր պատկերը:
Մի՞թե կարող են ինձ սիրել մարդիկ.
Օ՜, մեղք է, անշուշտ, այդպես մտածել,
Եթե այս աշխարհն ինձ չի պարգևում ոչ մի խնդություն,
Մնում է միայն՝ իշխե՜լ, նվաճե՜լ ու հրամայե՜լ
Այն մարդկանց, ովքեր սիրուն են ինձնից:
Թող թագի երազն ինձ երկինք դառնա:
Ինձ պիտի թվա աշխարհը դժոխք,
Քանի դեռ կյանքում իմ այս այլանդակ մարմնի վրա
Չի պսակվի գլուխս շողշողուն թագով:
Բայց դեռ չգիտեմ, ինչպես թագն առնել.
Իմ ու իմ թագի միջև կյանքեր կան,
Եվ ես նման եմ այն դժբախտ մարդուն, որ մոլորվել է
Փշոտ անտառում և սուր փշերը ճամփից պոկելով
Ինքն է փշերից խիստ պատառոտվում, փնտրում է ճամփան
Ու շեղվում դարձյալ, չգիտե, ինչպես դուրս գա անտառից,
Բայց համառորեն ձգտում է դրան:

Այսպես տանջվում եմ, որ թագը խլեմ,
Բայց ես կազատվեմ այս տառապանքից՝
Հարթելով ճամփաս արյունոտ կացնով:
Կարող եմ ժպտալ և գոչել. «Գոհ եմ», երբ սիրտս է մռայլ
Եվ նույն ժպիտով մարդկանց սպանել ու կեղծ արցունքով ցողել այտերս,
Դեմքիս տալ ուզած արտահայտություն:
Ես ավելի շատ նավաց կխեղդեմ, քան թե կարող է ծովանույշն անել
Եվ ավելի շուտ շարքից դուրս հանել
Ինձ նայող մարդկանց, քան բասիլիկը,
Ավելի հմուտ հարտասան լինել, քան թե Նեստորը,
Ավելի խաբել՝ քան Վոդիսևսը:
187 Սինոնի նման կարող եմ առնել մի այլ Տրոյա
Եվ գունափոխվել քամելիոնի պես,
189 Եվ ձևափոխվել Պրոտեոսի պես,
Ինձ Մաքիավելու աշակերտ կոչել,
Մի՞թե չեմ կարող մի օր տիրանալ
Ինձանից հեռու թագին ոսկեփայլ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Ֆրանսիա: Մի դահլիճ պալատում:

Շեփորներ: Մտնում են Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկը, իշխանուհի Բոնան, Ֆրանսիայի ծովակալ Բուրբոնը: Հետո մտնում են թագուհի Մարգարիտը, իր որդու հետ և կոմս Օքսֆորդը: թագավորը նստում է գահին:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Անգլիո՛ թագուհի, չքնա՛ղ Մարգարիտ,
Նստիր մեր կողքին, ծագումն ու դիրքդ քեզ չեն պատշաճում,
Որ կանգնես ոտքի, երբ Լյուդովիկոս արքան է նստած:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, Ֆրանսիայի հզոր թագավոր, արդ Մարգարիտը
Պետք է մոռանա ծագումն ու դիրքը
Եվ հնազանդվի, երբ արքաներն են հրաման տալիս:
Ավա՜ղ, անց կացան օրերս ոսկյա, երբ մեծ Ալբիոնի թագուհին էի,
Երբ ոտնահարեց դժբախտությունը իրավունքներս

Եվ ամոթանքով ինձ գամեց գետնին,
Որտեղ ես պետք է՝ դիրքիս համեմատ, իմ խաչը կրեմ
Եվ լուռ հաշտվեմ խոնարհ բախտիս հետ:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Ինչի՞ց է, ասա, չքնաղ թագուհի,
Որ այդպես խոր է սիրտդ ընկճվել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Պատճառն արցունքն է աչքերս լցրել
Ու կապանք դրել իմ լեզվի վրա
Եվ վիշտն է խեղդում սիրտս հուսահատ:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Ի՞նչ էլ որ լինի՝ մնա ինքդ քեզ միշտ հավատարիմ:
Ե՛կ, նստիր ինձ մոտ, վիզդ մի ծռիր չար բախտի առաջ:
Բայց թող քաջասիրտ քո ոգին հաղթի ամեն մի փորձանք:
Չքնաղ Մարգարիտ, պատմիր ինձ շիտակ քո սրտի վիշտը
Եվ դու կփոխվես, երբ Ֆրանսիան քեզ նեցուկ դառնա:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այս բարեշնորհ բառերը դարձյալ
Կյանք են պարգևում նվաղյալ հոգուս
Եվ թույլ են տալիս վշտակամ լեզվիս նորից խոսելու:
Թող հայտնի լինի քեզ՝ ազնիվ արքա,
Որ Հենրին, սիրուս միակ սուրբ տերը.
Դարձել է, ավա՜ղ, տարագիր մի մարդ
Եվ Շոտլանդիայում ապրում է մենակ:
Մինչդեռ Յորքի դուքս փառատենչ Էդվարդն
Հափշտակել է տիտղոսն արքունի ու գահը Անգլիո.
Ահա՛ թե ինչու դժբախտ թագուհիս,
Եվ արքայազնը՝ ժառանգը Հենրու, այսինքն, որդիս.
Եկանք խնդրելու քո արդարաշատ պաշտպանությունը
Ու թե մեզ լքես. կորած է ընդմիշտ մեր ամբողջ հույսը,
Շոտլանդիան կօգներ, սակայն ուժ չունի,
Գայթել է ճամփից մեր երկիրն ամբողջ,
Ա՜խ, կողոպտել են մեր գանձարանը, փախել է զորքը:
Ինչպես տեսնում ես՝ մի ծանր վիճակ պարուրել է մեզ:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Օ՜, Երևելի՜, չքնա՛ղ թագուհիդ,
Սեղմիր այս հողմը քո համբերությամբ.
Կխորհենք, ինչպես առաջը առնել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Որքան սպասենք, այնքան թշնամիք կհզորանան:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Որքան սպասեմ, այնքան ավելի շատ պիտի օգնեմ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Անհամբերությո՛ւն, դու վշտերի քույր:
Նայի՛ր, գալիս է պատճառն իմ վշտի:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Այդ ո՞վ է այդպես համարձակ մտնում մեր ներկայությամբ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

44 Մեր կոմս Վորվիկն է, ամենազորեղ ընկերն Էդվարդի:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Բարով ես եկել, քաջասիրտ Վորվիկ,
Ի՞նչ քամի է քեզ բերել Ֆրանսիա:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Բարձրանում է արդ փոթորիկն երկրորդ,
Զի տերն է գալիս մակընթացության ու քամիների:

ՎՈՐՎԻԿ

Ալբիոնի արքա, Էդվարդը ազնիվ,
Գերազույն տերն իմ, բարեկամդ ուխտյալ,
Նախ՝ անկեղծ սիրով ողջույն է հղել
Քո արքայական վեհափայլ անձին,
Ապա փնտրում է բարեկամության մի դաշինք քեզ հետ
Եվ նա ուզում է հարսնյաց կապերով
Խիստ ամրապնդել այս մեծ դաշինքը,
Թե շնորհ անես քո առաքինի, չքնաղ քրոջը
Էդվարդին որպես օրինավոր կին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Առանձին) Թե սա գլուխ գա՝ կորավ հույսն Հենրու:

ՎՈՐՎԻԿ

(Բոնային) Գեղեցի՜կ տիկին, իմ թագավորի հանձնարարությամբ,—
Երբ թույլ կտաք ողորմածորեն,—
Ես խոնարհաբար պետք է համբուրեմ ձեր ձեռքը բարի
Եվ լեզվով պատմել իմ տիրոջ սրտի տառապանքները,
Ուր ձեր հոչակը մտնելով նրա արթուն ականջից՝
Տեղավորվել է ձեր առաքինի, չքնաղ պատկերը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Արքա Լյուդովիկ ու լեդի Բոնա,
Մինչև պատասխան կտաք Վորվիկին, լսեք թագուհուս:
Նրա խնդրանքը Էդվարդի մաքուր, անշահախնդիր սիրուց չի ծագել,
Այլ խաբեությամբ, կարիքից դրդված.
Ինչպե՞ս կարող են բռնակալները
Ապահովապես իրենց տանն իշխել,
Երբ ազգակցություն չունեն այլ երկրում:
Որ բռնակալ է՝ բավ է մի փաստ էլ.
Չէ՞ որ դեռևս ապրում է Հենրին, իսկ եթե մեռնի՝
Արքայազն ահա՝ թագավոր Հենրու որդին՝ Էդվարդը:
Նայի՛ր, Լյուդովիկ, այս ամուսնությամբ և այս դաշինքով
Չբերես գլխիդ խայտառակություն ու դժբախտություն:
Պատահում է, որ հափշտակիչներն ատենոք իշխեն,
Բայց երկինքն արդար և ժամանակը սխալն են շտկում:

ՎՈՐՎԻԿ

Չարախո՛ս լեզու:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Ինչո՞ւ չես կոչում մորս թագուհի:

ՎՈՐՎԻԿ

Զի հափշտակիչ քո հայրն է՝ Հենրին:
Եվ որքան մայրդ է սուտ թագուհի, այնքան դու՝ իշխան:

ՕՔՍՖՈՐԴ

1 Վորվիկ, ժխտում ես մեծն Ջոն Գոնտին,
Ով Իսպանիայի մեծ մասը գրավեց,

Իսկ Գոնտից հետո՝ Հենրի Չորրորդին,
Ով իմաստության հայելին եղավ իմաստուններին,
Իսկ հետո՝ Հենրի Հինգերորդ այրուն,
Որն իր զորությամբ Ֆրանսիան նվաճեց,
Այս մեծ այրերից սերվում է ուղիղ մեր արքա Հենրին:

ՎՈՐՎԻԿ

Ինչո՞ւ քո սահուն ճառում չասացիր,
Թե ինչպես Հենրի Վեցերորդն իրավ, կորցրեց ամեն բան.
Ինչ նվաճել էր Հենրի Հինգերորդ փառապանծ արքան,
Չէ՞ որ թշնամիք թաքուն կժպտան խոսքերիդ վրա:
Դու տոհմածառի մասին ես խոսում,
Բայց վաթսուներկու տարին շատ կարճ է,
Որպեսզի ճշտես թագավորական իրավունքները:

ՕՔՍՖՈՐԴ

Ի՞նչ: Դու խոսում ես թագավորիդ դեմ,
Ում ծառայել ես քառասուն տարի:
Չե՞ս շիկնում արդյոք դավաճանելիս:

ՎՈՐՎԻԿ

Իսկ դու, Օքսֆորդ, որ պաշտպանում ես ճշմարտությունը.
Ինչո՞ւ ես այժմ կեղծիքը կապում այդ տոհմածառին:
Ամո՛թ քեզ: Լքի՛ր դու հիմա Հենրուն և քաջ Էդվարդին ճանաչիր արքա:

ՕՔՍՖՈՐԴ

Ես ինչպես կոչեմ նրան իմ արքա, ով մահապատժի
վճիռ արձակեց իմ ավագ եղբայր՝ լորդ Օբրու հանդեպ,
Սա կարծես քի՞չ էր, հորս էլ կործանեց,
Երբ տարիքն առած հազիվ էր քայլում,
Երբ բնությունը տարել էր նրան մահվան դռան մոտ:
Ո՛չ, Վորվիկ, քանի ուժ կա իմ բազկին՝
Պետք է պաշտպանեմ Լանկաստերներին:

ՎՈՐՎԻԿ

Իսկ ես էլ Յորքին:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Չքնաղ Մարգարիտ, արքայազն Էդվարդ և կոմս Օքսֆորդ,
Մեզ շնորհ արեք և մի կողմ անցեք,
Ուզում եմ խոսել կոմս Վորվիկի հետ:

Նրանք մեկդի են կանգնում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Առանձին) Երկինք, մի՛ թողնի, որ նա չողոքի արքային բարի:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Վորվիկ, ինձ ասա քո խղճի մտոք,
Էդվա՞րդն է արդյոք ձեր ստույգ արքան.
Չէի կամենա միանալ նրան,
Երբ արքան չէ նա օրինավոր:

ՎՈՐՎԻԿ

Առհավատչյան են փառքն ու անունս:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Սիրելի՞ է նա ձեր ժողովրդին:

ՎՈՐՎԻԿ

Անչափ սիրելի, քանզի դժբախտ էր թագավոր Հենրին:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Թո՛ղ մեկդի ամեն կեղծավորություն,
Ճշմարիտն ասա նրա սիրո չափն իմ քրոջ հանդեպ:

ՎՈՐՎԻԿ

Այնպես է սիրում, ինչ պաշտպանում է, նման արքային:
Հաճախ եմ լսել՝ ինչպես էր երդվում,
Որ իր այդ սերը ծաղիկ է հավերժ,
Նրա արմատներն առաքինության հողով են սնվում,
Իսկ տերևներն ու պտուղները՝ արևի լույսով:
127 Այդ սերը երբեք չգիտի խանդել, բայց քամահրանքը
Չի կարող տանել, թե լեդի Բոնան վիշտը չամոքի:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Այժմ քույր, ասա՛ քո վճիռն հաստատ:

ԲՈՆԱ

Ես համաձայն եմ ձեր վճռի հետ:

Վորվիկին:

Բայց խոստանում եմ, մինչև այս օրը հաճախ եմ լսել,

Թե ինչ արժանիք ունի ձեր արքան,
Իմ լսելիքն է միտքս առաջնորդել դեպի տենչանքը:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Վորվիկ, քրոջս կտամ Էդվարդին:
Ե՛կ, անմիջապես մի պայմանագիր ստվերագծենք
Տուայրի մասին, որով ձեր արքան
Բոնայի համար օժիտ պետք է հակակշռի:
Մո՛տ եկ, Մարգարիտ ու դարձիր վկա,
Որ Բոնան պիտի դառնա Անգլիայի արքայի կինը:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Էդվարդն Անգլիայի թագավորը չէ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Խաբեբա՛ Վորվիկ, այս նենգ դաշինքով
Ի չիք դարձրիր հույսն իմ օգնության.
Քո գալուց առաջ Լյուդովիկն Հենրու լավ բարեկամն էր:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Այժմ էլ երկուսիդ բարեկամն եմ ես:
Բայց քանի որ ձեր իրավունքները գահի նկատմամբ
Անզոր են ու թույլ, որ երևում է Էդվարդի պատշաճ հաջողությունից.
Ուստի կլինի ողջամտություն, որ ես ազատվեմ իմ օգնությունից,
Թեև կստանաք ինձնից ամեն բան,
Ինչ պահանջում է ձեր ազնիվ դիրքը,
Եվ ինչ կարող եմ զիջել թագուհուդ:

ՎՈՐՎԻԿ

Արդ՝ Շոտլանդիայում ապրում է Հենրին հանգիստ ու խաղաղ,
Որտեղ նա չունի և ոչ մի տիրույթ, ոչինչ էլ չունի ի կորուստ մատնյալ:
Գալով ձեզ՝ մեր խեղճ նախկին թագուհի,
Ապա ձեր հայրը թող ձեզ պաշտպանի.
Չի լավ է նրան անհանգստացնել, քան Ֆրանսիային:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Լռի՛ր, անպատկա՛ռ, անամո՛թ Վորվիկ,
Դու՝ արքաներին գահ բարձրացնող և գահից նետող,
Ես չեմ հեռանա մինչև իմ խոսքով և արցունքներով՝
Իմ ճշմարտության վկաներն ազնիվ, չմերկացնեն քո նենգ մտքերը

Եվ քո գեշ տիրոջ խաբուսիկ սերը,
Քանզի երկուսդ էլ նույն արյունարբու թռչնի թևերն եք:

Բեմի խորքից փողի ձայն:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Վորվիկ, ինձ կամ քեզ բերել են նամակ:

Մտնում է մի սուրհանդակ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մեծատոհմ դեսպան, այս նամակները
Ձեզ է առաքել մարքիզ Մոնտեգյուն,
Սա ձեզ, վեհափա՛ռ, մեր թագավորից:
Սրանք էլ, տիկին, ձեզ են ուղարկված:
Սակայն չգիտեմ՝ ով է առաքել:

Նրանք կարդում են իրենց նամակները:

ՕՔՍՖՈՐԴ

Ինձ հաճելի է, որ մեր թագուհին, չքնաղ տիրուհին
Ժպտում է նորից, մինչդեռ Վորվիկը հոնքերն է կիտում:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Տե՛ս, թե ինչպես է Լյուդովիկ արքան ոտքերը զարնում,
Կարծես չարացած: Ամեն ինչ դեպի լավն է ընթանում:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Ի՞նչ լուրեր, Վորվիկ. և դուք, թագուհի:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իմն՝ անակնկալ բերկրանքով լցրեց վշտացած սիրտս:

ՎՈՐՎԻԿ

Դժգոհ եմ սաստիկ. ու սիրտս է տխուր:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Ի՞նչ: Ձեր թագավորն ամուսնացել է լեդի Գրեյի հե՞տ.
Եվ արդ, որպեսզի զգուշորեն մեղմեն քո և քո տիրոջ խարդախությունը.
Ուղարկում են ինձ այսպիսի՞ նամակ,
Հուսալով, որ ես պիտի հանդուրժե՞մ:

Ինձ հետ այսպիսի՞ դաշինք էր փնտրում
Եվ միտք էր դրել մեզ այդպես ծաղրե՞լ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Չէ՞ որ հախորոք ձեզ զգուշացրի. ահա՛ ապացույցն
Էդվարդի սիրո և կոմս Վորվիկի ազնվության:

ՎՈՐՎԻԿ

Արքա Լյուդովիկ, երդվում եմ այստեղ՝ երկնքի առաջ
Եվ իմ երկնային փրկության հույսով,
Որ ես մաքուր եմ Էդվարդի մեղքից:
Նա իմ արքան չէ, զի անարգեց ինձ.
Բայց ավելի շատ իրեն անպատվեց, երբ կարող է իր ամոթն զգալ:
Մի՞թե մոռացա, որ ի սեր Յորքի
Հայրազատ հայրս ընկավ վաղաժամ,
189 Մի՞թե ներեցի վիրավորանքը, որ նա հասցրեց եղբորս աղջկան.
Մի՞թե ես նրան արքայոց թագով գահն չբարձրացրի,
Եվ մի՞թե Հենրուն ես չզրկեցի իր իրավունքից:
Եվ ահա, տեր իմ, բոլորի դիմաց վարձատրվում եմ խայտառակությամբ:
Բայց ամո՛թ նրան. ես պատիվ ունեմ:
Որպեսզի կորցրած պատիվս գտնեմ,
Որ ես կորցրի նրա պատճառով,
Հրաժարվում եմ նրանից ահա և վերադառնում բարի Հենրու մոտ:
Ազնիվ թագուհի, մոռանանք նախկին թշնամությունը.
Ես այսուհետև ձեր հավատարիմ ծառան կլինեմ.
Եվ կհատուցեմ լեդի Բոնայի վիրավորանքին
Եվ Հենրուն նորից կբարձրացնեմ առաջվա դիրքին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Վորվի՛կ, այս բառերն ատելությունս փոխում են սիրո.
Ես մոռանում եմ քո հին մեղքերը
Եվ ուրախանում, որ դու դառնում ես Հենրուն բարեկամ:

ՎՈՐՎԻԿ

Այսպիսի անկեղծ լավ բարեկամով, երբ հաճենա
Լյուդովիկ արքան, ընտիր զորքերի մի ջոկատ մեզ տալ,
Կիջնեմ մեր ափը նրանց հետ մեկտեղ
Ու բռնակալին կվանեմ ուժով իր տիրած գահից:
Ջահել հարսնացուն նրան չի օգնի,

Իսկ Կլարենսը,— ինչպես իմացա իր նամակներից,—
Գուցե իր կայսր կարի եղբորից,
Քանզի էդվարդը ավելի բարձր է դասում տարփանքը,
Քան հայրենիքի ուժն ու պատիվը:

ԲՈՆԱ

Սիրեցյա՛լ եղբայր, ուրիշ ինչ ձևով կարող ես լուծել
Բոնայի վրեժը՝ թե ոչ թագուհուն նեցուկ դառնալով:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Փառապա՛նծ արքա, ինչպես կարող է խեղճ Հենրին ապրել,
Թե դու չփրկես նրան այս ավեր հուսահատումից:

ԲՈՆԱ

Նույնն է թագուհու և իմ կռիվը:

ՎԱՐՎԻԿ

Նույնը և իմը, գեղեցիկ Բոնա, ես միանում եմ ձեզ. անավասիկ:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Իսկ ես՝ թագուհուն, քեզ ու Բոնային:
Ես որոշել եմ հաստատ ձեզ օգնել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Թույլ ավեք ասել բոլորի համար շնորհակալություն:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Անգլիո սուրհանդակ, շտապ ետ դարձիր,
Ասա կարծեցյալ քո թագավորին, էդվարդին խարդախ,
Որ Տրանսիայի Լյուդովիկ արքան ծպտյալ մարդիկ է ուղարկում նրան,
Որ զվարճանան իր նոր հարսի հետ:
Դու տեսար, թե ինչ այստեղ կատարվեց,
Դե՛ա, վախեցրու քո թագավորին:

ԲՈՆԱ

Ասա, դու նրան, որ ես հույս ունեմ իրեն տեսնելու այրու շոր հագած.
Եվ սիրտի կրեմ ուռենու պսակ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ասա դու նրան, որ սգի զգեստն
Արդեն հանել եմ ու զենք կա ձեռքիս:

ՎՈՐՎԻԿ

Ասա՛, որ նա ինձ վիրավորել է.
Շուտով ես նրան գահընկեց կանեմ:
Ահա՛ քո վարձը: Գնա՛:

Գնում է սուրհանդակը:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Բայց Վորվիկ.
Եվ դու՝ Մոնֆորդ, հինգ հազար մարդով
Պետք է ծովն անցնեք, կռվեք այդ խարդախ նենգ էդվարդի հետ:
Կարիքի դեպքում բարի թագուհին և իշխանն ազնիվ
Թարմ ուժ կբերեն: Գնալուց առաջ՝ վանիր կասկածս.
Ի՞նչ գրավական դու կտաս հաստատ հավատարմության:

ՎՈՐՎԻԿ

Ահա իմ անխախտ հավատարմության գրավականը.
Եթե կամենան ջահել իշխանը ու մեր թագուհին,
Ապա էդվարդին ավագ աղջկաս՝ ուրախությանս,
Ես անմիջապես կմիացնեմ սուրբ ամուսնությամբ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Համաձայն եմ ես: Շնորհակալություն այդ մտքի համար:
Որդի իմ էդվա՛րդ, նա գեղեցիկ է ու առաքինի.
Պետք չէ հապաղել, մեկնի՛ր քո ձեռքը մեր դուքս Վորվիկին
Եվ քո ձեռքի հետ անսասան երդվիր,
Որ դուքս Վորվիկի աղջիկը միայն կինդ կլինի:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Այո՛, ուզում եմ նրան կին առնել,
Քանզի այդ կույսը արժան է դրան,
Ահա՛ իմ ձեռքը ի նշան ուխտիս:

Ձեռքը մեկնում է Վորվիկին:

ԹԱԳԱՎՈՐ ԼՅՈՒԴՈՎԻԿ

Պետք չէ հապաղել, գործ է հարկավոր:
Իսկ դու, դուքս Բուրբոն, մեր մեծ ծովակալ,
Այդ զորքը պետք է մեր արքայական տորմիղով տանես:
Ես կուզենայի, որ էդվարդն ընկներ չարաղետ կռվում,
Չի Ֆրանսիայի տիրուհուն ծաղրեց այդ ամուսնությամբ:

Բոլորը գնում են՝ բացի Վարդիկից:

ՎԱՐԴԻԿ

Ես եկա որպես Էդվարդի դեսպան,
Բայց ետ եմ դառնում երդվյալ թշնամի.
Նա ինձ առաքեց, որ գլուխ բերեմ ամուսնությունը.
Բայց զարհուրելի կռիվը կլինի նրան պատասխան,
Մի՞թե նա չուներ մի այլ հպատակ,
Որ ինձ դարձրեց ծաղրի առարկա:
Բայց ով կարող է ինձ նման հեգնել նրա վիշտը խոր:
Ես բարձրացրի Էդվարդին գահին
Եվ ես էլ նրան գահընկեց կանեմ.
Ոչ այն պատճառով, որ խղճում եմ ես մեր Հենրուն թշվառ,
Էդվարդն ինձ ծաղրեց՝ ես պետք է լուծեմ իմ վրեժն արդար:

Գնում է:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Մի դահլիճ պալատում:

Մտնում են Գլոստեր, Կլարենս, Սոմերսետ, Մոնտեգյու և ուրիշներ:

ԳԼՈՍՏԵՐ

Այժմ ինձ ասա, եղբայր Կլարենս,
Ինչպես ես նայում էդվարդի այս նոր ամուսնությանը.
Մի՞թե չի արել պատշաճ ընտրություն:

ԿԼԱՐԵՆՍ

Ավա՜ղ, Ֆրանսիան հեռու է մեզնից,
Ինչպե՞ս կարող էր էդվարդն սպասել Վորվիկի դարձին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Տյարք իմ, վերջ ավեք: Գալիս է արքան...

ԳԼՈՍՏԵՐ

Հետն էլ՝ շնորհքով ընտրած հարսնացուն:

ԿԼԱՐԵՆՍ

Ուզում եմ նրան ամեն ինչ ասել:

Շեփորներ: Մտնում են թագավոր էդվարդը շքախմբով, լեդի Գրեյը՝ թագուհու զգեստով, Փեմբրոկը, Ստեֆորդը, Հեստինգսը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Եղբայր Կլարենս, քեզ դո՞ւր չի գալիս մեր ընտրությունը:
Դու մտախոհ ես և կարծես՝ դժգոհ:

ԿԼԱՐԵՆՍ

Բայց ոչ ավելի, քան Ֆրանսիայի Լյուդովիկ արքան ու կոմս Վորվիկը,
Որոնք այնքան թույլ համարձակություն ու վճիռ ունեն,
Որ չեն զայրանում վիրավորանքից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Թող առանց պատճառ նրանք զայրանան, ովքե՞ր են նրանք.
Մեկը՝ Վորվիկն է, մյուսը Ֆրանսիայի Լյուդովիկ արքան,
Իսկ ես Էդվարդն եմ. քո և Վորվիկի թագավորն ստույգ:
Կարող եմ վարվել, ինչպես կամենամ:

ԳԼՈՍՏԵՐ

Ձեր կամքն է, քանզի մեր թագավորն եք,
Սակայն շուտափույթ ամուսնությունը հաջող չի լինում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դու, եղբա՛յր Ռիչարդ, նույնպե՞ս դժգոհ ես:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, ո՛չ:
Աստված չարասցե, թե կամենայի նրանց բաժանել,
Որոնց իրարու աստված է կապել
Եվ ցավալի է անջատել նրանց,
Որ այդպես հաջող մի զույգ են կազմել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մի կողմ թողեք ձեր արհամարհանքն ու սրտնեղությունը,
Ասեք, թե ինչու լեդի Գրեյը
Չպետք է դառնար Անգլիո թագուհին:
Դուք էլ, Սոմերսետ, և դուք, Մոնտեգյու, ձեր կարծիքն ասեք:

ԿԼԱՐԵՆՍ

Ահա՛ կարծիքս. Լյուդովիկ արքան
Թշնամանում է ձեզ հետ, քանզի դուք
Ծաղրեցիք նրան՝ հարսնախոսելով Բոնայի համար:

ԳԼՈՍՏԵՐ

Ես օգտվելով ազատ խոսելու ձեր շնորհումից,
Ասում եմ, տեր իմ, Վորվիկն անարգվեց ձեր ամուսնությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Կմեղմանա՞ն Վորվիկն ու արքան,
Եթե ես գտնեմ մի ինչ-որ հնարք:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Ֆրանսիայի հետ նման մի դաշինք
Ավելի զորեղ պիտի դարձներ մեր տերությունը՝
Ընդդեմ չարագույժ օտար հողմերի, քան թե ընտանի ամուսնությունը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Մի՞թե չգիտե ազնիվ Մոնտեգյուն, որ Բրիտանիան
Անվտանգ կապրի, եթե ներքնապես միաբան լինի:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Այո՛, կլիներ նա խիստ ապահով,
Երբ Ֆրանսիան կանգներ մեզ նեցուկ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ավելի լավ է օգտվել նրա պիտանությունից,
Քան թե վստահել նրան, Մոնտեգյու:
Աստված մեզ նեցուկ և մեկ էլ՝ ծովը,
Որ նա մեզ տվեց որպես անմատույց, անառիկ պատնեշ,
Հենց դրանով է երկիրն ապահով:

ԿԼԱՐԵՆՍ

48 Այդ խոսքի համար լորդ Հեստինգսն արժեր,
Որ Հենգերֆորդի աղջկան առներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ձեզ ի՞նչ: Ես այսպես էի մտադիր,
Այս անգամ կամքս կդառնա օրենք:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց ես կարծում եմ, ձերդ մեծություն, դուք լավ չեք վարվում,
Երբ լորդ Սքելսի դստեր տալիս եք ձեր աներ որդուն,
Նա շատ ավելի հարմար կլիներ ինձ կամ Կլարենսին:
Դուք եղբայրներիդ զոհ եք մատուցում սիրեցյալ կնոջդ:

ԿԼԱՐԵՆՍ

Ապա թե ոչ դուք չէիք կամենա
Բոնվիլի դստերը ձեր կնոջ որդուն տալ

Եվ եղբայրների թողնել ձեռնունայն,
Որ այլուր փնտրեն հաջողությունը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ավա՜ղ, խեղճ Կլարենս, դու դժգոհում ես
Ա՞յդ կնոջ համար: Քեզ կի՜ն կնարեմ:

ԿԼԱՐԵՆՍ

Նոր կին ընտրելով՝ ցույց տվեցիք ձեր դատավճիռը:
Թույլ տվեք ինքս ինձ լինել միջնորդ,
Ուստի ես պետք է հեռանամ ձեզնից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Քո կամքն է, սակայն Էդվարդն է արքան,
Նա ենթակա չէ իր եղբոր կամքին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ազնիվ իշխաններ, դուք ճշմարտորեն խոստովանեցեք,
Մինչ կհաճենար արքան ինձ դարձնել իրեն թագուհի,
Մի՞թե չեմ եղել ազնվատոհմ աղջիկ:
Ցածր ծագումով շատ ու շատ կանայք
Հաճախ են հասել այսպիսի բախտի:
Բայց քանի որ այս տիտղոսն ինձ ու իմ հարազատներին պատիվ է բերում,
Իսկ ձեզ բոլորիդ՝ խիստ տհաճություն,
Որոնց կուզեի հաճույք պատճառել,
Ապա վտանգի ու աղետների նախազգացումով բերկրանքս է մարում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Սեր իմ, խուսափիր այս իշխանների դժգոհությունից:
Քեզ ոչ մի աղետ և ոչ մի վտանգ չի կարող բռնել,
Քանի դեռ ե՛ս եմ քո հովանարիմ, ճիշտ բարեկամը և նրանց արքան,
Ում առաջ նրանք պետք է խոնարհվեն:
Ո՜չ, նրանք պետք է և՛ քեզ ենթարկվեն, և՛ անկեղծ սիրեն,
Եթե չեն ուզում ատելությանս հրով այրվել:
Ես քո նեցուկն եմ, թե փորձեն ծեսք տալ՝
Կզգան զայրույթիս վրեժն ահավոր:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին) Ես ունկնդրում եմ և քիչ եմ խոսում,
Բայց ավելի շատ հարկ է խորհելու:

Մտնում է մի սուրհանդակ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Սուրհանդա՛կ, ի՞նչ լուր կամ ի՞նչ նամակներ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Օ՜, նամակների փոխարեն, տեր իմ, բառեր եմ բերել,
Այն էլ այնպիսիք, որ չեմ համարձակվում ասել հիշատակել
Առանց իմ տիրոջ կարգադրության:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մենք թույլ ենք տալիս, ասա՛, բայց՝ հակիրճ.
Փորձի՛ր, որ հիշես բառերը մեկ-մեկ:
Ի՞նչ պատասխանեց Լյուդովիկ արքան մեր նամակներին:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մեկնելուս պահին այս բառերն ասաց.
«Հայտնիր կարծեցյալ քո թագավորին, Էդվարդին խարդախ,
Որ Ֆրանսիայի Լյուդովիկ արքան ծաղրածու մարդիկ է ուղարկում նրան,
Որ զվարճանան իր նոր հարսի հետ»:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մի՞թե Լյուդովիկն այսքան խիզախ է, գուցե դրել է ինձ Հենրու տե՞ղը:
Ի՞նչ ասաց Բոնան, երբ որ իմացավ ամուսնացել եմ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Լեդին շշնջաց մեղմ քամահրանքով.
«Ասա դու նրան, որ ես հույս ունեմ իրեն տեսնելու այրու շոր հագած,
Եվ պիտի կրեմ ուռենու պսակ»:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Չեմ պախարակում, քանզի չէր կարող նա քիչ բարբառել:
Վիրավորվել է: Սակայն ի՞նչ ասաց Հենրու թագուհին:
Լսել եմ, որ նա եղել է այնտեղ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

«Ասա դու նրան, որ սգի զգեստն
Արդեն հանել եմ և զենք կա ձեռքիս»:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Պարզ է, ուզում է ամազոնուհու դերը կատարել:
Վորվիկն ի՞նչ ասաց այս վիրավորիչ խոսքերից հետո:

ՍՈՄԵՐՍԵՏ

Նա բոլորից շատ ձեր դեմ բորբոքվեց, ձերդ մեծություն,
Եվ ինձ բաց թողեց այս բառերի հետ.
«Ասա՛, որ նա ինձ վիրավորել է,
Շուտով ես նրան զանրնկեց կանեմ»:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ի՞նչ, համարձակվեց ղավաճանն այդպես հանդուգն խոսել:
Շատ լավ, կզինվեմ, ինձ զգուշացրեց:
Թող նրանք կռվով հատուցեն իրենց լկտիությանը:
Բայց ասա, Կլարենսն ընկերացե՞լ է Մարգարիտի հետ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Գերագույն իմ տեր,
Նրանք կապված են այնպիսի ամուր բարեկամությամբ,
Որ իշխան Էդվարդն ուզում է առնել Վորվիկի դստերն:

ԿԼԱՐԵՆՍ

Թերևս ավագին, իսկ ես՝ կրտսերին:
Արդ՝ մնաս բարով, եղբայր թագավոր. ամո՛ւր կաց գահիդ,
Ես պիտի առնեմ կրտսեր աղջկան:
Թեև ես չունեմ թագավորություն,
Բայց պսակի մեջ ցած չեմ քեզանից:
Ով սիրում է ինձ ու կոմս Վորվիկին, թող ինձ հետևի:

Գնում է Կլարենսը, նրան հետևում է Սոմերսետը:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին) Ես չեմ հետևի: Մտքերս են թռչում ավելի հեռու,
Եվ ես մնում եմ ոչ թե Էդվարդի, այլ թագի համար:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Եղբայր Կլարենսը և լորդ Սոմերսետն, երկուսով անցան Վորվիկի կողմը,
Բայց ես զինվել եմ ընդդեմ վատթարի,
Որ երբևիցե կարող է կյանքում տեղի ունենալ
Եվ պետք է փութալ այս խիստ ծայրահեղ պարագայի մեջ...
Փեմբրոկ և Ստեֆորդ, դուք իմ անունից զինվոր հավաքեք,
Պատրաստվեք ի մարտ, մոտ է թշնամին, շուտով ափ կելնի,
Ես ինքս անձամբ ձեզ կհետևեմ:

Գնում են Փեմբրոկն ու Ստեֆորդը:

Հեստինգս. Մոնտեգյու.
Գնալուց առաջ թույլ տվեք մեկնել կասկածը հոգուս,
Դուք բոլորից էլ մոտ եք Վորվիկին արյամբ և ուխտով:
Բայց խոստովանեք, որ դուք սիրում եք նրան ինձնից շատ:
Եթե այդպես է՝ նրա կողմն անցեք.
Լավ է ունենալ ստույգ թշնամի, քան թե կարծեցյալ երկու բարեկամ.
Բայց թե ուզում եք ինձ որդեգրել ձեր հավատարիմ հպատակությանը.
Տվեք ընկերոջ սրբազան երդում, և չեմ կասկածի երբեք ձեզ վրա:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Թող աստված օգնի, որպեսզի ցույց տամ,
Թե ես ինչքան եմ ձեզ հավատարիմ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Եվ ինձ, թե ինչպես ձեզ կծառայեմ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դու, եղբա՛յր Ռիչարդ, չե՞ս մնա ինձ մոտ:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, ի հեճուկս՝ թշնամիներիդ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Եթե այդպես է, ես հավատում եմ իմ հաղթանակին:
Ուրեմն, առա՛ջ, պետք չէ կորցնել
Եվ ոչ մի վայրկյան, քանի դեռ կրկին
Մենք չենք հանդիպել Վորվիկի զորքին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի հարթավայր Վորվիկշիրում:

Մտնում են Վորվիկը և Օքսֆորդը ֆրանսիական զորքի հետ:

ՎՈՐՎԻԿ

Հավատա՛, միլորդ, գործերն հաջող են,
Հասարակ մարդիկ բազմություն կազմած՝ մեր կողմն են անցնում:

Մտնում են Կլարենսն ու Սոմերսեթը:

Բայց ահա՛, նայի՛ր,
Մեզ մոտ են գալիս լորդ Սոմերսետը և լորդ Կլարենսը։
Լորդեր, դուք իսկույն պատասխան տվեք.
Բարեկա՞մ եք մեզ։

ԿԼԱՐԵՆՍ

Անկասկա՛ծ, տեր իմ։

ՎՈՐՎԻԿ

Բարո՛վ ես եկել, ինձ մոտ, Կլարենս, ողջո՛ւյն Սոմերսետ։
Թող վախկոտ կոչվեմ, թե երկմտորեն նայեմ այն մարդուն,
Ով մաքուր սրտով ձեռք է մեկնում ինձ՝ ի նշան սիրո։
Թե ոչ. Կլարենս, ես կարող էի մտածել, որ դու՝ Էդվարդի եղբայր,
Ձևանում ես մեզ որպես բարեկամ։ Բայց բարի՜ գալուստ,
Ազնիվ Կլարենս, աղջիկս քոնը կլինի, անշո՛ւշտ,
Իսկ ինչո՞ւ հիմա նրան չբռնենք
Գիշերվա խավար պատսպարանում,
Երբ քո եղբայրը անզգուշաբար բանակ է խփել,
Երբ զինվորները դարան են մտել քաղաքների շուրջ,
Երբ սովորական պահակ է հսկում նրան միայնակ։
Մեր դիտազորները այդ գործն հեշտությամբ գլուխ կբերեն։
18 Ինչպես Վոդիսևսն ու Դիոմեդը,
Որ սողոսկեցին խորամանկորեն ու խիզախաբար
Արքա Ռեսոսի վրանների տակ,
Որպեսզի տանեն թրակյան ձիերը։
Այսպես նաև մենք, ծածկված գիշերվա սև պատմուճաններ,
Կարող ենք հանկարծ շարքից դուրս հանել նրա պահակին,
Բռնել Էդվարդին։ Սակայն չեմ ասում՝ նրան սպանել,
Քանզի ուզում եմ բռնել հեղակարծ։
Դուք, որ այս գործում ինձ նեցուկ դարձաք,
Հենրուն հռչակենք և հետևենք մեր առաջնորդին։

Բոլորը գոչում են՝ Հենրի՜։

Ուստի, լռելյայն անցնենք մեր գործին,
Աստվա՛ծ, Սուրբ Գևո՛րգ, դուք մեզ զորավիգ՝
Հանո՞ւն Վորվիկի ու նրա ազնիվ բարեկամների։

Գնում են։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Էդվարդի ճամբարը Վորվիկ քաղաքի շրջակայքում:

Մտնում են մի քանի պահակ՝ թագավորի վրանը հսկելու:

Ա ՊԱՀԱԿ

Գնացե՛ք, տղաներ, բռնեք ձեր տեղը.
Թագավորն արդեն ուզում է քնել:

Բ ՊԱՀԱԿ

Նա դեռ չի՞ քնել:

Ա ՊԱՀԱԿ

Ո՛չ: Հանդիսավոր երդում է տվել,
Որ նա չի պառկի, չի հանգստանա, քանի դեռ ինքը
Կամ թե Վորվիկը չեն ջնջվել երկրի երեսից իսպառ:

Բ ՊԱՀԱԿ

Թերևս վաղը այդ օրը լինի,
Եթե Վորվիկը, ինչպես ասում են, մոտիկ է արդեն:

Գ ՊԱՀԱԿ

Բայց ասա՛, խնդրեմ, ո՞վ է այս լորդը,
Որ նույն վրանում թագավորի հետ հանգիստ է առնում:

Ա ՊԱՀԱԿ

Դա լորդ Հեստինգսն է, մեր թագավորի մոտ բարեկամը:

Գ ՊԱՀԱԿ

Բայց ինչո՞ւ արքան հրամայել է,
Որ քաղաքների շուրջն իշխանեն զորավարները,
Իսկ ինքը մնա ցուրտ երկնքի տակ:

Բ ՊԱՀԱԿ

Վտանգն ավելի պատիվ է բերում:

Գ ՊԱՀԱԿ

Ա՛խ, տվեք պատիվ ինձ հանգստի հետ,
Դրանք սիրում եմ ես վտանգավոր պատվից առավել:
Եթե Վորվիկը հանկարծ իմանար, թե իր թագավորն ինչ է հրամայել,
Նա կարթնացներ էդվարդին, անշուշտ:

Ա. ՊԱՀԱԿ

Թե զինվորները չփակեն ճամփան:

Բ ՊԱՀԱԿ

Դրա համար էլ վրանն ենք հսկում,
Որ գիշերային այցելուներից նրան պաշտպանենք:

Մտնում են Վորվիկը, Կլարենսը, Օքսֆորդը, Սոմերսետը և զինվորներ:

ՎՈՐՎԻԿ

Նայեցե՛ք, ահա՛ նրա վրանը, նայեք, սրանք են քաջ պահակները,
Օ՜, արիացե՛ք, իմ բարեկամներ, ժամ է գործելու:
Ինձ հետևեցեք, և մենք կբռնենք էդվարդ արքային:

Ա. ՊԱՀԱԿ

Ո՞վ է գալիս:

Բ ՊԱՀԱԿ

Կա՛ց, թե ոչ՝ կմեռնես:

Վորվիկը և նրա կողմնակիցները գոչում են՝ Վորվի՜կ, Վորվի՜կ, Վորվի՜կ: Հարձակվում են պահակների վրա, որոնք փախչելով, գոչում են. «ի՜ զեն», «ի՜ զեն»: Վորվիկը և մյուսները հետապնդում են նրանց:

Փողեր: Թմբուկներ: Վերադառնում են Վորվիկը, Սոմերսետը և մյուսները՝ բերելով թագավորին, որ նստել է բազմոցի մեջ գիշերազգեստով: Գլոստերը և Հեստինգսը փախչում են:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ովքե՞ր են փախչում:

ՎՈՐՎԻԿ

Հեստինգսն ու Ռիչարդն,
Սատկա՜ծ նրանց հետ: Ահա՛ դուքսն՝ ինքը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դո՞ւքս: Ինչո՞ւ, Վորվի՞կ: Երբ վերջին անգամ
Մենք բաժանվեցինք, դու ինձ կոչեցիր քո թագավորը:

ՎՈՐՎԻԿ

Այո՛, բայց հիմա փոխվել է գործը:
Ինձ անպատվեցիր իբրև դեսպանի,
Ես քեզ գահընկեց արեցի, էդվա՛րդ,
Եկա՛, որ դարձնեմ քեզ Յորքի դուքսը:

Ավա՜ղ, դու ինչպես պիտի իշխեիր թագավորություն,
Երբ որ չգիտես, թե ինչպես վարվել քո դեսպանի հետ.
Ինչպես գոհանալ լոկ մի կնոջով,
Ինչպես եղբոր հետ վարվել եղբոր պես,
Ինչպես մտածել մեր երկրի մասին,
Ինչպես պաշտպանվել թշնամիներից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Եղբայր Կլարենս, դո՞ւ էլ ես այստեղ.
Տեսնում եմ, պետք է Էդվարդն ակամա գահընկեց լինի:
Վորվի՛կ, չնայած անհաջողության,
Էդվարդը պետք է քեզ ու քո բոլոր
Մեղսակիցներին նայի հանց արքա:
Թեև Ֆորտունան չարակամորեն փորձում է գահից ի վայր ինձ շրջել,
Բայց նրա անիվից զորեղ է հոգիս:

ՎՈՐՎԻԿ

Այսպես հոգում մեջ թագավոր եղիր:

Հանում է թագը նրա գլխից:

Բայց պետք է թագը պատկանի Հենրուն.
Նա մեր իսկական արքան կլինի, իսկ դու՝ ստվերը:
Միլորդ Սոմերսետ, հոգ տարեք խնդրեմ, որ դուքս Էդվարդին
Առաջնորդեն Յորք, արքեպիսկոպոս եղբորս հանձնեն:
Երբ Փեմբրոկի հետ կռիվս ավարտեմ՝
Ես ձեզ մոտ կգամ, կասեմ մեկ առ մեկ.
Թե ինչ պատասխան տվեցին Լյուդովիկն ու լեդի Բոնան.
Արդ, մնա՜ս բարով. Յորքի բարի դուքս:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մարդը գերի է իր ճակատագրին՝
Ջուր է կռիվը, երբ միանում են հորձանքն ու քամին:

Զինվորները Սոմերսեթի ուղեկցությամբ տանում են նրան:

ՕՔՍՖՈՐԴ

Ազնի՜վ իշխաններ, ի՞նչ է մեզ մնում,
Եթե ոչ շարժվել զորքի հետ Լոնդոն:

ՎՈՐՎԻԿ

Առաջին քայլով՝ պետք է ազատել թագավոր Հենրուն

Եվ արքայական գահին նստեցնել:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Մի մեծ դահլիճ պալատում:

Մտնում են թագուհի Եղիսաբեթը ու Ռիվերսը:

ՌԻՎԵՐՍ

Տիրուհի, ինչո՞ւ հանկարծ փոխվեցիր:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Դու, եղբայր Ռիվերս, մի՞թե չգիտես,
Թե մեր Էդվարդին ինչպիսի փորձանք վերջերս եկավ:

ՌԻՎԵՐՍ

Ի՞նչ: Տանուլ տվեց կարևոր մի մարտ՝ ընդդեմ Վորվիկի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ո՛չ. մենք կորցրինք միայն արքային:

ՌԻՎԵՐՍ

Արքան սպանվա՞ծ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Գրեթե՝ այո, քանզի գերված է:
Գուցե պալատական պահակն է մատնել
Կամ թե թշնամին բանել է հանկարծ,
Եվ, ինչքանով ինձ հաջողվեց պարզել,
Հանձնել են Յորքի եպիսկոպոսին՝
Վայրագ Վորվիկի եղբորն հարազատ,
Ուրեմն, նա էլ մեր թշնամին է:

ՌԻՎԵՐՍ

Պետք է խոստանամ՝ տխուր է լուրը,
Բայց դու, տիրուհի, պետք է համբերես,
Թող շահած մարտով ժպտա Վորվիկը,
Հոգ չէ՝ վաղ թե ուշ նա տանուլ կտա:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ցարդ կյանքս է պահում այդ հույսն, հավատա՛:
Եվ չի ընկճվի իմ հոգին երբեք,
Ի սեր էդվարդի ազնիվ պտուղի,
Որ ես կրում եմ իմ կրծքի ներքո,
Դա ստիպում է սանձել զայրույթս, տանել իմ խաչը:
Ա՜խ, ես զսպում եմ իմ արցունքները
Եվ արյուն ծծող հառաչանքներս,
Որ այդ պտուղը հանկարծ չհանգչի՝
Անգլիական գահի ժառանգն օրինաց:

ՌԻՎԵՐՍ

Բայց ի՞նչ պատահեց Վորվիկին հետո:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ասում են, որ նա գնում է Լոնդոն,
Որպեսզի նորից թագով զարդարի ճակատը Հենրու.
Իսկ մնացյալը ինքդ կռահիր.
Արքա էդվարդի բարեկամները պետք է կործանվեն...
Սակայն որպեսզի այդ բռնակալի գործը խափանվի,—
Դու մի հավատա երդմնազանցին,—
Ես անմիջապես կգնամ տաճար,
Որ փրկեմ թեկուզ պտուղն էդվարդի:
Այնտեղ կթաքնվեմ բռնություններից ու խարդավանքից:
Դե՛հ, գնա՛նք, փախչե՜նք, քանի կարող ենք.
Փրկություն չկա, երբ մենք ընկնենք ձեռքը Վորվիկի:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Մի անտառ-արգելանոց Միդլեմ դղյակի մոտ, Յորքշիրում:

Մտնում են Գլոստերը, Հեստինգսը, սըր Վիլյամ Ստենլին:

ԳԼՈՍՏԵՐ

Արդ՝ լորդ Հեստինգս ու սըր Ստենլի,
Դուք մի՛ զարմանաք, որ կանչել եմ ձեզ
Գլխավոր թավուտն այս զբոսայգու:
Դուք արդեն գիտեք, որ իմ եղբայրը՝

Մեր թագավորը, գերի է այստեղ եպիսկոպոսին:
Բայց նա վարվում է նրա հետ բարի,
Եվ իմ եղբայրը թույլ հսկողությամբ
Հաճախ է գալիս այս կողմը որսի:
Ես նրան թաքուն իրազեկ դարձրի,
Որ եթե որսի պատրվակով գա այս ժամին այստեղ,
Ապա կգտնի հեծյալ ընկերներ, ովքեր պատրաստ են
Նրան փրկելու այս գերությունից:

Մտնում են թագավոր Էդվարդը ու մի որսորդ:

ՈՐՍՈՐԴ

Ա՛յս կողմը, տեր իմ, կգտնե՞ք որսը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ո՛չ, իմ բարեկամ, նայիր այս կողմ, ուր որսորդներն են:
Եղբա՛յր Գլոստեր, լորդ Հեստինգս և այլք եկել եք այստեղ.
Որ հափշտակե՞ք եպիսկոպոսի ազնիվ եղջերուին:

ԳԼՈՍՏԵՐ

Ժամանակն ու գործն հրամայում են, որ աճապարենք:
Ձիդ սպասում է անտառի եզրին:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ո՞ւր պիտի գնանք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Դեպի Լին, տեր իմ, այնտեղից նավով դեպի Ֆրանսիա:

ԳԼՈՍՏԵՐ

Լավ է մտածված: Հավատա, նույնն էլ մտքովս էր անցել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

(Ստենլիին) Քեզ կհատուցեմ քո ջանքի համար:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՞ւմ ենք սպասում: Արդ չէ ժամանակ խոսք ու զրույցի:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Որսո՛րդ, ի՞նչ կասես, չե՞ս գալիս մեզ հետ:

ՈՐՍՈՐԴ

Ավելի լավ է ճիշտ այդպես վարվել,
Քան այստեղ մնալ ու կառափնատվել:

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն, գնա՛նք. պետք չէ շաղակրատել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դեհ, մնա՜ս բարյավ, լորդ եպիսկոպոս,
Վահանիր դու քեզ խոժոռ Վորվիկից:
Աղոթի՛ր, որ ես նորից տիրանամ իմ ոսկյա պսակին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Մի սենյակ Թաուերում:

Մտնում են թագավոր Հենրին, Կլարենսը, Վորվիկը, Սոմերսետը, Երիտասարդ Ռիչմոնդը, Օքսֆորդը, Մոնտեգյուն և բերդապետը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ազնիվ բերդապետ, այժմ, երբ աստված ու բարեկամներդ
Էդվարդին գցին արքունի գահից,
Երբ ազատության փոխվեց վերստին իմ գերությունը,
Երկյուղս՝ հույսի ու վիշտս՝ խինդի,
Ինչպիսի՞ պատշաճ քեզ վարձ հատուցեմ:

ԲԵՐԴԱՊԵՏ

Հպատակները իրավունք չունեն իրենց տերերից
Ոչինչ պահանջել. բայց եթե համեստ հարցը ուժ ունի,
Ապա խնդրում եմ ինձ ներե՛ք, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Ինչո՞ւ, բերդապետ: Այն բանի համա՞ր, որ բարյացակամ
Եղաք իմ հանդեպ: Ո՛չ, վստահ եղիր, ես բարությունը
Պետք է հատուցեմ պատշաճին հավուր,
Զի գերությունս այն փոխարինեց ախորժ բերկրանքով:
Այո՛, այնպիսի հեշտալուր բերկրանք, որ ճաշակում է
Վանդակած հավքը, երբ դյուրված երգով՝

Մոռանում է իր ազատությունը:
Բայց աստծուց հետո դու, բարի Վորվիկ, ինձ ազատեցիր,
Շնորհակալությո՛ւն և՛ աստծուն, և՛ քեզ.
Նա արարիչն է, իսկ դու՝ գործիքը:
Որպեսզի հաղթեմ ճակատագրի ատելությանը
Գոյության բոցով, որտեղ չի կարող բախտն ինձ վնասել,
Որպեսզի օրհնյալ այս երկրի մարդիկ
Իմ չար աստղերից երբեք չտանջվեն,
Ես, Վորվիկ, թեև կրում եմ թագն իմ,
Բայց քեզ եմ հանձնում դեկն իշխանության.
Քանզի հաջող ես քո գործերի մեջ:

ՎՈՐՎԻԿ

Տեր իմ, շարունակ փառաբանվել եք առաքինությամբ,
Արդ՝ զուգորդում եք ձեր իմաստությունն առաքինությանը,
Կանխատեսելով ճակատագրի թշնամությունը:
Քչերն են միայն նրանից փախչում
Եվ իրենց աստղից գթություն հայցում:
Բայց վրիպում եք մի բանում, արքա՛,
Պետք չէ ինձ ընտրել, երբ Կլարենսը կա:

ԿԼԱՐԵՆՍ

(Վորվիկին) Դու ես արժանի իշխանությանը,
Չէ՞ որ ծնվելիս աստվածները քեզ
Շնորհ բերեցին և՛ ձիթենու ճյուղ, և՛ դափնեպսակ,
Որ դու ամենուր բախտավոր լինես,
Ուստի, զիջում եմ քեզ սիրահոժար:

ՎՈՐՎԻԿ

Իսկ ես ուզում եմ, որ Կլարենսը դառնա հովանի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Կլարենս ու Վորվիկ, ձեռքերդ ինձ տվեք,
Միացրե՛ք իրար, հետն էլ՝ ձեր սիրտը,
Որ չարգելակի երկպառակությունն իշխանությանը:
Երկուսդ էլ եղեք երկրին հովանի,
Իսկ ես իմ կյանքի վերջին օրերը
Աղոթք անելով՝ պետք է սպառեմ մենակության մեջ,
Ի հատուցումն բոլոր մեղքերիս՝ տիրոջն օրհնելով:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ կասես, Կլարե՛նս, քո տիրոջ կամքին:

ԿԼԱՐԵՆՍ

Ես համաձայն եմ, թե Վորվիկն ուզի,
Չի կապավինեմ լոկ նրա բախտին:

ՎՈՐՎԻԿ

Կամքիս հակառակ՝ պիտ համաձայնեմ,
Եվ ինչպես Հենրու երկու ստվերներ՝ մենք պիտի քաշենք
Միևնույն լուծը և լցնենք նրա տեղն անմիջապես:
Ես կառավարման կշիռն եմ զգում,
Մինչդեռ նա պետք է ըմբոշխնի անդորրն ու մեծարումը:
Իսկ մեզ, Կլարենս, անհրաժեշտ է արդ
Եդվարդին իսկույն կոչել դավաճան,
Գրավել նրա ինչքն ու կալվածքը:

ԿԼԱՐԵՆՍ

Ուրիշ ի՞նչ, Վորվիկ, որոշել նրա ժառանգությունը:

ՎՈՐՎԻԿ

Այո՛, Կլարենս, նրանից քեզ էլ բաժին կհանենք:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Բայց ձեր առաջին կարևոր գործը պետք է այն լինի,
Որ ձեր թագուհուն՝ իմ Մարգարիտին ու իմ Եդվարդին
Դուք վերադարձնեք իսկույն Ֆրանսիայից.
Քանի դեռ նրանց չեմ տեսել այստեղ,
Վախն ու կասկածը կիսով չափ պիտի
Խավարացնեն իմ ազատության ուրախությունը:

ԿԼԱՐԵՆՍ

Դա հնարավոր անապարումով ի գործ կդրվի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Միլորդ Սոմերսետ, ո՞վ է այս տղան,
Ում խնամում եք այդպես քնքշորեն:

ՍՈՄԵՐՍԵՏ

Տեր իմ, Հենրին է, Ռիչմոնդի կոմսը:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

69 Մոտ եկ, Անգլիայի հույս ու ապավեն:

Ձեռքը դնում է նրա գլխին:

Օ՜, եթե գաղտնի ուժերն են հուշում
Ճշմարտությունը նախազգաց ոգու,
Ապա այս չահել, գեղեցիկ տղան օրհնանք կբերի մեր տերությանը:
Նրա հայացքում կա մի անխռով վեհափառություն,
Աստված արարեց նրա գլուխը լոկ թագի համար,
Իսկ ձեռքերն ուժեղ՝ մականը բռնելու,
Որ գեղեցկացնի իր ժամանակին գահն արքայական:
Մեծարե՜նք նրան, քանզի այս տղան
Ձեզ ավելի շատ բարիք է տալու, քան ես տվեցի ձեզ միայն վնաս:

Մտնում է մի սուրհանդակ:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ լուր, բարեկա՛մ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ձեր եղբոր ձեռքից խույս տվեց էդվարդն
Ու փութանակի փախավ Բուրգունդիա:

ՎՈՐՎԻԿ

Անախո՞րժ լուրեր, բայց ինչպե՞ս փախավ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նրան փախցրին Ռիչարդ Գլոստերը ու լորդ Հեստինգսը,
Որ դարանամուտ սպասում էին անտառի եզրին:
Նրան փախցրին եպիսկոպոսի քաջ որսորդներից,
Զի նա ամեն օր որսի էր գնում:

ՎՈՐՎԻԿ

Իմ եղբայրն եղավ սաստիկ անզգույշ իր գերու հանդեպ,
Բայց ե՛կ այստեղից գնանք, վեհապե՛տ,
Ու մեր վերքերին ճարենք սպեղանի:

Գնում են թագավոր Հենրին, Վորվիկը, Կլարենսը, բերդապետը ու շքախումբը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ինձ դուր չի գալիս փախուստն էդվարդի,
Զի կասկած չկա, որ նրան կօգնեն Բուրգունդիայում,
Եվ մենք կկանգնենք նախկինից էլ խիստ մեծ կռվի առաջ:
Որքան որ Հենրու գուշակությունը

Սիրտս ուրախացրեց այն պայծառ հույսով,
Որ նա կապում է մեր Ռիչմոնդի հետ,
Այնքան էլ սիրտս կասկած են ձգել ընդհարումները,
Որ հետագայում չարիք կդառնան բոլորիս համար:
Ուստի, լորդ Օքսֆորդ, որպեսզի խույս տանք վատթարագույնից,
Շտապ ուղարկենք պատանուն Բրետան,
Մինչև որ անցնի հողմը գժտության:

ՕՔՍՖՈՐԴ

Թե գահ բարձրանա Էդվարդը վերստին՝
Ազատում չկա մեզ ու Ռիչմոնդին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Թող այդպես լինի՝ թող գնա Բրետան.
Փութով, իշխաններ, կտրենք այս ճամփան:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Յորք քաղաքի պարիսպների տակ:

Մտնում են թագավոր Էդվարդը, Գլոստերը, Հեստինգսը և զորքը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Իմ եղբայր Ռիչարդ, լորդ Հեստինգս և այլք,
Դեռ մինչև հիմա մատուցում է մեզ ճակատագիրը
Եվ ասում, որ ես կարող եմ դարձյալ
Նվաղյալ դիրքս փոխել վեհապետ Հենրու գահի հետ:
Մենք հաջողությամբ նորից ծովն անցանք
Եվ Բուրգունդիայից բերինք ցանկալի օժանդակություն:
Արդ՝ ի՞նչ է մնում, երբ Ռեվենսպուրգից
Հասել ենք Յորքի դարպասների տակ,
9 Եթե ոչ մտնել մեր դքսությունը:

ԳԼՈՍՏԵՐ

Գոց է դարպասը: Ինձ դուր չի գալիս,
Երբ դրան սեմին ոտքն է սայթաքում՝
Վտանգն է տան մեջ դարանել թաքուն:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դե՛ն լավ, մարդ աստծո, գուշակությունից պետք չէ վախենալ,
Ուղիղ կամ խոտոր ճանապարհներով պետք է ներս մտնել,
Քանզի այստեղ են մեզ միանալու բարեկամներս:

ՀԵՍՏԻՆԳՍ

Տեր իմ, ես նորից դուռը կբախեմ:

Պարիսպների վրա երևում են Յորքի քաղաքագլուխը և նրա քաղաքապետները:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Մենք առել էինք ձեր գալու լուրը,
Փրկության համար գոցել ենք դուռը,
Քանզի մենք պարտ ենք Հենրուն հնազանդվել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Արդ՝ եթե Հենրին ձեր թագավորն է,
Ապա Յորքի դուքսն էդվարդն է գոնե:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Դուք ճշմարիտ եք, ավելի նվազ ձեզ չեմ ճանաչում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ես դքսությունս եմ ձեզնից պահանջում,
Որով, իսկապես, ես գոհ կմնամ:

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին) Ոտքին տեղ արավ, կրունկին էլ կուզե:

ՀԵՍՏԻՆԳՍ

(Քաղաքապետին). Դեռ կասկածո՞ւմ եք, բացեք դարպասը,
Մենք բարեկամ ենք թագավոր Հենրուն:

ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ

Այդ դեպքում պետք է դարպասը բանանք:

Իջնում է:

ԳԼՈՍՏԵՐ

Քաջ հրամանատարն է իսկույն համոզվում:

ՀԵՍՏԻՆԳՍ

Բարի ծերունին կուզեր անձկանոք, որ ամենայն ինչ

Հաջող ընթանա և ինքն էլ քաշվի մի խաղաղ անկյուն.
Բայց ներս մտնելով ես չեմ կասկածում, որ պետք է նրան
Ու նրա բոլոր քաջ եղբայրներին շուտ խելքի բերել:

Ներքևում երևում են քաղաքագլուխը և երկու թաղապետ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Լորդ քաղաքապետ, այս դարպասները գոց պետք է լինեն
Գիշերը կամ թե կռվի ժամանակ:
Պետք չէ վախենալ, տո՛ւր ինձ, սիրելիս, բանալիները:

Վերցնում է բանալիները:

Էդվարդի կամքն է պաշտպանել քաղաքն ու քեզ նրանց հետ,
Ովքեր ուզում են նրան հետևել:

Քայլերգ: Մտնում է Մոնտգոմերին զորքի հետ:

ԳԼՈՍՏԵՐ

Եղբա՛յր, ահա և Ջոն Մոնտգոմերին՝
Մեր հավատարիմ լավ բարեկամը, թե չեմ սխալվում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բարո՛վ ես եկել, բայց ինչո՞ւ զինված:

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ

Որպեսզի օգնեմ բարի Էդվարդին փորձության ժամին,
Ինչպես վայել է ազնիվ ծառային:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Շնորհակալությո՛ւն, սըր Մոնտգոմերի:
Մոռացության ենք մենք տալիս հիմա
Մեր իրավունքը թագի նկատմամբ
Եվ պահանջում ենք մեր դքսությունը,
Մինչև որ աստված ավելին ուղարկի:

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ

Այն դեպքում, էդվա՛րդ, մնացե՛ք բարով, ես պետք է գնամ,
Քանզի բերել եմ ծառայությունս մեր թագավորին և ոչ թե դքսին:
Զարկի՛ր, թմբկահա՛ր, գնանք այստեղից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Սպասի՛ր, սըր Ջոն, ուզում եմ քեզ հետ
Որոշել, ինչպես կարող ենք նորից գահը ստանալ:

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ

Խորհել ձեզ պետք չէ, ասեմ ձեզ շիտակ,
Թե չեք կարող ձեզ հռչակել արքա,
Ես թողնում եմ ձեզ բախտի քմայքին և գնում հեռու,
Որ կասեցնեմ ձեզ օժանդակող ուժերը բոլոր:
Ինչո՞ւ ոզորել, երբ թագ չես ուզում:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ օգուտ, եղբայր, երկդիմի խոսքերից:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Երբ մենք զորանանք՝ կներկայացնենք մեր իրավունքը.
Մինչ այդ խնամքով պետք է թաքցնել մեր նպատակը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Կորի՛ր այստեղից, միտք կասկածելի,
Զենքերն են միայն հարցերը լուծում:

ԳԼՈՍՏԵՐ

Խիզա՜խ ոգիներ, շտապ մագլցեք դուք գահերն ի վեր:
Եղբա՛յր, թագավոր քեզ կհռչակենք,
Եվ այդ համբավը կբերի բազում բարեկամներ քեզ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Թող լինի, ինչպես դուք եք ցանկանում,
Իրավունքն իմն է, Հենրին է, իրա՛վ, թագս գողացել:

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ

Խոսում է տերն իմ արքային վայել,
Արդ պետք է լինեմ Էդվարդին պաշտպան:

ՀԵՍՏԻՆԳՍ

Փողե՛ր: Էդվարդին հռչակենք արքա,
Հե՜յ, զինվո՛ր, կարդա հռչակումն իսկույն:

ԶԻՆՎՈՐ

«Աստծո ողորմածությամբ՝ մենք Էդվարդ Չորրորդս, թագավորն Անգլիայի ու Ֆրանսիայի, տեր Իռլանդիայի և այլն...»:

ՄՈՆՏԳՈՄԵՐԻ

Ով որ ժխտում է թագը Էդվարդի,

Թող գա և ինձ հետ նա մենամարտի:

ԲՈԼՈՐԸ

Թո՛ղ երկա՜ր ապրի էդվարդ Զորորդը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Շնորհակալությո՜ւն, քաջ Մոնտգոմերի և ձեզ բոլորիդ,
Թե բախտն ինձ օգնի՝ ես կհատուցեմ ազնվությանը:
Այս գիշեր մնանք մենք այստեղ՝ Յորքում:
Երբ առավոտյան արևն իր կառքով
Բարձրանա ծայրին այս հորիզոնի,
Կերթանք ընդառաջ և՛ քաջ Վորվիկին, և՛ նրա զորաց:
Լավ եմ ճանաչում՝ Հենրին զինվոր չէ:
Ա՜խ, չա՛ր Կլարենս, ինչ գեշություն ես
Շողոմել Հենրուն, մոռանալ, ավա՜ղ, եղբորն հարազատ:
Ինչ էլ որ լինի՝ քեզ ու Վորվիկին պետք է հանդիպեմ.
Զինվորնե՛ր, մարտը մերն է, անկասկա՛ծ,
Դուք կովից հետո կստանաք մեծ վարձ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Լոնդոն: Դահլիճ պալատում:

Փողեր: Մտնում են թագավոր Հենրին, Վորվիկը, Կլարենսը, Մոնտեգյուն, Էքսետրը և Օքսֆորդը:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ խորհուրդ կտաք, ազնի՜վ իշխաննե՛ր,
Ծույլ հոլանդացոց, սաստիկ ռազմատենչ գերմանների հետ
Բելգիայից էդվարդն ապահովապես նեղուցը անցել
Ու իր զնդերով գալիս է Լոնդոն:
Բազում հեղամիտ մարդիկ են նրա շուրջը հավաքվել:

ՕՔՍՖՈՐԴ

Թող զորք հավաքենք, ետ մղենք նրանց:

ԿԼԱՐԵՆՍ

Հեշտ է կոխոտել կրակն սկզբում,

Բայց երբ բորբոքվեց՝ զետն էլ չի մարի:

ՎՈՐՎԻԿ

Ես Վորվիկշիրում ունեմ նշմարիտ շատ բարեկամներ,
Խաղաղասեր են, բայց խիզախաբար կռնտվեն մարտի.
Ես պետք է նրանց ժողովեմ իմ շուրջ: Որդի Կլարենս,
Կանչիր Սեֆոլկում, Նորֆոլկում, Քենտում
Խիզախ ասպետներ, ազնվականներ դրոշիդ ներքո:
Եղբա՛յր Մոնտեգյու, դու Բեկինգեմում
Նորթեմպտոնում ու Լեսեստերշիրում գտիր այն մարդկանց,
Ովքեր պատրաստ են խոսքդ լսելու,
Իսկ դու, քաջ Օքսֆորդ, ում շատ են սիրում
Քո Օքսֆորդշիրում, հավաքիր ազնիվ բարեկամներիդ:
Գերագույն տեր իմ, կմնաք այստեղ
Դուք շրջապատված ձեր հավատարիմ լոնդոնցիներով՝
Ինչ կղզին՝ ծովով և կույս Դիանան՝ չրահարսերով,
Մինչև ետ դառնանք:
Ազնիվ իշխաններ, բարի՛ ճանապարհ, չտարվենք խոսքով,
Մնացե՛ք բարյավ, գերագույն իմ տեր:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Գնա՛ս բարով, Հեկտոր, իմ Տրոյայի նշմարտափայլ հույս:

ԿԼԱՐԵՆՍ

Ի նշան անխախտ հավատարմության՝
Ձերդ մեծության ձեռքն եմ համբուրում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Անձնվեր Կլարենս, հաջողակ եղիր:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Սրտապինդ եղեք, գերագույն տեր իմ, մնացեք բարո՛վ:

ՕՔՍՖՈՐԴ

(Համբուրում է Հենրու ձեռքը). Ես դրոշմում եմ հավատարմությունս
Ցնո՛ր հանդիպում:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Թանկագի՛ն Օքսֆորդ, բարի՛ Մոնտեգյու,
Ես ձեզ բոլորիդ մաղթում եմ դարձյալ բախտավորություն:

ՎՈՐՎԻԿ

Մնացե՛ք բարյավ, ազնիվ իշխաններ,
Թող մենք հանդիպենք Քովենտրիում:

Գնում են բոլորը, բացի թագավոր Հենրից և էքսետերից:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Առայժմ այստեղ թող հանգստանամ,
Ի՞նչ է մտածում էքսետերն արդյոք.
Ինձ թվում է, որ ուժերն էդվարդի
Ի վիճակի չեն մեր բանակի դեմ կռվի ելնելու:

ԷՔՍԵՏԵՐ

Երբ նա այլոց գլխից չհանի:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այդ բանից երբեք ես չեմ վախենում,
Զի բարությունս է ինձ փառաբանում ժողովրդի մեջ,
Ես չեմ խցանել իմ լսելիքը նրանց խնդրանքով
Կամ կասեցրել նրանց հայցերը քաշքշուկներով.
Իմ գթությունը որպես բալասան ապաքինել է վերքերը նրանց,
Իմ բարությունը վերքն է ամոքել,
Իմ գթությունը նրանց հորդացող արցունքն է արբել,
Ես աչք չեմ դրել նրանցից մեկի հարստության,
Նրանց չեմ ճնշել բարձր հարկերով,
Վրեժխնդրությունս առաջ չեմ տարել,
Թեև իմ հանդեպ մեղքեր են գործել:
Ա՜խ, ինչո՞ւ նրանք էդվարդին պետք է ինձնից շատ սիրեն.
Ո՛չ, ո՛չ, էքսետեր, այս շնորհները վարձ են պահանջում.
Եվ երբ առյուծը գառանն է շոյում,
Նրա ետևից գառնուկն է գնում:

Բեմի խորքից ձայներ՝ Լանկաստե՛ր, Լանկաստե՛ր:

ԷՔՍԵՏԵՐ

Լսո՞ւմ եք, տեր իմ, այս ի՞նչ ձայներ են:

Մտնում են թագավոր էդվարդը, Գլոստերը և զինվորներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բռնե՛ք շփոթված Հենրուն և տարեք
Նորից հռչակե՛ք մեզ Անգլիո արքա:
Դուք այն ակունքն եք, ուրկից բխում են փոքրիկ առվակներ,

Արդ ձեր աղբյուրը պետք է ցամաքի։
Իմ ծովը պետք է ծծելով քաշի ձեր առվակները,
Ու կբարձրանան ջրերը նրա։
Տարե՛ք սրան բերդ։ Չթողնեք խոսի։

Մի քանի մարդ տանում են թագավոր Հենր

Այժմ, իշխաննե՛ր, դեպի Քովենտրի,
Որտեղ հանդուգն Վորվիկն է մնում։
Շոգ է։ Շտապենք, թե ոչ հողմերը
Ցիրուցան կանեն մեր դիզած խոտը։

ԳԼՈՍՏԵՐ

Գնա՛նք. քանի դեռ զորք չի հավաքել.
Մեծ դավաճանին հանկարծ կալանենք։
Խիզախ ռազմիկնե՛ր, դեպի՜ Քովենտրի։

Գնում են։

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Քովենտրի:

Պարսպի վրա երևում են Վորվիկը, Քովենտրի քաղաքագլուխը, երկու սուրհանդակ և ուրիշներ:

ՎՈՐՎԻԿ

Որտե՞ղ է լրաբերն անվախ Օքսֆորդի,
Հեռո՞ւ է քո տերն, ազնիվ բարեկա՛մ:

Ա ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Դանեստրում է, այս կողմ է գալիս:

ՎՈՐՎԻԿ

Իսկ շա՞տ հեռու է եղբա՛յր Մոնտեգյուն,
Որտե՞ղ է նրա սուրհանդակն հիմա:

Բ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նա Դեներիում է, հզոր բանակով:

Մտնում է սըր Ջոն Սոմերվիլը:

ՎՈՐՎԻԿ

Ասա՛, Սոմերվիլ, սիրելի տղաս,
Ըստ քեզ, մոտի՞կ է Կլարենսն այժմ:

ՍՈՄԵՐՎԻԼ

Ես Սաութեմում նրան թողեցի իր բանակի հետ,
Երկու ժամ հետո այստեղ կլինի:

ՎՈՐՎԻԿ

Ուրեմն, Կլարենսը մոտենում է մեզ,
Լսում եմ նրա թմբուկի ձայնը:

ՍՈՄԵՐՎԻԼ

Օ՜, ո՛չ: Սաութեմն այն կողմն է, միլո՛րդ:
Թմբուկի ձայնը գալիս է ահա Վորվիկի կողմից:

ՎՈՐՎԻԿ

Բայց ո՞վ է գալիս: Գուցե բարեկա՞մ, որ չենք սպասում:

ՍՈՄԵՐՎԻԼ

Շատ մոտ են, իսկույն դու կճանաչես:

Մտնում են թագավոր Էդվարդը, Գլոստերը և զորքը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Փողհա՛ր, մոտեցիր դու պարիսպներին
Եվ տարափողի՛ր խոսք բանակցության:

ԳԼՈՍՏԵՐ

Տե՛ս, թե ինչպես է խոժոռ Վորվիկը
Պատի երկայնքով զինվորներ լցնում:

ՎՈՐՎԻԿ

Ի՞նչ անակնկալ: Մի՞թե զվարճասեր Էդվարդն է եկել,
Ծախվա՞ծ են արդյոք դիտազորները.
Թե՞ քուն են մտել, որ ես չիմացա՝ ինչպես է եկել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Արդ՝ բացելո՞ւ ես դռները, Վորվի՛կ,
Թե՞ չես կամենում խոսել ազնվաբար
Եվ համեստորեն չոքել իմ առաջ.
Ինձ կոչիր արքա, թողություն խնդրիր,
Եվ նա կների վիրավորանքդ:

ՎՈՐՎԻԿ

Ավելի լավ է՝ չքվես զորքիդ հետ,
27 Հիշի՛ր, թե ո՞վ է քեզ բարձրացրել և ո՞վ է զցել:
Կոչիր Վորվիկին քո պաշտպանյալը, զղջա՛ արարքդ,
Այնժամ կմնաս դարձյալ Յորքի դուքս:

ԳԼՈՍՏԵՐ

Ես կարծում էի քեզ առնվազն կկոչեր արքա,
Դուցե կատակե՞ց՝ հակառակ կամքին:

ՎՈՐՎԻԿ

Մի՞թե դքսությունն առատ նվեր չէ:

ԳԼՈՍՏԵՐ

Աստված է վկա, երբ մի աղքատ կոմսի են տալիս:
Եվ ես պատրաստ եմ այսպիսի շռայլ նվերի համար քեզ ծառայելու:

ՎՈՐՎԻԿ

Ես չէ՞ի, որ քո եղբոր տվի թագավորություն:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այն իմն էր, թեև Վորվիկն է տվել:

ՎՈՐՎԻԿ

37 Դու Ատլասը չես, որ այսպիսի մեծ ծանրություն կրես:
Հենց դրա համար Վորվիկն իր նվերն ետ է վերցնում:
Արդ՝ թագավորն իմ Հենրին է միայն, ես՝ նրա ծառան:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բայց, Վորվիկ, արքադ իմ գերին է արդ,
Դու, անվախ Վորվիկ, պատասխան տուր ինձ,
Ի՞նչ է մարմինը՝ գլխից զրկված:

ԳԼՈՍՏԵՐ

Ավա՜ղ, քեզ, Վորվիկ, հեռուն չես տեսնում.
Մինչ դու խորհում ես տասնոցը քաշել, թագավորն արդեն
Խորամանկորեն հանված է լինում խաղաթղթերից:
46 Դու թշվառ Հենրուն եպիսկոպոսի պալատում թողիր.
Տասնոցը ձեռքիդ՝ դու կհանդիպես նրան Թաուերում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

48 Մինչև իսկ այդպես: Բայց, այնուհանդերձ, Վորվիկն ես դարձյալ:

ԳԼՈՍՏԵՐ

Վորվիկ, դու որսա հարմար առենը և ծունր իջիր:
Էլ ի՞նչ ես խորհում, հիշիր՝ երկաթը տաք-տաք են ծեծում:

ՎՈՐՎԻԿ

Ավելի լավ է, որ մեկ հարվածով կտրեմ այս ձեռքը
Եվ մյուս ձեռքով այն նետեմ դեմքիդ,
Քան թե վար բերեմ իմ առագաստը քո ոտքերի տակ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դե՛հ, առագաստիր, ինչպես ուզում ես
Եվ թող բարեկամ քեզ լինեն քամին, ընթացքը ջրի,
Սակայն այս ձեռքը ամուր բռնելով քո սև մազերից,
Քանի դեռ տաք է կտրած գլուխդ,
Քո պիղծ արյունով հողին կգրի.
«Քամու պես փոխվող Վորվիկն այլևս չի կարող փոխվել»:

Մտնում են Օքսֆորդը, զինվորները՝ դրոշներ պարզած:

ՎՈՐՎԻԿ

Սիրելի դրոշներ: Օքսֆորդն է գալիս:

ՕՔՍՖՈՐԴ

Ահա՛ Օքսֆորդը: Կեցցե՛ Լանկաստերը:

Նա զորքի հետ մտնում է քաղաք:

ԳԼՈՍՏԵՐ

Բաց են դռները, մենք էլ ներս մտնենք:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այդպես կարող են ուրիշ թշնամիք թիկունքից խփել:
Մենք կազմ ու պատրաստ այստեղ կկանգնենք, նրանք, իհարկե,
Դուրս կգան դարձյալ և մեզ կնետեն նոր կռվի ձեռնոց:
Ու թե չուզենան քաղաքից դուրս գալ,
Դուրս կվռնդենք դավաճաններին:

ՎՈՐՎԻԿ

Բարով ես եկել, քաջազին Օքսֆորդ,
Դու ժամանակին օգնության հասար:

Մտնում է Մոնտեգյուի զորքը, թմբուկներ զարկելով, դրոշներ պարզած:

ՄՈՆՏԵԳՅՈՒ

Ահա՛ Մոնտեգյուն: Կեցցե՛ Լանկաստերը:

Իր զորքով մտնում է քաղաք:

ԳԼՈՍՏԵՐ

Դու և եղբայրդ պետք է ձեր մարմնի
Թանկագին արյամբ հատուցանեք այս դրժության համար:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դժվարին կովի պտուղը քաղցր է.
Ես գուշակում եմ իմ հաղթանակը:

Մտնում է Սոմերսետի ջոկատը՝ թմբուկներ զարկելով, դրոշներ պարզած:

ՍՈՄԵՐՍԵՏ

Սոմերսետն ահա, կեցցե՜ Լանկաստերը:

Ջորջի գլուխն անցած՝ մտնում է Քազաքը:

ԳԼՈՍՏԵՐ

Քո անվանակից երկու դքսերն էլ
Արյուն են թափել Յորքի՝ տան կողմից,
Եվ դու կլինես երրորդն անկասկած,
Եթե այս սուրն ինձ ստույգ ծառայի:

Մտնում է Կլարենսի զինվորների ջոկատը, դրոշներ պարզած:

ՎՈՐՎԻԿ

Նայի՛ր, գալիս է Ջորջ Կլարենսը
Եվ նա բավարար զորություն ունի,
Որպեսզի կովի եղբոր հետ անվախ,
Իր արդար գործի եռանդն է հաղթում
Հարազատ եղբոր սիրո զգացումը:
Ե՛կ, Ջորջ Կլարենս, Վորվիկն է կանչում:

ԿԼԱՐԵՆՍ

Հայր, հասկանո՞ւմ ես, ինչ եմ ակնարկում:

Պոկելով կարմիր վարդը գլխարկից:

Օ՜, նայի՛ր այստեղ, իմ ամոթանքն եմ նետում քո դեմքին,
Չեմ ուզում քանդել իմ տունն հայրական,
Որ շաղախել եմ քարերն իմ արյամբ,
Եվ Լանկաստերին ես չեմ պաշտպանի:
Ի՞նչ: Մի՞թե, Վորվի՛կ, դու հավատում ես, որ Կլարենսը
Այն աստիճանի բութ է, տմարդի և անագորույն,
Որ կուղղի կովի մահաբեր զենքը

Ընդդեմ իր եղբոր և օրինավոր իր թագավորի:
Գուցե իմ երդումն երեսի՞ս զարնես,
Բայց ես չեմ կարող այն կյանքի կոչել.
Քանզի կլինեմ ավելի դաժան,
Քան թե Հեփթայեն, որ միակ դուստրին ողջակեզ արավ:
Այնպես ցավում եմ իմ մեղքի համար,
Որ ի տրիտուր եղբորս գութի քեզ համարում եմ երդվյալ թշնամիս:
Ես միտք եմ դրել, ուր որ էլ լինի,
Հանդիպել քեզ հետ ու վրեժս առնել,
Քանզի խաբեցիր անմաքուր ձևով:
Քեզ, գոռոզ Վորվիկ, կանչում եմ ի մարտ,
Եղբորս եմ դիմում շիկնած այտերով,—
Ներիր ինձ, Էդվա՛րդ, մեղքերիս համար.—
Այսպես մի՛ նայիր, ես այսուհետև կայուն կլինեմ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ողջո՛ւյն: Տասն անգամ դու կլինեիր դարձյալ սիրելի,
Եթե դու նույնիսկ չհատուցեիր ատելությանս:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ ողջույնն էլ քեզ, բարի Կլարենս,
Դու եղբայրաբար վարվեցիր մեզ հետ:

ՎՈՐՎԻԿ

Օ՜, չար դավաճան, ստոր երդմնազանց:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Վորվիկ, ուզո՞ւմ ես քաղաքից դուրս գալ ու կռվել մեզ հետ,
Թե՞ ստիպված ենք քարեր նետելու ականջներիդ շուրջ:

ՎՈՐՎԻԿ

Ավա՜ղ, ես այստեղ բնավ չեմ գցվել՝ ի պաշտպանություն,
Այժմ ես իսկույն մեկնում եմ Բարնետ,
Եվ քեզ հետ, Էդվա՛րդ, ես պետք է կռվեմ, եթե հանդգնես:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այո՛, Էդվարդը երկյուղ չի կրում, նա ցույց է տալու քեզ ճանապարհը:
Իշխաննե՛ր, ի՜ մարտ: Փա՜ռք քեզ, Սուրբ Գեորգ և մեր հաղթանակ:

Քայլերգ: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ռազմադաշտ Բարնետի մոտ։

Տագնապ։ Զենքի շաչ ու շառաչ։ Մտնում է թագավոր Էդվարդը, քարշ տալով վիրավոր Վորվիկին։

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ա՛յ, այստեղ պառկիր, մեռի՛ր, թող քեզ հետ մեռնի մեր ահը,
Քանզի Վորվիկը մեզ էր վախեցնում.
Այժմ, Մոնտեգյու, փորձի՛ր դիմանալ, ես քեզ եմ փնտրում,
Որ նույն փոսի մեջ քո և Վորվիկի ոսկորներն հանգչեն։

Գնում է։

ՎՈՐՎԻԿ

Ա՜խ, ո՞վ կա այստեղ, թող ինձ մոտենա՝
Թեկուզ թշնամի կամ թե բարեկամ։
Ո՞վ հաղթեց ... Յո՞րքը, թե՞ Վորվիկն, ասա՛,
Բայց ինչո՞ւ հարցնել... Իմ թուլությունը,
Արյունս, սիրտս՝ հիվանդ ու տկար,
Եվ իմ հոշոտված մարմինն ասում են,
Որ պետք է հանձնեմ աճյունս հողին,
Եվ հաղթանակը՝ կործանումիս հետ թշնամիներիս։
Այսպես ընկնում է կացնից ծիգ մայրին,
Որի ճյուղերն են իրենց գիրկն առել վեհապանծ արծվին,
Իսկ ստվերի տակ առյուծն է ննջում,
Եվ նրա կատարն ավելի բարձր է, քան Յուպիտերի տարածվող ծառը,
Որ պաշտպանում է գանան թփերը ցրտաշունչ քամուց։
Եվ այս աչքերը, որ մշուշվել են մահվան սև քողով,
Թափանցում էին բարկ միջօրեի արևի նման
Արար աշխարհի դավանանության գաղտնիքների մեջ,
Իսկ իմ ճակատի բյուր խորշումները՝ արյունի պարմար,
Բաղդատվում էին հանախ արքայոց գերեզմանի հետ,
Քանզի կա՞ արքա, ում գերեզմանը փորած չլինեի,
Ո՞վ կհանդգներ ժպտալ իմ առջև, երբ մռայլ էի,
Անա՜ քո փառքը. այժմ շաղախված արյամբ ու փոշով,
Իսկ այգիներս, ծառուղիներս ու կալվածքներս,
Ավա՜ղ, ինձանից անջատ են արդեն,
Ես ոչինչ չունեմ, բացի մարմինս ծածկող սև հողից։

Ի՞նչ է օրենքը, իշխանությունը, արքայությունը՝
Լոկ ունայնություն: Ինչպես էլ ապրես,
Վաղ թե ուշ, մահը պետք է տանի քեզ:

Մտնում են Օքսֆորդն ու Սոմերսետը:

ՍՈՄԵՐՍԵՏ

Օ՜, Վորվի՛կ, Վորվի՛կ, եթե մեզ նման լինեիր ուժեղ,
Մենք կարող էինք ի չիք դարձնել կորուստները մեր.
Հենց նոր իմացանք, որ Ֆրանսիայից թագուհին հզոր ուժեր է բերել:
Ա՜խ, կարենայիր դու մեզ հետ փախչել:

ՎՈՐՎԻԿ

Ո՜հ, այն ատեն էլ ես չէի փախչի: Ա՜խ, իմ Մոնտեգյո՛ւ,
Սիրելի եղբայր, թե դու այստեղ ես, ձեռքդ ինձ մեկնիր
Եվ քո շուրթերով իմ հոգին պահիր:
Դու ինձ չես սիրում, քանզի, իմ եղբա՛յր, եթե սիրեիր՝
Քո արցունքները պետք է թրջեին այս արյունը պաղ,
Որ արգելում է շուրթերս բանալ ու քեզ հետ խոսել:
Ա՜խ, շտապ արի՛, թե ոչ կմեռնեմ:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ա՜խ, Վորվիկ, շունչը փչեց Մոնտեգյուն,
Բայց մինչև վերջ էլ նա քեզ էր կանչում
Եվ ասում. «Տարե՛ք իմ ջերմ բարևը
Խիզախ եղբորս»: Եվ ջանում էր նա ինչ-որ բան ասել,
Բայց խոսքը նրա,
Ինչպես նկուղում արձակված խուլ ձայն հազիվ հասկացա,
Բայց վերջին պահին հառաչեց. «Վորվի՜կ ... Ա՜խ, մնաս բարյավ»:

ՎՈՐՎԻԿ

Ես հրաժեշտ եմ տալիս բոլորին,
Մենք կհանդիպենք այնտեղ՝ երկնքում:
Թող հանգչի խաղաղ նրա սուրբ հոգին:
Փախե՛ք, իշխաններ, դուք ձեզ փրկեք,

Մեռնում է:

ՕՔՍՖՈՐԴ

Գնանք թագուհու զորքին ընդառաջ:

Գնում են տանելով Վորվիկի մարմինը:

24—577

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Ռազմադաշտի մի այլ վայր:

Փողեր: Հանդիսավոր մանում են թագավոր Էդվարդը, Գլոստերը, Կլարենսը և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մեզ մինչև հիմա բախտը տանում է դեպի հերկինս
Եվ հաղթանակի պսակ շնորհում,
Բայց պայծառափայլ այս միջօրեին
Տեսնում եմ մի սև, տարակուսելի սպառնալից ամպ,
Որ պիտի կռվի մեր փառավորյալ արեգակի հետ՝
Մինչ նա կհանգչի իր արևմտյան խաղաղ անկողնում:
Իշխաններ, ամպը զորքն է թագուհու,
Որ ժողովել է նա Գաղիայում ու մեր հողն իջել:
Ինչպես լսեցի, նրանք գալիս են մեր դեմ կռվելու:

ԿԼԱՐԵՆՍ

Մի թեթև քամի շուտով կցրի այդ մռայլ ամպը
Եվ ծովից այն կողմ, ուրկից եկել է, կուղարկի նրան,
Քո բյուր շողերը պետք է փարատեն այս մառախուղը:
Ոչ ամեն ա՛մպն է փոթորիկ ծնում:

ԳԼՈՍՏԵՐ

Թագուհին ունի երեսուն հազար քաջաժիրտ մարտիկ,
Փախավ Սոմերսետն Օքսֆորդի հետ նրա բանակը:
Եթե թագուհին քիչ հանգստանա՝
Հավատա, մեզ չափ նա ուժ կունենա:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մեր հավատարիմ բարեկամները ծանուցել են մեզ,
Որ նրանք իրենց ընթացքն ուղղել են դեպի Տյուքսբերի:
Բառնետի դաշտում մենք բստ կարելվույն հաղթանակ տարանք,
Արդ՝ պետք է ուղիղ շտապենք այնտեղ,
Հեշտ է ճանապարհն անցնել կամավոր:
Ամեն կոմսություն մենք ուր գնելիս՝ խիստ կուժեղանանք:
Թմբուկնե՛ր զարկեք, կանչեցեք անվախ՝ առա՜ջ մարտիկներ:

Փողեր: Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Հարթավայր Տյուքսբերիի մոտ:

Քայլերը: Մտնում են թագուհի Մարգարիտը, իշխան Էդվարդը, Սոմերսետը, Օքսֆորդը և զինվորներ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Մե՛ծ իշխաններ,
Իմաստուն մարդիկ չեն նստում, ողբում իրենց կորուստը:
Այլ արիասիրտ փնտրում են նրանք վիշտն ամոքելու ճանապարհները:
Թեև մեր նավի կայմը կոտրել է,
Պարանը պոկվել և հուսո խարիսխն ի կորուստ մատնյալ.
Եվ կուլ է տվել մեր նավազների կեսին ծովն անհուն,
Բայց դեռ ապրում է մեր նավապետը:
Հարմա՞ր է, որ նա վախկոտ մանչի պես ղեկը բաց թողներ
Եվ արտասվաթոր լացող աչքերով խիստ կրկնապատկեր ծովի ջրերը,
Ավելի ուժ տար մեր ահեղ ծովին, որ առանց այդ էլ զորություն ունի
Եվ նավը թողներ, որ բախվեր ժայռին,
Երբ նա կարող էր հմտությամբ փրկել:
Ա՜խ, ի՜նչ ամոթ է, ի՜նչ ծանր հանցանք:
Ասենք, Վորվիկն է մեր խարիսխն եղել,
Մոնտեգյուն՝ կայմը, իսկ պարանները՝
Մեր զոհված մարդիկ: Սակայն ի՞նչ օգուտ:
Մի՞թե Օքսֆորդը մեզ խարիսխ չէ ա՛րդ,
Մի՞թե Սոմերսետն ամուր կայմ չէ ա՛րդ,
Իսկ ֆրանսիացի բարեկամները պարան ու սարք չե՞ն:
18 Թեև Նեդն ու ես անփորձ ենք այժմ, սակայն կարող ենք
Այս անգամ տանել մեր նավարկելի գործը դժվարին:
Մենք բաց չենք թողնի ղեկը մեր ձեռքից,
Որպեսզի նստենք ու ողբանք անհույս,
Բայց ճամփա կընկնենք՝ ընդդեմ չար քամու,
Ծանծաղուտների ու ժայռերի մեջ, որ սպառնում են մեզ նավաբեկել:
Ո՛չ հանդիմանանք, ո՛չ քծնանք ալյաց.
Ի՞նչ է Էդվարդը, եթե ոչ միայն ծով ալեկոծված,
Ի՞նչ է Կլարենսը, եթե ոչ սորուն ավազ նենգության,
Ի՞նչ է Ռիչարդը, եթե ոչ միայն ժայռ չարագուշակ.
Անա մեր անբախտ նավի թշնամիք:
Կարող եք լողալ, բայց կարճ կտևի,

Գուցե ոտք դնեք ավազի վրա՝ ձեզ ներս կքաշի ղավաճանորեն,
Գուցե մագլցեք կոպիտ ժայռն ի վեր՝ ջրերն այնկոծ ձեզ կլվանան,
Կամ դուք կմեռնեք այնտեղ սովամահ: Օ՛, մահ եռակի:
Այդ բանն ասում եմ, որ դուք հասկանաք, ազնիվ իշխաններ,
Եթե ձեզանից որևէ մեկը պատեն առիթին
Խույս տա մեզանից, թող նա ավելի քիչ հույս ունենա
Այդ երեք կողմից, քան թե այս ծովից՝
Իր լերկ ժայռերով, իր ավազներով: Դե՛ն, արիացեք:
Եթե չարությունն անկասելի է,
Ապա տղայոց թուլություններն են արցունքն ու վախը:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Այո՛, այսպիսի անվեհեր կինը,—
Եթե վախկոտը նրան ունկնդրեր,—
Կարող էր սիրտ տալ ու ոգևորել
Եվ, առանց զենքի, կովի կզնար:
Ես դա ասում եմ ոչ նրա համար,
Որ կասկած ունեմ ես մեկի վրա,
Բայց թե գտնվեր այստեղ մի վախկոտ՝
Ես կարձակեի նրան ժամ առաջ,
Որ չվարակեր նա ծանր պահին այլոց թույլ ոգով:
Եթե այդպիսի մեկը կա այստեղ,
Աստված չարացե. թող նա ժամ առաջ մարտից հեռանա:

ՕՔՍՖՈՐԴ

Եթե այսպիսի քաջություն ունեն տղայք ու կանայք,
Իսկ զինվորները՝ լոկ վախկոտություն, նրանց բյուր ամո՛թ:
Օ՛, երիտասարդ, քաջ արքայազն
Քո մեջ վերստին քո հռչակավոր մեծ հայրն է ապրում,
Դու պիտի ապրես երկար տարիներ, որպեսզի կրես
Նրա պատկերը և հարություն տաս նրա մեծ փառքին:

ՍՈՄԵՐՍԵՏ

Եվ ով չի ուզում ի սեր այդ հույսի պայքարի ելնել,
Թող տանը քնի ու թե բվի պես ցերեկն արթնանա՝
Մարդիկ զարմանքից կծաղրեն նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Շնորհակալությո՛ւն, ազնիվ Սոմերսետ, սիրելի Օքսֆորդ:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Ընդունենք ինձնից շնորհակալություն,
Ով ուրիշ ոչինչ դեռ չի կարող տալ:

Մտնում է մի սուրհանդակ:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Պատրաստվեք, տյարք իմ, Էդվարդը մոտ է,
Գալիս է կռվի մտադրությամբ, վճռական եղեք:

ՕՔՍՖՈՐԴ

Ես նվազագույնն այլ կերպ չեմ խորհել,
Նա շտապում է, որպեսզի բռնի մեզ հանկարծակի:

ՍՈՄԵՐՍԵՏ

Բայց սխալվում է, մենք պատրաստ ենք արդ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Սիրտս լցնում է ձեր եռանդը խինդ:

ՕՔՍՖՈՐԴ

Մեր կռիվն այստեղ պետք է բռնկի,
Ուստի, մենք պետք է տեղից չշարժվենք:

Շեփորներ: Մտնում են թագավոր Էդվարդը, Կլարենսը, Գլոստերը և զորքը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Քաջամարտիկնե՛ր, կանգնած է այստեղ փշոտ անտառը,
Որ երկինքների ձեռնտվությամբ ու ձեր զորությամբ
Պետք է կտրատենք ողջ արմատները մինչև ուշ գիշեր:
Ինչու կիզանյութ ես ավելացնեմ ձեր կրակի վրա,
Երբ ես լավ գիտեմ, թե ձեր բոցն ինչպես կայրի անտառը:
Թմբուկնե՛ր զարկեք, ի՛ մարտ, իշխաննե՛ր:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Լորդե՛ր, ասպետնե՛ր, ազնվականնե՛ր,
Իմ արցունքները չեն թողնում խոսել,
Յուրաքանչյուր բառ արտասանելիս՝
Տեսնում եք, ինչպես ես կուլ եմ տալիս իմ արցունքները:
Ուստի, չեմ ասում ոչինչ ավելի, քան թե այս մեկը.
Հենրին՝ ձեր արքան, գերվել է, ավա՛ղ, թշնամու կողմից,
Հափշտակել են և նրա գահը,

Երկիրը դարձրել մի սպանդանոց,
Մորթում են նրա հպատակներին
Եվ ոտնահարում օրենքներն ամեն, գանձերը շորթում,
Արդ՝ գայլն է եկել՝ այս կողոպուտի արարիչն ստոր:
Կռվե՛ք, իշխաններ, ձեր գործն է արդար,
Դեն արիացե՛ք, շեփորներ հնչեք՝ ի նշան մարտի:

Գնում են երկու բանակները:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տյուքսբերիի հարթության մի այլ մաս:

Տագնապ: Ավարտի ազդանշան: Մտնում են թագավոր Էդվարդը, Կլարենսը, Գլոստերը և զորքը, նրանց հետ՝ գերված թագուհի Մարգարիտը, Օքսֆորդը և Սոմերսետը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Արդ վախճանն հասավ արնոտ գժտության:
2 Տարե՛ք Օքսֆորդին Հեմսի ամրոցը,
Իսկ Սոմերսետի գլուխն հանցավոր՝ թռցրեք իսկույն:
Տարեք, չեմ ուզում ոչ մեկին լսել:

ՕՔՍՖՈՐԴ

Գալով ինձ, քեզ չեմ անհանգստացնի ես ոչ մի խոսքով:

ՍՈՄԵՐՍԵՏ

Ոչ էլ ես. միլորդ: Բայց խոնարհվում եմ իմ բախտի առաջ:

Զինված պահակները տանում են Օքսֆորդին ու Սոմերսետին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այսպես տխրորեն մենք բաժանվում ենք այս չար աշխարհից,
8 Որ ուրախությամբ հանդիպենք վերին Երուսաղեմում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Հայտարարե՞լ եք արդյոք այն մասին, ով երիտասարդ
Էդվարդին գերի, նա կստանա վարձ, իսկ գերին՝ կյանքը:

ԳԼՈՍՏԵՐ

Այո՛, մեր արքա: Եվ ահավասիկ բերում են նրան:

Զինվորները բերում են արքայազն Էդվարդին:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մոտ բերեք քաջին, թողեք նա խոսի:
Մի՞թե կարող է այսքան մատղաշ փուշն այսպես ծակոտել:
Դու ի՞նչ զոհացում կարող ես մեզ տալ այն բանի համար,
Որ զենք վերցրիր և ըմբոստացրիր ժողովուրդն իմ դեմ,
Ինձ պատճառելով այսքան նեղություն:

ՌԻԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Դու պետք է խոսես հպատակի պես, ո՛վ փառամոլ Յո՛րք:
Հաշվի՛ր, որ քեզ հետ հայրս է խոսում իմ շրթունքներով:
Իջիր դու գահից, չոքիր իմ առաջ:
Ես քեզ եմ ուղղում այդ նույն բառերը,
Որոնց պատասխանն ինձանից էիր ուզում իմանալ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՜խ, երբ հայրդ քեզ նման լիներ այդպես անհողդողդ:

ԳԼՈՍՏԵՐ

23 Այն ժամանակ դու պետք է հագնեիր նորից շրջազգեստ
Եվ Լանկաստերի տաքատը բնավ չհափշտակեիր:

ՌԻԵԼՍԻ ԻՇԽԱՆ

25 Թող Եզովպոսի առակներն առնեն ձմռան գիշերին,
Այստեղ երկդիմի խոսելու վայր չէ:

ԳԼՈՍՏԵՐ

Երդվում եմ, լակո՛տ, այս խոսքիդ համար տանջամահ անել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, ծնվել ես, որ մարդկանց տանջես:

ԳԼՈՍՏԵՐ

Տարեք այստեղից չարախոս քածին:

ՌԻԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Ավելի լավ չէ՞ր չարախոս կուզիկին:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Լռիր շան լակոտ, լեզուդ կկտրեմ:

ԿԼԱՐԵՆՍ

Դու, լակո՛տ, լեզվիդ շատ ես զոռ տալիս:

ՈՒԵԼՍԻ ԻՇԽԱՆ

Ես գիտեմ պարտքս, դուք այդ չգիտեք:
Կնամոլ Էդվարդ, երդմնազանց Ջորջ,
Եվ դու, դարձվոր Դիկ, ես ձե՛զ եմ ասում.
Ես բարձր եմ ձեզնից, ո՛վ դավաճաններ,
Իսկ դո՛ւ, նենգ Էդվարդ, հափշտակել ես իմ հորս թագը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ա՛ռ քեզ, վհուկին արժանի ծնունդ:

Դաշույնով հարվածում է նրան:

ԴԼՈՍՏԵՐ

Դեռ թպրտո՞ւմ ես, ա՛ռ քեզ, որպեսզի հոգիդ տաս ընդմիշտ:

Դաշունահարում է նրան:

ԿԼԱՐԵՆՍ

Սա՛ էլ քեզ, քանզի ինձ պարսավեցիր երդմնազանցությամբ:

Դաշունահարում է նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ինձ էլ սպանեք:

ԳԼՈՍՏԵՐ

Շա՞տ կուզես, խնդրեմ:

Ուզում է դաշունահարել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Սպասի՛ր, Ռիչարդ, մենք առանց այն էլ չափն անցկացրինք:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչո՞ւ նա ապրի: Որպեսզի լցնի՞ աշխարհն իր խոսքով:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ի՞նչ: Նվաղո՞ւմ է, շուտ ուշքի բերեք:

ԴԼՈՍՏԵՐ

Կլարե՛նս, իմ եղբա՛յր և իմ թագավո՛ր,
Ներեք ինձ այժմ, կարևոր գործով մեկնում եմ Լոնդոն:
Հենց որ գաք այնտեղ՝ նոր լուրեր կառնեք:

ԿԼԱՐԵՆՍ

Ի՞նչ... Ի՞նչ... Լուրեր:

ԳԼՈՍՏԵՐ

Թաուե՛ր... Թաուե՛ր...

Գնում է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, Նե՛դ, զավա՜կս... խոսի՛ր մորդ հետ,
Չե՞ս կարող խոսել... Օ՜, դավաճաննե՛ր, մարդասպաննե՛ր:
Հուլիոս Կեսարին սպանող մարդիկ ձեր այս զազրելի գործի համեմատ
Արյուն չթափին և չանարգեցին,
Չծածկին իրենց այսքան ամոթով, ինչպես այս մարդիկ:
Նա տղամարդ էր, իսկ սա՝ երեխա:
Իսկ տղամարդիկ իրենց ցասումը բնավ չեն թափում երեխայի վրա:
Կա՞ ավելի գեշ, քան մարդասպանը: Ի՞նչ անուն տամ ձեզ:
Ո՛չ, ո՛չ, թե խոսեմ, սիրտս կպայթի:
Բայց պիտի խոսեմ, որ սիրտս պայթի:
Օ՜, մսագործնե՛ր, թշվառ դահիճնե՛ր, մարդասպաննե՛ր,
Ինչպիսի՜ քնքուշ ծաղիկ պոկեցիք ժամանակից շուտ:
Դուք, մսագործնե՜ր, չունեք երեխա ու թե ունենաք՝
Նրանք ձեր խղճի խայթը կշարժեին:
Եթե ձեզ աստված երեխա բաշխի,
Հսկեք, որ նրան չմորթեն այսպես ջահել հասակում.
Ինչպես, դահիճներ, դուք կործանեցիք իմ երեխային:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դուրս տարեք նրան այստեղից ուժով:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ինձ մի՛ տարեք, այստեղ սպանեք,
Այստեղ մարմինս պատյան դարձրու քո սրին,
Ես քեզ կներեմ իմ մահի համար:
Չե՞ս ուզում: Կլարենս, դու ինձ սպանիր:

ԿԼԱՐԵՆՍ

Երկի՜նքը վկա, ես չեմ կամենում քո վիշտն ամոքել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Սպանի՛ր, Կլարենս, իմ բարի Կլարենս:

ԿԼԱՐԵՆՍ

Մի՞թե չես լսել դու իմ երդումը, որ չեմ սպանի:

ՌԻՎԸՍԻ ԻՇԽԱՆ

Ես գիտեմ պարտքս, դուք այդ չգիտեք:
Կնամոլ էդվարդ, երդմնազանց Ջորջ,
Եվ դու, դարձվոր Դիկ, ես ձե՛զ եմ ասում,
Ես բարձր եմ ձեզնից, ո՛վ դավաճաններ,
Իսկ դո՛ւ, նենգ էդվարդ, ճափշտակել ես իմ ճորս թագը:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ա՛ռ քեզ, վնուկին արժանի ծնունդ:

Դաշույնով ճարվածում է նրան:

ԳԼՈՍՏԵՐ

Դեռ թպրտո՞ւմ ես, ա՛ռ քեզ, որպեսզի ճոգիդ տաս ընդմիշտ:

Դաշունաճարում է նրան:

ԿԼԱՐԵՆՍ

Սա՛ էլ քեզ, քանզի ինձ պարսավեցիր երդմնազանցությամբ:

Դաշունաճարում է նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ինձ էլ սպանեք:

ԳԼՈՍՏԵՐ

Շա՞տ կուզես, խնդրեմ:

Ուզում է դաշունաճարել:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Սպասի՛ր, Ռիչարդ, մենք առանց այն էլ չափն անցկացրինք:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչո՞ւ նա ապրի: Որպեսզի լցնի՞ աշխարհն իր խոսքով:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ի՞նչ: Նվաղո՞ւմ է, շուտ ուշքի բերեք:

ԳԼՈՍՏԵՐ

Կլարե՛նս, իմ եղբա՛յր և իմ թագավո՛ր,
Ներեք ինձ այժմ, կարևոր գործով մեկնում եմ Լոնդոն:
Հենց որ գաք այնտեղ՝ նոր լուրեր կառնեք:

ԿԼԱՐԵՆՍ

Ի՞նչ... Ի՞նչ... Լուրեր:

ԳԼՈՍՏԵՐ

Թաուէ՛ր... Թաուէ՛ր...

Գնում է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՜, Նե՛դ, զավա՜կս... խոսի՛ր մորդ հետ,
Չե՞ս կարող խոսել... Օ՜, դավաճաննե՛ր, մարդասպաննե՛ր:
Հուլիոս Կեսարին սպանող մարդիկ ձեր այս զազրելի գործի համեմատ
Արյուն չթափին և չանարգեցին,
Չծածկին իրենց այսքան ամոթով, ինչպես այս մարդիկ:
Նա տղամարդ էր, իսկ սա՝ երեխա:
Իսկ տղամարդիկ իրենց ցասումը բնավ չեն թափում երեխայի վրա:
Կա՞ ավելի գեշ, քան մարդասպանը: Ի՞նչ անուն տամ ձեզ:
Ո՛չ, ո՛չ, թե խոսեմ, սիրտս կպայթի:
Բայց պիտի խոսեմ, որ սիրտս պայթի:
Օ՜, մսագործնե՛ր, թշվառ դահիճնե՛ր, մարդասպաննե՛ր,
Ինչպիսի՜ քնքուշ ծաղիկ պոկեցիք ժամանակից շուտ:
Դուք, մսագործնե՜ր, չունեք երեխա ու թե ունենաք՝
Նրանք ձեր խղճի խայթը կշարժեին:
Եթե ձեզ աստված երեխա բաշխի,
Հսկեք, որ նրան չմորթեն այսպես ջահել հասակում.
Ինչպես, դահիճներ, դուք կործանեցիք իմ երեխային:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Դուրս տարեք նրան այստեղից ուժով:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ինձ մի՛ տարեք, այստեղ սպանեք,
Այստեղ մարմինս պատյան դարձրու քո սրին,
Ես քեզ կներեմ իմ մահի համար:
Չե՞ս ուզում: Կլարենս, դու ինձ սպանիր:

ԿԼԱՐԵՆՍ

Երկի՜նքը վկա, ես չեմ կամենում քո վիշտն ամոքել:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Սպանի՛ր, Կլարենս, իմ բարի Կլարենս:

ԿԼԱՐԵՆՍ

Մի՞թե չես լսել դու իմ երդումը, որ չեմ սպանի:

Քան լսելիս՝ այս ողբերգական պատմությունները:
Ինչո՞ւ ես եկել, կյանքս առնելո՞ւ:

ԳԼՈՍՏԵՐ

Դու մտածում ես, որ ես դահի՞ճ եմ:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Դու հոգեառ ես, ես չեմ կասկածում,
Երթե սպանվողն անմեղ մանկիկ է,
Ուրեմն, Գլոստեր, դու և՛ դահիճ ես:

ԳԼՈՍՏԵՐ

Ես սպանեցի քո որդուն, քանզի շատ էր հանդուգն:

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Երթե, Գլոստեր, քեզ սպանեին, երբ հանդգնեցիր առաջին անգամ,
Դու չէիր ապրի. որ սպանեիր անմեղ զավակիս:
Արդ գուշակում եմ. անհամար մարդիկ,
Որ դեռ չեն զգում երկյուղն իմ հոգու,
Եվ վշտահառաչ բյուր ծերունիներ, բազում այրիներ,
Որբեր լալագին, հայրեր՝ կորցրած անմեղ որդիներ,
Կանայք՝ սգացող ամուսիններին,
Որբեր, որ տեսան իրենց ծնողաց մահը վաղաժամ,
Պետք է դառնությամբ քո աշխարհ գալու պահը նզովեն:
Երբ դու ծնվեցիր, չար բուն էր վայում,
Եվ կռավում էր բվենն անողորմ, գուշակում դժնի ու անբախտ օրեր,
Եվ շներն էին ոռնում, կաղկանձում,
Պոկում էր գետնից զարհուրելի հողմն անհամար ծառեր,
Եվ ծխնելույզին ագռավն էր նստած,
Եվ շաղակրատ կաչաղակների չարագույժ երամն ճչում էր խառնեկ:
Ավելի խորունկ քո մայրը զգաց երկունքի ցավը,
Քան ուրիշ մայրեր, բայց բոլորից քիչ նա մխիթարվեց,
Քանզի այլանդակ այս ազեղ գունդր
Նման չէ այնքան լավ ծառի պտղին.
Երբ դու ծնվեցիր՝ ատամ ունեիր, սա ցույց է տալիս,
Որ աշխարհ եկար մարդկանց խածնելու, ու թե ստույգ են,
Ինչ դեռ լսել եմ, ուրեմն, Գլոստեր....

ԳԼՈՍՏԵՐ

Բավ է, այլևս չեմ ուզում լսել... Սատկի՛ր, գուշակո՛ղ...

Դաշույնով խոցում է նրան:

Սա էլ էր նույնպես կարգված իմ բախտին...

ԹԱԳԱՎՈՐ ՀԵՆՐԻ

Այո՛, դեռ ուրիշ անթիվ ոճիրներ:
Աստվա՜ծ, մեղքերիս թողություն արա և ներիր նրան:

Մեռնում է․

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ: Լանկաստերի գոռոզ արյունը հողն է ներծծում.
Ես կարծում էի պիտ ելնի երկինք:
Նայի՛ր, ինչպես է իմ սուրը ողբում արքայի մահը:
Օ՜, թող այսպիսի կարմիր արցունքներ հեղվեն նրանցից,
Ովքեր ուզում են մեր տունն ավերել:
Եթե քո մեջ կա դեռ կյանքի նշույլ՝
Գնա՛ դու դժոխք և ասա, որ քեզ ե՛ս եմ ուղարկել,

Նորից խոցում է:

Ես չունեմ ո՛չ տեր, ո՛չ խղճմտանք, և ո՛չ էլ սարսափ:
Իրավ, ստո՞ւյգ է, ինչ ասաց Հենրին.
Հաճախ եմ լսել՝ ինձ մայրս էր ասում,
Առաջ ոտքերս լույս աշխարհ եկան:
Ինձ հարկավոր էր այսպես շտապել.
Կործանել նրանց, ովքեր խլեցին մեր իրավունքը:
Մանկաբարձուհին խիստ զարմացել էր,
Իսկ կանայք, կանայք բղավում էին՝
«Հիսո՜ւս, խափանի՛ր, ծնվեց ատամով»:
Հենց այդպես էի: Սա ցույց է տալիս,
Որ ես շան նման պետք է խածնեի ու գռմռայի:
Եթե երկինքն ինձ աշխարհ է բերել տգեղ մարմնով,
Թող այլանդակի դժոխքն իմ ոգին նրա համեմատ,
Ես եղբայր չունեմ, սրտիս մեջ չկա եղբոր զգացում,
Եվ թող այդ սերը, որ մորուքավոր այրերն են կոչում
Աստվածային հուր, ապրի ոչ թե իմ, այլ մարդկանց սրտում,
Ովքեր իրարու նման են իրա՛վ: Ես միայնակ եմ,
Զգո՜ւյշ, Կլարենս, դու պատվարում ես լույսն իմ առջևի.
Բայց կպատրաստեմ ես քո սև օրը,
Քանզի այնպիսի կանխագուշակում պետք է շշնջամ,

Որ, իրա՛վ, Էդվարդն իր կյանքից սոսկա։
Որպեսզի վանի սարսափն իրենից՝
Ես պիտի դառնամ քո մահը ահեղ։
Թագավոր Հենրին ու նրա որդին այլևս չկան,
Հերթը, Կլարենս, քոնն է, և այլոց։
Ես փոքրիկ կայծ եմ, բայց կդառնամ բոց։
Ես քարշ եմ տալիս դիակդ այստեղից
Եվ քո սև օրով ցնծում եմ նորից։

Գնում է, քարշ տալով դիակը։

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Լոնդոն։ Մի դահլիճ պալատում։

Մտնում են թագավոր Էդվարդը, թագուհի Եղիսաբեթը, Կլարենսը, Գլոստերը, Հեստինգսը, դայակը՝ փոքրիկ արքայազնը գրկում, և շքախումբը։

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Բազմում ենք դարձյալ գահին արքունի,
Որ նորից գնվեց թշնամու արյամբ։
Ինչ թշնամական ցանել զինվորներ,
Որ փթթում էին իրենց կատարյալ մեծամտությամբ,
Հնձեցինք աշնան ցորենի նման։
Երեք Սոմերսետ, երիցս անվանի խիզախ մարտիկներ,
Երկու Կլիֆորդ՝ հայրն ու զավակը և երկու անվախ
Նորթեմբերլենդներ, որոնց նման ցարդ
Ձի չի խթանել փող հնչեցնելիս և ոչ մի ասպետ։
Նրանց հետ երկու քաջասիրտ արջեր՝
Մարկիզ Մոնտեգյուն ու կոմս Վորվիկը,
Որ շղթայեցին առյուծն արքունի
Եվ ստիպեցին իրենց ոռնոցով անտառն երերալ.
Այսպես վանեցինք մեզ շրջապատող ամեն կասկածանք,
Անվտանգությունն եղավ մեր գահի ոտնահենակը։
Մո՛տ արի, իմ Բես, թույլ տուր համբուրել փոքրիկ մանչուկիս։
Չէ՞ որ քեզ համար, իմ պատանի Նեդ, քո հորեղբայրը
Եվ ես՝ քո հայրը ձմռան գիշերին զենքեր կրեցինք,
Տրորեցինք հողն ամռան բարկ շոգին,
Որպեսզի իշխես դու խաղաղությամբ
Եվ հնձես բերքը մեր աշխատանքի։

ԳԼՈՍՏԵՐ

(Առանձին) Ես պետք է նրա հունձը խորշակեմ, երբ դու գլուխդ
Մի օր վայր դնես, քանզի դեռ կյանքում կարևոր դեմք չեմ.
Ինձ ուս է տրված ծանր բեռ կրելու,
Ես պետք է կրեմ կամ մեջքս ջարդեմ:
Դու ցույց տվեցիր ինձ ճանապարհը, դու էլ՝ կատարիր:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Կլարենս ու Գլոստեր ես ձեզ խնդրում եմ, սիրեք թագուհուն
Եվ արքայական ձեր եղբորորդուն համբուրեք, եղբա՛յրք:

ԿԼԱՐԵՆՍ

Հպատակություն իմ տիրոջ հանդեպ սրբազան պարտք է:
Այս քնքուշ մանկան շուրթերի վրա համբույրս եմ դրոշմում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Շնորհակալությո՜ւն, փառապանծ Կլարենս.
Իմ ազնիվ եղբա՛յր, շնորհակալությո՛ւն:

ԳԼՈՍՏԵՐ

Այն ծառն եմ սիրում, որի ճյուղն ես դու,
Որպես ապացույց ես համբուրում եմ պտուղը նրա:

Առանձին:

Ճշմարիտն ասած, այսպես համբուրեց Հուդան Հիսուսին
Ասաց՝ բարյավ կաց, բայց չարությունը թաքցրեց հոգում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Արդ ես հոգեկան հաճույքների մեջ թագավորում եմ.
Երկիրս է խաղաղ ու վայելում եմ սերն եղբայրներիս:

ԿԼԱՐԵՆՍ

Ձերդ մեծություն, մենք ի՞նչպես վարվենք Մարգարիտի հետ:
Նրա հայրը՝ Ռենեն, Լյուդովիկոսին գրավ է տվել
Երուսաղեմը Սիցիլիայի հետ:
Նրա փրկագինն ուղարկել են արդ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Նրան այստեղից քշեք Ֆրանսիա: Ի՞նչ է մեզ մնում,
Եթե ոչ միայն ժամանակ վատնել նոր հանդեսներում

Եվ ուրախանալ խիստ ծիծաղաշարժ տեսարաններով,
Ինչպես վայել է թագավորական զվարճանքներին:
Հնչե՛ք շեփորներ, զարկե՛ք թմբուկներ,
Մնացե՛ք բարյավ, օրեր դառնագին,
Բացվում է այգը մեր Նրանավետ ու անամպ կյանքին:

Գնում են:

Վորվիկի դղյակը

Գործ՝ Ա. Պիթերի և Վ. Բերչի

Հենրի Վեցերորդի թագադրությունը Ֆրանսիայում

ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԴ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԷԴՎԱՐԴ ՉՈՐՐՈՐԴ թագավորը

ԷԴՎԱՐԴ, Վալեսի իշխան } թագավորի որդիները
ՌԻՉԱՐԴ, Յորքի դուքսը

ԳԵՈՐԳ, դուքս Կլարենս } թագավորի եղբայրները
ՌԻՉԱՐԴ, դուքս Գլոստեր, հետագայում Ռիչարդ Երրորդ թագավորը

ԿԼԱՐԵՆՍԻ մանուկ որդին
ՀԵՆՐԻ, կոմս Ռիչմոնդ, հետագայում Հենրի Յոթերորդ թագավորը
ԿԱՐԴԻՆԱԼ ԲՈՒՐՉԵՐ, Քենտրբերու արքեպիսկոպոսը
ԹՈՄԱՍ ՌՈԹՐԵՄ, Յորքի արքեպիսկոպոսը
ՋՈՆ ՄՈՐՏՈՆ, Իլու եպիսկոպոսը
ԴՈՒՔՍ ԲՈՒԿԻՆԳԵՄ
ԴՈՒՔՍ ՆՈՐՖՈԼԿ
ԿՈՄՍ ՍՈՒՌԻ, սրա որդին
ԿՈՄՍ ՌԻՎԵՐՍ, Եղիսաբեթ թագուհու եղբայրը

ՄԱՐԿԻԶ ԴՈՐՍԵՏ } Եղիսաբեթի որդիները
ԼՈՐԴ ԳՐԵ

ԿՈՄՍ ՕՔՍՖՈՐԴ
ԼՈՐԴ ՀԵՍՏԻՆԳՍ
ԼՈՐԴ ՍՏԵՆԼԻ, որ կոչվում է նաև կոմս Դերբի
ԼՈՐԴ ԼՈՎԵԼ
ԹՈՄԱՍ ՎՈԳԵՆ
ՌԻՉԱՐԴ ՌԵՏԿԼԻՖ
ՎԻԼՅԱՄ ՔԵՏՍԲԻ
ՋԵՄՍ ՏԻՌԵԼ
ՋԵՄՍ ԲԼԱՆՏ
ՎԱԼՏԵՐ ՀԵՐԲԵՐՏ
ՌՈԲԵՐՏ ԲՐԱԿԵՆԲԵՐԻ, Բերդի պահապանը
ՔՐԻՍՏԱՓՈՐ ԷՐՍՎԻՔ, մի քահանա
ՄԻ ԱՅԼ ՔԱՀԱՆԱ
ԼՈՆԴՈՆԻ ԼՈՐԴ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ
ՎԻԼՏՇԻՐԻ ՇԵՐԻՖԸ
ՏՐԵՍԵԼ ԵՎ ԲԵՐԿԼԻ, որ սպասարկում են լեդի Աննային
ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ, Էդվարդ Չորրորդ թագավորի կինը
ՄԱՐԳԱՐԻՏ, Հենրի Վեցերորդ թագավորի այրին
ՅՈՐՔԻ ԴՔՍՈՒՀԻՆ, Էդվարդ Չորրորդ թագավորի, Կլարենսի և Գլոստերի մայրը

ԼԵԴԻ ԱՆՆԱ, Հենրի Վեցերորդ թագավորի որդի՝ Վալեսի իշխան Էդվարդի այրին, վերջում ամուսնանում է Ռիչարդ Երրորդ թագավորի հետ։
ԿԼԱՐԵՆՍԻ ԴԵՌԱՏԻ ԴՈՒՍՏՐԸ (Մարգարիտ Պլանտագենետ)

Լորդեր, պալատականներ, մի մունետիկ, մի գրագիր, քաղաքացիներ, ոճրագործներ, սուրհանդակներ, զինվորներ և ուրիշներ։ Ռիչարդ Երրորդի սպանած մարդկանց ուրվականները։

Գործողության վայրը՝ Անգլիա։

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Մի փողոց:

Մտնում է Ռիչարդը՝ դուքս Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Մեր դժկամության ձմեռը այժմ
Փառավոր ամառ բերեց մեզ համար յորքյան արևով,
Եվ սև թխպերը, որ կախված էին մեր երկրի վրա,
Օվկիանի խորը կրծքում թաղվեցին:
Մեր ճակատները զուգված են հիմա դափնեպսակով,
Մեր ասպազենը կախված է պատից իբրև հուշարձան:
Ռազմի փողերի ահեղ թնդյունը տեղի է տվել զվարթ ծիծաղին,
Եվ մեր սոսկալի զորաշարժերը՝ ցնծագին պարի:
Գոռ պատերազմը ողորկել է իր կնճռոտ ճակատը:
Այժմ փոխանակ հեծնելու նժույգն իր զինավառյալ,
Ի սարսափ երկչոտ թշնամիների,
Նա կաքավում է սիրած քամբիշի մենասենյակում՝
Վինի վավաշոտ հնչյունների տակ:
Իսկ ես, որ բնավ ստեղծված չեմ այդ սին խաղերի համար,
Ոչ էլ տարփավոր մի հայելու հետ սիրաբանելու.
Ես, որ կոպիտ եմ իմ երևույթով
Եվ անկարող եմ սիրո գերագույն ոլորտների մեջ
Ճախրել հեշտասեր հավերժահարսի ընթացքից առաջ,
Ես, որ զրկված եմ այս երանելի դաշնակությունից
Եվ նենգ բնության կողմից խաբարված,
Տձև եմ, թերի և իմ ժամից վաղ

Նետված այս ցավոտ աշխարհի վրա՝ հազիվ կիսաշեն,
Եվ այն աստիճան կաղ ու այլաձև,
Որ ինձ տեսնելիս շներն անգամ հաչում են վրաս:
Ինչո՞ւ ես այս մեղկ ուրախության մեջ
Հաճույք չունեմ զվարճանալու,
Սոսկ արևի տակ ստվերս եմ դիտում
Եվ ճառաբանում խեղությանս վրա:
Արդ, քանի որ ես ի վիճակի չեմ իբրև սիրահար
Վայելք քաղելու այս պերճ օրերի զվարճանքներից,
Վճռել եմ ատել ես այդ օրերի հեզ հաճույքները
Եվ նետվել դժնի ոճիրների մեջ:
Դավեր եմ լարել, գործեր վտանգավոր,
Հարբած գուշակներով, ամբաստանությամբ և երազներով
Ինձ հաջողվել է եղբայր Կլարենսի և արքայի միջև
Ահեղ քեն նյութել:
Եվ եթե արքա Էդվարդը լինի նույնքան ուղղամիտ
Եվ հավատարիմ,
Որքան ես եմ նենգ, խարդախ, ուխտադրուժ,
40 Այսօր Կլարենսը Բերդ պիտի տարվի,
Այն գուշակությամբ, որն ասում է, թե
42 «Գ» տառն է հիմքից բնաջնջելու Էդվարդի տոհմը:
Սուզվե՛ք, խորհուրդներ, հատակն իմ հոգու.
Կլարե՜նսն է գալիս:

Մտնում են Կլարենսը՝ զինված պահապաններով և Բրակենբերին:

Բարի օր, եղբայր. այս ի՞նչ զինավառ պահակախումբ է
Սպասարկում քեզ:

ԿԼԱՐԵՆՍ

Վեհափառ արքան
Հոգալով անձիս պաշտպանությունը,
Վրաս է կարգել այս շքախումբը, որ ինձ Բերդ տանեն:

ԳԼՈՍՏԵՐ

Պատճա՞ռը:

ԿԼԱՐԵՆՍ

Անունս Գեորգ է:

ԳԼՈՍՏԸՐ

Ավա՜ղ, խե՛ղճ եղբայր, այդ քո մեղքը չէ:
Նա դրա համար պետք է բանտ նետի կնքահայրերին:
Միգուցե արքան մտադրվել է
Քեզ վերակնքել Միջնաբերդի մեջ:
Իսկապես, ասա, պատճառը ի՞նչ է:

ԿԼԱՐԵՆՍ

Ի՞նչ ասեմ, Ռիչարդ, երբ ինքս էլ չգիտեմ.
Արքան հայտնի է,
Նա ունկնդիր է կանխասացներին և տեսիլներին.
Այբուբենից ջնջել է նա մեր «Գ» տառը:
Ասում է՝ մի վհուկ պատմել է իրեն, իբր այդ գիրը
Նրա սերնդին զրկելու է գահից.
Որովհետև իմ անունը Գևորգ է,
Ուստի կարծում է՝ ինքս եմ այդ մարդը:
Սրանք, որքան գիտեմ, և սրա նման աննշան բաներ
Դրդել են նրան ինձ Բերդ նետելու:

ԳԼՈՍՏԸՐ

Այդպես է լինում, երբ որ կանայք են իշխում այրերին:
Թագավորը չէ՛ քեզ Բերդ ուղարկում:
Այդ լեդի Գրեյը՝ նրա տիկինն է, իմ խե՛ղճ Կլարենս,
Մղում արքային այդ ծայր–բռնության:
Մի՞թե այդ նա չէր և այն պաշտելի
Անտոն Վուդվիլը՝ եղբայրը նրա,
Որոնք դրդեցին իշխան Հեստինգսին Միջնաբերդ նետել,
Որտեղից այսօր նա արձակված է:
Մենք ապահով չենք, ապահո՞վ չենք, Կլարե՛նս:

ԿԼԱՐԵՆՍ

Երկինքը վկա, ապահով են միայն
Թագուհու ցեղը և գիշերային մունետիկները,
Որոնք ճեպում են տիկին Շորի և արքայի միջև:
Չլսեցի՞ր ինչպես խոնարհ աղերսով
Իշխան Հեստինգսը դիմեց թագուհուն փրկության համար:

ԳԼՈՍՏԸՐ

Այդպես աղաչելով
Լորդ սենեկապետը ազատ արձակվեց:

Մեզ համար կարծեմ հեշտ ուղին այս է.
Եթե ուզում ենք մեր թագավորի սերը վայելել,
Եվ ծառայության մտնենք Շոռի մոտ,
Հագնելով նրա նշանազգեստը:
Այն խանդոտ, լքյալ այրին և Շոռը
Այն պահից, որ մեր եղբայրը նրանց մեծուհի դարձրեց,
Ամենակարող սանամայրերն են այս կայսրության մեջ:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ներեցե՜ք, դուքսե՛ր,
Արքան խստորեն պատվիրել է ինձ,
Որ իր եղբոր հետ չի թույլատրվում գաղտնի զրուցել,
Ով կուզե լինի:

ԳԼՈՍՏԵՐ

Եթե հաճո է ձեզ, սըր Բրակենբերի,
Կարող եք մասնակցել դուք մեր զրույցին.
Մենք դավ չենք հյուսում: Ասում ենք միայն, որ թագավորը
Իմաստուն է, պարկեշտ, իսկ թագուհին թեպետ
Տարիքն առած է, բայց գեղեցիկ է, խանդոտ չէ բնավ,
Որ Շոռի կինը սիրուն ոտքեր ունի,
Կեռասի շուրթեր, արևշող հայացք, հաճելի լեզու,
Որ նրա բոլոր ազգականները ազնվական դարձան:
Այդ ամենը ճիշտ է, կարո՞ղ եք ժխտել:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ես այդ ամենի հետ գործ չունեմ, տեր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչպե՞ս, գործ չունես տիկին Շոռի հետ: Լսի՛ր, բարեկա՛մ,
Գործ չունեցողը լավ է նրա հետ գաղտնապես գործի,
Բացի մի հոգուց:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ո՞վ է այդ մեկը:

ԳԼՈՍՏԵՐ

Իր ամուսինը. դու ինձ չե՞ս դավի:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Նորից եմ խնդրում՝
Վերջ տալ զրույցին ազնիվ դքսի հետ:

ԿԼԱՐԵՆՍ

Քո պաշտոնն այդ է, հնազանդվում ենք:

ԳԼՈՍՏԵՐ

Մենք մեր թագուհու ոտքի փոշին ենք
Եվ պարտավոր ենք ենթարկվել նրան:
Մնաս բարով, եղբայր. գնամ արքայի մոտ.
Ինչ էլ հանձնարարի.— թեկուզ էդվարդի այրուն քույր գոչեմ,—
Պիտի կատարեմ, որ ազատեմ քեզ:
Այս նախատինքը, որի մեջ ես իմ եղբորն եմ տեսնում,
Այնպես ցնցեց ինձ, որ անկարող ես դու պատկերացնել:

ԿԼԱՐԵՆՍ

Գիտեմ, տհաճ է երկուսիս համար:

ԳԼՈՍՏԵՐ

Երկար չես նստի.
Ես քեզ կազատեմ կամ քո փոխարեն ինքս բերդ կերթամ,
Մինչ այդ՝ համբերիր:

ԿԼԱՐԵՆՍ

Պետք է համբերեմ, դե՛, մնաս բարով:

Կլարենսը. Բրակենբերին և պահապանները գնում են:

ԳԼՈՍՏԵՐ

Գնա և կոխիր այն արահետը, որով այլևս դու ետ չես դառնա:
Միամի՛տ Կլարենս: Քեզ այնքան եմ սիրում,
Որ հոգիդ իսկույն կուղարկեմ երկինք,
Երբ երկինքը մեր բազուկների ընծան ընդունի:
Բայց ո՞վ է գալիս. մի՞թե Հեստինգսն է՝ բերդից նոր ելած:

Մտնում է Հեստինգսը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ա՜, բարի օր ձեզ, ողորմած տեր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Նմանապես ձեզ, լորդ սենեկապետ:
Ուրախ եմ, որ դուք ազատ օդ ելաք,
Ինչպե՞ս տոկացիք բանտարկությունը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Համբերությամբ, տեր իմ, ինչպես վայել է բանտարկյալներին.
Բայց պիտի այրեմ՝ հատուցելու նրանց,
Որ պատճառ եղան իմ բանտարկության:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ անկասկած է, այդ անկասկած է:
Այդպես էլ պետք է Կլարենսն անի,
Զի հո թշնամիք թշնամիքն են նրա
Եվ նույն դավերն են նրա դեմ լարել:

ՀԵՍՏԻՆԳՍ

Անավոր ցավ է, երբ որ արծիվն է տանջվում վանդակում,
Իսկ ցին ու բազեն որս են հոշոտում ազատության մեջ:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ լուր երկրից դուրս:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ներսի լուրերը ավելի վատ են:
Արքան հիվանդ է, տկար է, թախծոտ,
Իր բժիշկները տագնապի մեջ են:

ԳԼՈՍՏԵՐ

Սուրբ Պողոսը վկա, այդ լուրը վատ է:
Երկար ժամանակ նա զուսպ է սնվել,
Իր արքա անձը սաստիկ հյուծված է,
Շատ վշտալի է խորհել այդ մասին:
Ինչպե՞ս, պառկա՞ծ է:

ՀԵՍՏԻՆԳՍ

Պառկած է, այո՛:

ԳԼՈՍՏԵՐ

Դու գնա իր մոտ, ես հիմա կգամ:

Հեստինգսը գնում է:

Հուսով եմ՝ չի ապրի. և չի մեռնելու
Մինչև Գևորգը երկինք չուղարկվի ճեպընթաց կառքով:
Այժմ ներս գնամ

Սատկացնեմ նրա ատելությունը Կլարենսի դեմ
Կարճ սուտով, զորեղ փաստերով.
Եթե միտումս հաջող գլուխ գա,
Կլարենսը մինչև վաղը չի ապրի,
Դրանից հետո թող աստվածն էդվարդ արքային գթա,
Եվ այս աշխարհը ազատ թողնի գործերիս համար...
Վորվիկի կրտսեր դստերը կառնեմ.
Ի՞նչ փույթ, թե ես եմ նրա ամուսնուն և հորն սպանել:
Հեշտ հաշտվելու ճիշտ ուղին այս է,
Որ ամուսին ու հայր դառնամ նրան:
Եվ պիտի դառնամ. ոչ այնքան մղված նրան սիրելուց,
Որքան մի գաղտնի, թաքուն միտումից,
Որին կհասնեմ այդ ամուսնությամբ:
Բայց ես իմ ձիուց առաջ եմ թռչում.
Կլարենսը դեռ ապրում է, շնչում,
Իսկ էդվարդը դեռ կրում է թագը,
Երբ նրանք չքվեն, այնժամ կհաշվեմ նշգրիտ վաստակը:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Նույն վայրը: Մի ուրիշ փողոց:

Բերում են Հենրի Վեցերորդ թագավորի դին՝ բաց դագաղով, զենքերդակիրների հսկողությամբ: Լեդի Աննան ողբալով գնում է դագաղի հետևից: Նրա հետ են Տրեսելը և Բերկլին:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Վայր դրե՛ք, վայր դրե՛ք բեռն այդ պատվական,
Եթե պատիվը կարող է թաքնվել մի դագաղի մեջ,
Որպեսզի մի պահ դառնագին ողբամ
Վաղաժամ ընկած և առաքինի այդ զոհի վրա:
Սուրբ թագավորի ցրտացած պատկեր,
Լանկաստերյան տան գունաթափ մոխիր,
Անարյուն բեկոր արքունի արյան,
Թող հոգուդ համար օրինական լինի
Թշվառ Աննայի ողբերը լսել,
Կնոջն էդվարդի՝ տարաբախտ որդուդ,

Որին սպանել է քեզ սպանող ձեռքը:
Այս լուսանցքներում՝ ուսկից կյանքդ բռավ,
Ահա ցողում եմ բշվառ աչքերիս բալասանն անզոր:
Նզովք այն ձեռքին, որ այս ահավոր անցքերը բացեց,
Նզովք այն սրտին, որ սիրտ ունեցավ ոճիրն այս գործել,
Նզովք այն արյան, որ այս արքայուն արյունը ոքեց:
Թող այդ անիծյալ չարագործի գլխին,
Որ թշվառացրեց մեզ քո կործանմամբ, պայթի մի չարիք,
Որ չեմ ցանկանում անգամ իժերին, սարդին, դոդոշին
Կամ թե որևէ ժահրոտ սողունի:
Եթե երբևէ զավակ ունենա, թող այդ զավակը լինի թերածին,
Անճոռնի՛, տձև և օրապակաս,
Որի զարշելի այլանդակ տեսքից
Հուսալից մայրը ահից սարսափի վրան նայելիս:
Հոր անբախտությունը թող նա ժառանգի:
Թե կին ունեցավ՝ թող նրա կինը
Առավել դժբախտ դառնա նրա մահով,
Քան ինքս եմ դժբախտ մատաղ ամուսնուս և քո անկումով:
Վերցրեք ձեր սուրբ բեռը, դեպի Չերտսի երթանք,
Սուրբ Պողոսից տանենք և հանձնենք հողին.
Եթե նորից հոգնեք այդ ծանրության ներքո,
Դագաղը վայր առեք, որ ողբամ Հենրի արքայի վրա:

Նրանք բարձրացնում են դագաղը և առաջանում են մի քանի քայլ:

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Կացե՛ք, դիակիրներ, դագաղը ցա՛ծ դրեք:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ի՞նչ ժանտ կախարդ է այս դևին կոչել,
Որ մեր արքայան ծեսը խափանի:

ԳԼՈՍՏԵՐ

Վայր դրեք դիակը, դուք, անզգամնե՛ր. վկա սուրբ Պողոս,
Դիակ կդարձնեմ՝ ով տեղից շարժվեց:

Ա ԱԶՆՎԱԿԱՆ

Ետ քաշվեք, տեր իմ, թողեք դագաղն անցնի:

ԳԼՈՍՏԵՐ

Է՜յ, կատաղած շուն, հրամայում եմ, ուրեմն կանգ առ:
Փորձիր բարձրացնել դու քո գեղարդը իմ կրծքից վերև,
Վկա սուրբ Պողոս, գետնին զարկելով,
Ես քեզ կճզմեմ իմ ոտքերի տակ, զռռնելի հանդուգն:

Դագաղը վայր են դնում:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ի՞նչ, դուք դողո՞ւմ եք, արդեն վախեցա՞ք:
Չեմ պարսավում ձեզ, չէ որ ամենքդ էլ մահկանացու եք,
Իսկ մահկանացու աչքերը դևին չեն կարող տոկալ:
Չքվի՛ր այստեղից, դու ժանտ դժոխքի ահեղ գործակալ,
Դու իշխում էիր նրա մահացու այս մարմնի վրա,
Իսկ նրա հոգուն իշխել չես կարող, ուստի հեռացի՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

Չքնաղ սրբուհի, ի սեր գթության, մի՛ լինիր դաժան:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դու զարշելի դև, ի սեր աստծո, չքվիր մեր մոտից
Եվ մի՛ տանջիր մեզ,
Քանզի երջանիկ մեր այս աշխարհը դժոխք ես դարձնում,
Լի ժանտ ճիչերով ու հառաչներով:
Եթե բերկրանք է քո հրեշավոր արարքը դիտել,
Նայիր արյունոտ գործիդ նմուշին:
Տեսեք, պարոննե՛ր, օ, տեսե՜ք, տեսե՜ք,
Մեռած արքայի սառած վերքերը
58 Բացելով իրենց մունջ բերանները՝ արյուն են ծորում:
Ամաչի՜ր, կարմրի՜ր, զարշ տձևության դու սոսկալի կույտ,
Երբ դու մոտեցար, արյունն սկսեց
Ժայթքել անազորկ այս երակներից, որ պա՜ղ են, դատա՜րկ:
Արարքդ վայրագ և արտասովոր
Խիստ արտասովոր այս մեծ հեղեղի պատճառը դարձավ:
Ո՜վ դու, այս արյան արարիչ աստված, վրեժխնդիր եղիր,
Հո՜ղ, որ ըմպում ես այս սուրբ արյունը, վրեժխնդիր եղիր.
Ո՜վ երկի՜նք, շանթիր դու ոճրագործին,
Հո՜ղ, բա՛ց երախդ և լափիր նրան,
Ինչպես լափեցիր արյունը բարի այս թագավորի,
Որ նրա դժխեմ բազուկը ոթեց:

ԳԼՈՍՏԵՐ

Չարը բարությամբ, անեծքն օրհնությամբ
Հատուցիր, տիկին, հայտնի կանոն է:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Իսկ դու, անզգամ, ստոր և մարդու
Ամենայն կանոն ոտնակոխ արիր,
Գազանը նույնիսկ քեզնից գթոտ է:

ԳԼՈՍՏԵՐ

Ես զուրկ եմ գթից, ուստի գազան չեմ:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Խիստ հրաշք բան է, երբ որ դևերը ուղիղ են խոսում

ԳԼՈՍՏԵՐ

Բայց գերհրաշք է, երբ բարկանում են հրեշտակները:
Աստվածեղեն կի՞ն, թույլ տուր կարծեցյալ այդ ոճիրները
Վանեմ ինձանից, ինչպես որ հարկն է, և արդարանամ:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Թույլ տուր, այր մարդու զազրելի վարակ,
Որ այդ հանրահայտ մեղքերիդ համար
Նզովեմ ես քո անձը նզովյալ:

ԳԼՈՍՏԵՐ

Ավելի չքնաղ, քան թե կարող է լեզուն քեզ կոչել,
Ինձ ազատ ժամ տուր արդարանալու:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ավելի զազիր, քան թե կարող է սիրտը քեզ կարծել,
Արդարանալու լոկ մի միջոց կա. որ դու քեզ կախես:

ԳԼՈՍՏԵՐ

Ես այդ հուսահատ քայլին դիմելով՝ ինձ կամբաստանեմ:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Այդպես վարվելով դու գուցե ներվես,
Մի արժանավոր վրեժ լուծելով ինքդ քո հանդեպ,
Դու, որ անարժան սպանդ սարքեցիր այլոց նկատմամբ:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ եթե նրանց ես չեմ սպանե՞լ:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ուրեմն՝ ողջ են:
Սակայն մեռած են, դիվային սարուկ, և քո՛ ձեռքերով:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց քո ամուսնուն ես չեմ սպանել:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ուրեմն՝ ողջ է:

ԳԼՈՍՏԵՐ

Ոչ, նա մեռած է. էդվարդն է սպանել:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դու ստում ես, դև, քո պիղծ կոկորդով. Մարգարիտ թագուհին
Տեսել է ոճրագործ թուրդ ծխալիս նրա արյան մեջ,
Չենքդ ճոճել ես նրա կրծքի դեմ,
Բայց եղբայրներդ խափանել են այն:

ԳԼՈՍՏԵՐ

Մեղքը իրենն էր, զրպարտիչ լեզվով
Նրանց հանցանքը բարդում էր անմեղ ուսերիս վրա:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Քեզ գրգռել էր միայն արյունռուշտ,
Որ բացի ոճրից դեռ չի երազել ուրիշ ոչ մի բան:
Դո՞ւ չես սպանել այս թագավորին:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, այդպես է:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դու համաձա՞յն ես, գարշելի ոզնի.
Արդ աստվածն էլ թող համաձայն լինի,
Որ դու անիծյալ լինես այդ ստոր արարքիդ համար:
Օ՜, նա ազնիվ էր, առաքինի՜, հե՜զ:

ԳԼՈՍՏԵՐ

Աստծո աչքը լույս, դրախտ կգնա:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Նա դրախտումն է, որտեղ դու բնավ մուտք չես գործելու:

ԳԼՈՍՏԵՐ

Թող փառք տա, որ ես իրեն օգնեցի այնտեղ մեկնելու,
Նա պիտանի է այնտեղ ավելի, քան երկրի վրա:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Իսկ դու հարմար չես և ոչ մի տեղի, բացի դժոխքից:

ԳԼՈՍՏԵՐ

Մի այլ տեղ էլ կա, թե կամիս լսել:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Որևէ զնդան:

ԳԼՈՍՏԵՐ

Քո ննջարանը:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Քո պառկած տունը սատանի բույն է:

ԳԼՈՍՏԵՐ

Այդպես կլինի, քանի տակավին քեզ հետ չեմ պառկել:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Այդ հույսով մնա:

ԳԼՈՍՏԵՐ

Ես այդպես գիտեմ: Բայց, ազնիվ Աննա,
Վերջ տանք մտքերի այս սուր բախմանը
Եվ անցնենք խոսքի խոհեմ մեթոդին:
Մի՞թե այն մարդը, որ պատճառ դարձավ
121 Պլանտագենետ Հենրի արքայի,
Նաև Էդվարդի տարաժամ մահվան,
Նրանց սպանող ոճրագործի չափ պարսավելի է:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դու ես պատճառը և ոճրագործը:

ԳԼՈՍՏԵՐ

Գեղեցկությունդ է այդ սպանության դրդապատճառը,
Գեղեցկությունդ, որ խափանում էր աչքերիս քունը,
Որպեսզի համայն աշխարհը մեռցնեմ՝
Կրծքիդ գեթ մեկ ժամ հանգչելու համար:

Ռիչարդ Երրորդ



Վեստմինստերի աբբայության տեսքը հյուսիսից

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Թե ճավատայի խոսքիդ, մարդասպան,
Այս եղունգներով կայլանդակեի սիրուն այտերս:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ այս աչքերը չէին դիմանա այդ ավերումին,
Չէիր ճանդգնի դու այն եղծանել, երբ ես ներկա եմ:
Ինչպես աշխարհն է արևով ճրճվում,
Այդպես էլ ես եմ քո փայլով շնչում:
Այդ է իմ միակ արևն ու կյանքը:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ժանտ գիշերը թող քո լույսը մարի, իսկ մահը՝ կյանքդ:

ԳԼՈՍՏԵՐ

Մի նզովիր քեզ, չքնաղ արարած, երկուսն էլ դու ես:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Որ այդ երկուսով ես վրեժխնդիր լինեի քեզնից:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ մի կռիվ է խիստ անբնական —
Վրեժխնդիր լինել քեզ սիրող մարդուց:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Այդ մի կռիվ է, արդար, բանական,
Ամուսնու մահվան վրեժը լուծել:

ԳԼՈՍՏԵՐ

Այն մարդը, որ քեզ զրկեց ամուսնուց,
Դրանով օգնեց, որ ավելի լավ ամուսին գտնես:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Նրանից լավը չկա աշխարհում:

ԳԼՈՍՏԵՐ

Կա մեկը, տիկին, որ քեզ ավելի ուժգին է սիրում:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ո՞վ է, անվանիր:

ԳԼՈՍՏԵՐ

Պլանտագենետ:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Այդ նրա անունն է։

ԳԼՈՍՏԵՐ

Անունը նույնն է, բայց նա ավելի գերազանց մարդ է։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Իսկ որտե՞ղ է նա։

ԳԼՈՍՏԵՐ

Ահա այստեղ է։

Աննան թքում է Գլոստերի վրա։

Ինչո՞ւ ես թքում։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ափսոս, որ թուքս մահաբեր թույն չէ։

ԳԼՈՍՏԵՐ

Թույնը չի ծորել դեռ երբեք այդքան անուշ բերանից։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Թույնը ափսոս է քեզ պես զարշելի դոդոշի համար.
Հեռո՛ւ ինձանից, աչքերիս վարակ։

ԳԼՈՍՏԵՐ

Աչքերդ արդեն վարակել են ինձ։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Արքայօձի պես կուզեի շանթել քեզ մի հայացքով։

ԳԼՈՍՏԵՐ

Ուզածս էլ այդ է, որ մեկեն մեռնեմ,
Քանզի հայացքդ սպանում է ինձ կենդանի մահով։
Աչքերդ աչքս դարձրին լացի ծով,
Դեմքս պղծեցին մանկական աղի հորդուն արցունքով։
Իմ այս աչքերը, որ բնավ գութի արցունք չեն թափած,
Ոչ այն ժամանակ, երբ հայրս ու Էդվարդը հեկեկում էին,
Լսելով ախուր ողբը Ռուտլենդի,
163 Երբ Կլիֆորդը իր ահեղ սրով շամփրում էր նրան,
Ոչ էլ այն պահին, երբ խիզախ հայրդ, մի մանկան նման

Պատմում էր, թե ինչպես իմ հայրը մեռավ,
Տասնյակ անգամներ ընդհատելով այն՝ որ ողբա ու լա.
Այնքան ցավալի, որ ներկաների այտերն էին թրջվում,
Ինչպես ծառերը՝ վարար անձրևից: Այդ տրտում ժամին
Այրական աչքս արհամարհում էր մի խոնարհ արցունք:
Եվ ի՞նչ, այդ բոլոր վշտերի կողքով անտարբեր անցա,
Բայց քնքուշ տեսքիդ համար ողբալով իսպառ կուրացա:
Իմ կյանքում բնավ ես բարեկամի աղերսած չկամ,
Ոչ էլ թշնամու,
Լեզուս վարժված չէր շողոմ խոսքերի.
Սակայն ես այժմ ծարավ եմ տեսքիդ այրող թովչանքին,
Իմ գոռոզ սիրտը աղերսում է քեզ
Եվ թելադրում է լեզվիս խոսելու:

Աննան արհամարհանքով նայում է նրան:

Օ՛, մի՛ վարժեցրու շուրթերդ, տիկին, այդ ատելության,
Նրանք ստեղծված են համբույրի համար, ոչ թե բարկության:
Եթե կարող չէ քո վրեժխնդիր սիրտը ներելու,
Առ ահավասիկ այս սուրը հատու
Եվ, եթե կամիս, մխրճիր թափով այս անկեղծ կրծքում,
Եվ թող այն հոգին, որ պաշտում է քեզ, դուրս գա այնտեղից:
Տե՛ս, բա՛ց է կուրծքս քո այդ մահացու հարվածի հանդեպ,
Եվ խոնարհաբար մահ եմ աղերսում ես ծունկի իջած:

Նա բաց է անում կուրծքը, Աննան սպառնում է նրան սրով:

Ո՛չ, մի՛ վարանիր, ես եմ սպանել Հենրի արքային,
Գեղեցկությունդ ինձ դրդեց դրան:
Արա՛գ վերջացրու. ջահել Էդվարդին ե՛ս խողխողեցի.
Բայց պատճառը քո երկնային տեսքն էր:

Աննան վայր է նետում սուրը:

Բարձրացրու սուրը կամ ինձ բարձրացրու:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Վեր կաց, կեղծավոր, թեև քո մահը սաստիկ ուզում եմ,
Բայց քո դահիճը ինքս չեմ լինի:

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն՝ հրամայիր, որ վերջ տամ կյանքիս:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Արդեն ասել եմ։

ԳԼՈՍՏԵՐ

Դու այդ ասացիր բարկության պահին.
Վերստին ասա և անմիջապես
Քո սիրո համար քո սիրեցյալին սպանող ձեռքը
Ավելի անկեղծ մի սեր կսպանի հանուն քո սիրո,
Երկուսխս մահվան պատճառը դարձիր։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Գեթ գիտենայի՝ ինչ կա քո սրտում։

ԳԼՈՍՏԵՐ

Սրտիս պատկերը լեզվիս վրա է։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Երկուսն էլ կեղծ են։

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն՝ ոչ ոք անկեղծ չի եղել։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Սուրդ պատյան դիր։

ԳԼՈՍՏԵՐ

Արդյոք հաշտվեցի՞նք։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Հետո կիմանաս։

ԳԼՈՍՏԵՐ

Բայց ապրե՞մ հույսով։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Բոլորն, հուսով եմ, այդպես են ապրում։

ԳԼՈՍՏԵՐ

Առ այս մատանին։

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Վերցնելը՝ տալ չէ։

ԳԼՈՍՏԵՐ

Լավ նստեց մատիդ:
Այդպես քո կուրծքն է ներփակում սիրտս:
Երկուսն էլ կրիր, երկուսն էլ քոնն են:
Եվ եթե թույլ տաս, որ թշվառ ծառադ
Քո բարի ձեռքից մի շնորհ խնդրի,
Հավետ բախտավոր կդարձնես նրան:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ի՞նչ է բաղձանքդ:

ԳԼՈՍՏԵՐ

Այս տրտում ծեսը թող նա կատարի,
Ով սգավոր է քեզնից առավել,
219 Իսկ դու Կրոսբի պալատն շտապիր.
Ես Չերտսի վանքում ազնիվ արքային
Պատշաճ հանդեսով հողին հանձնելուց
Եվ գերեզմանը զղջման արցունքով ցողելուց հետո,
Ամենափութկոտ պատրաստակամությամբ կդառնամ քեզ մոտ:
Շատ պատճառներով, որ խիստ գաղտնի են, աղաչում եմ քեզ,
Այդ շնորհն անել:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Իմ ամբողջ սրտով: Անչափ ուրախ եմ,
Որ դու զղջում ես,
Տրեսել և Բերկլի, առաջնորդեք ինձ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինձ հրաժեշտ մաղթիր:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դեռ արժանի չես.
Բայց դու դաս տվիր շողոքորթության,
Համարիր, որ ես արդեն մաղթել եմ:

Լեդի Աննան. Տրեսելը և Բերկլին գնում են:

ԳԼՈՍՏԵՐ

Վերցրե՛ք դագաղը:

ԱԶՆՎԱԿԱՆՆԵՐ

Չերտսի՞ տանենք, տե՛ր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛չ, տարեք դեպի Սպիտակ աբեղա, ես շուտով կգամ:

Բոլորը գնում են. մնում է Գլոստերը:

Ո՞վ է այս ձևով սիրաբանել կնոջ,
Ո՞վ է այս ձևով հաղթահարել կնոջ:
Նա իմ ձեռքումն է. բա՛յց չեմ պահի երկար.
Ես, որ սպանեցի նրա ամուսնուն և նրա հորը,
Ինչպե՞ս կարող եմ տիրանալ նրան
Իր սրտի ահեղ ատելության մեջ,
Շուրթերին անեծք, աչքերում արցունք,
Իր ատելության արնոտ վկան կողքին,
Երբ ընդդեմ են ինձ աստված, իր խիղճը և այս նիգերը,
Իսկ ես միհատիկ բարեկամ չունեմ,
Որ կարողանամ դատս պաշտպանել,
Բացի դիվական կեղծ նայվածքներից:
Նա արդեն իմն է՝ ընդդեմ աշխարհի:
Ինչպե՞ս:
Մի՞թե նա արդեն մոռացել է իր խիզախ ամուսնուն՝
Էդվարդ իշխանին, որին ցասման մեջ
Ես սպանեցի Տեկսբուրի դաշտում երեք ամիս առաջ:
Մի գեղատեսիլ տղամարդ էր նա,
Կերտված բնության խիստ շռայլ ձեռքով,
Երիտասարդ էր, կտրիճ, իմաստուն և արքայական,
Աշխարհն անզոր է վերստին ծնել այդպիսի մեկին:
Մի՞թե նա պիտի աչքերը պղծի վրաս նայելով,
Ես, որ հնձել եմ ոսկյա ծաղիկն իր քաղցրիկ իշխանի,
Եվ նրա այրուն շինել ողբի մահիճ.
Վրաս, որ չարժեմ Էդվարդի կեսը,
Վրաս, որ կաղ եմ և այսքան տձև:
Դքսությունս վկա,
Ցարդ սխալվել եմ անձիս նկատմամբ:
Աննան գտնում է, կյանքովս եմ երդվում,
Որ ես մի պատշաճ, սքանչելի մարդ եմ.
Եկ մոտս կանչեմ երկու տասնյակ դերձակ,
Որ ըստ տարազի մարմինս պճնեն:
Քանի որ աչքիս ես դուր եմ եկել,
Եկ պահպանեմ այն մի չնչին ծախսով:

Բայց նախ այս դիակը շիրիմ իջեցնեմ,
Ապա սիրածիս մոտ դառնամ ողբով:
Շողա՛, փա՛ռ արև, մինչ նայելի գտնեմ
Եվ իմ ստվերը նրա մեջ դիտեմ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Լոնդոն: Պալատը:

Մտնում են եղիսաբեթ թագուհին, Ռիվերսը և Գրին:

ՌԻՎԵՐՍ

Համբերե՛ք, տիկին, տարակույս չկա,
Որ արքան շուտով կազդուրվելու է:

ԳՐԻ

Ձեր տրտում տեսքը կարող է ազդել հիվանդի վրա.
Արդ, ի սեր աստծո, հանգիստ մնացեք,
Ուրախ խոսքերով զվարթացրեք նրան:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Վա՜յ իմ վիճակին, եթե նա մեռնի:

ՌԻՎԵՐՍ

Ձեզ բան չի լինի. ամուսնուց կզրկվեք:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդ կորստյան մեջ՝ բոլոր կորուստն է:

ԳՐԻ

Երկինքը պարգևել է ձեզ մի լավ որդի.
Նա ձեզ կմխիթարի, երբ արքան գնա...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, նա դեռ փոքր է, և նրա վրա
Ռիչարդ Գլոստերն է պահապան կարգված,
Մի մարդ, որ երբեք մեզ բարեկամ չէ:

ՌԻՎԵՐՍ

Նա՞ է նովանին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Դեռ վերջնական չէ, բայց որոշված է.
Թե արքան մեռնի, նա է դառնալու երկրի հովանին:

Մտնում են Բուկինգեմը և Դերբին:

ԳՐԻ

Ահա գալիս են Բուկինգեմն ու Դերբին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բարի օր, տիկին:

ԴԵՐԲԻ

Տա աստված, որ միշտ բախտավոր լինեք:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ազնիվ կոմս Դերբի, Ռիչմոնդ կոմսուհին
Հազիվ թե ձեր այդ բարի մաղթանքին հավանություն տա.
Թեպետ ձեր կինն է և ինձ չի սիրում,
Բայց, բարի լորդ իմ, համոզված եղեք,
Ես ձեզ չեմ ատում ձեր կնոջ հոխորտ կեցվածքի համար:

ԴԵՐԲԻ

Խնդրում եմ, տիկին, հավատ չընծայել
Այդ կեղծ ու քսու չարախոսներին:
Եթե մասամբ էլ նրանք ճիշտ խոսեն,
Ներողամիտ եղեք, քանզի կանացի թուլություն է այդ,
Ոչ թե չարություն:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Արքային տեսա՞ր:

ԴԵՐԲԻ

Դուքս Բուկինգեմը և ես հենց հիմա
Նրա մոտ էինք:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ինչպե՞ս է նրա առողջությունը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լավ հույս կա, տիկին, զվարթ է խոսում:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Աստված բարին տա. ասուլիս արի՞ք:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այո, տիրուհի: Նա փափագում է հաշտություն կնքել
Դուքս Գլոստերի ու ձերոնց միջև,
Եվ նմանապես սենեկապետի ու նրանց միջև.
Արքան բոլորին իր մոտ է կանչել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, երանի թե: Բայց այդ չի լինի:
Վախենում եմ, որ սա է գագաթը մեր երջանկության:

Մտնում են Գլոստերը, Հեստինգսը և Դորսետը:

ԳԼՈՍՏԵՐ

Բավ է հանդուրժեմ այդ անարգանքը.
Ո՞վ է արքային անվերջ գանգատվում,
Որ ես դաժան եմ, չեմ սիրում իրենց:
Սուրբ Պողոսը վկա, նա է թշնամի նորին մեծության,
Ով բամբասում է նրա ականջին:
Ես շողոքորթ չեմ, զուրկ եմ սուր լեզվից,
Չեմ կարող ժպտալ մարդկանց երեսին, խաբել ու կեղծել.
Ո՛չ ֆրանսիական, ո՛չ էլ կապկային ձևով գլուխ տալ,
Դրա համար էլ ինձ համարում են ոսոխ ոխերիմ:
Մի՞թե չի կարող պարզամիտ մարդը :
Ապրել ախտաժետ խոհերից ազատ,
Այլ պետք է նրա ճշմարիտ խոսքը ի չար գործ դնեն
Ճարպի՜կ, խորամա՜նկ, նենգ միմոսները:

ՌԻՎԵՐՍ

Այս ներկաներից որի՞ն է ուղղված ձեր խոսքը, տեր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Քեզ է ուղղված, որ հեզությունից, շնորհքից զուրկ ես:
Ե՞րբ եմ վշտացրել, ե՞րբ եմ նեղել քեզ,
Կամ քեզ, և կամ քեզ, կամ ձեր աղանդից որևէ մեկին.
Ժանտախտը թափվի բոլորիդ գլխին: Նորին մեծությունը,—
Աստված պահե նրան ի ցավ բոլորիդ,—
Չի կարող մի պահ գեթ հանգիստ շնչել,
Որ նրան չտանջեք ձեր այդ անպատկառ ամբաստանությամբ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Եղբայր Գլոստեր, դուք սխալվում եք.
Արքան իր կամքով
Եվ ոչ թե դրդված ուրիշի կողմից,
Գուցե տեսնելով, որ քո արտաքին արարմունքի մեջ
Մի ինչ-որ ներքին ատելություն կա
Իմ զավակների և եղբայրների ու իմ նկատմամբ,
Այդպես է վճռել, որ իմանա, թե
Ի՞նչն է պատճառը ձեր չար վարմունքի և վերջ տա դրան:

ԳԼՈՍՏԵՐ

Հնարավոր է: Աշխարհը այնքան ճոռի է դարձել,
Որ սարյակներն են որս անում այնտեղ,
Ուր արծիվները թառել չեն կարող.
Ուզած ռամիկը դարձել է իշխան,
Իսկ շատ իշխաններ ռամիկներ դարձան:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Քեզ հասկանում ենք, եղբայր Գլոստեր:
Դու նախանձում ես, որ ես և մերոնք վեր ենք բարձրացել.
Տա աստված, որ քո կարիքը չզգանք:

ԳԼՈՍՏԵՐ

Նամոքն աստծո մենք քո կարիքը արդեն զգում ենք.
Քո միջնորդությամբ մեր Եղբայրն արդեն Բերդում է նստած:
Ես անարգված եմ, ազնվական դասը արհամարհված է.
Մինչդեռ ամեն օր
Ազնվականության շարքերն են խցկվում այնպիսի մարդիկ,
Որոնք դեռ երեկ գրոշ չարժեին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Վկա է աստված, որ ինձ բարձրացրեց այս զգատո դիրքին
Իմ նախկին խաղաղ, երջանիկ բախտից,
Ես թագավորին բնավ չեմ լարել Կլարենսի դեմ:
Ընդհակառակը, եղել եմ նրա շատ ջերմ պաշտպանը
Եվ բարեխոսը:
Դու ինձ չարաչար անպատվում ես, դուքս,
Քո այդ անարդար և նենգ կասկածով:

ԳԼՈՍՏԵՐ

Գուցե ուրանաս, որ լորդ Հեստինգսի

Վերջին բանտարկման պատճառը դո՛ւ չես:

ՌԻՎԵՐՍ

Կարող է, տեր իմ, որովհետև նա...

ԳԼՈՍՏԵՐ

Իհարկե նա է, ո՞վ չի իմանում:
Նա ընդունակ է շատ բան ուրանալ:
Կարող է նաև աջակցել, որ դու շատ առաջ գնաս,
Ապա ժխտել իր միջնորդությունը
Եվ վերագրել այդ պատիվները մեծ արժանիքին:
Ինչե՞ր չի կարող թագուհին անել.
Կարող է նույնիսկ նա ամուսնանալ...

ՌԻՎԵՐՍ

Ի՞նչ, ամուսնանա՞լ, մի՞թե կարող է:

ԳԼՈՍՏԵՐ

Այո՛, պսակվել մի արքայի հետ,
Կամ մի ամուրի գեղեցիկ մանչի:
Քո տատն ավելի վատին է առել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իշխան Գլոստեր, բավական երկար ես ենթարկվել եմ
Բութ պարսավներին և դժնի ծաղրին.
Երկինքը վկա, ես կնաղորդեմ նորին մեծության
Այդ զարհուրելի հեգնանքի մասին, որ տոկացել եմ:
Լավ է մի գեղջուկ աղախին լինեմ,
Քան մեծ թագուհի այս պայմաններում,
Ենթակա այսքան անարգանքների՛, ծաղրի՛, չարությա՛ն:

Մտնում է Մարգարիտ թագուհին և կանգնում է խորքում:

Ես քիչ խինդ տեսա Անգլիո գահին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Եվ թող նվազի այդ չնչին խինդն էլ. կաղաչեմ աստված,
Ինձնից խլեցիր թե՛ պատիվ, թե՛ գահ:

ԳԼՈՍՏԵՐ

Սպառնո՞ւմ ես ինձ, որ արքային կասե՞ս.

"Գնա և պատմիր, ինչ որ ուզում ես: Իմ ասածները
Ես կհաստատեմ արքայի առաջ:
Թող ինձ Բերդ տանեն, վախեցողը չեմ,
Հերիք է լռեմ. ինչ շո՜ւտ մոռացան իմ վաստակները:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Դուրս կորիր դու, դև, քո վաստակները շատ լավ եմ հիշում:
Դու իմ ամուսնուն Բերդում սպանեցիր,
Իսկ թշվառ որդուս՝ Տեկսբուրի դաշտում:

ԳԼՈՍՏԵՐ

Երբ ամուսինդ դեռ թագավոր չէր, իսկ դու՝ թագուհի.
Նրա գործերում ես աճնում էի մի գրաստի պես,
Իր ոսոխներին ես ջնջում էի,
Իսկ ընկերներին առատ վարձատրում:
Արյունս էի թափում, որ արքայացնեմ նրա արյունը:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Եվ այդ արյունը նրանից, քոնից ազնիվ արյուն էր:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ այդ միջոցին դու և լորդ Գրին՝ ձեր ամուսինը,
Անցաք խառնակիչ Լանկաստերի կողմ:
Դուք նույնպես, Ռիվերս: Ձեր ամուսինը
Մի՞թե Մարգարտի կողմում չսպանվեց, սուրբ Օլբենի մոտ:
Թողեք հիշեցնեմ, թե մոռացել եք,
Ո՜վ եք եղել դուք և ի՜նչ եք հիմա,
Եվ նմանապես, ո՜վ եմ եղել ես և ի՜նչ եմ այժմ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Դու մի ոճրագործ սրիկա էիր և դարձյալ նույնն ես:

ԳԼՈՍՏԵՐ

Խեղճ Կլարենսը իր հորը լքեց, դավեց Վորվիկին.
Դրժեց իր ուխտը: Փրկիր նրան, Հիսո՜ւս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Շանթի՜ր նրան, աստված:

ԳԼՈՍՏԵՐ

Կովեց ի նպաստ էդվարդի թագի,
Վարձի փոխարեն նա բանտարկված է:
Ա՜խ, երանի թե քարսիրտ լինեի ես էդվարդի պես,
Կամ նրա սիրտը իմ սրտի նման կարեկից լիներ:
Ավա՜ղ, ես ինչքան միամիտ մարդ եմ այս չար աշխարհում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Թո՛ղ այդ աշխարհը և դժոխք փութա
Դու, անամոթ դև, այնտեղ է քո սև իշխանությունը:

ՌԻՎԵՐՍ

Իմ լորդ Գլոստեր, այն ծանր օրերին
Մենք թշնամիներ չենք եղել զահին,
Այլ ընթացել ենք մեր օրինական թագավորի հետ:
Մենք այդպես էլ ձեզ կհետևեինք,
Եթե մեր արքան ինքդ լինեիր:

ԳԼՈՍՏԵՐ

Ե՞ս արքա լինեմ... գերադասում եմ փերեզակ լինել,
Հեռու իմ սրտից մտածումն անգամ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ինչպես քեզ համար չնչին հաճույք է
Լինել թագավոր այս երկրի վրա,
Այնպես էլ, դուք իմ, համոզված եղիր,
Չնչին հաճույք է ինձ համար լինել երկրիս թագուհին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Նույնպիսի չնչին հաճույք է զգում և այս թագուհին,
Այդ ե՛ս եմ, ե՛ս եմ և համա՛կ տրտում.
Ո՛չ, անկարող եմ այլևս համբերել:

Առաջ է գալիս:

Լսեցեք դուք ինձ, նենգ ծովահեններ, որ զզվում եք
Իմ ձեռքից կորզած ավարը ձեր մեջ բաժանելու համար:
Ո՞րը ձեզանից չի դողում այժմ վրաս նայելիս:
Խոնարհ էիք ինձ, երբ ես ձեզ վրա թագուհի էի,
Ապստամբվե՞լ եք, երբ վայր եմ ընկած որպես զոհը ձեր:
Դու, ազնիվ հրեշ, մի շուռ գա այդպես:

ԳԼՈՍՏԵՐ

Դու, պառավ ջադու, ինչո՞ւ եկար դեմս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Որպեսզի հաշվեմ քո ոճիրները.
Քեզ բաց չեմ թողնի:

ԳԼՈՍՏԵՐ

Աքսորված չէի՞ր դու մահվան սարսափով:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Աքսորված էի:
Բայց ես գտնում եմ՝ առավել վիշտ է ապրել աքսորում,
Քան մեռնել այստեղ, հայրենի տանը:
Դու ինձ պարտք ես, դուքս, մի հատիկ որդի և մի ամուսին,
Իսկ դու՝ մի ամբողջ թագավորություն. խոնարհվե՛ք դեմս.
Այս համակ վիշտը, որ ես կրում եմ՝ օրենքով ձերն է,
Իսկ հաճույքները ձեր հափշտակած՝ բոլորը ի՛մն են:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ ազնիվ հայրը քեզ նզովք կարդաց,
Երբ թղթե թագով իր գոռ ճակատը դու պսակեցիր,
Այդ անարգանքից գետեր հոսեցին նրա աչքերից:
Ապա տվեցիր դու դուքսին մի լաթ, որ այն չորացներ,
Ներկված Ռուտլենդի անմեղ արյունով.
Նրա անեծքը հոգու դառնությամբ քո գլխին թափված՝
Դեռ մինչև հիմա վրադ է ընկած,
Եվ տե՛ս, աստված է քո այդ արյունոտ
Արարքն հատուցում:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Աստված անմեղին վրեժխնդիր չէ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Անարգ ոճիր էր մանկանն սպանել.
Այդչափ անգութ բան երբեք չի լսված:

ՌԻՎԵՐՍ

Բռնակալները նույնիսկ լաց եղան, երբ այդ լուրն առան:

ԴՈՐՍԵՏ

Ամենքն անխտիր վրեժ գոչեցին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Նորթեմբերլենդը, որ ներկա էր, նույնիսկ արտասվեց:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ, ամենքդ այստեղ իրար էիք կրծում իմ գալուց առաջ՝
Պատրաստ բռնելու միմյանց կոկորդից.
Այժմ ձեր մաղձը վրա՞ս շուռ տվիք:
Յորքի անարկու անեծքը մի՞թե հաղթեց երկնքին.
Որ Հենրու մահը և իմ սիրասուն էդվարդի մահը,
Կորուստը նրանց թագավորության, դժբախտ աքսորն իմ,
Այդ ամենը հազիվ հատուցում եղան այդ չար լակոտին:
Եթե անեծքը ամպը ճեղքելով երկինք է մտնում,
Արդ, ճամփա տվեք, ո՛վ մթին ամպեր, սուր անեծքներիս:
Ձեր թագավորը թող սատակ դառնա անարգ զեխության,
Ինչպես որ մերը զոհ դարձավ անեղ ոճրագործության:
Թող էդվարդ որդին, որ Վալեսի իշխանն է հիմա,
Էդվարդիս տեղակ, որ Վալեսի իշխանն էր առաջ,
Մանուկ մահանա և նույն բիրտ մահով:
Իմ տեղը այժմ դու ես թագուհի.
Ուզեմ, որ ապրես քո փառքից երկար՝ տարաբախտիս պես,
Որ երկար ողբաս քո զավակների ծանր կորուստը,
Եվ տեղդ տեսնես մի այլ թագուհի,
Ինչպես որ ես եմ տեսնում քեզ հիմա,
Իրավազրկված, քո ձեռքով շորթած իմ փառքի նման:
Թող քո երջանիկ բախտը վախճանվի քո մահից առաջ,
Եվ երկարաձիգ բազում օրերի վշտերից հետո
Մեռնես մոր փառքից և կնոջ փառքից և գահից զրկված:
Ռիվերս և Դորսետ, դուք ներկա էիք,
Դուք նույնպես, Հեստինգս, երբ որ իմ որդուն
Խոցեցին արնոտ ժանտ դաշույններով: Կաղոթեմ աստծուն.
Որ ոչ ոք ձեզնից չմեռնի երբեք բնական մահով,
Այլ մի չարաղետ դիպվածով գնա...

ԳԼՈՍՏԻՐ

Վերջացրու թովքդ, զարշելի վհուկ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Որ քեզ արձակեմ առանց հիշելո՞ւ: Կա՛ց, շուն, լսի՛ր ինձ.
Եթե երկինքը ամբարած ունի մի անեղ պատիժ,
Որ գերազանցի իմ փափագածին,
Թող նա պահի այն, մինչև մեղքերդ լավ հասունանան,
Եվ ապա ցասմամբ որոտա գլխիդ,
Որ խառնակիչն ես թշվառ աշխարհի խաղաղության:
Թող խղճմտանքի որդը հանապազ կրծե քո հոգին,
Քանի ապրում ես, անվերջ կասկածես,
Որ բարեկամդ մարդ է չարակամ,
Եվ ամենանենգ դավաճաններին
Ճանաչես իբրև անկեղծ բարեկամ:
Թող այդ մահացու աչքերից բնավ քուն չգա մոտիկ,
Բացի խոշտանգող մղձավանջներից՝
Քեզ սարսափեցնող ահև դևերի դժոխքով լեցուն:
237 Դու դիվանշան, գոսնելի վիժվածք, դու ավերիչ կինճ,
Դու, որ ծնունդով կնքված ես իբրև
Բնության ստրուկ և դժոխքի բին:
Դու, քո մայրական արգանդի ամոթ,
Դու, քո հոր մեջքի նողկալի ծնունդ,
Պատվի ցնցոտի, դու զարշելի: Դո՛ւ:

ԳԼՈՍՏԵՐ

Մարգարի՛տ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ռիչա՛րդ:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Քեզ հետ չեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ներիր, ուրեմն, ինձ այնպես թվաց,
Որ այդ անեծքը ինձ էր ուղղված:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Քեզ էր ուղղված, բայց պատասխանի կարիք չեմ զգում:

Օ՛, թույլ տուր ես իմ անեծքն ավարտեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ես քո անունով ավարտեցի այն:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Դու քո անեծքով քեզ անիծեցիր:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դու կեղծ թագուհի, բախտիս դժգույն փայլ,
Ինչո՞ւ ես շաքար ցանում այդ սարդին,
Որի մահաբեր ոստայնացանցը պակարդում է քեզ:
Օ, հիմա՛ր, հիմա՛ր, սրում ես մի սուր, որ քեզ սպանես:
Կգա այն օրը, երբ դու կանիծես
Այդ սապատավոր թունոտ դոդոշին
Եվ իմ անեծքի կարիքը կզգաս:

ՀԵՍՏԻՆԳՍ

Վերջ տուր նզովքիդ, խելացնոր կին,
Քանի չի հատել համբերությունս:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ամոթ բոլորիդ, իմս հատել է:

ՌԻՎԵՐՍ

Գիտակ չես պարտքիդ, ուստի չգիտես ում հետ ես խոսում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ դուք գիտա՞կ եք արդյոք ձեր պարտքին.
Ես թագուհի եմ, դուք հպատակներ,
Խոնարհվե՛ք իմ դեմ:

ԴՈՐՍԵՏ

Մի վիճեք հետը, նա ցնորված է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Լռեցեք, մարկիզ, իսկ դուք էլ լիրբ եք,
Եվ ձեր տիտղոսը, որ նոր է կնքված,
Հազիվ է մտել իր ընթացքի մեջ:
Գեթ երիտասարդ ձեր ազնվական դասը իմանար,
Թե ինչ կորուստ է զրկվել այդ փառքից և թշվառանալ,

7—577

Ով բարձր է կանգնած, բազում փոթորիկ ցնցում է նրան.
Իսկ երբ ընկնում է՝ ցրիվ է գալիս սաստիկ անկումից:

ԳԼՈՍՏԵՐ

Բարի խորհուրդ է, օգտվիր դու, մարկիզ:

ԴՈՐՍԵՏ

Դուք էլ օգտվեցեք, ձեզ նույնպես պետք է:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, և խիստ շա՜տ: Բայց ես ծնվել եմ անչափ վերևում,
Արծվաբույնս շինված է բարձր եղևնու գլխին,
Նա կատակում է քամիների հետ, հեգնում արևին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Եվ խափանում է արևի լույսը. օ, ավա՜ղ, ավա՜ղ,
Վկա է որդիս, որն այժմ մահվան ստվերի մեջ է,
Որի լուսափառ ճառագայթները ցասումից քո խպը
Հավիտենական մութով պարուրեց,
Բույնդ հյուսված է մեր քանդված բնում.
Ամենատես աստված, մի հանդուրժիր այդ.
Արյամբ խլվածը՝ արյամբ կործանի՛ր:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լռեք, ամոթ է, մի՞թե գութ չունեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ գութ պահանջեք և ո՛չ էլ ամոթ,
Դուք անգթորեն վարվեցիք ինձ հետ
Եվ իմ հույսերը սրի քաշեցիք անամոթաբար.
Գութս ցասումն է, իսկ կյանքս՝ ամոթ,
Եվ այդ ամոթում եռում է վիշտն իմ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Վե՛րջ տուր, հերի՛ք է:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Իշխան Բուկինգեմ, ձեռքդ եմ համբուրում
Ի նշան ուխտի և մտերմության.
Բախտավոր լինես և քո մեծ տունը պանծալի լինի:

Քո պատմությունը մեր տոհմի արյամբ չի ապականված,
Դու իմ անեծքի շրջանից դուրս ես:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բոլորն էլ դուրս են. քանզի անեծքը
Անիծողի մարդու շուրթին է մնում:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Նրանք, վստահ եմ, երկինք են ելնում
Եվ զարթեցնում են աստծո խոր քնած խաղաղությունը:
Ավա՜ղ, Բուկինգեմ, զգույշ այդ շնից,
Երբ նա քծնում է, ուրեմն կծում է, իսկ երբ կծում է,
Թունոտ ժանիքից վերքը նեխելով մահ է պատճառում:
Գործ չունենս նետը, հեռու կաց նրանից,
Նա դրոշմված է մեղքի, դժոխքի մահվան կնիքով,
Եվ դրանց բոլոր գործակալները իր ծառաներն են:

ԳԼՕՍՏԵՐ

Այդ ի՞նչ է խոսում, իշխան Բուկինգեմ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Կարևոր բան չէ, ողորմած տեր իմ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Դո՞ւ էլ ես ծաղրում բարի խորհուրդն իմ
Եվ շոյում դևին, որի վտանգից քեզ զգուշացրի:
Օ՜, հիշիր խոսքս դու մի ուրիշ օր,
Երբ նա քո սիրտը վշտով կնեղքի,
Եվ դու կգոչես՝ «Ճի՜շտ էիր, Մարգարիտ»:
Իր ատելության զոհը դառնաք դուք,
Նա էլ ձեր զոհը, իսկ դուք բոլորդ՝ աստծո զոհը:

Գնում է:

ՀԵՍՏԻՆԳՍ

Մազերս ցցվեցին նրա անեծքից:

ՌԻՎԵՐՍ

Ինձ էլ՝ ոչ պակաս: Ես զարմանում եմ, որ նա ազատ է:

ԳԼՈՍՏԵՐ

Երկինքը վկա, նա մեղավոր չէ:
Նա շատ է տանջվել. ինքս եմ հանցավոր—
Այդ տառապանքի մի մասի համար:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որքան ես գիտեմ, անիրավություն չեմ արել նրան:

ԳԼՈՍՏԵՐ

Նրա կորուստը դու ես վայելում:
Անբավ բարիք եմ ես արել նրան,
Ով սառնությամբ է այժմ հիշում այդ:
Տե՜ս, Կլարենսը. իր ջանքի համար լա՜վ են հատուցել.
Զնդան են դրել խոզանոցի մեջ, որ լա՜վ գիրանա:
Աստված թող ների պատճառ եղողին:

ՌԻՎԵՐՍ

Չարագործին ներել՝ առաքինի գործ է.
Այդպես վարվում է միայն քրիստոնյան:

ԳԼՈՍՏԵՐ

Ես միշտ այդպես եմ. *(մեկուսի)* քանզի քաջ գիտեմ,
Անիծելիս պետք է ես ինձ անիծեմ:

Մտնում է Քետսբին:

ՔԵՏՍԲԻ

Տիրուհի, արքան ձեզ իր մոտ է կանչում—
Ձեզ նույնպես, դո՛ւք իմ, ձեզ էլ, իշխանե՛ր:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իսկույն, Քետսբի: Գնա՛նք, տեարք իմ:

ՌԻՎԵՐՍ

Երթա՛նք, թագուհի:

Բոլորը գնում են, բացի Գլոստերից:

ԳԼՈՍՏԵՐ

Չարիք եմ նյութում և առաջինը ես եմ սկսում
Մեծախոս թնդալ,

Իմ լարած բոլոր գաղտնի դավերը
Բառնալով այլոց ուսերի վրա:
Ե՛ս Կլարենսին գցղան նետեցի
Եվ ինքս եմ հիմա բարձրագոչ ողբում
Այդ հիմարների՝ Հեստինգսի, Դերբու, Բուկինգեմի մոտ,
Հայտարարելով, թե թագուհին է իր եղբայրներով
Արքային գրգռում իմ կոմս եղբոր դեմ:
Հավատում են դրան և դրդում են ինձ,
Որ վրեժ լուծեմ ես կոմս Ռիվերսից, Վոգենից, Գրեյից:
Ես հառաչում եմ և սուրբ գրոցից մի խոսք կորզելով,
Հայտնում եմ նրանց, թե մեզ ասված է
Պատվիրել չարին բարությամբ հայրել:
Եվ, այսպես, ահա, պաճուճելով իմ չարախինդ հոգին
Սուրբ մատյաններից չորքած եզակի մեջբերումներով՝
Սուրբ եմ ձևանում, երբ ներքուստ դև եմ:
Բայց, սո՜ւս, գալիս են իմ դահիճները:

Մտնում են երկու ոճրագործ:

Ա՜, բարի եկաք, իմ հուժկու քաջե՛ր,
Արդեն գնում եք վե՞րջ տալու նրան:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Գնում ենք, տեր իմ: Անցագիր է պետք,
Որ մոտը մտնենք. դրա համար եկանք:

ԳԼՈՍՏԵՐ

Լա՜վ եք մտածել: Իմ մոտ է, վերցրե՛ք:

Տալիս է անցագիրը:

Երբ որ կավարտեք, եկեք Կրոսբի:
Սակայն, պարոնայք, անվրեպ եղեք, նաև խստասիրտ,
Ականջ մի դրեք իր աղերսանքին.
Նա ճարտասան է, եթե լսեք նրան՝
Գուցե խղճահարվեք:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Մենք չենք խոսի, տեր իմ,
Շատախոսները լավ գործավոր չեն. համոզված եղեք,
Մենք կգործենք ձեռքով և ոչ թե լեզվով:

ԳԼՈՍՏԵՐ

Սիրում եմ ձեզ, տղերք: Ապուշի աչքից արցունք է ցայտում,
Իսկ ձեր աչքից՝ կայծքար: Հառա՞ջ, ձեր գործին.
Արա՛գ վերջացրեք:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Անպայմա՛ն, տեր իմ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Բերդը:

Մտնում են Կլարենսը և Բրակենբերին:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ինչո՞ւ դուք սաստիկ տրտում եք այսօր, ձերդ բարձրություն:

ԿԼԱՐԵՆՍ

Օ՜, ես անցկացրի մի դժբախտ գիշեր,
Այնքան ահավոր երազներով լի
Եվ լի այլանդակ տեսարաններով,
Որ իբրև ազնիվ մի քրիստոնյա,
Չէի ցանկանա վերապրել նորից այդ սարսափները,
Թեկուզ տիրանամ մի ամբողջ աշխարհ ուրախ օրերի,
Այնքան սոսկալի և ժանտ գիշեր էր:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ի՞նչ երազ տեսաք, խնդրում եմ, պատմեք:

ԿԼԱՐԵՆՍ

Ինձ թվաց, որ ես բանտից փախչելով.
Նավով լողում եմ դեպի Բուրգունդիա,
Ինձ հետ էր և իմ եղբայր Գլոստերը,
Որն իմ խցիկից հորդորում էր ինձ
Միջնադուռ ելնել: Այնտեղից նայեցինք դեպի Անգլիա
Եվ վերհիշեցինք բյուրավոր դժնի փորձությունները,
Որ Լանկաստերյան և Յորքի ահեղ ռազմի օրերին

Վինակվեցին մեզ: Երբ քայլում էինք
Նավի երերուն տախտակամածին,
Ինձ այնպես թվաց, թե Գլոստերը հանկարծ սայթաքեց:
Փութացի օգնել: Նա վայր ընկնելիս.
Ուժգին հրեց ինձ և բարձրից նետեց
Ծովի թավալուն ալիքների մեջ:
Ո՜, աստվա՛ծ, խեղդվելն ի՜նչ տանջալից էր,
Ջրի ինչպիսի՜ահեղ աղմուկ կար ականջներիս մեջ,
Մահվան ինչպիսի՜ պատկերներ եկան աչքերիս առաջ:
Թվում էր, թե ես տեսնում էի բազում խորտակվող նավեր
Եվ անթիվ մարդկանց, որոնց ձկները կուլ էին տալիս.
Երիթներ ոսկու, մեծ-մեծ խարիսխներ, շեղջեր մարգարտի,
Եվ ադամանդներ, գոհարներ անգին,
Ողջը սփռված ծովի հատակին:
Դրանց մի մասը լցված էր մեռած մարդկանց գանգերում
Եվ այն խոռոչներում,
Ուր մի ժամանակ աչքեր էին փայլում: Սողոսկել էին
Իբրև նախատինք այդ նույն աչքերի, շողացող ակներ,
Որ անհաճորեն դիտում էին ծովի հատակը տղմոտ
Եվ հեգնում մեռած այդ ոսկորները՝ դեսուդեն ցրված:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Բայց մահվան պահին ինչպե՞ս կարողացաք
Ծովի այդ ամբողջ գաղտնիքը տեսնել:

ԿԼԱՐԵՆՍ

Կարծում եմ տեսա: Եվ բազում անգամ ես մաքառեցի
Մահվան դեմ: Սակայն հորձանքն անողորմ
Հոգիս կաշկանդված, չէր թողնում, որ լայն, ազատ օդ դուրս գա,
Խեղդելով նրան հանգչող մարմնիս մեջ,
Պատրաստ ժայթքելու ծովի հատակում:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Դուք չզարթնեցի՞ք այդ հոգեվարքում:

ԿԼԱՐԵՆՍ

Ո՜չ, իմ երազը տևեց կյանքից դեն,
Ապա սկսվեց փոթորիկն հոգուս.
Ինձ թվաց, որ ես անցա այն մթին հորձանքի միջով,—

Այն սարափելի ճավավարի հետ,
Որին երգում են բանաստեղծները —
Դեպի խավարի մշտնջենական թագավորություն։
Եվ առաջինը, որ իմ տարագիր հոգուն ողջունեց
Իմ մեծ աներն էր՝ Վորվիկն անվանի.
Նա բարձր գոչեց. «Այս մութ աշխարհը ի՞նչ պատիժ ունի
Նենգ Կլարենսին տանջելու համար»։
Հետո չքացավ։ Ապա հայտնվեց հրեշտակաղեմ
Մի այլ ուրվական՝ արյունաթաթավ
Պայծառ վարսերով. նա բարձր գոչեց.
«Կլարենսը եկավ, նենգ, չար, ուխտադրուժ, կեղծ Կլարենսը,
Որն ինձ խողխողեց Տեկսբուրի դաշտում,
Բռնեցեք նրան, ահեղ ֆուրիներ, տարեք տանջելու»։
Այդ խոսքի վրա սատանաների մի ամբողջ լեգեոն
Շրջապատեց ինձ և իմ ականջը
Այնպես խլացրեց ոռնում-գոչումով, որ այդ աղմուկից
Քնից վեր թռա դողահար մարմնով և երկար ատեն
Թվում էր, որ դեռ դժոխքի մեջ եմ,
Այնքան սոսկալի երազ տեսա ես։

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ձեր վախը, տեր իմ, զարմանալի չէ,
Ես ինքս եմ սոսկում ձեր այդ պատմածից։

ԿԼԱՐԵՆՍ

Օ՜, Բրակենբերի, իմ գործած բոլոր այն հանցանքները,
Որ ծառացել են այժմ խղճիս դեմ,
Ե՛ս կատարել եմ ի սեր Էդվարդի.
Բայց տեսեք ինչո՞վ նա ինձ հատուցեց։
Օ՜, աստված, եթե չեն մ աղոթքներս անզոր են քո դեմ,
Եվ կամիս պատժել մեղքերիս համար,
Քո դատաստանը թող բացառապես իմ գլխին պայթի։
Օ՜, խնայիր դու իմ անմեղ կնոջն ու թշվառ մանկանց։
Աղաչում եմ քեզ, բարի պահապան, մոտս մնա դու,
Հոգիս տրտում է, ուզում եմ քնել։

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Կմնամ, տեր իմ, քնե՜ք, տեր ընդ ձեզ։

Կլարենսը քնում է։

Վիշտը մեր կյանքի անդորրն է փշրում,
Նա մեր միջօրեն գիշեր է դարձնում, գիշերն՝ առավոտ:
Մեծավորները փառքի համար են տիտղոսի ձգտում,
Արտաքին պատիվ՝ ներքին ցավի դեմ.
Եվ անզգալի ցնորքի համար
Հաճախ զգում են անհուն հոգսերի մի ամբողջ աշխարհ,
Այնպես որ նրանց մեծ կոչումների և քախտի միջև
Տարբերությունը միայն արտաքին մի փուչ հոչակ է:

Մտնում են երկու ոճրագործը:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Է՜յ, ո՞վ կա այստեղ:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ի՞նչ ես ուզում, մարդ, ինչպե՞ս ներս մտար:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Իմ ոտքերով: Ես պետք է խոսեմ Կլարենսի հետ:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Եվ այդքան կտրո՞ւկ:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Լավ է կտրուկ լինել, քան թե ձանձրալի.
Ավելորդ մի խոսիր, հրամանդ ցույց տուր:

Կարդում է անցաթուղթը:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ինձ այս գրությամբ հրամայված է
Դուքս Կլարենսին ձեր ձեռքը հանձնել:
Հարկ չունեմ դրա պատճառն իմանալ,
Քանզի չեմ ուզում մեղավոր դառնալ:
Ահա բանալիք, ահա դուքսը քնած:
Գնամ արքայի մոտ և հաղորդեմ նրան,
Որ իմ պաշտոնը ես ձեզ զիջեցի:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Խելոք ես դառնում, բարի ճանապարհ:

Բրակենբերին գնում է:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Հը, ի՞նչ ես ասում, քնա՞ծ տեղը սպանենք:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ոչ. թե չէ կասի, որ մենք վախից ենք այդպես վարվել, երբ զարթնի:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Երբ զարթնի՞: Ա՛յ ապուշ, նա էլ չի զարթնելու մինչև դատաստանի օրը:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ուրեմն՝ էդ ժամանակ կասի, որ մենք իրեն սպանել ենք քնած տեղը:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Ճիշտն ասած, «դատաստան» բառը իմ խղճմտանքը մի տեսակ շարժեց:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Վախենո՞ւմ ես, ինչ է:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Նրան սպանելը չէ, որ վախեցնում է ինձ. դրա համար մենք հրաման ունենք: Վախենում եմ, որ ես կանիծվեմ այդ սպանության համար, որից ոչ մի հրամանագիր չի կարող փրկել ինձ:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ես կարծում էի, թե դու վճռական ես:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Եվ հաստատ վճռել եմ չսպանել նրան:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ես կվերադառնամ դուքս Գլոստերի մոտ և այդպես էլ կասեմ նրան:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Խնդրում եմ մի քիչ սպասիր, մինչև իմ սրբակրոն տրամադրությունը փոխվի. սովորաբար դա տևում է մինչև ես քսան հաշվեմ:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Հիմա՞ ինչպես ես զգում քեզ:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Հավատա, դեռ մի քիչ խղճմտանքի մրուր նստած է մեջս:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Հիշիր, որ մեզ վարձատրելու են հենց որ ավարտենք...

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Ուրեմն մա՛ն նրան. ես մոռացել էի վարձի մասին:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Այժմ որտե՞ղ է քո խղճմտանքը:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Դուքս Գլոստերի քսակում:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Իսկ երբ մեզ վարձատրելիս, երբ նա իր քսակը բանա, խղճմտանքդ դուրս թռչի՞:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Թող կորչի գնա, ո՞ւմ է հարկավոր:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Իսկ երբ նորից ետ դառնա՞:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Պրծա՛վ, էլ ես նրա հետ գործ չունեմ: էդ խղճմտանք ասածդ վտանգավոր բան է. մարդուն վախկոտ է դարձնում: Մարդն ուզում է գողանալ, խղճմտանքը ամբաստանում է: Նա ուզում է երդվել, խղճմտանքը կաշկանդում է: Ուզում է պառկել հարևանի կնոջ հետ, խղճմտանքը գաղտնիքը մատնում է: Դա մի կարմրադեմ, ամոթխած ոգի է, որ ապստամբվում է մարդու կրծքում և անհամար խոչընդոտներ է հարուցում: Խղճմտանքի պատճառով ես մի անգամ ետ տվեցի ոսկու մի քսակ, որ պատահմամբ գտել էի: Ով խղճմտանք ունի, նա հնչյությամբ կարող է աղքատանալ. այդ է պատճառը, որ նրան դուրս են վանդում քաղաքներից, որպես չարագործի: Ով կամենում է հանգիստ ապրել, նա պետք է ապավինի սեփական ուժերին և ձեռք քաշի խղճմտանքից:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Գետինը տանի. նա հենց հիմա արմունկիս մոտն է, և համոզում է ինձ, որ չսպանեմ դքսին:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Մի հավատա նրան, երբ չես ուզում հետո վայ տալ գլխիդ: Նա ուզում է սողոսկել քո մեջ, որ քեզ թուլացնի:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Չէ՛, ես պնդակազմ մարդ եմ, նա ինձ չի կարող խաբել, համոզված եղիր:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Ա՜յ, ինչ եմ ասում, դու խոսեցիր քաջ տղամարդու պես, որ հարգում է իր պատիվը։

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Սրիդ կորովը հարվածիր գլխին. հետո մենք նրան շուտ կտանք կողքի սենյակի գինու տակառի մեջ։

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Պատվական միտք է. նրանից հրաշալի արգանակ կստացվի։

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Սո՜ւս, զարթնում է։ Զարկե՞մ գլխին։

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Չէ՛, առաջ մի քիչ խոսեցնենք։

ԿԼԱՐԵՆՍ

Զարթնելով։

Ո՞րտե՞ղ ես, պահապան, մի գավաթ գինի տուր ինձ։

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Հիմա կուշտ կխմեք, տեր իմ։

ԿԼԱՐԵՆՍ

Ի սեր աստծո, ասա, ո՞վ ես դու։

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Քեզ նման մի մարդ։

ԿԼԱՐԵՆՍ

Բայց ոչ արքայական զարմից, ինչպես ես եմ։

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Բայց քեզնից ավելի արքայասեր։

ԿԼԱՐԵՆՍ

Ձայնդ որոտ է, իսկ հայացքդ՝ հեզ։

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Որովհետև իմ ձայնը պատկանում է արքային, իսկ հայացքս սեփական է։

ԿԼԱՐԵՆՍ

Որչափ մահաբեր ու մութ ես խոսում։ Ինչո՞ւ ես գունատ։
Ո՞վ ուղարկեց քեզ և ինչո՞ւ եկար։

Ա ԵՎ Բ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

Ո՜ր, ո՜ր, ո՜ր...

ԿԼԱՐԵՆՍ

Որ ինձ սպանե՞ք:

Ա ԵՎ Բ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

Այո, իհարկե՛, իհարկե՛:

ԿԼԱՐԵՆՍ

Հազիվ սիրտ արիք խոստովանելու,
Ուրեմն՝ անզոր եք ոճիր գործելու:
Ի՞նչ եմ արել ձեզ, իմ բարեկամներ:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Մեզ ոչինչ չես արել, թագավորին ես արել:

ԿԼԱՐԵՆՍ

Ես նորից կհաշտվեմ նրա հետ:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Երբե՛ք, իշխան իմ: Պատրաստվիր մեռնել:

ԿԼԱՐԵՆՍ

Բոլոր մարդկանցից երկուսի՞դ են ընտրել՝
Մորթել անմեղիս: Հանցանքս ի՞նչ է:
Ինձ ամբաստանող ապացույցն ո՞ւր է,
Ո՞ր դատարանն է վճիռ կայացրել,
Այդ ժանտատեսիլ դատավորն ո՞վ է: Ո՞վ է բարբառել
Մահավճիռը խեղճ Կլարենսի:
Երբ ես օրենքով դատապարտված չեմ,
Ո՞վ կհանդգնի մահ սպառնալ ինձ:
Փրկչի սուրբ արյամբ, որ մեր մեղքերի համար է թափվել,
Որով հույս ունենք քավել ձեր մեղքը,
Ես պատատրում եմ, որ դուք հեռանաք և ձեռք չտաք ինձ:
Ձեր բռնած գործը անիծյալ գործ է:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Մեզ հրամայված է:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Եվ հրամայողը թագավորն է:

ԿԼԱՐԵՆՍ

Ստում ես, ստրո՛ւկ, մեր ամենազոր արքայից արքան
Իր օրենսգրքում հրամայել է,
94 Որ մարդ չսպանես: Եվ հանդգնում ես
Դու ոտնահարել տիրոջ օրենքը և իրագործել
Պատվե՞րը մարդու:
Օ՛, զգուշացիր, նրա բազուկը վրեժխնդիր է.
Թափով իջնում է այն մարդկանց գլխին,
Որ բեկանում են իր պատվիրանը:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Եվ նույն վրեժը քո գլխին կիջնի,
Սուտ երդմանդ համար, նույնպես և ոճրի:
Դու հաղորդվեցիր սրբազան ուխտով,
Որ Լանկաստերյան տան համար կռվես:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Եվ աստծո հանդեպ իբրև դավաճան ուխտդ խախտելով,
Դու նենգ, դավադիր սուրդ խրեցիր
Քո թագավորի որդու թիկունքը:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Որին երդվեցիր սիրել, պաշտպանել:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ինչպե՞ս կարող ես դու մեզ պարտադրել օրենքն աստծո,
Երբ ինքդ ես խախտել նրա օրենքը այնքան նենգորեն:

ԿԼԱՐԵՆՍ

Ո՞ւմ սիրո համար գործեցի, ավա՜ղ, ես այդ հանցանքը,
Էդվարդի համար, եղբորս համար, նրա սիրո համար:
Ո՛չ, ո՛չ, պարոններ,
Նա ձեզ չի հղել, որ ինձ սպանեք,
Քանզի այդ գործում նրա հանցանքը իմիս չափ ծանր է:
Եթե աստվածն ինձ պատժել կամենար,
Ապա, իմացեք, նա ինձ կպատժեր ի տես հանրության:
Մի՛ կորզեք դատը նրա հզոր բազկից,
Նա կարիք չունի խոտոր, անիրավ վարվեցողության՝
Պատժելու նրանց, որ մեղանչել են իր օրենքի դեմ:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Իսկ ո՞վ քեզ կարգեց անողորմ դահիճ,
Որ դու սպանես Պլանտագենետ
Վսեմ, քաջազուն ջահել իշխանին:

ԿԼԱՐԵՆՍ

Իմ եղբոր սերը, դևն ու ցասումս:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Քո եղբոր սերը, նաև մեր պարտքը և քո հանցանքը
Հրամայում են, որ քեզ սպանենք:

ԿԼԱՐԵՆՍ

Օ՜, մի՛ ատեք ինձ, եթե սիրում եք դուք իմ եղբորը.
Ես իր եղբայրն եմ և ամբողջ հոգով սիրում եմ նրան:
Եթե վարձվել եք ստոր կաշառքով, ետ վերադարձեք,
Ես ձեզ կուղարկեմ իմ ազնիվ եղբայր Գլոստերի մոտ,
Նա ձեզ ավելի շռայլ վարձ կտա իմ կյանքի համար,
Քան թե Էդվարդը՝ իմ մահվան զույժը ձեզնից առնելիս:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Դու սխալված ես. քո եղբայրը քեզ սաստիկ ատում է:

ԿԼԱՐԵՆՍ

Օ՜, ո՛չ, սիրո՛ւմ է, խորն է սիրում ինձ,
Դուք իմ անունից իր մոտ գնացեք:

Ա ԵՎ Բ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ

Անպայման կերթանք:

ԿԼԱՐԵՆՍ

Պատմեցեք նրան, որ երբ մեր հայրը՝ Յորքն արքայական,
Հաղթական բազկով օրհնեց երեքիս,
Նա մեզ պատվիրեց սիրել միմյանց.
Բնավ չէր կարծում, որ մենք կարող ենք իրար հետ գժտվել.
Թող Գլոստերը այդ օրը հիշի և դառնորեն լա:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Այո, աչքերից կայծքար թափելով, մեզ էլ խրատեց
Այդպես արտասվել:

ԿԼԱՐԵՆՍ

Օ՜, մի զրպարտեք, նա զթառատ է...

Ա. ՈՃՐԱԳՈՐԾ

Ուղիղ ասացիր,
Ամռան ձյունի պես: Խելքդ հավաքիր,
Նա՛ մեզ ուղարկեց, որ քեզ սպանենք:

ԿԼԱՐԵՆՍ

Կարելի բան չէ. երբ բաժանվում էր,
Ինձ իր գիրկն առավ, հեկեկաց, երդվեց,
Որ ինձ կազատի:

Ա. ՈՃՐԱԳՈՐԾ

Եվ ազատում է. երկրի կապանքից
Նա քեզ հենց հիմա երկինք կուղարկի:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Հաշտվիր աստծո հետ, քո ժամը հասավ:

ԿԼԱՐԵՆՍ

Մի՞թե քո հոգում այնքան խիղճ ունես,
Որ ինձ խորհուրդ տաս՝ հաշտվել աստծո հետ:
Եվ մի՞թե այնքան կույր ես հոգուդ դեմ,
Որ ինձ սպանելով՝ համարձակվել ես գժտվել աստծո հետ:
Ավա՜ղ, պարոններ, ով ձեզ այդ սոսկ գործին է կոչել,
Այդ ների համար ձեզ պիտի ատի:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Ապա ի՞նչ անենք:

ԿԼԱՐԵՆՍ

Գթացեք դուք ինձ, փրկեք ձեր հոգին:
Ո՞ր մեկը ձեզնից, եթե նա լիներ իշխանի որդի
Եվ լիներ զրկված ազատությունից, ինչպես ես եմ արդ,
Չէր աղերսելու իր կյանքի համար, եթե ձեզ նման
Իր մոտ մտնեին երկու մարդասպան: Դուք կաղերսեիք
Իմ տառապանքում...

Ա. ՈՃՐԱԳՈՐԾ

Գթում են միայն երկչոտն ու կինը:

ԿԼԱՐԵՆՍ

Իսկ չգթալը՝ դիվային գործ է, բիրտ, գազանային:

Լսիր, բարեկամ, ես նայվածքիդ մեջ գութ եմ նշմարում,
Եթե աչքերդ շողոքորթող չեն,
Իմ կողմը անցիր և խնդրիր սրան, որ ինձ չսպանի,
Մուրացիկ իշխան... ո՞ր մուրացիկը չի գթա նրան:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Ետ նայիր, տեր իմ:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Ա՛ռ քեզ: Սա՛ էլ առ: *(Դաշույնով խոցում է նրան)*։ Իսկ եթե քիչ է,
Ես քեզ կխեղդեմ գինու կարասում:

Գնում է, տանելով դիակը:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Արյունոտ ոճի՜ր սաստկորեն գործված:
274 Որքա՜ն կուզեի Պիղատոսի պես ձեռքս լվանալ
Այս խի՜ստ ցավագին դժնյա սպանդից:

Վերադառնում է Ա ոճրագործը:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Հը, ի՞նչ ես պաղել և ինձ չես օգնում:
Երկինքը վկա, ես դուքսին կասեմ, որ անճարակ ես:

Բ ՈՃՐԱԳՈՐԾ

Երանի լսեր, որ ես փրկել եմ իր եղբոր կյանքը:
Վարձը քեզ վերցրու և հայտնիր նրան ինչ որ ասացի.
Սաստիկ զղջում եմ, որ դուքսն սպանվեց:

Գնում է:

Ա ՈՃՐԱԳՈՐԾ

Իսկ ես չեմ զղջում. հեռացի՜ր, վախկո՛տ,
Գնամ դիակը պահեմ մի փոսում,
Մինչև որ դուքսը կարգադրի թաղել:
Երբ վարձս առնեմ, կչքվեմ մի տեղ,
Քանզի կբացվի այս ոճիրն ահեղ:

Գնում է:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Պալատը:

Մտնում են էդվարդ թագավորը՝ հիվանդ, Եղիսաբեթ թագուհին, Դորսետը, Ռիվերսը, Հեստինգսը, Բուկինգեմը, Գրին և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Այդպես, ուրեմն, այսօր մենք բարի գործ կատարեցինք:
Ազնիվ տեարք իմ, ձեր այս դաշինքը անխախտ պահեցեք.
Ես ամենայն օր ակնկալում եմ իմ հրեշտակին,
Որ այս աշխարհից հրաժեշտ առնեմ:
Այժմ շատ հանգիստ կարող եմ հոգիս հանձնել երկնքին,
Երբ երկրի վրա ես միաբան եմ դարձրել ամենքին:
Ռիվերս և Հեստինգս, ձեռք մեկնեք իրար,
Ձեր սերն երդվեցեք՝ վերջ տալով ոխին:

ՌԻՎԵՐՍ

Վկա է երկինք, որ հոգիս զերծ է ատելությունից,
Ձեռքով կնքում եմ ճշմարիտ սերս:

ՀԵՍՏԻՆԳՍ

Նույնպես և իմը, հոգովս եմ երդվում:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Զգո՛ւյշ, չխաբեք ձեր թագավորին,
Որպեսզի բարձրյալ արքայից արքան
Ձեր այդ կեղծավոր սուտ երդման համար
Մեկիդ մյուսի ձեռքով չջնջի:

ՀԵՍՏԻՆԳՍ

Թող այդպես ջնջվեմ, երբ թշնամի դառնամ Ռիվերսին:

ՌԻՎԵՐՍ

Թող ես կործանվեմ, երբ չպաշտեմ հավետ Հեստինգսին:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Թագուհի, դու էլ զերծ չես այս մեղքից,
Ոչ էլ դու, Դորսետ, իմ անգին որդյակ, դու էլ, Բուկինգեմ:
Թշնամի եք եղել մեկդ մյուսին:
Կի՛ն, սիրիր նրան, թույլ տուր Հեստինգսը ձեռքդ համբուրի,
Հաշտվեցեք անկե՛ղծ, ոչ թե առերես:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Հաշտվում եմ, Հեստինգս. ընդմիշտ ջնջում եմ հիշողությունից
Մեր նախկին քենը: Ինչ որ ձեզ ցանկամ՝ նույն բախտին հասնեմ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Գրկիր նրան, Դորսետ, զգվիր մարկիզին, սիրասուն Հեստինգս:

ԴՈՐՍԵՏ

Սիրո դաշինքն այս, երդվում եմ ի լուր,
Անխախտ պահել միշտ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Երդվում եմ և ես:

Նրանք գրկախառնվում են:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Իշխան Բուկինգեմ, կնքիր այս ուխտը,
Ողջագուրվելով իմ կնոջ բոլոր եղբայրների հետ,
Եվ երջանկացրու ինձ ձեր միությամբ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

(Թագուհուն) Երբ Բուկինգեմը ոխով համակվի
Երբևէ ձեր դեմ, բացի ամենայն ակնածու սիրով
Ձեզ ծառայելուց, թող ասված նրան
Իր ամենաքանկ բարեկամների ոխով հատուցի:
Եվ հիշտ այն պահին, երբ բարեկամի ծայր-կարիք զգամ
Եվ վստահ լինեմ, որ նա՛ է միակ ընկերն անձնվեր,

Թող նա դավանան, նենգ ու չարակամ ոսոխ դառնա ինձ,
Այս եմ խնդրում աստծուց,
Եթե, ձեր հանդեպ կամ ձերոնց հանդեպ իմ սերը պաղի:

Նրանք գրկախառնվում են:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Քո այդ երդումը, ազնիվ Բուկինգեմ,
Սփոփիչ դեղ է իմ հիվանդ սրտին:
Միայն մեր եղբայր Գլոստերն է պակաս,
Որ գա լրացնի այս հաշտությունը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ազնիվ դուքսն եկավ և պատեհ ժամին:

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Բարի օր արքային և իմ թագուհուն,
Եվ իշխանական մեծամեծներին:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Որը, արդարև, բարի ավարտվեց:
Այսօր գթության գործ կատարեցինք,
Չարը բարությամբ և ոխը սիրով փոխարինեցինք,
Այս բարկությամբ լի լորդերի միջև:

ԳԼՈՍՏԵՐ

Դա օրհնյալ գործ է, գերագույն տեր իմ:
Այս իշխանական շեղջի մեջ եթե որևէ մեկը,
Սուտ հաստղությամբ կամ բյուր կասկածով,
Ինձ համարում է իրեն թշնամի,
Կամ եթե ինքս իմ ցասման պահին կամ անգիտաբար
Վիրավորել եմ շատ դաժանորեն
Այս ներկաներից որևէ մեկին,
Ես հաշտություն եմ խնդրում նրա հետ:
Թշնամությունը մահ է ինձ համար,
Ես ատում եմ այն և սերն եմ տենչում բոլոր լավ մարդկանց:
Նախ ես թագուհի, ձեզնից եմ խնդրում անկեղծ հաշտություն,
Որ ես կփակեմ ակնածու սիրով և ծառայությամբ:
Ձեզնից, Բուկինգեմ, ազնիվ ճեռորդի,

Երբ որևէ ոխ է դարանել երկուսիս միջև:
Ձեզնից, լորդ Ռիվերս, լորդ Գրի՝ ձեզնից,
Որ առանց հիմքի թխպել եք վրաս.
Եվ ձեզնից, դուքսեր, կոմսեր, պարոնայք, իրավ ամենքից:
Ես Անգլիայում չգիտեմ մի մարդ,
Որին ավելի թշնամի լինեմ,
Քան թե այս գիշեր ծնված Լրեխան.
Փառք աստծուն իմ այս հեզության համար:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այսօրը իբրև տոն պիտի հիշվի.
Երանի տերը վերջ տա մեր համակ հակառակության:
Իմ գերագույն տեր, այժմ խնդրում եմ ձեր բարձրությունից,
Որ ներում շնորհեք եղբայր Կլարենսին:

ԳԼՈՍՏԵՐ

Մի՞թե քազուհի ես դրա համար սեր փառզեցի,
Որ արքայի մոտ այսպես անարգվեմ:
Ո՞վ չի իմանում, որ ազնիվ դուքսը արդեն մեռած է:

Բոլորը ապշած ետ-ետ են քաշվում:

Դուք անպատվում եք նրա անունը:

ՌԻՎԵՐՍ

Ո՞վ չի իմանում, որ նա մեռած է: Իսկ ո՞վ գիտե այդ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ամենատե՛ս երկինք, այս ի՜նչ աշխարհ է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ասեք, լորդ Դորսետ, ես է՞լ եմ գունատ մյուսների պես:

ԴՈՐՍԵՏ

Այո, բարի տեր իմ: Եվ չկա մի մարդ,
Որի այտերի գույնը չթռավ:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Կլարենսը մեռա՞ծ. չէ՞ որ փոխված էր իմ հրամանը:

ԳԼՈՍՏԵՐ

Խեղճը առաջին հրամանով մեռավ,

Որ բնաբոլիչ մի Հերմես բերեց.
Երկրորդը բերեց մի դանդաղ բանբեր,
Որ հազիվ նրա թաղմանը հասավ:
Ես գիտեմ ոմանց, որ պակաս ազնիվ և հնազանդ են,—
Ոչ արենակից, սակայն արնախոհ,—
Եվ արժանի են առավել պատժի, քան Կլարենսը,
Բայց կասկածից զերծ ազատ շրջում են:

Մտնում է Դերբին:

ԴԵՐԲԻ

Մի շնորհ արեք, գերագույն տեր իմ, ի սեր անցյալիս:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Լռի՛ր, իմ հոգիս տխրությամբ է լի:

ԴԵՐԲԻ

Ես վեր չեմ կենա մինչև չլսեք:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Ուրեմն՝ շուտ ասա, ի՞նչ է խնդրածդ:

ԴԵՐԲԻ

Խնայիր, արքա, ծառայիս կյանքը.
Նա այսօր սպանեց մի խռովարար ազնվականի,
Որ դուքս Նորֆոլկի շքախմբումն էր:

ԹԱԳԱՎՈՐ ԷԴՎԱՐԴ

Մի՞թե այն լեզուն, որ իմ եղբորը դատապարտեց մահվան,
Կարող է այժմ ստրուկի ներել:
Եղբայրս ոչ մի ոճիր չէր գործել,—
Նրա հանցանքը մտացածին էր,—
Բայց իր պատիժը դառնագույն մահ էր:
Ո՞վ նրա համար ներում խնդրեց ինձնից: Ո՞վ իմ ցասման մեջ
Ծունր իջավ իմ դեմ և աղաչեց, որ խոհական լինեմ:
Ո՞վ եղբայրության անունից խոսեց: Ո՞վ խոսեց սիրուց:
Ո՞վ պատմեց, թե ինչպես խեղճը լքելով
Հզոր Վորվիկին իմ կողմը անցավ, ինձ համար կռվեց:
Ո՞վ պատմեց, թե ինչպես Տեկսբուրի դաշտում,
Երբ Օքսֆորդը սպառնում էր ինձ, նա կյանքս փրկեց

Եվ ասաց. «Ապրիր և արքա եղիր, սիրելի եղբայր»:
Ո՞վ նիշեցրեց ինձ, երբ մենք երկուսով պառկած էինք դաշտում
Գրեթե ցրտահար, ինչպես ծածկեց ինձ
Նա իր հանդերձով, իսկ իրեն հանձնեց
Այդպես մերկ ու բաց՝ գիշերվա դաժան սառնամանիքին:
Վայրագ ցասումը չարաչար պոկեց
Այդ բոլորը իմ հիշողությունից և ոչ ոք ձեզնից
Մի շնորհ չարավ հիշեցնելու այն:
Սակայն, երբ որ ձեր կառապանները կամ ծառաները
Հանկարծ գործում են մի արբշիռ ոճիր և եղծանում են
Մեր անգին փրկչի ազնիվ պատկերը,
Դուք անմիջապես ծունկի եք իջնում, թե ներե՛ք, ներե՛ք,
Եվ հանիրավի պետք է ներեմ նրանց:
Իմ եղբոր համար ոչ ոք ծունկ չիջավ,
Ոչ էլ ես ինքս հիշեցի նրան, ես՝ ապերախտս,
Օ՛, իմ խեղճ եղբայր: Ձեր բոլորից մեջ ամենից վեհը
Ամենից շատ է նրան պարտական.
Բայց ոչ ոք ձեզնից մի խոսք չաղերսեց նրա կյանքի սիրույն:
Օ, աստվա՜ծ, զիտեմ, քո դատաստանը
Կիջնի իմ գլխին, նաև ձեր գլխին այդ մեղքի համար:
Գնա՜նք, լորդ Հեստինգս, ինձ սենյակս տար,
Ա՜խ, խե՜ղճ Կլարենս:

Թագավորը, թագուհին, Հեստինգսը, Ռիվերսը, Դորսետը
և Գրեն դուրս են գնում:

ԳԼՈՍՏԵՐ

Ահա անզգույշ գործի պտուղը: Նկատեցի՞ր դու,
Թե ինչպես թագուհու ազգականները
Խիստ գունատվեցին, երբ Կլարենսի մահվան լուրն առան:
Ի հեճուկս արքայի՝ խոնարհվեցին նրան:
Վրեժխնդիր կլինի աստված դրա համար: Չգնա՞նք, լորդեր,
Էդվարդին խմբով մխիթարելու:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Միշտ ծառա ենք ձեզ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Պալատը։

Մտնում է Յորքի դքսուհին՝ Կլարենսի որդու և դստեր հետ։

ՈՐԴԻ

Տատիկ, մեր հայրը մեռե՞լ է, ասա՛։

ԴՔՍՈՒՀԻ

Ոչ, զավակս։

ԴՈՒՍՏՐ

Ապա ինչո՞ւ ես այդքան շատ լալիս և կուրծքդ ծեծում
Եվ ճչում այդպես. «Օ՜, իմ Կլարե՛նս, իմ անբա՛խտ որդյակ»։

ՈՐԴԻ

Ինչո՞ւ ես այդքան խղճահարությամբ նայում մեզ վրա
Եվ անվանում մեզ անտերունչ որբեր,
Երբ մեր հայրը ողջ է իսկապես։

ԴՔՍՈՒՀԻ

Իմ սիրուն թոռներ, իրավացի չեք.
Արքան հիվանդ է, դա է պատճառը իմ արտասուքի։
Նրան եմ սգում, ոչ թե ձեր հորը,
Ի՞նչ օգուտ ողբալ մեկին, որ չկա...

ՈՐԴԻ

Ա՜յ, տեսա՞ր, տատիկ, ինքդ ես հաստատում, որ նա մեռած է,
Եվ մեղավորը իմ հորեղբայրն է.
Եվ ես ամեն օր աղոթքներիս մեջ կաղաչեմ աստծուց,
Որ նրան պատժի։

ԴՈՒՍՏՐ

Ես էլ կխնդրեմ։

ԴՔՍՈՒՀԻ

Լռե՛ք, երեխեք, թագավորը ձեզ սաստիկ սիրում է։
Դուք փոքրիկ, անմեղ արարածներ եք։
Եվ չեք իմանում, թե ո՞վ է ձեր հոր մահվան պատճառը։

ՈՐԴԻ

Մենք գիտենք, տատիկ: Ազնիվ հորեղբայր Գլոստերն ասաց,
Որ թագավորը թագուհու դրդմամբ
Հրամայել է հորս բանտարկել,
Եվ երբ պատմում էր, խեղճ հորեղբայրս այնպես էր լալիս,
Եվ խղճում էր ինձ, այտերս էր պագում.
Ասում էր, որ ինձ հայրությամբ կանի
Եվ չի տարբերի հարազատ որդուց:

ԴՔՍՈՒՀԻ

Ա՜, նենգությունը նա քողարկում է ազնիվ ձևի տակ
Եվ առաքինի դիմակով ծածկում չարիքն անհատակ:
Նա իմ որդին է և հետևաբար իմ նախատինքը,
Բայց նենգությունը նա իմ մայրական կաթից չի ծծել:

ՈՐԴԻ

Իսկ հորեղբայրս մի՞թե կեղծում է:

ԴՔՍՈՒՀԻ

Այո, իմ թոռնիկ:

ՈՐԴԻ

Ես չեմ հավատում: Բայց այս ի՞նչ ձայն է:

Մտնում է Եղիսաբեթ թագուհին վարսերը թափած,
նրա հետևից՝ Ռիվերսը և Դորսեթը:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, մի խափանեք իմ լացն ու կոծը,
Թողեք տանջեմ ինձ, բախտս անիծեմ:
Ես պիտի փարվեմ սև վհատությանն՝ ընդդեմ իմ հոգու,
Եվ իբրև ոսոխ զինվեմ անձիս դեմ:

ԴՔՍՈՒՀԻ

Այս ի՞նչ տեսիլ է այսքան ապաժույժ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Սա սկիզբն է մեծ մի ողբերգության.
Եդվարդս մեռավ, մեր արքան՝ որդիդ՝ իմ ամուսինը:
Ինչո՞ւ համար են ճյուղերը ապրում, արմատն երբ չկա,
Եվ տերևները ինչո՞ւ չեն թոշնում, երբ զուրկ են հյութից:

Ողբացե՛ք, երբ այրել եք ուզում,
Մեռնե՞լ եք ուզում՝ արագ վերջացրեք,
Որ թևաթռիչ մեր հոգիները արքայի հոգու հետևից հասնեն:
Խոնարհ ստրուկներ, հետևեք նրան
Դեպի նրա նոր արքայությունը հավերժ գիշերի:

ԴՔՍՈՒՀԻ

Ավա՜ղ, քո վիշտը իմ վաշտն է նույնպես,
Չէ որ ես մայրն եմ ազնիվ ամուսնուդ:
Երբ իմ վեհափառ ամուսինը մեռավ,
Նրա պատկերը ես տեսնում էի որդիներիս մեջ,
Բայց ժանտատեսիլ մահը կործանեց
Իր շքեղ դեմքի երկու հայելին.
Ինձ մխիթարող երրորդը մնաց՝ մի ծուռ հայելի,
Որին նայելիս ես ամաչում եմ:
Թեպետ այրի ես, սակայն մայր ես դու,
Քո զավակները սփոփանք են քեզ.
Բայց մահը շորթեց իմ բազուկներից անգին ամուսնուս
Եվ երկու նեցուկ կորզեց իմ տկար ձեռքերի միջից՝
Իմ Կլարենսին և իմ Էդվարդին: Օ՜, վիշտս մեծ է,
Քոնը իմ ցավի կեսն է հազիվհազ,
Քո ամբողջ ողբը կարող է սուզվել կսկիծներիս տակ:

ՈՐԴԻ

Ավա՜ղ, հորաքույր, մեր հայրը մեռավ, դու չարտասվեցիր,
Ինչպե՞ս կարող ենք մենք քեզ կարեկցել:

ԴՈՒՍՏՐ

Երբ մենք որբացանք, մի «ախ» չասացիր,
Մենք էլ քեզ համար արցունք չենք թափի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ձեր օգնությունը ինձ հարկավոր չէ իմ ողբի ժամին,
Ես արցունքներից բնավ ցամաք չեմ.
Ինչքան աղբյուր կա՝ գալիս թափվում է իմ աչքերի մեջ,
Որ ես ջրարբի լուսնի զորությամբ
Աշխարհը սուզեմ հորդ արցունքիս տակ:
Ա՜խ, իմ ամուսի՜ն, ա՜խ, անգի՜ն էդվարդ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ա՜խ, մեր անգի՜ն հայր, մեր խե՜ղճ Կլարենս:

ԴՔՍՈՒՀԻ

Ավա՜ղ, իմ որդի՝ էդվա՜րդ, Կլարե՜նս:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Միակ հենուկս էդվարդն էր՝ չկա՜...

ԵՐԵԽԱՆԵՐ

Մեր թեն ու թիկունքը Կլարենսն էր՝ չկա՜...

ԴՔՍՈՒՀԻ

Իմ ապավենը նրանք էին՝ չկա՜ն...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Երբեք չի եղել ինձ պես դժբախտ կին:

ԵՐԵԽԱՆԵՐ

Երբեք չեն եղել մեզ պես խեղճ որբեր:

ԴՔՍՈՒՀԻ

Երբեք չի եղել ինձ պես անբախտ մայր:
Վա՜յ ինձ, ես մայրն եմ այս բոլոր վշտի.
Իմ ցավն համուր է, նրանցը՝ հատուկ.
Նա հառաչում է էդվարդի համար, ես էլ եմ ողբում,
Ես արտասվում եմ Կլարենսի համար, իսկ նա չի ողբում:
Սրանք լալիս են Կլարենսի համար, ես էլ եմ լալիս:
Ես արտասվում եմ էդվարդի համար, նրանք չեն լալիս:
Ա՜խ, դուք երեք եք, ցավս՝ եռակի,
Օ՜, արտասվեցե՜ք, ես դայակն եմ ձեր բոլորի վշտի
Եվ կխեղդեմ ձեր ապաշավը անեղ ողբերով:

ԴՈՐՍԵՏ

Հանդարտվիր, մայր իմ. մեզ է տրտնջալ
Աստծո գործի դեմ.
Այս երկրի վրա ապերախտ է նա,
Ով դժկամությամբ վերադարձնում է այն անգին պարտքը.
Որ շռայլ ձեռքով տրված է իրեն:
Առավելապես կարելի բան չէ վիճել երկնքի հետ,
Քանզի նա իր պերճ պարգևն է ուզում, որ քեզ շնորհեց:

ՌԻՎԵՐՍ

Լսեք, թագուհի, մայրաբար խորհեք
Մանուկ իշխանի՝ ձեր որդու մասին։ Շուտ կանչեք նրան,
Թող թագադրվի. նա է ձեր հույսը։
Ձեր վիշտը թաղեք մեռած էդվարդի գերեզմանի մեջ,
Ձեր խինդն հաստատեք էդվարդի գահին, որ ողջ է հիմա։

Մտնում են Գլոստերը, Բուկինգեմը, Դերբին, Հեստինգսը, Ռետկլիֆը և ուրիշներ։

ԳԼՈՍՏԵՐ

Հանդարտվիր, քույր իմ, ամենքս էլ պատճառ ունենք ողբալու
Մեր պայծառ աստղի աղոտացումը։
Սակայն լացով չէ վիշտը ամոքվում։
Տիրուհի, մայր իմ, ների՛ր, խնդրում եմ,
Ես քեզ չտեսա։ Խոնարհ ծունր իջած,
Տես, թախանձում եմ քո օրհնությունը։

ԴՔՍՈՒՀԻ

Աստված օրհնե քեզ. սե՛ր, կարեկցությո՛ւն,
Հնազանդություն և անկեղծություն ներշնչե հոգուդ։

ԳԼՈՍՏԵՐ

Ամե՛ն. *(մեկուսի)* և ապրեմ մինչև խոր հասակ,
Այդ է ամեն մոր փափագը վերջին.
Ապշում եմ, որ նա այդ մասին չասաց։

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տրտում իշխաններ և ավագանի,
Որ այս ընդհանուր սուգի բեռան տակ հեծում եք այդպես,
Ցնծացեք այժմ փոխադարձ սիրով.
Թեպետ մահը մեր արքային հնձեց,
Բայց որդու հունձը մենք կժողովենք։
Ձեր այդ երկպառակ գոռոզ սրտերի ոխը փշրվեց,
Նրանք վերջերս ի մի զոդվեցին բարեկամությամբ.
Մեր պարտքն է այժմ խնամքով պահել և փայփայել այն։
Առաջարկում եմ մի շքախմբով, փոքրիկ, իհարկե,
Լուդլոյից բերել մանուկ իշխանին,
Եվ Լոնդոնի մեջ արքա կարգել մեզ։

ՌԻՎԵՐՍ

Իսկ ինչո՞ւ փոքրիկ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Մի՞թե պարզ չէ, կոմս: Երբ մեծ ամբոխ կա,
Հազիվ ամոքված վերքը կարող է պայթել աղետով,
Որը դառնում է խիստ վտանգավոր միայն այն դեպքում,
Երբ երկիրը դեռ ղեկավար չունի և երերում է.
Որտեղ ամեն ձի՝ ինքն իր սանձին տեր,
Պատրաստ է ուզած ուղղությամբ սուրալ:
Ուստի կարծում եմ, մենք պարտավոր ենք
Կանխելու ամեն երկյուղ ու չարիք:

ԳԼՈՍՏԵՐ

Մեզ թագավորը հաշտեցրեց միմյանց,
Անխախտ կպահեմ ես այդ դաշինքը:

ՌԻՎԵՐՍ

Ես էլ կպահեմ, բոլորս էլ, կարծեմ.
Բայց քանի որ մեր դաշինքը թարմ է, մենք պարտավոր ենք
Այն պահպանելու ամեն ճեղքվածքից,
Որը կարող է առկա լինել մեծ բազմության դեպքում:
Ահա թե ինչու ես համամիտ եմ դուքս Բուկինգեմին,
Որ փոքրիկ խմբով բերենք իշխանին:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ես էլ հոժար եմ:

ԳԼՈՍՏԵՐ

Թող այդպես լինի: Գնանք որոշենք, թե ովքեր պետք է
Առաքվեն Լուդլոն: Տիկին և մայր իմ, չե՞ք կամի արդյոք
Մեզ ձեր խորհրդով օգնել այդ գործում:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ ԵՎ ԴՔՍՈՒՀԻ

Ի սրտե կուզենք:

Բոլորը դուրս են գնում, բացի Բուկինգեմից և Գլոստերից:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ում էլ ուղարկենք թագաժառանգի հետևից, տեր իմ,
Ի սեր աստծո, մեր երկուսին էլ արտոնեք գնալ:

Քանզի ուզում եմ ես ճանապարհին մի միջոց խորհել, —
Ի կատարումն մեր նախկին ծրագրի, —
Որ անշրպետեմ թագուհու ցեղը մանուկ իշխանից:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, իմ երկրորդ անձ, իմ խորհրդարան,
Իմ պատգամախոս և իմ մարգարե: Իմ անգի՜ն եղբայր,
Մանկան պես կգամ ես քո նետևից:
Արդ, դեպի Լուդլո. հապաղել պետք չէ.

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Լոնդոն: Մի փողոց:

Մտնում են երկու քաղաքացի տարբեր կողմերից:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Բարև, հարևան. ո՞ւր ես շտապում:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Ճշմարիտն ասած, ինքս էլ չգիտեմ:
Նոր բան լսե՞լ ես:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Այո, արքան մեռել է:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Շատ տհաճ լուր է: Լավ բան չսպասես,
Ես վախենում եմ՝ կյանքը վատանա:

Մտնում է երրորդ քաղաքացին:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Բարև, դրացիք:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Բարի լույս, պարոն:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Ճի՞շտ է, որ Էդվարդ արքան մեռել է:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Ավա՜ղ, շատ ճիշտ է: Մեր տերն է ասացված:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Աշխարհիս բանը բուրդ է ուրեմն:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Ասված բարի է, իր որդին կիշխե:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Եղուկ այն երկրին, որի տերն է մանուկ:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Տերության հույսը նրա վրա է.
Քանի դեռ փոքր է, մեծերը կօգնեն,
Իսկ երբ մեծանա, ինքը կսկսի ինքնուրույն իշխել:
Է՜, վնաս չկա, կարծում եմ կարգի կգա ամեն ինչ:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Այդպես եղավ նաև Հենրի Վեցերորդ թագավորի հետ.
Ինն ամսական էր, երբ որ Փարիզում արքա հարգեցին:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Մի՞թե այդպես էր: Ոչ, բարեկամներ,
Այն տարիներին մեր երկիրն ուներ
Բանագետների մի լրջմիտ խորհուրդ, իսկ արքան ուներ
Իր մեջքին կանգնած ողջախոհ, ազնիվ քաջ հորեղբայրներ:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Սա նույնպես ունի, թե՛ իր հոր կողմից և թե՛ մոր կողմից:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Երանի բոլորը հոր կողմից լինեն,
Կամ թե հոր կողմից ոչինչ չունենար,
Չէ որ պայքարը առաջնության համար
Մեզ է դիպչելու առավելապես, եթե աստվածը չխափանի այն:
Դուքս Գլոստերը խիստ վտանգավոր և խորամանկ է.
Թագուհու որդիք և եղբայրները՝ բարձրամի՜տ, գոռո՜զ,
Նրանց պետք է զսպել. միայն այդ դեպքում
Դժբախտ երկիրն այս առաջվա նման շունչ կառնի ազատ:

Ա ՔԱՂԱՔԱՑԻ

Վախենալ պետք չէ, ամեն ինչ լավ կլինի:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Երկինքն ամպելիս՝ վերարկու հագիր,
Երբ վայր են թափվում մեծ սաղարթները՝ ձմեռը մոտ է.
Երբ արևը մտավ՝ գիշերն է գալիս,
Անժաման հողմը սով է գուշակում:
Ամեն ինչ լավ կլինի, թե աստված օգնեց,
Բայց դրան չարժենք, ոչ էլ հույս ունեմ:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Մարդկանց սրտերը երկյուղով են լի,
Եվ չկա մեկը,
Որ չսարսափի այս արհավիրքից:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Ցնցումից առաջ միշտ այդպես է լինում,
Մարդկային միտքը երկնային բնազդով
Զգում է վտանգը. այդպես էլ ահա
Ջրերն են ուռչում փոթորկից առաջ,
Մեր տերն է աստված: Դուք ո՞ւր եք գնում:

Բ ՔԱՂԱՔԱՑԻ

Մի՞թե չգիտես, ատյան ենք կանչված:

Գ ՔԱՂԱՔԱՑԻ

Ես էլ եմ կանչված: Գնանք միասին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Պալատը:

Մտնում են Յորքի արքեպիսկոպոսը, Յորքի մանուկ դուքսը, Եղիսաբեթ թագուհին և Յորքի դքսուհին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Նորթեմպտոնում են երեկ գիշերել,
Այսօր կհասնեն Ստոնի-Ստրետֆորդ,

Վաղը մյուս օր այստեղ կլինեն:

ԴՔՍՈՒՀԻ

Ի սրտե կուզեմ իշխանին տեսնել,
Նա հիմա անշուշտ շատ է մեծացել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդպես չեմ լսել: Նրանք ասում են, թե կրտսեր որդին
Նրանից ավելի արագ է աճում:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Այդ ճիշտ է, տատիկ, բայց երանի թե այդպես չլիներ:

ԴՔՍՈՒՀԻ

Իսկ ինչո՞ւ, թոռնիկ, աճելը լավ է:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Տատիկ, մի անգամ ընթրիքի վրա
Քեռի Ռիվերսը նկատեց, որ ես
Ավելի բարձր եմ, քան թե եղբայրս:
«Այո,— հորեղբայր Գլոստերն ասաց,—
Մանր ծաղկունքը ուշ է կանաչում,
Իսկ անպետք խոտը արագ է աճում»:
Չէի կամենա բոյ քաշել այդպես,
Այլ՝ դանդաղ աճել անուշ ծաղկի պես:

ԴՔՍՈՒՀԻ

Բայց, դժբախտաբար, այդ նույն առածից
Ինքը շեղվում է:
Երբ երեխա էր, մի վտիտ բան էր,
Շատ վատ էր աճում և այնքան դանդաղ,
Որ հիմա պետք է, ըստ իր կանոնի, բարի մարդ լիներ:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Եվ նա անկասկած այդպիսի մարդ է:

ԴՔՍՈՒՀԻ

Հնարավոր է, բայց ես վստահ չեմ:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ափսո՜ս, մոռացա. եթե հիշեի

Ես նրա մասին մի խոսք կասեի
Իբրև պատասխան իր այդ առածին:

ԴՔՍՈՒՀԻ

Ի՞նչ կասեիր, Յորք, խնդրում եմ ասա:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ասում են, որ նա ծնվելուց ուղիղ երկու ժամ հետո
Սկսել է նացի չորուկը կրծել,
Մինչդեռ ես երկու տարի ապրել եմ առանց ատամի:
Ա՛յ թե ինչպիսի սուր խոսք կասեի:

ԴՔՍՈՒՀԻ

Ո՞վ է քեզ ասել:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Նրա դայակը:

ԴՔՍՈՒՀԻ

Նրա դայա՞կը: Դու ծնված չէիր, երբ նա մեռել է:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ուրեմն՝ չեմ հիշում, թե ով է ասել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Շատախոս մանուկ, չար ես երևում:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Օ՛, մի բարկացիր վրան, թագուհի: Դեռ երեխա է:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Պատերն ականջ ունեն:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ահա մի բանբեր:

Մտնում է մի սուրհանդակ:

Ի՞նչ լուր ես բերել:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այնպիսի մի լուր, որ ինձ համար խիստ ցավ է հաղորդել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իշխանն ինչպե՞ս է:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Առողջ է, տիկին:

ԴՔՍՈՒՀԻ

Հապա ի՞նչ լուր է:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Իշխան Ռիվերսը, նաև լորդ Գրին
46 Եվ Թոմաս Վողեն ձերբակալված են և տարված Պոմֆրետ:

ԴՔՍՈՒՀԻ

Ո՞վ է բանտարկել:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Դուքս Գլոստերը
Եվ Բուկինգեմը:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ի՞նչ մեղքի համար:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ինչ որ գիտեի, հայտնեցի լրիվ,
Թե ինչու համար ձերբակալված են,
Այդ անհայտ է ինձ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Վա՜յ ինձ, ես մեր տան անկումն եմ տեսնում:
Ամեհի վագրը հափշտակել է քնքուշ այծյամին:
Վայրագ չարիքը սկսում է սիգալ
Անմեղ, անպաշտպան մեր գահի վրա:
Ե՜կ, ով կործանում, արյուն և ոճիր,
Ես պարզ տեսնում եմ այժմ ամեն ինչ:

ԴՔՍՈՒՀԻ

Նզովյա՜լ, խառնա՜կ, դավաղիր օրեր,
Քանիսին տեսավ աչքս ձեզանից.
Ամուսինս զոհվեց թագի ձգտելիս,
Որդիքս վեր ու վար նետվեցին հաճախ

Ի խինդ իմ սրտի և ի կսկիծ ինձ:
Հազիվ հանդարտվեց թշնամությունը,
Ծայր առան ներքին խռովություններ. նվաճողները
Իրար դեմ ելան, եղբայրն եղբոր դեմ,
Արյուն արյան դեմ և անձ անձի դեմ: Օ՜, դու տարադեպ
Մոլի բռնություն, զսպիր անիծյալ կատաղությունդ:
Մեռնելը լավ է, քան անվերջ տոկալ արյուն ու անկում:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ե՛կ գնանք, որդյակ, և մտնենք տաճար:
Մնացեք բարի:

ԴՔՍՈՒՀԻ

Ես էլ եմ գալիս:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Դուք պատճառ չունեք:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Թագուհուն) Այո, գնացեք, ազնիվ տիրուհի,
Բայց վերցրեք ձեզ հետ ձեր ամբողջ գանձը:
Ուզում եմ հանձնել
Ձեզ այն կնիքը, որ մոտս եմ պահում: Թող բարձրյալ տերը
Ինձ օգնի այնպես, ինչպես ինքս՝ ձեզ:
Դե, գնանք տաճար, ես ձեզ կուղեկցեմ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Մի փողոց:

Շեփորներ: Մտնում են Վալեսի մանուկ իշխանը, Գլոստերը, Բուկինգեմը, կարդինալ Բուրշերը, Քեթսբին և ուրիշներ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բարի եկար, իշխան, քո արքայանիստ քաղաքը՝ Լոնդոն:

ԳԼՈՍՏԵՐ

Օ, բարի եկար, իմ եղբորորդի, մտքիս տիրակալ:
Տրտում տեսք ունես. ճամփին հոգնեցի՞ր:

ԻՇԽԱՆ

Օ, ոչ, հորեղբայր, թեև իսկապես
Ճամփան դժվար էր, երկար, տաղտկալի: Պատճառն ուրիշ է:
Ինչո՞ւ իմ բոլոր հորեղբայրները այստեղ ներկա չեն:

ԳԼՈՍՏԵՐ

Անուշիկ իշխան, անմեղ հասակդ
Դեռ խորամուտ չէ մեր այս աշխարհի նենգություններին:
Դու մարդու մասին կարող ես դատել
Լոկ նրա տեսքով, որն աստված գիտե,
Թե որքան հաճախ ներհակ է սրտին:
Քո այդ ցանկալի հորեղբայրները վտանգավոր են:
Դու նրանց մեղրոտ խոսքերով արբած,
Դեռ նրանց սրտի թույնը չես տեսած:
Թող աստված փրկե քեզ բոլոր այդ նենգ բարեկամներից:

ԻՇԽԱՆ

Աստված փրկի ինձ նենգ բարեկամից, նրանք նենգ չէին:

ԳԼՈՍՏԵՐ

Իշխան, Լոնդոնի քաղաքապետը ողջույնի եկավ:

Մտնում է Լոնդոնի լորդ քաղաքապետը շքախմբով:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Աստված օրհնի ձեզ և երկար օրեր բախտավոր դարձնի:

ԻՇԽԱՆ

Շնորհակալ եմ, միլորդ: Բոլորից նույնպես:

Քաղաքապետը և շքախումբը ետ են քաշվում:

Ես կարծում էի, որ իմ մայրիկը և Յորք եղբայրս
Մեզ պետք է վաղուց դիմավորեին:
Օ՜, այս Հեստինգսը ինչ դանդաղկոտ է, ինչո՞ւ չի գալիս,
Որ մի լուր բերի՝ գալո՞ւ են թե՞ ոչ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ահա նա եկավ սաստիկ քրտնաթոր:

Մտնում է Հեստինգսը:

ԻՇԽԱՆ

Բարի եկար, լորդ: Մայրս գալի՞ս է:

ՀԵՍՏԻՆԳՍ

Թե ինչ առիթով,— աստծուն է հայտնի,—
Թագուհին՝ մայրդ, և եղբայր Յորքը,
Սուրբ տաճար մտան: Մանուկ իշխանը
Ուզում էր ինձ հետ ձեզ տեսության գալ,
Մայրը չթողեց: Բռնի արգելեց:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Խիստ տարօրինակ և ապօրեն է
Իր այդ վարմունքը: Դուք, լորդ կարդինալ, չե՞ք կամի արդյոք
Համոզել նրան, որ Յորքի դուքսը պարտավոր է գալ
Արքունի իշխան եղբոր տեսության:
Դուք էլ, լորդ Հեստինգս, գնացեք իր հետ,
Եթե մերժի գալ՝ կորզեցեք դքսին մոր խանդոտ գրկից:

ԿԱՐԴԻՆԱԼ

Իմ լորդ Բուկինգեմ, եթե իմ տկար ճարտասանությամբ
Կարենամ դքսին մոր գրկից կորզել,
Նրան անհապաղ այստեղ կբերեմ:
Բայց եթե մայրը անտարբեր մնաց
Խոնարհ խնդրանքիս, քավլիցի, մեր սուրբ
Ապաստարանի կարգը խանգարել:
Թեկուզ այս ամբողջ երկիրը ինձ տան,
Այդպիսի ծանր հանցանք չեմ գործի:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Դուք շատ անբան եք և համառ, տեր իմ,
Սաստիկ ծիսասեր և ավանդապահ:
Մեր ժամանակի ոգով դատեցեք.
Հանցանք չէ նրան տանարից հանել:
Սուրբ ապաստանի պաշտպանությանը նրանք են դիմում,
Որ իրենց վարքով արժանի են դրան,
Նաև այն մարդիկ, որ կամենում են զգույշ թաքնվել:
Մինչդեռ իշխանը բնավ պետք չունի պատսպարվելու,
Ուստի այդ վայրը նրա տեղը չէ:
Նրան բերելով դուք չեք խախտելու
Սուրբ ապաստանի օրենքն ու կարգը:
Հաճախ եմ լսել, որ մարդիկ այնտեղ պատսպարվում են,
Բայց մանուկների մասին չեմ լսել:

ԿԱՐԴԻՆԱԼ

Տեր իմ, դուք այժմ ինձ համոզեցիք.
Գնանք, լորդ Հեստինգս: Կամի՞ք ինձ հետ գալ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Պատրաստ եմ, տեր իմ:

ԻՇԽԱՆ

Փութացեք, լորդեր, և շուտ ետ դարձեք:

Կարդինալը և Հեստինգսը գնում են:

Ասա, հորեղբայր, երբ եղբայրս գա,
Մինչ թագադրվելը ո՞ւր պիտի ապրենք:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ իշխանական ձեր կամքն է արդեն:

Իմ խորհուրդն այն է, որ մեկ-երկու օր
Դուք Բերդում մնաք,
Իսկ այնուհետև որտեղ կամենաք կամ որտեղ հարմար
Եվ առողջարար մի շենք կգտնեք ապրելու համար:

ԻՇԽԱՆ

69 Ոչ մի շինություն այնպես չեմ ատում, ինչպես այս Բերդը:
Հուլիոս Կեսարն է շինել, այնպես չէ՞:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Նա, ազնիվ իշխան, լոկ հիմքը դրեց,
Բայց այն ավարտվեց շատ դարեր հետո:

ԻՇԽԱՆ

Այդպես գրվա՞ծ է, թե՞ հին զրույց է,
Որ նա է շինել:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Գրված է, տեր իմ:

ԻՇԽԱՆ

Իսկ եթե, միլորդ, գրված չլիներ
Ճշմարտությունը, կարծում եմ, դարձյալ դարեդար կանցներ
Սերնդեսերունդ,
Մինչև վերջնագույն օրը աշխարհի:

ԳԼՈՍՏԵՐ

(Մեկուսի) Երբ մանուկները շատ խելացի են, երկար չեն ապրում:

ԻՇԽԱՆ

Ի՞նչ ես ասում, հոպար:

ԳԼՈՍՏԵՐ

Ասում եմ փառքը առանց գրի էլ երկար է ապրում:
83 *(Մեկուսի)* Թագավորի հին խեղկատակի պես
Իմ ամեն բառը սուր է երկայրի:

ԻՇԽԱՆ

Հուլիոս Կեսարը փառավոր մարդ էր.
Նա քաջության մեջ փայլում էր խելքով,

Եվ նրա խելքով անմահացան այդ քաջությունները:
Այդ մեծ հաղթողին մահը չի հաղթի,
Քանզի նա այժմ ապրում է փառքով, թեպետ մեռած է:
Ձեզ մի բան կուզեմ ասել. լորդ Բուկինգ...

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ի՞նչ է, իշխան իմ:

ԻՇԽԱՆ

Երբ որ մեծանամ՝
Կամ Ֆրանսիայից ես ետ կխլեմ մեր հին հողերը,
Կա՛մ թե քաջաբար կընկնեմ կռվի մեջ:

ԳԼՈՍՏԵՐ

(Մեկուսի) Վաղամոռ գարնան ամառը կարճ է...

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ահա դուքս Յորքը:

Մտնում են մանուկ Յորքը, Հեստինգսը և Կարդինալը:

ԻՇԽԱՆ

Ռիչարդ, եղբայր իմ, ինչպե՞ս ես, անգին:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Լավ եմ, գերազույն: Ես պետք է այժմ քեզ այդպես կոչեմ:

ԻՇԽԱՆ

Այո, եղբայր իմ, ի ցավ երկուսիս,
Արդեն չկա նա, որ կարող էր այդ տիտղոսը կրել,
Եվ այդ տիտղոսն էլ առաջվանը չէ, երբ նա մեռել է:

ԳԼՈՍՏԵՐ

102 Ինչպե՞ս է դուքսը, իմ եղբորորդին·

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Շնորհակալ եմ, ազնիվ հորեղբայր: Դու ասում էիր,
Որ անպետք խոտը արագ է անում,
Տես, իշխանն ինձնից բարձր է հասակով:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, նա բարձր է...

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ուրեմն անպե՞տք է:

ԳԼՈՍՏԵՐ

Այդպես չեմ ասել: Չէի հանդգնի:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ուրեմն նա է շատ պարտական քեզ:

ԳԼՈՍՏԵՐ

Նա գերագույնս է, ես նրա ծառան,
Իսկ դու մոտ ես ինձ իբրև ազգական:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Նվիրիր, խնդրեմ, այդ դաշույնը ինձ:

ԳԼՈՍՏԵՐ

Դաշո՞ւյնս, վերցրո՛ւ:

ԻՇԽԱՆ

Ա՜խ դու, մուրացկան:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Աննշան բան է,
Ուստի չի ցավում ինձ տալու համար:

ԳԼՈՍՏԵՐ

Պատրաստ եմ ավելի մեծ նվեր տալու:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ավելի մե՞ծը: Քո սուրը կտա՞ս:

ԳԼՈՍՏԵՐ

Ափսո՜ս, շատ ծանր է, թե ո՛չ կտայի:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Արդեն տեսնում եմ, որ թեթև ընծան դյուրին
Ծա՞նրը մերժում ես:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց սուրս ծանր է, չես կարող կրել:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Դրանից ծանրը կարող եմ կրել:

ԳԼՈՍՏԵՐ

Իրա՞վ, կուզեիր իմ սուրը կապել, մատնաչափ իշխան:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Այո, կուզեի, որ ձեզ պարտական լինեմ այդ կոչմամբ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչպե՞ս:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Մատնաչափի պես:

ԻՇԽԱՆ

Յորքի դուքսը միշտ այդպես խիզախ է,
Սիրով եք նրան տանում, հորեղբայր:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ուզում ես ասել, ծաղրում է ինձ, ոչ թե շալակում:
Տեսա՞ր, հորեղբայր, ինչպես է ծաղրում իմ եղբայրը մեզ:
Փոքր եմ կապկի պես,
Ուստի, կարծում է, ինձ կշալակես:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

(Առանձին՝ Հաստինգսին) Ի՜նչ սուր է խոսում:
Նա ինքը իրեն ճարտար հեգնում է,
Որ չափավորի հորեղբորն ուղղած սոսկալի ծաղրը:
Այսքան դեռահաս և այսքան խելոք՝ շատ զարմանք բան է:

ԳԼՈՍՏԵՐ

Չե՞ք բարեհաճի առաջանալ, տեր իմ:
Բուկինգեմի հետ
Ես հիմա պետք է գնամ մորդ մոտ՝ խնդրելու նրան,
Որ Բերդի առաջ դիմավորի ձեզ:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ինչպե՞ս, իշխան իմ, Բե՞րդ պիտի երթանք:

ԻՇԽԱՆ

Իմ հոգաբարձու հորեղբոր կամքն է:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Ես Բերդում հանգիստ քնել չեմ կարող:

ԻՇԽԱՆ

Ինչի՞ց է վախը:

ՅՈՐՔԻ ԴՈՒՔՍ

Հորեղբայր Կլարենսի զայրացած ոգուց:
Տատս ինձ պատմեց, որ Բերդի մեջ են նրան սպանել:

ԻՇԽԱՆ

Մեռած հորեղբորից ես չեմ վախենում:

ԳԼՈՒՍՏԵՐ

Ոչ էլ նրանցից, որ կենդանի են:

ԻՇԽԱՆ

Հորեղբայրներս քանի դեռ ողջ են, ես երկյուղ չունեմ:
Բայց գնանք, եղբայր, վշտալի սրտով
Նրանց հիշելով մեկնենք դեպի Բերդ:

Հրաժեշտի փող: Բոլորը դուրս են գնում. մնում են Գլոստերը, Բուկինգեմը և Քետսբին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ի՞նչ եք կարծում, լորդ, խորամանկ մայրը
Շատախոս մանկանն արդյոք չի՞ դրդել
Ձեզ լկտի ծաղրել, անարգել այդքան:

ԳԼՈՒՍՏԵՐ

Օ, անշո՜ւշտ, անշո՜ւշտ: Հանդուգն լակոտ է,
Շաղակրատ, ճարպիկ, խելոք, խորամանկ,
Իսկ և իսկ մայրն է՝ գագաթից կրունկ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լա՜վ, թողնենք նրանց: Եկ այստեղ, Քետսբի,
Դու երդվել ես մեր գործին աջակցել
Եվ մեր խորհուրդը խիստ գաղտնի պահել:
Մեր ծրագիրը քեզ ճանապարհին արդեն պարզեցինք.
Դու ի՞նչ ես կարծում. հնարավոր չէ՞
Համամիտ դարձնել մեզ լորդ Հեստինգսին,

Եվ բարեհոչակ այս աղնիվ դքսին
Մեր արքայական գահին բարձրացնել:

ՔԵՏՍԲԻ

Ի սեր արքայի, նա այնքան բուռն է սիրում իշխանին,
Որ նրա հանդեպ երբեք չի զինվի:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Իսկ լորդ Ստենլի՞ն. ինչպե՞ս ես կարծում:

ՔԵՏՍԲԻ

Նա նույնը կանի, ինչ որ Հեստինգսը:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Լավ, բավական է. գնա՛, Քետսբի,
Եվ հեռվից փորձիր դու լորդ Հեստինգսին.
Տես ինչ աչքով է մեր գործին նայում,
Իսկ վաղը նրան Բերդ հրավիրիր,
Ասա խորհուրդ կա թագադրման առթիվ:
Երբ նկատես, որ նա մեր հանդեպ բարեհամբույր է,
Քաջալերիր նրան, պարզիր մեր հիմքը:
Իսկ եթե սառն է, կապարի պես պինդ, սաստիկ անհոժար՝
Դու էլ այդպես եղիր: Զրույցն ընդհատիր
Եվ հաղորդիր մեզ, թե նա ինչպիսի ախորժակ ունի:
Վաղը առանձին երկու խորհուրդ ենք մենք գումարելու
Դու այնտեղ կարևոր դեր պիտի խաղաս:

ԳԼՈՒՍՏԵՐ

Նաև ողջույնս լորդ Վիլյամին տար. պատմիր, Քետսբի,
Որ վաղը նրա թշնամիները
Պոմֆրետ ամրոցում պիտի գլխատվեն:
Եվ ասա նրան, թող այս ցնծագին լուրերի համար
Նա տիկին Շորին մեկ էլ համբուրի:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Գնա, շուտ արա՝ ինչ որ ասացինք, ազնիվ Քետսբի:

ՔԵՏՍԲԻ

Կփութամ՝ որքան հնարավոր է:

ԳԼՈՍՏԵՐ

Գուցե այս գիշեր մեզ լո՞ւր կբերես:

ՔԵՏՍԲԻ

Այո, բարի լորդ:

ԳԼՈՍՏԵՐ

Կգաս Կրոսբի, մենք այնտեղ կլինենք:

Քետսբին գնում է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ասեք, իշխան իմ, ի՞նչ ենք անելու,
Երբ Հեստինգսը մեր կողմը չանցավ:

ԳԼՈՍՏԵՐ

Գլուխը կկտրենք. կպատժենք անշուշտ:
Տե՛ս, չմոռանաս, երբ արքա դառնամ, ինձնից պահանջիր
Հերֆորդ գավառը շարժական կայքով,
Որին տիրում էր արքա եղբայրս:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ես այդ խոստումը ձեզ կհիշեցնեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչ խոստացել եմ, բոլո՛րը կտամ:
Եկ հիմա ընթրենք,
Հետո այդ մասին երկար կխոսենք:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Լորդ Հեստինգսի տան առջև:

Մտնում է մի բանբեր:

ԲԱՆԲԵՐ

(Բախում է դուռը). Տե՛ր իմ, տե՛ր իմ:

ՀԵՍՏԻՆԳՍ

(Ներսից) Այդ ո՞վ է բախում:

ԲԱՆԲԵՐ

Ինձ լորդ Ստենլին ձեզ մոտ ուղարկեց:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ժամը քանի՞սն է:

ԲԱՆԲԵՐ

Չորսը զարկել է:

Մտնում է Հեստինգսը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Տերդ, երևի, գիշերը չի քնում:

ԲԱՆԲԵՐ

Այո, իմ բերած լուրի համեմատ:
Նա նախ և առաջ ձեզ բարևում է:

ՀԵՍՏԻՆԳՍ

Իսկ հետո՞, հետո՞:

ԲԱՆԲԵՐ

Հետո ասում է, որ այս գիշեր երազ է տեսել.
Մի ամեհի կինճ իր սաղավարտը պոկել է գլխից:
Բացի այդ՝ ասաց գումարվելու է այսօր երկու նիստ,
Վախենում է, որ մեկի վճիռ
Հաջորդ նիստի մեջ աղետով պայթի երկուսիդ գլխին,
Դրա համար էլ խնդրում է, որ դուք շտապ ձի հեծնեք
Եվ դեպի հյուսիս սլանաք իր հետ,
Որ իր գուշակած վտանգից խույս տաք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Շուտ վերադարձիր դու քո տիրոջ մոտ
Եվ ասա նրան, որ չվախենա այդ երկու նիստից:
Մեկին ես և նա պիտի մասնակցենք,
Իսկ մյուս նիստին՝ իմ բարեկամը՝ ազնիվ Քեթսբին:
Մեր մասին ինչ էլ որ խոսեն այնտեղ, իսկույն կիմանամ.
Ասա, որ նրա երկյուղն անհիմն է:
Դալով երազին, զարմանում եմ, որ նա հավատում է
Անհանգիստ քնի խեղկատակությանց.
Կինճից փախչելը, երբ նա անշարժ է,

Նշանակե գրգռել, որ նա հարձակում գործի,
Որ իզուր տեղը որսի գնանք իր դեմ:
Գնա, տիրոջդ ասա մոտս գա,
Բերդ տանեմ իրեն, որ անձամբ տեսնի,
Թե այդ վարազը որքան բարի է վերաբերում մեզ:

ԲԱՆԲԵՐ

Ինչ որ ասացիք, կհայտնեմ նրան:

Դուրս է գնում:

Մտնում է Քեթսբին:

ՔԵՏՍԲԻ

Հազար բարի լույս իմ ազնիվ լորդին:

ՀԵՍՏԻՆԳՍ

Բարև, Քեթսբի. վաղ ես վեր կացել,
Ի՞նչ լուրեր ունես մեր այս երերուն տերության մասին:

ՔԵՏՍԲԻ

Իրավ, այս երկիրը վեր ու վար է լինում
Եվ չի հանդարտվի,
Մինչև Ռիչարդը պսակ չկապի:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ինչպե՞ս, պսա՞կը. թա՞գն ես ակնարկում:

ՔԵՏՍԲԻ

Այո, բարի տեր:

ՀԵՍՏԻՆԳՍ

Այս գլուխը կտանեմ իմ ուսերից ցած,
Նախքան մեր թագը տեսնեմ անարգված:
Մի՞թե կարծում ես՝ աչք ունի թագին:

ՔԵՏՍԲԻ

Այո, երդվում եմ, և հույս է տածում,
Որ դուք կաջակցեք նրան այդ գործում:
Նա հղել է ձեզ այս բարի լուրը.
Այսօր ձեր բոլոր թշնամիները՝
Թագուհու ցեղը, պիտի գլխատվի Պոմֆրետ ամրոցում:

ՀԵՍՏԻՆԳՍ

Իրավ, այդ լուրը ուրախալի է,
Նրանք շարունակ թշնամի են մեզ,
Սակայն Ռիչարդին կուսակից դառնալ,
Դավել արքային և գահը շորթել ստույգ ժառանգից,
Երկինքը վկա, ես այդ չեմ անի, քանի դեռ ողջ եմ:

ՔԵՏՍԲԻ

Թող տերը անխախտ պահի ձեր ազնիվ մտադրությունը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Մեկ տարի հետո ես կծիծաղեմ,
Թե ինչպես նրանք, որ դրդում էին արքային իմ դեմ,
Ոչնչացել են ողբալի մահով:
Լսիր, Քետսբի, հազիվ մեկ-երկու շաբաթ բոլորած
Ես մի քանիսին ճամփու կդնեմ...

ՔԵՏՍԲԻ

Օ՜, դժվար բան է մեռնել, իշխան իմ,
Մեղքը չքավված և անպատրաստ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Օ՜, սոսկալի է, անչափ սոսկալի. այդպես պատահեց
Ռիվերսի, Գրեյ և Վոգենի հետ: Այդպես կմեռնեն
Նաև շատերը, որ ապահով են համարում իրենց.
Ինչպես դու և ես, որ սիրելի ենք
Ռիչարդ իշխանին և Բուկինգեմին:

ՔԵՏՍԲԻ

Այդ երկու դուքսն էլ ձեզ շատ են հարգում...
68 *(Մեկուսի)* Քանզի գլուխդ ուզում են տեսնել կամուրջի վրա..

ՀԵՍՏԻՆԳՍ

Ես հավատում եմ. այդ սիրո համար նրանք հիմք ունեն:

Մտնում է Ստենլին:

Ապա եկ տեսնենք, ո՞ւր է նիզակդ,
Անզեն ես շրջում, մի՞թե վարազից դու երկյուղ չունես:

ՍՏԵՆԼԻ

Բարի լույս, միլորդ, բարի լույս, Քետսբի,

30—577

Կարող եք ծաղրել, բայց խաչը վկա,
Ինձ դուր չեն գալիս գաղտնի նիստերն այդ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Լսիր ինձ, միլորդ,
Քո կյանքի նման իմ կյանքն էլ թանկ է,
Բայց այն, երդվում եմ, երբեք ինձ համար
Չի եղել այնպես Բաղցր ու կարոգին, ինչպես հենց այժմ:
Երբ ապահով չզգայի ես ինձ, մի՞թե կարծում ես
Կարող էի այսչափ հաղթական լինել:

ՍՏԵՆԼԻ

Եվ այն լորդերը, որ Պոմֆրետումն են,
Լոնդոնից զվարթ մեկնեցին այնտեղ,
Նրանք տրտմելու առիթ չունեին:
Բայց, տեսեք, օրը ինչ շո՜ւտ ամպոտեց.
Այս հանկարծական բանտարկությունը կասկածելի է:
Աստվա՜ծ, երանի իմ երկյուղներն անհիմն լինեին:
Լույսը բացվել է, գնալո՞ւ ենք Բերդ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Կերթանք, մի՛ հուզվիր: Գիտե՞ս ինչ, միլորդ,
Այդ լորդերն այսօր գլխատվելու են:

ՍՏԵՆԼԻ

Նրանք ավելի արժանի էին գլուխ կրելու,
Քան ոմանք գլխարկ, որ այդ լորդերին ամբաստանել են:
Բայց գնանք, տեր իմ, ժամանակն է արդեն:

Մտնում է մունետիկը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Դուք առաջ անցեք, ես այս մարդու հետ մի քիչ կխոսեմ:

Ստենլին և Քետսբին գնում են:

Ինչպե՞ս ես, բարեկամ:

ՄՈՒՆԵՏԻԿ

Լավ եմ, մանավանդ երբ դուք եք հարցնում:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ես նույնպես լավ եմ, շատ ավելի լավ,
Քան վերջին անգամ, երբ այն նույն վայրում հանդիպեցիր ինձ:
Ես այն ժամանակ բերդ էի տարվում
Իբրև թագուհու հարազատների պարսավանքի զոհ.
Բայց այժմ լսիր, տե՛ս, մարդու չասես,
Այսօր այդ բոլոր թշնամիներս պիտի գլխատվեն.
Ահա թե ինչու ուրախ եմ այդպես:

ՄՈՒՆԵՏԻԿ

Աստված տա, որ միշտ բախտավոր լինեք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Շնորհակալ եմ: Առ կենացս խմիր:

Նետում է նրան իր քսակը:

ՄՈՒՆԵՏԻԿ

Աստված օրհնի ձեզ, ազնիվ իշխան իմ:

Գնում է:

Մտնում է մի քահանա:

ՔԱՀԱՆԱ

Բարի աջողում, բարի տեսա ձեզ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Գոհ եմ ի սրտե, տեր հայր Հովհաննես,
Դեռ անցյալ ժամուց պարտական եմ քեզ,
Եկ մյուս շաբաթ՝ վարձդ կստանաս:

Շշնջում է նրա ականջին:

Մտնում է Բուկինգեմը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ինչպե՞ս, խոսո՞ւմ եք քահանայի հետ, լորդ սենեկապետ,
Ձեր ծանոթները, որ Պոմֆրետում են,
Նրանք են կարոտ խոստովանության,
Իսկ դուք պետք չունեք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Ճիշտ է, երբ տեսա այս սուրբ երեցին,
Ձեր ասած մարդկանց մտաբերեցի:
Բե՞րդ ես շտապում:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այո, բայց երկար չեմ կարող մնալ,
Կվերադառնամ ձեզանից առաջ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Իսկ ես, միգուցե, այնտեղ ճաշի մնամ·

ԲՈՒԿԻՆԳԵՄ

(Մեկուսի) Նաև ընթրիքի, թեև չգիտես:
Երթանք, գալի՞ս եք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Պատրաստ եմ, միլորդ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Պոմֆրետ ամրոցը:

Մտնում է Ռիչարդ Ռետկլիֆը զեղարդավոր պահապանների հետ, որոնք գլխատելու են տանում Ռիվերսին, Գրեյն և Վոգենին:

ՌԵՏԿԼԻՖ

Դե, առաջ բերեք բանտարկյալներին:

ՌԻՎԵՐՍ

Լսիր, Ռետկլիֆ, թե ինչ եմ ասում,
Այսօր քո առաջ պիտի գլխատվեմ
Հանուն հավատի և արդարության և հանուն պատվի:

ԳՐԻ

Աստվա՜ծ, պահպանիր դու մեր իշխանին այս պիղծ խմբից,
Նզովյալ լինես, արնախում ոհմակ:

ՎՈԳԵՆ

Դուք պիտի ողբաք այս ոճրի համար:

ՌԵՏԿԼԻՖ

Բավ է, ձեր կյանքի վախճանը հասավ:

ՌԻՎԵՐՍ

Օ, Պոմֆրե՛տ, Պոմֆրե՛տ, արյունաներկ բանտ,
Դու կառափնարան ազնիվ լորդերի,
Քո այդ մեղսապարտ պարիսպների տակ
Ռիչարդ Երկրորդը ընկավ նահատակ,
Արդ ի հավելում քո անարգանքին
Խմիր արյունը մեր անմեղ կյանքի, ո՜վ սոսկալի Բերդ:

ԳՐԻ

Տես, Մարգարիտի անեծքը ինչպե՜ս պայթեց մեր գլխին,
Մենք ներկա էինք, երբ Գլոստերը
Սպանեց նրա անմեղ զավակին:

ՌԻՎԵՐՍ

Եվ Մարգարիտը անիծեց Ռիչարդին ու Բուկինգեմին,
Անիծեց Հեստինգսին: Օ՜, հիշի՛ր, աստված,
Նրա անեծքը: Դու նրա՛նց պատժիր,
Բայց իմ քրոջը և նրա որդոց եղիր պահապան:
Գոհացիր, ով տեր, մեր անմեղ արյամբ,
Որն, ինչպես գիտես, անիրավ է թափվում:

ՌԵՏԿԼԻՖ

Ուշ է, վե՛րջ տվեք, մահվան ժամն հասավ:

ՌԻՎԵՐՍ

Եկեք, Գրի, Վոգեն, իրար փարվենք այստեղ,
Մինչև հանդիպենք նորից երկնքում:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Լոնդոն: Բերդը:

Մտնում են Բուկինգեմը, Դերբին, Հեստինգսը, Իլու եպիսկոպոսը, Ռետկլիֆը, Լովելը ուրիշների հետ և տեղ են գրավում սեղանի շուրջը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Այժմ, տեարք իմ, մենք հավաքվել ենք,

Որ թագադրման օրը որոշենք:
Արդ, ի սեր աստծո, վճռենք այդ օրը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ամեն ինչ պատրա՞ստ է այդ օրվա համար:

ԴԵՐԲԻ

Այո, պատրաստ է: Մնում է միայն օրը անվանել:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վաղը, կարծում եմ, փառավոր օր է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լորդ հոգաբարձուն ի՞նչ կարծիք ունի,
Ո՞վ է մտերիմ ազնիվ դքսի հետ:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Իսկ իմ կարծիքով դո՛ւք պետք է նրա միտքը գիտենաք:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ո՞վ, ե՞ս, սրբազան: Մենք արտաքուստ ենք իրար ճանաչում:
Գալով սրտերին, նա իմ սրտի հետ նույնքան է ծանոթ,
Որքան որ ես եմ ծանոթ ձեր սրտին:
Նրա հոգին ինձ անհայտ է այնպես, ինչպես իմը՝ ձեզ:
Բայց դուք, լորդ Հեստինգս, նրա հետ մերձ եք:

ՀԵՍՏԻՆԳՍ

Շնորհակալ եմ. նա ինձ սիրում է, ես այդ քաջ գիտեմ,
Բայց չեմ շոշափած,
Թե ինչ է խորհում թագադրման առթիվ:
Ոչ էլ հայտնել է որևէ կերպով իր կարծիքը ինձ:
Բայց դուք, ազնիվ տեարք, որոշեք օրը.
Դքսի փոխարեն ես ձայնս կտամ,
Հույս ունեմ, որ նա շատ գոհ կմնա:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ահա և դուքսը իր բարի ժամին:

Մտնում է Գլոստերը:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ ազնիվ լորդեր և հարազատներ, բա՛րև, բարի լույս,

Ես երկար քնեցի, սակայն վստահ եմ,
Արգելք չեմ դարձել բնավ այն գործին,
Որ պիտի լուծվեր իմ ներկայությամբ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ձեր փոխարեն, միլորդ,
Վիլյամ Հեստինգսը իր ձայնը տվեց
Մանուկ իշխանի թագադրման համար:

ԳԼՈՍՏԵՐ

Միայն Հեստինգսը իրավունք ունի այդքան խիզախել,
Նա ինձ քաջ գիտե և շատ է սիրում:
— Օ՜, լորդ իմ Իլի, վերջերս, երբ ես Հոլբոռնում էի,
Ընտիր ելակներ տեսա ձեր այգում:
Ուղարկեք՝ մի քիչ մեզ համար քաղեն:

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Հաճույքով, տեր իմ:

Գնում է:

ԳԼՈՍՏԵՐ

Ձեզ հետ, Բուկինգեմ, խոսելիք ունեմ:

Նրան մի կողմ է տանում:

Քեթսբին Հեստինգսին քննել է արդեն.
Կրակոտ լորդը նրան ասել է,
Որ ավելի շուտ կհամաձայնի իր գլխից զրկվել,
Քան թե իր տիրոջ ժառանգին տեսնել
Գահից կորցրած:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Մի պահ դուրս ելնենք:

Գլոստերը և Բուկինգեմը գնում են:

ՍԵՐԲԻ

Եվ, այսուհանդերձ, հանդեսի օրը անորոշ մնաց.
Վաղվա օրն, ըստ իս, չափազանց շուտ է,
Ինքս էլ պատրաստ չեմ հարկ եղած չափով,
Պետք է հետաձգել. իմ կարծիքն այդ է:

Իլու եպիսկոպոսը վերադառնում է

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ո՞ւր է իմ իշխան դուքս Գլոստերը,
Մարդ ուղարկեցի, որ ելակ բերեն:

ՀԵՍՏԻՆԳՍ

Իշխանը այսօր զվարթատես է և քաղցրահամբույր.
Ինչ-որ մի բանով ուրախացած է,
Երբ այդքան սրտանց բարի լույս մաղթեց:
Համայն աշխարհում ոչ ոք նրա պես անընդունակ չէ
Սերն ու վրեժը սքողելու մեջ:
Իշխանի դեմքին իր սիրտն ես տեսնում:

ԴԵՐԲԻ

Դուք նրա սրտից ի՞նչ նկատեցիք
Իր դեմքի վրա:

ՀԵՍՏԻՆԳՍ

Որ սիրալիր է ամենքիս հանդեպ,
Թե չէ հայացքը իսկույն կմատներ:

ԴԵՐԲԻ

Տա աստված, որ նա այդպիսին լինի:

Գլոստերը և Բուկինգեմը վերադառնում են:

ԳԼՈՍՏԵՐ

Խնդրեմ, ասացեք, թե ի՞նչ պատժի են արժանի նրանք,
Որոնք դիվային որոգայթներով իմ մահն են տենչում.
Անարգ մոգությամբ ու դժոխային կախարդանքներով
Կամին ներգործել իմ մարմնի վրա:

ՀԵՍՏԻՆԳՍ

Միլորդ, այն սերը, որ ես տածում եմ ձեր վերաբերմամբ,
Ինձ փութացնում է ձեր ներկայությամբ
Դատապարտելու հանցավորներին,— ով կուզե լինի.—
Նրանք, իշխան իմ, մահվան են արժանի:

ԳԼՈՍՏԵՐ

Արդ, աչքով դիտեք նրանց չարիքը.
Տեսեք, թե ինչպես կախարդված եմ ես: Տեսեք բազուկն իմ

Թռչնել է ինչպես մի չորացած ոստ:
Էդվարդի կինը՝ այդ հրեշավոր անարգ ճիվաղը,
Միաբանելով այդ լկտի պոռնիկ տիկին Շոռի հետ,
Իրենց հմայքով կախարդել են ինձ:

ՀԵՍՏԻՆԳՍ

Եթե այդ բանը նրանք են արել, ազնիվ իշխան իմ...

ԳԼՈՍՏԵՐ

Եթե՞. անիծյալ պոռնիկի պաշտպան,
Ինձ հետ խոսում ես դու «եթե»-ներով: Դավաճան ես դու,
Գլխատել սրան. սուրբ Պողոսը վկա,
Ճաշի չեմ նստի, մինչև չտեսնեմ դրա գլուխը:
Լովել և Ռետկլիֆ, վերջացրեք գործը: Ով ինձ սիրում է՝
Թող հետևի ինձ:

Բոլորը դուրս են գնում:

Մնում են Հեստինգսը, Լովելը և Ռետկլիֆը:

ՀԵՍՏԻՆԳՍ

Վա՜յ քեզ, Անգլիա, վա՜յ քեզ, ոչ թե ինձ:
Ես այս չարիքը կարող էի կանխել:
Ավա՜ղ, երազդ ճի՜շտ էր, Ստենլի. կինձը պոկել էր
Քո սաղավարտը:
Ես անգոսնեցի քո խորհուրդները, մերժեցի փախչել:
Այսօր երեք անգամ իմ ձին սայթաքեց
Եվ ընդոստ եղավ, երբ Միջնաբերդի պատերին նայեց.
Ասես՝ տանում էր ինձ սպանդանոց:
Ա՜խ, հիմա էր պետք ինձ այն քահանան:
Այժմ զղջում եմ, որ հպարտացա մունետիկի մոտ,
Թե ինչպես այսօր իմ ոսոխները
Արյունաշաղախ կընկնեն Պոմֆրետում,
Եվ ես ինձ կզգամ ապահո՜վ, հզո՜ր:
Ավա՜ղ, Մարգարի՜տ, ավա՜ղ, Մարգարի՜տ, անեծքդ
Իջնում է թշվառ Հեստինգսի գլխին:

ՌԵՏԿԼԻՖ

Շտապեք, միլո՜րդ, իշխանը արդեն ճաշի է գնում.
Կարճ խոստովանեք, նա ուզում է ձեր գլուխը տեսնել:

ՀԵՍՏԻՆԳՍ

Օ՛, դու վաղանցիկ մարդկային շնորհք,
Որ վեր ենք դասում աստծո շնորհքից:
Վա՜յ նրան, ով որ ապավինում է ձեր ժպիտներին:
Նա նման է այն հարբած նավորդին, որ կայմին նստած՝
Ամեն ճոճումին պատրաստ է գլորվել
Անդունդն օվկիանի:

ԼՈՎԵԼ

Դե, շուտ, վերջ տվեք, ողբալն իզուր է:

ՀԵՍՏԻՆԳՍ

Օ՛, արյունռուշտ Ռիչարդ, դժբա՜խտ Անգլիա.
Ես գուշակում եմ ամենադժնի օրեր քեզ համար,
Որ ժամանակը երբեք չի տեսել:
Այժմ՝ դեպի կոճղ: Գլուխս շտապ տարեք Ռիչարդին,
Սակայն իմացեք, դո՛ւք էլ կենթարկվեք այս նույն վիճակին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բերդի պատերը:

Մտնում են Գլոստերը և Բուկինգեմը ժանգոտած զրահներով և զարմանալի տգեղ հագնված:

ԳԼՈՍՏԵՐ

Ասա ինձ, եղբայր, կարո՞ղ ես գույնդ փոխել, դողդողալ
Եվ խոսքի կեսին շունչդ ընդհատել,
Վերստին սկսել, ապա կանգ առնել,
Կարծես սարսափից վախեցած լինես:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Է՜, բան ասացիք, ողբերգակից էլ հաջող կխաղամ:
Խոսելիս հանկարծ հետև կնայեմ, աչք կածեմ չորս կողմ,
Կդողամ, կցնցվեմ հարդի շարժումից,
Ինչպես լինում է վտանգից առաջ: Սոսկալի նայվածք
Եվ շինծու ժպիտ՝ ահա սրանք են իմ ծառաները,
Երկուսն էլ պատրաստ իրենց պաշտոնին,

Որ ուզած ժամին որոգայթ լարեն:
Քետսբին գնա՞ց:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, և նայիր, քաղաքապետին այստեղ է բերում:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Գնամ ընդառաջ:

Մտնում են քաղաքապետը և Քետսբին:

Լո՛րդ քաղաքապե՛տ...

ԳԼՈՍՏԵՐ

Կամուրջն իջեցնե՛լ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այս ի՞նչ թմբուկ է:

ԳԼՈՍՏԵՐ

Քետսբի, շտապ աչք ածիր բերդին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լորդ քաղաքապետ, մենք ձեզ կանչեցինք...

ԳԼՈՍՏԵՐ

Պաշտպանվի՛ր, այստեղ թշնամիներ կան:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Օ՜, աստված, փրկիր այս անմեղներիս:

ԳԼՈՍՏԵՐ

Ոչ, հանգստացի՛ր, բարեկամներ են.
Մեկը Լովելն է, մյուսը՝ Ռեթկլիֆը:

Մտնում են Լովելն ու Ռեթկլիֆը՝ բերելով Հեստինգսի գլուխը:

ԼՈՎԵԼ

Ահա գլուխը նենգ դավաճանի,
Այն վտանգավոր թաքնված Հեստինգսի:

ԳԼՈՍՏԵՐ

Այնքա՜ն բո՜ւռն էի ես նրան սիրում, որ պետք է ողբամ:
Ապրողների մեջ համարում էի ես նրան միակ

Ազնի՜վ, անարա՜տ մարդը աշխարհում:
Նա իմ մատյանն էր, որտեղ իմ հոգին
Գրում էր բոլոր իր գաղտնիքները,
Իր նենգությունը այնպես էր պննում առաքինությամբ,
Որ բացառությամբ իր այդ բացահայտ հանցագործության,
Ուզում եմ ասել տիկին Շորի հետ ունեցած կապին,
Բոլորը կարծում էին, որ նա ազնիվ է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այո, այդպիսի քաքնված դավաճան
Աշխարհը չի տեսել:
Կարո՞ղ եք արդյոք դուք պատկերացնել կամ գեթ հավատալ,
Որ եթե չլիներ հրաշքն աստծո,
Մենք ողջ չէինք պրծնի: Ճարտար սրիկան
Մտադրվել էր խորհրդատանը նիստի ժամանակ
Լորդ Գլոստերին և ինձ սպանել:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Մի՞թե այդ ճիշտ է:

ԳԼՈՍՏԵՐ

43 Ի՞նչ է, չլինի՞ մեզ թուրք եք կարծում կամ թե անհավատ.
Ինչպե՞ս կարող էինք մենք առանց դատի
Այս չարագործի գլուխը կտրել,
Եթե ծայրագույն վտանգ չսպառնար
Մեր Անգլիայի խաղաղությանը և մեր փրկության:
Ահա թե ինչու մենք տեղնուտեղը պատժեցինք նրան:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ապրե՜ք, լավ եք արել: Մահվա՛ն էր արժանի.
Եվ դուք երկուսդ էլ արդար եք, լորդեր,
Որ վերջ եք տվել այդ չարագործին:
Թող զգուշանան դավաճանները նման փորձերից:
Ես նրա ձեռքից որևէ լավ բան չեմ ակնկալել
Այն օրից ի վեր, երբ նա կապվել էր տիկին Շորի հետ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Մենք չէինք ուզում գլխատել նրան
Մինչև դուք անձամբ ներկա չլինեք:
Բայց տագնապը մեր բարեկամների, որոնք այստեղ են,

Գործը փութացրեց ընդդեմ մեր կամքի:
Մենք ուզում էինք, որ դուք լսեիք
Այդ չարագործին, իր դավադրության
Ամբողջ ընթացքը և նպատակը խոստովանելիս,
Որ կարողանաք ճշգրիտ բացատրել դուք քաղաքացոց
Նրա պատմածը, որպեսզի նրանք ձեզ լավ հասկանան
Եվ նրա մահը ողբով չընդունեն:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Բայց, բարի լորդ իմ, ձեր խոսքը բավ է,
Որ ես տեսել եմ ու լսել նրան:
Եվ մի կասկածեք, ազնիվ իշխաններ,
Որ հավատարիմ մեր քաղաքացոց ես կհաղորդեմ
Այդ արդար դատի ողջ պատմությունը:

ԳԼՈՍՏԵՐ

Հենց դրա համար մենք ձեզ կանչեցինք,
Որ խույս տանք մարդկանց հերյուրանքներից:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Թեպետ ուշացաք բավականաչափ,
Բայց մեր պատմածից գործը պարզ դարձավ.
Այդ էլ պատմեցեք:
Դե, բարի երթաք, լորդ քաղաքապետ:

Լորդ քաղաքապետը գնում է:

ԳԼՈՍՏԵՐ

Հետևից գնա, ազնիվ Բուկինգեմ:
Նա քաղաքային վարչություն է գնում,
Շտապիր այնտեղ և հարմար պահին
Հայտնիր դու նրանց, որ թագավորի երեխաները ապօրինի են:
Պատմիր, թե ինչպես էդվարդը մի օր
Մահվան ենթարկեց մի քաղաքացու,
Որն ասել էր, թե ուզում է թագը որդուն կտակել.
84 Խոսքը այդ մարդու տան ցուցանակի մասին է եղել:
Դու պատմիր նաև նրա նողկալի բղջախոհության,
Տուփանքից տուփանք անցնող իր վայրագ տենչանքի մասին,
Որ տարածվելով հասնում էր նրանց աղախիններին,

Դուստրերին, կանանց,
Ուր այդ գազանի վավաշոտ աչքը
Մի որս էր տեսնում խժռելու համար՝ առանց արգելքի:
Ապա մի քիչ էլ իմ մասին խոսիր.
Հիշեցրու, որ երբ էդվարդն էր ծնվում,
Վեհազգի Յորքը՝ քաջարի հայրս,
Կռիվ էր մղում Ֆրանսիայի մեջ:
Երբ որ հաշվեցին ճիշտ ժամանակը,
Պարզվեց, որ երեխան իր զավակը չէ,
Եվ դա հաստատվեց նաև այն բանով,
Որ հորս բնավ նման չէր դեմքով.
Այդ բանը սակայն զգույշ ակնարկիր,
Չէ՞ որ իմ մայրը, ինչպես դու գիտես, դեռ ողջ է, միլորդ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Անհոգ կաց, դուքս իմ, ճարտար կխոսեմ,
Որպես թե ոսկու համար եմ ճգնում:
Արդ, մնաք բարով:

ԳԼՈՍՏԵՐ

104 Թե խոսքդ ազդեց, նրանց Բեյնարդի դղյակ բեր իսկույն,
Ուտեղ կգտնես ինձ շրջապատված
Սուրբ երեցներով և բարեկրոն սրբազաններով:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Անա գնացի. ժամը երեքին կամ մինչև չորսը
Լուրեր սպասեք ժողովարանից:

Գնում է:

ԳԼՈՍՏԵՐ

109 Լովել, շուտ գնա դոկտոր Շոյի մոտ,
Իսկ դու, Քետսբի, Պենկերին կանչիր: Ասացեք նրանց,
Որ մեկ ժամ հետո Բեյնարդում լինեն:

Լովելը, Քետսբին և Ռետկլիֆը գնում են:

Այժմ ես գաղտնի հրաման կտամ,
Որ Կլարենսի այդ լակոտներին աչքից հեռացնեն:
Կկարգադրեմ նույնպես, որ ոչ մի մարդու
Մուտք չտան մանուկ իշխանների մոտ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Նույն վայրը: Մի փողոց:

Մտնում է գրագիրը:

ԴՐԱԳԻՐ

Ահա բարի լորդ Հեստինգսի վճիռ,
Որ շատ խնամքով արտագրված է.
Այն պիտի կարդան այսօր տաճարում:
Եվ տեսեք որքան ճարտար է հյուսված.
Արտագրությունը տասնմեկ ժամ խլեց.
Հենց երեկ գիշեր Քեթսբին բերեց,
Եվ բնագիրն էլ պակաս ժամանակ չի խլել անշուշտ:
Մինչդեռ Հեստինգսը մի հինգ ժամ առաջ տակավին ողջ էր,
Չէր մեղադրված, չէր հարցաքննված, անպա՜րտ էր, ազա՜տ:
Զարմանալի՜ աշխարհ: Ո՞վ է այնքան բութ,
Որ այս ակներև դավը չի տեսնում,
Միաժամանակ ո՞վ է այնքան քաջ,
Որ անվախ կասի, թե ես տեսնում եմ:
Չար է աշխարհը, ապրելը փուչ է,
Երբ այսքա՜ն դավեր հյուսվում են շուրջդ:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ

Բեյնարդի դղյակը:

Մտնում են Գլոստերը և Բուկինգեմը տարբեր կողմերից:

ԳԼՈՍՏԵՐ

Շուտ պատմի՛ր, պատմի՛ր: Ժողովուրդն ի՞նչ է ասում:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տիրամայրը վկա,
Ժողովուրդը լուռ է, ոչինչ չի ասում:

ԳԼՈՍՏԵՐ

Ասացի՞ր, որ Էդվարդի մանուկները բիճ են:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

5 Այո. հիշեցի նրա դաշինքը տիկին Լյուսի հետ
Եվ Ֆրանսիայում կնքված դաշինքը,
Նրա տարփանքի անհագությունը,
Քաղաքի կանանց բռնաբարելը,
Նրա բռնակալ և բիրտ լինելը,
Թե ինչպես ծնվեց, երբ որ ձեր հայրը Ֆրանսիայումն էր,
Եվ դեմքով ինչպես նրան նման չէր:
Ասացի նաև, որ ձեր երեսը
Ճշգրիտ դրոշմն է ձեր հոր պատկերի,
Թե՛ ձեր վեհ հոգու, թե՛ կազմի կողմից:
Մեկ-մեկ թվեցի ձեր սկովտիական հաղթանակները,
Որ կռվում քաջ եք, իսկ հաշտության մեջ խելոք, խոհական,
Որ բարեսիրտ եք, հեզ, առաքինի:
Արդարև, ինչ որ օգնում էր գործին՝ բոլորն ասացի:
Եվ ճառիս վերջում բացականչեցի.
— Ով հայրենիքին բարիք է ուզում, թող գոչի ինձ հետ.
«Կեցցե՝ Ռիչարդը, Անգլիո արքան»:

ԳԼՈՒՍՏԵՐ

Եվ ի՞նչ, գոչեցի՞ն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Վկա է աստված, մի խոսք չասացին,
Բայց մեռելատիպ նայեցին իրար
Արձանների պես:
Երբ որ այդ տեսա, պարսավեցի նրանց
Եվ իսկույն հարցրի. ինչո՞ւ եք այդպես քարացած լռում.
Քաղաքապետն ասաց, որ ժողովուրդը
Սովոր չէ առանց միջնորդի խոսել:
Ստիպված եղավ իմ խոսքը նորից բացատրել նրանց:
«Այսպես ասաց դուքսը, դուքսն այսպես պատմեց»,
Սակայն ձեր օգտին ոչ մի բառ չասաց նա իր անունից:
Երբ որ ավարտեց, մի քանիսը իմ կողմնակիցներից,
Որ կանգնած էին սրահի վերջում,
Իրենց գդակները վեր շպրտեցին,
Եվ լսվեց հանկարծ մի տասը հոգու ձայն.
«Կեցցե՛ Ռիչարդ արքան»:

Ես այդ առիթը օգտագործելով բացականչեցի.
«Շնորհակալ եմ, ազնիվ քաղաքացիք և բարեկամներ,
Ձեր այդ ցնծագին ծափն ու կոչերը
Ցույց են տալիս ձեր իմաստությունը և սերն առ Ռիչարդ»:
Այսքանն ասելով, իսկույն հեռացա:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ ի՞նչ անլեզու կոճղեր են եղել: Ոչինչ չասացի՞ն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ոչ մի խոսք, միլորդ:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ քաղաքապետն իր շքախմբով գալո՞ւ է, թե՞ ոչ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Նա հիմա կգա: Դուք ձեզ ցույց տվեք սաստիկ վրդովված.
Ինքներդ մի խոսեք, թող շատ աղաչեն:
Մի աղոթագիրք պահեք ձեր ձեռքում
Եվ կանգնեք երկու կղերի մեջտեղ:
Երբ փառաբանեմ ես ձեր սուրբ վարքը,
Դուք մեր խնդրանքին մի զիջեք իսկույն.
Աղջկա պես վարվեք. ասեք չեմ առնի, բայց գործով առեք:

ԳԼՈՍՏԵՐ

Անտ գնում եմ. եթե պախանձեք այնպիսի ուժով,
Ինչպիսի ուժով ես պիտի մերժեմ,
Մեր գործը հաջող կավարտվի անշուշտ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բարձրացեք վերև, քաղաքապետը դուռը ծեծում է:

Գլոստերը դուրս է գնում:

Մտնում է քաղաքապետը խորհրդարանի անդամների և քաղաքացիների հետ:

Բարի եկաք, միլորդ. զուր եք սպասում,
Դուքսը, կարծում եմ, խոսել չի ուզում:

Մտնում է Քետսբին:

Ի՞նչ կա, Քետսբի, դուքսը ի՞նչ ասաց:

31—577

ՔԵՏՍԲԻ

Նա, ազնիվ միլո՛րդ, խնդրում է, որ դուք
Իրեն այցելեք վաղը կամ մյուս օր:
Երկու պատվական սուրբ հայրերի հետ
Նա անձնատուր է ներսում երկնային բարեխոսության,
Ոչ մի աշխարհիկ աղերս չի կարող
Նրան անջատել իր սուրբ խոհերից:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Դարձիր, Քետսբի, ազնիվ դքսի մոտ,
Հայտնիր, որ ինքս, քաղաքապետը
Եվ խորհրդատան մեծամեծները
Խիստ ծանրակշիռ հրատապ գործով,
Որից մեր երկրի վիճակն է կախված,
Եկել ենք իր հետ խորհրդակցելու:

ՔԵՏՍԲԻ

Գնամ և շտապ հայտնեմ իշխանին:

Գնում է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ա՛, այս իշխանը էդվարդ չէ, միլո՛րդ,
Սա չի թավալվում իր անկողնու մեջ,
Այլ ծունկի իջած ապաշխարհում է:
Պոռնիկների հետ չի զվարճանում,
Այլ մտորում է սուրբ հայրերի հետ:
Չի պարարտացնում իր հեղգ մարմինը անվերջ քնելով,
Այլ աղոթքներով հարստացնում է իր զգաստ հոգին:
Որքան բախտավոր կլիներ Անգլիան, եթե այս դուքսը
Նրան գերագույն վեհապետ դառնար.
Սակայն դժվար թե նրան համոզեք:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ա՜խ, աստված, մի՞թե մեզ պիտի մերժի:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ես վախենում եմ: Ահա Քետսբին:

Քետսբին վերադառնում է:

Ապա, Քետսբի, իշխանն ի՞նչ ասաց:

ՔԵՏՍՐԻ

Նա զարմանում է, թե ինչո՞ւ համար
Այսքան շատ մարդ եք հավաքել իր մոտ,
Առանց նախապես տեղեկացնելու:
Նա վախենում է ձեր չար մտքերից:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Ցավում եմ, որ իմ ազնիվ եղբայրը
Կասկածանքով է վերաբերում ինձ:
Երկինքը վկա, բարի մտքով ենք նրա մոտ եկել,
Ուստի վերստին գնա և հայտնիր մեր նպատակը:

Քետսբին գնում է:

Երբ աստվածանվեր, ջերմեռանդ մարդիկ
Մաղթանքի մեջ են, դժվար է նրանց կորզել այնտեղից,
Այնքան դյութիչ է խոկումի սյաճը:

Պատշգամբում երևում է Գլոստերը երկու եպիսկոպոսների մեջտեղում կանգնած: Քետսբին վերադառնում է:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տեսեք, նա երկու հայրերի հետ է. նրանց մեջտեղում:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Առաքինական երկու նեցուկներ մեր սուրբ իշխանի,
Որ նրան փրկեն ունայն անկումից:
Եվ տեսեք, ձեռքում աղոթագիրք կա,
Որ նշգրիտ զարդն է բարեպաշտ մարդու:
— Մեծ Պլանտագենետ, վեհագույն իշխան,
Ջիջիր ականջդ մեր աղերսանքին
Եվ ներիր դու մեզ, որ հանդգնեցինք
Քո աստվածասեր ծեսը խափանել:

ԳԼՈՍՏԵՐ

Այդ ներողության հարկ չկա, միլորդ,
Ե՛ս պետք է ձեզնից թողություն խնդրեմ,
Որ աստվածային ծեսին անձնատուր՝
Ուշադիր չեղա բարեկամներիս այցելությանը:
Սակայն թողնենք այդ. փափագդ ի՞նչ է:

ԲՈԻԿԻՆԳԵՄ

Այն է, որ հուսամ, փափագն է աստծո

Եվ այս որբ կղզու ողջ բարի մարդկանց:

ԳԼՈՍՏԵՐ

Ես վախենում եմ, թե մի որևէ հանցանք եմ գործել,
Որ նախատինք է թվում ձեր աչքին,
Եվ դուք եկել եք պարսավելու ինձ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Գործել եք, իշխան. բայց այդ սխալը
Կարող եք շտկել մեր աղերսանքին ընդառաջ գալով:

ԳԼՈՍՏԵՐ

Էլ ո՞ւր եմ ապրում քրիստոնյա երկրում, եթե չօգնեմ ձեզ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Իմացեք, ուրեմն, ձեր հանցանքն այն է, որ դուք զիջել եք
Ձեր վեհ աթոռը, մեծափառ գահը,
Ձեր նախնիների մեծ գայիսոնը,
Ձեր օրևանը, իրավունքը տոհմի,
Ձեր արքունի տան հռաշող փառքը՝
Փուչ ժառանգների ավերածության:
Հանուն մեր երկրի բարեբախտության
Մենք զարթեցնում ենք թմրած խոհերդ.
Այս վսեմ կղզին շունչը փչում է.
Նրա երեսը այլանդակված է զարշ սպիներով.
Անարգ բույսեր են նրա արքունի բույնին պատվաստված,
Նա համարյա թե սև մոռացության և մութ գիշերվա
Անհագ անդունդի ուսին է ընկած:
Ի փրկություն իր, մենք թախանձում ենք, որ դուք հանձն առնեք
Արքունի բեռը երկրիդ պետության,
Ոչ իբրև պաշտպան, փոխանորդ կամ տեր,
Ոչ որպես վարձկան օտար տերության,
Այլ իբրև հաջորդ ձեր արքունի տան,
Իբրև սեփական թագավորության ժառանգն իսկական:
Ահա թե ինչու այս թափորի հետ,
Որտեղ բոլորը ձեզ անչափ սիրող բարեկամներ են,
Եվ նրանց սաստիկ հորդորից ազդված
Ես եկա այստեղ թախանձելու ձեզ:

ԳԼՈՍՏԵՐ

Չգիտեմ ինչ ասեմ. անխոս ե՞տ դառնամ,
Թե՞ ձեզ կշտամբեմ դառնագին խոսքով,
Ո՞րը դրանցից հարմար է հիմա.
Եթե լուռ մնամ, կարող եք կարծել,
Թե ես պապանձված մի փառասեր եմ, որ իմ լռությամբ
Տենչում եմ կրել թագավորության ոսկեղեն լուծը,
Որ զորովանքով դուք կամենում եք իմ վզին դնել:
Եթե պարսավեմ աղերսիդ համար,
Որով անձնվեր սեր եք հայտնում ինձ,
Անարգած կլինեմ բարեկամներիս:
Որպեսզի խույս տամ ես առաջինից
Եվ առիթ չտամ բարեկամներիս արդար տրտունջին,
Ահա վճռական իմ պատասխանը.
Շնորհակալ եմ ձեր սիրո համար, բայց իմ վաստակը
Ձեր այս խնդրանքին դեռ արժանի չէ:
Նախ, եթե բոլոր արգելակները վերացած լինեն
Եվ ողորկ լինի դեպի թագ տանող իմ ճանապարհը՝
Իբրև իմ ծագման հասյալ իրավունք —
Դարձյալ ես հոգով այնքան տնանկ եմ,
Այնքան ահռելի և այնքան շատ են թերությունները,
Որ ավելի շուտ խույս կտամ փառքից,
Ինչպես մի նավակ, որ վախենում է մեծ ծով դուրս գալու,
Քան թե կամփոփվեմ իմ մեծության մեջ,
Որպեսզի փառքիս գոլորշում խաշվեմ:
Բայց գոհ եմ աստծուց, որ իմ կարիքը բնավ չեք զգում:
Ինքս թույլ տեղով սատար կլինեի ձեզ, թե կարենայի:
Արքունի ծառը մեզ իր արքունի պտուղն է թողել,
Որ ժամանակի աննշմար վազքում հասունանալով,
Վեհափառ գահը պիտի զարդարի
Եվ մեզ անկասկած բախտավոր դարձնի իր իշխանությամբ:
Իմ հույսը նա է. ողջ իրավունքը
Եվ բախտը նրա երջանիկ աստղի
Իր վրա բարձեք, ոչ թե ինձ վրա,
Աստված ոչ անի, որ ես այդ փառքը կորզեմ նրանից:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ձեր խոսքը, միլորդ, անչափ անկեղծ է:
Բայց ձեր հիմքերը մանր են, աննշան,

Երբ ամեն կողմից լավ քննում ենք այն:
Դուք մեզ ասում եք, որ Էդվարդը ձեր եղբորորդին է.
Մենք էլ ենք ասում, բայց ո՞ր կնոջից. ոչ թե նրանից
Որ օրինական կինն էր ձեր եղբոր,
Քանզի Էդվարդը նախ նշանված էր տիկին Լյուսի հետ,—
Վկան ձեր մայրն է, որը դեռ ողջ է:
Դրանից հետո փոխանորդությամբ Բոնային առավ,
Որ ֆրանսիական արքայի քույրն էր:
Սակայն նա լքեց այդ երկուսին էլ. մի շա՜տ աղքատ կին.
Մի խիստ տառապած բազմազավակ մայր,
Մի թշվառ այրի խամրած գեղեցկությամբ,
Որ մուտք էր գործել կյանքի միջօրեն,
Գրավեց նրա աչքը վավաշոտ,
Նրա վերամբարձ մտքերը սանձեց
Եվ ուղղեց դեպի կրկնամուսնություն, դեպի անարգ էջք:
Այդ ապօրինի ու պիղծ անկողնում ծնվեց Էդվարդը,
Որին սովոր ենք մենք իշխան կոչել:
Կարող էի ավելի խիստ խոսքեր ասել,
Բայց ի հարգ ոմանց, որ դեռ ապրում են,
Ես ստիպված եմ սանձել իմ լեզուն:
Արդ, ազնիվ իշխան, ընդունեք, խնդրեմ,
Ձեզ առաջարկվող այս վեհ կոչումը:
Եթե ոչ ի սեր մեր և մեր երկրի բարեբարության,
Գեթ ձեր վեհազույն տոհմի պատիվը
Ժանտ ժամանակի ապականումից փրկելու համար
Եվ իշխանության խափանված կարգը վերականգնելու:

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Վճռեցեք, միլորդ, ձեր քաղաքացիք հատուկ խնդրում են:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Մի մերժեք, իշխան. նրանց ջերմ սերը:

ՔԵՏՍԲԻ

Օ՜, երջանկացրեք դուք նրանց, տեր իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ավաղ, ինչո՞ւ եք բառնում ինձ վրա այդքան շատ հոգսեր.
Ես պիտանի չեմ թե՛ իշխանության, թե՛ փառքի համար.
Աղաչում եմ ձեզ, մի՛ պարսավեք ինձ,

Այդ բանը անել ես անկարող եմ,
Ոչ էլ ուժ ունեմ ընդառաջելու:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Երբ մերժում եք իբրև խանդավառ մի ազգականի,
Որ համաձայն չէ գահից զրկելու իր եղբորորդուն,
Չէ որ ծանոթ եք մենք ձեր հեզ սրտին
Եվ ազնիվ, բարի մեղկ կարեկցության,
Որ ցույց եք տվել մերձավորներին,
Այլև ամենայն հեռավորներին:
Դուք մեր խնդիրքը կընդունեք թե ոչ,
Ձեր եղբորորդուն արքա չենք կարգի,
Նրա փոխարեն մենք մեկ ուրիշի կհանենք գահին,
Իբրև ամոթ ու անկում ձեր փառքի:
Մեր վճիռն այս է, արդ, հրաժեշտ ձեզ,
Գնանք, սիրելիք, չարժե աղերսել:

ԳԼՈՍՏԵՐ

Օ՜, մի կշտամբիր, ազնի՜վ Բուկինգեմ:

Բուկինգեմը քաղաքացիների հետ գնում է:

ՔԵՏՍԲԻ

Ետ կանչեք, տեր իմ, համաձայն եղեք,
Երկիրն ափսոս է, տեր կանգնեք նրան:

ԳԼՈՍՏԵՐ

Բռնությա՞մբ կուզեք աշխարհի հոգսը բառնալ ուսերիս:
Դե լավ, ետ կանչիր, քարից չեմ շինված,
Անզոր եմ ձեր այդ բարի խնդրի դեմ,
Ընդդեմ իմ հոգու և խղճմտանքի:

Բուկինգեմը և քաղաքացիները վերադառնում են:

Եղբայր Բուկինգեմ, և դուք, մեծանուն, իմաստուն այրեր,
Քանի որ վճռել եք իմ մեջքին բառնալ
Մեր երկրի բախտը կառավարության, ուզեմ թե չուզեմ
Ես պետք է վերցնեմ այդ բեռը վրաս:
Բայց եթե ձեր այս բուռն աղերսանքին
Հաջորդեն լկտի զրպարտանք, բասրանք,
Դուք ուժով պետք է պատիվս փրկեք

Ամենայն կեղտից ու պիղծ արատից,
Չի գիտե աստված, և դուք եք տեսնում,
Որչափ հեռու եմ ես այդ փափագից:

ԲԱՂԱՔԱՊԵՏ

Աստված պահե ձեզ: Մենք այդ տեսնում ենք,
Այդպես էլ կասենք:

ԳԼՈՍՏԵՐ

Ճշմարիտն ասեք:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Արդ, ողջունում եմ արժանի կոչմամբ.
Կե՛ցցե Ռիչարդը՝ Անգլիո արքան:

ԲՈԼՈՐԸ

Ամե՜ն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Վաղը հարմար չէ՞, որ թագադրենք ձեզ:

ԳԼՈՍՏԵՐ

Ես համաձայն եմ, թե կամիք այդպես:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ուրեմն՝ վաղը մենք այստեղ կգանք,
Այժմ հեռանանք ցնծագին սրտով:

ԳԼՈՍՏԵՐ

(Եպիսկոպոսին) Արդ, դառնանք դարձյալ մեր սուրբ աղոթքին.
Բարի երթ, եղբայր: Ձեզ էլ բարի երթ, իմ բարեկամներ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Լոնդոն: Միջնաբերդի առաջ:

Մտնում են՝ մի կողմից Եղիսաբեթ թագուհին, Յորքի դքսուհին և Դորսետը. մյուս կողմից՝ լեդի Աննան՝ Գլոստերի դքսուհին, բռնած Կլարենսի դեռատի դուստր Մարգարիտ Պլանտագենետի ձեռքից:

ԴՔՍՈՒՀԻ

Այս ո՞ւմ եմ տեսնում. ահա թոռնիկս Պլանտագենետ
Իր հորեղբոր կնոջ՝ Գլոստերի հետ:
Արևս վկա, նրանք Բերդ են գնում,
Որ իշխաններին ողջունեն սրտանց:
— Բարի տեսանք, դուստր:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Աստված երկուսիդ
Արժանի դարձնի բախտավոր օրվա:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Քեզ էլ, բարի քույր: Ո՞ւր ես շտապում:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Դեպի Միջնաբերդ. դուք էլ, տեսնում եմ.
Այնտեղ եք գնում միևնույն ուխտով՝
Շնորհավորելու մեր իշխաններին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ապրե՜ս, բարի քույր. միասին երթանք:
Բայց, ի դեպ, Բերդի պահապանը եկավ:

Մտնում է Բրակենբերին:

Ասացեք, խնդրեմ, պարոն պահապան,
Իշխանն ինչպե՞ս է, և Յորքի դուքսը՝ իմ մանուկ որդին:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ողջ և առողջ են, անգին տիրուհի: Սակայն ներեցեք,
Ես ձեզ նրանց մոտ չեմ կարող թույլ տալ.
Արքան խստորեն արգելք է դրել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Արքա՞ն: Ի՞նչ արքա:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ուզում եմ ասել՝ լորդ հոգաբարձուն:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Աստված փրկի նրան այդ վեհ կոչումից:
Պարի՞սպ է քաշել իմ և նրանց միջև:
Ես նրանց մայրն եմ. ո՞վ կհանդգնի մուտքս խափանել:

ԴՔՍՈՒՀԻ

Իսկ ես հոր մայրն եմ. պետք է տեսնեմ նրանց:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ես հորաքույրն եմ, բայց մայր եմ եղել երկուսի համար:
Տար ինձ նրանց մոտ, թող ինձ մեղադրեն,
Ես ձեր փոխարեն պատասխան կտամ:

ԲՐԱԿԵՆԲԵՐԻ

Ո՛չ, ո՛չ, տիրուհի՛, չեմ կարող թույլ տալ,
Երդում եմ տվել, ուստի ներեք ինձ:

Գնում է:

Մտնում է Ստենլին:

ՍՏԵՆԼԻ

Թե հանդիպեինք մենք մի ժամ հետո,
31 Յորքի դքսուհուն կողջունեի որպես սիրող մոր
Եվ հանդիսատես երկու հարգարժան չքնաղ թագուհու:

Լեդի Աննային.

Գնանք, տիրուհի, շտապ պետք է գաք,
Որ Վեստմինստրում թագուհի օծվեք Ռիչարդի համար

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, կտրեք իսկույն կրծքիս կապերը,
Որ ճնշված սիրտս ազատ բաբախի,
Թե ոչ՝ վայր կընկնեմ այդ ահեղ գույժից:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Օ՜, չարաղետ բոթ, դժնի՜ նորություն:

ԴՈՐՍԵՏ

Ա՜խ, հանգստացեք: Ինչպե՞ս ես, մայր իմ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Օ՜, փախի՛ր, Դորսետ. մի՛ խոսիր ինձ հետ, սուրա այստեղից,
Անկումն ու մահը հետապնդում են քեզ կրնկակոխ:
Մորդ անունը չարագուշակ է իր որդոց համար:
Եթե ուզում ես մահից խուսափել՝ գնա ծովն անցիր:
Ռիչմոնդի մոտ գնա, փախիր դժոխքից,
Փախիր այս անարգ սպանդանոցից,
Որ առանց քեզ էլ մեռնողներ շատ կան:
Մի ստիպիր ինձ, որ Մարգարիտի անեծքից դողամ.
Մեռնեմ մոր փառքից, և՛ կնոջ փառքից, և՛ գահից զրկված:

ՍՏԵՆԼԻ

Ձեր այդ խորհուրդը խելոք է, թագուհի:
Ժամը թռչում է. օգտվեք առիթից:
51 Ձեր մասին որդուս նամակ կգրեմ,
Որ ճանապարհին դիմավորի ձեզ:
Էլ մի հապաղեք հիմար ծուլությամբ:

ԴՔՍՈՒՀԻ

Օ՜, թշվառության մահասփյուռ հողմ,
Անիծյալ իմ արգանդ՝ մահաբեր մահին,
Մի թունավոր օձ աշխարհ վիժեցիր,
Որի աչքն անգամ մարդախոշոշ է:

ՍՏԵՆԼԻ

Գնանք, տիրուհի, շտապ եք կանչված:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Կգամ, թեև խիստ բնդդեմ է կամքիս:
Օ՜, բարի ատրված, երանի թե այդ ոսկեձույլ թագը,
Որ պիտի կամար կապե ճակատիս,
Հրաշեկ այրող մի պողպատ լիներ՝ կիզեր ուղեղս:
Թող ես մահաբեր թույնով օծանվեմ
Եվ մեռնեմ, նախքան մարդիկ կգոչեն «կեցցե՛ թագուհին»:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Գնա, տարաբախտ, չեմ նախանձում քեզ,
Եվ գլխիդ մի բեր ոչ մի չար արարք:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Չար արա՞րք: Ինչո՞ւ: Երբ նա, որ այժմ իմ ամուսինն է,
Եկավ այն պահին, երբ ողբում էի ես Հենրու վրա,
Երբ բոլորովին դեռ չէր լվացել ձեռքի արյունը,
Որ նա քամել էր իմ սուրբ ամուսնուց
Եվ այն սուրբ մարդուց, որի դագաղին
Հետևում էի իբրև սգավոր:
Օ՜, երբ Ռիչարդի դեմքին նայեցի,
Փափագս այս էր. «անիծյալ լինես», ասացի նրան,
«Որ ինձ իմ այսքան ծաղիկ հասակում որբ պառավ դարձրիր:
Երբ ամուսնանաս, թող քո մահիճը վշտի բույն դառնա,
Եվ թող քո կինը,—եթե այդպիսի մի անմիտ գտնվի,—
Առավել թշվառ դառնա քեզանով,
Քան թե ինձ դարձրիր ամուսնուս մահով»:
Բայց տե՜ս իմ բախտը: Կանացի սիրտն իմ,—
Ավելի արագ, քան թե կարող եմ անեծքս կրկնել,—
Խիստ գերվեց նրա մեղրոտ խոսքերով,
Եվ ես զոհ դարձա իմ իսկ անեծքին:
Այն պահից ի վեր աչքս չի փակված,
Եվ բնավ մի ժամ նրա անկողնում
Քնի ոսկեղեն ցողով չեմ արբած,
Բայց միշտ ցնցվելով զարթնել եմ նրա զառանցանքներից:
Բացի դրանից, նա ինձ ատում է հորս պատճառով
Եվ անշուշտ շուտով ինձ էլ կլքի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ողջ լեր, ով անբախտ, ես քեզ խղճում եմ, զանգատդ դառն էր:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ես էլ չափազանց կարեկցում եմ քեզ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Դե՛, մնաս բարով, փառքից խուսափող:

ԼԵԴԻ ԱՆՆԱ

Ողջ լեր, որ փառքին հրաժեշտ ես տալիս:

ԴՔՍՈՒՀԻ

(Դորսետին) Ռիչմոնդի մոտ գնա, բախտավոր լինես:

Աննային

Ռիչարդի մոտ գնա, հրեշտակները թող պահպանեն քեզ:

Եղիսաբեթ թագուհուն:

Դու մահր տանար, տեր ընդ քեզ լինի,
Իսկ ես՝ գերեզման, որ հանգստանամ...
Ես ութսուն տարի լոկ վիշտ եմ տեսել,
Մեկ ժամ բերկրանքիս հաջորդել է մեկ շաբաթվա կսկիծ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ սպասեցեք, ետ նայեք ինձ հետ դեպի Աշտարակ.
Ավա՜ղ, գթացեք իմ զառնուկներին, հնամյա քարեր,
Որ պարիսպներիդ ներսում են փակված անեղ նախանձով:
Դու բիրտ օրորոց, այդքան սիրասուն ու անմեղ մանկանց,
Քարասի՛րտ դայակ, մռայլ խաղընկեր հեզ իշխաններիս.
Հսկի՛ր, պահպանիր իմ զավակներին:
Խելահեղ վշտով մնաս բարով եմ ասում քարերիդ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Լոնդոն: Պալատը:

Փողահարություն: Մտնում են՝ Ռիչարդ թագավորը մեծ շուքով, Բուկինգեմը, Քետսբին, մի մանկլավիկ և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դուք մի կողմ կանգնեք:— Ազնիվ Բուկինգե՛մ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այստեղ եմ, տեր իմ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Տուր ինձ քո ձեռքը։

Բարձրանալով և բազմելով գահին

Ես քո խորհրդով
Եվ քո օգնությամբ հասա այս գահին,
Արդյո՞ք այս փառքը մեկ օր կտևի,
Թե՞ երկար օրեր պիտի վայելենք։

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Թող հավետ տևի։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այժմ, Բուկինգեմ, պիտի փորձեմ քեզ,
Կուզեմ իմանալ իրա՞վ դու մաքուր ոսկուց ես ձուլված.
Մանուկ Էդվարդը տակավին ողջ է... դու ինձ հասկացա՞ր.

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լսում եմ, արքա։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Կամիմ արքա դառնալ։

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Բայց դուք արքա եք, վեհափառ տեր իմ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Արքա՜, արքա՜ եմ։ Այդպես է, սակայն Էդվարդը ողջ է։

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Այդ ճիշտ է, տեր իմ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

«Այդ ճիշտ է, տեր իմ»։
Ուզում ես ասել, թող Էդվարդն ապրի։
Այդքան թանձրամիտ երբեք չես եղած,
Միտքս պարզ ասեմ, ազատվել կուզեմ այդ շան քներից,
Եվ անմիջապես, հապաղել պետք չէ։
Այժմ ի՞նչ կասես։ Խոսքդ կարճ կապիր։

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ձեր կամքն է, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պա՛հ, պա՛հ, տեսնում եմ սառույց ես կտրել, խանդդ սառել է,
Գուցե հոժար չե՞ս, որ նրանք մեռնեն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Արքա, թույլ տվեք մի քիչ մտածեմ,
Ապա այդ մասին պատասխան տամ ձեզ,
Ես իմ վճիռը շատ չեմ ուշացնի:

Գնում է:

ՔԵՏՍԲԻ

(Առանձին՝ մանկլավիկին) Արքան զայրացավ: Տե՞ս, շուրթն է կծում

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Լավ է՝ գործ բռնեմ ես հաստագլուխ,
Միամիտ, ապուշ մանուկների հետ, որ սուր հայացքով
Չեն զննում հոգիս:
Գոռոզ Բուկինգեմը աչալուրջ դարձավ:
— Ապա, մանկլավի՛կ:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

Լսում եմ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Չգիտե՞ս մեկին, որ ապականիչ ոսկու զորությամբ
Կատարի գաղտնի մի սպանություն:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

Գիտեմ մի դժգոհ ազնվականի,
Որի վեհ հոգին և սուղ քսակը հաշտ չեն իրար հետ:
Այդ մարդու համար մի ոսկին արժե քսան ճառտասան.
Նա ոսկու ուժով պատրաստ է ամեն ոճրագործության:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Անունը ի՞նչ է:

ՄԱՆԿԼԱՎԻԿ

Տիրել է, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մասամբ ծանոթ եմ, շուտ գնա, կանչիր:

Մանկլավիկը գնում է:

Ես այսուհետև նենգ Բուկինգեմին
Էլ չեմ հաղորդի իմ գաղտնիքները:
Առանց հոգնության ամբողջ ժամանակ վազել է ինձ հետ,
Այժմ ուզում է ազատ շո՞ւնչ քաշել:

Մտնում է Ստենլին:

Ի՞նչ լուրեր ունես:

ՍՏԵՆԼԻ

Մարկիզ Դորսետը փախել է, տեր իմ,
Կոմս Ռիչմոնդի մոտ, ծովից էլ այն կողմ,
Ուր նա է ապրում:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մոտ եկ, Քեթսբի. շտապ հոչակիր,
Որ կինս՝ Աննան, ծանր հիվանդ է:
Կհրամայեմ, որ տանը մնա:
Շուտ մի հասարակ ազնվական գտիր,
Որ Կլարենսի աղջկան պսակեմ:
Որդին հիմար է, ես երկյուղ չունեմ:
Ի՞նչ ես հորանջում: Կրկնում եմ դարձյալ.
Ասա թագուհի Աննան մեռնում է,
Արագ հոչակիր. իրենց արմատից ջնջել եմ ուզում
Ինձ սպառնացող բոլոր հույսերը:

Քեթսբին գնում է:

Պետք է պսակվեմ եղբորս աղջկա հետ,
Այլապես գահս կանգնած է փխրուն ապակու վրա:
Սպանել նրա երկու եղբորը և այնուհետև կին առնել նրա՞ն,
Անհույս ուղի է հաղթության համար: Բայց ես արյան մեջ
Այնպես եմ խրված, որ մի ոճիրը ոճիր է ծնում:
Արտասվող գութը օթևան չունի իմ աչքերի մեջ:

Մտնում է մանկլավիկը Տիրելի հետ:

Անունդ Տիրե՞լ է:

ՏԻՐԵԼ

Ջեմս Տիրել, արքա, ձեր խոնարհ ծառան:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իրա՞վ ես ասում:

ՏԻՐԵԼ

Կարող եք ստուգել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Արդյոք սիրտ կանե՞ս իմ ծանոթներից մեկին սպանել:

ՏԻՐԵԼ

Այո, տեր արքա,
Բայց մեկը քիչ է, երկուսին կուզեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրեմն՝ սպանիր: Երկու ոխերիմ թշնամի ունեմ,
Որ վրդովում են հանգստությունս և քաղցրիկ քունս:
Ես նրանց, Տիրել, քո ձեռքն եմ հանձնում, դատաստանը տես.
Իմ խոսքը այն բիճ մանկանց մասին է, որ Բերդի մեջ են:

ՏԻՐԵԼ

Իրավունք տվեք նրանց մոտ մտնեմ,
Եվ այդ երկուսից ես ձեզ կազատեմ մի ակնթարթում:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Անուշ ես երգում: Եկ այստեղ, Տիրել:
Ահա անցաթուղթ Բերդը մտնելու: Մոտ բեր ականջդ:

Շշնջում է նրա ականջին:

Միայն այդքանը, ավելին՝ ոչինչ: Երբ կատարես,
Ես քեզ կսիրեմ, կվարձատրեմ քեզ:

ՏԻՐԵԼ

Իսկույն վերջ կտամ:

Գնում է:

Մտնում է Բուկինգեմը:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տեր իմ, ձեր վերջին պահանջը լրիվ
Կշռադատեցի:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այդ մի կողմ թողնենք: Դորսետն է փախել կոմս Ռիչմոնդի մոտ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Լսեցի, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իսկ նա քո կնոջ որդին է, Ստենլի, այդ լավ իմացիր:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տեր իմ, խնդրում եմ ես այն պարգևը, որ խոստացել եք
Ձեր ազնիվ պատվով և ձեր հավատով:
Հերֆորդ գավառը շարժական կայքով
Ինձ է պատկանում, ըստ այդ խոստումի:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Լսիր, Ստենլի, հսկիր կնոջդ. եթե նամակով
Նա կապ հաստատի կոմս Ռիչմոնդի հետ, պատասխան կտաս:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ի՞նչ կասեք, տեր իմ, արդար խնդրանքիս:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ես լավ հիշում եմ. Հենրի Վեցերորդը
Գուշակել էր, որ Ռիչմոնդը պետք է թագավոր դառնա,
Երբ դեռ Ռիչմոնդը փոքրիկ մանուկ էր:
Թագավո՞ր, այո: Գուցե՞, թերև՞ս...

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տե՞ր իմ...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Բայց այդ մարգարեն անզոր գտնվեց
Գուշակել, որ ես իրեն կսպանեմ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Ձեր՝ ինձ խոստացած գավա՞ռը, արքա...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հիշեցի, Ռիչմոնդ: Վերջերս, երբ ես էքսետերումն էի,
Քաղաքապետը մի բերդ ցույց տվեց
Եվ ասաց, որ դա Ռուժմոնդ ամրոցն է. իսկույն սոսկացի,
Քանզի մի անգամ մի իռլանդացի գուսան ինձ ասաց,
Որ ես Ռիչմոնդին տեսնելուց հետո երկար չեմ ապրի:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տե՛ր իմ...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ժամը քանի՞սն է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Համարձակվում եմ նորից հիշեցնել
Ձեր խոստումն, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ժամը քանի՞սն է:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Տասի զարկին մոտ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Թող զարկի ուրեմն:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Իսկ ինչո՞ւ զարկի:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Քանզի կապկի պես անվերջ ճոճվում ես
Դու իմ մտքերի և խնդրիդ միջև.
Այսօր շռայլ չեմ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Գոնե ասացեք, կստանա՞մ, թե՞ ոչ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պա՛ն, պա՛ն, սրան տես,
Արդեն զզվեցրիր. տրամադիր չեմ:

Բոլորը գնում են, բացի Բուկինգեմից:

ԲՈՒՆԻՆԳԵՄ

Այս անարգա՜նքն է վաստակն անբասիր իմ ծառայության:
Սրա՞ համար նրան արքա կարգեցի:
Օ՜, եկ մտածեմ Հեստինգսի վրա
Եվ անմիջապես Բրեկնոք փախչեմ,
Քանի տակավին գլուխս ողջ է:

Գնում է:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նույն վայրը:

Մտնում է Տիրելը:

ՏԻՐԵԼ

Դժնյա՜, արյունոտ գործը կատարվեց,
Ամենացնցող և անագորույն սպանությունը,
Որի պես ոճիր դեռ այս երկիրը երբեք չի գործել:
Դայտոն ու Ֆորեստը, որոնց վարձեցի,
Որ այս անողորմ ջարդը կատարեն,
Թեպետ չարագործ սրիկաներ են, արնախում շներ,
Բայց նրանց տխուր և սրտաճմլիկ մահը պատմելիս՝
Գթից հալվելով, հեկեկում էին մանուկների պես.
«Ահա այսպես էին ընկած այդ անմեղ երեխաները»,—
Ասում էր Դայտոնը.—
«Ահա այսպես էին իրարու գրկել
Իրենց անարատ լույս բազուկներով»,— պատմեց Ֆորեստը,—
«Նրանց շուրթերը համբուրվում էին
Ինչպես չորս վարդեր մի ոստի վրա՝ ամռան պերճանքում:
Բարձին ընկած էր մի աղոթագիրք,
Երբ ես այդ տեսա,— ասաց Ֆորեստը,— ձեռքս թուլացավ,—
Բայց չար սատանա՜ն...»,— այս խոսքի վրա սրիկան լռեց:
Նրա պատմածը ավարտեց Դայտոնը. «Եվ մենք խեղդեցինք
Այդ հրաշակերտ և անուշաբույր երկը բնության,
Որի նմանը նա դեռ չի կերտել
Ստեղծագործության առաջին ծագից»:
Եվ նրանք խղճից խայթված հեռացան,

Չէին կարող խոսել: Ես նրանց թողի,
Որ շուտ լուր բերեմ արնոտ արքային:
Բայց ահա և նա:

Մտնում է Ռիչարդ թագավորը:

Ների՛ր իմ արքան:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Քո լուրը, Տիրել, ինձ կերջանկացնի՞:

ՏԻՐԵԼ

Երբ պատվերիդ կատարումն, արքա,
Երջանկություն է պատճառելու ձեզ, արդ, երջանկացեք,
Այն կատարված է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Նրանց մեռած տեսա՞ր:

ՏԻՐԵԼ

Անձամբ տեսա, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իսկ թաղված տեսա՞ր:

ՏԻՐԵԼ

Նրանց թաղել է Բերդի երեցը,
Բայց որտե՞ղ, ինչպե՞ս, ճշմարիտն ասած, ես այդ չգիտեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ընթրիքից հետո շտապ մոտս եկ
Եվ նրանց մահվան ընթացքը պատմիր,
Մտածիր նույնպես, թե ինչ պարգև ես խնդրում քեզ համար,
Որ անմիջապես իղձդ կատարեմ:
Դե՛, երթաս բարով:

ՏԻՐԵԼ

Խոնարհ մեկնում եմ:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Կլարենսի որդուն փակի տակ եմ դրել,

Աղջկան ավելցի հասարակ մարդու:
Էդվարդի որդիք հայր Աբրահամի գրկումն են քնած,
Իսկ կինն՝ Աննան, բարի գիշեր է մաղթել աշխարհին:
Այժմ ես գիտեմ, Ռիչմոնդն ուզում է կնության առնել
Եղբորս դստեր Եղիսաբեթին,
Եվ այդ շաղկապով ձեռք մեկնել թագին:
Բայց ես բույլ չեմ տա. արդ, գնամ մոտը որպես փեսացու:

Մտնում է Քեթսբին:

ՔԵՏՍԲԻ

Իմ արքա՛...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Համարձակ եկար. բերած լուրերդ բարի՞ են, թե՞ չար:

ՔԵՏՍԲԻ

Չար են, իմ արքա: Իլին փախել է կոմս Ռիչմոնդի մոտ,
Իսկ Բուկինգեմը վելշացիների գլուխն անցնելով,
Ռազմադաշտ իջավ: Նրա ուժերը սաստիկ աճում են:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ռիչմոնդն ու Իլին անշուշտ ավելի վտանգավոր են,
Քան Բուկինգեմը իր հանդուգն զորքով:
Եկ, փորձով գիտեմ, որ երերումը
Կապարե ծառան է դանդաղկոտության,
Դանդաղությունը տանում է դեպի պղերգ թուլություն:
Արդ, քո հրեղեն թևերն արձակիր, ով արագություն,
Դու, արքայական սրընթաց Հերմես:
Ժողովեք զորքը: Ասպարն է այժմ իմ խորհրդատուն.
Հապաղել պետք չէ, երբ ոսոխը մեզ մարտի է կոչում:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Պալատի առաջ:

Մտնում է Մարգարիտ թագուհին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Հաջողությունը հասունանալով
Մահվան զարշահոտ երախն է ընկնում:

Այստեղ ես լոիկ դիտել եմ ծածուկ
Անկումը բոլոր թշնամիներիս:
Այժմ վկա եմ դառնում դժնդակ մի նախամուտքի.
Գնամ Ֆրանսիա: Եղբր, վստահ եմ,
Կլինի նույնչափ ծանր ու ողբալի.
Սակայն նահանջիր, դժբախտ Մարգարիտ. տես ո՞վ է գալիս:

Մի կողմ է քաշվում:

Մտնում են Եղիսաբեթ թագուհին և Յորքի դքսուհին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, իմ թերահաս, անբա՜խտ իշխաններ, իմ նե՜ղ զավակներ,
Ա՜խ, իմ կոկոններ, նորելուկ ծիլեր,
Ձեր հոգիները եթե տակավին թռչում են օդում
Եվ դեռ փակված չեն կայանում հավերժ,
Թեթև թևերով դուք իմ մոտ ճախրեք
Եվ ձեր դժբախտ մոր ողբերը լսեք:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Ճախրեք և ասեք նրան իրավամբ,
Որ ձեր վառ լույսը վճարվեց մահվամբ:

ԴՔՍՈՒՀԻ

Այնքան շատ ցավեր փշրել են ձայնս,
Որ վայ գոչելուց լեզուս հոգնել է,
Ա՜խ, ինչո՞ւ մեռար, Պլանտագենետ, իմ անգին Էդվարդ:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Մեկը մյուսի փոխարեն մեռավ,
Էդվարդն է Էդվարդի մահվան գինն առավ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Աստված, դու ինչո՞ւ լքեցիր այդչափ անմեղ գառներին
Եվ գայլի երախ նետեցիր նրանց:
Քնա՞ծ էիր դու, երբ այդ սոսկալի ոճիրը գործվեց:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Մեկուսի) Երբ ամուսինս և որդիս մեռան:

ԴՔՍՈՒՀԻ

Դու վախճանված կյանք, կուրացած հայացք, շրջիկ ուրվական,

Վշտի տեսարան, երկրի նախատինք, գերեզմանի տուրք,
Դժնի օրերի հիշատակարան, համառոտ քաղվածք,
Ով դու անհանգիստ, հանգչիր Անգլիո սրբազան հողին.
Որ հանիրավի պղծվել է անմեղ արյուն ըմպելուց:

Նստում է գետնի վրա:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ավա՜ղ, քեզ վրա նստել չեմ կարող,
Շիրիմ եմ տենչում, ո՜վ հայրենի հող,
Որ ոսկորներս ծածկեմ նրա մեջ:
Ա՜խ, ինձնից բացի ո՞վ պատճառ ունի ողբալու անվերջ:

Նստում է դքսուհու կողքին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

(Առաջ գալով) Եթե գերագույն պատիվը վաղեմի վշտին է տրվում,
Իմ վիշտը հին է, ճանապա՛րհ բացեք,
Ավագությունը տվեք իմ ողբին:

Նստում է նրանց մոտ.

Եթե կսկիծը ընկեր է սիրում,
Իմը լսելով չափեցեք ձերը.
Մի Էդվարդ ունեի, Ռիչարդն սպանեց իմ անգին որդուն,
Ամուսին ունեի, Ռիչարդն սպանեց իմ սիրած մարդուն,
Քեզ մի Էդվարդ կար, նույն ոճրագործը նրան սպանեց,
Քեզ մի Ռիչարդ կար, այդ նույն Ռիչարդը նրան կործանեց:

ԴՔՍՈՒՀԻ

Բայց ես մի ուրիշ Ռիչարդ ունեի, դու սպանեցիր,
Մի Ռուտլենդ էլ կար, դո՛ւ նրա մահվանն օժանդակեցիր:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Կլարենսիդ էլ Ռիչարդն սպանեց:
Արգանդիդ խորքից լույս աշխարհ սողաց
Դժոխքի շունը, որ մեզ բոլորիս որսում է մահով,
Աչքը չբացած այդ գամփռը արդեն ժանիքներ ուներ
Անմեղ գառներին պատառոտելու,
Որ նրանց մատաղ արյունը լակի:
Այդ պիղծ ավերիչն արարչագործի,

Այդ բռնակալը, որի նմանը աշխարհը չի տեսել,
Այդ գերդահինը, որը իշխում է
Հառաչող մարդկանց արցունքների մեջ.
Նա քո արգանդից արձակվեց աշխարհ,
Որ մեզ որսելով գերեզման լցնի:
— Ո՜վ դու ուղղամիտ և արդարադատ անվրեպ աստված,
Գոհանամ քեզնից, որ այդ բղջախոհ կատաղած շունը
Լափում է նաև իր սեփական մոր մարմնի բերքերը
Եվ նրա ողբը միախառնում է մեր հառաչանքին:

ԴՔՍՈՒՀԻ

Օ՜, Հենրիկոսի տարաբախտ այրի,
Մի ուրախացիր ցավերիս վրա,
Վկա է աստված, որ արտասվել եմ վշտերիդ համար:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Ավա՜ղ, ներիր ինձ, վրեժի եմ ծարավ
Եվ նոր եմ դրանով անզուսպ հագենում:
Էդվարդիս սպանող Էդվարդը մեռավ.
Երկրորդ Էդվարդը մահով վճարեց Էդվարդիս մահը.
Քո մանուկ Յորքը լոկ հավելված էր, քանզի երկուսն էլ
Չէին հավասարվի որդուս կորստին:
Էդվարդիս սպանող Կլարենսը մեռավ.
Բոլոր վկաներն այս ողբերգության՝
Ռիվերս, Վոգեն, Գրեյ և լիրբ Հեստինգսը
Շատ վաղ խցկվեցին մութ շիրիմներում:
Լոկ Ռիչարդն է ողջ, դժոխքի դժխեմ այդ գործակալը,
Որի պաշտոնն է հոգիներ գնել
Եվ նետել դժոխք: Բայց մոտենում է
Նրա եղկելի վախճանն անողորմ:
Հողն հորանջում է, դժոխքը վառվում, դևերը գոռում,
Հրեշտակները լուռ աղոթում են, որ նրան շուտով
Այնտեղից տանեն:
Բարեգութ աստված, կտրիր դու նրա հանգույցը կյանքի,
Որ կարողանամ ապրել և ասել. «Պիղծ շունը սատկեց»:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, այն ժամանակ դու գուշակեցիր, որ կգա մի օր,
Երբ ես կանիծեմ այդ փքված սարդին,
Այդ սապատավոր անարգ դոդոշին
Եվ քո անեծքի կարիքը կզգամ:

Ես այն ժամանակ քեզ անվանեցի փառքիս ունայն փայլ,
Դողդոջուն ստվեր և կեղծ թագուհի,
Ողբալի հանդեսն իմ անցյալ կյանքի:
Մեծ ողբերգության շողոմ վարագույր.
Բարձրացար կատար, որ այդ բարձունքից գահավիժես վայր:
Մի տարաբախտ մայր երկու զավակի, որ արագ անցան.
Վաղեմի փառքիդ տխուր զառանցանք, մի սին պղպջակ.
Պատվի նշանակ, պերճաշուք դրոշ,
Որ ենթակա է ամեն թշնամու շանթող հարվածին:
Դու բեմը պճնող միմոս թագուհի,
Ամուսինդ ո՞ւր է, եղբայրներդ ո՞ւր են,
Որտե՞ղ են, սա, քո երկու որդիք:
Ո՞ւր է երբեմնի ուրախությունդ.
Ո՞վ է քո առաջ խոնարհվում հիմա
Եվ բացականչում «կեցցե թագուհին»:
Իշխաններն ո՞ւր են, որ մեջք էին ծռում և շողոմում քեզ,
Ո՞ւր է ամբոխը, որ քո հետևից խուռն ընթանում էր:
Այդ ամենն անցան, այժմ դիտիր քեզ, ի՞նչ ես դու հիմա.
Բախտավոր կին չես, այլ թշվառ այրի,
Մի զվարթ մոր տեղ՝ ազգվոր մի մայր,
Քեզ էին խնդրում, ինքդ ես խնդրարկու:
Մի թագուհու տեղ՝ տառապյալ ստրուկ՝ հոգսի բազ գլխին,
Ինձ էիր ծաղրում, ես եմ ծաղրում քեզ:
Ամենքը քեզնից վախենում էին,
Մեկն էլ հերիք է, որ դու վախենաս:
Քո հրամանով աշխարհն էր շարժվում,
Ո՞վ է բանի տեղ քեզ դնում հիմա:
Այսպես շուռ եկավ բախտի անիվը
Եվ ժամանակի ավար դարձրեց քեզ.
Լոկ հիշողություն մնաց քո փառքից.
Որ դու տեսնելով ներկա վիճակդ, ավելի տանջվես:
Գահս խլեցիր, արդ հափշտակիր
Նաև վշտերիս արդար բաժինը:
Գոռոզ ուսերիդ դժնդակ բեռիս կես լուծն է ընկել.
Այժմ լիովին ես կթոթափեմ հոգնած գլուխս
Եվ ամբողջ բեռը կդնեմ մեջքիդ.
Ողջ լեր, Յորքի կին: Ողբի թագուհի, դե, մնաս բարով.
Գնամ Ֆրանսիա, որ անգլիական վերքերս բուժեմ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Օ, կա՛ց, հմուտ ես դու անեծքի մեջ:
Սովորեցրու ինձ ինչպես անիծեմ իմ ոսոխներին:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Գիշերն անքուն կաց, ցերեկը՝ քաղցած:
Քո մեռած փառքը բաղդատիր ներկա տառապանքիդ հետ.
Երեխաներիդ մաքով ավելի չքնաղ համարիր, քան թե եղել են:
Իսկ մարդասպանին ավելի զազիր, քան թե իրոք է:
Այդպես կորուստդ պճնազարդելով, վատ հանցագործին
Հրեշ կդարձնես,
Ահա անեծքի եղանակը քեզ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իմ խոսքը բութ է, դու քո անեծքով հեսանիր նրան:

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՐԳԱՐԻՏ

Քո վշտով սրիր, և նա կշողա իմ խոսքի նման:

Գնում է:

ԴՔՍՈՒՀԻ

Այս տառապանքին շա՞տ խոսքեր են պետք:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ա՜խ, նրանք հողմոտ փաստաբաններ են խեղճերի վշտին.
Ունայն ժառանգներ անկտակ խինդի,
Խեղճ մունետիկներ մեր թշվառության:
Տեղ տվեք նրանց. խոսքերը թեպետ օգուտ բերող չեն,
Բայց նրանք սիրտը թեթևացնում են:

ԴՔՍՈՒՀԻ

Եթե այդպես է, արձակիր լեզուդ. եկ գնանք ինձ հետ
Եվ մեր անողորմ խոսքերով խեղդենք
Նզովյալ որդուս, որ երկու անմեղ զավակիդ խեղդեց:

Թմբկահարություն:

Նրա թմբուկն է, համարձակ խոսիր:

Մտնում է Ռիչարդ թագավորը իր շքախմբով և զորքով,
թմբուկներով և փողահարությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ո՞վ է ճանդզնում երբս խափանել:

ԴՔՍՈՒՀԻ

Նա, որ կարող էր քո երբը փակել դեպի լույս աշխարհ՝
Խողխողելով քեզ իր սլիղծ արգանդում,
Որ չգործեիր դու այսքան չարիք և սպանություն:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ճակատդ սքողել ես ոսկեղեն թագով.
Որ դու շորթել ես իր պատկանյալից:
Դրա փոխարեն ճակատիդ վրա
Պետք է դրոշմել եղեռն իշխանի
Եվ որդիներիս ու եղբայրներիս մահը սոսկալի:
Պատասխանիր ինձ, զարշելի ստրուկ, զավակներս ո՞ւր են:

ԴՔՍՈՒՀԻ

Դու դոդո՛շ, դոդո՛շ, ասա քո եղբայր Կլարենսն ո՞ւր է,
Եվ նրա որդին՝ մանուկ Էդվարդը:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ազնիվ Ռիվե՛րսը, Վոզե՛նը, Գրի՛ն:

ԴՔՍՈՒՀԻ

Ուրտե՞ղ է, ասա, բարի Հեստինգսը:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Փողերն հնչեցրեք, թմբուկներ զարկեք,
Որ այս անպատկառ կանանց ձայները երկինք չհասնեն,
Չարախոսում են նրանք օծյալիս: Զարկե՛ք, ասում եմ:

Փողեր և թմբուկներ:

Քաղցրությամբ խոսեք,
Եթե ոչ՝ ռազմի փողահարության աներ որոտով
Այսպես կխեղդեմ ձեր վայնասունը:

ԴՔՍՈՒՀԻ

Դու իմ որդի՞ն ես:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այո, փառք աստծո, հորս շնորհիվ և ձեր շնորհիվ:

ԴՔՍՈՒՀԻ

Արդ, համբերությամբ լսիր ցասումն իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դուք ինձ տվել եք մի անզուսպ երակ,
Որ անկարող է պարսավ հանդուրժել:

ԴՔՍՈՒՀԻ

Օ՜, բույլ տուր խոսեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Խոսեք, ուրեմն, բայց ես չեմ լսի:

ԴՔՍՈՒՀԻ

Ես շատ քաղցրությամբ կաշխատեմ խոսել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Եվ հակիրճ, մայր իմ, ես շտապում եմ:

ԴՔՍՈՒՀԻ

Այդքան շտա՞պ ես: Ես սպասել եմ քեզ անչափ երկար,
Աստծուն է հայտնի, թե ի՜նչ տանջանքի և տագնապի մեջ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Բայց երբ ծնվեցի, ցավերդ չանցա՞ն:

ԴՔՍՈՒՀԻ

Ո՛չ, խաչը վկա, ինքդ լավ գիտես,
Դու աշխարհ եկար, որ դժոխք դարձնես աշխարհն ինձ համար:
Անեղ երկունքով ես քեզ ծնեցի.
Քո մանկությունը կամակոր էր շատ,
Քո դպրոցական հասակն անեղ էր, անզուսպ, կատաղի,
Պատանությունդ քաջ էր, աներկյուղ, ըմբոստ, դիմազրավ,
Իսկ երբ մեծացար դարձար խորամանկ, զոռոզ, արնախում,
Նենգ ու դավադիր,
Առավել խոնարհ, սակայն չարությամբ խիստ ազնտաբեր:
Արդյոք կարո՞ղ ես հիշել գեթ մի ժամ,
Որ ինձ սփոփանք պատճառած լինես:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Չեմ կարող հիշել: Այն ժամն է գուցե,

Երբ մենք առանձին նախանաշեցինք։
Եթե ձեր աչքում այդքան տհաճ եմ,
Թողեք արշավեմ և չանարգեմ ձեզ։
Զարկեք թմբուկին։

ԴՔՍՈՒՀԻ

Կաղաչե՛մ, լսի՛ր։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Շատ դառն ես խոսում։

ԴՔՍՈՒՀԻ

Գեթ մի խոսք միայն,
Քանզի էլ երբեք ձայնս չես լսի։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Խոսիր, ուրեմն։

ԴՔՍՈՒՀԻ

Կամ տիրոջ արդար շանքով կմեռնես,
Նախքան այդ մարտից փառքով ետ կգաս,
Կամ թե ես վշտից և ծերությունից կիշնեմ գերեզման
Եվ էլ չեմ տեսնի դեմքդ հավիտյան։
Անեղ անեծքս, ուստի, հետդ տար.
Թող նա կռվի մեջ ավելի ուժգին ծանրանա վրադ,
Քան թե պողպատե զրահը՝ հագիդ։
Իմ աղոթքները հակառակորդիդ զորքերի հետ են.
Էդվարդի անմեղ երեխաների սուրբ հոգիները
Թող քաջալերեն կռվում ոսոխիդ,
Փառք ու հաղթություն ավետեն նրան։
Արյունռուշտ ես դու, թող քո վախճանը լինի արյունոտ,
Անարգ ապրեցիր, շանսատակ լինես, ով դու անամոթ։

Գնում է։

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

(Գնալով) Մեծ պատճառ ունեմ քեզ նզովելու ավելի ուժգին,
Բայց հոգիս թույլ է, հազիվ կարող եմ ես «ամեն» ասել
Նրա անեծքին։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Սպասիր, տիկին, քեզ հետ խոսք ունեմ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Քո՝ ոճրագործիդ, դաշույնի համար
Էլ ես արքունի զավակներ չունեմ: Իսկ իմ դուստրերին
Կուսանոց կտամ. ինչո՞ւ ողբացյալ թագուհի դառնան:
Ուստի մի ձգտիր նրանց կյանքն հնձել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դու մի դուստր ունես՝ Եղիսաբեթը,
Նա շատ սիրուն է, առաքինի, հեզ և արքայական:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Եվ դրա համար կուզես մեռցնե՞լ: Օ՜, զթա նրան,
Ես կապականեմ աղջկաս վարքը,
Կավերեմ նրա գեղեցկությունը,
Կհայտարարեմ, որ ես էդվարդիս դավաճանել եմ,
Անառակության քողը կքաշեմ նրա երեսին,
Որ ոճրագործի արյունոտ ձեռքից փրկեմ աղջկաս:
Ամենքին կասեմ, որ նրա հայրը իմ էդվարդը չէր:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դու մի անարգիր նրա ծագումը. նա արքայազուն իշխանուհի է:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ես այդ կուրանամ, որ նրան փրկեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Նրա պաշտպանը հենց իր ծագումն է:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց այդ ծագումը մահից չփրկեց իր եղբայրներին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Նրանք չէին ծնված բարի աստղի տակ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բարի աստղը կար, անպակաս էին ոճրագործները:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ոչ ոք չի կարող խույս տալ իր բախտից:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդ ճշմարիտ է, երբ չարագործն է իշխում մեր բախտին:
Երեխաներս կարող էին ավելի հանգիստ մահանալ,
Եթե աստված քեզ այլ կերպ ստեղծեր:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այնպես ես խոսում, կարծես թե ես եմ նրանց սպանել:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իսկ ո՞վ սպանեց: Դու՝ հորեղբայրդ,
Զրկեցիր նրանց ազգականներից, ազատությունից,
Գահից ու կյանքից:
Ով էլ ներքած լինի նրանց մատաղ սիրտը,
Նրա բազկին դո՛ւ ես ուղղություն ավել:
Դահճի դանակը բութ էր, անկասկած,
Բայց հեսանել են քար սրտիդ վրա,
Որ մի հարվածով խեղճ գառնուկներիս կրծքերը ճեղքեն:
Վշտին վարժվելով՝ սանձահարվում է մոլեգին վիշտը,
Այլապես ես իմ մանկանց անունը հնչելուց առաջ
Իմ եղունգները կխարսխեի աչքերիդ խորքը
Եվ մի այդպիսի մահվան հուսահատ ծովախորշի մեջ,
Կայմ և առագաստ կորցրած նավի պես,
Կջախջախվեի՝ զարկվելով քո այդ ապառաժ կրծքին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Թող արշավանքս ձախողվի, տիկին,
Թող ես կործանվեմ այս աղետալի պատերազմի մեջ,
Եթե այն բոլոր ցավերի համար,
Որ պատճառել եմ քեզ և քո բոլոր ազգականներին,
Քեզ չհատուցեմ շատ ավելի մեծ բարիք գործելով:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդ ի՞նչ բարիք է երկնքում պահված,
Որն ի հայտ գալով ինձ կերջանկացնի:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Քո զավակների վեր բարձրանալը, ազնիվ թագուհի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Մինչև գլխատման բեմին հասնելը, հասկանալի է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մինչև վեհության և պատվի կատար՝
Վերջին գագաթը երկրային փառքի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդ հեքիաթներով վիշտս օրորիր.
Ինչպիսի՞ պատիվ, մեծություն և բախտ
Դու կարող ես տալ իմ զավակներից որևէ մեկին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինչ որ ես ունեմ. ինձ և ամեն ինչ
Պատրաստ եմ պարգևել ես քո աղջկան:
271 Արդ, խորասուզիր քո ցաված հոգու Լետա գետի մեջ
Այն զրկանքների հիշատակները,
Որ քո կարծիքով պատճառել եմ քեզ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Կարճ ասա, թե ոչ քո այդ խոստումը բարության մասին
Ավելի երկար կարող է տևել, քան բուն բարիքը:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրեմն՝ իմացիր, ես ամբողջ հոգով սիրում եմ դուստրիդ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իմ դստեր մայրը հոգով գիտե այդ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այսինքն՝ ի՞նչ գիտես:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որ ամբողջ հոգով սիրում ես աղջկաս,
Ինչպես սիրեցիր իր եղբայրներին քո ամբողջ հոգով.
Ի խորոց սրտի շնորհակալ եմ այդ սիրո համար:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինչո՞ւ ես արագ միտքս շուռ տալիս.
Ուզում եմ ասել սաստիկ եմ սիրում ես քո աղջկան,
Եվ կամիմ կարգել նրան թագուհի Անգլիո գահին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Թագավորն ո՞վ է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հասկանալի է, նա, ով կարգում է նրան թագուհի:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ինչպե՞ս, ո՞վ: Մի՞թե:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այո, այո, ես. կարծիքդ ի՞նչ է այդ մասին, տիկին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ինչո՞վ ես ուզում նրան գրավել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինքդ խրատ տուր.
Դու քաջ ծանոթ ես նրա խառնվածքին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Կուզե՞ս սովորել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իմ ամբողջ սրտով:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Իր եղբայրներին սպանողի ձեռքով
Երկու արնոտ սիրտ ուղարկիր նրան. մեկին դրոշմիր
«Էդվարդ» անունը, իսկ մյուսին՝ «Յորք»: Անշուշտ կարտասվի:
Ապա տուր նրան դու մի թաշկինակ,
Ինչպես հիշում ես, Մարգարիտն արավ,
Քո հորը տալով Ռուտլենդի արյամբ ներկված մի արքիչ:
Թող նրան հայտնի, թե այդ վառ հյութը
Իր եղբայրների մարմնից է ծծված,
Եվ խնդրի նրան իր արցունքները սրբել դրանով:
Երթե դրանով չգրավեցիր դու նրա սիրտը,
Վեհ սխրանքներիդ ցուցակն ուղարկիր.
Պարծեցիր, որ դու մորթեցիր նրա քեռի Ռիվերսին
Եվ հորեղբորը՝ կոմս Կլարենսին. և ի սեր նրա
Արագ վերջ տվիր Աննայի կյանքին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դու ինձ ծաղրում ես. այդ ճանապարհով դուր չեմ գա նրան:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ուրիշ ելք չկա,
Քանի որ ինքդ չես կարող ուրիշ կերպարանք առնել
Եվ այսուհետև չլինել Ռիչարդ,
Որ կատարել է այդ ոճիրները:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինչ որ արել եմ՝ իր սերն է պատճառ. այդպես ծանուցիր:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Երբ այդպես է, քեզ կհավանի,
Թանկ արյան գնով նվաճված սեր է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինչ որ արված է, չի կարող փոխվել:
Մարդիկ շատ հաճախ անմիտ են գործում,
Որպեսզի հետո շարաչար զղջան:
Եթե քո որդոց զրկել եմ թագից,
Այդ թագը այժմ դստերդ կտամ իբրև հատուցում:
Եթե արգանդիդ ծնունդն եմ ջնջել,
Այժմ պատրաստ եմ ես ձեր սերունդը արագ բազմացնել
Իմ և քո դստեր արյան շաղախով:
Մեծ մոր անունը սիրո ավելի պակաս արժան չէ,
Քան թե մոր քաղցրիկ և սուրբ անունը:
Քո թոռնիկները նույն զավակներդ են, քո իսկ արյունից,
Բայց մի աստիճան նրանից ներքև,
Միևնույն ցավից, մի բացառությամբ,
Որ մայրն է զգում երկունքի պահին, ոչ թե տատիկը:
Երեխաներդ տանջանք են եղել ջահել օրերիդ,
Իսկ զավակներս նեցուկ կդառնան քո ծեր հասակին:
Դու կորցրել ես լոկ մի որդի արքա,
Նրա փոխարեն քո դուստրը այժմ կբարձրանա գահ:
Շատ բան կուզեմ տալ, բայց անկարող եմ,
Ուստի վերցրու այն, ինչ որ կարող եմ:
Դորսետը՝ որդիդ, ահաբեկ, ըմբոստ
Շրջում է հիմա օտար աշխարհում,
Մեր այս դաշինքը կվերադարձնի նրան հայրենիք՝
Դեպի նոր պատիվ և բարձրագույն դիրք.
Եվ թագավորը, որ չքնաղ աղջկադ կին պիտի կոչի,

Քո Դորսետին էլ կանվանի եղբայր.
Վերստին արքայի մայր պիտի դառնաս
Եվ աղետաբեր այն տարիների փլատակները
Պիտի նորոգվեն կրկնակի շքեղ փառաճեղությամբ:
Ա՜խ, մենք շատ ուրախ օրեր կտեսնենք:
Թափած արցունքիդ բոլոր շիթերը
Պիտի ետ դառնան արևելքի նոխ սուտակներ դարձած,
Իրենց արժեքը տասնապատկելով
Բյուր երջանկությամբ:
Ուրեմն, մայր իմ, աղջկադ մոտ գնա,
Փափկացրու նրա ամոթխած կուրծքը քո խրատներով,
Նրա ականջը պատրաստիր սիրո խոսքեր լսելու,
Նրա զգայուն սրտում բորբոքիր
Արքունի թագին տիրելու տենչը: Պատմիր դշխունուն,
Թե ամուսնության գողտրիկ ժամերը որքան գերող են:
Եվ երբ այս բազկով պարտության մատնեմ
Այդ նվաստ, ըմբոստ խենթ Բուկինգեմին,
Հաղթապսակը ճակատիս կգամ
Եվ քո դստերը կտանեմ դեպի մահիճն հաղթողի:
Իմ հաղթավարը ես կտամ նրան
Եվ կհռչակեմ գերագույն հաղթող, Կեսարին՝ Կեսար:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց ինչպե՞ս ասեմ, որ հարմար լինի: Դստերս հայտնե՞մ,
Որ հորեղբայրը իր ձեռքն է խնդրում: Թե՞ ասեմ՝ քեռին,
Թե՞ մարդասպանը իր եղբայրների և քեռիների:
Ի՞նչ անուն ասեմ, որ հարմար լինի սիրախոսության,
Որ իմ պատիվը, աստված, և՛ օրենք, և՛ նրա սերը
Քեզ արժանացնեն նրա հասակին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հաղորդիր նրան, որ այդ դաշինքը խաղաղություն է
Բերելու երկրին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որին կարող է նա հասնել միայն անդուլ պայքարով:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ասա, որ արքան խնդրում է իրեն:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Մի այնպիսի բան, որ արգելում է արքայից արքան:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ասա, որ հզոր թագուհի կդառնա:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որպեսզի իմ պես իր բախտը ողբա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ասա, որ հավետ կսիրեմ նրան:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց այդ «հավետը» երկարատև՞ է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մինչև իր քաղցրիկ կյանքի վախճանը:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Այդ քաղցրիկ կյանքը որքա՞ն կտևի:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Որքան որ երկինք ու երկիր կամին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ոչ, որքան կամին դժոխք ու Ռիչարդ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ասա, իր արքան իր հպատակն է:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց հպատակը զարշում է քեզնից:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պերճախոսությամբ ինձ գովաբանիր:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Երբ գործն արդար է, պարզ խոսքն ավելի զորեղ է ազդում:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրեմն՝ պարզապես հայտնիր իմ սերը:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց երբ արդար չէ, շատ բիրտ է հնչում:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հիմքերդ անմիտ և շատ ծանծաղ են:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Օ՜, ո՜չ, շատ խորն է դրանց արմատը:
Շատ խորն են թաղված խեղճ մանկիկներս իրենց շիրմի մեջ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մի՛ զարկ այդ լարին, անցած բաներ են:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ոչ, պիտի զարկեմ, մինչև որ պայթեն սրտիս լարերը:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Վկա սուրբ Գեորգ, իմ ծնկակապը, նաև իմ թագը...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որ դու անարգել, պղծել ես դրանք, իսկ թագը՝ շորթել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Օ՜, ես երդվում եմ...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Կանգ առ, մի երդվիր, երդումդ փուչ է:
Դու սուրբ Գեորգին սրբապղծել ես,
Քո ծնկակապը իր ասպետական փայլից զրկել ես
Եվ թագի փառքը հափշտակությամբ խայտառակել ես,
Թե կամիս երդվել, որ քեզ հավատամ,
Երդվիր ուրեմն այնպիսի բանով, որ դեռ չես պղծել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Աշխարհը վկա...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որ այնպես լի է քո զարշ չարությամբ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հորս շիրիմով...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Քո կյանքով նրան ապականել ես։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Երդվում եմ ինձնով։

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ինքդ զարշանք ես։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրեմն՝ աստծով...

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Աստծուն ամենից շատ ես անարգել։
Եթե հիրավի դու վախենայիր երդումդ դրժել,
Այն միությունը, որ եղբայրդ հիմնեց, խախտված չէր լինի,
Ոչ էլ եղբայրս՝ քո ձեռքով սպանված։
Թե վախենայիր երդումդ դրժել,
Գլուխդ պճնող մետաղն արքունի
Որդուս քունքերը պիտի զարդարեր։
Երկու իշխանն էլ ողջ էին հիմա,
Որ այժմ լոիկ փոշի են դառնում շիրիմների մեջ։
Ուխտդ խախտելով դու նրանց դարձրիր ճիճուներին կեր,
Այժմ էլ ինչո՞վ կարող ես երդվել։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իմ ապագայով։

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Որ եղծանել ես քո զարշ անցյալով։
Ծով արտասուքով պիտի լվանամ ես այդ ապագան,
Որ դու անցյալում անիրավել ես։
Քեզնով որբացած երեխաների
Անեղ ողբերով երկիրն է հեծծում։
Քո մորթած մանկանց խեղն ծնողները
Հառաչանքներով գալիքն են ցնցում։
Դու ապագայով մի՛ երդվիր, քանզի
Նախապես արդեն պղծել ես նրան։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինչպես որ կամիմ մեղքերս քավել,
Ինչպես որ հաղթել կուզեմ թշնամուս,
Այդպես էլ թող ես, թող ես կործանվեմ:
Երկի՜նք, երջանիկ ժամերս կորզիր,
Ցերե՜կ, լույս մի տուր. գիշե՛ր, խափանիր աչքերիս քունը,
Ո՛վ մոլորակներ, բախտս կործանեք չարակամությամբ,
Եթե չինչ սիրով և սուրբ մտքերով
Անարատ, անբիծ նվիրվածությամբ
Չեմ սիրում ես քո չքնաղ դշխունուն:
Նրա ձեռքումն է երկուսիս բախտը:
Առանց աղջկադ ինձ, քեզ և իրեն,
Նաև մեր երկրին և բազում մարդկանց քրիստոնեական
Հետապնդում է անկում, ավերում, կոտորած ու մահ:
Լոկ մեր դաշինքը կարող է կանխել այդ արհավիրքը,
Առանց քո դստեր փրկություն չկա:
Արդ, անգին մայր իմ,—ես պարտավոր եմ քեզ այդպես կոչել,—
Սիրուս միջնորդը եղիր նրա մոտ,
Դու նրան պատմիր ոչ թե անցյալիս, այլ իմ փառավոր
Գալիքի մասին,
Ոչ թե ինչ արժեմ, այլ թե ինչ փառքի ես կարժանանամ
Դարի պահանջը բացատրիր նրան,
Եվ վերջ տուր մաղձիդ, երբ մեծ գործեր կան:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Կուզես ենթարկվե՞մ դևի դյութանքին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ենթարկվիր, եթե դևը մղում է քեզ դեպի բարին:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Եվ հանուն նրա ես ինձ մոռանա՞մ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մոռացիր, եթե հիշելն է տանջանք:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Բայց դու սպանել ես իմ զավակներին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ես նրանց կթաղեմ աղջկադ արգանդում.
Եվ նրանք այնտեղ կվերածնվեն փյունիկի նման,
Որ սփոփեն քեզ:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Գնամ հորդորեմ, որ նա քեզ սիրի՞:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դրանով բախտավոր մայր կդառնաս դու:

ԹԱԳՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹ

Ահա գնացի: Շուտ նամակ գրիր
Եվ ինձնից նրա կամքը կիմանաս:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Սիրո համբույրն այս փոխանցիր նրան: Դե, երթաս բարով:

Եղիսաբեթ թագուհին գնում է:

Օ՛, թեթևամի՛տ, դյուրահավատ կին:

Մտնում է Ռետկլիֆը, ապա՝ Քետսբին:

Ի՞նչ նոր լուրեր կան:

ՌԵՏԿԼԻՖ

Ողորմած արքա, արևմտյան ափին
Երևաց հզոր մի նավատորմիղ: Ծովափ են գալիս
Մեծ բազմություններ խիստ կասկածելի բարեկամների,
Բոլորն անզեն են և մտադիր չեն ետ մղել նրանց.
Ասում են Ռիչմոնդն է իրենց ծովապետը,
Եվ դանդաղում է ծովի դուրս գալու, ակնկալելով,
Որ Բուկինգեմը ցամաքի կողմից օգնության կգա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պետք է մի ճարպիկ բանբեր առաքել Նորֆոլկի դքսին.
Դու թռիր, Ռետկլիֆ. կամ թե Քետսբին: Ո՞ւր է Քետսբին:

ՔԵՏՍԲԻ

Այստեղ եմ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Սուրա դքսի մոտ:

(Ռեոնկլիքին). Իսկ դու ալացիր դեպ Սոլսբերի.
Երբ այնտեղ հասնես... *(Քեւոսքին)* Ասրո՞ւչ. հասատազլո՞ւխ,
Ինչո՞ւ ես կանգնել: Թողիր դեսի մոտ:

ՔԵՏՍԲԻ

Բայց ձեր անունից ի՞նչ հայտնեմ դքսին,
Մեծազոր արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դու ճշմարիտ ես, բարի Քեւսբի: Ասա թող շտապ
Մեծ զորք ժողովի, որքան կարող է,
Եվ գա, հանդիպի ինձ Սոլսբերիում:

ՔԵՏՍԲԻ

Գնացի, տեր իմ:

Գնում է:

ՌԵՏԿԼԻՖ

Ես Սոլսբերիում ի՞նչ պիտի անեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դո՞ւ: Ինչի՞ համար: Ինքս կգնամ:

ՌԵՏԿԼԻՖ

Հենց նոր ասացիք, որ այնտեղ նեպեմ:

Մտնում է Ստենլին.

Միտքս փոխեցի:— Ի՞նչ լուր, Ստենլի:

ՍՏԵՆԼԻ

Լուրն այնքան լավ չէ, որ ուրախանաք,
Ոչ էլ այնքան վատ, որ չհաղորդեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այ քեզ հանելուկ, ոչ լավ է, ոչ վատ:
Ի՞նչն է ստիպում մղոններ չափել,
Երբ որ կարող ես խոսքդ կարճ կապել:
Կրկնիր, ի՞նչ լուր է:

ՍՏԵՆԼԻ

Ռիչմոնդը, տեր իմ, ծովի վրա է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ծովի տակն անցներ, ծովն ելներ վրան:
Երկչոտ ապզուրաց. նպատակն ի՞նչ է:

ՍՏԵՆԼԻ

Չգիտեմ, տեր իմ: Միայն կարծում եմ...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իսկ ի՞նչ ես կարծում:

ՍՏԵՆԼԻ

Դորսետը, Իլին և Բուկինգեմը դրդել են նրան,
Որ գա, տիրանա Անգլիո գահին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այդ գա՞հն է թափուր. թե՞ սուրն է անգործ,
Արքա՞ն է մեռած, երկի՞րն է անտեր,
Արդ, մի՞թե մենք չենք ժառանգներն Յորքի
Եվ օրինական թագավորը երկրի,
Ինչո՞ւ է շրջում նա ծովի վրա:

ՍՏԵՆԼԻ

Թե պատճառն այդ չէ, ուրեմն չգիտեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Գիտե՞ս. գալիս է, որ արքա դառնա:
Լավ գիտես, թե ուր է գալիս վելշացին:
Կամիս ապստամբել, փախչել նրա մոտ:

ՍՏԵՆԼԻ

Իզուր եք վրաս կասկածում, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ապա ո՞ւր է զորքդ, որ ետ շպրտի հակառակորդին.
Ո՞ւր են քո վարձկան զնդերն ու մարդիկ:
Մի՞թե նրանք չեն, որ արևմտյան եզերքին խմբված
Ձեռք են կարկառում նավերով եկած ապստամբներին:

ՍՏԵՆԼԻ

Իմ ամբողջ զորքը հյուսիսում է, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Սառած գնդեր են։ Ի՞նչ են չինում այնտեղ,
Երբ արևմուտքում մեզ ուժեր են պետք։

ՍՏԵՆԼԻ

Նրանց հրաման չէր տրված, արքա։
Բարեհաճեցեք ինձ արձակելու,
Եվ ես իմ ամբողջ զորքը ժողոված
Կհանդիպեմ ձեզ, ձեր ուզած ժամին, որտեղ կամենաք։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Տեսնո՞ւմ եմ, տեսնո՞ւմ։ Ուզում ես փախչել դու Ռիչմոնդի մոտ։
Չե՛մ վստահում քեզ։

ՍՏԵՆԼԻ

Մեծազոր արքա,
Երբեք կասկածի առիթ չեմ տված բարեկամության։
Դավաճան չեմ եղել և չեմ լինելու։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրեմն գնա և զորք ժողովիր։ Բայց Գեորգ որդուդ
Մեզ մոտ կպահենք։ Հավատարիմ եղիր,
Եթե ուզում ես նրա գլուխը ուսերին մնա։

ՍՏԵՆԼԻ

Վարվեցեք իր հետ, ըստ իմ վարմունքի։

Գնում է։

Մտնում է մի սուրհանդակ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մեծազոր արքա, Դևոնշիրի մեջ,
Ինչպես հայտնում են մեր հավատարիմ բարեկամները,
Իրենց բազմաթիվ դաշնակիցներով մեր դեմ են զինվել
Սըր Էդվարդ Քորտնին և Էքսետերի եպիսկոպոսը՝
Գոռոզ եղբայրն իր։

Մտնում է երկրորդ սուրհանդակը։

Բ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Քենդի մեջ, արքա, ապստամբվել են գիլդֆորդցիները.

Ապստամբներին անթիվ մարդիկ են արդեն միանում,
Նրանց ուժերը հզորանում են:

Մտնում է երրորդ սուրհանդակը:

Գ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Հայր Բուկինգեմի բանա՞կը, տեր իմ...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Դո՛ւրս կորեք, բվեր, բա՛վ է մահ երգեք:

Ծեծում է նրան:

Այս է քո վարձը. գնա՛, լավ լուր բեր:

Գ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Իմ բերած լուրը այսպես է, արքա.
Հորդ հեղեղները և անձրևները
Ցրիվ են տվել Բուկինգեմի ողջ զորաբանակը.
Ինքն էլ փախել է գլուխը կորցրած,
Որտե՛ղ, հայտնի չէ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ների՛ր ինձ, ուրեմն:
Ահա քսակս, հարվածս բուժիր:
Արդյոք հայտնե՞լ են, թե նա, ով բռնի այդ դավաճանին,
Պարգև կստանա:

Գ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Հայտնել են, տեր իմ:

Մտնում է չորրորդ սուրհանդակը:

Դ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թոմաս Լովելն ու մարկիզ Դորսեթը
Ապստամբել են Յորքշիրում, արքա:
Բայց երկրորդ լուրս մխիթարիչ է:
Բրետոնների նավատորմիղը ցրիվ է եկել ահեղ փոթորկից:
Ռիչմոնդը նավակ է ուղարկել եզերք,
Որ հարցում անեն այնտեղի զորքից,
Դաշնակիցնե՞ր են, թե՞ հակառակորդ:
Նրանք հայտնել են, որ Բուկինգեմն է ուղարկել իրենց:

Ռիչմոնդը նրանց հավատ չի տածել
Եվ առազաստը պարզելով կրկին ծովն է հեռացել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Օն, հառա՛ջ, հառա՛ջ, զինված ենք արդեն.
Թեև խույս տվեց ոսոխն արտաքին,
Գեթ ջարդենք ներքին ապստամբներին:

Մտնում է Քետսբին:

ՔԵՏՍԲԻ

Մեծազոր արքա, դուքս Բուկինգեմը ձերբակալված է.
Ցնծազին լուր է. սակայն Միլֆորդում Ռիչմոնդի կամքը
Անազին զորքով ցամաք դուրս եկավ:
Անախորժ լուր է, բայց պարտ եմ հայտնել:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Հառաջ, իմ զորքեր, դեպի Սոլսբերի:
Մենք կարող էինք այսքան ժամանակ
Կամ փառքով բնկնել, կամ արքայական հաղթանակ տանել:
Թող մեկը ձեզնից դուքս Բուկինգեմին
Սոլսբերի տանի: Մնացյալները թող հետևեն ինձ:

Փողեր: Բոլորը գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լորդ Դերբու տունը:

Մտնում են Դերբին և Քրիստափոր էրսվիքը:

ԴԵՐԲԻ

Դու իմ անունից պատմիր Ռիչմոնդին,
Որ այդ արյունառուշտ վարազի որջում
Գեորգ Ստենլի որդիս է փակված,
Եթե ապստամբեմ, նրա գլուխը իսկույն կթռչի.
Ես այդ երկյուղից օգնել չեմ կարող:
Բայց ասա խնդրեմ, ո՞ւր է մեր պայծառ Ռիչմոնդը այժմ:

ԷՐՍՎԻՔ

Նա Վալեսումն է:

ԴԵՐԲԻ

Մեծ իշխաններից ովքե՞ր կան իր կողմ:

ՈՒՐՍՎԻՔ

Վալտեր Հերբերտը՝ մի անհաղթ զինվոր,
Գիլբերտ Տոլբոտը, Վիլյամ Ստենլին,
Մեծ կոմս Օքսֆորդը, ահեղ Պեմբրոկը, սըր Ջեմս Բլանտը,
Ռիս էպ-Թոմասը քաջարի զորքով,
Եվ բազում ուրիշ անվանի քաջեր,
Բոլորը դեպի Լոնդոն են շարժվում,
Եթե գրոհի չենթարկվեն ճամփին:

ԴԵՐԲԻ

Դու քո Ռիչմոնդի մոտ վերադարձիր, ողջույնս հայտնիր,
Ասա թագուհին սրտանց հոժար է,
Որ նա կին առնի իր սիրուն դուստր Եղիսաբեթին:
Իսկ մնացյալը այս թուղթը կասի:
Բարի ճանապարհ:

Գնում են:

ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Սոլսբերի: Մի բաց հրապարակ:

Մտնում են Շերիֆը, ապա՝ Բուկինգեմը գեղարդակիրների հսկողությամբ, որոնք նրան տանում են գլխատելու:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Արքան թույլ չի՞ տա, որ իր հետ խոսեմ:

ՇԵՐԻՖ

Ոչ, ազնիվ դուքս իմ: Ենթարկվեք բախտին:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

Օ՜, Հեստինգս, և դուք, Էդվարդի որդիք, դուք, Ռիվե՜րս, Գրե՜յ,
Ե՛վ նվիրական արքա Հենրիկոս, և՛ Էդվարդ որդիդ,
Նաև դու, Վոգեն, ավա՜ղ, բոլորդ
Զոհ դարձաք դժնի անարդարության:
Եթե ձեր տրտում հոգիներն հիմա
Ամպերի միջից ներքև են նայում,
Արդ, ուրախացեք իմ կործանումով, վրեժն արդար է:
— Այսօր Մեռելո՞ց է:

ՇԵՐԻՖ

Այո, տեր իմ:

ԲՈՒԿԻՆԳԵՄ

12 Մեռելոցն, ուրեմն, դատաստանիս օրն է.
Սա այն օրն է, երբ Էդվարդ արքայի առաջ երդվեցի,
Որ եթե դավեմ նրա կնոջն ու երեխաներին,

Աստծու ձեռքը թող գլխիս իջնի։
Սա այն օրն է, երբ կամեցա մեռնել այն մարդու ձեռքով,
Որին ամենից շատ եմ վստահել։
Մեռելոց օ՜րը. սա այն օրն է, երբ իմ երկչոտ հոգին
Պետք է իր բոլոր մեղքերը քավի։
Տերն ամենատես, որին ծաղրեցի,
Իմ կեղծ երդումը շուռ տվեց գլխիս
Եվ իմ կատակը արյամբ հատուցեց։
Ահա թե ինչպես նա չարագործի սուրը շարունակ
Նույն չարագործի կրծքին է ուղղում։
Ա՜խ, Մարգարիտի անեծքը ինչպե՜ս ծանրացավ գլխիս։
Հիշում եմ՝ ասաց. «Երբ նա քո սիրտը վշտով կճեղքի,
Դու Մարգարիտի խոսքերը հիշիր»։
Այժմ տարեք ինձ անարգ կոճղի մոտ,
Իր արյամբ քավեմ արցունք ու ամոթ։

Տանում են։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Դաշտ՝ Տամվորթի մոտ։

Մտնում են Ռիչմոնդը, Օքսֆորդը, Բլանտը և ուրիշներ՝ թմբկահարությամբ ու դրոշներով։

ՌԻՉՄՈՆԴ

Իմ զինակիցներ և բարեկամներ իմ հավատարիմ,
Բռնակալության լծի տակ տանջված,
Մենք երկրի կեսը հաղթական անցանք
Առանց արգելքի։
Մեր հայր Ստենլուց այժմ սփոփիչ
Եվ քաջալերող մի նամակ եկավ։
Անարգ, արյունռուշտ և բիրտ վարազն այդ,
Որ ավերում էր ձեր ճոխ դաշտերը և ծաղկուն այգին,
Անհագ ըմպում է ձեր ջերմ արյունը իբրև խոզի լակ
Եվ իր կնճիթով
Ձեր կուրծքը փորում, այդ ստոր կինճը
Պառկած է հիմա այս կղզու խորքում,

Լեյստեր քաղաքից ոչ այնքան հեռու:
Տամվորթից այնտեղ մեկ օրվա երթ է:
Արդ, հանուն սատծո, հառա՛ջ, իմ քաջե՛ր, հառա՛ջ եռանդով,
Որ հավերժական մեծ խաղաղության հունձքը ժողովենք
Գոռ պատերազմի այս արնոտ մարտով:

ՕՔՍՖՈՐԴ

Ամեն սրտի մեջ հազար սրեր կան,
Որ շանթեն կուրծքը այդ ոճրագործի:

ՀԵՐԲԵՐՏ

Նրա ընկերները մեր կողմը կանցնեն, այդ անկասկած է:

ԲԼԱՆՏ

Նա ընկեր չունի, երկյուղն է նրանց շաղկապում իրար,
Հենց որ նեղն ընկավ, կմ.ախչեն անհետ:

ՌԻՉՄՈՆԴ

Այդ օգուտ է մեզ: Արդ, հանուն սատծո, արշավենք փութով.
Ճշմարիտ հույսը մի ծիծեռնակ է թևերը բացած,
Նա սարուկներին արքա է դարձնում, արքային՝ աստված:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Բոսվորթի դաշտը:

Մտնում է Ռիչարդ թագավորը՝ զորքով: Նրա հետ են Նորֆոլկը, կոմս Սուրին և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այստեղ ամրացրեք մեր վրանները՝ Բոսվորթի դաշտում:
Ինչո՞ւ է դեմքդ մռայլ, լորդ Սուրի:

ՍՈՒՐԻ

Բայց տասնապատիկ սիրտս պայծառ է իմ դեմքից, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Նորֆոլկ, իշխան իմ...

ՆՈՐՖՈԼԿ

Այստեղ եմ, արքա։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մենք պիտի չարդենք, այնպես չէ՞, Նորֆոլկ։

ՆՈՐՖՈԼԿ

Չարդենք և չարդվենք, սիրելի տեր իմ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Խփեք վրանս։ Ես այսօր պետք է այստեղ գիշերեմ։

Զինվորները սկսում են ամրացնել թագավորի վրանը։

Իսկ վաղը ուտե՞ղ։ Լա՛վ, կարիք չկա, մի տեղ կգտնենք։
Դավաճանների թիվը որքա՞ն է։

ՆՈՐՖՈԼԿ

Ամենաշատը վեց-յոթ հազար մարդ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Մենք երեք անգամ շատ ենք նրանցից։
Իսկ թագավորի անունը արդեն մի հուժկու բերդ է,
Որից զուրկ է մեր հակառակորդը։
Վրանն ավարտեք։ Գնանք, իշխաններ,
Եվ հետազոտենք ռազմադաշտն հիմա։
Կանչեք մի քանի բանագետ մարդիկ.
Արագ շարժվեցեք, ժամ չէ հապաղման,
Քանզի, իշխաններ, անեղ կլինի մեր օրը վաղվան։

Գնում են։

Դաշտի մյուս կողմից մտնում են Ռիչմոնդը, Բրենդոնը, Օքսֆորդը և ուրիշներ։
Մի քանի զինվորներ ամրացնում են Ռիչմոնդի վրանը։

ՌԻՉՄՈՆԴ

Հոգնած արևը կատարեց ոսկյա շքեղ մայրամուտ
Եվ իր հրեղեն կառքի արձակած լուսափայլ հետքով
Մեզ գուշակում է պայծառ առավոտ։
Վիլյամ Բրենդոն, ես քեզ կարգում եմ դրոշակակիր։
Տուր թուղթ ու թանաք վրանս բերեք,
Ես պետք է հիմա ճակատամարտի նախագիծ կազմեմ

Եվ առաջնորդներ կարգեմ անդերում՝
Մեր փոքրիկ զորքը հավասար չափով տեղաբաշխելով:
Դու, իշխան Օքսֆորդ, նաև դու, Բրենդոն,
Եվ նմանապես դու, Վալտեր Հերբերտ, ինձ հետ եղեք միշտ:
Պեմբրոկի կոմսը իր գնդի հետ է.
Գնդապետ Բլանտ, դու կոմսին մաղթիր իմ գիշեր բարին
Եվ խնդրիր նրան, որ առավոտյան ժամը երկուսին
Իմ վրանը գա:
Ի դեպ, գնդապետ, որտե՞ղ է իշխան
Ստենլու գունդը:

БЛАНТ

Թե չեմ շփոթում նրա դրոշը,
Իսկ մինչև օրս այն չեմ շփոթած,
Իշխանի գունդը կես մղոնաչափ հարավ է կանգնած
Արքայի հզոր զորաբանակից:

РИЧМОНД

Իմ բարի Բլանտ, եթե կարող ես
Առանց փորձության նրա մոտ գնալ,
Տուր նրան այս հույժ կարևոր թուղթը:

БЛАНТ

Կկատարեմ, տեր:
Աստված շնորհի ձեզ բարի գիշեր:

РИЧМОНД

Բարի գիշեր, Բլանտ, ազնի՜վ գնդապետ:

Բլանտը դուրս է գնում:

Երթա՜նք, իշխաննե՛ր,
Վաղվա հարցի շուրջ խորհրդի նստենք
Իմ վրանի մեջ. օդը սո՜ւր է, ցո՜ւրտ:

Նրանք մտնում են վրան:

Ռիչարդ թագավորը մտնում է իր վրանը. նրա հետ են Նորֆոլկը, Ռետկլիֆը, Քետսբին և ուրիշներ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ո՞ր ժամն է հիմա:

ՔԵՏՍԲԻ

Ընթրիքի պահն է.
Ժամը ինն է արդեն:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այսօր չեմ ընթրի:
Թուղթ ու թանաք տվեք.
Իմ սաղավարտը նեղ էր. ուղղեցի՞ն:
Բոլոր զենքերս բերեցի՞ք վրան:

ՔԵՏՍԲԻ

Այո, տեր արքա, ամեն ինչ լրիվ կազմ ու պատրաստ է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Իմ բարի Նորֆոլկ, պաշտոնիդ անցիր:
Հսկիր աչալուրջ, դիր հավատարիմ գիշերապահներ:

ՆՈՐՖՈԼԿ

Գնում եմ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Վաղը արտույտից առաջ կարթնանաս:

ՆՈՐՖՈԼԿ

Անպայման, տեր իմ:

Գնում է:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Լսի՜ր, Քետսբի...

ՔԵՏՍԲԻ

Ի՞նչ կա, տեր արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Շտապ առաքիր
Մի զինված բանբեր
Լորդ Ստենլու մոտ: Թող նա իր զորքով
Լույսը չբացված այստեղ ժամանի: Թե ոչ՝ իր որդուն
Կուղարկեմ անդունդն հավերժ խավարի:

Քետսբին գնում է:

(Ծառաներից մեկին) Գինի ածիր ինձ: Շուտ մի կանթեղ տուր:
67 Սպիտակ Սերին թամբիր. վաղը կռիվ է.
Տես, որ նիզակս ծանր չլինի:
Ռետկլի՞ֆ...

ՌԵՏԿԼԻՖ

Լսում եմ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Տեսե՞լ ես իշխան Նորթեմբերլենդին:

ՌԵՏԿԼԻՖ

Թոմաս Սուռին և նա
Մթնշաղից առաջ դուրս եկան շտապ,
Գնդից գունդ անցան՝ քաջալերելու իրենց զորքերին:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այդ լավ է, գոհ եմ: Շտապ գինի տուր:
Չգիտեմ, ինչու տրտում է հոգիս,
Ինձ առաջվա պես առույգ չեմ զգում:
Ցած դիր գավաթը: Թուղթն ու թանաքը արդեն պատրա՞ստ է:

ՌԵՏԿԼԻՖ

Պատրաստ է, տեր իմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պահապանների վրա աչք ածիր. իսկ հիմա գնա:
Կեսգիշերին մոտ իմ վրանս եկ,
Որպեսզի օգնես զենքերս կապեմ: Գնա՛, ասում եմ:

Ռետկլիֆը և մյուս թիկնապահները դուրս են գնում:
Ռիչմոնդի վրանն են մտնում կոմս Դերբին, իշխաններ և ազնվականներ:

ԴԵՐԲԻ

Փառք ու հաղթություն քո սաղավարտին:

ՌԻՉՄՈՆԴ

Օ՜, ազնիվ հայր իմ, անձիդ մաղթում եմ ամենայն բարիք,
Որ մութ գիշերը կարող է շնորհել:
Ասա ինչպե՞ս է սիրասուն մայրս. ողջ և առո՞ղջ է:

Նա ողջ է, որդյակ, և քեզ օրհնում է,
Եվ աղոթում է քո բախտի համար գիշեր ու ցերեկ:
Այդ առթիվ այսքան: Խաղաղ ժամերը արագ թռչում են,
Եվ արևելքում ճեղքվում է մութը,
Ժամանակը թանկ է, կարճ պետք խոսեմ.
Առավոտ կանուխ պատրաստիր զորքդ
Եվ բախտդ հանձնիր արյունաշաղախ մեծ բախումների
Եվ պատերազմի մահառիթ կամքին:
Ուղղակի օգնել հնարավոր չէ: Որքան կարող եմ
Պատեհ առիթին միջոց կգտնեմ
Եվ մարտի անհեղ վճռական ժամին կգամ օգնության:
Առավել փութալ անկարելի է.
Եթե նկատվեմ, Գևորգ եղբայրդ
Պիտի գլխատվի հոր աչքի առաջ:
Դե, մնաս բարյավ: Ժամանակ չկա.
Վտանգավոր է մեր հանդիպումը:
Վերջ տանք փոխադարձ մեր ասուլիսին
Եվ մեր ուխտերի սրտագին ծեսին,
Որ այնքան քաղցր է, երբ անջատվում են մտերիմները:
Տեր աստված, դու մեզ ազատ ժամեր տուր սրտահույզ խոսքի.
Դե՜, բարի գիշեր: Բազկիդ՝ զորություն, զենքիդ՝ հաղթանակ:

ՌԻՉՄՈՆԴ

Իշխաններ, նրան իր գունդը տարեք:
Հոգիս խռով է, մինչ այդ կփորձեմ ես մի քիչ նիրհել,
Որ առավոտյան կապարե քունը ինձ չտա գետնով,
Երբ պետք է թռչեմ հաղթության թևով:
Նորեն մաղթում եմ ձեզ բարի գիշեր, ազնիվ իշխաններ:

Բոլորը գնում են. մնում է Ռիչմոնդը:

Օ՜, աստվա՜ծ, անսա քո զորավարին,
Ողորմած աչքով նայիր իմ զորքին.
Վրիժառության ջախջախիչ սուրը նրանց ձեռքը դիր,
Որ մեկ հարվածով գետին տապալվեն
Մեր ոսոխների պիղծ ու ապօրեն սաղավարտները:
Մեր բազկով պատժիր ոճրագործներին,
Որ փառաբանենք քո հաղթությունը:

Ես քեզ եմ հանձնում իմ արթուն հոգին,
Նախքան կգոցեմ աչքիս փեղկերը:
Քնած թե զարթուն, դու ինձ զորավիգ եղիր հանապազ:

Քնում է:

Մտնում է իշխան Էդվարդի՝ Հենրի Վեցերորդ թագավորի որդու ուրվականը:

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Վաղը ծանրորեն կչոքեմ հոգուդ:
Հիշիր, թե ինչպես Տեկսբուրիի դաշտում դու մորթեցիր ինձ
Ծաղիկ հասակում: Ուստի սարսափի՛ր, վախճանդ մո՛տ է:
(Ռիչմոնդին) Ցնծա, ո՛վ Ռիչմոնդ, քանզի հոշոտված
Վեհ իշխանները վրդովված հոգով քո կողմն են կռվում.
Հենրի արքայի ժառանգը, Ռիչմոնդ, զորավիգ է քեզ:

Մտնում է Հենրի Վեցերորդի ուրվականը:

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Երբ դեռ մարդ էի, օծյալ մարմինս
Ծածկեցիր վերքի բազում ճեղքերով:
Հիշիր իմ մահը Աշտարակի մեջ. վախճանդ մոտ է,
Հենրիկոս արքան մահ է գուժում քեզ:
(Ռիչմոնդին) Հաղթանակ զենքիդ, ով առաքինի,
Վեցերորդ Հենրին, որ քեզ գուշակեց երկրիս թագավոր,
Ողջունում է քեզ անուշ քնիդ մեջ. ապրի՛ր և ծաղկի՛ր:

Մտնում է Կլարենսի ուրվականը:

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Վաղը ծանրորեն կչոքեմ հոգուդ. ես՝ Կլարենսը,
Թշվառ եղբայրդ, աշխարհից զրկված զարշահոտ գինով
Եվ քո դիվային դավաճանությամբ:
Վաղը հիշիր ինձ ճակատամարտում
Եվ քո բթացած սուրը վայր նետիր. վախճանդ մոտ է:
(Ռիչմոնդին) Լանկաստերյան տան դու պանծալի զարմ,
Յորքի սպանված վեհ ժառանգներն աղոթում են քո
Հաղթության համար:
Հրեշտակները թող քեզ զորավիգ լինեն մարտի մեջ.
Ապրի՛ր և ծաղկի՛ր:

Մտնում են Ռիվերսի, Գրեյի և Վոգենի ուրվականները:

ՌԻՎԵՐՍԻ ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Վաղը ծանրորեն կշռեմ հոգուդ,
Ես՝ կոմս Ռիվերսըս, որին մեռցրիր Պոմֆրետ ամրոցում:
Վախճանդ մոտ է:

ԳՐԵՅԻ ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Ես եմ, լորդ Գրեն. վաղը հիշիր ինձ. վախճանդ մոտ է:

ՎՈՂԵՆԻ ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Վոգենին հիշիր և սարսափահար
Վայր նետիր տեգդ. վախճանդ մոտ է:

ԵՐԵՔԸ ՄԻԱՍԻՆ

(Ռիչմոնդին) Զարթի՛ր, մեր մահը մի սուր է ցցված Ռիչարդի կրծքում:
Զարթիր և սուրա դեպի հաղթություն:

Մտնում է Հեստինգսի ուրվականը:

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ թագավորին) Արյունոտ և չար: Չարով արթնացիր
Եվ մեռիր ահեղ արյունոտ մարտում:
Հիշիր Հեստինգսին, հիշիր և դողա. վախճանդ մոտ է:
(Ռիչմոնդին) Ով խաղաղ հոգի, զարթիր, օ՛, զարթիր,
Ի սեր Անգլիո կռվիր և հաղթիր:

Մտնում են Երկու մանուկ իշխանների ուրվականները:

ՈՒՐՎԱԿԱՆՆԵՐ

(Ռիչարդ թագավորին) Երազում հիշիր Բերդի մեջ խեղդված քո եղբոր որդոց.
Մենք կապարի պես լցված ենք, Ռիչարդ, քո կրծքում հիմա
Եվ քեզ հրում ենք դեպի կործանում, նախատինք ու մահ:
Դու պիտի մեռնես, մեր պահանջն այդ է:
(Ռիչմոնդին) Դու ննջիր խաղաղ և զարթնիր ուրախ, ո՛վ ազնիվ Ռիչմոնդ:
Սուրբ հրեշտակներ, փրկեցեք նրան այս վայրի կինճից:
Ապրիր և սերիր թագավորների մի բախտավոր տոհմ,
Անբախտ որդիքս Էդվարդ արքայի՝ ողջունում ենք քեզ:

Մտնում է Աննայի՝ իր կնոջ ուրվականը:

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ Թագավորին) Ռիչարդ, քո կինը, տարաբախտ Աննան,
Որ մեկ ժամ հանգիստ կողքիդ չի ննջել,
Նա է քո քունը վրդովում հիմա։
Վաղը հիշիր ինձ ճակատամարտում
Եվ քո բթացած սուրը նետիր ցած։ Վախճանդ մոտ է։
(Ռիչմոնդին) Ո՜վ անդորր հոգի, ննջիր դու խաղաղ,
Երջանիկ բախտի և հաղթանակի մասին երազիր.
Թշնամուդ կինը աղոթում է քո հաղթության համար։

Մտնում է Բուկինգեմի ուրվականը։

ՈՒՐՎԱԿԱՆ

(Ռիչարդ Թագավորին) Ես առաջինը օգնեցի, որ դու դառնաս թագավոր
Եվ վերջին զոհը դարձա անավոր։
Օ՜, մարտի դաշտում հիշիր Բուկինգեմին
Եվ քո չարիքի սարսափից մեռիր։
Երազներիդ մեջ թող քեզ այցելեն լոկ մահ ու նախճիր.
Դողա, սարսափիր ու շունչդ փչիր։
(Ռիչմոնդին) Ավա՜ղ, քեզ չօգնած կործանվեցի ես,
Բայց քաջալերվիր. դու պիտի հաղթես։
Քո կողքին, Ռիչմոնդ, աստվածն է կռվում հրեշտակներով,
Ռիչարդն իր փառքից վայր կընկնի սրով։

Ուրվականները չքանում են։ Ռիչարդ թագավորը սթափվում է իր երազից։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուրիշ ձի տվեք. վերքերս կապեք։
Գթա ինձ, Հիսուս։ Ա՜, սա երազ էր։
Երկչոտ խղճմտանք, ի՞նչ ես ինձ տանջում։
Կանթեղը կապույտ լույսով է վառվում. կեսգիշեր է խոր։
Մարմինս է դողում սառը քրտինքից։
Վախենո՞ւմ եմ, ինչ է. բայց ումի՞ց. ինձնի՞ց.
Կողքիս մարդ չկա։
Ռիչարդը սիրում է Ռիչարդին, այսինքն՝ ես. ես եմ։
Մարդասպա՞ն, այստե՞ղ։ Չկա մարդասպան։
Ոչ, կա, այդ ես եմ։
Ուրեմն փախչեմ։ Ինչպե՞ս, ինձանի՞ց։ Բայց ինչո՞ւ փախչեմ։
Խույս տամ վրեժի՞ց, ո՞վ է վրիժառուն։ Մի՞թե այդ ես եմ։
Ես ինձ սիրում եմ։ Ինչո՞ւ եմ սիրում։

Մի՞թե որևէ բարիք եմ գործել ինքս ինձ համար:
Ավա՜ղ, չեմ գործել: Ես ավելի շուտ պետք է ինձ ատեմ.
Չէ որ իմ գործած ոճիրը շատ է:
Ես սրիկա եմ: Ոչ, սուտ է, սուտ է, ես սրիկա չեմ:
Հիմար, գովիր քեզ. մի շողոքորթիր.
Իմ խիղճը հազար լեզուներ ունի,
Եվ ամեն լեզուն՝ մի տարբեր հեքիաթ,
Եվ այդ բոլորն էլ աղաղակում են, որ սրիկա եմ:
Ուխտադրուժ եմ ես բարձրագույն կարգի,
Մարդասպան եմ ես անխի՜ղճ, անհոգի՜:
Բոլոր մեղքերը ժանտ, բազմապիսի,
Դեպի դատական պատվարն են խուժում՝ բացականչելով.
«Նա մեղապարտ է»:
Վհատությունը պաշարում է ինձ: Ոչ ոք ինձ չի սիրում,
Եվ եթե մեռնեմ, լացող չի լինի,
Եվ ինչո՞ւ զթան, երբ որ կրծքիս տակ
Ինքս իմ հանդեպ չունեմ խղճմտանք:

Մտնում է Ռեթքլիֆը:

ՌԵՏՔԼԻՖ

Տե՜ր իմ...

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այդ ո՞վ է այնտեղ:

ՌԵՏՔԼԻՖ

Տեր իմ, այդ ես եմ: Գյուղի աքաղաղը
Երկու բերան կանչել ողջույն տվեց այգին:
Մերոնք ոտքի են. զենքերն են կապում:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ավա՜ղ, Ռեթքլիֆ, մի ահեղ երազ տեսա այս գիշեր:
Կարծիքդ ի՞նչ է, հուսալի՞ է գործը:

ՌԵՏՔԼԻՖ

Անկասկած, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ես վախենում եմ, վախենում եմ, Ռեթքլիֆ:
Ինձ այնպես թվաց, որ ոգիները այն բոլոր մարդկանց,

Որ ճոշոտել եմ,
Վրանս եկան. և ամեն մեկը
Վաղվա անողորմ վրեժն էր գուժում Ռիչարդիս գլխին։

ՌԵՏԿԼԻՖ

Ոչ, մի՛ վախեցեք ուրվականներից։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Սուրբ Պողոսը վկա, այդ ստվերները
Ավելի երկյուղ ազդեցին սրտիս,
Քան թե տասը հազար զինավառ զինվոր կարող են ազդել
Տխմար Ռիչմոնդի զորապետությամբ։
Դեռ չի լուսանում։ Եկ գնանք ինձ հետ։
Ուզում եմ ստուգել, թե ինչ են խոսում իմ վրաններում.
Որևէ մեկը չի՞ խորհում փախչել։

Ռիչարդ թագավորը և Ռետկլիֆը դուրս են գնում։

Ռիչմոնդի վրանն են մտնում իր իշխանները։

ԼՈՐԴԵՐ

Բարի լույս, Ռիչմոնդ։

ՌԻՉՄՈՆԴ

(Զարթնելով) Խնդրում եմ ներեք, արքուն իշխաններ,
Որ քնած գտաք անազան ծույլիս։

ԼՈՐԴԵՐ

Ինչպե՞ս քնեցիք այս գիշեր, միլորդ։

ՌԻՉՄՈՆԴ

Շատ քաղցր քնով։ Այն պահից ի վեր, երբ դուք գնացիք,
Ինձ այցելեցին չքնաղ պատկերներ, երազներ լուսե,
Որ երբևիցե տեսել է մարդը քնած ժամանակ։
Թվաց, որ բոլոր այն հոգիները,
Որոնց մարմինը Ռիչարդն սպանեց,
Վրանս եկան և ինձ հաղթություն բարեմաղթեցին։
Հավատացեք ինձ, սիրտս ուղղակի զվարթանում է,
Երբ ես այդ շքեղ երազն եմ հիշում։
Ո՞ր ժամն է հիմա։

ԼՈՐԴԵՐ

Չորսին մոտ է, տեր ։

ՌԻՉՄՈՆԴ

Արդ, ժամ է զինվել և դիմել գործի:

Ռիչմոնդի ճառը իր զորքին:

Հայրենակիցներ, նախապես արդեն խոսել եմ ձեզ հետ.
Պահը չի ներում ավելին ասել.
Հիշեցեք միայն,
Աստված է մեզ հետ և մեր վեհ գործի արդարությունը:
Բոլոր սրբերի և մորթվածների սուրբ աղոթքները
Անբառնյալ, հուժկու մի պատվարի պես կանգնած են մեր դեմ:
Ռիչարդից բացի ամենքն անխտիր, ում դեմ զինվել ենք,
Փափագում են մեզ փայլուն հաղթանակ:
Հիրավի, ո՞վ է առաջնորդում նրանց.
Մի արյունարբու, անարգ բռնապետ և մի ոճրագործ,
Մի մարդ, որ արյամբ շորթել է գահը
Եվ արյունով է ամրացել այնտեղ.
Մի զերսրիկա, որ ուրիշներին օգտագործել է իր երթի համար
Եվ կոտորել է բոլորին հերթով:
Մի կեղծ, շինծու քար, որ Անգլիայի գահին քսվելով
Ոսկեզօծվել է:
Մի մարդ, որ հավետ թշնամի է աստծուն.
Արդ, եթե կռվեք աստծո ոխերիմ ախոյանի դեմ,
Աստված իր զորքին պահապան է միշտ:
Եթե ջանք թափեք վայր տապալելու այդ բռնակալին,
Միայն այդ դեպքում խաղաղ կննջեք:
Եթե ձեր երկրի թշնամյաց ջնջեք,
Հայրենիքը ձեզ առատ վարձ կտա:
Դեպի զեն, ի զեն՝ ձեր կանանց պատվի և կյանքի համար,
Թող նրանք ուրախ ողջագուրեն ձեզ, երբ մարտից դառնաք:
Դեպի զեն, ի զեն՝ ձեր զավակների փրկության համար:
Ձեր թոռները ձեզ պիտի գուրգուրեն, երբ որ ծերանաք:
Արդ, հանուն աստծո և այս վեհ դատի,
Պարզեք դրոշներ, մերկացրեք սրեր:
Սառն հողի վրա թող փռվի մարտում դիակն իմ սառած,
Դա է իմ փառքը ի սեր հայրենյաց:

Իսկ երբ հաղթեմ, իմ հաղթությունից
Վերջին զինվորը բաժին կստանա։
Զարկեք թմբուկներ, հարեք շեփորներ, համարձակ, խնդուն,
Ձեզ հետ են հավետ աստվա՛ծ, սուրբ Գևորգ,
Ռիչմո՛նդ, հաղթությո՛ւն։

Դուրս են գնում։

Մտնում են Ռիչարդ թագավորը, Ռետկլիֆը, շքախումբը և զորքը։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Պատմիր, ի՞նչ ասաց Նորթեմբերլենդը Ռիչմոնդի մասին։

ՌԵՏԿԼԻՖ

Ասում է, որ նա մարզված ռազմիկ չէ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Այդ ճշմարիտ է։ Սուռին ի՞նչ ասաց։

ՌԵՏԿԼԻՖ

Ժպտաց և ասաց. «Այդ մեզ օգուտ է»։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ուղիղ է ասել։ Իրոք այդպես է։

Ժամացույցը զարկում է։

Հաշվիր, քանի զարկ է։ Մի օրացույց բեր։
Արևը ծագե՞լ է։

ՌԵՏԿԼԻՖ

Չեմ տեսել, արքա։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Չկամում է փայլել. ըստ օրացույցի
Նա մի ժամ առաջ պետք է ծագած լիներ.
Մեկիս օրը սև է։
— Ռետկլի՞ֆ…

ՌԵՏԿԼԻՖ

Այստեղ եմ, տեր իմ։

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Արևը այսօր չի ուզում ծագել,
Խոժոռ երկինքը չոքել է զորքին:
Կորչի այս ցողը, որ արցունքի պես երկիրն է ծածկել:
Արևը չի փայլում, բայց դա նույն չափով
Վտանգավոր է Ռիչմոնդի համար, չէ որ ահարկու
Այդ նույն երկինքն է իր վրա կախված:

Մտնում է Նորֆոլկը:

ՆՈՐՖՈԼԿ

Արդ, ի զեն, ի դե՛ն. թշնամին արդեն ռազմադաշտ իջավ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ի զեն զունդազունդ. նժույգս թամբեք.
Բանբեր առաքեք, թող լորդ Ստենլին իր զորքը բերի:
Ես իմ գնդերով հիմա դաշտ կերթամ.
Հրամայում եմ զորքն այսպես վարել ճակատամարտի.
Հեծելազորն ու հետևակ գունդը
Պետք է առաջին գծի վրա շարվեն,
Իսկ նետաձիգը մեջտեղով գնա:
Դուք, իշխան Նորֆոլկ և Թոմաս Սուռի,
Առաջնորդեցեք հետևակ գունդն ու ձիավոր զորքը:
Նրանց հետևից ես պիտի շարժեմ գլխավոր զորքը,
Որոնց պաշտպանն է երկու կողմի վրա,
Մեր թևաթռիչք ընտիր այրուձին:
Օգնիր, սուրբ Գևորգ: Նորֆոլկ, դու խոսիր:

ՆՈՐՖՈԼԿ

Լավ հրաման է, ռազմաշունչ արքա.
Իմ վրանի մեջ այս թուղթը գտա:

Տալիս է մի թուղթ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

«Մի լինիր, Նորֆոլկ, այդքան լիրբ, փքված,
Քո տեր Դիկոնը քանզի գնված է և արդեն ծախված»:
Թշնամու գործ է:
Իշխաններ, հապա ձեր տեղերն անցեք,
Ոգով մի ընկնվեք փուչ տեսիլներից,

Խիղճը երկչոտի ապաստարանն է,
Որ հնարված է քաջերի ոգին սանձահարելու:
Մեր խիղճը դա մեր հուժկու բազուկն է, իսկ մեր օրենքը՝
Անողորմ սուրը:
Հառա՛ջ, զունդազունդ, հառա՛ջ քաջասիրտ,
Դրախտ կամ դժոխք՝ երթանք միասին:

Ռիչարդի ճառը իր բանակին:

Արդեն ասացի, ավելին ի՞նչ ասեմ.
Հիշեցեք, թե դուք ո՞ւմ հետ գործ ունեք.
Անարգ, վատասերմ չրչմոլիկների մի ամբոխի հետ,
Բրետոնների աղտեղության հետ, մի գեղջուկ տականք,
Որ դուրս է փսխում բնակչությամբ կուշտ նրանց երկիրը,
Մղելով անհույս ապստամբության և ստույգ մահվան:
Դուք հնած էիք անփույթ, անվրդով.
Նրանք բերում են ձեզ անեղ տագնապ.
Դուք հող ունեիք և սիրուն կանայք ձեզ երջանկացնող,
Նրանք ուզում են զավթել թե՛ մեկը և թե՛ մյուսը:
Եվ ո՞վ է նրանց առաջնորդում այստեղ.
Մի խառնակեցիկ ապիրատ լակոտ,
Որ մայրս է անել պանդխտության մեջ երկար ժամանակ:
Մի երկչոտ մանուկ, որ իր ողջ կյանքում
Ոչ ցուրտ է տեսել և ոչ էլ կարիք:
Արդ, ծովը քշենք այդ վաարանդի ապստամբներին,
Ջնջենք մեծամբան այդ ֆրանսիական ցնցոտիներին,
Կյանքից հուսահատ, սովալլուկ, բշվառ մուրացիկներին,
Այդ առնետներին, որ երազելով չահատակության՝
Կարոտությունից կարող են սատկել:
Թե պիտի հաղթվենք, լավ է մեզ հաղթեն քաջասիրտ այրեր
Եվ ոչ թե այս բիճ բրետոնները, որոնց տորոհել,
Ջարկել, ջարդել են մեր քաջ հայրերը իրենց երկրի մեջ
Եվ այդ ամոթը իբրև հիշատակ կտակել որդոց:
Եվ նրա՞նք պիտի մեր հողը տիրեն, մեր կանանց գրկեն
Ու բռնաբարեն մեր աղջիկներին:

Հեռավոր թմբկահարություն:

Նրանց թմբուկը արդեն թնդում է.
Ի մարտ, Անգլիո իշխանազուններ, ի մարտ, իմ քաջեր:

Աղեղնավորնե՛ր, թշնամու սիրտը շանթեցե՛ք նետով.
Խթանե՛ք խրոխտ ձեր նժույգները
Եվ աշտանակեք արյան հեղեղում:
Թող եթերն ապշի ձեր նիզակների շաչ ու շառաչից:

Մտնում է մի սուրհանդակ:

Ի՞նչ ասաց Ստենլին. զորքը բերո՞ւմ է:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մերժեց գալ, արքա:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Գլխատե՛լ որդուն:

ՆՈՐՖՈԼԿ

Արքա, թշնամին ճախճուտը անցավ.
Ճակատամարտից հետո գլխատենք:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Կրծքիս մեջ հազար սիրտ է բաբախում.
Դրոշնե՛ր, հառա՛ջ դեպի թշնամին:
Ով դու սուրբ Գևորգ, մեր հնամենի ահեղ մարտակոչ,
Մեզ վիշապների ցասումը բորբոքիր:
Ո՛ն, դեպի ոսոխ: Մերն է հաղթանակ.
Նա բազմած է մեր սաղավարտներին:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Նույն դաշտի մի այլ մասը:

Ռազմի շաչ ու շառաչ. կարճատև մարտեր: Մտնում է Նորֆոլկը զորքով: Նրա մոտ է վազում Քետսբին:

ՔԵՏՍԲԻ

Փրկեցեք, տեր իմ, օգնության հասեք,
Արքան գործում է ահեղ հրաշքներ ճակատամարտում,

Խելագարի պես նետվում է բոլոր վտանգների մեջ.
Նրա ձին սպանվեց. նա ամբողջապես հետիոտն է կռվում:
Ռիչմոնդին է փնտրում մահվան կոկորդում:
Օգնեցեք, տեր իմ, թե ոչ՝ պարտված ենք:

Սրերի շաչյուն: Մտնում է Ռիչարդ թագավորը:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ինձ մի ձի՜ տվեք, թագավորությունս մի ձիու կտամ:

ՔԵՏՍԲԻ

Փրկեցե՛ք, տեր իմ, ես ձի կճարեմ:

ԹԱԳԱՎՈՐ ՌԻՉԱՐԴ

Ստրուկ, ես կյանքս խաղի եմ հանձնել
Եվ պիտի խաղամ մինչև վերջին շունչ:
11 Վեցը Ռիչմոնդ կար ռազմադաշտի մեջ,
Հինգին սպանեցի, իսկ նա խույս տվեց:
Ծո՛ւտ, մի ձի՜ տվեք. թագավորությունս մի ձիու կտամ:

Գնում են:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նույն դաշտի մի այլ մասը:

Ռազմի շաչ ու շառաչ: Մտնում են Ռիչարդը և Ռիչմոնդը: Նրանք մենամարտում են: Ռիչարդը սպանվում է: Նահանջ և փողահարություն: Վերադառնում են Ռիչմոնդը, Դերբին՝ թագը բռնած և զանազան լորդեր:

ՌԻՉՄՈՆԴ

Փառք բարերարին և ձեր զենքին, քաջեր,
Որը ավարտվեց մեր հաղթանակով. ժանտ շունը սատկեց:

ԴԵՐԲԻ

Անվեհեր Ռիչմոնդ, պարտքդ քաջաբար դու հատուցեցիր:
Ահա արքունի հափշտակված թագը.
Ես այն կորզեցի այս արնաշաղախ հրեշի քունքից,
Որ քո ճակատը նրանով զուգեմ:
Կրի՜ր, վայելիր ի փառս հայրենյաց:

ՌԻՉՄՈՆԴ

Թող «ամեն» գոչե ասվածն երկնքում:
Բայց ասա ո՞ղջ է քո Գեորգ որդին:

ԴԵՐԲԻ

Ողջ է, տեր արքա: Նա Լեյստերումն է,
Պատրաստ ենք մեկնել, երբ կամենաք:

ՌԻՉՄՈՆԴ

Հայտնի քաջերից ո՞վ ընկավ մարտում, երկու կողմերից:

ԴԵՐԲԻ

Դուքս Ջոն Նորֆոլկը, Վալտեր Ֆեռեսը,
Ռոբերտ Բրակենբերին և Վիլյամ Բրենդոն:

ՌԻՉՄՈՆԴ

Թաղեցեք, ինչպես վայել է իրենց բարձր ծնունդին,
Ներում հոչակեք փախած զորքերին,
Որ կամին խոնարհ ետ դառնալ մեզ մոտ:
Հենց որ հաղորդման մեր ծեսն ավարտվի
Մենք Սպիտակ վարդը կմիավորենք Կարմիր վարդի հետ.
Թող խնդա երկինքն այդ վառ դաշինքից,
Որ շատ էր թխպած նրանց գժտությամբ:
Ո՞ր ազգադավը «ամեն» չի ասի խոսքս լսելիս:
Անգլիան խենթ էր երկար ժամանակ.
Նա հոշոտում էր, բզկտում իրեն:
Եղբայրը եղբոր արյունն էր ռպում անմի՜տ, կուրորե՛ն.
Հայրը ժպրհությամբ սպանում էր որդուն,
Որդին, նեղն ընկած, իր հորն էր մորթում:
Եվ թշնամացան Լանկաստեր ու Յորք,
Իրար դեմ ելան իշխաններ ու զորք:
Այժմ Ռիչմոնդն ու Եղիսաբեթը՝
Ժառանգներն երկու արքայական տան,
Թող ի կարգ աստծո հավետ միանան,
Եվ նրանց զարմը,— թե աստված կամեց որդիք ունենան,—
Թող խաղաղություն սփռե գալիքում,
Որ մարդիկ ուրախ ապրեն աշխարհում:
Ո՞վ աստված, փշրի՛ր սուրն ազգադավի,
Որ այս արյունոտ օրերը նորից չվերադառնան,

Անգլիան չողբա արյան հորձանքում:
Դու բնաջնջիր այն մարդու տունը,
Որ կուզե խոցել այս չքնաղ երկրի խաղաղություն
Խոր վերքը փակվեց, անդորր է դարձյալ,
«Ամե՜ն» բարբառի մեր սերը բարձրյալ:

Գնամ ես:

Հոդվածներ

և

Ծանոթագրություններ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շեքսպիրի Երկերի ժողովածուներում նրա քրոնիկները, որոնց թիվը հասնում է տասի, ավանդաբար զետեղվել են այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ որ նրանք գրված են։ Հրատարակիչներին բնականաբար հետաքրքրել է դրամատուրգի ներքին զարգացումը և ոչ թե այն, թե պատմության ո՛ր շրջանից են վերցրած տվյալ քրոնիկի թեման և սյուժեն։ Ընդհանուր առմամբ, Շեքսպիրի քրոնիկները ընդգրկում են 350 տարվա մի պատմություն, սկսվելով «Ջոն Արքա»-ով (Ջոն Անհող) և ավարտվելով «Հենրի Ութերորդ»-ով։

Սրանց միջև ընկած հիմնական ութ գործերը վերարտադրում են մեկ հարյուրամյակից մի փոքր ավելի մի շրջան (1377—1485), արտաքին և ներքին պատերազմներով,. ֆեոդալական երկպառակություններով, ժողովրդական խռովություններով լի դրամատիկ մի ժամանակաշրջան, որ ամենաբնորոշն է անգլիական միջնադարի համար, ուստի և հենց այդ քրոնիկներն էլ ընդգրկված են սույն հրատարակության մեջ։ Դրանք հատորում դասավորված են այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ որ նրանց գլխավոր հերոսները պատմական ասպարեզ են իջել, այն է՝ Ռիչարդ Երկրորդից մինչև Ռիչարդ Երրորդ։

Նկատի է առնված նաև այն, որ ժամանակակից շեքսպիրագիտության մեջ կասկած է հայտնվել այն մասին, թե արդյո՞ք «Ջոն Արքան» և Հենրի Ութերորդը» Շեքսպիրի գրչին են պատկանում։

Այդ ութ քրոնիկներից, միայն մեկն է ծանոթ հայ ընթերցողին («Ռիչարդ Երրորդ»)։ Մնացած յոթը հայերեն են թարգմանվում և սույն հրատարակության մեջ են մտնում առաջին անգամ։ Թարգմանությունները կատարել են Խաչիկ Դաշտենցը (Ռիչարդ Երկրորդ», «Հենրի Չորրորդ» երկու մաս, «Հենրի Հինգերորդ» և «Ռիչարդ Երրորդ») և Հենրիկ Սևանը («Հենրի Վեցերորդ» երեք մաս)։ Ծանոթագրությունները կազմել են Ռ. Անդրեասյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Հովսեփյանը և Ն. Մուրադյանը։ Այս բոլոր երկերի ծանոթագրությունների համար ներածական հոդվածներ է կազմել Ն. Մուրադյանը։

Ժողովածուի խմբագրության առջև ծառացած դժվարություններից ամենալուրջը, անշուշտ, անձնանունների, տեղանունների և դիցաբանական անունների տառադարձման հարցն էր։

Մեր լեզվի զարգացման և ընդհանուր կանոնավորման արդի վիճակը հրամայաբար պահանջում էր միաձևություն հաստատել այն բոլոր անունների տառադարձման մեջ, որոնց մեկից ավելի գրության ձևերն անցյալում սովորական երևույթ էր: Այդ նպատակով կազմված հանձնաժողովը Շեքսպիրի գործածած հիշյալ երեք կարգի անունների տառադարձման կապակցությամբ մտքեր փոխանակեց ու հանգեց որոշ եզրակացությունների:

Ընդհանուր առմամբ հիմք են ընդունվել ՀՍՍՀ Մինիստրների սովետին կից տերմինաբանական կոմիտեի՝ օտար անունների և բառերի տառադարձման կանոնները, սակայն ա) կատարվել են զանազան ճշտումներ, ըստ անգլերեն բառերի և անունների տառադարձման արդի պրակտիկայի և բ) առանձնակի կանոններ են սահմանվել այն դեպքերի համար, որոնք այդ կանոնների մեջ տեղ չեն գտել:

Երկարատև ավանդույթով ընդունված շեքսպիրյան հատուկ անունները պահպանվել են նույնությամբ, թեև դրանք կարող են երբեմն լավ չարտահայտել անգլերենի արտասանական առանձնահատկությունները:

Շեքսպիրի գործածած հունական, լատինական, իտալական և ֆրանսիական անունները, մասնավորապես հունա-հռոմեական դիցաբանական ու պատմական անունները տառադարձված են ըստ այդ լեզուների առանձնահատկությունների և հայերենի ավանդական գրության և արտասանության:

Բոլոր դեպքերում թույլատրված են մասնակի շեղումներ ըստ բանաստեղծական չափածո խոսքի պահանջների, եթե այդ շեղումները չեն աղավաղում բառերի ճշգրիտ ընկալումը:

Ներածական հոդվածները և ծանոթագրությունները կազմելիս հիմք և հիմնական աղբյուր է ընդունվել Շեքսպիրի Երկերի լիակատար ժողովածուի ռուսական վերջին հրատարակությունը. **Уильям Шекспир,** Полное собрание сочинений в восьми томах, М., 1957--1960.

Ծանոթագրությունների համար նկատի են առնվել նաև հետևյալ հրատարակությունները. **Шекспир,** под ред. С. А. Венгерова, изд. Брокгауз-Ефрона, в пяти томах СПб., 1902—1904.

The Yale Shakespeare, ed. by Tucker Brooke and Lawrence Mason in 30 vols, New Haven, 1919—1964.

Հաշվի են առնված նաև այլ աշխատություններ, որոնցից կարելի է հիշատակել. „Narrative and Dramatic Sources of Shakespeare", ed. by Geoffrey Bullough, in 5, vols. London —New York, 1964--1966.

ՇԵՔՍՊԻՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ*

1

Ժողովրդի կյանքում լինում են պահեր, երբ նրա համար հրատապ անհրաժեշտություն է դառնում անցած ճանապարհին ետ նայելը և պատմության դասերն իմաստավորելը: Դա լինում է ազգային աղետներից հետո, երբ մարդիկ ձգտում են պարզել պատմական ողբերգության պատճառները: Դա լինում է նաև հաղթանակների ժամին, երբ ժողովուրդը՝ հաղթության հպարտությամբ լեցուն, ուզում է ըմբռնել սեփական հզորության խոր ակունքները:

1588 թվականի ամռանը անգլիացիները փայլուն հաջողություն ունեցան Իսպանիայի դեմ մղվող պատերազմում, ջրասույզ անելով իրենց հայրենիքի ափերին մոտեցած թշնամական նավատորմը, որ հպարտորեն «Անհաղթ Արմադա» էր կոչվել: Ո՛չ Փիլիպոս Երկրորդը, ո՛չ էլ իսպանական ազնվականությունը դեռ չէին կարող պատկերացնել այս իրադարձության հեռավոր հետևանքները: Հաբսբուրգների կայսրությունում առաջվա պես արևը մայր չէր մտնում, կաթոլիկական Լիգային օգնության ուղարկված իսպանական կոնկիստադորները վխտում էին Ֆրանսիայի հյուսիսում, անմիջապես Լամանշի մոտերքում, իսկ ծանր բեռնավորված գալեոնները Իսպանիա էին բերում Մեքսիկայի և Պերուի ոսկին ու արծաթը: Նորակառույց Էսկուրիալի ո՞ր բնակիչը կարող էր մտածել, որ Արմադայի կործանումը այն առաջին քայլը կլինի, որից կսկսվի հզորագույն պետության վերածումը մի երկրորդական եվրոպական երկրի:

Իսպանական նավատորմի կործանումը այլ կերպ ընկալվեց Անգլիայում: Անգլիացիների համար դա սոսկ հաղթանակ չէր համաշխարհային տիրապետության ձգտող զորեղ հակառակորդի նկատմամբ: Արմադան արշավի հանելով, Իսպանիան իր գլխավոր նպատակը ծովամարտը շահելու մեջ չէր տեսնում. ակներև է, որ իսպանացիները առհասարակ լրջորեն չէին հավատում, թե Արմադայի վրա կարելի է

* *Գրված է սույն հրատարակության համար* (խմբ.):

հարձակվել, և դրա համար էլ արշավախմբի ղեկավար էր կարգվել «ցամաքային» ծովակալ Մեդինա Սիդոնիան: Հիմնական նպատակն էր Բրիտանական կղզիները դեսանտ ափ հանել, որը պետք է Անգլիան դարձներ Իսպանիայի եվրոպական գաղութ: Թե ինչով էր հղի նման հեռանկարը, պարզ էր բոլոր անգլիացիներին. նրանցից շատերը ականատես էին այն ոճիրներին ու դաժանություններին, որ դուքս Ալբայի զորքերը կատարում էին արնաքամ լինող Նիդերլանդներում:

Ահա թե ինչու լուրն այն մասին, թե իսպանական դեսանտն իր անփառունակ վախճանն է գտել Լամանշի հատակում, Անգլիայի համար հավասարազոր էր ազգային-ազատագրական պատերազմում տարած վճռական հաղթանակի, ավետիսի, հաղթանակ, որ ձեռք էր բերվել անգլիական հասարակության ամենատարբեր խավերի համատեղ ջանքերով: Եվ երբ մեծ հաղթանակից մի քանի տարի անց լոնդոնյան թատրոնի բեմից հնչում էին

This England never did, nor never shall,
Lie at the proud foot of a conqueror,
But when it first did help to wound itself, [1]
(„King John", V, 7, 111-113)

հպարտ խոսքերը, խայտաճամուկ հանդիսատեսը դրանք ընկալում էր որպես իր հերոսական ջանքերի արժանի գնահատություն:

Բայց եթե լոնդոնյան թատրոնների մշտական այցելուների մեծամասնության համար նման խոսքերը հնչում էին լոկ որպես ոչ հեռու փառավոր անցյալի վերհուշ, ապա Անգլիայի լավագույն մտքերի համար դրանք պարունակում էին դժվար ու ինտրիգող հետաքրքիր մի հարց. ինչպե՞ս պատահեց, որ կղզիների վրա ապրող ոչ մեծ մի երկիր կարողացավ վճռական պարտության մատնել այն ժամանակ հայտնի բոլոր ցամաքամասերի վրա իր իշխանությունը հաստատած կայսրությանը:

Ինչպե՞ս ձևավորվեց այն Անգլիան, որը կասեցրեց հզորագույն Իսպանիայի ճնշումը:

* * *

Վերածննդի դարաշրջանը, որը, Էնգելսի բնորոշումով, մարդկության մինչ այդ վերապրած մեծագույն առաջադիմական հեղաշրջումներից[2] մեկն էր, Եվրոպայի շատ երկրների համար դարձավ գիտության ու արվեստի բուռն ծաղկման շրջան: Այս ժամանակի հատկանշական կողմերից մեկն այն էր, որ խիստ սրվեց մարդկանց հետաքրքրությունը պատմության նկատմամբ: Բուրժուական հարաբերությունների ձևավորումը և ազգային պետությունների կազմավորման նախադրյալների ստեղծումը այն ժամանակվա մտածողներին օրինաչափորեն հանգեցրեց իրենց հայրենիքի պատմությունն ուսումնասիրելու պրոբլեմին, իսկ ծանոթությունը անտիկ աշխարհի հուշարձաններին Հին Հունաստանի ու Հռոմի պատմագրության ձեռքբերումները

դարձրեց եվրոպական գիտնականների սեփականությունը։ Եկեղեցու անսասանելի հոգևոր բռնապետությունից ազատագրվելու հետ մեկտեղ փոխվեց և այն բուն տեղը, որ քաղաքացիական պատմությունը զբաղեցնում էր մարդկանց աշխարհայացքի մեջ։ Այժմ արդեն առանձին պետությունների պատմության մեջ շատ հեղինակներ ու ընթերցողներ տեսան իմաստության ակունքներ, տեսան ելակետեր արդիականության իրադարձությունները քննելու համար։ Ուրիշ խոսքով, քաղաքացիական պատմությունը որոշ չափով սկսեց վիճարկել Սուրբ գրքի իրավունքը՝ լինելու մարդկանց ուսուցիչ ու խորհրդատու։

XVI դարը Անգլիայում նշանավորվեց երկրի պատմության նկատմամբ ուշադրության նկատելի ուժեղացմամբ։ Այս հարյուրամյակի ընթացքում Անգլիայի պատմությանը նվիրված երկասիրությունները հայտնվում են քիչ թե շատ պարբերաբար՝ սկսած իտալացի հումանիստ Պոլիդոր Վերգիլիոսի գրչին պատկանող «Անգլիական պատմությունից», որի հեղինակին անգլիական արքունիք էր հրավիրել Հենրի Յոթերորդը, և վերջացրած «Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի քրոնիկներով», որ հրատարակել էր Ռաֆայել Հոլինշեդը և որը դարձավ հայրենական պատմությանը նվիրված շեքսպիրյան պիեսների հիմնական աղբյուրը։

Սակայն Վերածննդի դարաշրջանում պատմական կոնցեպցիաների զարգացումը բնավ էլ այնքան եռանդուն չէր ընթանում, որքան առաջադիմությունը բնական գիտությունների մարզում։ Շեքսպիրի օրոք են հայտնվում լիրն աշխատություններ, որոնք իրենց մեթոդոլոգիայով շատ քիչ էին տարբերվում միջնադարյան տարեգիրների պարզունակ երկասիրություններից. այդ բանի օրինակն են ժամանակին հանրահայտ «Անգլիայի տարեգրքերը», որոնց հեղինակն էր Ջոն Ստոուն։ Անգլիայի պատմության հնագույն շրջանները նկարագրելիս հեղինակները որպես կանոն հենվում էին դիցաբանական տեղեկությունների վրա, ջանալով համաձայնեցնել դրանք աստվածաշնչային առքերի հետ։ Իսկ այնտեղ, ուր նրանք փորձում էին բացատրել պատմական զարգացման միտումները, հաճախ գերի էին մնում աստծո դատաստանի վերաբերյալ՝ որպես պատմության շարժիչ ուժի, վաղեմի պատկերացումներին։

Այսպես, երբ Ուոլտեր Ռեյլին իր «Աշխարհի պատմության» մեջ, որ լույս է տեսել 1614 թ., Անգլիայի պատմությունը բաժանում է պարփակված շրջանների, որոնցից յուրաքանչյուրում թոռները դառնում են աստվածային պատժի զոհ՝ պապերի գործած մեղքերի դիմաց։ Օրինակ, փորձելով պարզել Ռիչարդ Երկրորդի ողբերգական կործանման պատճառները, Ռեյլին հանգում է այն մտքին, որ դա Ռիչարդի պապի՝ Էդվարդ Երրորդի, դաժանությունների հատուցումն էր. «Այդ դաժանության հատուցումը,—գրում է Ռեյլին,—աստված իր զայրույթի ու անմեկնելի արհեստով թափեց Էդվարդ Երրորդի թոռան վրա. և այնպես պատահեց, որ նույնը բաժին ընկավ այդ գծի բոլոր, մինչև ամենավերջին ներկայացուցիչներին՝ երկրորդ կամ երրորդ սերնդից, որոնք բոլորը թաղվեցին այն շինությունների ավերակների տակ, որոնց

շալախը հունցվել էր անմեղ նահատակների արյունով: Այդպես, Ռիչարդ Երկրորդի պատանեկան ծաղկուն հասակում գահընկեց արվեց ու սպանվեց իր զարմիկի ու վասալի՝ Հենրի Լանկաստերի, հետագայում Հենրի Չորրորդի, կողմից»[3]: Նմանօրինակ տեսակետի կողմն է հաճախ կանգնում և Հոլինշեդը: Նույնիսկ «Ռիչարդ Երրորդի պատմության» մեջ, որ գրել է XVI դարի սկզբի խոշորագույն անգլիական հումանիստ Թոմաս Մորը, այդ պատմական երկի հակաիշխանական պաթոսը համակերպվում է բարոյական քարոզի շոշափելի տարրերի հետ:

Եվ միայն XVI դարի 90-ականների սկզբում անգլիական գրականության մեջ արվեց առաջին և իր ժամանակի համար հետևողական փորձը՝ հայրենի երկրի և առանձին անհատների ճակատագիրը բացատրել պատմական զարգացման ներքին օրենքներով: Այդ փորձի պատիվը պատկանում է Շեքսպիրին: Անգլիական պատմական դրամատուրգիայի հիմնադիրը հանդես եկավ ոչ միայն որպես հանճարեղ արվեստագետ, այլ նաև որպես իր ժամանակակիցներից շատ ու շատ առաջ անցած պատմագետ-մտածող: Անգլիայի Վերածննդյան գրականության մեջ միայն Շեքսպիրի քրոնիկներն են, որ կարող են լիիրավ կերպով փոխանել Ֆրենսիս Բեկոնի դրվատական խոսքերը՝ ասված Վերածննդի հսկաներից մեկի՝ Նիկոլո Մաքիավելլիի պատմական կոնցեպցիայի վերաբերյալ. «Մենք պետք է երախտապարտ լինենք Մաքիավելլիին ու նման մյուս գրողներին, որոնք բացահայտ և առանց որևէ բան քողարկելու պատկերել են այն, ինչ սովորաբար արել են մարդիկ և ոչ թե այն, ինչ պետք է անեին»[4]:

XVI դարի գրականությանը բնորոշ հետաքրքրությունը պատմական պրոբլեմատիկայի նկատմամբ իր նկատելի դրոշմն էր թողել և լոնդոնյան թատրոնի խաղացանկի վրա: Հայտնի է, օրինակ, որ անգլիական Վերածննդյան գրականության մեջ հասած հնագույն հուշարձանը Ջոն Բեյլի «Ջոն Արքան» է, որն ստեղծվել է, ըստ երևույթին, մոտավորապես 1540 թվականին: Սըր Ֆիլիպ Սիդնեյը իր «Պոեզիայի պաշտպանության» մեջ զգալի տեղ է հատկացրել պատմական երկերի պոետիկայի քննությանը: Թոմաս Նեշը «Անստակ Պիրսը» պամֆլետում բարձր էր գնահատում հայրենական պատմությունից սյուժեներ քաղող պիեսների հայրենասիրական լիցքը: Նման սյուժեների էին դիմում նաև Շեքսպիրի անմիջական նախնիները՝ Ռոբերտ Գրինը, Ջորջ Փիլը, Քրիստոֆեր Մառլոն և 80-ականների մյուս դրամատուրգները: Նույնիսկ որոշ կատակերգություններ, որոնք պատկերում էին եղիսաբեթյան Լոնդոնի կենցաղն ու բարքերը, ձևականորեն կարող էին դասվել պատմական երկերի շարքը. օրինակ՝ Թոմաս Դեկկերի «Կոշկակարի տոնը», ուր առանց անունը տալու հանդես է գալիս Հենրի Վեցերորդը: Այսպիսով, պատմական դրամատուրգիայի ժանրում անգլիական թատրոնի կուտակած փորձը անտարակույս քիչ նշանակություն չի ունեցել Շեքսպիրի ստեղծագործական մեթոդի ձևավորման համար:

XVII դարի սկզբին արդեն «պատմություն» անունը կրող պիեսները հաստատուն տեղ են գրավում լոնդոնյան թատրոնների խաղացանկում, մի բան, որի մասին

անուղղակի, բայց միանգամայն պերճախոս վկայում է այն դրվատական հանձնարարականը, որ «Համլետի» մեջ Պոլոնիուսը տալիս է Էլսինոր ժամանած թատերախմբին.

The best actors in the world, either for tragedy, comedy, history, pastoral, pastoral-comical, historical-pastoral, tragical-historical, tragical-comical-historical-pastoral, scene individable, or poem unlimited (II, 2, 392-395).[5]

Այն բծախնդիր ճշգրտությունը, որով Պոլոնիուսը՝ ջահել տարիներին սիրողական ներկայացումներով զվարճացող այդ պալատականը, թվարկում է թատերական ժանրերի տարատեսակները, անշուշտ, ամենից առաջ ծառայում է որպես կարճամիտ, կարգ ու կանոնի սովոր մարդու սատիրական բնութագրման միջոց: Սակայն, մյուս կողմից, նրա սին-գիտական համարտակությունները պարունակում են և Շեքսպիրի հեգնական վերաբերմունքի տարրերը իր ժամանակի թատրոնի խաղացանկի նկատմամբ:

Չի կարելի մոռանալ այն մասին, որ դրամատուրգիական ժանրերի վերը բերված գնահատությունը տրվում է հենց «Համլետի» մեջ, մի ողբերգություն, որը Շեքսպիրն ստեղծեց իր քրոնիկների փայլուն շարքը ավարտելուց շատ չանցած: Շեքսպիրյան պիեսները ունեին այն բոլոր անհրաժեշտ հատկությունները, որոնք թույլ էին տալիս դրանք կոչելու «պատմություններ»: Բայց, միևնույն ժամանակ, մինչ Շեքսպիրը անգլիական բեմում հայտնված բոլոր «պատմությունները» շատ լուրջ վերապահումներով միայն կարելի է վերագրել պատմական դրամատուրգիայի ժանրին:

Այս տիպի վաղ ստեղծագործությունները, որոնք դեռևս չէին խզել կապերը միջնադարյան մորալիտեի ավանդույթների հետ, առհասարակ որևէ պատմական հավաստիության հավակնություն չունեին. ապացույցը՝ Բեյլի արդեն հիշատակված պիեսը: Սակայն «պատմություններ», «տխուր պատմություններ» կամ «հավաստի պատմություններ» գրող հեղինակների գործերը ևս, որոնց ստեղծումը համընկնում էր Շեքսպիրի առաջին դրամատուրգիական քայլերին, որպես կանոն նույնպես զուրկ էին ճշմարիտ պատմականությունից: Այսպիսի ստեղծագործության փայլուն օրինակ կարող է ծառայել «Ֆլադդենի մոտ սպանված Հակոբ Չորրորդի շոտլանդական պատմությունը», որը պատկանում է Ռոբերտ Գրինի գրչին և բեմադրվել է, ըստ երևույթին, 1591 թվականին: Պրոֆեսոր Է. Թորնդայկը միանգամայն իրավացի էր, երբ այդ երկի մասին ասում էր, թե դա «ընդամենը կեղծ-պատմական պիես է»[6]: «Հակոբ Չորրորդի շոտլանդական պատմությունը», ուր պատմական անձանց կողքին գործում են Օբերոնը, դիմակներ ու փերիներ, ավելի շատ հարմար է գալիս Պոլոնիուսի զավեշտալի ժանրային բնորոշումներին, ասենք, «տրագիկոմիկական պատմական հովվերգությանը»: Շեքսպիրի ավագ ժամանակակիցների գործերից քրոնիկի դասական ժանրին կարող է դասվել սոսկ Մառլոյի «Էդվարդ Երկրորդը»: Սակայն հարկ է նկատել, որ այդ պիեսը հայտնվել է 1593 թվականին, արդեն այն բանից

հետո, երբ Շեքսպիրը հանդես էր եկել իր առաջին քրոնիկներով: Այդ իսկ պատճառով, չի բացառված, որ Մառլոն կարող էր կրել Շեքսպիրի մշակած պոետիկայի որոշակի ազդեցությունը:

Այսպիսով, ուրեմն, մենք չենք սխալվել, Շեքսպիրին անվանելով անգլիական պատմական թատերագրության հիմնադիր: Շեքսպիրը ոչ միայն պարզապես շարունակեց անգլիական Վերածնության դրամատուրգիայի կուտակած ավանդույթները, այլև դարձավ մի նոր ժանրի իսկական նախահայրը, ժանր, որի մեջ հայրենական պատմության ընթացքի օրինաչափությունները ըմբռնելու ձգտումը գտավ իր համարժեք գեղարվեստա-պոետիկական արտահայտությունը:

Շատ հատկանշական է, որ հենց Շեքսպիրի քրոնիկներն էին (մի ժանր, որը սկսնակ գրողը անմիջապես առաջ անցավ իր ուսուցիչներից), որ հիվանդագին արձագանք գտան մինչ շեքսպիրյան շրջանում անգլիական թատրոնի ամենազոր օրենսդիրների, «համալսարանական մտքեր» խմբին պատկանող նրա մի շարք դրամատուրգ-ախոյանների կողմից: 1592 թվականին Ռոբերտ Գրինը իր մահից առաջ գրած «Գրոշանոց խելք, գնված միլիոն ապաշխարանքով» պամֆլետում, դիմելով իր ընկերներ Մառլոյին և Լոջին, հորդորում էր զգուշանալ դերասանների ապերախտությունից. «Օ՛, մի վստահեք նրանց: Քանզի նրանց մեջ մեր փետուրներով պճնված մի ինքնակոչ ագռավ կա, որն իր «դերասանի մորթի տակ պահված վագրի սրտով» կարծում է, թե կարող է փքուն սպիտակ հանգով բացատրվել նույնքան հաջող, ինչպես մեզանից լավագույնները, և այդ գործակատարը երևակայում է, թե նա որ երկրում բեմի միակ ցնցողն է (Shake-scene)»[7]: «Հենրի Վեցերորդի» երրորդ մասի «Օ՛, վագրուհու սիրտ՝ կնոջ կրծքի տակ»[8] տողի պարոդիկ օգտագործումը այս պամֆլետում, կասկած չի թողնում, որ Գրինի նախանձոտ անբավականության գլխավոր պատճառը քրոնիկի ժանրում երիտասարդ դրամատուրգի ձեռք բերած հաջողությունները էին:

* * *

Գրինի պամֆլետը թույլ է տալիս մի շատ կարևոր ճշտում մտցնել Շեքսպիրի քրոնիկների ստեղծման ժամանակագրության մեջ: Նրա խոսքերից պարզ է, որ արդեն 1592 թվականի ամռանը (Գրինը մահացել է սեպտեմբերի 2-ին) Լոնդոնի հասարակությունը ծանոթ էր «Հենրի Վեցերորդի» երրորդ մասին: Թեպետ շեքսպիրյան քրոնիկների ճշգրիտ թվագրումները մի շարք դեպքերում հենված են գիտական ենթադրությունների վրա, ժամանակակից հետազոտողների տեսակետները այդ պիեսների ստեղծման հերթականության շատ էական հարցի վերաբերյալ առանձնապես շատ չեն տարբերվում:

Ըստ երևույթին, մինչև 1592-ի ամառը հայտնվել են «Հենրի Վեցերորդի» բոլոր երեք մասերը, իսկ անմիջապես դրանցից հետո՝ «Ռիչարդ Երրորդի կյանքն ու մահը», որը թե՛ գաղափարական և թե՛ գեղարվեստական իմաստով պատմական վառ

տետրակոգրայի եզրափակումն էր: 90-ականների կեսերին Շեքսպիրը գրեց Ջոն արքայի քրոնիկը, իսկ 1597-ից սկսեց աշխատել երկրորդ տետրալոգիայի վրա, որն ընդգրկում է «Ռիչարդ Երկրորդի կյանքն ու մահը», «Հենրի Չորրորդի» զույգ մասերը և պիեսը Հենրի Հինգերորդի մասին, որի պրեմիերան կայացավ 1599 թ.: Վերջապես, 1612—1613 թթ. թատերաշրջանում բեմադրվել է քրոնիկը Հենրի Ութերորդի մասին: Շատ հնարավոր է, որ դա թատրոնի համար Շեքսպիրի գրած վերջին պիեսն է: Այսպիսով, Շեքսպիրի բարեկամների և 1623-ի նրա երկերի առաջին ժողովածուն հրատարակողների՝ Հեմինգի և Կոնդելի կողմից «պատմության» ժանրին վերագրած տաս պիեսներից ինը ստեղծվել են դրամատուրգի ստեղծագործության առաջին շրջանում, և միայն մեկը՝ նրա ստեղծագործական գործունեության վերջում:

Սակայն, առաջին շրջանի շեքսպիրյան ստեղծագործության տոնայնությունը որոշող միակ ժանրը սոսկ քրոնիկները չէին: Այդ նույն տարիներին դրամատուրգը գրել էր «Տիտոս Անդրոնիկոս» և «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունները, ինչպես նաև իր գրեթե բոլոր կենսուրախ կատակերգությունները: Ինչպե՞ս է եղել, որ գրողը ռենեսանսյան հրճվանքի բոլոր նրբերանգներով շողացող կատակերգություններից այդպիսի բացահայտ թեթևությամբ անցել է քրոնիկների դժնդակ պատկերներին՝ լուսավորված եղբայրասպան երկպառակությունների մռայլ կրակով կամ կանթեղների աղոտ առկայծումներով, որոնց լույսի տակ սարսռելի ոճիրներ են կատարվում:

Առաջին հայացքից դժվար բացատրվող այս իրողությունը կարելի է ըմբռնել լոկ հաշվի առնելով Շեքսպիրի աշխարհզգացողության կարևորագույն առանձնահատկությունները նրա ստեղծագործության առաջին շրջանում: Իր ստեղծագործական էվոլյուցիայի վաղ փուլում, Վերածնության շատ արվեստագետների նման, Շեքսպիրը մարդկանց նոր, հումանիստական հարաբերությունների հաղթանակը խոչընդոտող չարի գլխավոր ակունքը համարում էր այն ուժերը, որոնք նույնանում էին միջնադարի ծնած բարոյական, քաղաքական հին նորմերի հետ: Ավելին, գրողին շրջապատող իրականությունը նրա կողմից հիմնականում ընկալվում էր որպես մարդկային անհատականության ազատ զարգացմանն ու երջանկությանը խանգարող հին սկզբունքների դեմ տարած հաղթանակի արգասիք: Ե՛վ կատակերգություններում, և՛ հատկապես, «Ռոմեո և Ջուլիետում» գեղարվեստական իմաստավորման առարկան անցյալի միտումներն էին: Ոչինչ, որ անորոշ, պայմանականորեն հեռու է այդ անցյալը. Բայց դա մի անցյալ է, որը դիտվում է մաժոր ներդաշնակությամբ հնչող ներկայի բաղդատությամբ: Այն տարիներին Շեքսպիրին հուզող գլխավոր խնդիրը մեկն էր՝ ինչպիսի՞ ջանքեր է պահանջել միջնադարի գաղափարների դեմ վճռական ընդհարման ելած նոր հումանիստական հայացքների հաղթանակը: Արդյո՞ք ուժերի հարաբերությունը, ինչպես դա պատկերված է կատակերգություններում, այնպե՞ս բացահայտ է եղել հումանիզմի օգտին, որ չարը ստիպված է եղել ընկրկել, առանց էական վնաս հասցնելու իր ախոյաններին: Թե՞ սիրո, հավատարմության, ազատության հաղթանակի համար այնպիսի զոհեր են պահանջվել, ինչպես չքնաղ Ջուլիետն ու նրա Ռոմեոն:

Այս պաթոսն է բնորոշ և Շեքսպիրի ստեղծագործության առաջին շրջանում ստեղծված քրոնիկներին, թեև, հասկանալի է, դրանց մեջ առաջին պլան է մղվում պատմա-քաղաքական պրոբլեմատիկան: Դա չի նշանակում, թե յուրաքանչյուր առանձին վերցրած ստեղծագործության մեջ պատկերվում է պատմական նոր միտումների վճռական հաղթանակը միջնադարյան քաղաքական սկզբունքների նկատմամբ: Սակայն, թե՛ քրոնիկների ողջ շարքը, լրիվ վերցրած, թե՛ զույգ տետրալոգիան, որոնց պիեսները սյուժեներով սերտորեն կապված են միմյանց հետ, տոգորված են այն հավատով, որ անխուսափելի է պարտությունը բոլոր նրանց, ովքեր կամա թե ակամա պաշտպան կկանգնեն միջնադարյան հիմքերին և, ընդհակառակը, լի են այն համոզմունքով, որ հաղթանակը օրինաչափորեն լինելու է նոր ժամանակների քաղաքական հայացքները կրողների կողմը:

Հենց այդ հետաքրքրությունն էլ միջնադարի ճգնաժամն ու նոր ժամանակների համար հատկանշական հարաբերությունների կազմավորումը պայմանավորող պատճառների նկատմամբ, կանխորոշեց քրոնիկների նյութի ընտրությունը: Վերանալով առանձին պիեսների ստեղծման հաջորդականությունից, դժվար չէ նկատել, որ առաջին շրջանի քրոնիկների շարքում պատկերված վերջին իրադարձությունը (ժամանակի առումով) 1485 թվականի Բոսվորթի ճակատամարտն է: Այս տարեթիվը վերին աստիճանի կարևոր է Անգլիայի պատմական զարգացումը հասկանալու համար:

Մատնանշելով միջին դարերը նոր ժամանակներից անջատող սահմանագիծը Էնգելսը գրում էր. «Կոստանդնուպոլսի բարձրացման ու Հռոմի անկման հետ միասին ավարտվում է հինը: Կոստանդնուպոլսի անկման հետ անխզելիորեն կապված է միջնադարի վերջը»[9]: Եթե Կոստանդնուպոլսի անկումը (1453 թ.) նշանավորում է միջնադարի վերջը համաեվրոպական մասշտաբով, ապա Անգլիայի համար նոր ժամանակների սկիզբը նշող պայմանական ուղենիշը Բոսվորթի ճակատամարտն էր: Այդ ճակատամարտում Հենրի Ռիչմոնդի (նա գահ բարձրացավ որպես Հենրի Յոթերորդ) տարած հաղթանակը վերջ դրեց Կարմիր և Սպիտակ Վարդերի պատերազմին և հանգեցրեց Թյուդորների դինաստիայի բացարձակ տիրակալության: Էնգելսի խոսքով ասած՝ այդ իրադարձությունը նշանակում էր «թեպետ դեռ ո՛չ բյուրգերության, բայց թագավորական իշխանության հաղթանակը ֆեոդալիզմի դեմ»[10]: Բոսվորթից շատ չանցած՝ Անգլիայում սկսվում է Վերածնության դարաշրջանի վաղ փուլը, որից իր հաշիվն է սկսում ողջ նոր պատմությունը:

Այսպիսով, քրոնիկների մեջ պատկերված անցքերից Շեքսպիրին բաժանողը միայն ժամանակագրական տարածությունը չէր: Բացառությամբ «Հենրի Ութերորդի», նրա բոլոր քրոնիկները պիեսներ են, որոնք ստեղծել է նոր ժամանակների թատերագիրը իր հայրենիքի միջնադարյան պատմությունից առած սյուժեներով: Նախորդ դարաշրջանին հատուկ միտումների մասին խորհելիս Շեքսպիրը կարող էր լինել խորապես մտածող, քանի որ տեսնում էր, թե ինչպես են զարգացել այդ միտումները

և ուր են հասցրել։ Եվ թեպետ Շեքսպիրի հայացքների որոշակի հակասականությունն ու սահմանափակությունը պատմականորեն անխուսափելի էին, այնուամենայնիվ նրա քրոնիկները հավաստի կերպով վկայում են, որ միջնադարյան հասարակության կարևոր օրինաչափություններից շատերը նա խորն է ըմբռնել և ճիշտ։

* * *

Հասկանալի է, Շեքսպիրի պատմական դիրքորոշումը բնութագրելիս միշտ պետք է նկատի ունենալ, որ այն արտահայտվել է ոչ թե գիտական տրակտատում, այլ բեմի համար գրված ստեղծագործությունների մեջ, որոնք դիմում են ոչ միայն հանդիսատեսի մտքին, այլև, ոչ պակաս չափով, զգացմունքներին ու երևակայությանը։ Շեքսպիրի քրոնիկներին հատուկ պատմականության ոգին ծագում է կոնֆլիկտների բազմակերպ խճանկարից, ուր բախվում են վառ անհատականացված, կենդանի գործող անձինք, որոնց արարքները ցավ են պատճառում, ուրախացնում են, իսկ երբեմն էլ ծիծաղեցնում, սարսափեցնում կամ զայրացնում են հանդիսասրահին։ Հերոսների արարքների ռեալիստական համոզչականությունն ու հոգեբանական պատճառաբանվածությունը հաճախ ստիպում են հանդիսատեսին մոռանալ, որ իր աչքի առջև է պատմության այս կամ այն դրվագը. և այն ժամանակ միայն, երբ հանդիսատեսը թատրոնից հեռանալիս փորձում է ամբողջությամբ իմաստավորել տեսածն ու լսածը, նրա գիտակցության մեջ ծնվում է միտքը՝ գործող անձանց ու ողջ երկի ճակատագիրը կառավարող պատմական օրինաչափության մասին։

Շեքսպիրյան քրոնիկներն ըմբռնելու համար պակաս կարևոր չէ մի այլ հանգամանք ևս։ XVI դարի 90-ականները Շեքսպիրի՝ իբրև մտածողի ու արվեստագետի, բուռն զարգացման տարիներն էին։ Ամենավաղ քրոնիկները պատկանում են մի սկսնակ հեղինակի գրչին, որին առանց այդ էլ փաստորեն բաժին էր ընկել դրամատուրգիայի մի նոր ժանր մշակելու դժվարին գործը։ Իսկ ուշ քրոնիկները գլուխգործոցներ են՝ ստեղծված մի գրողի կողմից, որը ճանաչել է պրոֆեսիոնալ վարպետության ամենաթաքուն գաղտնիքները։ Տարիների ընթացքում խորացել են Շեքսպիրի պատմական հայացքները, ուր աստիճանաբար առաջին պլան են մղվել անգլիական միջնադարին բնորոշ, առավել էական օրինաչափությունները։ Դարերի սահմանագծին մոտենալու հետ մեկտեղ շրջապատող իրականության նկատմամբ Շեքսպիրի բուն վերաբերմունքի մեջ կուտակվել են սկեպտիցիզմի տարրեր, որոնք հետագայում սուր ճգնաժամ են առաջ բերել նրա ստեղծագործության մեջ, ճգնաժամ, որն իր ամենավառ արտահայտությունն է գտել «Հենրի Հինգերորդի» պրեմիերայից մի քանի ամիս անց «Գլոբուսի» բեմի վրա հայտնված «Հուլիոս Կեսար» ողբերգության մեջ։ Դրա համար էլ մենք իրավասու ենք պնդելու, թե առանձին քրոնիկներ կամ ծայրահեղ դեպքում՝ քրոնիկների խմբեր, ունեն իրենց սեփական առանձնահատկությունները, որ բացատրվում է Շեքսպիրի ստեղծագործության զարգացման որոշակի փուլերին այդ երկերի պատկանելությամբ։

2

Դարասկզբին շեքսպիրագետների շրջանում լայնորեն տարածված էր այն միտքը, ըստ որի «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասը գրվել է նախքան առաջին մասը: Այս տեսակետը առավելապես ծագել է Հենրի Վեցերորդին նվիրված պիեսների ոճական առանձնահատկությունների հիման վրա և չի հաստատվել քիչ թե շատ հավաստի փաստական տվյալներով: Ժամանակակից ուսումնասիրողներից շատերը գտնում են, որ «Հենրի Վեցերորդի» առաջին մասը ժամանակագրական առումով ևս Շեքսպիրի ամենավաղ քրոնիկն է: Սակայն, նույնիսկ այն գրականագետները, որոնք, ինչպես օրինակ, Է. Կ. Չամբերսը, չեն բաժանում այս տեսակետը, Հենրի Վեցերորդին նվիրված պիեսները վերլուծում են, սկսելով առաջին մասից: Նման մոտեցում պարտավորեցնում է պիեսների խոր գաղափարական ու գեղարվեստական միասնությունը, պիեսներ, որոնք կազմում են Շեքսպիրի առաջին պատմական տետրալոգիան:

Շեքսպիրի վաղ տետրալոգիայի պիեսների սյուժեի հիմքում ընկած են ավելի քան կեսդարյա պատմության անցքեր: «Հենրի Վեցերորդի» առաջին մասի գործողությունն սկսվում է 1422-ին մահացած Հենրի Հինգերորդի հուղարկավորությունից, իսկ «Ռիչարդ Երրորդի» եզրափակիչ տեսարանները ներկայացնում են Բոսուերթի մոտ 1485 թ. օգոստոսի 22-ին տեղի ունեցած ճակատամարտը, որի շնորհիվ անգլիական գահին բազմեց Թյուդորների դինաստիայի հիմնադիր Հենրի Յոթերորդը: Անգլիայի պաշտոնական պատմության մեջ այդ շրջանը ընդունված է բաժանել երկու փուլի: Առաջինի գլխավոր բովանդակությունը մինչև 1453 թվականը տևած Հարյուրամյա պատերազմի եզրափակիչ մասն է. երկրորդ փուլը հայտնի է Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ անվամբ, որը մոլեգնել է Անգլիայում 1455 թվականից մինչև Բոսուերթի ճակատամարտը:

Սակայն այդ երկու փուլի միջև կա ներքին խոր միասնություն: Մի կողմից՝ անգլիական ազնվականության հատուկ շահադիտական ձգտումները, որ XV դարի երկրորդ կեսում հասցրին երկարամյա բացահայտ պատերազմի Լանկաստերների ու Յորքերի՝ թագավորական տան զույգ ճյուղերի միջև,—իրենց զգալ էին տալիս դեռևս նախորդ հարյուրամյակի վերջերին: Այս միտումի առաջին, առավել վառ արտահայտությունը անգլիական գահի հափշտակումն էր Հենրի Բոլինբրոկի կողմից: Նա գահ բարձրացավ 1399-ին, Հենրի Չորրորդ անունով: «Ժամանակագրական քաղվածքներում» այս տարեթիվը Մարքսը մատնանշում է որպես Վարդերի պատերազմի սկիզբը[11]: Մյուս կողմից Կարմիր ու Սպիտակ վարդերի պատերազմը Հարյուրամյա պատերազմի տրամաբանական շարունակությունն էր: Այն ճգնաժամը, որ XV դարի Անգլիայում սկսեցին ապրել խոշոր ֆեոդալական հողատիրության ներկայացուցիչները, կալվածքների շահութաբերության նվազումը ֆեոդալներին պատերազմական արկածախնդրությունների էր դրդում և զինված կողոպուտը դարձնում նրանց բյուջեի անհրաժեշտ մասը: Բայց Ֆրանսիայի կողոպուտին վերջ դրվեց. դեպի

ազգային պետության ստեղծում գնացող ֆրանսիական ժողովրդի դիմադրության ուժեղացումը, ինչպես նաև ֆեոդալական Անգլիայի կառավարող վերնախավի քայքայումը հանգեցրին Հարյուրամյա պատերազմում Ֆրանսիայի վճռական հաղթանակին: Անգլիացիները հարկադրված էին իրենց զորքը դուրս բերել մայրցամաքից, և անգլիական ֆեոդալական ազնվականությունը, ինչպես նշում է Էնգելսը, «փորձեց վարձատրել իրեն Վարդերի պատերազմով»[12]:

Դրա համար էլ, ամենայն իրավամբ, Շեքսպիրի մտածողության պատմականության հիանալի ապացույց կարելի է համարել այն փաստը, որ ողջ տետրալոգիան,— անկախ նրանից, առանձին պիեսներ պատկերո՞ւմ են, թե չեն պատկերում Վարդերի պատերազմի կոնկրետ անցքերը,—հագեցված է այդ պատերազմին բնորոշ միտումների զգացողությամբ: Վարդերի պատերազմին սկիզբ դրած մարտերի պատկերումը դրամատուրգը տարել է «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասի վերջը, սակայն այդ պատերազմի ոգին արդեն իսկ առկա է առաջին մասում: Բեդֆորդի մարգարեական խոսքերը, որ նա արտասանում է «Հենրի Վեցերորդի» առաջին մասը բացող տեսարանում.

> Posterity, await for wretched years,
> When at their mothers'moist, eyes babes shall suck;
> Our isle be made a marish of salt tears,
> And none but women left to wail the dead.
> (I, 1, 48-51).[13]

ավելի շատ վերաբերում են հաջորդ դրամաներում նկարագրված իրադարձություններին, քան անմիջականորեն առաջին մասում պատկերված դրվագներին: Այդ խոսքերը կարող են բնաբան ծառայել ողջ տետրալոգիայի համար: Եվ առհասարակ ամբողջ առաջին պիեսը շատ տեսակետներից մի վիթխարի նախաբանի դեր է կատարում վաղ քրոնիկների բովանդակ շարքի համար:

Բայց, դրա հետ մեկտեղ, «Հենրի Վեցերորդի» առաջին մասը ունի նաև յուրօրինակ շոշափելի գծեր, մի հանգամանք, որ բացատրվում է պիեսի սյուժետային առանձնահատկությունների և երկի ստեղծման պարագաների զուգորդությամբ:

«Հենրի Վեցերորդի» առաջին մասը մի դրամա է, որի գործողությունը ավելի, քան Շեքսպիրի որևէ այլ երկում, կախված է արտաքին-քաղաքական կարգի կոնֆլիկտից: Այս պիեսի կառուցվածքի վճռական տարրն են Ֆրանսիայի դաշտերում մղվող պատերազմի անցքերը: Իսկ այն տեսարանները, որոնք պատկերում են գործերի դրությունը Անգլիայում և անգլիական բանակում ծագող կացությունները, առորդաս նշանակություն ունեն և կոչված են բացահայտելու ռազմական ընդհարման ընթացքը պայմանավորող պատճառները:

Ռիչարդ Երկրորդի իշխանության օրոք կարծես թե մարող Հարյուրամյա պատերազմի վերջին փուլը սկսվեց Հենրի Հինգերորդի հանդուգն արկածախնդրությունից: Նա համեմատաբար ոչ մեծ զորաբանակով իջավ Ֆրանսիայի ափը և 1415 թվականին,

Ազինկուրի մոտ վճռական պարտության մատնեց ֆրանսիացիների գերակշռող ուժերին: Հետագայում Հենրի Հինգերորդը, որը ստիպեց Ֆրանսիային ցած դնել զենքը, ճայտարարվեց ֆրանսիական Կառլոս թագավորի ժառանգ և ամուսնացավ նրա դստեր՝ Եկատերինայի հետ: Հենրիի անակնկալ մահից հետո, 1422-ին Անգլիայի թագավոր և ֆրանսիական գահի ժառանգ հռչակվեց նրա իննամյա որդին՝ Հենրի Վեցերորդը: Սակայն այդ իրադարձություններից անմիջապես հետո ֆրանսիացիները լայն ռազմական գործողություններ ծավալեցին անգլիացիների դեմ. այդ գործողությունների հաջողությունը նպաստեցին ինչպես ֆրանսիական ժողովրդի լայն զանգվածներին համակած հայրենասիրական վերելքը, այնպես էլ անգլիական բարձր ազնվականության և, առաջին հերթին, մանուկ թագավորի՝ պետության մեջ գերիշխանության ձգտող ազդականների անվերջ գզվռտոցը: Ի վերջո, 1453 թվականին ֆրանսիացիներին հաջողվեց իրենց երկրից վռնդել անգլիական զորքերին, որոնց ձեռքում մնաց միայն Կալե նավահանգիստը:

Եթե ֆրանսիացիների համար պայքարը Անգլիայի դեմ ձեռք բերեց ազգայինազատագրական շարժման գծեր, ապա անգլիացիների համար Հարյուրամյա պատերազմը վերջին փուլում ստացավ զուտ կողոպտչական բնույթ: Ինչպես նշում է Մարքսը, **«Ֆրանսիայի դեմ մղած պատերազմի ավարտից դեռ շատ առաջ բարոնները** (ինչպես սովորական թոնկից փախածներ) դարձան իսկական ավազակներ, նրանց կյանքի նպատակը դարձավ ոսկու տենչը, կողոպտելու կիրքը, ֆերմաների սնանկացումն ու քաղաքների մաքրազարդումը, գերիների փրկագինը»[14]: Սակայն, հասկանալի է, թե՛ Շեքսպիրի ժամանակակիցներին և թե՛ հենց իրեն՝ դրամատուրգին Հարյուրամյա պատերազմի վերջին տարիները ներկայանում էին որպես ազգային դժբախտության տարիներ, որին հետևեց հարազատ երկրի դիրքերի էական խարխլումը: Այդ ծանր աղետների պատկերն էլ հենց կազմում է «Հենրի Վեցերորդի» առաջին մասի սյուժեի հիմքը:

Իսկ ինչո՞ւ էր Շեքսպիրը իր դեբյուտի համար, որն, ըստ երևույթին, կատարվել է 1589—1590 թթ.[15] թատերաշրջանում, Անգլիայի ողջ պատմությունից նման տխուր և, ուղղակի ասենք, անփառունակ էջ ընտրում: Այս հարցը առավել ևս օրինաչափ է, որովհետև առաջին շեքսպիրյան քրոնիկը գրվել է Արմադայի դեմ տարած հաղթանակի թարմ տպավորությամբ և հագեցած է եղել ազգային հպարտության զգացումով ու սեփական ուժերի նկատմամբ վստահությամբ լեցուն հանդիսատեսին:

Վերին աստիճանի անբավարար կլիներ, եթե այս հարցին պատասխանելիս սահմանափակվեինք այն պնդմամբ, թե «Հենրի Վեցերորդի» առաջին մասը որոշ չափով առաջաբանն է մի շարքի, որը ամբողջության մեջ ներկայացնում է այն շրջանը, երբ անգլիական թագին հաջողվեց հաղթահարել ֆեոդալական ազնվականության կենտրոնախույս ձգտումները և ստեղծել միասնական ազգային պետություն: Նա, ով եկել էր առաջին մասի պրեմիերային, չէր կարող իմանալ դրամատուրգի այն մտահղացման մասին, որի իրականացման համար պահանջվեց մի քանի տարի

Այդ հարցի լուծման ժամանակ պետք է հիշել, որ 80 և 90-ական թվականների սահմանագլխին Արմադայի կործանման հաղթանակը տոնող անգլիացիները դեռ շարունակում էին զգաստ հետևել Իսպանիայի ռազմա-քաղաքական մեքենայություններին: Հզոր թշնամու հետ նորանոր ընդհարումների սպառնալիքը դեռ չէր անցել: 1595 թվականի պետական թղթերի մեջ պահպանվել են նոթեր այն մասին, որ ըստ անգլիական կառավարության ունեցած տեղեկությունների, Իսպանիայի թագավորը Լիսաբոնում նոր Արմադա է կազմում: Գաղտնի խորհրդի 1591—1596 թվականների արձանագրություններում բազմիցս հիշատակվում է անգլիական ծովափը իսպանական դեսանտից պաշտպանելու միջոցառումների մասին[16]:

Մեկ տարի առաջ պատմությունը ցույց էր տվել անգլիացիներին, թե ազգի միավորված ջանքերը կարող են իրականություն դարձնել այն, ինչը համարյա թե հրաշք էր թվում՝ ջրասույզ անել «Անհաղթելի Արմադան»: Բայց պատմությունը գիտեր և այդ հնարավորության հակոտնյան. եթե մարդիկ բաժանված են, եթե նրանց ղեկավարողը անձնական շահն է, պարտությունը անխուսափելի է:

Այս հակոտնյան էլ անա դարձել է «Հենրի Վեցերորդի» առաջին մասի գեղարվեստական իմաստավորման առարկան, կանխորոշելով այդ ստեղծագործության ողջ պաթոսը:

Ֆեոդալների անմիաբանության թեման հստակ ձևակերպված է պիեսի արդեն առաջին տեսարանում, անգլիացիների պարտությունների լուրը բերող սուրհանդակի ռեպլիկում: Նրա խոսքերից պարզ է, որ զինվորների աչքում խառնակության դրդապատճառը ամենաանշանավոր տոհմերի ներկայացուցիչներն են, որոնց առանձին խմբավորումները ձգտում են իրականացնել իրենց շահադիտական նպատակները: Սակայն սուրհանդակի կոչը, որով նա դիմում է լորդերին

Awake, awake, English nobility! (1, 1, 78).[17]

հնչում է որպես ձայն բարբառո հանապատի: Այդ նույն տեսարանում հասունանում է հակամարտությունը թագավորի ազգականների միջև, որը շատ շուտով հասնում է կոպիտ հիշոցների ու գզվռտուքի:

Այդ թեմայի բարձրակետը, նրա առավել շոշափելի դրամատուրգիական արտահայտությունն է Տոլբոտի մահվան տեսարանը (IV, 7): Շեքսպիրը մանրազնին ու կանխապես դաժինը նախապատրաստում է այդ դրվագի ընկալմանը: Մինչ այդ Տոլբոտը հասցնում է դրսևորել իրեն որպես այն սակավաթիվ հերոսներից մեկը, որը չպատկանելով որևէ խմբավորման, իր գործերում ղեկավարվում է հայրենասիրության գաղափարով: Տոլբոտի մահվան տեսարանից անմիջապես առաջ դրամատուրգը տեղավորում է կառուցվածքով համանման երկու տեսարան, ուր թշնամի խմբավորումների պարագլուխները, ձգտելով վարկաբեկել իրենց ախոյանին, հրաժարվում են օգնության հասնել շրջապատված Տոլբոտին: Եվ վերջապես, Տոլբոտի զոհվելուց անմիջապես առաջ տեղի է ունենում փառաբանված զորավարի հանդիպումը իր

պատանդի որդու հետ, որը որպես իր հոր խիզախ զավակ, մահը մարտադաշտում գերադասում է փախուստի անարգանքից: Դրվագի նման մշակումը հանդիսատեսի սիրտը լցնում է ատելությամբ ու զազրանքով այն մարդկանց նկատմամբ, որոնք ի հեճուկս իրենց եսասիրական ծրագրերի, սառը ցինիզմով դավաճանում են ազգի շահերը, ոչնչացման դատապարտելով անգլիական զորքի փայլն ու փառքը:

Պակաս ․ անբարենպաստ լույսի տակ չի ներկայացվում նաև ֆրանսիական ամբարտավան վերնախավը: Բայց եթե անգլիացիներին պատկերելիս դրամատուրգը միանգամայն խիստ զանազանություն է անցկացնում ազգի պատիվը անարգող շահատենչ ֆեոդալների և զինվորների ու հայրենասեր զորավարների միջև, որոնք իրենց կյանքը չեն խնայում թշնամու դեմ մղվող պայքարում, ապա ֆրանսիացիների բնութագրման մեջ նման սահմանազատում բոտ էության անհնար է գտնել: «Հենրի Վեցերորդի» առաջին մասում հակաֆրանսիական միտումը այնքան վառ է, որ հաճախ շփոթեցնում է Շեքսպիրի ստեղծագործության որոշ հետազոտողների, իսկ նրանցից ոմանց էլ հիմք տալիս մեղադրելու հեղինակին ազգայնամոլության մեջ: Սակայն քրոնիկի այս կողմը ևս լրիվ կարելի է բացատրել, հաշվի առնելով բեմի վրա պիեսի հայտնվելու հանգամանքները:

«Հենրի Վեցերորդի» պրեմիերայից մոտավորապես մեկ տարի առաջ Ֆրանսիայում սպանվել էր Հենրի Երրորդը և ֆրանսիական գահակալության իրավունքներն անցել էին Հենրի Չորրորդ Բուրբոնին: Սակայն Հռոմի պապի կողմից բանադրված նոր բողոքական թագավորի իշխանությունը Ֆրանսիայի վրա գործնականում չէր տարածվում: Փիլիպոս Երկրորդը միտք ուներ ֆրանսիական գահին նստեցնել իսպանական թագի դրածոյին. Փարիզի դրությանը հսկող կաթոլիկական շրջանները ակտիվորեն պաշտպանում էին այդ ծրագրերը. Հռոմի պապի գործակալները ամենուր ագիտացիա էին տանում հօգուտ իսպանացիների: Այս պայմաններում Ֆրանսիան անխուսափելիորեն անգլիացիներին ներկայանում էր որպես Իսպանիայի հնարավոր դաշնակից, որը շատ ավելի վտանգավոր էր, քանի որ նրան Անգլիայից բաժանող ընդամենը մի նեղլիկ նեղուց էր: Այսպիսով, ֆրանսիացիներին Շեքսպիրի տված բացասական գնահատականը, ըստ երևույթին, արտացոլելով այն ժամանակ Լոնդոնում տիրող տրամադրությունները, փաստորեն հակաիսպանական հայրենասիրական միտումների յուրակերպ արտահայտությունն էր:

Այս կապակցությամբ հասկանալի է դառնում և Շեքսպիրի վերաբերմունքը ֆրանսիական ժողովրդի ազգային հերոուհու՝ Ժաննա դ'Արկի նկատմամբ, որը պիեսում ներկայացվում է որպես չար ոգիների հետ կապված կախարդուհի: Չպետք է մոռանալ, որ հենց ֆրանսիական կղերական բարձրագույն դատարանն էր, որ գործելով, ճիշտ է, անգլիացիների գրաված տերիտորիայում, 1431 թ. Օռլեանի կույսին դատապարտեց խարույկի վրա այրելու՝ որպես կախարդուհու: Հարյուրամյա պատերազմի ավարտից շատ չանցած ֆրանսիացիները հետմահու արդարացրին Ժաննային, բայց այդ վճիռը անգլիացիների կողմից կարող էր ընկալվել որպես

քաղաքական խաղի ներթական քայլ: Տեղին է նիշել, որ կաթոլիկական եկեղեցին միայն 1920 թվականին Ժաննա դ'Արկին դասեց սրբերի շարքը: Այդ պատճառով էլ ոչ մի հիմք չկա կշտամբելու Շեքսպիրին այն բանի համար, որ նա հետևել է մի հայացքի, որը կայուն պահպանվել է թե՛ անգլիական պատմական երկասիրություններում և թե՛ բանավոր ավանդույթի մեջ:

Այս պիեսում միմյանց կողորդը սեղմելու պատրաստ ֆեոդալների մեջ դժվար է զանազանել իրավացիներին ու մեղավորներին. հավանաբար այդ խնդիրը չի էլ մտել Շեքսպիրի ծրագրի մեջ, որի նպատակն էր նախ և առաջ առավել տեսանելի ցուցադրել, թե երկրի համար որքա՜ն կործանարար հետևանքների կարող են հանգեցնել իշխանության ձգտող ու ազգի շահերը մոռացած կառավարող խմբավորման ներկայացուցիչների եսամոլությունն ու շահատենչությունը: Պիեսի կառուցվածքը հուշում է, որ դրամատուրգին գլխավորապես գրավել է բուռն արտաքին գործողությամբ հագեցված դրվագների պատկերումը և ոչ թե առանձին բնավորությունների մանրամասն ու պատճառաբանված մշակումը: Այս բանը հատկանշական է «Հենրի Վեցերորդի» բոլոր երեք մասերի համար, սակայն առավելագույն չափով նա հատուկ է առաջին մասին և վկայում է վաղ քրոնիկների ստեղծման տարիներին Շեքսպիրի օգտագործած ստեղծագործական մեթոդի որոշակի արխայիզմի մասին:

Այդ արխայիզմը դրսևորվում է նախ և առաջ այնպիսի տեսարանների առատության մեջ, ուր հանդիսատեսի աչքի առջև տեղի են ունենում մենամարտեր, տուրնիրներ և նույնիսկ ամբողջ ճակատամարտեր: Վերջին հատկանիշը, որ բնորոշ է նախաշեքսպիրյան դրամայի պոետիկային, բազմիցս հարուցել է անգլիացի գիտնական-հումանիստների կծու դիտողությունները: Այսպես, Ֆիլիպ Սիդնեյը «Պոեզիայի պաշտպանության» մեջ, որ գրվել է մոտավորապես 1583 թ. և հրատարակվել միայն 1595-ին, ծաղրել է այն եղանակը, որի օգնությամբ թատրոնում պատկերվել են խոշոր ճակատամարտերը. «Ներս են խուժում երկու բանակ, որ ներկայացվում են չորս զինվորով,—և ի՜նչ դաժան սիրտ պիտի լինի, որ այդ տեսարանը ռազմադաշտի տեղ չընդունի[18]»: Հատկանշական է, որ «Հենրի Հինգերորդում», մինչև 1600 թվականը գրված վերջին քրոնիկում, Շեքսպիրը առհասարակ բեմի վրա չի ցուցադրում անգլիացիների և ֆրանսիացիների հիմնական ուժերի բախումը. փոխարենը նախերգում Խումբը խոսում է այն մասին, որ թատրոնում անհնար է ներկայացնել խոշոր ճակատամարտ և կոչ է անում հանդիսատեսի երևակայությանը՝ օգնության հասնելու դերասաններին:

«Հենրի Վեցերորդի» առաջին մասի արխաիզմի վկայությունն է նաև այն բացառիկ ազատությունը, որով Շեքսպիրը մեկ ներկայացման մեջ համատեղում էր գործող անձանց կյանքի տարբեր շրջանները: Առաջին տեսարանում Հենրի Վեցերորդը, որը, հասկանալի է, բեմում չի հայտնվում, ինն ամսական է, իսկ վերջին տեսարանները պատկերում են քսաներեքամյա Հենրիի հարսնախոսությունը Մարգարիտին: Երբ «Ջմեռային հեքիաթում», որը վերաբերում է Շեքսպիրի ստեղ-

ծագործության վերջին շրջանին, դրամատուրգը կրկին դիմում է մի այուժեի, ուր սկզբի տեսարաններում նկարագրվում են Պերդիտայի ծննդյան հանգամանքները, իսկ հետո՝ հասուն աղջիկ դարձած հերոսուհու ամուսնությունը, հեղինակը ներմուծում է պիեսի մեջ «Ժամանակի» խոսնակը, որը բացատրում է նման հնարանքի պայմանականությունը, իսկ «Հենրի Վեցերորդում» այսօրինակ բացատրություններ չկան։ Վերը հիշատակված «Պոեզիայի պաշտպանության» մեջ Սիդնեյը հստակ ձևակերպում է պատմական այուժեով գրված դրամատիկական ստեղծագործության պոետիկայի կարևոր տարրերից մեկը. «Կարող են հարցնել, իսկ ինչպե՞ս ցուցադրել այն այուժեն, ուր հանդիպում են գործողության շատ վայրեր և գործողության տարբեր ժամանակներ։ Բայց հայտնի չէ՞ արդյոք, որ ողբերգությունը ենթարկվում է պոեզիայի օրենքներին և ոչ թե պատմությանը. նա պարտավոր չէ հետևել ավանդությանը, այլ իրավունք ունի ստեղծելու ինչ-որ նոր մի բան կամ այնպես շարադրելու պատմությունը, որ նա դառնա առավել ողբերգական... եթե կամենում են ներկայացնել պատմությունը, ապա հարկավոր չէ, ինչպես ասում է Հորացիուսը, սկսել ab ovo, այլ անհրաժեշտ է գտնել այն պրոցեսի գլխավոր կետը, որը մտադիր են ցուցադրել»[10]։ Ակներև է, որ իր առաջին քրոնիկը ստեղծելիս Շեքսպիրը ծանոթ չի եղել այս տեսությանը, կամ դեռևս չի կարողացել իրականացնել այն իր դրամատուրգիական պրակտիկայում։

Ձևականորեն «Հենրի Վեցերորդի» առաջին մասն ավարտվում է անգլիացիների հաջողության պատկերումով. նախավերջին տեսարանում Կառլոսը ճանաչում է իրեն Ֆրանսիայի փոխարքա և անգլիական թագի հարկատու։ Սակայն շեքսպիրյան օրերի հանդիսատեսին լավ հայտնի էր նման հաջողության վաղանցիկությունը։ Ասենք, իրենք՝ ֆրանսիացիները էլ, ինչպես ցույց է տալիս Ալանսոնի ռեպլիկը, այդ խաղաղության մեջ տեսնում են միայն փոքր-ինչ շունչ առնելու հնարավորություն, խաղաղություն, որը կարող են խախտել, երբ որ ցանկանան։

Եվ հորիզոնի վրա ավելի ու ավելի որոշակիորեն է գծագրվում Վարդերի պատերազմի մռայլ հեռանկարը։

* * *

Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը, որը կազմում է առաջին տետրալոգիայի բոլոր հաջորդ պիեսների այուժետային հենքը, թե՛ իր ընթացքով ու ձևերով, թե՛ Անգլիայի պատմական զարգացման համար ունեցած արդյունքներով, նշանակալիորեն տարբերվում էր միջնադարի համար սովորական դարձած ֆեոդալական ազնվականության ընդհարումներից։ Այսպես, Հարյուրամյա պատերազմի ժամանակ ամենաթանկարժեք ռազմավարներից մեկն էր համարվում գերված ասպետը. նրա կյանքի դիմաց հաղթողը կարող էր ստանալ խոշոր փրկագին։ Իսկ Վարդերի պատերազմի ժամանակ, որին որպես կանոն մասնակցում էին միմյանց հետ արյունակցական կապեր ունեցող անգլիացի ֆեոդալներ, ախոյան բանակի յուրաքանչյուր ներ-

նայացուցիչ, իր հակառակորդին սպանելու դեպքում դառնում էր մյուս բանակի բազմաթիվ անդամների ոխերիմ թշնամին: Դրա համար էլ անցյալում լայնորեն տարածված սովորությունը՝ խնայել գերիների կյանքը, Վարդերի պատերազմի ժամանակ փոխարինվեց դաժան հաշվեհարդարով: Ինչպես նշել է Մարքսը, **«Հին անգլիական արիստոկրատները** ծաղրուծանակով և տանջելով (mit Hohn und Quälerei) **կոտորում էին միմյանց»**[20]: Այս բանը պատերազմին առանձնապես արյունալի բնույթ հաղորդեց:

Ե՛վ Լանկաստերները, և՛ Յորքերը՝ տիրող դինաստիայի զույգ ճյուղերը, իրենց կամակատարների հետ միասին ձգտում էին լիիրավ տնօրեն դառնալ երկրում: Սակայն անվերջ կոտորածները հանգեցրին մի արդյունքի, որը արիստոկրատները ամենից քիչ էին ցանկանում կամ կարող էին սպասել. հին ֆեոդալական տոհմերի մեծ մասը ֆիզիկապես բնաջնջվեց: Նրանց փոխարինելու եկավ «բուրժուական ծագում ու բուրժուական միտումներ ունեցող»[21], այսպես կոչված «Նոր ազնվականությունը», ուրիշ խոսքով, այն սոցիալական խավը, որը և ամրացած քաղաքական բյուրգերության հետ մեկտեղ ապահովեց Թյուդորների բացարձակ միապետությունը:

Սա էր Վարդերի պատերազմի գլխավոր սոցիալ-պատմական արգասիքը: Ճիշտ չէ երևակայել, թե այդ ֆեոդալական երկպառակությունը իր բազում ճակատամարտերով, որոնց յուրաքանչյուր կողմից մասնակցում էր մի քանի հազար մարդ, լրիվ կամ մեծ մասով իր ուղեծրի մեջ էր առել այն ժամանակվա Անգլիայի բնակչությանը: Բայց նա հսկայական ազդեցություն գործեց անգլիացրների բարոյականության և ամենից առաջ մեծաթիվ ազնվականության բարոյականության վրա: Բացահայտ բռնությունը և ուրիշների սեփականության զավթումը գրեթե դարձան լորդերի վարքի չափանիշ, անկախ այն բանից՝ հարու՞մ էին նրանք, թե՞ չէին հարում թշնամի խմբավորումներից որևէ մեկին: Ինչպես գրում է Թրևելյանը, «տիրությունների անակնկալ զավթման տեխնիկան ընդգրկում էր վիրավորիչ գործողություն կամ բացահայտ սպանություն, որը հաճախ, ավելի ուժեղ տպավորության համար, կատարվում էր հասարակական վայրում, օրը ցերեկով, որովհետև ոչ միայն իր իրավունքները ներկայացնող ախոյանը, այլև դատական ատենակալները պետք է դողային իրենց կյանքի համար... Հզորագույն լորդի կամ ասպետի զգեստը նրան (կալվածատիրոջը—Յու. Շ.) ազատություն էր տալիս ոչ միայն անպատիժ կերպով քսակներ կտրելու, այլ կոկորդներ խողխողելու»[22]:

Այդ արյունալի անօրինության սարսափազդու ժամանակաշրջանի ոգին Շեքսպիրի քրոնիկներում պատկերված է շատ ավելի ազդու և համոզիչ, քան դիպլոմավոր պատմաբանների բազմահատոր երկերում:

Գահակալող թագավորի հակառակորդների առաջին բացահայտ զինված ելույթի՝ Սենտ Օլբենսի ճակատամարտի պատկերումը, որի ժամանակ Յորքը ներկայացնում է թագին տիրելու իր իրավունքները և պահանջում Հենրիի հրաժարականը,—Շեքսպիրը տարել է «Հենրի Վեցերորդի» երկրորդ մաս: Սակայն պիեսի ողջ նախորդ

գործողությունը կոչված է բացատրելու այդ իրադարձության նախապատրաստումն ու իրական բովանդակությունը։

Առաջին չորս արարվածները պատկերում են անձնական պատվասիրության անհաշտ բախումները։ Սրանից անխուսափելիորեն բխում են կողմերի կոնֆլիկտը լուծելու փորձերը՝ կամ մատնությունների օգնությամբ (որոնք քողարկվում են երեսպաշտ խոսքերով), կամ բացահայտ բռնության միջոցով (որին համարձակվում է դիմել նա, ով իրեն տվյալ պահին ավելի ուժեղ է զգում)։

Կողմերից յուրաքանչյուրը ջանում է խոսքով հիմնավորել առաջին տեղում լինելու իր իրավունքը. Կարմիր վարդի կողմնակիցները հայտարարում են, որ իրենք պաշտպանում են աստծո օրինական օծյալին, մինչդեռ Սպիտակ վարդի կողմնակիցները արտաքուստ համակարծիք են Յորքին, թե՝ թագը պետք է իրենը լինի։ Սակայն երկու կողմերի համար էլ բերված փաստարկները սոսկ միջոց են քողարկելու իրենց շահադիտական նպատակները. հաջողության հույս կարող է ունենալ այն բանակը, որը ավելի ճարտար կլինի խաբեության մեջ և որի կողմը կլինի ուժը տվյալ պահին։

«Հենրի Վեցերորդի» երկրորդ մասում Շեքսպիրը կրկին լայնորեն օգտվում է գործող անձանց բնութագրման խմբական եղանակից։ Տիրամոլ Մարգարիտը իր լկտի փավորիտի՝ Սեֆոլկի հետ նույնչափ ընդունակ է դիմելու ստի ու չարագործության, որչափ Յորքն ու Յորքի գործակիցները։ Հակամարտող ֆեոդալների կերպարներն ըմբռնելու բանալին նրանց դավադրություննն է դուքս Հեմֆրի Գլոստերի դեմ։ Ցինիկ անկեղծությամբ նրանք նախապատրաստում են դքսի ծածուկ սպանությունը։ Եվ այն բանից հետո, երբ ոճիրը կատարված է, Մարգարիտը, իրոք որ Ռիչարդ Երրորդին արժանի երկերեսանությամբ, ժխտում է իր սիրեկանի՝ Սեֆոլկի մեղսակցությունը։ Յորքն էլ Սեֆոլկի դեմ է լարում իր կողմնակիցներին, որոնք մեղադրում են նրան սպանության մեջ և հարկադրում թագավորին՝ վտարելու արքունիքից։

Փառամոլ լորդերից նկատելի առանձնանում է դուքս Ռիչարդ Յորքը։ Արդեն առաջին արարվածի առաջին պատկերի մենախոսությունից պարզ է դառնում, որ նրա էության բովանդակությունը իշխելու տենչն է ու քաղաքական խաղը։ Դրա համար էլ միանգամայն բնական է, որ Յորքի հաջորդ դատողությունները (II, 2) գահին տիրելու իր իրավունքի մասին, ընկալվում են սոսկ որպես երեսպաշտ խորամանկություն։ Դրանից զատ, Շեքսպիրի ժամանակների հանդիսատեսի համար Յորքի լայնածավալ էքսկուրսը դեպի Անգլիայի թագավորական տան պատմությունը ուներ նաև խոր հուզական ենթատեքստ՝ նրա խոսքը հնչում էր որպես մարտահրավեր, որ իշխող ընտանիքի մի անդամը նետում էր մյուսին։ Ռիչարդ Յորքը հայտարարում է, որ գահին տիրելու իր իրավունքը ապացուցված կարող է համարվել միայն այն բանից հետո, երբ իր սուրը թաթախի Լանկաստերների արյան մեջ (II, 2, 64—66). իսկ եղիսաբեթյան թատրոնի հանդիսականի համար այդ խոսքերն ստանում էին չարագուշակ որոշակիություն՝ գահին տիրանալու համար Ռիչարդը

պետք է սպանի իր ազգականին: Ուրիշ խոսքով, Յորքի ճառը եղբայրասպան պատերազմի բացահայտ կոչ էր:

Յորքը պիեսի այն պերսոնաժն է, որը գործում է ամենից ավելի մտածված ծրագրով: Հենց նրան է հաջողվում ամենից ավելի օգուտ քաղել Գլոստերի սպանությունից և ասպարեզից հեռացնել իր գլխավոր թշնամուն՝ Սեֆոլկին: Մտնելով Գլոստերի սպանությունը նյութող դավադրության մեջ և նկատի ունենալով, որ ոճրագործությունը իր համար կբացի գահի ճանապարհը, Յորքը հետապնդում է հեռուն գնացող քաղաքական նպատակներ՝ իր հրահրած ժողովրդական ապստամբության միջոցով ստուգել, թե ինչպես կընկալվեն գահակալության իր պահանջները: Եվ ահա Յորքի հաղթանակը ասում է մի բան. հաջողությունը բաժին է ընկնում ոճրագործներից ու բանսարկուներից ամենահաշվենկատին, ամենանենգին ու ամենեռատեսին: Հազիվ թե հարկ կա երկար ապացուցելու, որ անգլիական ազնվականության պատկերումը Հենրի Վեցերորդին նվիրված պիեսներում առավել ակներև, քան շեքսպիրյան ժառանգության ուրիշ շատ գծեր, հերքում է քննադատների մտացածին պնդումները, թե իբր Շեքսպիրը հանդիսանում է միջնադարյան հարաբերությունները իդեալականացնող ազնվականության գաղափարախոսը:

Ցահամոլ ֆեոդալների կերպարների անհատականացումը խորացնելու հետ մեկտեղ Շեքսպիրը «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասում փորձում է ստեղծել նրանց հակադրվող դրական հերոսի կերպար: Դա դուքս Հեմֆրի Գլոստերն է, թագավորի մերձավորներից միակը, որն իր արարքների ու ձգտումների մեջ իրոք մտահոգված է Անգլիայի շահերով: Հենց այդ պատճառով է, որ ազնվասիրտ ու ճշմարտախոս դուքսը դառնում է արքունական բոլոր բանսարկուների թիվ մեկ թշնամին. քանի դեռ Գլոստերը կենդանի է, նրանք հարկադրված են քողարկել իրենց իրական ձգտումները և չեն կարող բացահայտ պայքարել գահին տիրանալու համար: Չնայած փոխադարձ ատելությանը, ֆեոդալները հեշտությամբ միավորվում են Գլոստերի դեմ լարվող դավադրության մեջ, որպեսզի նրա սպանությունից անմիջապես հետո ավելի մոլեգին բռնեն միմյանց կոկորդ: Այս պայմաններում դուքսին չեն կարող փրկել ո՛չ նվիրվածությունը ազգային գաղափարներին, ո՛չ լայն քաղաքական կատեգորիաներով դատելու կարողությունը, ո՛չ էլ ազնիվ խիզախությունն ու անձնուրացությունը: Ընդհակառակը, այդ հատկությունները նրան միայնակ ու անօգնական են դարձնում ստոր իշխանամոլների շրջանում:

Դքսի միայնակության տպավորությունը Շեքսպիրը ուժեղացնում է, պատկերելով Գլոստերի հարաբերությունները կնոջ հետ, նրա ամենահարազատ ու սիրելի մարդու հետ: Լինելով խնամակալի ամուսինը, այդ տիրասեր կինը չի բավարարվում պետության երկրորդ լեդիի դերով: Նա մյուս ֆեոդալների նման պատրաստ է ամեն միջոցի դիմել և հակառակ ամուսնու կամքին, պայքար սկսել թագը զավթելու համար: Միայնակ Գլոստերը մնում է որպես մի յուրատեսակ անաքրոնիզմ, որ Հենրի Հինգերորդի վաղեմի պանծալի ժամանակներից եկել-հայտնվել է ֆեոդալական խառնակություն-

ների դարաշրջանում և դրա համար էլ դատապարտված է անխուսափելի պարտության:

Նման իրավիճակում, երբ արդարության և կարգուկանոնի միակ պահապանը միանգամայն անզոր է որևէ բան փոխելու, պիեսի վերջում, թագավորին պարտության մատնելուց հետո, դեպի Լոնդոն շտապող Յորքի ցնծությունը բնավ չի նպաստում լավատեսական հեռանկարի ստեղծմանը: Ընդհակառակը, նույնիսկ Անգլիայի պատմության հետագա ընթացքին անծանոթ հանդիսատեսի երևակայությունը ակամա գծում է երկրին սպառնացող նոր, անհամար աղետների պատկերը:

«Հենրի Վեցերորդի» երկրորդ մասի թողած ծանր տպավորությունը խորանում է 1450-ին Անգլիայում բռնկված Ջեկ Քեդի գլխավորած ապստամբության պատկերումով:

Պիեսի շատ տողեր վկայում են, որ դրամատուրգը մանրամասն ծանոթ է եղել նման ապստամբություններին: Ժողովրդական զանգվածների ծանր դրությունը բնութագրող առանձին գծեր հանդիպում են դեռ մինչև այն տեսարանները, ուր անմիջականորեն ցուցադրվում է Քեդի ապստամբությունը: Ժողովրդի սաստկացող կեղեքման դեմ ուղղված բողոքը հնչում է արդեն առաջին արարվածի երրորդ պատկերում, ուր խնդրարկուներից մեկը փորձում է իր ծուխի անունից խնամակալ լորդին գանգատագիր հանձնել համայնքի հողերը ցանկապատելու առթիվ: Դրա համար էլ Քեդի հռչակած հակաֆեոդալական կոչերի պաշտպանությունը ժողովրդի կողմից հնչում է միանգամայն օրինաչափ: Հատկանշական է, որ ապստամբներից ամենից ավելի ոգևորում են այն կոչերը, որոնք պարունակում են պրիմիտիվ-համահավասարեցնող միտումներ: Նման պահանջներ բազմիցս առաջադրվում էին գյուղացիների ու քաղաքային չքավորության ապստամբությունների ժամանակ: Այն մասին, որ Շեքսպիրը ծանոթ է եղել նաև ժողովրդական ապստամբությունների մի շարք այլ առանձնահատկություններին, խոսում է և Քեդի բարձրացրած խռովության առանձին դրվագների պատկերումը: Չեռեմցի գրագրի նկատմամբ իրագործված հաշվեհարդարը հավաստի արտացոլում է խավարի զանգվածի ատելությունը գրագետ մարդկանց նկատմամբ, որոնց համարում էր զենք կեղեքիչների ձեռքին. լորդ Սեյին ներկայացված մեղադրանքները ևս տիպական են Ֆրանսիայի դեմ մղվող անվերջ ու ապարդյուն պատերազմի պայմաններում ծագած ժողովրդական հուզումների համար, պատերազմ, որ իր հետ բերում էր ամեն տեսակի հարկերի ու տուրքերի մշտական ավելացում:

Սակայն պատմությունը Շեքսպիրին նյութ չէր տալիս. որպեսզի պատկերացներ ժողովրդական շարժման հաղթանակը: Ապստամբ ժողովուրդը, որը հանդես էր գալիս կողոպուտի ու ճնշման դեմ, բայց չուներ ո՛չ գործողության հստակ ծրագիր, ո՛չ կազմակերպություն և ո՛չ էլ բավարար նյութական հնարավորություններ, հեշտությամբ խաղալիք էր դառնում ճարպիկ դեմագոգների ձեռքին, որպիսին պիեսում ներկայանում է Կլիֆորդը: Սակայն, ինքը՝ Քեդն էլ, Շեքսպիրի մեկնաբանությամբ, ոչ

այնքան ժողովրդի առաջնորդ է, որքան հանդուգն բախտախնդիր: Իսկ մատչելի սկզբնաղբյուրներից Շեքսպիրը կարող էր ուղղակի հետևություն անել, որ Քեդի ապստամբությունը ֆեոդալների քաղաքական խաղի մի մասն էր միայն: Հոլինշեդը, որին հետևում է Շեքսպիրը, այսպես է բնութագրել Քեդի խռովությունը. «Նրանք, ովքեր պաշտպանում էին Յորքի դքսին և ուզում էին նրա գլխին տեսնել թագը, որի իրավունքը (ինչպես իրենք էին դատում) դուքսը ավելի շատ ուներ, քան նա, ով կրում էր այն, Քենտում հուզումներ կազմակերպեցին հետևյալ ձևով: Հանելի արտաքինով և ոչ անխելք մի երիտասարդի նրանք առաջարկեցին իրեն անվանել Ջոն Մորտիմեր՝ Յորքի դքսի զարմիկ (թեպետ նրա անունը Ջոն Քեդ էր, կամ, ինչպես ասում են ոմանք, Ջոն Մենդոլլ, այսինքն՝ «Կարկատած»)..., ենթադրելով, որ իրենց քաղաքականությունը այդ անունը օգնության կբերի բոլոր նրանց, ովքեր պաշտպանում էին կոմս Մարչի (այսինքն՝ Մորտիմերների—**Յու. Շ.**) գերդաստանը»[23]: Հետևելով Հոլինշեդին, Շեքսպիրը ևս խռովության իրական նախաձեռնող է դարձնում նույն Յորքին. ստացվում է, որ ապստամբությունը ֆեոդալների սարքած պրովոկացիայի արդյունք էր, յուրատեսակ դրսևորումը ֆեոդալական երկպառակության, որ այնքան ատելի էր Շեքսպիրին:

Այս կերպ անա հեշտությամբ կարելի է բացատրել Շեքսպիրի բացասական վերաբերմունքը 1450 թ. ապստամբության նկատմամբ: Սակայն բուն ապստամբության պատկերումը խտացնում է պիեսի մռայլ մթնոլորտը, ցույց տալով, որ Անգլիայում չեն եղել ֆեոդալների եսամոլական ձգտումներին դիմագրավելու ընդունակ ուժեր:

* * *

Սենտ Օլբենսի ճակատամարտը, որով ավարտվում է «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասը, հենչում է որպես նախերգանք երրորդ մասում մոլեգնող բռնության խրախճանքի:

Փոփոխական ռազմական բախտը մեկ տապալում է թագավորներին, մեկ նրանց գահ բարձրացնում: Ֆեոդալները խախտում են երդումները (որոնք եղբայրասպան պատերազմի ժամանակ դառնում են ոչինչ չնշանակող խոսքեր), անցնում են մի բանակից մյուսը, կատարում սպանություն սպանության ետևից թե՛ բազմաթիվ մարտերում, թե՛ դրանցից հետո, անխնա հաշվեհարդար տեսնելով գերիների հետ: Արյունից հարբած լորդերը բնաջնջում են միմյանց, սակայն վրեժի այդ զարհուրելի գինարբուքը պատմական շարժում չի ստեղծում և ոչ մի հեռանկար չի բացում, նոր մահերի սպասումից զատ:

Ընդհանուր գործողության առատությանը, «Հենրի Վեցերորդի» երրորդ մասը ինչ-որ չարագուշակ անշարժության տպավորություն է թողնում: Սա չպետք է բացատրել գեղարվեստական անհաջողականությամբ. ընդհակառակը, իբրև նուրբ ու արտահայտիչ միջոց՝ նա թույլ է տալիս Շեքսպիրին բացահայտել քրոնիկի հիմնական գաղափարը: Ընդամենը երկու պատկեր է անցնում պիեսի սկզբից, և գազազած Կլիֆոր-

դը սպանում է անմեղ պատանի Ռետլենդին միայն այն բանի համար, որ ժամանակին Յորքը՝ Ռետլենդի հայրը, մարտի մեջ սպանել էր ծերունի Կլիֆորդին: Իսկ պիեսի ավարտից երկու պատկեր առաջ արքա Էդվարդը և նրա եղբայրները սպանում են Հենրի Վեցերորդի՝ իրենց ձեռքն ընկած փոքր որդուն: Առաջին արարվածի չորրորդ պատկերում Կլիֆորդը և Մարգարիտ թագուհին ծաղրուծանակով հաշվեհարդար են տեսնում գերված Յորքի հետ և նրա կտրած գլուխը գամում են քաղաքային դարպասին. իսկ երկրորդ գործողության չորրորդ պատկերում Վորվիկը և Յորքի որդիները մարտից հետո անարգում են վերքերից մահացած Կլիֆորդի մարմինը և կարգադրում են նրա գլուխը գամել Յորքի գլխի տեղը:

Վերջին երկու պատկերների միջև Շեքսպիրը տեղադրում է մի դրվագ, որը ոչ մի դեր չի խաղում սյուժեի զարգացման մեջ, բայց սիմվոլիկ կերպով հաղորդում է Վարդերի պատերազմի բուն ոգին: Մի զինվոր, որ մտադրվել էր կողոպտել իր սպանած թշնամուն, սոսկումով ճանաչում է հորը, իսկ մեկ այլ զինվոր արցունք է թափում իր իսկ ձեռքով սպանած որդու դիակի վրա: Չնայած այս տեսարանի կառուցման զգալի պայմանականությանը և գործող անձանց խոսքի հռետորական երանգին, չնայած այն բանին, որ այս տեսարանը իրավամբ համարվում է Շեքսպիրի վաղ քրոնիկների վրա միջնադարի թատերական պոետիկայի ազդեցության ապացույց, այն չէր կարող վիթխարի հուզական ներգործություն չունենալ եղիսաբեթյան ժամանակների հանդիսականի վրա. դեռ ավելին, նրա հրապարակախոսական ճակատայնությունը լոկ ուժեղացնում էր այդ ազդեցությունը:

Պիեսի կառուցվածքի այսօրինակ ընդգծված համամասնությունը ստեղծում է ներփակ շրջանի զգացողություն, շրջան, որի մեջ ատելությունն ու վրեժի ծարավը քշում են ու քշում մարդկային կերպարանքը կորցրած փառամոլներին: Այս զգացողությունը է՛լ ավելի է ուժեղանում Ռիչարդ Գլոստերի՝ ապագա Ռիչարդ Երրորդ թագավորի ձգտումների ու բնավորության ստիհանական բացահայտման եղանակով: Մոտավորապես պիեսի միջին մասում, երրորդ արարվածի երկրորդ պատկերում Ռիչարդը լիակատար որոշակիությամբ խոսում էր իր նվիրական նպատակի՝ անգլիական թագին տիրելու մասին, մի բան, որ նա մտադիր է իրականացնել արյունոտ կացնի ու հնարամիտ երեսպաշտության օգնությամբ: Իսկ ավարտից անմիջապես առաջ Ռիչարդը կրկին խոստանում է գահ բարձրանալ այն մարդկանց դիակների վրայով, որոնք կանգնած են իր ճանապարհին: Հենրի Վեցերորդի և նրա որդու սպանությամբ թագի համար մղվող պայքարի շիկացումը չի թուլանում, միայն նեղանում է իշխանություն տենչացող ախոյանների շրջանակը. հիմա այն սահմանափակված է Յորքերի ընտանիքով: Երբ վերջին տեսարանում ինքնագոհ ու քմահաճ, հեշտասեր Էդվարդ Չորրորդը Անգլիային գուշակում է երկար բերկրալից տարիներ, նրա խոսքերին հակադրվում է Գլոստերի չարագույժ մենախոսությունը, որը խաղաղության ու անդորրի հույսը վերածում է անիրականանալի պատրանքի և դրանով իսկ պիեսի ավարտը վերջնականապես զրկում որևէ լուսավոր հեռանկարից:

Փառամոլների խմբավորմանը՝ թե՛ նրանց, ովքեր տենչում են տիրանալ անգլիական թագին և թե՛ նրանց, ովքեր շրջապատում են իշխող արքային,—հակադրված է թագավոր Հենրիի կերպարը: «Հենրի Վեցերորդի» երեք մասերը որոշակի առումով հանդիսանում են այդ միապետի կեսդարյա պատմության դրամատիկանացված շարադրանքը՝ սկսած նրա թագադրությունից, որը գործնականորեն համընկնում է նրա ծննդյան հետ, և վերջացրած սպանությամբ՝ 1471 թվականին, Թաուերում:

Սակայն Հենրի Վեցերորդին միայն մեծ վերապահումով կարելի է անվանել նրա անունը կրող քրոնիկների գլխավոր գործող անձ: Չէ՞ որ Հենրին ըստ էության քնավ չի գործում: Նրա անվճռական ու ոչ տևական փորձերը՝ դիմադրել ինչպես լորդերին, որոնց հետ համաձայն չէ, այնպես էլ իր ուղղակի թշնամիներին, շատ շուտով փոխարինվում են անմռունչ հնազանդությամբ, և արքան հլու համաձայնվում է այն մարդկանց հետ, որոնք ընդունակ են ինքնուրույն վճիռներ ընդունելու:

Այսպես, երկրորդ մասում Հենրին զգում է, որ խնամակալ Հեմֆրի Գլոստերի և մնացած լորդերի վեճի մեջ ճշմարտությունը Գլոստերի կողմն է, բայց և այնպես նա ազնիվ դուքսին հանձնում է նրա ոխերիմ թշնամիների ծվատմանը: Իսկ երրորդ մասի սկզբում Հենրին Սպիտակ վարդի կողմնակիցների ճնշման տակ (նրանք այդ ժամանակ հասել էին գերակշռության) գահը կտակում է Յորքին, դրանով էլ զրկելով իր որդուն գահաժառանգության իրավունքից: Այդ պահից, ձևականորեն մնալով Սպիտակ վարդի կողմնակիցների դրոշը, Հենրին ըստ էության խոչընդոտ է դառնում թշնամական բանակներից յուրաքանչյուրի ճանապարհին:

Պատմական Հենրի Վեցերորդը իր մայրական գծով պապից՝ ֆրանսիական թագավոր Կառլոս Վեցերորդից ժառանգել էր տկարամտություն, որի նոպաները հաճախ կրկնվում էին նրա իշխանության տարիներին: Սակայն Շեքսպիրը խնամքով շրջանցում է այդ պարագան, Հենրիի բնութագրման մեջ առաջին գիծ մղելով բարոյական կարգի մի գործոն՝ թագավորի բարությունը, որը, ի վերջո, նրան հասցնում է լորդերի թուլակամ խրախուսման:

Բացի այդ, Հենրիի վարքագիծը պայմանավորվում է ևս մի հանգամանքով, որը առաջին հայացքից այնքան էլ նկատելի չէ. դա խղճի խայթն է, որ ծնվում է գահի նկատմամբ իր իրավունքների անբավարար հիմնավորվածության գիտակցությունից: Փառասերների համար, որոնք գահին տիրանալու համար պատրաստ են ամենայն ոճիրների, խոսակցությունները իրավունքի մասին կարող են ծառայել լոկ որպես տակտիկական հնար. միայն Հենրիի համար է, որ այդ հարցը վերածվում է տանջալի էթիկական խնդրի: Դա ակնհայտ է դառնում երրորդ մասը բացող տեսարանում, երբ Յորքի հետ ստիպված վեճի բռնվելով, Հենրին մեկուսի նետում է.

I know not what to say; my title's weak (I, I, 134)[24].

Ահա այս երկու գործոնները՝ արյունոտ եղեռնի նկատմամբ տածած նողկանքի հետ զուգակցված, Հենրիին հանգեցնում են գահից հրաժարվելու որոշմանը և հասարակ հովվին բաժին ընկած երանելի կյանքի փառաբանմանը:

Միանգամայն ակնհայտ է, որ նման արքան ի վիճակի չէ սանձելու ֆեոդալական անիշխանությունը: Սա է Հենրի Վեցերորդի կործանման պատճառը և սա է, միաժամանակ, նրա պատմական մեղքը երկրի առջև: Բայց կարո՞ղ է արդյոք բոլոր ցավերին սպեղանի լինել գահին ուժեղ անձնավորություն նստեցնելը, անձնավորություն, որը ոչնչի առջև կանգ չի առնի հանուն իր իշխանությունն ամրացնելու:

Այս հարցին Շեքսպիրը պատասխանեց վաղ տետրալոգիայի վերջին պիեսում, քրոնիկի գլխավոր հերոսը դարձնելով Ռիչարդ Երրորդին: Եվ այն բանում, որ պատասխանը ստացվել է բացասական, իր հիանալի արտահայտությունն է գտել Շեքսպիրի պատմական մոտեցումը մի ժամանակաշրջանի գնահատմանը, երբ ֆեոդալական խառնակությունը հասել էր իր բարձրակետին:

* * *

«Ռիչարդ Երրորդի կյանքն ու մահը», որը եզրափակում է առաջին պատմական տետրալոգիան, իր ոճով ամենասերտ կերպով կապված է ավելի վաղ քրոնիկների հետ: Ռիչարդ Գլոստերի՝ պիեսը բացող մենախոսությունը, ճշտելով արդեն «Հենրի Վեցերորդի» երկրորդ և երրորդ մասերից ծանոթ գլխավոր հերոսի կերպարը, այն տպավորությունն է թողնում, թե «Ռիչարդ Երրորդի» գործողությունն սկսվում է անմիջականորեն այն պահից, երբ ավարտվել էր «Հենրի Վեցերորդի» երրորդ մասը: Ոճական առանձնահատկությունները, տաղաչափության բնույթը, ինչպես նաև առանձին գործող անձանց պատկերման և տեսարանների կառուցման մի շարք հնարներ նույնպես վկայում են «Ռիչարդ Երրորդի» և Հենրի Վեցերորդին նվիրված պիեսների մոտիկության մասին:

Դրա հետ մեկտեղ «Ռիչարդ Երրորդը» Շեքսպիրի գաղափարական ու գեղարվեստական զարգացման մի նոր փուլն է: Հենրի Վեցերորդին նվիրված պիեսների մեջ գործողության զարգացումը պայմանավորվում էր հիմնականում Անգլիայի պատմության դրվագների հաջորդականությամբ, որոնք երբեմն միայն աննշան չափով ազդում էին կերպարների ներքին բովանդակության վրա: Իսկ «Ռիչարդ Երրորդի» դրամատիկ լարման գլխավոր ակունքը պիեսի գլխավոր հերոսի բնավորությունն է: Դրա համար էլ այս քրոնիկի պոետիկան շատ կողմերով մոտ է ողբերգության պոետիկային. և բոլորովին պատահական չէ, որ այս պիեսը քրոնիկներից միակն է, որ առաջին փոլիոյում անվանվել է ողբերգություն: Ըստ երևույթին այստեղ պետք է որոնել «Ռիչարդ Երրորդի» վիթխարի բեմական համբավի գլխավոր պատճառը, որ գերազանցում է Շեքսպիրի բոլոր մնացած պատմական քրոնիկների համբավը:

Ռիչարդ Երրորդը որպես անձնավորություն՝ բոլոր տեսակետներից բարի, կամազուրկ, աստծո բարեհաճությանը ապավինած Հենրի Վեցերորդի կատարյալ հակապատկերն է: Ռիչարդը օժտված է սուր, ցինիզմի հասնող սթափ մտքով և կամքի վիթխարի ուժով. Նա դաժան եսասեր է՝ անսանձելի եռանդով լեցուն և անշեղորեն իր նվիրական նպատակին ձգտող, նպատակ, որը նա իրականացնում է կա՛մ ուղղակի

ունենալ տալով ամեն ինչ, կա՛մ դիմելով շրջանցիկ ուղիների և հմտորեն քողարկելով իր իրական մտադրությունները:

Ռիչարդ Գլոստերի անզուգական կերպարը մինչև Շեքսպիրն էլ գրավել էր անգլիական գրողների ուշադրությունը: Ռիչարդի առավել լիակատար վարքագրությունը հայտնվեց 1513-ին և Թոմաս Մորի գրչի արդյունքն էր. հետագայում սա ընդգրկվեց Հոլինշեդի քրոնիկի մեջ և դարձավ Շեքսպիրի հիմնական սկզբնաղբյուրը: Ռիչարդ Երրորդին Մորի տված գնահատությունը՝ որպես արյունարբու ոճրագործի, ինքնակոչի ու բռնապետի, դրվեց Յորքերի գերդաստանից ելած վերջին անգլիական թագավորի կերպարի շեքսպիրյան մեկնաբանման հիմքում:

Գլխավոր հերոսին առավել լրիվ բնութագրելու ձգտումը թելադրել է պիեսի կոնֆլիկտի յուրակերպ կառուցում: Եթե չհաշվենք այրի թագուհու՝ Մարգարիտի և Յորքերի գերդաստանի ներկայացուցիչների թշնամանքը, որը էական ազդեցություն չի ունենում սյուժեի զարգացման վրա, ապա քրոնիկի հիմնական բովանդակությունը Ռիչարդի բախումն է փաստորեն մյուս բոլոր պերսոնաժների հետ: Պիեսի կոմպոզիցիայի այս առանձնահատկությունը թույլ է տվել, որ լիապես դրսևորվի Շեքսպիրի ռեալիստական մեթոդի այն կարևորագույն հատկանիշը, որը Բելինսկին բնորոշել է որպես մարդու ներքին վերլուծություն՝ «նրա հոգու և սրտի բոլոր ծալքերով»[25] հանդերձ: Հենց Ռիչարդ Երրորդի պատկերման մեջ էր, որ Շեքսպիրը առաջին անգամ կարողացավ կուռ գեղարվեստական կերպարի մեջ միավորել հերոսի հոգեբանական և քաղաքական բնութագրման տարրերը: Բացի այդ, «Ռիչարդ Երրորդը» մեծ դրամատուրգի առաջին գործն էր, որ բացահայտեց հերոսի զարգացումը պատկերելու և այդ զարգացման օրինաչափությունները բացատրելու շեքսպիրյան սքանչելի վարպետությունը:

Ռիչարդ Գլոստերի պատմությունը Շեքսպիրի պատկերմամբ ամենայն որոշակիությամբ բաժանվում է երկու փուլի: Մեկը, որ ներկայացնում է Գլոստերի պայքարը անգլիական թագի համար և կազմում է պիեսի առաջին երեք արարվածի բովանդակությունը, ասես Ռիչարդի կերպարի զարգացման վերընթաց ճյուղն է. երկրորդն սկսվում է այն պահից, երբ Ռիչարդը զավթում է գերագույն իշխանությունը երկրում, և կարող է կոչվել կերպարի զարգացման վայրընթաց ճյուղ:

Առաջին երեք արարվածում Ռիչարդը այնպես է տիրում նախաձեռնությանը, որ նրան իրավամբ կարելի է անվանել հանդիսատեսի աչքի առաջ ծավալվող արյունալի ողբերգության հեղինակ: Միայն Էդվարդի մահն է, որ չի կարելի բացատրել որպես Ռիչարդի մեքենայությունների հետևանք, թեպետ այդ մահն էլ, թերևս, մոտեցվել էր այն ցնցումով, որ ապրել էր հիվանդ արքան Կլարենսի մահվան լուրն առնելով այն ժամանակ, երբ ինքն արդեն չեղյալ էր հայտարարել ավելի վաղ արձակած հրամանը եղբորը մահապատժի ենթարկելու վերաբերյալ: Այնուամենայնիվ, մնացած բոլոր իրադարձությունները՝ ամուսնությունը Աննայի հետ, Կլարենսի սպանությունը, հաշվեհարդարը թագուհու ազգականների հետ, Էդվարդի

ուղղակի ժառանգների բանտարկությունը Թաուերում և դրանց հաջորդող սպանությունները, պրովոկացիան, որի հետևանքով կատաֆնարան է բարձրանում Հեստինգսը և, վերջապես, Ռիչարդի թագավոր օծվելը,—ընթանում են Գլոստերի չարագործ մտքի մշակած հստակ ծրագրով:

Թագին տիրելու համար մղվող պայքարում լիակատար բացահայտվում է Ռիչարդի դերասանական կերպարանափոխման ընդունակությունը, մի հատկանիշ. որ վաղուց ի վեր իր վրա է հրավիրել ինչպես քննադատների, այնպես էլ, առաջին հերթին, այդ դերը խաղացողների ուշադրությունը: Ռիչարդի արտիստիզմը հատկապես ակներև է դառնում այն տեսարաններում, որ հաջողության հասնելու համար հարկավոր է հակառակորդներից թաքցնել իրական նպատակները: Իսկ երբ հանդիպում է իր հավատարիմ կամ ժամանակավոր դաշնակիցներին,—Բուկինգեմ ազգականներր լինեն դրանք թե Հեստինգսը, նվիրված վասալներ լինեն, ինչպես սանենք՝ Քետսբին, թե վարձու մարդասպաններ,—նա գործում է փորձված ռեժիսյորի պես, որը իր համախոհներին մանրամասն բացատրում է, թե ինչպես պետք է խաղան իրենց դերը առաջիկա արյունալի փարսի յուրաքանչյուր տեսարանում: Վերջապես, մնալով մեն-մենակ ինքն իր հետ և հանգիստ ցինիզմով վերլուծելով սեփական նպատակադրումները, կշռելով այս կամ այն արարքի հնարավոր հետևանքները, Գլոստերը դրանով իսկ բացահայտ ցուցադրում է հանդիսատեսին, որ հենց իր կամքով են թելադրվում գլխապտույտ արագությամբ իրար հաջորդող արյունալի իրադարձությունները:

Ռիչարդ Գլոստերը դեռևս «Հենրի Վեցերորդի» երրորդ մասում հայտարարում է, որ ինքը կարող է դաս տալ նույնիսկ նրան՝ «ոճրագործ» Մաքիավելիին (I can... set the murderous Machiavel to school): Իսկ իր անունը կրող պիեսում նա, եղիսաբեթյան ժամանակների անգլիացիների պատկերացմամբ, գործում է իսկական «մաքիավելականի» նման: Բնութագրելով միջնադարի և Վերածնության դարաշրջանի սահմանագլխին ծագած այն սոցիալական տիպը, որին ժամանակակիցները անվանում էին «մաքիավելական», պրոֆ. Դ. Ֆ. Դանբին նկատում է. «Հասարակությունը առաջ էր գնում, համոզված, որ «կարեկցանքը, սերն ու ակնածանքը» անտեղի են: «Մաքիավելականի» առավելությունն էլ հենց այն է, որ նա առաջինը նկատեց այդ և առաջինը վերանայեց **մարդ** գաղափարը, որպեսզի ինքը դառնա առավել կենսունակ հասարակական կենդանի: «Մաքիավելականը» նորմից շեղվում է լոկ այն իմաստով, որ գիտակցված ծրագրով է անում այն, ինչ մնացածը անում են, ենթարկվելով սոցիալական սովորույթներին: Նա էլ հենց ավելի մեծ հաջողության է հասնում, քան մյուս բոլորը»[26]:

Ինկապես, եթե մտաբերենք վաղ տեռորալոգիայում Շեքսպիրի նկարագրած իրադարձությունները, ապա առանց մեծ դժվարության կնկատենք, որ այն մարդիկ, որոնց շրջապատում ձևավորվում է Ռիչարդ Գլոստերի կերպարը, վերջին քրոնիկի հերոսից ըստ էության տարբերվում են լոկ նրանով, որ Ռիչարդին հատուկ գծերը նրանց մեջ արտահայտված են պակաս ուժգնությամբ: Խորամանկ, փառամոլ

Յորքը կամ նրան ոչնչով չզիջող դաժան թագուհի Մարգարիտը, ուխտադրուժ Կլարենսը, որ պատրաստ է հանդես գալ եղբայրների դեմ, կամ հեշտասեր, եսամոլ Էդվարդը, շահասեր բանսարկու Բուկինգեմը կամ ախոյանների նկատմամբ տածած թշնամանքից կուրացած ինքնագոհ Հեստինգսը,—բոլորը պատրաստ են ուրանալ, խաբել, ոճիր գործել հանուն անձնական նպատակների: Սակայն Ռիչարդը բոլորից ավելի խելոք է և ուժեղ. նա բոլորից ավելի սթափ է մշակում ծրագիրը և, իսկապես, սքանչելի համառությամբ ու հնարամտությամբ կենսագործում այն:

Այն արդյունավետությունը, որով Ռիչարդը միաժամանակ ազդում է իրեն շրջապատող մարդկանց վրա, ծնունդ է տվել շեքսպիրագիտության մեջ լայնորեն տարածված մի կարծիքի, ըստ որի այդ պիեսի հերոսը առհասարակ չի բախվում արժանի հակառակորդների հետ: Այս տեսակետը հիմնվում է գլխավորապես այն բանի վրա, որ գահի համար մղած պայքարում Ռիչարդը ոչ մի անգամ, գոնե ժամանակավոր, պարտություն չի կրում: Եվ եթե քրոնիկի գործողությունը ավարտվեր Ռիչարդի գահ բարձրանալով, վերը շարադրված հայացքը պերսոնաժների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին անտարակույս ճիշտ կլիներ:

Բայց սկսած հենց այն պահից, երբ Ռիչարդն արդեն փաստորեն տիրել է թագին և նախքան այն գլխին դնելը, պետք է կատարի մի շարք ձևականություններ, առաջին անգամ հանդիպում է մի դիմադրության, որը հաղթահարել ի վիճակի չէ: Խոսքը Ռիչարդին թագավոր կարգելու նկատմամբ ժողովրդի հանդես բերած վերաբերմունքի մասին է: Ճշտիվ հետևելով սկզբնաղբյուրին, Շեքսպիրը ցույց է տալիս, որ ոչ Բուկինգեմի պերճախոսությունը, ոչ քաղաքի գլխավոր դատավորի ելույթը չեն համոզել լոնդոնցիներին, թե դուքս Գլոստերը գահի արժանավոր թեկնածու է: Ժողովուրդը, որ պիեսում հանդես է գալիս որպես կոլեկտիվ գործող անձ, ոչ թե պարզապես Ռիչարդի հակառակորդն է, այլ հակառակորդներից առաջինն է, որին խաբել Ռիչարդին չի հաջողվում: Ապագա արքային, իր սպասավորի՝ Բուկինգեմի հետ մնում է ձևացնել, թե իրենց հաջողվեց կոտրել քաղաքացիների լուռ դիմադրությունը: Այս նշանակալից իրադարձությունից անմիջապես հետո պիեսում ստեղծվում է ուժերի նոր հարաբերակցություն և անուղղելի փոփոխություններ են կատարվում Ռիչարդի բնավորության մեջ:

Այդ փոփոխությունները սկսում են զգացվել արդեն չորրորդ արարվածի երկրորդ պատկերում, երբ Ռիչարդը առաջին անգամ հայտնվում է թագը գլխին և որտեղ ծավալվում է կոնֆլիկտը նրա և Բուկինգեմի միջև, որը չի համարձակվում մասնակցել արքայազունների սպանությանը, և դրանով վաստակում է Ռիչարդի դժգոհությունը:

Այս տեսարանը հաճախ փակուղու առջև է կանգնեցնում ուսումնասիրողներին և հատկապես Բուկինգեմի դերակատարներին: Ինչպե՞ս բացատրել այն, որ խորամանկ պալատականը, նա, ով ամենից լավ է ճանաչում Ռիչարդի բնավորությունը, ամենաանպատեհ ժամին, երբ Ռիչարդը իր ողջ վարքագծով ցույց է տալիս, որ անտրամադիր է ու միտք չունի խոսելու Բուկինգեմի հետ, համառորեն խնդրում է կատարել

վաղեմի խոստումը: Ի՞նչ է սա՝ հիմարությու՞ն, թե՞ դիտողականության խափառ բաց կայություն: Հազիվ թե: Ավելի շուտ պետք է ենթադրել, որ Բուկինգհ զգալով արքայի վերաբերմունքի փոփոխությունը իր նկատմամբ, դիմում է նա խնդիրքով, ջանալով վերջնականապես համոզվել՝ կատարվե՞լ է իրոք այդ փոփոխությունը: Ռիչարդի հետ ունեցած զրույցը Բուկինգհեմի մեջ ոչ մի կասկած չի թողնում և նա լքում է արքային, շտապելով պատսպարվել իր տոհմական ամրոցում: Իսկ ի չարդը իր մի ժամանակ կարչուն ձեռքերից բաց է թողնում նրան, թեև, Բուկինգհեմ յավ ճանաչելով, պետք է որ առանց ջանքի հասկանար, որ այսուհետև նա դառնալու է իր ոխերիմ թշնամին: Եվ, իսկապես, հետագայում նախաձեռնությունը արքայի Բուկինգհեմի հարաբերությունների մեջ անցնում է վերջինիս կողմը: Ճիշտ է, միաժամանակ անց Ռիչարդին հաջողվում է պատժել Բուկինգհեմին, սակայն նա արքայի ձեռքն է ընկնում զորքերի խուճապի պատճառ դարձած բնական աղետի շնորհիվ: Այսպիսով, հաղթանակը Բուկինգհեմի հանդեպ, ի տարբերություն նախկին հաջողությունների, Ռիչարդի մշակած և իրագործած ծրագրի արդյունքը չէ:

Ուժերի հարաբերակցության մեջ տեղի ունեցած փոփոխությունը շատ ակնառու ակներև է բացահայտվում Ռիչարդի երկրորդ խնամախոսության ժամանակ, երբ արքան, օգնության կանչելով իր ողջ պերճախոսությունն ու դերասանական տաղանդը, համոզում է Եղիսաբեթին, որ իրեն կնության տա դուստրը: Այս տեսարանը յուրատիպ ու շատ նշանակալի զուգահեռ է կազմում Աննային սիրահետելու տեսարանի հետ (I, 2), որ պատկանում է Շեքսպիրի դրամատուրգիական վարպետության ճանաչված գլուխգործոցների թվին: Աննայի և Գլոստերի վեճը դիտող հանդիսատեսին ցնցում է կաղ դքսի ներքին ջախջախիչ ուժը, մի անձնավորության, որը թե հիպնոտիկ ազդեցություն է գործում Աննայի վրա և կոտրում է նրա դիմադրությունը:

Իսկ Եղիսաբեթի հետ խոսելիս Ռիչարդը արդեն զուրկ է նախկին ուժից: Բոլոր այն չէ, որ Եղիսաբեթը հանդես է գալիս որպես Ռիչարդի արժանի հակառակորդ բառիս անտիկ իմաստով: Խնամախոսության բուն արդյունքը չի կարելի նույնիսկ «կես—հաջողություն» անվանել, մի բան, որ հաճախ անում են շեքսպիրագետները: Ճիշտ է, Եղիսաբեթի հեռանալուց հետո, Ռիչարդը իր երևութական հաղթանակով ուրախացած, այրի թագուհուն անվանում է «թույլ, անմիտ, դատարկ ու հեղհեղուկ կին» (Relenting fool, and shallow, changing woman; IV, 4, 431): Բայց իրականում, Եղիսաբեթը խուսափողաբար հուսադրելով Ռիչարդին, ցանկանում է ժամանակ շահել դստերը փրկելու համար: Իսկ Ռիչարդը պարտություն է կրում ավելին, նա բավականաչափ խելք ու դիտողականություն չի ունենում հասկանալու, որ իրեն խաբում են:

Ճիշտ այդպես էլ արքայի և լորդ Ստենլիի բախումը ավարտվում է վերջինի հաղթությամբ. Ստենլիին հաջողվում է միաժամանակ հեռացնել իրենից Ռիչարդի կասկածները, իսկ հետո վճռական պահին ոչ միայն անցնում է Ռիչմոնդի կողմը

այն փրկում է որդուն: Ասենք, Ռիչմոնդի դրոշի ներքո համախմբված լորդերի հաղթանակն ինքն էլ խոսում է այն մասին, որ վերջում Ռիչարդը կորցրել է իրադարձությունները ղեկավարելու իր ընդունակությունը և չի կարող այլևս կիրառել նախասիրած հնարը՝ «Բաժանի՛ր և տիրի՛ր»: Իսկ գահ բարձրացած Ռիչարդի բոլոր նույկալի ոճիրների մեջ բնավ չկա այն տիտանիզմը, որը հատուկ էր նրա կերպարին պիեսի առաջին երեք արարվածներում:

Ի՞նչ խոսք, Ռիչարդի դեմ պայքարելիս նրա թշնամիները դառնում են ավելի խորամանկ, զգույշ ու հնարամիտ: Սակայն չարագործ արքայի պարտության մեջ վերջին դերը չի խաղում և Ռիչարդի ներքին փոփոխությունը: Նրա հոգու ընկճվածությունն արտահայտված է ոչ միայն զղջում հիշեցնող այն խոսքերում, որ Ռիչարդն արտասանում է Բոսվորտի ճակատամարտին նախորդող գիշերը (V, 3, 178—206): Թերևս այդ ընկճումը առավել համոզիչ արտահայտվում է այն բեմական միջոցներով, որոնցով Շեքսպիրը բնութագրում է Ռիչարդի վարքագիծը Եղիսաբեթի հետ ունեցած երկար խոսակցությունից հետո: Ռիչմոնդի ներխուժման լուրն առնելով, նա կորցնում է ինքնատիրապետումը, տալիս է հակասական հրամաններ, չեղյալ է հայտարարում և նորից վերականգնում իր իսկ կարգադրությունները, լուտանք է տեղում իր ամենահավատարիմ օգնականների գլխին, մոլուցքի մեջ գանահարում է վատ լուր բերած սուրհանդակին: Այդ պահին Ռիչարդը ավելի շատ նման է մի գիշատչի, որն անուժ ու անհույս ցասումով պատեպատ է խփվում վանդակի մեջ: Նույնիսկ երբ վերջին մարտի պահին անահ կռվում է իրեն ամեն կողմից նեղող թշնամիների դեմ, նրա արիությունը որակապես տարբեր է այն հանդուգն համարձակությունից, որով իրականացնում էր իր մտադրությունները. հիմա արդեն դա հուսահատ քաջություն է:

Այն բանում, որ Ռիչարդի ներքին ճգնաժամն սկսվում է թագավոր դառնալուց հետո, պարզորոշ դրսևորում է շեքսպիրյան վաղ դրամատուրգիային բնորոշ հակաբռնատիրական դիրքավորումը: Իշխանության անզուսպ տենչով բռնված, շրջապատից կամքի ուժով, խիզախությամբ, խելքով, խորամանկությամբ, դաժանությամբ ու երեսպաշտությամբ բարձր կանգնելով, կարելի է ասպարեզից հեռացնել նրանց, ովքեր խանգարում են քեզ տիրելու գահին: Բայց անկարելի է ոչնչացնել բոլոր նրանց, ովքեր դժգոհ են բռնակալից, քանի որ բռնապետությունն ինքը ամեն օր ու ամեն ժամ բազմապատկում է իր հակառակորդների թիվը: Իսկ խաբեությունից ու սպանությունից զատ, բռնակալը ուրիշ միջոցների չի կարող դիմել՝ թե՛ իրադարձությունների ծավալման և թե՛ հենց իր՝ բռնակալի բնավորության զարգացման տրամաբանությամբ:

Դրա համար էլ Ռիչարդը հազիվ իր փառասիրական իղձերի իրականացմանը հասած՝ սկսում է զգալ իր գահի երերուն լինելը: Նա այս ու այն կողմ է ընկնում, իր իշխանությունը ամրապնդող միջոցներ որոնելով և չի գտնում այդ միջոցները: Նա կորցնում է վստահությունը իր անկասելի հզորության նկատմամբ, զրկվում շրջապատի վրա ունեցած վաղեմի ազդեցությունից և,—թեկուզ բարձր պահած

գլխով,—ընդառաջ գնում անփառունակ մահին: Եվ դրա համար էլ Ռիչմոնդի հաղթանակը պարզապես ավելի ուժեղ զորավարի հաղթանակը չէ թույլի նկատմամբ. Ռիչարդի ներքին ճգնաժամը նրա պարտությունը դարձնում է օրինաչափ և անխուսափելի:

Հակաբռնակալական պաթոսը, որով ամբողջությամբ ներծծված է «Ռիչարդ Երրորդը», Շեքսպիրին տրամաբանորեն հանգեցրեց դրական միապետի կերպար ստեղծելու փորձին, միապետ, որ պիտի լիներ ստոր ու դաժան ինքնակալի հակապատկերը: Քրոնիկում այդպիսին է Ռիչմոնդը՝ Թյուդորների թագավորական տան հիմնադիրը, որը գահ է բարձրացել Հենրի Յոթերորդ անունով: Որպես գեղարվեստական կերպար, այս միանգամայն թույլ ու պայմանական գծված պերսոնաժը առանձին հետաքրքրություն չի ներկայացնում: Սակայն կոմպոզիցիոն ու գաղափարական իմաստով Ռիչմոնդին հատկացված դերը էական նշանակություն ունի Շեքսպիրի պատմական ու քաղաքական հայացքները հասկանալու համար:

Արդեն իսկ ժողովրդի սպասողական, լարված լռությունը Ռիչարդին արքա կարգելու տեսարանում կարևորագույն պահ է քրոնիկի գործողության զարգացման մեջ, որը ցուցադրում է ոչ միայն Ռիչարդի մեքենայությունների վճռական դատապարտումը, այլև անհնարինությունը թագակիր ոճրագործների շուրջը համախմբել երկրի բնակչության մեծամասնությանը: Ռիչարդի բանակի հետագա արագ տրոհումը և, ընդհակառակը, Ռիչմոնդի դրոշի ներքո արքային հակադրվող բոլոր ուժերի կենտրոնացումը վկայում են, որ ազգի ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար ձգող կենտրոն կարող է դառնալ լոկ այն մարդը, որը անգլիացիներին կներկայանա որպես բռնակալությունը տապալող, փրկիչ:

Իր վերջին ճառում Ռիչմոնդի հռչակած ծրագիրը, որը դեպի նա է գրավում բոլոր նրանց, ովքեր վրդովված են արյունարբու բռնակալի դեմ, ընդգրկում է այնպիսի դրույթներ՝ երկրի ազատագրում կամայականությունից, ողորմածություն պարտվածների նկատմամբ և հավերժ խաղաղության ապահովում: Հենց սրա համար է, որ Ռիչմոնդի հաղթանակը ընկալվում է ոչ թե որպես թագավորական տան թշնամի ճյուղերից մեկի հաղթանակ, այլ որպես արդարության ու բարության գաղափարի հաղթանակ: «Ռիչարդ Երրորդի» եզրափակիչ տեսարանը միայն մի քրոնիկի կոնֆլիկտի հանգուցալուծումը չէ. այն միաժամանակ ծառայում է որպես Շեքսպիրի առաջին պատմական տետրալոգիայի վերջաբան: Այդ վերջաբանը լավատեսական հեռապատկեր է ստեղծում քրոնիկների ողջ վաղ շարքի համար, թույլ տալով ամբողջ կեսդար Անգլիան ծվատող եղբայրասպան պատերազմը ընկալել որպես մի իրադարձություն, որը մնացել է անցյալում և իր տեղը զիջել նոր, խաղաղված Անգլիային:

3

Շեքսպիրյան քրոնիկների ուշ շարքը կազմող պիեսները՝ «Ռիչարդ Երկրորդը», «Հենրի Չորրորդի» երկու մասը և «Հենրի Հինգերորդը» սյուժեներով կապված են

իրար, թերևս, շատ ավելի սերտորեն, քան առաջին տետրալոգիայի պիեսները: Ռիչարդ Երկրորդից պատմող քրոնիկի ելակետը թագավորի և Հենրի Բոլինբրոկի կոնֆլիկտը, որ ծագել է 1398 թվականին. իսկ «Հենրի Հինգերորդն» ավարտող իրադարձությունը Հենրի Հինգերորդի խնամախոսությունն է ֆրանսիական արքայադուստր Եկատերինա Վալուային, 1420 թվականին: Այսպիսով, Շեքսպիրի չորս ուշ քրոնիկները ընդգրկում են Անգլիայի պատմության ընդամենը երկու տասնամյակ:

Տասնչորսերորդ և տասնհինգերորդ դարերի սահմանագլուխը Անգլիայի համար միանգամայն յուրջ ու լարված ժամանակաշրջան էր: Տասնչորսերորդ դարի ընթացքում ֆեոդալները, որոնք ձգտում էին ամեն կերպ սաստկացնել ճորտերի շահագործումը, հանդիպում էին գյուղացիության գնալով ակտիվացող դիմադրությանը: Բազմաթիվ գյուղացիական ապստամբությունները և, ամենից առաջ, 1381-ի գյուղացիական պատերազմը Ուոտ Թայլերի գլխավորությամբ, սակ ճորտերի պատասխանը չէին սաստկացող ճնշմանը: Այն ժամանակվա ունևոր գյուղացիության պատկառելի շերտեր արդեն կարող էին զգալի տնտեսական դիմադրություն ցույց տալ հարուստ ֆեոդալներին. դրա համար էլ ապստամբությունների ժամանակ նրանք ձգտում էին իրականացնել իրենց որոշակի քաղաքական պահանջները, որոնց մեջ գլխավորը պայքարն էր ճորտային կախյալ վիճակը վերացնելու համար, վիճակ, որ խանգարում էր գյուղացիներին հաջող կերպով մրցակցել ֆեոդալների հետ հացի շուկայում: Թեպետ Ուոտ Թայլերի ապստամբությունը ջախջախվեց, Անգլիայի հետագա զարգացումը շուտով ապացուցեց գյուղացիների առաջ քաշած պահանջների պատմական առաջադիմականությունը. XIV դարի վերջին տասնամյակների ընթացքում և XV դարի սկզբում տապալվեց կոռային սիստեմը, իսկ XV դարի ընթացքում անգլիական գյուղացիները լրիվ թոթափեցին ճորտական կախյալ վիճակը:

Գյուղացիության դրության փոփոխությունը, ինչպես նաև քաղաքների աճը և Լոնդոնի վերելքը, որը դարձավ «ողջ երկրի արդյունաբերական ու առևտրական կենտրոնը»[27], XV դարում վճռական ազդեցություն ունեցան Անգլիայի պատմության ընթացքի վրա: Նրանք պայմանավորեցին ֆեոդալական կարգի լիակատար անկումը և կազմեցին այն հիմքը, որի վրա XV դարի վերջում իրականացավ Անգլիայի միավորումը որպես ազգային պետություն:

Այս սոցիալական խոր տեղաշարժերի հետ միաժամանակ սաստկանում էր արքունական վերնախավի քայքայումը, որ հատկապես բացահայտ դրսևորվեց Ռիչարդ Երկրորդի գահակալության տարիներին: Բնութագրելով Ռիչարդի արքունիքը և իրեն՝ Ռիչարդին, Հոլինշեդը թագավորի վերասերումը բացատրում էր նրա վրա շրջապատի ունեցած ազդեցությամբ: Ահա՛ թե ինչ է գրում Հոլինշեդը. «Նա շվայտ էր, փառասեր ու շատ էր հակված դեպի մարմնական վայելքները... Ավելին, պալատում և հատկապես արքայի մեջ լինում թագավորում էր տոփանքի, անառակության ու ապականության ոգին»[28]:

Ինքնիշխան ու անհեռատես միապետը հասավ այն բանին, որ իր դեմ հանեց ոչ միայն ֆեոդալներին, որոնց վրդովել էին ունեցվածքի յուրացումով ուղեկցվող բռնությունները, այլև բնակչության լայն խավերին, որոնք տառապում էին Ֆրանսիայի դեմ մղվող ապարդյուն պատերազմը շարունակելու և նոր արքունիք պահելու համար գանձվող անընդհատ աճող տուրքերից: Եվ ահա, երբ Ռիչարդի կողմից արտաքսված Հենրի Բոլինբրոկը 1399-ին ափ է իջնում Անգլիայում, առանց դժվարության իր կողմն է գրավում բոլոր նրանց, ովքեր դժգոհ էին Ռիչարդից: Եվ արքան փաստորեն մնում է միայնակ: Զորքից լքված՝ Ռիչարդը հանձնվում է Բոլինբրոկին, որը մտնում է Լոնդոն ու հռչակվում որպես արքա՝ Հենրի Չորրորդ:

Ռիչարդի հասակակից Հենրի Բոլինբրոկը Ռիչարդի լրիվ հակապատկերն էր: Հենրին խելոք, ծածկամիտ և զգուշավոր քաղաքագետ էր, որն իր պետական գործունեության մեջ հենվում էր համայնքների պալատի, քաղաքների և մանր ասպետականության վրա: Սակայն, ձգտելով ամրապնդել թագավորական իշխանությունը, նա, հասկանալի է, չէր կարող գահը նվաճելու գործում իրեն օգնած ֆեոդալներին վարձատրել նրանց ուզածի չափով: Բացի այդ, նրա թագատիրական իրավունքները ավելի քան խախուտ էին: Եվ ահա իր տիրապետության գրեթե ողջ ընթացքում Հենրին հարկադրված էր արյունալի պայքար մղել ֆեոդալների դեմ, որը և թույլ չէր տալիս նրան ակտիվ արտաքին քաղաքականություն վարել: Իր իշխանության վերջին տարիներին ծանր հիվանդ Հենրի Չորրորդը առհասարակ քիչ էր մասնակցում քաղաքական գործերին և պետության փաստական ղեկավարը նրա ավագ որդին էր, որը և հոր մահից հետո, 1413-ին Անգլիայի գահը բարձրացավ որպես Հենրի Հինգերորդ:

Այս թագավորը շատ տեսակետներից միանգամայն ուշագրավ անձնավորություն է: Հենրին ծնվել է 1387 թ., Մոնմուտում, Ուելսի սահմանից ոչ հեռու, և կրթություն է ստացել «Թագուհու քոլեջում» իր քեռու՝ կարդինալ Բոֆորի ձեռքի տակ: Բոլինբրոկի արտաքսվելուց հետո Հենրի Մոնմուտը մնացել է Ռիչարդ Երկրորդի արքունիքում և թագավորի կողմից ասպետ ձեռնադրվել: Հոր ափ իջնելուց շատ չանցած որդին միանում է նրան և Հենրի Չորրորդի գահ բարձրանալուց հետո ստանում Ուելսի արքայազնի, Լանկաստերի և Ակվիտանիայի դքսի տիտղոսները: Արդեն 1400 թվականին նա մասնակցում է վալլերի դեմ Հենրի Չորրորդի կազմակերպած արշավանքին և տարիներ շարունակ կռվում է նրանց պարագլխի՝ Օուեն Գլենդովերի դեմ: Իր հոր թագավորության վերջում արքայազն Հենրին որոշում է սկսել արտաքին քաղաքական ավանտյուրաներ, որի համար դեռևս Հենրի Չորրորդի կենդանության օրոք փորձում է զավթել թագը: Իր արկածախնդրական պլանները Հենրի Հինգերորդը, այդ խորամանկ ու նենգ քաղաքագետն ու դաժան «կարիերիստը»[27], կարողացավ լրիվ կենսագործել միայն 1413 թ. հետո: Անխնա ճնշելով դեմոկրատական օպոզիցիան, որ հանդես էր եկել «լոլարդների» կրոնական աղանդի դրոշի ներքո, գազանաբար հաշվեհարդար տեսնելով իր նախկին բարեկամի՝ լոլարդ-

ների պարագլուխ սըր Ջոն Օլդքասլի, ինչպես նաև իրեն գահընկեց անելու փորձ արած դավադիր լորդերի հետ, Հենրի Հինգերորդը 1415-ին ձեռնարկում է արդեն հիշատակված արշավանքը ֆրանսիացիների դեմ, որը պսակվում է Ազինկուրի մոտ անգլիացիների տարած նշանավոր հաղթանակով, մի քանի տարի անց՝ Հենրին արդեն ամուսնանում է ֆրանսիական արքայադստեր հետ և հռչակվում ֆրանսիական գահաժառանգ:

Նույնիսկ նման հակիրճ պատմական տեղեկանքից հետո, համեմատելով ուշ տետրալոգիայում Շեքսպիրի վերարտադրած պատմական անցքերը, դժվար չէ նկատել դրամատուրգի տարբեր վերաբերմունքը պատմական նյութի նկատմամբ: Որոշ դեպքերում Շեքսպիրը միանգամայն ճշգրիտ վերարտադրում է պատմական իրադարձությունների ոգին ու հենքը և տալիս առանձին գործող անձանց օբյեկտիվ բնութագրությունը, իսկ ուրիշ դեպքերում էլ, հատկապես արքայազն Հենրիին և նրա բարեկամ սըր Ջոն Ֆալստաֆին պատկերելիս (Ֆալստաֆի հեռավոր նախատիպը լոլարդների առաջնորդ Օլդքասլն էր), գրողն զգացել է ավանդույթի շոշափելի ազդեցությունը, վերաիմաստավորելով պատմական հերոսների բնավորությունը: Ի դեպ, այդ ավանդույթը իր կնիքն է դրել և Շեքսպիրին հայտնի պատմական սկզբնաղբյուրների վրա: Սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում դրամատուրգը պատմական իրադարձությունները և գործող անձանց բնութագրման տարրերը խմբավորել է այն հաշվով, որպեսզի առավելագույնս ցայտուն բացահայտի սեփական հայացքները միջնադարի ճգնաժամի դարաշրջանում անգլիական հասարակության շարժումը պայմանավորող միտումների վերաբերյալ:

* * *

«Ռիչարդ Երկրորդի» ժանրային առանձնահատկությունը որոշելիս շատ հետազոտողներ այդ պիեսը մոտեցնում են «Ռիչարդ Երրորդին»: Այս մոտեցման հիմքը գլխավոր գործող անձանց բնավորության յուրակերպ մշակումն է, այն հատուկ տեղը, որ նրանք զբաղեցնում են պիեսում և որը թույլ է տալիս ասել, թե այդ քրոնիկները մյուսներից ավելի են հարում ողբերգության ժանրին: Իրոք, ուրիշ ոչ մի քրոնիկում արքաների կերպարները այդքան տիրաբար իրենց վրա չեն գամում հանդիսատեսի ուշադրությունը: Զույգ Ռիչարդների ճակատագիրը օժտված է իսկական տրագիզմի հատկություններով: Բայց, դրա հետ մեկտեղ, այդ կերպարների մեջ կան և շատ էական տարբերություններ:

«Ռիչարդ Երրորդ» պիեսի մեծ մասում նախաձեռնությունը Ռիչարդ Երրորդինն է: Իսկ «Ռիչարդ Երկրորդում» արքայի քմահաճույքը՝ Բոլինբրոկի արտաքսումը և նրա հոր ժառանգության բռնագրավումը, գործողությանը տալիս են լոկ նախնական մղում. հետագայում նախաձեռնությունը արքայի և նրա գլխավոր հակառակորդի՝ Բոլինբրոկի բախման ընթացքում, լրիվ անցնում է վերջինիս կողմը: Այս բանը թույլ է տալիս Շեքսպիրին իր բոլոր ջանքերը կենտրոնացնել Ռիչարդի զարգացումն ու

փոխակերպումը պատկերելու վրա: Այդ զարգացման բացահայտումն էլ հենց դրամատուրգի ամենամանրակրկիտ ռեալիստական նվաճումն է «Ռիչարդ Երկրորդում»:

Ռիչարդի կերպարի զարգացման առաջին փուլը տևում է մինչև այն պահը, երբ արքան գիտակցում է իր թագին սպառնացող վտանգը: Այդ ժամանակ մյուս գործող անձանց կողմից Ռիչարդին տրվող բնութագրումներից երևում է, որ նրանց աչքում արքան մի երես առած, կամակոր ու սանձարձակ երիտասարդ է: Ընդ որում, պարզվում է, որ ջահել միապետի կամակորությունները իրենց բնույթով բնավ էլ անմեղ չեն: Գոնտի և դքսուհի Գլոստերի զրույցից հանդիսատեսն իմանում է, որ Ռիչարդի մեղքով է սպանվել դուքս Գլոստերը՝ իր հորեղբայրը: Իսկ Գոնտի կրքոտ հայրենասիրական մենախոսությունները, ինչպես նաև Անգլիայի ծաղկումը տենչող մյուս պերսոնաժների ռեպլիկները, վերաբերում են թագավորի՝ իրեն շողոքորթ, փչացած սիրեցյալներով շրջապատած ու իր քմահաճույքների հագեցման համար երկիրը ծախող այդ մարդու, ցասկոտ մերկացման:

Ռիչարդի արարքներին հետևելով, հանդիսատեսը հնարավորություն է ստանում անձամբ համոզվելու, որ նրա վարքագծի հիմքում ընկած են դաժանությունն ու ինքնահաճությունը: Իր մյուս հորեղբոր՝ դուքս Գոնտի հիվանդության լուրն առնելիս արքայի միակ արձագանքն այն է, որ ցինիկ անկեղծությամբ հույս է հայտնում, թե Գոնտը շուտով կմեռնի և ինքը կտիրի նրա ունեցվածքին: Ավելին, Գոնտի հետ անձամբ հանդիպելով, արքան՝ դքսի արդարացի կշտամբանքներից բորբոքված, սպառնալիքների տարափ է տեղում մահամերձ ծերունու վրա, իսկ հետո էլ ուրախությամբ ընդունում նրա մահվան լուրը:

Ռիչարդի այսօրինակ բարոյական նկարագիրը միաժամանակ դառնում է նրա բնութագիրը՝ որպես քաղաքական գործչի: Գոնտի ունեցվածքը զավթելով՝ Ռիչարդը հանդես է գալիս իբրև բռնապետ, որը խախտում է հաստատված կարգը և հաշվի չի առնում ո՛չ այն բանը, թե իր արարքները ինչ տպավորություն կթողնեն մարդկանց վրա և ո՛չ էլ այն, թե ինչ հետևանքներ կարող են ծնել:

Վերն ասվածից, իհարկե, չպետք է հապճեպ հետևություն անել, թե Ռիչարդ-միապետը, որն ականջ չի դնում պետության շահերով մտահոգվող մարդկանց և որն իրեն շրջապատել է շահամոլ սիրեցյալներով, պիեսում պատկերված է որպես քաղաքական գործունեության համար լրիվ անպետք մարդ: Ընդհակառակը, Մաուբրիին և Բոլինգբրոկին արտաքսման դատապարտելով, Ռիչարդը անում է մի քայլ, որը նրան պատիվ է բերում որպես քաղաքագետի: Նա արտաքսյալներից երդում է առնում այն մասին, որ նրանք իր դեմ ուղղված դաշն չեն կնքի: Բոլինգբրոկի վարքագծի մեջ, որը ձգտում է Անգլիայից հեռանալիս շահել ժողովրդի համակրանքը, Ռիչարդը տեսնում է վտանգավոր և հեռուն գնացող քաղաքական քայլ, որ հնարավոր սպառնալիք է պարունակում, իսկ սա նույնպես խոսում է նրա քաղաքական խորաթափանցության մասին:

Այստեղից, բնականաբար, հարց է ծագում. այդ դեպքում ինչու՞ է Ռիչարդը

առանց վարանելու յուրացնում Գոնտի կալվածքները և ունեցվածքը, դրանով իսկ խախտելով ժառանգության հաստատված կարգը: Ինչո՞ւ չի լսում Յորքին, որը հիշեցնում է նրան, թե իր միապետ լինելն իսկ արդյունք է այն բանի, որ գոյություն ունի գահաժառանգության օրենքը: Ինչո՞ւ է Ռիչարդը շրջապատում իրեն սիրեցյալներով, մի բան, որ եղիսաբեթյան շրջանի մարդկանց աչքում նույնպես միապետի ու նրա հպատակների բնական կապերի խախտում էր: Ինչո՞ւ է իշխանությունը այդ օժտված երիտասարդին այն աստիճան այլասերել, որ նրա մեջ վճռականապես տիրապետող են դարձել վատ կողմերը: Շեքսպիրը պատասխանում է այդ հարցին, պատկերելով Ռիչարդի զարգացման նոր փուլը, այն խոր ներքին ճգնաժամը, որ նա ապրում է Բոլինբրոկից պարտվելու հետևանքով:

Մինչ Ռիչարդի հոգեկան վերածնունդը պատկերելը, Շեքսպիրը ստիպում է իր հերոսին արտասանել շատ հատկանշական մի մենախոսություն (III, 2, 36—62): Պատասխանելով լորդերին, որոնք նրան դրդում են ավելի ակտիվ դիմադրություն ցույց տալ Բոլինբրոկին, արքան, փաստորեն, բացահայտում է միապետի անպատիժ լինելու համոզմունքի վրա հենված իր անհավասարակշիռ բռնակալության իրական ակունքը: Պարզվում է, որ Ռիչարդին ուղղություն տվող գաղափարը եղել է հավատը թագավորական իշխանության ծագման ու էության աստվածային բնույթի նկատմամբ: Իր թագի վրա նա տեսնում է երկնային բարեխնամության անդրադարձումները, և այդ անիրական փայլը այն աստիճան է կուրացնում նրան, որ Ռիչարդ-թագավորը կորցնում է շրջապատող իրականությունը զգաստ գնահատելու ընդունակությունը:

Ռիչարդի հետագա զարգացումը փաստորեն նրա աստիճանական սթափումն է, որը չափից դուրս ուշ է սկսվում: Լսելով իր համախոհների հաղորդումները, որոնցից պարզվում է, որ ինքը պարտություն էր կրել արդեն մինչև Բոլինբրոկի հետ բաց մարտի դուրս գալը, Ռիչարդը դեռ միաժամանակ փորձում է խրախուսել նրանց, ասելով, թե արքայի ուժը բուն «արքա» անվան մեջ է: Սակայն Շեքսպիրը, ինչպես ցույց է տալիս նրա բովանդակ դրամատուրգիան, հիանալի հասկանում է, որ անունը լոկ բառ է և ոչ թե իրողություն, և Ռիչարդի ճակատագիրը ծառայում է որպես դրա ամենաանհերքելի ապացույցներից մեկը: Իրեն ու իր կողմնակիցներին ոգեշնչելու վերջին փորձերի հետ միաժամանակ Ռիչարդը ավելի ու ավելի հստակորեն է սկսում գիտակցել, որ թագավորը նույնպիսի մարդ է, ինչպես և բոլորը: Իսկ դա նշանակում է, որ Ռիչարդի կուրության շրջանը անցել է:

Ոտք դնելով դեպի հուսահատություն տանող ճանապարհը, Ռիչարդը նոր մարդ է դառնում: Ըմբռնելով, որ Բոլինբրոկին դիմադրելը անօգուտ է, Ռիչարդը արձակում է իր զորքը: Ըստ Հոլինշեդի, արքան ճակատամարտից առաջ ծածուկ լքում է բանակը, մի բան, որ կարող էր վկայել նրա լոկ վախկոտությունը: Իսկ Շեքսպիրի մոտ Ռիչարդը իր զինվորներին արձակում է որպեսզի փրկի նրանց անիմաստ զոհվելուց, և ազնիվ անձնուրացությամբ ընդառաջ է գնում սեփական կործանմանը:

Փոխվում է նաև Ռիչարդի աշխարհընկալումը: Որքան մոտենում է վախճանը, նա դյուրագրգիռ ու անհավասարակշիռ բռնապետից վերածվում է փիլիսոփայի: Սեփական դատապարտվածության զգացումը նրա գիտակցության մեջ միախառնվում է երկրի պատմական զարգացումը պայմանավորող միտումների խոր ըմբռնման հետ. ըստ Ռիչարդի ենթադրության, որի իրավացիությունը հաստատեց դեպքերի հետագա ընթացքը, Բոլինբրոկի կողմից գահը զավթելը պետք է առաջ բերեր երկպառակտիչ պատերազմներ: Իսկ իր անկումը Ռիչարդը բացատրում է որպես հետևանք այն բանի, որ ինքը չէր լսել ժամանակի ձայնը և դրա համար զոհ էր դարձել պատմական օրինաչափության, որն անողոքաբար հարթում է իր ուղին, անկախ առանձին տիրակալների սուբյեկտիվ մտադրություններից:

Բարոյական վերածնունդը Ռիչարդին դարձնում է հանդիսատեսի համակրանքը շահող ողբերգական հերոս: Այսպես, պիեսի մեջ բացահայտվում է այն կարևորագույն շեքսպիրյան միտքը, որ բռնակալը չի կարող լինել հերոս. միայն սեփական իշխանության շլացումից ազատվելով, նա կարող է մարդ դառնալ՝ այդ բառի ճշմարիտ իմաստով:

Պիեսի քաղաքական պրոբլեմատիկային վերջնական պարզություն է բերում Բոլինբրոկի հաղթանակի պատճառների բացատրությունը: Այդ պատճառները հասկանալու համար առաջնային նշանակություն ունի ծերունի Ջոն Գոնտի կերպարը:

Վեհանձն Լանկաստերի դքսի կերպարը համարձակ կարելի է կոչել Շեքսպիրի ստեղծագործական երևակայության արդյունք: Պատմական Գոնտը եղել է Անգլիայի կողոպտմանը մասնակից ամենաշահամոլ գիշատիչներից մեկը: Իսկ պիեսում Գոնտը մարմնավորում է բարձր հայրենասիրության գաղափարը: Շատ հատկանշական է, որ մահվան անկողնում Գոնտը չի հիշում օտարության մեջ դեգերող իր սիրասուն որդուն՝ Բոլինբրոկին: Չցանկանալով Ռիչարդին կշտամբել իր ընտանիքի անդամների նկատմամբ ունեցած անարդար վերաբերմունքի համար, Գոնտը, ասես մոտեցող մահվան գիտակցությունից աճապարելով, ուզում է անել ամենագլխավորը՝ թագավորին հասցնել այն միտքը, որ նա իր վարած քաղաքականությամբ Անգլիան տանում է դեպի կործանում: Սակայն բորբոքված Ռիչարդը ականջի ետև է գցում Գոնտի հայրենասիրական մենախոսությունը, դրանով իսկ ապացուցելով, որ իրեն միանգամայն խորթ է երկրի շահերի հոգսը: Հենց դրա համար էլ Ռիչարդի հակառակորդն է դառնում անգլիական ժողովուրդը: Արդեն իսկ այն բանում, որ արտաքսված Բոլինբրոկի՝ թագավորի բռնակալության զոհի նկատմամբ կարեկցության նշաններ են ցույց տրվում, զգացվում է միապետի վարքագծի անուղղակի, միաժամանակ, քողարկված դատապարտում: Բոլինբրոկի վերադարձը դառնում է ազդանշան, որպեսզի ժայթքի հասարակ մարդկանց զայրույթը և ողջ ժողովրդին հանի Ռիչարդի դեմ: Անգլիական ժողովրդի ելույթի համընդհանուր բնույթը հատկապես վառ ընդգծվում է Սկրուպի խոսքերով (III, 2, 112—120): Նա հայտնում է, որ և՛ ահել, և՛ ջահել մար-

դիկ նույնիսկ նրանք, ովքեր կյանքում ձեռքերը զենք չեն առել, պատրաստ են կռվելու Ռիչարդի դեմ Բոլինբրոկի կողմից:

Ապստամբած ժողովրդի նման պատկերումը խիստ տարբերվում է այն տեսարաններից, որ Շեքսպիրը տալիս է «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասում, ուր հասարակ մարդիկ խաղալիք են դառնում ժողովրդի համար անհասկանալի երկպառակտիչ պատերազմ մղող բարոնների ձեռքին: «Ռիչարդ Երկրորդում» ժողովուրդը գիտակցաբար հանդես է գալիս թագավորի բռնակալության դեմ. այս հանգամանքը հասարակ մարդկանց դարձնում է այն գլխավոր քաղաքական գործոններից մեկը, որով վճռվում է իշխող միապետի ու գահի հավակնորդի ճակատագիրը:

Որպեսզի հանդիսատեսի մեջ չառաջանա այն տպավորությունը, թե ժողովրդի վարքագիծը պայմանավորված է Բոլինբրոկի հանդեպ տածած համակրանքով, Շեքսպիրը առնըշում է այգեպանների բացառիկ կարևոր տեսարանը (III, 4): Նրանց խոսքերից, որ ոգով և նույնիսկ առանձին համեմատություններով շատ մոտ են Գոնտի հայրենասիրական մենախոսությանը, երևում է, որ հասարակ մարդկանց համակրանքը Բոլինբրոկի կողմն է ոչ միայն և ոչ այնքան այն պատճառով, որ նրան գերադասում են որպես անձնավորություն, այլև այն բանի համար, որ հույս ունեն, թե Բոլինբրոկին կհաջողվի արմատախիլ անել շվայտ բռնապետի կառավարման ու նրա սիրեցյալների տնօրինության աղետալի հետևանքները: Դրա համար են նրանք հավանություն տալիս Ռիչարդի կործանմանը, չնայած կարեկցանքով են վերաբերում նրանց, ովքեր, ինչպես, օրինակ, թագուհին, դառնում են Բոլինբրոկի հաղթանակի անմեղ զոհերը: Այսպիսով Շեքսպիրը ցույց է տալիս, որ հասարակ մարդիկ ընդունակ են տալու պետական կարևորություն ունեցող անցքերի խոր և ճիշտ գնահատականը:

Հետևությունը, որ Շեքսպիրն անում է Ռիչարդ Երկրորդի պատմությունից, պարզ է և մեկին: Բռնակալը, որն իր անմիտ կամայականությամբ վնաս է հասցնում պետությանը, իրավունք չունի գահին մնալու: Սեփական երկրի թշնամին դառնալով, նա չի կարող ապավինել որևէ մեկի օժանդակությանը, որ և կանխորոշում է նրա կործանման անխուսափելիությունը: Դրանով Շեքսպիրը շատ առաջ էր անցել Եղիսաբեթի ժամանակների պաշտոնական պետական ուսմունքից: Այդ ուսմունքը անվերապահ ձևակերպված էր մի քարոզի մեջ, որ Նորին մեծություն թագուհու կառավարությունը հղել էր ողջ Անգլիայում կարդալու համար. ապստամբելը միշտ և ամենուր, բոլոր պարագաներում վատ է. դա «աստծո և մարդու դեմ թույլ տրվող բոլոր մեղանչումների ցեխափոսն է ու կեղտաջրի առուն»[30]:

Պիեսի հարցադրման մեջ վերջին ճշտումը մտցնում է Բոլինբրոկի կերպարը: Նա հատուկ տեղ է գրավում մյուս գործող անձանց մեջ, քանի որ այս քրոնիկի ողջ ընթացքում նրա էությունը լրիվ չի բացահայտվում: Նրա մասին ամբողջական տպավորություն կազմվում է լոկ «Հենրի Չորրորդի» երկրորդ մասի վերջում, սակայն «Ռիչարդ Երկրորդը» ևս բավականաչափ նյութ է տալիս այդ բարդ բնավորության մի ամբողջ շարք առաջնային կողմերը պատկերացնելու համար:

Բոլինբրոկի կերպարի կառուցման հիմնական եղանակը նրան քնորոշ նորանոր հատկությունների աստիճանական մերկացումն է։ Մինչև նրա արտաքսումը հանդիսատեսի համակրանքը ամբողջովին Բոլինբրոկի կողմն է։ Ռիչարդի բռնակալությունից տառապելու ժամանակ է հենց, որ դրսևորվում են Բոլինբրոկի լավագույն հատկությունները՝ նրա կրքոտ արիությունը, խորն ու հարգալից վերաբերմունքը հոր նկատմամբ, նրա ջերմ սերը Անգլիայի նկատմամբ, որ մի առանձին ուժով է արտահայտվում հայրենիքից բաժանվելու մասին նրա խոսքում (I, 3, 306—309)։

Բայց արդեն Բոլինբրոկի արտաքսման նկարագրության մեջ կա ակնարկ այն մասին, որ դուքսը ձգտում է շահել ժողովրդի համակրանքը մանրակրկիտ կշռադատված միջոցներով, իսկ հետագայում Ռեվենսպուրգում ափ իջնելու պահից սկսած՝ այդ կերպարի լեյտմոտիվն են դառնում հեռատես քաղաքական հաշվենկատությունն ու սեփական ծրագրերը թաքցնելու ունակությունը։

Այս ճանկամտությունն է որոշում Բոլինբրոկի ողջ գործելակերպը գահը նվաճելիս։ Թեպետ նրա արարքները, հատկապես հաշվեհարդարը Ռիչարդի կողմնակիցների հետ, ցույց են տալիս, որ Բոլինբրոկը ներքուստ իրեն արդեն համարում է երկրի տերը, սակայն մինչև Ռիչարդի գահից հրաժարվելու պահը ոչ մի անգամ չի ասում, թե մտադիր է զբաղեցնել նրա տեղը։ Ինչպես սրամիտ կերպով նկատել է գիտնականներից մեկը, հավակնորդը «ոչ այնքան ուժի միջոցով է թագը վերցնում Ռիչարդից, որքան՝ Ռիչարդի ջղաձիգ, կարկամոտ անկարողությունը թույլ է տալիս նետելու թագը իր՝ Բոլինբրոկի ձեռքը»[31]։ Այս ուշագրավ դիտարկմանը, սակայն, պետք է ավելացնել, որ հանդիսատեսը գործողության ողջ ընթացքում զգում է Բոլինբրոկի նախաձեռնությունը, որն աննկատ առաջ է տանում իրադարձությունները իրեն ձեռնտու ուղղությամբ։

Գահի համար մղած պայքարում Բոլինբրոկի գլխավոր զենքերը՝ զգուշությունն ու սառը հաշիվը, ամենից ավելի ակներև բացահայտվում են նրա թագավոր կարգվելուց հետո, երբ կազմակերպում է զոհան նետված Ռիչարդի հաշվեհարդարը։ Շեքսպիրի արքաները մեկ անգամ չէ, որ հրամայել են մարդասպաններին վերացնել իրենց անցանկալի անձանց, սակայն նրանցից և ոչ մեկը այդ բանը չի արել այնպիսի ճիզվիտական նրբությամբ, ինչպես Հենրի Չորրորդը։ Նույնիսկ նա՝ մարդասպանը ծառայի հետ զրուցելիս խոստովանում է, որ ինքը թագավորից բացահայտ հրաման չի ստացել, սակայն հասկացել է նրա ակնարկը։ Եվ թեպետ ոճիրը կատարվելուց հետո թագավորը հարկադրված է ասել, որ ինքը ցանկանում էր Ռիչարդի մահը, սակայն մինչ այդ նրա հանդես բերած շրջահայեցությունը թույլ է տալիս երեսպաշտորեն անիծել իր իսկ ցուցումով գործող մարդասպանին և հրապարակով սգալ Ռիչարդին։

Այսպես, հանգուցալուծումը մոտենալուն համեմատ Բոլինբրոկի հայրենասիրական հոգածությունը Անգլիայի բարօրության մասին ավելի ու ավելի դառնում է թագի փառասիրական ձգտում, սեփական նպատակները թաքցնելը՝ երեսպաշտություն, իսկ

զգաստ քաղաքական հաշվենկատությունը՝ հանցավոր դաժանություն: Եվ ճիշտ նույն չափով, ինչ չափով Ռիչարդը սկսում է գրավել հանդիսատեսի համակրանքը, Բոլինբրոկը կորցնում է այն:

Այստեղից էլ ծայր է առնում այն թախծոտ ու տագնապալի զգացումը, որը համակում է հանդիսատեսին «Ռիչարդ Երկրորդի» վերջում: Ռիչարդի բռնակալությունից փրկողը դուրս է գալիս բռնակալ ու եղբայրասպան ոճրագործ: Իսկ այն լարված զգուշավորությունը, որով գործում է Հենրին, ասես ազդարարում է, որ անգլիական գահի զավթումը արձակելու է ինքնիշխան ֆեոդալների ձեռքերը, և նրանք պատրաստ՝ կռվելու անձնական շահերի համար, Անգլիան նետելու են նոր արյունոտ խռովությունների հորձանուտի մեջ:

Այսպես, «Ռիչարդ Երկրորդի» վերջում բյուրեղանում է այն բարոյա-էթիկական ու քաղաքական պրոբլեմատիկան, որը կազմում է «Հենրի Չորրորդի» զույգ մասերի հիմքը:

* * *

«Հենրի Չորրորդի» երկու մասն էլ ավարտուն դրամատիկական ստեղծագործություններ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հանգույցը, բարձրակետը և հանգուցալուծումը: Հիշատակված պիեսների այս առանձնահատկությունը արդեն 1623-ին ձգտել են ընդգծել առաջին ֆոլիոյի հրատարակիչները. որոնք մասերին տվել են ենթավերնագրեր. «Հենրի Չորրորդի առաջին մասն, Տաք խթան մականունը կրող Հենրիի կյանքի ու մահվան պատկերումով», «Հենրի Չորրորդի երկրորդ մասն, որ բովանդակում է նրա մահը և Հենրի Հինգերորդ արքայի թագադրումը»: Մասերից յուրաքանչյուրը թեպետ բավարարում է պատմական պիեսներին ներկայացվող ամենախիստ կոմպոզիցիոն պահանջները, սակայն երկուսը այնքան սերտ են շաղկապված, որ, ամբողջության մեջ ներկայանում են իբրև մի վիթխարի, տասը արարված ունեցող կտավ: Թե՛ երկու մասի միջով անցնող գլխավոր գործող անձանց՝ Հենրի Չորրորդի, արքայազն Հարիի ու Ֆալստաֆի զարգացումը, թե՛ նրանց փոխհարաբերությունների բարդ պատմությունը, թե՛, վերջապես, պիեսներում արծարծվող հիմնական քաղաքական խնդիրների վերջնական լուծումը,—կարող են ճիշտ հասկացվել և մեկնաբանվել «Հենրի Չորրորդ» քրոնիկի զույգ մասերի նյութը օգտագործելու դեպքում միայն:

Ինչպես արդեն ասվեց, իր թագավորության ընթացքում Հենրի Չորրորդը հարկադրված էր բազմիցս բացահայտ պայքարի դուրս գալու պառակտիչ ֆեոդալների և, առաջին հերթին, հզորագույն Պերսիների ֆեոդալական տոհմի դեմ, որը Անգլիայի հյուսիսում գրեթե անսահմանափակ իշխանություն ուներ: Պերսիների տոհմի ավագը՝ Հենրին, առաջին Նորթեմբերլենդ կոմսը, պիեսի գործողությունն սկսվելիս արդեն զառամյալ մարդ է: Բոլինբրոկի ափ դուրս գալուց ոչ շատ առաջ Ռիչարդ Երկրորդի և Նորթեմբերլենդի միջև ընդհարում է տեղի ունենում. դրա համար էլ

Պերսիների տոհմը հարում է Բոլինբրոկին և դառնում այն գլխավոր ուժը, որը ապահովում է գահի նվաճումը: Սակայն արդեն 1403 թվականին Պերսիները բացեիբաց հանդես են գալիս թագավորի դեմ: Խռովությունը Շրուսբերիի ճակատամարտում ավարտվում է նրանց պարտությամբ: Նորթեմբերլենդը գերի է ընկնում և ներում ստանում Հենրիի կողմից: Սակայն 1405-ին նա կազմակերպում է նոր խռովություն, որի ջախջախումից հետո փախչում է Ֆրանսիա: Վերջին փորձը՝ հանդես գալու Հենրի Չորրորդի դեմ, 1408-ին ավարտվում է նրա մահով:

Ճաշ՝ արքունիքում, XV դար:

Նորթեմբերլենդի հետ միասին թագավորի դեմ կռվում էր ծեր կոմսի որդի Հենրի Հոտսպերը, որը զոհվեց Շրուսբերիի ճակատամարտում: Հոտսպերի և արքայազն Հարիի հակադրությունը առավել արտահայտիչ ու դրամատիկ ներկայացնելու նպատակով Շեքսպիրը նրանց դարձնում է հասակակիցներ, թեև հայտնի է, որ պատմական Հոտսպերը երեք տարով մեծ էր Հենրի Հինգերորդից: Եղիսաբեթի օրոք Հոտսպերը անգլիական բանահյուսության մեջ լայն ժողովրդականություն վայելող հերոս էր, և հենց բանահյուսային ավանդույթն է, որ օժտել է նրան կրքոտ տաքարյունության գծերով: Այդ ավանդույթը ամբողջությամբ յուրացրել է Շեքսպիրը:

Կոմս Վուստերի՝ Նորթեմբերլենդի կրտսեր եղբոր կերպարը Շեքսպիրը ստեղծել է համաձայն այն գնահատականի, որ տրվում է նրան պատմական սկզբնաղբյուրներում, ըստ որի մի քանի տարվա հավատարիմ ծառայությունից հետո նա դառնում

արքայի ոխերիմ թշնամին։ Շեքսպիրի ժամանակվա պատմաբանների կարծիքով հենց Վուստերի բանսարկություններն են, որ խանգարել են արքայի ու խռովարար լորդերի հաշտությանը։ Շրուսբերիի ճակատամարտում Վուստերը գերի է ընկնում ու մահապատժի ենթարկվում։ Թագավորի դեմ Պերսիների տոհմի պայքարի տարբեր փուլերում վերջիններիս հարել են և անգլիական ուրիշ ֆեոդալներ, ինչպես նաև Օուեն Գլենդովերը՝ անգլիական թագին հպատակվել չկամեցող վալլերի առաջնորդը։

Թագավորի պայքարը խռովարարների դեմ և, նախ և առաջ, ապստամբ ֆեոդալների ճամբարը բնորոշող ներունակ առանձնահատկությունների պատկերումը կազմում են Հենրի Չորրորդին նվիրված պիեսների կարևորագույն գաղափարական ու գեղարվեստական մի շերտը, ուր ամենից ավելի լիակատար է դրսևորվել Շեքսպիրի հայացքների պատմականությունը։

Առաջին մասի միջին մասում, այն պահին, երբ խռովարարները նոր միայն ուժեր են հավաքագրում արքայի դեմ ելնելու համար, Շեքսպիրը տեղավորում է մի տեսարան, որը ամենայն որոշակիությամբ բացահայտում է ֆեոդալական ապստամբության քաղաքական ծրագիրը։ Այս տեսարանի (III, 1) նյութը, ուր խռովարարները՝ հաղթանակը վստահ, քարտեզի վրա իրար մեջ են բաժանում Անգլիան, Շեքսպիրը քաղել է Հոլինշեդից։ Սակայն պատմագրի հակիրճ հիշատակությունը դրամատուրգը ծավալել է որպես խոշոր գունագեղ պատկեր։ Ֆեոդալների վիճաբանություններին հետևող հանդիսատեսի համար միանգամայն պարզ է դառնում, որ նրանց հաղթանակը կնշանակեր Անգլիայի՝ որպես միասնական պետության վերջը։ Խռովարարների հաղթանակի դեպքում երկրին կսպառնար տերիտորիայի մասնատում, և գահին կբազմեցվեր ֆեոդալների դրածոն։

Արքայի դեմ ուղղված դավադրության հակահայրենասիրական էության բացահայտումով չի սպառվում խռովարարների բանակի բնութագրումը՝ իր ամբողջության մեջ վերցրած։ Նույն տեսարանի մեջ Շեքսպիրը մտցնում է մի մոտիվ, որը սկզբնաղբյուրներում չկա. դա ֆեոդալների վեճի նկարագրությունն է, որը խոսում է խռովարար լորդերի դաշինքի թուլության մասին։ Այդ վեճը թույլ է տալիս ճշտել առանձին գործող անձանց անհատական բնութագիրը։ Բայց ոչ միայն դա։ Պարզվում է, որ մերթ մարող և մերթ նոր ուժով բորբոքվող գժտության վիճակը բնական վիճակն է այն ճամբարի, ուր ժամանակավորապես համախմբվում են շահամոլ դավադիրները։

Այս տեսարանում նախանշված ֆեոդալների մասնատվածության թեման ողբերգական հնչողություն է ստանում վճռական ճակատամարտի նախապատրաստության պահին և ի վերջո դառնում խռովարարների պարտության պատճառ Շրուսբերիում։ Ճակատամարտից առաջ Հոտսպերը տեղեկանում է, որ հայրը հիվանդության պատճառով չի կարող իրեն օժանդակել զորքով։ Որպեսզի հանդիսատեսի մեջ ոչ մի տարակույս չմնա Նորթեմբերլենդի հրաժարման իսկական դրդապատճառների վերաբերյալ, Շեքսպիրը երկրորդ մասում թե՛ Նախերգանքի և թե՛ Հոտսպերի այրու շուրթերով ասում է, որ ավագ Պերսին՝ հիվանդ ձևանալով, բախտի քմահաճույքին է

թողել հարազատ որդուն: Միանգամայն պարզ է, որ Նորթեմբերլենդի սուտ հիվանդության մոտիվը, որ գոյություն չունի Շեքսպիրին հայտնի և ոչ մի սկզբնաղբյուրում, դրամատուրգը օգտագործել է մի նպատակով՝ ցուցադրել ֆեոդալների միության թուլությունը, միություն, ուր եսամոլական զգացումներն ավելի զորեղ են, քան ազնիվ արյունակցական կապերը:

Շախմատ, XV դար:

Ֆեոդալների անմիաբանության մի նոր ապացույց է տեղեկությունն այն մասին, թե Գլենդովերը ևս իր զորքով օգնության չի գալու Հոտսպերին: Այստեղ Շեքսպիրը կրկին հեռանում է Հոլինշեդից, որը հայտնում է, թե վալլերը մասնակցել են ճակատամարտին խռովարարների կողմից: Վերջապես միանգամայն պերճախոս է Վուստերի վարքագիծը ճակատամարտից առաջ: Նա իմանում է, որ անձնատուր լինելու դեպքում թագավորը պատրաստ է ներել խռովարարներին: Սակայն Վուստերը Հոտսպերից թաքցնում է հաշտության առաջարկը, երկյուղելով, որ անձամբ ինքը որպես խռովության գաղտնի նախաձեռնողի, հատուցումից խուսափել չի հաջողի: Այսպես՝ շահերի մասնատվածությունը դառնում է ֆեոդալների բանալին հատուկ գիծ, որը կանխորոշում է նրանց պարտությունը՝ կենտրոնացված իշխանության սկզբունքը պաշտպանողների հետ ընդհարվելիս:

Ֆեոդալների ճամբարի ոչ պակաս կարևոր բնութագրությունն են պարունակում զույգ մասերի տեքստում ցրված մանրամասները, որոնք ցույց են տալիս, որ ֆեոդալական խռովությունը Շեքսպիրի համար նույնանում էր ինչ-որ հին, անցյալի գիրկն անցնող, «ժամանակի ընթացքում» քայքայված բանի հետ: «Ժամանակը, այսինքն՝ պատմական միտումը, օբյեկտիվ պատմական օրինաչափության առա-

ճայտությունը, դառնում է խռովարարների ամենաճզոր թշնամին: Այդ միտքը ամենից վառ արտաճայտված է Վեստմոռլենդի ճռչակավոր խոսքում՝ ուղղված ապստամբ չորդներին.

O, my good Lord Mowbray,
Construe the times to their necessities,
And you shall say indeed, it is the time,
And not the King, that doth you injuries.
(II, IV, 1, 104-107)[32]

«Հենրի Չորրորդ»-ի երկու մասերի ողջ ընթացքում ցույց տալով, որ ճենց ֆեոդալների ճամբարին ընդճանուր առմամբ ճատուկ գծերն են պայմանավորում նրա ճակատագիրը, Շեքսպիրը առանձին լորդերի կերպարները անճատականացնելու ճամար օգտվում է սուր ճակադրումների խորապես կշռադատված ճամակարգից: Դրա ճամար էլ ծածկամիտ ու խորամանկ Վուստերի, ոխստաղրուժ Նորթեմբերլենդի մանրախնդիր Մորտիմերի, պարծենկոտ ու վախկոտ Դուգլասի, անոտիապաշտ Գլենդովերի կողքին առանձնաճատուկ ճերոսական փայլով է ներկայանում Հարրի Պերսիի՝ Տաք Խթանի կերպարը:

Պերսի Հոտսպերը ապրում է մինչև ուղն ու ծուծը: Ինչպես ցույց է տալիս Հոտսպերի օգտագործած պատկերների սիստեմը, ասպետականության իդեալներն ու գործը նրա ճամար այնպես են միս ու արյուն դարձել, որ նրա խոսքը, նաև այն ժամանակ, երբ ուղղակի չի խոսում ասպետական սխրանքների մասին, տառացիորեն լեցուն է ասպետական կիրառությունից վերցրած տերմիններով ու ճամեմատություններով: Նույնիսկ քնի մեջ նա պատերազմի ու «տաք կռվի անակնկալների» մասին է զառանցում (all the currents of a heady fight; 3,52):

Հոտսպերի ճամար կարևոր է բոլոր պարագաներում լինել ասպետական պատվի առաջին, միակ, ամենակատարյալ ներկայացուցիչը: Այդ իրավունքը նվաճելու ճամար նա պատրաստ է դիմելու ռիսկի, զոռեմարտելու՝ առանց ճաշվի առնելու որևէ մեկի, այդ թվում և պետության շաճերը: Այսպես՝ Շեքսպիրը ցույց է տալիս ճին, ֆեոդալական ասպետականության գաղափարախոսության ու նրա վարքի անիշխանականության օրգանական կապը:

Բայց միաժամանակ պիեսում անճնար է գտնել որևէ դրվագ, ուր դրամատուրգը ցանկանար նսեմացնել իր ճերոսին որպես անձնավորություն: Շեքսպիրը Հոտսպերին օժտում է վերին աստիճանի ճամակրելի գծերի մի ամբողջ կոմպլեքսով, ասես զմայլվում է նրա ուժով, ասպետական խիզախությամբ, ուղղախոսությամբ, անզուսպ արիությամբ ու կրքոտությամբ: Նման ճեղինակային վերաբերմունքը Հոտսպերի կերպարի նկատմամբ բացատրվում է մի ամբողջ շարք պատճառների փոխգործողությամբ:

Նախ և առաջ բացատրվում է այն տեղով, որ Հոտսպերը զբաղեցնում է պիե-

սի հիմնական քաղաքական կոնֆլիկտի լուծման մեջ: «Հենրի Չորրորդի» առաջին մասում թագավորի ու արքայազնի գլխավոր հակառակորդը դարձնելով Հոտսպերին նման հոյակապ, զորեղ մի անձնավորություն, Շեքսպիրը դրանով իսկ ստիպում է հանդիսատեսին զգալ Անգլիայի ամբողջականությանը սպառնացող ֆեոդալական խռովության իրական վտանգը:

Երկրորդ պատճառը այն հակասական վերաբերմունքն է ասպետականության նկատմամբ, որը հատկանշական է Շեքսպիրի և ուշ Վերածննդի մի շարք այլ գրողների համար: Շեքսպիրը երկրի ազգային միավորմանը խանգարող ֆեոդալների քաղաքական վարքագծի համոզված հակառակորդն էր: Սակայն «չարչիների ժամանակներում», մի շրջանում, երբ առավել խորաթափանց մտածողների համար ավելի պարզ էր դառնում նոր, բուրժուական հարաբերությունների հակահումանիստական բնույթը, միջնադարյան ասպետականության բարոյական դեմքի առանձին կողմեր (անկախ նրանից, թե պատկերացումը ասպետականության մասին ո՛րքանով էր համապատասխանում իրականությանը) Վերածնության հումանիստների աչքում անվերապահ գրավչություն էին ստանում:

Սակայն գլխավոր պատճառը, հանուն որի պատմության մեջ ապրած քառասնամյա, քմահաճ ֆեոդալին Շեքսպիրը վերածել է անահ ու անվեհեր ջահել ասպետի, գտնվում է դրամատուրգի պատմական կոնցեպցիայի բուն էության մեջ: Նույնիսկ իդեալական ասպետը անցյալի գիրկն անցնող գաղափարին պաշտպան կանգնելով, դատապարտված է տանուլ տալու: Որքան մոտենում է արքայի հետ վճռական ընդհարման պահը, այնքան ավելի ու ավելի է զգացվում Հոտսպերի մենակությունը: Այդ կերպարի ընդգծված անշարժությունը, որ հատկապես ցցուն է լարված պատմական շարժման ֆոնի վրա, բուռն զարգացող կերպարների կողքին, պայքարի բովում, ցույց է տալիս, որ իդեալական ասպետը ուրիշներից ավելի պակաս է ընդունակ իր գործողությունները հաշտեցնել «ժամանակի» պահանջների հետ:

Եվ ահա, Հոտսպերի մահը ներկայանում է ոչ թե որպես անձնական, այլ համաշխարհային պատմական մոլորության արդյունք, մոլորություն, որ տիրել էր ֆեոդալական դասակարգին մի ժամանակաշրջանում, երբ այդ դասակարգը՝ իր հասարակության հիմքերի անսասանությանը վստահ, հանդես էր գալիս պատմական նոր հոսանքի դեմ, որն արտահայտվում էր հանուն ազգային պետության ստեղծման՝ միապետների մղած պայքարի ձևով: Դրա համար էլ «Հենրի Չորրորդ»-ի առաջին մասի վերջում Հոտսպերը վերաճում է իսկական ողբերգական հերոսի: Այսպես, մեծ ասպետի մահը դառնում է առնականացող բացարձակ միապետության դեմ բորբոքված ֆեոդալական ապստամբության անխուսափելի պարտության խորհրդանիշ:

* * *

Ֆեոդալական անիշխանականության դեմ պայքարի թեման «Հենրի Չորրորդ»-ում հատուկ բարդություն է ստանում այն պատճառով, որ իբրև այդ պայքարի կազ-

մակերպիչ հանդես է գալիս արքան՝ բոլորովին էլ ոչ անբասիր մի մարդ: Շեքսպիրի տրամադրության տակ եղած նյութերը նրան թույլ էին տալիս բավականաչափ ստույգ պատկերացում կազմել Հենրի Չորրորդի բնավորության մասին: Պատմական աղբյուրներից դրամատուրգին հայտնի էր, որ ամեն վայրկյան իրեն դավաճանելու պատրաստ պալատականներով շրջապատված՝ Հենրին աչքի էր ընկնում ծայր աստիճան ծածկամտությամբ ու անվստահությամբ, ըստ որում ոչ միայն այն լորդերի նկատմամբ, որոնց ուղղակի կասկածում էր, այլ նաև նրանց, ովքեր մնում էին գահի օրինապահ հպատակներ: Այս վկայությունների վրա հենվելով, Շեքսպիրը Հենրիին դարձնում է մի մարդ, որը պիեսի մյուս բոլոր գործող անձանց (և, միգուցե, առհասարակ) Շեքսպիրի մյուս բոլոր հերոսներից ավելի լավ է կարողանում թաքցնել իր մտքերը. դրա համար էլ հատկապես «Հենրի Չորրորդ»-ի առաջին մասում երբեմն դժվար է հասկանալ արքայի իրական մտադրությունները:

Բեվեռլիի մինստրելները:

Դրա հետ մեկտեղ, դեռևս պիեսի սկզբում բավական սպառիչ բացահայտվում է Հենրի Չորրորդի դեմքը որպես հնուստես, հաշվենկատ, խորամանկ ու վճռական քաղաքագետի: Հետագայում ևս, նույնիսկ ամենասուր կացություններում, Հենրին մտածում ու գործում է որպես ֆեոդալական անիշխանությունը սանձող ու երկրի միասնությունը ամրապնդող պետական գործիչ:

Սակայն, որքան ավելի լրիվ է բացահայտվում Հենրիի բնավորությունը, այնքան ավելի պարզ է դառնում, որ պետության շահերի հոգածությունը արքայի համար անբաժան է մի ցանկությունից՝ շեղել իր հպատակների ուշադրությունը այն մտքից, թե ինչ պարագաներում է ինքը զավթել գահը և սպանեզից հեռացրել Ռիչարդ Երկրորդին: Ավելին, Հենրիի կերպարի զարգացման ընթացքում առաջին գիծ է մղվում թագավորի բնութագրումը բարոյական առումով:

Բոլինբրոկը «Ռիչարդ Երկրորդ»-ում գահընկեց անելով թագավորին, որպես քաղաքական գործիչ, ըստ երևույթին, իրավացի էր, քանի որ Ռիչարդի եսամոլա-

կան, հակահայրենասիրական գործունեությունը երկիրը տանում էր դեպի անկ։ Ճիշտ է, գահի զավթումը նոր քաղաքական կոնֆլիկտ առաջ բերեց և, ֆեոդալակ անարխիայի ձեռքերն արձակելով, Անգլիային տվեց խռովարար լորդերի դեմ մղ ծանր պայքարի երկար տարիներ,—բայց այդ կոնֆլիկտը, վերջ ի վերջո, հաղթ հարելի էր,—մինչդեռ Ռիչարդի գահակալությունը հղի էր ազգային աղետի սպ նալիքով: Սակայն Հենրիի՝ որպես քաղաքական գործչի որջ իրավացիությունը, Շե պիրի աչքում չի քավում նրա անիրավացիությունը որպես մարդու, որը հանուն գ սպանում է հորեղբոր որդուն: Այդ անիրավացիությունը Հենրիին զրկում է նեբ ամբողջականությունից և ուժից, նրա հոգում առաջ բերելով մի ճգնաժամ, որը նմ է արքա Ջոնի կամ Մակբեթի ապրած ճգնաժամին:

Այսպես, «Հենրի Չորրորդ»-ի երկրորդ մասում ծագում է թագավորի հիվանդ թյան թեման: Նա զօր ու գիշեր հանգիստ չունի: Հիվանդությունը ոչ թե պարզա արքային զրկում է եռանդից ու ֆիզիկական ուժից, խանգարելով նրան ակտիվ միջամտելու իրադարձություններին, այլ հանդես է գալիս որպես թագավորի բա յական ուժերը ջլատող հոգեկան պայքարի, խղճի խորհրդանիշ:

Հանդիսատեսի ուշադրությունը կենտրոնացնելով Հենրիի բարոյական ճգնա մի անխուսափելիության վրա, Շեքսպիրը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ վերաբերմունքը բացարձակ միապետության նկատմամբ արմատապես հակադ մաքիավելիզմի քաղաքական ուսմունքին: Ֆլորենցիայի մտածողի տեսակե Հենրի Չորրորդի նման արքան, որը հետևողականորեն վարում էր բացարձակ գավորական իշխանության ամրապնդման քաղաքականություն և իր նպատակ հասնելու համար մի կողմ էր նետում բարոյական կարգի բոլոր նկատառումները մարդ, որ խելոք էր, համառ ու շրջահայաց ծածկամիտ լինելու աստիճան,—ան րակույս կարող էր լինել տիրակալի տիպար: Իսկ Շեքսպիրի տեսակետից այդ հ կությունների գումարը դեռևս չի կարող լրիվ հավանության արժանացնել արքա քանի որ հանցավոր թագավորը գահակալության իրավունք չունի:

Սակայն, ավելորդ պարզունակացում կլինեն Հենրի Չորրորդի շեքսպիր գնահատականը երկու գործոնների մեքենայական զուգակցման հանգեցնելը. քաղաքագետ, բայց վատ մարդ: Թագավոր-քաղաքագետի բնութագրման առա տարրեր ասում են այն մասին, որ Հենրիի կերպարի այս կողմը ևս լրիվ չէր հա պատասխանում այն պահանջներին, որոնք Շեքսպիրը ներկայացնում էր առաջա մական պատմական գաղափարը կրողին:

Թեպետ Հենրի Չորրորդը օբյեկտիվորեն հանդես է գալիս որպես միապետա նության պատմականորեն առաջավոր միտումի արտահայտիչ, իր կերպարանքով բանում մնում է հին, ֆեոդալական աշխարհի ներկայացուցիչ: Թե՛ իր քաղաքակա թյունը կենսագործելու եղանակներով, թե՛ մյուս անձանց կողմից նրան տված գնա տականներով, Հենրին շատ մոտ է իր ախոյան ֆեոդալներին: Դեպի գահ տանող նապարհի ընտրությունն իսկ բնորոշ է հենց ֆեոդալական հասարակության հատ

երբ ինքնակոչը զավթում է գահը, խոշոր ֆեոդալների օժանդակությամբ պայքարելով օրինական միապետի դեմ: Չափազանց հատկանշական է այն, որ ինքը՝ Հենրին ևս գտնում է, որ գահը զավթելու պահին նման էր Հոտսպերին՝ ամենաոտիսյին ֆեոդալին: Սակայն, թագավորը առաջին մասում ուղղակի ասում է արքայազն Հարրիին, որ ի դեմս Հոտսպերի տեսնում է մեկին, որը կարող էր դառնալ արժանավոր գահաժառանգ (III, 2, 93—99): Այս բառերը անհերքելիորեն ապացուցում են յուրակերպ հոգեհարազատության առկայությունը Հենրի Չորրորդի և հին ֆեոդալական ավագանու միջև:

Եթե առաջին մասում թե՛ թագավորը և թե՛ ֆեոդալները լի են ուժ ու եռանդով, ապա երկրորդ մասում նրանց կոնֆլիկտը զարգանում է ասես իներցիայով, ընդ որում թե՛ թագավորը և թե՛ խռովարարները հետզհետե թուլանում են, ուժասպառ լինում: Համապատասխանաբար հատկապես լայն հնչողություն է ստանում հիվանդության մոտիվը: Դա միայն խորհրդանիշ չէ, որ արտահայտում է արքայի տառապանքը խղճի խայթից. ֆեոդալները ևս խոստովանում են, որ իրենք նույնպես համակված են դարի հիվանդությամբ (IV, 1, 54—57): Այսպես, հիվանդության թեման դառնում է ներքին հակասություններով վարակված ու դրանք հաղթահարել անկարող ողջ զառամյալ ֆեոդալական աշխարհի մարմնավորումը:

Պատմականորեն առաջադեմ գործ սկսելով, Հենրի Չորրորդը ի վիճակի չէ այն հասցնելու վճռական հաղթանակի, քանի որ ինքը ևս պատմական առումով ֆեոդալական անիշխանականության ծնունդ է: Որպեսզի բացարձակ թագավորական իշխանության գաղափարը հաղթանակի, պետք է գահ բարձրանա այնպիսի մի մարդ, որն իր աշխարհայացքի ու գործելակերպի հիմնական գծերով սկզբունքորեն տարբերվի հին ֆեոդալներից: Համատարած հիվանդության մոտիվը մի յուրատեսակ նախերգանք է, որ նախապատրաստում է քաղաքական ասպարեզում նոր արքայի՝ Հենրի Հինգերորդի հայտնվելը, արքա, որն ազատ է հին ժամանակների ախտերի բեռից:

* * *

Կոմպոզիցիոն առումով արքայազն Հարրիի վրա դրված է լանկաստերյան տետրալոգիայի բոլոր պիեսները իմի բերող կերպարի դերը: «Ռիչարդ Երկրորդ»-ում այս հերոսը տակավին չի հայտնվում հանդիսատեսի առջև, սակայն Բոլինբրոկը գահ բարձրանալով, հիշում է իր անառակ որդուն: Նրա բառերը ասես բնաբան են դառնում այդ կերպարի հետագա ողջ զարգացման համար.

> As dissolute as desperate; yet through both
> I see some sparkles of a better hope,
> Which elder days may happily bring forth.
> (V, 3, 20-22)[33]:

Ապագա Հենրի Հինգերորդի ինտենսիվ զարգացման ամենից ավելի բարդ և հետաքրքիր փուլը ընկնում է «Հենրի Չորրորդ» պիեսի զույգ մասերի վրա, ուր Շեքս-

պիրը պատկերում է մի անձնավորության կազմավորման ընթացքը, որին վիճակված է իդեալական միապետ դառնալ։ Վերջապես իր անունը կրող պիեսում Հենրի Հինգերորդը մնում է միակ անտարակույս գերիշխող հերոսը։

Հավաստի պատմական տեղեկությունները Հենրի Հինգերորդի կյանքի մասին ոչ մի հիմք չեն տալիս ենթադրելու, թե նրա պատանեկությունն անցել է խնջույքների մեջ։ Նույնիսկ Հոլինշեդը, պատմելով թագաժառանգից Հենրի Չորրորդի անբավական լինելու մասին, այդ փաստը բացատրում է որպես հոր և որդուն գժտեցնելու նպատակ հետապնդող բամբասանքների արդյունք։ Հոլինշեդը ընդունում է, որ արքայազնը թույլ է տվել չափելներից հատուկ հանդուգն զանցանքներ, սակայն տեղնուտեղը պատմագիրը ընդգծում է, որ այդ զանցանքները ոչ ոքի վնաս չեն պատճառել։ Որդու նկատմամբ Հենրի Չորրորդի սառը վերաբերմունքի իրական պատճառը Հոլինշեդը որոնում է արքայի զուտ քաղաքական նկատառումների մեջ. «Թագավորի արքունիքում չկար այնպիսի շքախումբ, որն ամեն օր ուղեկցեր արքայազնին։ Այդ լուրերը արքայի մտքում կասկածանքներ ծնեցին, թե հանկարծ որդին չհանդգնի հոր կենդանության օրոք զավթել գահը»[34]։

Սակայն «Հենրի Չորրորդ»-ում Շեքսպիրը հետևում է արքայազնի զեխ ջահելության լեգենդին։ Ամենայն հավանականությամբ, այդ լեգենդը սկսել է ձևավորվել դեռևս Հենրի Հինգերորդի օրոք, ընդ որում դրա առաջին հեղինակները եղել են կղերականները։ Կաթոլիկ հոգևորականությունը փորձում էր արքայազնի և լոլարդների միջև իրոք մի ժամանակ գոյություն ունեցող կապը ներկայացնել իբրև Հարրիի վրա մոլորիչ-հերետիկոսների վատ ազդեցության հետևանք և, ընդհակառակը, Հենրի Հինգերորդի կողմից իր նախկին բարեկամների դաժան հալածումը ցնծությամբ նկարագրվում էր կղերական պոեմներում[35] որպես արքայազնի «վերածնունդ»՝ կաթոլիկ եկեղեցու բարերար ազդեցության շնորհիվ։

Հենրի Հինգերորդի գահակալությունից հետո Անգլիայում ստեղծված պատմական իրադրությունը նպաստում էր այն բանին, որ կաթոլիկ վանականների վարկածը լայն տարածում ստանա ժողովրդական զանգվածների մեջ։ Տասնհինգերորդ դարի անգլիացիների աչքում,—որոնք տառապել էին Ֆրանսիայի դեմ մղվող ապարդյուն պատերազմին միջոցներ հայթայթող անվերջ հարկահանություններից և Լանկաստերների ու Յորքերի բազմամյա գժտությունից,—Հենրի Հինգերորդի գահակալությունը անխուսափելիորեն պիտի ներկայանար որպես ժողովրդի նրանքի երջանիկ շրջան։ Նման պատրանքը հող էր նախապատրաստում հաղթանակած արքայի իդեալականացման համար, իսկ լեգենդը արքայազնի զեխ ջահելության մասին, որ համահնչուն էր ժողովրդական բանահյուսական ավանդություններին, ապագա Հենրի Հինգերորդի կերպարի վրա դեմոկրատական դրոշմ էր դնում ու դրանով դուր գալիս ժողովրդին։

Այդ լեգենդը Շեքսպիրից առաջ էլ ստացել էր բեմական մարմնավորում «Հենրի Հինգերորդի փառավոր հաղթանակները» պիեսում, ուր արքայազնը ներկայացվել է որպես հարբեցող, հասարակաց տների մշտական հյուր, պարծենկոտ, կոպիտ, կովա-

բար մեկը: Վաղ պիեսի համեմատությունը շեքսպիրյան երկի հետ ցույց է տալիս, որ դրամատուրգը այդ լեգենդին մոտեցել է շատ ավելի զգույշ, և դա նրան թույլ է տվել ստեղծելու Հենրիի բարդ կերպարը, որի էությունը բնավ էլ չի սպառվում իր դիրքի մարդու համար անսովոր հակումով դեպի ուրախությունն ու վայելքը:

Որևէ հիմք չկա կասկածելու, որ շեքսպիրյան Հարրին, հոր արքունիքում ժամանակ անցկացնելուց խուսափելով, հաճախ անկեղծ բավականություն է ստանում Ֆալստաֆի ու նրա անհոգ ընկերների հետ շփվելուց: Սակայն հասարակության ստորին խավերի հետ շփվելու նպատակը արքայազնի համար, ինչպես միանգամայն իրավացի նշել է քննադատությունը, եթե կարելի է ասել՝ «մանկավարժական» է: Պատկերելով արքայազնի վրա ստորին խավերի ներկայացուցիչների բարերար ազդեցությունը, Շեքսպիրը երիտասարդության դաստիարակման հարցում մերձենում էր իր ժամանակի առաջադեմ մտածողներին: Բավական է ասել, թե Մոնտենը իր «Փորձերում», որ հիմնավորապես հետաքրքրել են Շեքսպիրին, գրել է. «Հարկ է ըմբռնել բոլորի, ում էլ որ հանդիպես՝ հովվի, քարտաշի, անցորդի,—ներքինը. պետք է օգտագործել ամենը և վերցնել յուրաքանչյուրից հնարավորը, քանի որ ամեն ինչ, բացարձակապես ամեն ինչ պետք կգա, նույնիսկ սրա-նրա հիմարությունը կամ թերությունը ինչ-որ ուսանելի բան են պարունակում: Արժեքավորելով յուրաքանչյուրի բարեմասնություններն ու հատկությունները, պատանին իր մեջ դաստիարակում է հակում դեպի նրանց լավ գծերը և նողկանք հանդեպ վատը»[36]:

Լապտերակիրներ:

Արքայազնի համար ժողովուրդը ուսումնասիրության օբյեկտ է. իսկ այսօրինակ ուսումնասիրության նպատակն է ընդհանուր լեզու գտնել ազգաբնակչության ամենատարբեր շրջանների ներկայացուցիչների հետ, որոնք ապագայում դառնալու են իր հպատակները: Շատ կարևոր է ընդգծել, որ շեքսպիրյան արքայազնը, ի տարբերություն «Պանծալի հաղթանակների» արքայազնի, լոնդոնյան պանդոկների հաճախորդների հետ ժամանակ անցկացնելիս, երբեք չի խախտում այն անտեսանելի սահմանը, որն իրեն անջատում է իր աղմկոտ շրջապատից: Իր փոքրիկ մենախոսության մեջ, որ նա արտասանում է Ֆալստաֆի ընկերակցությամբ՝ իր առաջին մուտքից հետո (I, 2, 188—210), արքայազն Հարրին պարզ հայտարարում է՝ նման ժամանցը իր համար միջոց է մոլորության մեջ ձգելու շրջապատի մարդկանց իր

իրական ընդունակությունների և հնարավորությունների վերաբերյալ: Այս խոսքերի իրավացիությունը փայլուն կերպով հաստատում են Հարրիի վարքագիծը Ծրուսբերիի ճակատամարտում և հատկապես նրա առաջին քայլերը Հենրի Չորրորդի մահից հետո:

Սեփական մտքերը թաքցնելու ընդունակությամբ արքայազնը այնքան էլ չի զիջում իր փոքրաւոր հորը. սակայն արքայազնի ծածկամտությունը որակապես ուրիշ բովանդակություն ունի: Բոլինբրոկը «երկնքից շորթած բարեհամբույրության» (And then I stole all courtesy from heaven) դիմակի ներքո թաքցնում է ապօրինի գահակալության ու հարազատի սպանության հանցավոր ծրագրերը, մինչ արքայազնը, միաժամանակ օտար աչքերից թաքցնելով ազգը գլխավորելու իր ընդունակությունը, մոլորության մեջ է ձգում ոչ թե հպատակներին առհասարակ, այլ լոկ կենտրոնացած անգլիական պետության ուղղակի թշնամիներին և Ֆալստաֆի գլխավորած քրեապարտ ամբոխին, որը միահեծան իշխանության կազմավորման պահին չի կարող օգտագործվել իբրև ստեղծարար ուժ: Բայց, այսպես թե այնպես, արքայազնի բնավորության այս գիծը ակներևաբար համոզում է, որ նրա վարքագծի արտաքին դեմոկրատիզմը անբաժան է զգաստ քաղաքական հաշվենկատությունից:

Արքայազն Հարրիի կերպարը գտնվում է «Հենրի Չորրորդ»-ի զույգ մասերի հակադրությունների համակարգի կենտրոնում: Դրանցից մեկի՝ արքայի ու թագաժառանգի հակադրության մասին, մենք քիչ առաջ հիշեցինք: Մյուսը՝ շատ ավելի կարևոր ու լայն մշակված, արքայազնի ու Պերսի Հոտսպըրի հակադրությունն է: Նրանց կոնֆլիկտի զարգացման ընթացքում պարզվում է, որ Հարրին օժտված է փայլուն ասպետական հատկություններով և այս առումով չի զիջում փառաբանված ռազմիկ Պերսի՝ Տաք խթանին: Հեռանալով պատմական վավերագրերից, համաձայն որոնց կրտսեր Պերսիին Ծրուսբերիի ճակատամարտում սպանել է անանուն մի զինվոր, Շեքսպիրը ստիպում է արքայազնին մենամարտի բռնվել Հոտսպըրի հետ և հաղթել հզոր ախոյանին: Բեմական պայմաններում դժվար չէ պատկերացնել այդ երկուսի՝ թեթև, ճկուն, շարժուն ու ճարպիկ արքայազնի և ծանրաշարժ, վիթխարի ֆիզիկական ուժի տեր, բայց փոքր-ինչ անդյուրաթեք Հոտսպըրի բախումը: Այս արտաքին հակադրությանը համապատասխանում է և հոգեբանական հակադրությունը: Հոտսպըրը, ինչպես արդեն ասվեց, ուղղագիծ անձնավորություն է, նա միշտ քայլում է ուղիղ դեպի նպատակը, ապավինելով միայն իր սրի ուժին և ընդունակ չէ նուրբ խուսախաղերի դիմելու: Իսկ արքայազնը փոփոխական է ու բազմադեմ, ընդունակ է իրավիճակին համաձայն կերպարանափոխվել. դրա համար էլ թե՛ պալատում, թե՛ ռազմադաշտում և թե՛ «Խոզի գլուխ» պանդոկում նա իրեն զգում է ինչպես ձուկը ջրում:

Եվ եթե Հոտսպըրի ուղղագիծ գործելակերպը արտահայտում է փոփոխվող ժամանակի կամքը հաշվի առնելու ծայր աստիճանի հասցված անընդունակությունը, ապա, ընդհակառակը, արքայազնի ճկուն ու բազմակողմանի բնավորությունը թույլ է

տալիս նրան, ավելի լավ, քան որևէ մեկը, հարմարվել պատմական միտումներին և դառնալ դրանց առավել հետևողական արտահայտողը։

Այսպես, Հենրի Չորրորդին նվիրված պիեսները վերանում են իդեալական արքայի կերպարի մի հսկա նախաբանի, որ ստացվել է շատ ավելի գունագեղ և ուշագրավ, քան լանկաստերյան շարքը եզրափակող քրոնիկը։ Արքայազնի կերպարի զարգացման ընթացքում պետական նկատառումները սկսում են ավելի ու ավելի շատ ուղղություն տալ նրա մտադրություններին։ Նա ավելի ու ավելի հաստատ է տիրում նախաձեռնությանը, մյուս գլխավոր գործող անձինք՝ թագավորը, Հոտսպերը. Ֆալստաֆը, արքայի համար գործունեության հրապարակ են բացում, ուր նա առանց լուրջ խոչընդոտների կարող է իրականացնել կամեցածը։ Եվ այդ հարուստ ու անզուգական անձնավորության ներքին հնարավորություններին ծանոթ հանդիսատեսը արդեն նախապատրաստված է հարցնելու՝ «Իսկ ինչպիսի՞ն է նա, այդ իդեալական միապետը»։

* * *

Շեքսպիրյան ռեալիզմի կարևորագույն նվաճումը Հենրի Չորրորդին նվիրված պիեսներում անգլիական հասարակության դեմոկրատական հատվածի զանազան շերտերի լայն կենսապատկերումն է, որն ընդունված է կոչել «Ֆալստաֆյան ֆոն» անունով։ Ֆալստաֆյան ֆոնի ըմբռնման ելակետը Էնգելսի հայտնի խոսքն է՝ Լասսալի «Ֆրանց ֆոն Զիկինգեն» դրամայի առիթով հեղինակին գրած նամակից. «Դրամայի՝ իմ ըմբռնման համաձայն, որը պահանջում է իդեալականի հետևում չմոռանալ ռեալիստականը, Շիլլերի հետևում՝ Շեքսպիրին, այն ժամանակվա այնքան զարմանալի խայտաբղետ պլեբեյական հասարակայնության ներգրավումը, բոլորովին այլ նյութ կտար պիեսի աշխուժացման համար, կտար անգնահատելի մի ֆոն՝ նախաբեմում ծավալվող ազնվականության ազգային շարժման համար և առաջին անգամ ճիշտ կլուսաբաներ բուն այդ շարժումը։ Ֆեոդալական կապերի քայքայման այդ դարաշրջանը ինչպիսի՜ ապշեցուցիչ բնորոշ կերպարներ է տալիս՝ հանձին թափառաշրջիկ չքավոր թագավորների, մուրացիկ լանդսկնեխտների և ամեն տեսակի ավանտյուրիստների,— հիրավի Ֆալստաֆյան մի ֆոն, որ այդ տիպի պատմական դրամայում է՛լ ավելի էֆեկտավոր կլիներ, քան Շեքսպիրի մոտ»[37]։

Նմանօրինակ դեմոկրատական շրջանների ներկայացուցիչները բեմում հայտնվում էին նաև ավելի վաղ քրոնիկներում, սակայն Հենրի Չորրորդին նվիրված պիեսների Ֆալստաֆյան ֆոնը, որ ապշեցնում է իր գունագեղությամբ ու բազմակերպությամբ, նշանավորում է Շեքսպիրի ստեղծագործական մեթոդի զարգացման մի նոր փուլը։ Միայն այս պիեսներում է, որ Ֆալստաֆի աղմկոտ շրջախումբը կազմող ապադասակարգայնացած ստահակները, գեղջուկները, սայլորդները, առևտրականները, պանդոկի ծառաները, պոռնիկները, զինվորները, ոստիկանները, հաշտարար դատավորները շարունակ ետին գիծ են մղում արքային ու նրա տիտղոսավոր հակառակորդ-

ների։ Ֆալստաֆյան տեսարանների միջոցով վերնախավի ներկայացուցիչների բախման մեջ ներգրավվում են Անգլիայի ազգաբնակչության ամենալայն շրջանները։ Այդ պատճառով էլ Հենրի Չորրորդին վերաբերող պիեսները ավելի, քան Շեքսպիրի մյուս քրոնիկները, դուրս են գալիս Անգլիայի գահակալության պատմության շրջանակներից, վերաճելով անգլիական հասարակության բոլոր խավերի կյանքը պատկերող ծավալուն կտավի։

Բայց, միաժամանակ, իրականության ընդգրկման նմանօրինակ լայնացումը քրոնիկի պոետիկային բերեց վերին աստիճանի ինքնատիպ ներքին հակասություն։ Արքայի ու խռովարար լորդերի կոնֆլիկտը վերլուծելիս ջանում էինք ընդգծել, որ այդ կոնֆլիկտը Շեքսպիրի պատկերմամբ ամբողջությամբ առած ճիշտ է վերարտադրում պայքարող բանակների հարաբերությունները և Հենրի Չորրորդի ժամանակաշրջանին բնորոշ պատմական միտումները։ Իսկ Ֆալստաֆյան ֆոնի հետ միասին լայն հոսանքով պիես են խուժում Շեքսպիրի ժամանակների՝ այսինքն XVI և XVII դարերի սահմանագլխին կանգնած Անգլիայի կյանքի հատկանշական նկրտումները, կենցաղն ու բարքերն արտացոլող պատկերներ։

Դրա ամենաակներև ապացույցը Ֆալստաֆի զորակլանության նկարագրությունն է և թագավորական բանակի համար զորք հավաքելու միջոցների պատկերումը։ Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում բանակ կազմելու հիմնական ու բնական եղանակը կոչն էր՝ հավաքվելու արքայի կամ նրա վասալը հանդիսացող խոշոր ֆեոդալի դրոշի ներքո։ Ֆեոդալական բանակի ստեղծման ձևից այս եղանակի մասին է ասում Մարքսը. «Միջին դարերում խոշոր բարոնը կարող էր հուժկու ապստամբություն բարձրացնել։ Յոմենները ու մանր վասալները վերցնում էին օջախի անկյունում դրված աղեղը, ասպետները հագնում էին զրահը, և մի քանի օրից գահին սպառնում էր ամբողջ մի բանակ»[38]։ Իսկ Շեքսպիրի դարաշրջանում միահեծան թագավորին ենթակա գավառային վարչակարգի նշանակության մեծացման կապակցությամբ բանակին զինվոր տրամադրողը արդեն վարչական միավորների իշխանություններն էին. կոմսությունները։

Ընդ որում զինվորների հավաքագրումը դարձել էր ամենաասանձարձակ առուծախի աղբյուր։ Շեքսպիրի ժամանակակիցների երկերը պահպանել են ինչպես բուն հավաքագրման, այնպես էլ բանակի համար դրա հետևանքների մի ամբողջ շարք գունեղ նկարագրություններ։ Այսպես, Բարնեբի Րիչը «Անգլիայի տագնապը» պամֆլետում, բացատրելով, թե ինչպես են քրեական աշխարհի ներկայացուցիչները հայտնվում բանակում, գրել է. «Երբ Լոնդոնում զինվոր են հավաքում, ապա կա՛մ բանտերն են մաքրում գողերից, կա՛մ՝ փողոցները խաբեբաներից ու շրջմոլիկներից, քանի որ նա, ում հանձնարարված է մարդիկ որոնել, որոնում է այնպիսիներին, որոնց ավելի լավ է կորցնել, քան գտնել. նա ուզում է էժան մարդիկ հավաքել և դրա համար էլ չի հարցնում, թե ովքեր են նրանք և որտեղից»[39]։ Զորահավաքի ժամանակ մեծ թափ առած չարաշահումների մասին պարզ խոսում է այն փաստը, որ

Գաղտնի խորհուրդը բազմիցս հարկադրված է եղել քննել հավաքագրողների հարցը: Նման հետաքննություններից մեկի շնորհիվ, օրինակ, 1598-ին պարզվել է, որ «Ռադնորշիր կոմսության ուղարկած զինվորները պիտանի չեն ծառայության, որովհետև հավաքագրվել են բանտերից կամ չքավորներից ու շրջմոլիկներից, վատ են զինված ու շատ ավելի վատ հագնված, չունեն կոշիկներ և նույնիսկ անդրավարտիքներ, այնպես որ չեն կարող մարդամեջ երևալ»[10]:

Ուրիշ շատ իրական մանրամասներ, որոնցից ստեղծվում է ֆալստաֆյան ֆոնի գունապատկերը, ինչպես նաև այդ ֆոնը կազմող կերպարների արտահայտիչ խոսքային բնութագրությունը, ոչ պակաս անվիճելի վկայում են այն մասին, որ ֆալստաֆյան ֆոնը ամբողջությամբ առած եղիսաբեթցիների ժամանակակից Անգլիայի ռեալիստական անդրադարձումն էր: Եվ երբ լոնդոնյան թատրոնի աղմկոտ պարտերը համերաշխ ծիծաղով դիմավորում էր հաստափոր ասպետի ու նրա խայտաբղետ ոհմակի հայտնվելը բեմի վրա, ծիծաղում էր այն պատկերների վրա, որոնք մեկ անգամ չէ, որ տեսել էր թե՛ մայրաքաղաքում և թե՛ այն ժամանակվա անգլիական գավառում:

Մեզ մնում է միայն բացեիբաց խոստովանել հակասության գոյությունը՝ նույն ստեղծագործության մեջ համատեղվում են միջնադարյան Անգլիային բնորոշ գծերը և շրջապատող իրականությունից արվեստագետի քաղած տարրերը: Այս է քրոնիկների մեջ Շեքսպիրի ռեալիզմի յուրահատուկ սահմանափակվածությունը՝ պայմանավորված պատմական մտքի, թատրոնի ու գրականության զարգացման մակարդակով: Միգուցե ինքը՝ դրամատուրգն էլ է զգացել այդ հակասությունը, որը ծագել է արդիականության առավել հրատապ խնդիրները արծարծելու նկատմամբ շարունակ աճող հետաքրքրությունից: Չի բացառված, որ այդ զգացումը եղել է այն պատճառներից մեկը, որի հետևանքով քրոնիկի ժանրը դադարել է նրան լրիվ բավարարելուց. պետք է հիշել, որ «Հենրի Հինգերորդի» բեմադրությունից անմիջապես հետո Շեքսպիրի ստեղծագործության մեջ սկսվում է նոր շրջան, երբ իշխող ժանրը դառնում է ողբերգությունը:

* * *

Ոչ միայն խայտաճամուկ պլեբեյական թափթփուկներին, այլև Հենրի Չորրորդին նվիրված քրոնիկի բոլոր գործող անձանց վրա, ինչպես Գարգանտյուան իր հպատակների վրա, հառնում է սըր Ջոն Ֆալստաֆի՝ Շեքսպիրի ստեղծած խոշորագույն կատակերգական կերպարի, վիթխարի ֆիգուրը: «Ոչ մի տեղ, թերևս, Շեքսպիրի բազմակողմանի հանճարը չի անդրադարձել այնպիսի բազմազանությամբ, ինչպես Ֆալստաֆի մեջ, որի արատները, մեկը մյուսի հետ կապված, կազմում են զվարճալի, այլանդակ մի շղթա՝ հնադարյան բաքոսական խրախճանքի պես»[41]: Լոնդոնյան բեմահարթակի վրա հայտնվելուն պես հաստափոր ասպետը բացառիկ ժողովրդականություն նվաճեց իր ժամանակակիցների մեջ, որը, ինչպես ցույց են տալիս ուսում-

նասիրությունները[42], ընդհանրապես գերազանցում էր նույնիսկ Համլետի ժողովրդականությանը:

Հայտնի է, որ Շեքսպիրի Ֆալստաֆը ուներ հեռավոր պատմական նախատիպ ի դեմս սըր Ջոն Օլդքասլի, լորդ Քոբհեմի, Վիքլեֆիթների առաջնորդներից մեկի, և որ Ֆալստաֆը պիեսի սկզբնական տարբերակում կոչվում էր հենց Օլդքասլ: Չի բացառվում, որ Ֆալստաֆի և արքայազն Հարրիի փոխհարաբերությունների պատմությունը, որն ավարտվում է ապետի արտաքսումով, ինչ-որ չափով Օլդքասլի ճակատագրի հեռավոր արձագանքն է: Նրան Հենրի Հինգերորդը գազանաբար տանջամահ է արել գահ բարձրանալուն պես: Եվ թեպետ սըր Օլդքասլի հետնորդները զայրանում էին, որ իրենց նախնին բեմ է հանվել կոմիկական տեսքով, դրամատուրգը լիակատար իրավունք ուներ հայտարարելու վերջերգում, որ իր Ֆալստաֆը պատմական Օլդքասլը չէ և ոչ էլ նույնիսկ Օլդքասլի պարոդիան: Իրոք, լորդ Քոբհեմի՝ Ռեֆորմացիայի համոզված կողմնակցի, եկեղեցու մաքրագործման ջերմեռանդ ջատագովի և Ֆալստաֆի՝ այդ ցինիկի ու մարմնապաշտի միջև անհնար է որևէ նմանություն գտնել:

Ֆալստաֆի կերպարը մի ամբողջ գրականություն է ծնել այդ կերպարի հնարավոր նախատիպերի վերաբերյալ, սկսած Պլավտոսի պարծենկոտ զինվորից, ներառյալ նաև Պանուրգին, Պուլչիի «Մեծ Մորգանտ» պոեմի Մարգուտին, մի շարք այլ գրական հերոսների ու, հատկապես՝ միջնադարյան անգլիական մորալիտեի մշտական մասնակից, այսպես կոչված՝ Արատին: Անշուշտ, չպետք է ժխտել, որ Շեքսպիրը կարող էր ծանոթ լինել համաշխարհային գրականության հուշարձաններին, ուր հանդես են գալիս իր հերոսի հետ հեռավոր նմանություն ունեցող պերսոնաժներ: Սակայն շեքսպիրյան Ֆալստաֆի բուն թարմությունը, նշանակալիությունն ու անկրկնելիությունը վկայում են, որ Շեքսպիրը մեքենայորեն իր պիեսի մեջ չի տեղափոխել իր հեռավոր ու ավելի մոտ նախնիների մշակած սյուժետային տարրերն ու բնութագրման հնարները: Շեքսպիրյան Ֆալստաֆը պիեսի մեջ հանդես է գալիս որպես դրամատուրգի ինքնատիպ պոետիկական մտածողության հոյակապ ապացույց:

Ֆալստաֆի նախատիպերի մասին բազմամյա բանավեճերից զատ, քննադատական գրականության մեջ կարելի է հանդիպել վերին աստիճանի թեժ վեճերի, որոնք վերաբերում են կերպարի սոցիալական բնույթին: Որոշ ուսումնասիրողներ հանձին Ֆալստաֆի կերպարի տեսնում են անկման ու վերասերման դուռը հասած ֆեոդալիզմի պարոդիան: Մինչդեռ մյուսները Ֆալստաֆին ընկալում են որպես ապագա բուրժուական աշխարհի սատիրական դիմանկար: Սակայն, ըստ երևույթին, նման երկվության բուն գոյությունն իսկ բավականաչափ արդարացված չէ: Ֆալստաֆը քրոնիկներում բավական յուրահատուկ տեղ է զբաղեցնում. արքայի ու պալատականների շրջանում նա իրեն պակաս ազատ ու անկաշկանդ չի զգում, քան պանդոկներում ու մեծ ճանապարհի վրա: Ուրիշ խոսքով, լինելով պիեսների վերին խավը ու պլեբեյական ֆոնը շաղկապող օղակը, Ֆալստաֆը պատկանում է ինչպես ուշ

միջնադարի, այնպես էլ Շեքսպիրի ապրած նոր ժամանակների աշխարհին:

Ֆալստաֆի կերպարի օբյեկտիվ մեկնաբանման ելակետ կարող է ծառայել այն բանի ընդունումը, որ նա իրականության նկատմամբ Վերածնության շրջանի մարդկանց ունեցած բնորոշ վերաբերմունքի տարբերակներից մեկի կողմն է: Միայն այս դեպքում մեզ համար պարզ կդառնա նաև այս հերոսի առաջ բերած կատակերգական էֆեկտի ակունքը և նրա գրավչության գաղտնիքը:

Որս բազեներով:

Վերջին հանգամանքը կարոտ է հատուկ ուշադրության: Զառամյալ հարբեցող, որ զվարճանում է «Պատռի՛ր սավանը» մականունը կրող Դոլլի պես թեթևաբարո կանանց ընկերակցությամբ. ցինիկ ու զազրախոս, ինքնամոռաց ստախոս ու երդվյալ վախկոտ,—Ֆալստաֆին բնորոշ հատկությունների նման հավաքածուն առաջին հայացքից բացառում է գրավչության մասին խոսելու հնարավորությունն իսկ: Եվ այնուամենայնիվ, բացառությամբ աչառու բարոյագետների, Շեքսպիրի բոլոր ընթերցողները այսօր էլ ակամայից ենթարկվում են հաստափոր ասպետի յուրահատուկ հմայքին:

Ֆալստաֆի վարքագծի գլխավոր հատկանիշը նրա հեդոնիզմն է, այն համոզմունքը, որ աշխարհիս երեսին միայն կյանքը, կեցության ռեալականությունն ու վայելքն են միակ արժեքը: Շատ հատկանշական է, որ մարդու կյանքում վայելքի դերի (ոչ թե ձևերի) հարցում Ֆալստաֆը փաստորեն Վերածնության շրջանի ամենախոր մտածողների աշակերտն է: Բավական է հիշել, թե ինչ էր գրում Մոնտենը վայելքի վերաբերյալ. «Այս աշխարհում բոլորը հաստատ համոզված են, որ մեր վերջնական նպատակը բավականությունն է, և վեճը սոսկ այն մասին է, թե ինչպես ձեռք բերել այն»[43]: Մեկ այլ խոշոր հումանիստ՝ Թոմաս Մորը, ելակետ ընդունելով այն դրույթը, թե բարձրագույն առաքինությունը ուրիշներին բարիք բերելն է, նույնպես վայելքը բնորոշում էր որպես մարդու գործունեության նպատակ. «Քեզ սազական է,—պնդում էր նա «Ուտոպիայում»,—ավելի պակաս բարեհաճ չլինել քո նկատմամբ, քան մյուսների: Չէ՞ որ եթե բնությունը հուշում է քեզ բարի լինել ուրիշների նկատմամբ, նա

հո չի՞ առաջարկում խիստ ու անգութ լինել ինքդ քո նկատմամբ: Դրա համար էլ նրանց (ուտոպիստների—Յու. Շ.) ասելով, ինքը բնությունն է մեզ հաճելի կյանք պատվիրում, այսինքն՝ վայելքը, որպես մեր գործերի վերջնական նպատակ»[44]: Հասկանալի է, Ֆալստաֆը անսահման հեռու է Թոմաս Մորի վեհ ալտրուիզմից, սակայն, թերևս, դժվար է ավելի հարմար նշանաբան գտնել Ֆալստաֆի ողջ գործունեության համար, քան «բարեհաճությունը իր նկատմամբ»:

Ֆալստաֆի կերպարի մյուս կարևորագույն՝ Վերածննության դարաշրջանին բնորոշ հատկանիշը նրա սուր, սկեպտիկ մտածողությունն է: Արտաքին պատյանի տակ իրերի էությունը տեսնելու և այն շիտակ, ցինիզմի հասնող ձևով բացահայտելու ընդունակությունը ոչ թե պարզապես Ֆալստաֆի անհատական իմաստունության դրսևորումն է, այլ մի որոշակի փիլիսոփայական համակարգի արտահայտությունը, որ նոր ժամանակի դիրքերից ակնդետ վերլուծում է ֆեոդալական հասարակության կյանքը և, առաջին հերթին, բարոյագիտությունն ու պրակտիկան:

Այսպես, օրինակ, բացատրելով ֆեոդալական խռովության դրդապատճառները, հաստափոր ասպետը հարկ չի համարում խորանալ արքայի և Վուստերի վեճի իրավական ու այլ մանրամասների մեջ. Ֆալստաֆի համար ապստամբության աղբյուրը ինչ-որ մասնավոր հանգամանքներ չեն. ըստ նրա, ֆեոդալների խռովությունը արքայի դեմ ֆեոդալական հասարակության օրենքն է: Հենց այս իմաստը պետք է տեսնել նրա հակիրճ ընդհանրացման մեջ. Rebellion lay in his way, and he found it (v, 1, 28)[45]:

Նույնքան շիտակ ու խորաթափանց կերպով Ֆալստաֆը բացատրում է նաև սկսված ապստամբության հետևանքները. խռովության ժամանակ, երբ ոչ ոք չի կարող վստահ լինել վաղվա օրվա համար, բոլոր արժեքների, այդ թվում և ֆեոդալական հասարակության գլխավոր արժեքի՝ հողի գինը անխուսափելիորեն ընկնում է. այդ մասին Ֆալստաֆը շատ արտահայտիչ նկատում է. You may day the land now as cheep stinking mack'rel (II, 4, 350)[46]:

Ֆալստաֆի քննադատական միտքը ամենից ավելի հետևողականորեն ուղղված է ասպետական պատվի ըմբռնմանը, ֆեոդալական հասարակության արտոնյալ դասի ստեղծած պատրանքին, թե «արիստոկրատիայի տիրապետության շրջանում իշխում էին պատիվ, հավատարմություն և այլ հասկացություններ»[47]: Թեպետ այն ամենը, ինչի մասին խոսում է Ֆալստաֆը, ցինիզմի որոշակի երանգ ունի, այնուհանդերձ ֆեոդալական «պատվի» նրա բացասման մեջ ճիշտ չէր լինի լոկ ցինիկ անբարոյականության դրսևորում տեսնելը: Հռչակավոր ֆալստաֆյան «կատեխիզիսը», որի օգնությամբ նա ապացուցում է, թե պատիվը ընդամենը մի դատարկ հնչյուն է (IV, 5, 127—140), հենվում է նույն փաստարկների վրա, որոնք Վերածննության շատ հումանիստներ օգտագործում էին ասպետների համար սովորական դարձած պատվո բառերի սնանկությունը մերկացնելիս: Ֆեոդալական էթիկայի այս կարևորագույն հիմնասյունի խնդրում Ֆալստաֆը հանդես է գալիս որպես Հոտսպերի հիմնա-

կան ու ամենահետևողական հակառակորդը: Եվ երբ պատվի վերաբերյալ Ֆալստաֆի մենախոսությունից հետո սկսվում է փարսը, որի ժամանակ հաստափոր ասպետը վերք է հասցնում թե՛ կյանքից և թե՛ ասպետական պատվի իդեալական ներկայացուցչի հպարտ տիտղոսից զրկված Հոտսպերի դիակին,—հանդիսատեսը դա ընկալում է ոչ թե պարզ մի փարս, այլ որպես Հոտսպերի սկզբունքների հանդեպ Ֆալստաֆի սկզբունքների հաղթանակի խորհրդանիշ:

Երբ հաշվի ես առնում Ֆալստաֆի գեդոնիզմը և միջնադարյան «պատվի» նկատմամբ նրա վերաբերմունքը, պարզ է դառնում և նրա վախկոտության առանձնահատկությունը: Մի կողմից Ֆալստաֆը միշտ և ամեն տեղ չէ, որ վախկոտ է. թե՛ որոշ գործող անձանց գնահատականները, թե՛ Ֆալստաֆի վարքագիծը «Հենրի Չորրորդի» երկրորդ մասում պատկերված ճակատամարտում, երբ սըր Ջոնը գերի է վերցնում վտանգավոր ապստամբ Քոլվիլին, խոսում են այն մասին, որ երբեմն նա կարող է գործել որպես բավականաչափ քաջ մարդ: Բայց մյուս կողմից, երբ Ֆալստաֆն զգում է, որ ակներև առավելությունը հակառակորդի ձեռքում է և իր կյանքին ռեալ վտանգ է սպառնում, պատրաստ է փրկվել ամեն գնով՝ ռազմական խորամանկություն կլինի դա (սպանված է ձևանում), թե պարզապես փախուստ: Ինչպես սրամիտ նկատել է Ա. Հարբեջը, Ֆալստաֆի համար նման դեպքերում «արահետից ճողոպրելը կամ ռազմադաշտում սպանված ձևանալը նույնն է, թե տապալվող ծառի տակից փախչելը»[48]: Սըր Ջոնի այս վարքագիծը բխում է նրա աշխարհայացքից. կյանքը մի հարստություն է, որը տնօրինում է մարդը, այնինչ խոսակցությունները արիության, պատվի մասին և այլն, ընդամենը դատարկ ճամարտակություններ են:

Այն արատների մեջ, որոնցով Շեքսպիրը օժտել է հաստափոր ասպետին, կարևոր տեղ է գրավում ստախոսության հակումը: Ֆալստաֆը սուտ չի խոսում միայն ինքն իր հետ մնալիս: Հենց որ հանդիպում է ուրիշների, նրա խոսքում անպայման հայտնվում են չափազանցության ու զուտ ստախոսության տարրեր: Բայց Ֆալստաֆը սովորական ստախոս չէ, այլ տաղանդավոր իմպրովիզատոր-ֆանտազյոր: Այս հատկությունը հատկապես վառ դրսևորվում է այն տեսարանում, ուր պատմում է իր վրա ավազակների հարձակման մասին (II, 4): Այդ պատմությունը վկայում է, որ Ֆալստաֆը կանխապես որևէ հետևողական վարկած չի հորինել, գիշերային արկածը պատմելիս սկսում է ավելի ու ավելի ոգևորվել իր նկարագրած պատկերով: Տվյալ դեպքում Ֆալստաֆը, հետազոտողներից մեկի խոսքով ասած՝ հանդես է գալիս որպես «ստեղծագործող հանճար, որի երևակայությունը գործում է ու ծաղկում, ընդհարվելով ճշմարտության օրենքի հարուցած խոչընդոտների հետ»[49]: Ընդ որում, որքան էլ դա պարադոքսալ հնչի, Ֆալստաֆը, որ առանց քաշվելու խեղաթյուրում է փաստերը, ամեն րոպե ընկնում չափազանցությունների մեջ, պարծենում իր չգործած սխրանքներով,—մնալով իրադարձությունների հեգնոտ մեկնաբան, մյուսներից ավելի հաճախ է ասում ճշմարտությունը շրջապատի ու իր մասին:

Ասվածին պետք է ավելացնել, որ Ֆալստաֆի սուտը որակապես տարբերվում է այն ստից, որին դիմում են շեքսպիրյան չարագործները: Իր հնարած պատմություններով հաստափոր ասպետը հաճախ շահադիտական ոչ մի նպատակ չի հետապնդում և, համենայն դեպս, վնաս չի հասցնում շրջապատին:

Թղթախաղ, XV դար:

Իհարկե, Ֆալստաֆի կյանքի սկզբունքը եսասիրական բնույթի է: Սակայն Ֆալստաֆի եսասիրությանը շատ բնորոշ է մի գիծ. հաստափոր ասպետը երբեք չի դառնում ուրիշի դժբախտության պատճառ և մարդկանց վնաս չի պատճառում: Պիեսի վերջում պարզ է դառնում, որ մշտապես Ֆալստաֆի երեսին շպրտվող հիմնական հանդիմանությունն իսկ (թե նա այլասերել է պատանի արքայազնին) չի համապատասխանում իրականությանը: Ուրիշ բան, որ դրանում մեղավոր է ոչ այնքան Ֆալստաֆը, որքան արքայազն Հարրին. բայց փաստը մնում է փաստ՝ մտերմություն Ֆալստաֆի հետ նրան օգուտից բացի ոչինչ չի բերել:

Եվ եթե հիշենք, որ կասկածելի բարոյական հատկությունների կողքին Ֆալստաֆըն օժտված է անսպառ կենսասիրությամբ, հոգեկան անկախությամբ, զգաստ մըտքով, քննադատական ընդհանրացումների ընդունակությամբ, իր և ուրիշների մասին շիտակ դատելու կարողությամբ, շրջապատի նկատմամբ սեփական գերազանցության զգացումով, արտիստիզմով և, վերջապես, փայլուն, կայծկլտող սրամտությամբ, ապա Ֆալստաֆի գրավչությունը կդադարի հանելուկ լինելուց:

Բացառված չէ նաև, որ գոյություն է ունեցել ևս մի որոշակի պատճառ, որ Ֆալստաֆի կերպարը ժողովրդական է դարձրել եղիսաբեթյան ժամանակների դեմոկրատական հանդիսատեսի շրջանում: Հասարակ մարդիկ այդ կերպարի մեջ կարող էին տեսնել «արտոնյալ հասարակության մարդուն»: Ու. Էմպսոնի կարծիքով Ֆալստաֆը «արտոնյալ դասին պատկանող մի սկանդալիստ է, որի վարքը շփոթեցնում է իր դասակարգին և դրանով իսկ, որպես մերկացնող կերպար, բավականություն պատճառում ստորին դասի հանդիսականին»[50]:

Վերջում պետք է նշել, որ Ֆալստաֆը ունի ևս մի գիծ, որը նկատելիորեն մեղմացնում է այդ սկեպտիկորեն տրամադրված սրախոսին: Հաստափոր ասպետը ընդունակ է հեգնանքի դիմակ հագած՝ խոր ու անկեղծ սեր տածել ուրիշի նկատմամբ: Մենք նկատի ունենք Ֆալստաֆի վերաբերմունքը արքայազն Հարրիի հանդեպ:

Դեռևս «Հենրի Չորրորդ»-ի սկզբում արքայազնը ասում է, որ իր մտերմությունը Ֆալստաֆի հետ ժամանակավոր բան է: Իսկ երկրորդ մասի ավարտը, ուր նոր արքան վանում է իր նախկին բարեկամին, կասկած չի թողնում, որ այս հարցում, Հարրիի մտադրությունները միանգամայն լուրջ են: Այնինչ Ֆալստաֆը անկեղծորեն կապված է արքայազնին ու փայփայում է այն պատրանքը, թե արքայազնն էլ է անկեղծ վերաբերվում իրեն: Եվ Ֆալստաֆի մահվան պարագաների նկարագրությունը «Հենրի Հինգերորդում» ցույց է տալիս, որ հենց արքայազնի հասցրած բարոյական վերքն է կարճում գեր ասպետի կյանքը:

«Հենրի Չորրորդի» վերջին տեսարանում Ֆալստաֆը, արքայազնի հոգում և վարքում տեղի ունեցած փոփոխություններին անտեղյակ, ցնծալից ընդառաջ է վազում նախկին բարեկամին, սակայն դեմ է առնում արհամարհական ու դաժան հարվածի: Եթե առաջ էլ դրամատուրգը հեգնում էր Ֆալստաֆին, որը չէր հասկանում արքայազնի իրական բնավորությունն ու մտադրությունները, ապա այս տեսարանում հեգնանքը ձեռք է բերում ողբերգական երանգ, թույլ տալով մինչև վերջ ըմբռնել Ֆալստաֆի էությունը և միաժամանակ զգալ նոր միայն գահ բարձրացած Հենրի Հինգերորդի նկատմամբ Շեքսպիրի վերաբերմունքի խորությունը:

Արքայազն Հարրիի ու Ֆալստաֆի բախումը գնահատելու համար առաջնային նշանակություն ունի քաղաքական կողմը: Քանի դեռ միապետականության գաղափարակիրների դեմ կանգնած էին հզոր խռովարար ֆեոդալները, Ֆալստաֆը, որ իր սարկազմը ուղղում էր գլխավորապես ֆեոդալական էթիկայի դեմ, բնականաբար, կանգնած էր արքայազնին մոտ: Արքայի հակառակորդների թուլացման համեմատ տեղի է ունենում Ֆալստաֆի աստիճանական հեռացումը արքայազնից: Իսկ երբ վերջինս թագավոր է դառնում և սկսում է անգլիական պետության ամրապնդման ակտիվ քաղաքականությունը, նա այլևս չի կարող Ֆալստաֆին օգտագործել որպես իր դաշնակից: Ֆալստաֆի գաղափարախոսության մեջ բացասման գերակշռությունը հաստատման նկատմամբ, անխուսափելիորեն սըր Ջոնին պիտի դարձներ Հենրի Հինգերորդի հակառակորդ: Ֆալստաֆի մտերմությունը արքա Հենրիի հետ միայն պիտի արգելակեր միապետի ստեղծարար գործունեությունը: Եվ ահա Ֆալստաֆը մերժված է, մի բան, որ միանգամայն օրինաչափ է քաղաքական տեսակետից:

Սակայն արքայազնի ու Ֆալստաֆի մտերմության խզումը և սըր Ջոնի՝ դրան հետևող մահը միայն քաղաքական օրինաչափության արտահայտություն չեն: Ֆալստաֆին վռնդելով, Հենրի Հինգերորդը իրենից հեռացնում է ոչ միայն սկեպտիկ ու ցինիկ մեկին, այլև մի անձնավորության, որը բոլորից ավելի է ներծծված Վերածնության ոգով: Դրա համար էլ արտաքսված Ֆալստաֆի մահը, որ ստանում է խորհրդանշական իմաստ, ասես թախծոտ հնչյուններ է միախառնում հաղթանակած արքայի պատվին որոտացող շեփորների հանդիսավոր կանչին: «Ֆալստաֆի մահը,—գրում է Մ. Մ. Մորոզովը,—սկիզբն է գերառատ մարդկային ուժերի, մոլեգին, անսանձելի կրքերի, թեժ զգացմունքների այն մեծ ծովի տեղատվության,

որ մենք անվանում ենք Վերածնունդ: «Պարարտ ասպետը» Արթուր թագավորի գիր- անցավ, ժողովրդական հեքիաթի գիրկը»[51]:

Իդեալական արքայի ճանապարհը բաժանվեց ոչ միայն ինքնիշխան խռովար- ֆեոդալներից, այլև Վերածնության դարաշրջանի մեծ կենսասերից:

* * *

Հենրի Հինգերորդի մասին պատմող պիեսում դժվար չէ նկատել կոմպոզիցիա- այնպիսի տարրեր, որոնք մերձեցնում են նրան ամենավաղ շեքսպիրյան քրոնիկ- «Հենրի Վեցերորդի» առաջին մասին: «Հենրի Հինգերորդի» սյուժեի հիմքը կա- մում են Ֆրանսիայի հետ ռազմական ընդհարման պերիպետիաները, ինչպես նա- այդ ընդհարման նախապատրաստությունն ու անմիջական հետևանքները: Սակայ- «Հենրի Հինգերորդի» տոնայնությունը միանգամայն հակադիր է վաղ քրոնի- տրամադրությանը: «Հենրի Հինգերորդը» մի ներբող է՝ ձոնված հաղթաներոս արք- յին, որը հանդես է գալիս որպես ողջ անգլիական ազգի առաջնորդ:

Հանդիսավորությունը ընդգծելու համար Շեքսպիրը պիեսում օգտագործում է - հնարանք, որին չէր դիմել իր ոչ մի պիեսում. հինգ արարվածներից յուրաքանչյու- սկզբում հանդես է գալիս Խոսնակը, փառաբանում Հենրի Հինգերորդին ու ջան- համոզել հանդիսատեսին, թե այն իրադարձությունները, որ նա պիտի տեսնի բե- վրա, վիթխարի են: Արդեն Խոսնակի առաջին երգում, որ կազմված է մուսային դ- մելու դասական ձևի բոլոր կանոններով, Հենրիին համեմատում են Մարսի հե- հաջորդ նախերգներում ծագում է միասնական Անգլիայի թեման, ուր թագավո- բոլոր հպատակները, միապետի օրինակով ոգեշնչված, մարտի են ձգտում. վերջապե- Խոսնակի վերջին երգում Հենրիի հաղթանակը հավասարեցվում է Կեսարի հաղթ- անակին, որ եղիսաբեթցիների աչքում բարձրագույն գովեստն էր թագավորին:

Բայց սրանից զատ, Խոսնակի երգերում համառորեն զարգացվում է ևս - կարևոր միտք՝ ինքնանսեմացուցիչ խոստովանություններ այն մասին, որ դրամ- տուրգը, ձեռքի տակ սահմանափակ միջոցներ ունենալով, չի կարող արժանի կե- պով վերարտադրել պիեսի հենքը կազմող իրադարձությունների վեհությունը: Մի- չէր լինի բոլոր այս բազմակի ներողությունների մեջ լոկ Շեքսպիրի արտուն- տեսնել իր ժամանակների բեմի անկատարությունից, մանավանդ որ միշտ դիմել- հանդիսատեսի երևակայությանը, Շեքսպիրը իր ուրիշ ոչ մի ստեղծագործության - հարկ չի համարել հատուկ վերապահում անել այդ հանգամանքի վերաբերյալ: Ա- նայն հավանականությամբ, «Հենրի Հինգերորդի» Խոսնակի խոսքերում ինչ-որ չ- փով իր արտահայտությունն է գտել լանկաստերյան տետրալոգիայի վերջին պիե- վրա աշխատելու շրջանում Շեքսպիրին համակած ստեղծագործական անբավարա- վածության զգացումը: Որտե՞ղ որոնել այդ անբավարարվածության պատճա- Ըստ երևույթին, սեփական ստեղծագործության նկատմամբ Շեքսպիրի նման վեր- բերմունքը ամենաընդհանուր ձևով կարելի է բացատրել նրանով, որ մեծ ռեալիս-

զգացել է պիեսի հղացման ու այդ հղացման գեղարվեստական մարմնավորման միջև եղած որոշակի հակասությունը:

«Հենրի Հինգերորդը» միակ շեքսպիրյան պիեսն է, որի կենտրոնում տեսնում ենք իդեալական միապետի կերպարը. պիեսը հղացվել է որպես գեղարվեստական մարմնավորում առացած պատասխան այն հարցին, թե ինչպիսին պիտի լինի միապետը:

Վերն արդեն ասվեց, որ Հենրի Հինգերորդի արտաքին-քաղաքական հաջողությունները, ինչպես նաև նրա մահից հետո Անգլիայում ստեղծված պատմական իրադրությունը, հող հանդիսացան այդ դաժան արկածախնդրի իդեալականացմանը: Արդարությունը պահանջում է նշել, որ իդեալականացմանը նպաստել են նաև այդ թագավորի որոշ անհատական հատկությունները: Հենրին աչքի էր ընկնում աներկբայելի խիզախությամբ: Հասկանալով, որ իր բանակի շարքային զինվորները են ռազմադաշտի վճռական ուժը, նա հոգատարություն է հանդես բերում մարտիկների նկատմամբ և բանակը ապահովելու համար կանգ չի առնում նույնիսկ սեփական թանկարժեք իրերը, այդ թվում և թագը գրավ դնելու առջև: Զորքի բարձր կարգապահությունը պահպանելու անհրաժեշտությունը, ինչպես նաև զավթած Նորմանդիայի բնակիչներին հօգուտ իրեն տրամադրելու ձգտումը Հենրիին թելադրում են ձեռնարկել մի ամբողջ շարք խիստ միջոցներ՝ ուղղված բանդիտիզմի ու դիակապտության դեմ: Կանանց ու անզեն բնակիչների վրա հարձակվելու համար Հենրի Հինգերորդի բանակի զինվորը ենթակա էր մահապատժի. խաղաղ բնակչությանը կողոպտելու համար նույնպես մահապատիժ էր նախատեսված: Այս միջոցառումները Հենրի Հինգերորդի շուրջը ասպետական վեհանձնության լուսապսակ են ստեղծում:

Օգտվելով ինչպես Հենրի Հինգերորդին վերաբերող պատմական տեղեկություններից, այնպես էլ ժողովրդական ավանդությունից, ուր Հենրի Հինգերորդի կերպարը կրել է էական փոխակերպություններ, Շեքսպիրն ստեղծել է իդեալական միապետի ավարտուն կերպար: Հենրի Հինգերորդը անզուգական խելքի տեր մարդ է, խիզախ ասպետ. նա բարոյապես անբասիր է մնացել, չնայած վաղեմի մտերմությանը Ֆալստաֆի ու նրա ընկերների հետ: Այդ անվեհեր, ուժեղ ու ճարպիկ մարտիկը դառնում է նույնքան էլ համարձակ ու նախաձեռնող զորավար: Բայց դրա հետ մեկտեղ, Հենրի Հինգերորդը հմուտ ու խորաթափանց քաղաքագետ է, ընդունակ սթափ ու լիակատար ինքնատիրապետմամբ գնահատելու բարդ իրավիճակները: Նա դաժան լինելու չափ վճռական է իր ռազմական ու քաղաքական ծրագիրը իրականացնելիս: Հենց որ Հենրին ստանում է թագը, նրա բոլոր արարքներին սկսում են ուղղություն տալ պետության շահերը: Իր գիծն առաջ տանելու եռանդն ու համառությունը, հաղթանակի վստահությունը Հենրի Հինգերորդը քաղում է այն համոզմունքից, որ ինքը՝ գահակալության լիակատար իրավական ու բարոյական իրավունք ունեցող մի մարդ, գործում է հանուն անգլիական պետության ամրապնդման ու բարգավաճման: Հասկանալով, թե որքան կարևոր է ժողովրդի վերաբերմունքը թագավորի նկատ-

նամբ, Հենրին կապ է պահպանում հասարակ մարդկանց հետ, կարողանում է որսալ զինվորների տրամադրությունը և, նրանց հետ իրենց հասկանալի լեզվով խոսելով, տանում է իր ետևից հանուն «հզոր սրտով փոքր մարմնի»՝ Անգլիայի հաղթանակի (Little body with a mighty heart; Prol; II, 17):

Վերը հիշված գծերը, որոնցով Շեքսպիրը օժտել է Հենրի Հինգերորդին, բավական է հայրենասեր արքայի կերպարն ստեղծելու համար, արքա, որ քայլում է ազգի առջևից ու արշավի ելնում անգլիական պետության ծաղկման համար: Բայց և այնպես շեքսպիրյան Հենրի Հինգերորդը երկակի զգացում է առաջ բերում: Նույնիսկ Է. Դաուդենը, որ գովեստներ չի խնայում այդ հերոսի հասցեին, ստիպված է եղել խոստովանելու՝ Հենրի Հինգերորդը ընդամենը պատկերումն է այն բանի, թե «ինչպես կյանքում հասնել լավագույն գործնական հաջողության»[52]: Ուրիշ խոսքով, Շեքսպիրի ստեղծած իդեալական միապետը դրամատուրգի համար չի կարող մարդու իդեալ լինել բառի բուն իմաստով:

Այն ուսումնասիրողները, որոնք ձգտել են Հենրի Հինգերորդի կերպարը մեկնաբանել որպես իդեալական միապետին ու ճշմարիտ ժողովրդական հերոսին բնորոշ հատկությունների միասնություն, սովորաբար իրենց դիրքը հիմնավորում են իբր այդ միապետին հատուկ շիտակ դեմոկրատիզմի դրսևորումներով: Իսկապես, ջահել տարիներին Հենրիի ստացած դասերն ապարդյուն չեն անցնում: Անհրաժեշտության դեպքում նա կարող է պահել իրեն զուտ դեմոկրատական ձևով: Հենրիի այս ընդունակությունը հատկապես ցցուն հանդես է գալիս հռչակավոր գիշերային տեսարանում, երբ արքան ճակատամարտից առաջ շրջում է ճամբարում ու զրուցում զինվորների հետ (IV, 4): Բայց այստեղ չպետք է մոռանալ, որ Հենրիի վարքը տվյալ դեպքում ենթարկված է զգաստ քաղաքական նկատառումներին. զրույցի դեմոկրատական երանգը միապետի ձեռնարկած գործի ագիտացիայի լավագույն ձևն է դուրս գալիս: Ձևով շատ ավելի դեմոկրատական է արքայի հոխորտանքը ֆրանսիական արքայադստեր հարսնախոսության տեսարանում (V, 2), ուր Հենրին իրեն՝ մարտերում կոպտացած ռազմիկին, հակադրում է արքունական նրբակիրթ պոետներին, շողոքորթներին ու ճոռոմախոսներին: Բայց այստեղ ևս Հենրիի ցուցադրական պարզասրտության տակ ոչ պակաս հաշվենկատ քաղաքական խաղ է թաքնված. Հենրին փաստորեն չի թաքցնում, որ ֆրանսիական արքայադստեր ձեռքն իրեն հարկավոր է այն բանի համար, որպեսզի տիրի ողջ Ֆրանսիային. նրա վերջնական նպատակն է «հունցել» (compound, V, 2, 205) մի տղա-թագաժառանգ, մի կիսաֆրանսիացի-կիսաանգլիացի, որը միավորեր այդ երկու երկիրը Անգլիայի հովանու ներքո:

Հենրի Հինգերորդի կերպարի խոր հակասականությունը չեն կարողացել չնշել նույնիսկ այն ուսումնասիրողները, որոնք, ինչպես Գ. Ուիլսոն Նայթը, հանձին նրա տեսնում են մի «իդեալական անգլիական տիպ»: Նայթը ստիպված է խոստովանել, որ դրական միապետին Շեքսպիրի տված գծերը «մայրցամաքի մարդուն կարող են

երկերեսանիություն թվալ»[53]: Մինչդեռ հայտնի է, որ երկերեսանիությունը Շեքսպիրի աչքում էթիկական իդեալի հետ անհամատեղելի հատկություն է:

Քննելով այն պատճառները, որոնց հետևանքով Հենրի Հինգերորդի մասին գերազանց հղացված պիեսը ստացվել է դատողական ու ներքին համոզչականությունից զուրկ, ականավոր սովետական շեքսպիրագետ Ա. Ա. Սմիրնովը ժամանակին հարց է տվել. «Իրավասու չե՞նք արդյոք դրա մեջ տեսնելու ինչ-որ ներքին խոր տարակույսների դրսևորումը, արդեն նշված երկակի վերաբերմունքը միապետականության նկատմամբ, որ խանգարել է Շեքսպիրին ի պաշտպանություն սրա համախմբել իր բովանդակ գեղարվեստական պաշարները և պիեսին տալ նրան պակասող գրավչությունը»[54]: Այս հարցի պատասխանը տալիս է շեքսպիրյան դրամատուրգիայի հետագա զարգացումը: «Հենրի Հինգերորդի» պրեմիերայից մի քանի ամիս անց «Գլոբուսի» բեմահարթակում խաղացվում է «Հուլիոս Կեսար» ողբերգությունը, մի պիես, որի լեյտմոտիվներից մեկը այն միտքն է, թե անսահմանափակ իշխանությունը անխուսափելիորեն հանգեցնում է ինքնակալի անհատականության վերասերման:

* * *

Պատմական քրոնիկների շարքը Շեքսպիրը ստեղծեց մի շրջանում, երբ Անգլիայում ծագում էին նախահեղափոխական իրադրության նախադրյալները, երբ ֆեոդալական ռեակցիայի ուժերը համախմբվում էին և ավելի ու ավելի հստակ որոշում իրենց դիրքավորումը ծնվող հեղափոխական ուժերի նկատմամբ: Դրա համար էլ երկրի ազգային միավորմանը խանգարող ֆեոդալական անիշխանականության ուժերի կրքոտ մերկացումը Շեքսպիրի կողմից, ինչպես և այդ ուժերի անխուսափելի պարտության ապացուցումը վերին աստիճանի հրատապ խնդիր էր մեծ դրամատուրգի պատմական պիեսների ստեղծման ժամանակաշրջանում:

Սակայն շեքսպիրյան քրոնիկների այդ հրատապությունը բացատրվում է ոչ թե հեղինակի մտադրությամբ՝ իր պատկերած իրադարձությունները վերածել արդիականության քաղաքական այլաբանության, այլ Անգլիայի պատմական զարգացման մի շարք համանման միտումների առկայությամբ, որոնք գործում էին թե այն ժամանակ, երբ տեղի էին ունենում նրա պիեսների անցքերը և թե՛ XVI դարի վերջերին: Շեքսպիրյան քրոնիկների գաղափարական խորությունը պայմանավորված է հենց նրանով, որ Անգլիայի պատմության իրադարձությունները պատկերելով, դրամատուրգը ձգտել է ըմբռնել ու օբյեկտիվորեն վերարտադրել հայրենի երկրի զարգացման հեռանկարները: Այդ ճանապարհով գնալով, Շեքսպիրը ստեղծել է մի ծավալուն ռեալիստական պատկեր, ուր անքակտելիորեն շաղկապված են առանձին անհատների ու ժողովրդական լայն զանգվածների ճակատագրերը: Նա տարերայնորեն է մոտեցել պատմությունը որպես օբյեկտիվ օրինաչափություն պատկերելու գիտակցությանը, օրինաչափություն, որի առջև անզոր են երկրի զարգացման հիմնական նկրտումների դեմ հանդես եկող մարդիկ:

Շեքսպիրի աշխատանքը քրոնիկների շարքի վրա վիթխարի նշանակություն ունեցավ մեծ դրամատուրգի հետագա ողջ ստեղծագործության համար: Խոր հետաքրքրությունը պատմական ու քաղաքական խնդիրների նկատմամբ, որը վա- կերպով դրսևորվեց քրոնիկներում, նպաստեց շեքսպիրյան աշխարհայացքի հարըստացմանը: Շեքսպիրի ստեղծագործական մեթոդի մեջ ռեալիզմի հետագա հաստատման համար պակաս նշանակություն չունեցան նաև պոետի գեղարվեստական նվաճումները պատմական քրոնիկների ժանրում:

Կարելի է համարձակ պնդել, որ առանց հայրենի պատմությանը վերաբերող պիեսների վրա Շեքսպիրի կատարած աշխատանքի, անհնար կլինեին նրա անցումն այն ողբերգություններին, որոնք ստեղծվել են 1599-ից հետո: Սակայն ճիշտ չէ լինի քրոնիկները դիտել լոկ որպես յուրահատուկ նախապատրաստական փուլ երրորդ շրջանի ողբերգություններին անցնելու համար: Պատմական քրոնիկները գեղարվեստական ստեղծագործություններ են բառիս ամենաբարձր իմաստով, պիեսներ, որոնք ունեն լարված կոնֆլիկտներ, սրընթաց գործողություն, հարուստ, բազմակողմանի, զարգացող բնավորություններ, ընդ որում դրանցից ոմանք, ինչպե օրինակ, Ֆալստաֆը, իրենց հավասարը չունեն Շեքսպիրի մնացած ողջ ստեղծագործության մեջ:

Գեղարվեստական խորության ու գեղարվեստական փայլուն վարպետությա օրգանական միաձուլումը Շեքսպիրի քրոնիկները դարձնում է Վերածնության պատմական դրամատուրգիայի ամենաբարձր նվաճումը և համաշխարհային գրականության մեջ ռեալիստական պատմական դրամատուրգիայի նախատիպը: Հենց դրանո էլ Շեքսպիրի պատմական քրոնիկները որպես կարևոր մի գործոն իրենց ազդեցությունն ունեցան համաշխարհային պատմական դրամատուրգիայի հետագա ողջ զարգացման վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Շեքսպիրի գործերի անգլերեն տեքստի մեջբերումները կատարվում են ըստ* The Tud Edition of William Shakespeare. Ed. by *P. Alexander*. L. and Glasgow, 19 *հրատարակության:*
2. *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 20, стр. 345
3. Sir *Walter Raleigh*, The History of the World, vol. 1. L., 1614. p. 13.
4. Fr. Baconi operum et civilium tomus. L. 1638, p, 220.
5. *«Աշխարհի ամենալավ դերասաններն են, թե՛ ողբերգության համար, թե՛ կատակերգությա թե՛ պատմության, հովվերգության, հովվերգա-զավեշտական, պատմա-հովվերգական, ո բերգա-պատմական, ողբերգա-զավեշտա-պատմա-հովվերգական, տեսարան անբաժան կամ քերթված անսահմանափակ»:* **(Շեքսպիր,** *Ընտիր երկեր, հ. I, Երևան, 1951, թարգ Հ. Մասեհյանի):*
6. *A. Thorndike (ed)*. The Minor Elizabethan Drama, vol. II. L. N Y, 1951, p. XI

7. *Մեջբերումը կատարված է ըստ* The Tudor Edition of W. Shakespeare L. and Glasgow, 1954, p. XVI.
8. O tiger's heart wrapped in a woman's hide. (I, 4, 137).
9. *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., т. 20 стр. 507.
10. *К. Маркс и Ф. Энгельс Соч., т. 21, стр. 411.*
11. Архив *Маркса и Энгельса,* т. VI, Госполитиздат, 1939, стр. 306.
12. *К. Маркс и Ф. Энгельс,* Соч., т. 21, стр. 416.
13. *Թարգմ. Ո՜վ դուք, հետնորդներ, դեռ պիտի տեսնեք տարիներ դժնի,*
Երբ արցունքներով մայրը կանի նորածին մանկան,
Եվ մեր հարազատ կղզին կդառնա արցունքի հովիտ,
Կմնան կանայք, որպեսզի ողբան զոհերի վրա։
14. Архив *Маркса и Энгельса,* т. VIII. ОГИЗ—Госполитиздат, 1948, стр. 401.
15. *Ներկայումս «Հենրի Վեցերորդի» առաջին մասի այս թվագրման օգտին է հակվում ուսումնասիրողների մեծամասնությունը։ Այս տարբերակն է մատնանշում, մասնավորապես, Է. Հոլիդեյը* A Shakespere Companion Ahlesbury, *1964, գրքում։ Որոշելով Շեքսպիրի առաջին պիեսների երևան գալու ժամանակը, պրոֆ. Պ. Ալեքսանդերը գրում է. «Ենթադրությունը, թե Շեքսպիրը իր դրամատուրգիական կարիերան չի սկսել մինչև 1591 թվականը, հենվում է Շեքսպիրի դեմ Գրինի ելույթին Մալոնի տված սխալ բացատրության վրա... Հիմա, երբ այդ բացատրությունը հերքված է, դրա հիման վրա արված ենթադրությունները ևս սնանկ են»* (The Tudor Edition of W. Shakespeare, p. XVI).
16. *Տե՛ս B. Harrison,* Elizabethan Journals. L., 1938.
17. *«Զարթնի՛ր, զարթնի՛ր, Անգլիայի ազնվականություն»։*
18. Sir *Philip Sidney's*, Astroshel and Stella and Defence of Poesie. Halle a. Saalle, 1889, S. 103.
19. *Նույն տեղում։*
20. Архив *Маркса* и *Энгельса,* т. VI, Госполитиздат, 1939, стр. 401.
21. *К. Маркс и Ф. Энгельс,* Соч., т. 21, стр. 406.
22. *ДЖ. М. Тревельян,* Социальная история Англии, М., 1959, стр. 81.
23. *Holinshed's* Cronicle As Used in Shakespeare's Plays. Ed. by A. and J. Nicoll. L., 1955, p. 113.
24. *«Ի՞նչ ասեմ ես։ Թույլ են իմ իրավունքները»։*
25. *В. Г. Белинский,* Полн. собр. соч., т. 1, стр. 48.
26. *J. F. Danby*, Shakespeare's Doctrine of Nature, L., 1951, p. 63.
27. *К. Маркс и Ф. Энгельс,* Соч., т. 7, стр. 347.
28. *Holinshed's* Cronicle As Used in Shakespeare's Plays L., 1955, p. 51.
29. Архив *Маркса* и *Энгельса,* т. VIII, ОГИЗ—Госполитиздат, 1946, стр. 391.
30. *Մեջբերումը՝ J. F. Danby.* Shakespeare's Doctrine of Nature, p, 51.
31. *A. E. Baker*, A Shakespeare Commentary, I. N. Y., 1957, p. 453.
32. *Թարգմ. Պատվական լորդ իմ,*
Խորամուխ եղեք ժամանակի մեջ և կհամոզվեք,
Որ մեղավորը ոչ թե արքան է, այլ ժամանակը,
Ձեր զրկանքների պատճառը նա է։
33. *Թարգմ. Որքան անառակ, այնքան հանցուգն է։ Այդ երկուսի մեջ*
Տեսնում եմ սակայն ես որոշ կայծեր սփոփիչ հույսի,

Որ նա կարող է մեծ փառքի հասնել,
Երբ շատ ավելի չափահաս դառնա։

34. *Holinshed's* Cronicles • • •, p. 57.
35. „Versus ritmicus in laudem regis Henrici Quinty". „Elhami liber metricus de Henrico Qunto"- Memorials of Henry the Fifth, King of England. L., 1859.
36. *М. Монтень*, Опыты, кн. 1, М.—Л., 1954, стр. 202.
37. **«Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», Հ. I, Եր., *1963*, էջ *32*։**
38. Архив *Маркса и Энгельса,* т. VIII, ОГИЗ—Госполитиздат, 1946, стр. 401.
39. Allarme to England, foreshewing what perilles are procured ets by *Barnable Rich*. L., 1578. p. 84.
40. *G. B. Harrison*, The Elizabethan Journals, II. L., 1938, p. 299.
41. *А. С. Пушкин,* Полн. собр. соч., т. VIII, М., 1965, стр. 91.
42. *Տե՛ս G. E. Bentley*, Shakespeare and Jonson. Chicago, 1945.
43. *М. Монтень,* Опыты, кн. I, М.—Л., 1954, стр. 103.
44. *Т. Мор,* Утопия, М., 1947, стр. 143—144.
45. *«Խոռվությունն ընկած էր ճանապարհին, նա էլ բարձրացրեց»։*
46. *«Հիմա հողը նեխած մակրելից էլ էժան կդառնա»։*
47. *К. Маркс и Ф. Энгельс,* Соч., т. 3, стр. 47.
48. *Harbage*, As They Liked It. N-Y, 1947, p. 75.
49. *S. Gupta*, Shakespearean Comedy. Oxford. 1950, p. 260.
50. *W. Empson*, Falstaff and Mr. Dover Wilson. „Kenyon Review", 1954, XV. p. 245.
51. *М. Морозов,* Шекспир, М., 1956, стр. 102.
52. *Э. Дауден,* Шекспир, СПб, 1880, стр. 231.
53. *G. W. Knight*, The Olive and the Sword. L., 1944, p. 27.
54. *А. А. Смирнов,* Творчество Шекспира, Л., 1934, стр. 96.

ՇԵՔՍՊԻՐԻ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ

Շեքսպիրի ողբերգությունների ու կատակերգությունների հայերեն թարգմանությունները և դրանց բեմական կյանքը այնքան հարուստ պատմություն ունեն, որ դեռ կարոտ են բազմակողմանի ուսումնասիրության: Նույնը չենք կարող ասել անգլիական դրամատուրգի քրոնիկների մասին:

Այն ժամանակ, երբ Շեքսպիրի որոշ ողբերգություններ («Համլետ», «Լիր արքա», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Օթելլո», «Ռոմեո և Ջուլիետ») հայերեն թարգմանվել են մի քանի անգամ, «Քրոնիկները» գրեթե չեն թարգմանվել:

Ո՞րն է այս երևույթի պատճառը: Ինչպե՞ս է պատահել, որ պաշտամունքի չափեր ընդունած սերը Շեքսպիրի նկատմամբ հայ թարգմանիչներին չի մղել նրա բոլոր երկերի հետ մեր ընթերցողին ծանոթացնելու փորձն անել:

Երևի սխալ չի լինի, եթե դրա բացատրությունը կապվի հարյուրամյակների

ընթացքում ինքնաբերաբար մշակված թե՛ գրական, թե՛ մանավանդ բանավոր ավանդների հետ։

Շեքսպիրն առաջին հերթին ընկալվել է որպես ողբերգությունների հեղինակ։ Եվ իբր այդպիսին էլ նրա ճանաչումն աշխարհում պարփակվել է «Մեծ ողբերգությունների» ոլորտում, գլխավորապես՝ «Համլետ», «Օթելլո», «Մակբեթ» և «Լիր արքա», ինչպես նաև «Ռոմեո և Ջուլիետ»։ Հռոմեական շարքից՝ «Անտոնիոս և Կլեոպատրան» ու Հուլիոս Կեսարը»։ Կատակերգություններից շրջանառության մեջ են եղել «Սխալների կոմեդիան», «Վինձորի զվարճասեր կանայք», «Տասներկուերորդ գիշերը» և մանավանդ «Անսանձ կնոջ սանձահարումը» ու «Վենետիկի վաճառականը»։ Ինչ վերաբերում է քրոնիկներին, ապա մի տասնյակի հասնող այդ գործերի շարքից անջատվել է առանձնապես մեկը՝ «Ռիչարդ Երրորդը»։ Այս ողբերգությունը առաջինն է թարգմանվել և միակն է անգլիական պատմությունն անմիջապես պատկերող պիեսներից, որն ունի համեմատաբար հետաքրքիր բեմական պատմություն։

Ռուսական բեմը չափազանց հարուստ է Շեքսպիրի երկերի ռուսերեն թարգմանություններով։ Բավական է ասել, որ «Համլետի» պատկերնակյան թարգմանությունը 24-րդն է։ Նույնքան հարուստ է ռուսական իրականության մեջ նրա երկերի բեմական պատմությունը։

Աչքի անցկացրինք Շեքսպիրի ռուսական մատենագիտության 1917—1962 թթ. հատվածը։ Եվ պարզվեց, որ այն ժամանակ, երբ «Համլետի», «Ռոմեո և Ջուլիետի», «Լիր արքայի» բեմադրությունները տասնյակներով են հաշվվում և հարյուրից անցնում են «Օթելլոյի» ու «Տասներկուերորդ գիշերի» բեմադրության փորձերը տարբեր թատրոններում, այդ նույն տարիների ընթացքում ռուսական թատրոնն ունեցել է «Ռիչարդ Երրորդի» ընդամենը չորս բեմադրություն (1920, 1934, 1936, 1962)[1]։ Իսկ մյուս քրոնիկներից ոչ մեկը չի բեմադրվել։ Վերջերս միայն Գ. Տովստոնոգովը Լենինգրադի Մեծ դրամատիկական թատրոնում բեմադրեց «Հենրի Չորրորդը» (1970)։ Ըստ վերոհիշյալ մատենագիտության տվյալների, սովետական մյուս թատրոնները նույնպես չեն անդրադարձել Շեքսպիրի քրոնիկներին, եթե նկատի չառնվի վրացական բեմը, որ նույնպես «Ռիչարդ Երրորդն» է խաղացել (1957)[2]։

Շեքսպիրյան քրոնիկներն Անգլիայում բեմադրվել են բավական վաղ ժամանակներից, բայց ոչ այնքան հաճախ, որքան ողբերգական ու կատակերգական գլուխգործոցները։ Վերջին ժամանակներս Ստրադֆորդի Շեքսպիրյան արքայական թատրոնում, հատկապես դրամատուրգի ծննդյան 400-ամյակի կապակցությամբ, մեկը մյուսի հետևից բեմադրվեցին քրոնիկներից մի քանիսը։

Դարերի ընթացքում մշակված այս ավանդն էլ, անշ, իր ազդեցությունն է թողել Շեքսպիրի «հայկական պատմության» վրա ևս։

Ի՞նչ տվյալներ են պահպանվել։

Մխիթարյան միաբան Արիստակես Կասկանդիլյանը 1877-ին «Բազմավեպում» հրատարակել է «Հենրի Ութերորդի» մի տեսարանի իր թարգմանությունը «յՈղբերգութենէ Հենրիկոս Ը»[3]: Կասկանդիլյանը թարգմանել և նույն «Բազմավեպի» էջերում դրանից առաջ լույս է ընծայել «Մակբեթի» առաջին արարվածը[4]: Լեզուն երկու դեպքում էլ գրաբար է:

Եթե «Մակբեթի» թարգամանության Կասկանդիլյանը կցել է գերմանացի հայտնի շեքսպիրագետ և Շեքսպիրի երկերի թարգմանիչ Ռլեգելի կարծիքը, ապա այս դեպքում օգտագործել է անգլիական հեղինակ Ջոնսոնի տեսակետը: Սրա հիման վրա էլ, ըստ երևույթին, մեր գրականության մեջ արվել է այն եզրակացությունը, թե հայ թարգմանչին, ինչպես երևում է, հայտնի է եղել շեքսպիրագիտության մեջ տարածում գտած այն տեսակետը, թե Շեքսպիրի այդ երկի ստեղծմանը մասնակից է եղել մի այլ դրամատուրգ ևս, այսինքն՝ Ջոն Ֆլետչերը:

Շեքսպիրի քրոնիկներից հայերեն թարգմանելու հաջորդ փորձը պատկանում է Վարդգես Սուրենյանցին: Նկարիչը, որ իր մասնագիտական կրթությունը ստացել էր Մյունխենի Գեղարվեստից ակադեմիայում և տիրապետում էր մի շարք լեզուների՝ ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, պարսկերեն, հատուկ սեր ուներ Շեքսպիրի նկատմամբ և թարգմանել է նրա պիեսներից մի քանիսը՝ «Վինձորի զվարճասեր կանայք», «Միջամառնային գիշերվա երազ», «Օթելլո», «Արքա Լիր», «Հուլիոս Կեսար» և, վերջապես, «Ռիչարդ Երրորդ»: Այս բոլոր թարգմանություններից տպագրվել է միայն «Միջամառնային գիշերվա երազը», որպես «Հուշարար» հանդեսի հավելված[5]: «Շեքսպիրականում» հրապարակվեց «Վինձորցի ուրախ կանայք»-ի հայերեն թարգմանությունը[6]:

«Ռիչարդ Երրորդը» Սուրենյանցը թարգմանել է 1883-ին, Մյունխենում: Ինքնագիրը, որ պահպանվել է, լի է բազմաթիվ մատիտագիր ջնջումներով և ուղղումներով: Թե երբ է սկսել թարգմանել՝ հայտնի չէ, բայց ձեռագրում հիշվում է ավարտման ժամանակը՝ 1883 թ. նոյեմբերի 27[7]:

Նույն թարգմանության մի ձեռագիր էլ պահպանվում է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնի ձեռագրերի բաժնում՝ «Թագավոր Ռիչարդ Երրորդի ողբերգությունը»: Թվակրությունը նույնն է՝ 27 նոյեմբերի 1883: Արտագրվել է Մյունխենում, մի ընդհանուր տետրում, մաքրագիր է, տեղ-տեղ մատիտագիր ուղղումներ ունի: Պահպանվել է այս նույն թարգմանության մի այլ ձեռագիր և բավական մաքուր, որ ըստ թվակրության, մշակվել ու արտագրվել է տասը տարի հետո կամ այդ ժամանակի ընթացքում՝ ունի թվակրություն՝ 27 նոյեմբերի 1893: Այս ձեռագիրն ունի առաջաբան և ծանոթագրություններ[8]: Ըստ Պետրոս Ադամյանի նամակների՝ մի ձեռագիր ևս պետք է եղած լինի, որն ըստ երևույթին կորել է:

Սուրենյանցի թարգմանությունից հրապարակվել է 25 տող՝ Գլոստերի մենախոսությունը միայն՝ Վահրամ Թերզիբաշյանի «Շեքսպիրը հայերեն» աշխատության ծանոթագրությունների բաժնում[9]:

«Ռիչարդ Երրորդը» թարգմանել են ուրիշներն ևս:

Սուրենյանցից հետո հաջորդ փորձն արել է Վահան Թոթովենցը:

Թոթովենցի թարգմանության ինքնագիրը պահվում է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնի ձեռագրերի բաժնում: Ըստ ձեռագրի անվանաթերթի և վերջին էջում թարգմանչի գրավոր ցուցումի՝ թարգմանությունը սկսված է 1936-ի հունվարի 30-ին և ավարտված նույն տարվա մարտի 10-ին: Այդ թարգմանության մի հատվածը՝ առաջին արարվածն ամբողջությամբ, թարգմանիչը լույս է ընծայել «Խորհրդային արվեստում»[1c]:

Թոթովենցից հետո նույն քրոնիկը թարգմանել է նաև Խաչիկ Դաշտենցը: Վերջինս, ինչպես հայտնի է, բազմաթիվ պիեսներ է թարգմանել Շեքսպիրից, մեծ մասամբ այն գործերը, որոնք չհասցրեց թարգմանել Հովհաննես Մասեհյանը:

Դաշտենցի թարգմանած «Ռիչարդ Երրորդը» լույս է տեսել 1955-ին, «Ընտիր երկերի» երրորդ հատորում և վերահրատարակվել Շեքսպիրի երկհատոր ժողովածուի երկրորդ գրքում՝ 1964-ին:

Ունենք «Ռիչարդ Երրորդի» մի թարգմանություն ևս, որ կատարել է Հովհաննես Մասեհյանի կենսագիր Գևորգ Դարֆին: Այդ թարգմանության ձեռագիրը և մեքենագիր մի օրինակ թարգմանչի այրին 1965-ին Թեհրանից ուղարկել է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնին և պահվում է նրա ձեռագրերի բաժնում: Վերջերս հայտնի դարձավ, որ հայտնի բանասեր Գր. Խալաթյանը, 15 տարեկան հասակում, թարգմանել է «Ռիչարդ Երկրորդից» մի երկու հատված, որոնք բանասեր Մ. Նարյանը հրապարակում է «Շեքսպիրականի» չորրորդ գրքում:

Մի տվյալ ևս:

Շեքսպիրի «Սոնետների» (1961) թարգմանիչներ Դավիթ Դավթյանը և Հովհաննես Քելեշյանը թարգմանել են «Հենրի Ութերորդը» և «Հենրի Հինգերորդը»: Վերջինս թարգմանվել է 1966-ին և դրա մեքենագիր օրինակը պահվում է Շեքսպիրագիտության հայկական կենտրոնի ձեռագրերի բաժնում:

* * *

Ինչ վերաբերում է քրոնիկների բեմական պատմությանը հայ թատրոնում, ապա այդպիսին փաստորեն գոյություն չունի: Հայտնի են որոշ տվյալներ, որոնք լավագույն դեպքում կարող են ապագա պատմության նախապատմությունը լինել:

Որո՞նք են այդ տվյալները:

Ռիչարդ Երրորդի կերպարը բեմում մարմնավորելու ծրագիր է ունեցել Պետրոս Ադամյանը: Պահպանվել է դերասանի մի նամակը, որից պարզվում է նրա կենսագրության այդ կետը:

Նամակը գրված է Կ. Պոլսից, 1889-ի հունվարի 19-ին և ուղարկված է Վարդգես Սուրենյանցին:

Ադամյանը 1883 թվականը անցկացրել է Մոսկվայում: Այստեղ նա ծանոթացել է Մոսկվայի հայոց եկեղեցու ավագերեց Հակոբ քահ. Սուրենյանցի հետ: Քահանայի դուստրը՝ Եկատերինան մասնակցել է Ադամյանի մոսկովյան ներկայացումներին, կատարելով Օֆելիայի («Համլետ») և Ծոռայի («Դիմակահանդես») դերերը[11]: Վարդգես Սուրենյանցը 1879-ին մեկնել էր Մյունխեն սովորելու, հետևապես, եթե այդ տարի նրանք հանդիպել են, ապա արձակուրդի ամիսներին միայն, այսինքն՝ ամռանը: Որ 1888-ին նրանք հանդիպել են, վեր է ամեն կասկածից, քանի որ Սուրենյանցի ձեռքով արված ադամյանական ճեպանկարները այդ թվականի գործեր են [12]. Ադամյանը 1888-ի մարտի սկզբներին մինչև մայիսի կեսերը եղել է Մոսկվայում:

Դերասանի և նկարչի միջև, ինչպես երևում է, նամակագրական կապ է եղել. մեզ հասած մի հատիկ նամակում Ադամյանը գանգատվում է, որ Կրեմենչուկից գրված իր նամակը Սուրենյանցը թողել է անպատասխան:

1888-ի վերջերին[13], ժամանակը ճշգրիտ հայտնի չէ, նկարիչը Ադամյանի անունով Կ. Պոլիս է ուղարկել իր երկու թարգմանությունները. «Ռիչարդ Երրորդը» և «Գալատեան», որը պատկանում էր իսպանացի դրամատուրգ Էչեգարայի գրչին:

Ադամյանը մտադիր էր նախ «Գալատեաով» զբաղվել և ապա միայն «Ռիչարդով»[14]: Ինչպես միշտ՝ Ադամյանը պատրաստվում է ձեռնամուխ լինելու ստեղծագործական լուրջ աշխատանքի: Գարնանը մտադիր էր անցնել Եվրոպա և այնտեղ պատվիրել «Ռիչարդի» զգեստները[15]:

Ադամյանը գոհ է մնացել նկարչի թարգմանությունից, բայց խնդրել է թույլ տալ իրեն «մի քանի տեղեր, մի քանի բառեր միայն փոխելու», ասելով, որ դրանք «declamation»-ի համար անհրաժեշտ են ինձ թվում: Բայց առանց քո կամքի չեմ ուզեր անել, բայց եթե անեմ, հավատա, որ ավելի պիտի գեղեցկանա և միտքը պարզվի. փոփոխությունք թեպետ շատ չէին են, սակայն մեծ կարևորություն ունեն»[16]:

Այնուհետև դերասանը Սուրենյանցին խնդրում է իրեն գրել, «Թե Ռոսսի կամ Բոսարտ ինչ կերպ կհասկանային Ռիչարդը. հիվանդոտ, մելամաղձ, խորամանկ, չար, փառասեր, կաղ, թե՝ քաջոտն: Այդ բոլորը խնդրեմ՝ գրես ինձ»[17]:

Սուրենյանցը գրել ու լուսաբանել է դերասանին զբաղեցնող խնդիրները, թե ոչ, պարզ չէ, բայց որ Ռիչարդի կերպարը խաղալու Ադամյանի ցանկությունը մնացել է անկատար, հայտնի է:

«Ռիչարդ Երրորդը» հայ թատրոնում բեմադրելու միտքը մեկ էլ առաջացել է տասական թվականներին:

Նկարչի թղթերում պահպանվել է դերասան և ռեժիսյոր Օվի Սևումյանի մի բացիկը, գրված Սուրենյանցին՝ 1916-ի հուլիսի 5-ին Աբասթումանից: Սևումյանը խնդրում է ուղարկել իրեն «Ռիչարդ Երրորդի» արձակ թարգմանությունը[18]: Նամակից պարզվում է, որ Սուրենյանցը խորհուրդ է տվել Սևումյանին խաղալու Ռիչարդի դերը. «Ռիչարդ III-ը» պատրաստելու իդեան Դուք տվիք ինձ և այժմ,—գրում է նա այդ

բացիկում,—ամբողջովին կլանված եմ այդ աշխատանքով. կարծում եմ, որ ինձ պետք է որ հաջողվի այդ դերը»։

Այնուհետև այդ նույն նամակում գրում է. «Եթե Ձեզ հայտնի են աղբյուրներ այդ դերի ուսումնասիրության համար, խնդրեմ ինձ գրեք»[19]։

Բայց այդ բեմադրությունը այդպես էլ չի իրականացել։

Սարգիս Մելիքսեթյանի վկայությամբ, Ռիչարդ Երրորդի դերը խաղալու ցանկություն է ունեցել նաև Վահրամ Փափազյանը։ Ըստ նրա՝ Փափազյանը, վերադառնալով փարիզյան հյուրախաղերից, ուրեմն 1932-ին, Առաջին Պետական թատրոնում մի շարք դերասանների շրջանում այն միտքն է հայտնել, որ եթե թատրոնը ձեռնամուխ լինի Շեքսպիրի այդ պիեսի բեմադրությանը, ինքը սիրով մուտք կգործի ներկայացման մեջ։

Ռիչարդ խաղալու Փափազյանի ցանկությունը եւ մնաց իբրև ցանկություն։

Հայտնի է միայն հետևյալը։

1933-ի նոյեմբերի 25-ին Երևանի Հայֆիլհարմոնիայի համերգային սրահում տեղի է ունեցել ողբերգակի ստեղծագործական երեկոն Արուս Ոսկանյանի մասնակցությամբ։ Եվ ներկայացվել են հատվածներ «Դիմակահանդես», «Օթելլո», «Աննա Քրիստի», ինչպես նաև «Ռիչարդ Երրորդ» պիեսներից[20]։

Այս տվյալից երևում է, որ դերասանի ցանկությունը վերացական չի եղել։

30-ական թվականներին Լևոն Հարությունը Փարիզում կատարել է Ռիչարդ Երրորդի դերը[21]։

1968-ին Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնը ներկայացրեց «Ռիչարդ Երրորդը»։ Բեմադրությունը պատկանում էր ռեժիսյոր Օֆելյա Ավետիսյանին։ Ռիչարդի դերով հանդես եկավ այժմ Մոսկվայում դերասանական մեծ համբավի հասած Արմեն Ջիգարխանյանը, որի խաղը թե՛ հանդիսատեսը, թե՛ քննադատությունը բարձր գնահատեցին։

Ահա գրեթե այն բոլոր տվյալները, որ վերաբերում են Շեքսպիրի քրոնիկների հայ գրական-թատերական պատմությանը[22]։

Ներկա ժողովածուի հրատարակությամբ «Քրոնիկների» կյանքը մեզանում ուրք է դնում նոր շրջափուլ։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Տե՛ս Шекспир,* Библиография русских переводов и критической литературы на русском языке, 1748—1962, М., 1964, стр. 353—519.
2. *Նույն տեղում, էջ 483։*
3. *«Բազմավեպ», 1877։*
4. *Նույն տեղում։*
5. *«Հուշարարի» մատենադարան, № 14, Թիֆլիս, 1912։*
6. *«Շեքսպիրական», 3, Երևան, 1970, էջ 385—472։ Վ. Սուրենյանցի այս թարգմանությունը համարվում էր կորած և այդ մասին գրականության մեջ հայտնի էր Հովհ. Թումանյանին*

ուղղված Օվի Սևումյանի մի նամակից. նկարիչն իր թարգմանությունը թողել էր բանաստեղծի մոտ ռեժիսյորին հանձնելու նպատակով։

7. *Գրականության և արվեստի թանգարան, Վարդգես Սուրենյանցի արխիվ։*
8. *Նույն տեղում։*
9. Վ. Թերզիբաշյան, *Շեքսպիրը հայերեն, Երևան, 1956, էջ 128—129։*
10. *«Խորհրդային արվեստ», 1936, № № 7—10։*
11. Պետրոս Ադամյան, *Նամակներ, Երևան, 1959, էջ 50։ Այսուհետև՝ Նամակներ։*
12. *Տե՛ս Մ. Ղազարյանի հոդվածը՝ «Վ. Սուրենյանցի շեքսպիրյան երեք նկարը» («Շեքսպիրական», 2, 1967, էջ 363—369)։*
13. *Ըստ Թերզիբաշյանի՝ Սուրենյանցի թարգմանությանը Ադամյանը ծանոթ է եղել 1879-ին, որ սխալ է («Շեքսպիրը հայերեն», էջ 98). ըստ երևույթին տպագրական վրիպակ է։*
14. *Նամակներ, էջ 211։*
15. *Նույն տեղում։*
16. *Նույն տեղում, էջ 212։*
17. *Նույն տեղում։*
18. *Գրականության և արվեստի թանգարան, Վ. Սուրենյանցի արխիվ։*
19. *Նույն տեղում։ Սուրենյանցի այդ նամակին մեր գրականության մեջ առաջինն անդրադարձել է Վ. Թերզիբաշյանը «Շեքսպիրը հայերեն» գրքում (էջ 100)։*
20. Ռ. Հարությունյան, *Սովետահայ թատրոնի տարեգրություն, գիրք առաջին (1917—1940), Երևան, 1961, էջ 346։*
21. *Այս տվյալը մեզ հաղորդել է թատերագետ Ռ. Հովակիմյանը։*
22. *Քրոնիկների ներկա ժողովածուն արդեն տպագրության էր հանձնված, երբ հայտնի դարձավ, որ Երևանի Դրամատիկական թատրոնը իր հինգերորդ թատերաշրջանը 1972-ի սեպտեմբերի 2-ին բացելու է «Ռիչարդ Երրորդ» ներկայացումով։ Սա Շեքսպիրի պատմական քրոնիկներից առաջին և առայժմ միակ հայկական ներկայացումն է։ Բեմադրությունը՝ Սովետական Միության ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանի։ Ռիչարդի դերակատար՝ Լ. Թուխիկյան։*

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՌԻՉԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ»

Այս պիեսի բեմադրության մասին հիշատակվում է մի մասնավոր նամակում, որ գրված է 1595 թ. դեկտեմբերի 7-ին: Ներկայացումը պետք է որ տեղի ունեցած լինի դեկտեմբերի 9-ին: «Ռիչարդ Երկրորդը» կա նաև Ֆ. Մերեսի ցուցակում (1598)։ Ամենայն հավանականությամբ, այն գրված պետք է լինի հենց 1595 թվականին։ Շեքսպիրի կենդանության ժամանակ քրոնիկը տպագրվել է հինգ անգամ. 1597-ին, 1598-ին (երկու անգամ), 1608-ին, 1615-ին. այնուհետև, հեղինակի մահից հետո արդեն, մտնում է Երկերի առաջին ժողովածուի մեջ (1623): Առաջին երեք հրատարակություններում գրաքննության կողմից հանվում է Ռիչարդ Բ-ի գահազրկության տեսարանը: Եղիսաբեթ թագուհու մահից հետո լույս տեսած վերահրատարակության մեջ (1608) այդ տեսարանը վերականգնվում է: Քրոնիկի համար աղբյուր են հան-

դիմացել Ռ. Հոլինշեդի «Քրոնիկներ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի» (1577 երկրորդ, լրացված հրատարակությունը 1587) և Ֆրուասարի «Քրոնիկոն» երկերը: Գործողության ժամանակն է 1397—1400 թվականները:

Ռիչարդ Երկրորդի թագավորության շրջանի պատմության որոշ դրվագներ գրավել են դրամատուրգների և բանաստեղծների ուշադրությունը նաև մինչև Շեքսպիրը: Նա կարող էր և ծանոթ լինել այդ գործերին, բայց, ինչպես հաստատում են ուսումնասիրողները, նրա ուշադրության կենտրոնում է եղել Հոլինշեդը, որի «Քրոնիկները», ինչպես երևում է, նրա սեղանի գիրքն է եղել:

Էսեքսի գլխավորած խռովության նախօրյակին (1601), դավադիրներից մեկը պատվիրում է դերասանական այն խմբին, որի մեջ էր Շեքսպիրը, բեմադրելու «Ռիչարդ Երկրորդը», խոստանալով լրացուցիչ վարձատրություն: Անհաջողության հանդիպելուց հետո, հետաքննության ժամանակ խռովարարներից մեկը խոստովանում է, որ այդ բեմադրությամբ նրանք նպատակ են ունեցել բեմի վրա ցույց տալ անգլիական թագավորներից մեկի բռնի գահազրկումը: Խումբը հարկադրված է լինում ցուցմունք տալ այդ մասին, որից հետո միայն պարզ է դառնում, որ դերասանները անմեղսակից են այդ գործին: Այս էպիզոդը, ի դեպ, ցույց է տալիս, որ ձեռագիր տեքստում միշտ էլ եղել է Ռիչարդ Երկրորդի գահից զրկվելը:

Կրե՞լ է արդյոք երիտասարդ Շեքսպիրը որևէ մեկի ազդեցությունը այս քրոնիկը հյուսելիս: Եթե այո, այդ դեպքում խոսքը կարող է վերաբերվել Շեքսպիրից փոքր-ինչ վաղ հանդես եկած Քրիստոֆեր Մառլոյին, որի «Էդվարդ Երկրորդը» առնչվում էր պատմական նույն ժամանակաշրջանին: Եվ այնուամենայնիվ այդ ազդեցությունը, որքան էլ բարերար, քնավ էլ մեծ չէ: Ընդհակառակը, շատ բաներում երևան է գալիս Շեքսպիրի ինքնուրույն մտածողությունը: Դա վերաբերում է ոչ միայն ոճին, որ զերծ է ճոռոմությունից, այլև գլխավոր հերոսի կերպարի մեկնաբանմանը. Մառլոն, հավատարիմ իր դավանանքին, գլխավոր հերոսի միջոցով դնում էր անհատի ազատության խնդիրը, մինչդեռ Շեքսպիրի համար այս և մյուս քրոնիկներում հիմնականը պետության խնդիրն է: Միայն ամբողջական, կենտրոնացած, ուժեղ պետության մեջ առանձին անհատը կարող է իրեն զգալ ազատ և ուժեղ: Այստեղից էլ՝ նրանց տարբեր հայացքները թագավորի դերի մասին այդ պետության մեջ: Մառլոյի թագավորը ամեն միջոց գործադրում է՝ ընդունել տալու իր գաղափարները, Շեքսպիրի թագավորը ինքն է ընդունում և գործադրում դարի առաջավոր, հումանիստական իդեաները:

Ավելի կոնկրետացնելով, Շեքսպիրը «Ռիչարդ Երկրորդ»-ում առաջ է քաշում այն հարցը, **թե թագավորի ժառանգական իրավունքը հանդիսանո՞ւմ է, արդյոք, աստվածային:** Ինքը՝ Ռիչարդը, խորապես հավատացած է, որ հենց այդպես է, որ ինքը երկնքի իսկ կամքով է գահին բազմած, ուրեմն և ոչ մի պարտականություն չունի երկրի հանդեպ: Եվ նա վարվում է այնպես, ինչպես մտածում է. ծանր հարկերով նա արդեն քայքայել է համայնքները, վատնել և շարունակում է

40—577

սրան-նրան բաշխել պետական սեփականությունը. նա բռնագրավում է չնո… զրկված ազնվականների գույքը, իր փավորիտներին կապալով է տալիս ողջ պե… թյանը: Այդպես չեն վարվում նույնիսկ սեփական տիրույթների հետ: Ահա թե… Ջոն Գոնտը ցավով նկատում է, թե նա պետության հետ վարվում է ոչ թե… թագավոր, այլ իբրև «կալվածատեր» (II, 1):

Ռիչարդի նման միահեծան թագավորի այս հայացքին Շեքսպիրն իր պի… հակադրում է հումանիզմի սկզբունքներից բխող այն մտածողությունը, թե բ… առանցքակետը ոչ թե միապետն է, այլ պետությունը: Թագավորական իշխանութ… այսպիսով, պիտի հանդիսանա երկրի ընդհանուր բարեկեցությունը և անվտան… թյունն ապահովող միջոց միայն և ուրիշ ոչինչ: Նրա այս կետ գաղափարը ս… քրոնիկում արտահայտում է Ջոն Գոնտը, որ զգալիորեն իդեալականացված է, … որ իրականում նա ևս սովորական մի ֆեոդալ է եղել:

Այսպիսով, Շեքսպիրն ընդունում է, որ թագավոր կոչվածը կարող է լին… վատ, և՛ լավ: Նրա այս հայացքը իր գեղարվեստական արտահայտությունն է … մանավորապես այն տեսարանում, որ կատարվում է Յորքի պարտեզում (II… Այստեղ պարտիզպանը իր ծառաների հետ խոսելիս պետությունը համեմատ… պարտեզի հետ, իսկ թագավորին՝ պարտիզպանի, որ ամեն ջանք գործ է … այգին ծաղկուն վիճակի մեջ պահելու համար: Նրա կարծիքով Ռիչարդ թագա… վատ պարտիզպան է, քանի որ թույլ է տվել, որ պարտեզը լցվի ամեն տեսակ… լախոտներով: Հետագայում, «Համլետի» մեջ, նա ողջ աշխարհը պիտի համեմ… մի պարտեզի հետ,

Որ քաղհան չեղած սերմի է հասել,
Ուր բընույթ կոպիտ և բիրտ բաները իշխում են միայն (I, 2):

Առայժմ նրա ուշադրության կենտրոնը թագավորներից այս մեկն է, որ ա… ժան է իր կոչումին, որ ապավինելով իր «աստվածային» ծագումին, անտեսում է … տեսակ օրենք և իրավունք, ոտնահարում է նույնիսկ ժառանգականության իրավ… օրենքի աստիճանի բարձրացնելով անօրինականությունը: Այլ կերպ չի կարելի… ցատրել մեռած Ջոն Գոնտի օրինական ժառանգին՝ Բոլինբրոկին ժառանգությ… զրկելը և նրա տիրույթը սեփականելը: Անկարելի է խոսել մի երկրում տիրող օ… ների մասին, երբ դրանք անտեսվում են ամեն քայլափոխին:

Քանի որ թագավորի իշխանությունը իր բնույթով «աստվածային» չէ, քան… նա տվյալ դեպքում չարաշահում է ժառանգաբար ձեռք բերած իշխանությունը, … ժողովրդին իրավունք է վերապահվում նրան գահազրկել: Սա չի նշանա… թե Շեքսպիրը անվերապահորեն կողմնակից է ապստամբության կամ խռովութ… Նա գիտակցում է, որ այդ ապստամբությունը կամ խռովությունը կենտրոնա… իշխանության դեմ շատ հաճախ, եթե ոչ բոլոր դեպքերում, կատարվում է այս կա… կենտրոնախույս տոհմի կամ անհատ ֆեոդալի, երբեմն նաև ամբողջ դասի կո…

Այս տեսակ խռովությունների և ապստամբությունների դեմ է անա նա նույնես գալիս, բայց ոչ երբեք բռնակալի դեմ ծագած ատերային խռովության: Այդպիսի մի ապստամբություն երիցս արդարացի է Ռիչարդ Երրորդի նման մի արյունարբու բռնակալի նկատմամբ, որ անմեղ ոճիրների գնով է գահին տիրանում: Բայց այդ ապստամբությունն արդարացի է նաև գահին ժառանգաբար տիրացած այնպիսի մի թագավորի նկատմամբ, որպիսին է այս Ռիչարդ Երկրորդը:

Քաղաքական իր այս հայացքները Շեքսպիրն արտահայտում է նախ և առաջ դրամատիկական երկի ամբողջ հյուսվածքով, հանդես բերված կերպարներով, թեև քրոնիկների մեջ ոչ բոլոր դեպքերում է այդ նրան հաջողվում. պատահում են նաև տեսարաններ, որոնք մերկ իլյուստրացիաներ են նրա զարգացած գաղափարների: Եվ այնուամենայնիվ ամեն մի նոր քրոնիկի հետ ավելի ու ավելի լիարժեք է դառնում նրա արվեստը, գործող անձինք ավելի են հարստանում, իդեաներ կրողներից դառնում են կենդանի բնավորություններ: Այս տեսակետից «Ռիչարդ Երկրորդը» զգալիորեն տարբերվում է, ասենք, ավելի վաղ գրված «Հենրի Վեցերորդ»-ից: Այս նկատելի է նույնիսկ երկրորդական գործող անձանց նկատմամբ: Նույնիսկ քաղաքական նույն հայացքներն ունեցող գործիչները տարբերվում են միմյանցից իրենց անձնական նկարագրով: Ահա, օրինակ, Ջոն Գոնտը և Կառլայլի եպիսկոպոսը. նրանք երկուսն էլ կենտրոնական իշխանության կողմնակից են, բայց այն ժամանակ, երբ եպիսկոպոսը սառը դատողությամբ անվերապահորեն պաշտպանում է թագավորին, Գոնտը կրքոտ կերպով հարձակվում է թագավորի վրա, երեսով տալիս նրա գործած անօրինական արարքները: Եվ Անգլիան երկրորդ Եդեմ համարող պատրիոտ այրը քննադատում է միապետին ամեն չափ ու սահման անցնելու համար.

Դու Անգլիայի կալվածատերն ես, և ոչ թե արքան:
Երկիրդ օրենքի՝ ստրուկ է դարձել այժմ օրենքին (II, 1):

Ահա և Էդմոնդ Լանգլին՝ դուքս Յորքը, թագավորի հորեղբայրը, գահի և գահակալի օրինակելի վասալներից մեկը, որին նույնպես խոր հիասթափություն է պատճառում Ռիչարդի վարած սանձարձակ քաղաքականությունը, թեև նրա նկատմամբ մինչև վերջ էլ մնում է խաղաղասեր ու բարեսիրտ: Բոլորովին հակոտնյա մի տիպ է սրա որդին՝ դուքս Օմեռլը, այն ժամանակ, երբ հայրը միանում է Հենրի Բոլինբրոկին, Օմեռլը մնում է Ռիչարդին հավատարիմ, որի համար և Բոլինբրոկը (այժմ արդեն Հենրի Չորրորդ) զրկում է նրան Օմեռլի դքսի տիտղոսից:

Ռիչարդ Երկրորդի խառնվածքի կաղապարման վրա նախ և առաջ իր կնիքն է դրել նրա արտաքինը, լինելով գեղեցիկ, գրավիչ մի մարդ, նա միշտ աչքի է ընկնում շրջապատողների մեջ: Այստեղից էլ սկսվում, բայց այստեղ չի ավարտվում նրա ինքնասիրահարվածությունը: Նա հպարտ է իր բարձր դիրքով, նա պահանջում է, որ մարդիկ իր մեջ նախապես տեսնեն իրենց տիրակալին: Նա դրսի աշխարհ չունի կամ համարյա չունի, որովհետև ողջ ուշադրությունը կենտրոնացած է իր վրա: Շըր-

ջափոխելով Գոնտի դիպուկ խոսքը նրա մասին, կարելի է ասել, թե նրա գլուխ նույնքան է փոքր, որքան և թագը: Զնայած դրան, նրա խոսակցության նյութը ինք. է, իր զգացմունքներն ու տրամադրությունները: Այս նոր Ներոնը հակված է իդեալա կանացնելու այն ամենը, ինչ կապված է իր անվան հետ: Նույնիսկ դժվար պահերին երբ գործ է պետք և գործից բացի ոչինչ պետք չէ, նա գերադասում է խոսել այդ նույն գործի անհրաժեշտության մասին:

Նա շատ բանի է ձգտում, բայց բոլորի հանրագումարը կարելի է արտահայտե մի բառով միայն՝ վայելք: Այստեղ նա ոչ մի սահման կամ արգելք չի ճանաչում կանգ չի առնում ոչնչի առաջ: Նրա մտքով իսկ չի անցնում, որ շռայլում է հենց այն կենսական միջոցները, որ այնքա՜ն անհրաժեշտ են հյուծված պետական գանձարան համար: Թագավորական իր պարտականությունները նա այն ժամանակ է հիշում միայն, երբ նրան նորանոր միջոցներ են պետք լինում, հազվադեպ, երբ այլևս չի կարելի խուսափել: Այդ փափկասուն ու շռայլ մարդը, ունենալով դյուրագրգիռ խառ նըվածք, դաժան բնավորության հեշտությամբ կարող է անցնել փորձված հանցագործի Թագավոր, որ իր իսկ հարափոփոխ տրամադրության գերին է, որ փոխում է իր որոշումն ավելի շուտ, քան այն կարող է գործի վերածվել, մեկ կոպիտ է և անսիրտ ինչպես օրինակ մահամերձ Գոնտի մոտ գտնվելու պահին, մեկ խորամանկ է և հաճ վենկատ, երբ, օրինակ, աքսորում է իր երկու հակառակորդներին միաժամանակ Երբեմն նա անվճռական է ու անկարող, ինչպես իռլանդական արշավանքից վերա դառնալուց հետո, երբեմն էլ հպարտ է ու քաջ, երբ սպանում է իր վրա հարձակված երկու սպասավորների, մինչ ինքն էլ տապալվում է դիտապատ:

Անձնական հատկությունների այս գումարը ինքնին վկայում է, որ Ռիչարդ Երկ րորդը բախտի քմահաճույքով էր միայն պետության ղեկի մոտ հայտնվել: Հենց այդ պես էլ է հեղինակի վճիռը:

Որքան Ռիչարդ Երկրորդը անվճռական է իր որոշումներում, այնքան վճռակա է և տոկուն նրա գլխավոր հակառակորդը՝ Ջոն Գոնտի որդին՝ Հենրի Բոլինբրոկը որքան Ռիչարդին խորթ է պետական մտածողությունը և պետական շահերի պաշտ պանության գիտակցությունը, այնքան Հենրիի համար հենց պետական շահերն են առաջնային. որքան թշնամիներ է վաստակում Ռիչարդը իր անխոհեմ ներքին քաղա քականությամբ, ճիշտ այդքան բարեկամներ է ձեռք բերում Հենրին բարձիթողի ար ված երկրի վիճակով անկեղծորեն ապրելու շնորհիվ: Նրանք ոչ միայն տարբեր հա յացքներ ունեն թագավորի՝ դեպի պետությունն ունեցած հարցի շուրջը, այլ օտար և խորթ են միմյանց իրենց բնավորությամբ: Բոլինբրոկի համար ձակությունը գալիս է իրավացի լինելուց. Նորֆոլկի դքսին նա մեղադրում է պետա կան գումարները յուրացնելու և իր հորեղբորը՝ դուքս Գլոստերին սպանելու մեջ Երբ մենամարտից առաջ թագավորը երկու ախոյաններին էլ աքսորում է երկրից Բոլինբրոկը ենթարկվում է միայն առերևս: Բայց թագավորը նույնիսկ դրանով չի բավարարվում: Ծածկելու համար իռլանդական պատերազմի հետ կապված ծախ

սերը, նա հարքունիս է գրավում Բոլինբրոկի ամբողջ հարստությունը, չփոթության մատնելով բոլոր ազնվականներին անխտիր: Եվ ահա, օգտվելով այն հանգամանքից, որ թագավորն իր զորքի հետ թաղված է իռլանդական ճահիճներում, Բոլինբրոկն անցնում է թագավորի շահատակություններից դժգոհ իշխանների գլուխը և արշավում հապշտապ Անգլիա վերադարձած և մի բերդում ապաստան գտած Ռիչարդի դեմ: Եվ այսպես, սկսելով իր անձնական շահերը պաշտպանելուց, Բոլինբրոկը հետզհետե գիտակցում է, որ ինքը միաժամանակ պետական շահերն է պաշտպանում ամբողջությամբ առած: Լինելով հաշվենկատ մի քաղաքագետ, նա կարողանում է լեզու գտնել մյուս խոշոր ֆեոդալների հետ: Միաժամանակ և՛ խիստ, և՛ դյուրազգաց մի մարդ, նա չի հանձնվում ո՛չ մեկին և ո՛չ էլ մյուսին, քանի որ երկիրը կառավարելուց առաջ սովորում է իրեն կառավարել: Նա դաժան պատժի է ենթարկում թագավորի կողմնակիցներին, բայց խնայում է նրանց, ովքեր հույս են ներշնչում իր կողմնակիցները դառնալու: Քաղաքականության մեջ որքան միամիտ ու անհավասարակշիռ է Ռիչարդը, նույնքան ներհուն ու հավասարակշռված է Հենրին. շարժվելուց առաջ նա գիտե, թե ինչպիսին է լինելու իրերի ընթացքը, ուստի և ստացվում է, թե այդ ընթացքը հենց նա է գլխավորում:

Եվ այնուամենայնիվ Հենրի Բոլինբրոկը այն իդեալական անձերից չէ, որոնց Շեքսպիրը կցանկանար անգլիական գահի վրա տեսնել: Որովհետև նա այդ գահը ձեռք է բերում բռնությամբ, խռովության միջոցով, չունենալով դրա համար օրինական, այն է՝ ժառանգական իրավունք: Այստեղ այնքան էական չէ այն, թե ո՞վ է անգլիական գահի նոր տիրակալը, որքան այն մյուս հարցը, թե ունի՞ արդյոք նա այդ իրավունքը, որովհետև եթե այդպիսի արարքը, ինչ դրդապատճառներ էլ ունեցած լինի, դուռ բաց կանի բազում նման փորձերի առաջ, կայուն և կենտրոնացած պետությունը խաղալիք դարձնելով ամեն տեսակ բախտախնդիրների ձեռքին, որ ավատական իրավակարգի պայմաններում անպակաս էին ոչ միայն Անգլիայում, այլև ամբողջ Եվրոպայում: Շեքսպիրի ժամանակ սա քաղաքական ամենակենսական պրոբլեմներից մեկն էր: Հասարակության բոլոր առաջավոր խավերը, այդ թվում ժողովուրդն ամբողջությամբ առած, չէին ցանկանում, որ փառասիրական մարմաջով բռնված մարդիկ խոշոր կալվածատերերից երկիրը նետեին քաղաքացիական պատերազմի բոցերի մեջ:

Տիրանալով գահին, Հենրի Բոլինբրոկը (այժմ արդեն Հենրի Չորրորդ) կատարում է մի շրջադարձ, որի համար ամենից քիչ թերևս նրան կարելի է մեղադրել, քանի որ նախկին տիրակալը դեռևս կենդանի է, ապա ենթադրվում է, որ գահն անհաստատ է: Եվ նա կարգադրում է սպանել Ռիչարդ Երկրորդին, մի ակտ, որ կախարդական գավազանի հարվածով ասես փոխում է նրանց տեղերը. Ռիչարդը նախկին բռնակալից դառնում է անմեղ զոհ, իսկ երեկվա չքմեղ ձևացող Հենրին՝ սովորական մի բռնակալ, հար և նման իր նախորդներին: Ողբերգության առաջ քաշած հարցը (ողբերգություն էր կոչվում այս քրոնիկն առաջին հրատարակություններում), այն է՝

պետության և նրա ղեկի մոտ կանգնած առաջին անձի հարցը չլուծվեց, այլ տեղափոխվեց. Հենրի Չորրորդը պիտի սկսեր այնտեղից, որտեղից սկսել էր նրա նախորդը, նույնիսկ՝ նախորդների նախորդը։ Միահեծան դառնալու մոլուցքով բռնված Հենրի Չորրորդի առաջին իսկ քայլերը խարխլում են օրինականության և հասարակական բարոյականության հիմքերը, դուռ բաց անելով նոր ցնցումների առաջ։

Այս է, ի վերջո, այս քրոնիկի ընդհանուր քաղաքական եզրակացությունը։ Բայց այդ եզրակացությունն, իսկն ասած, եզրակացությունն է նրա բոլոր տասը քրոնիկների։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

I, 1, 1 ...**Ծերուկ Լանկաստեր.**— *Գոնտը այն ժամանակ 48 տարեկան էր, բայց Շեքսպիրն ամենուր նրա մասին խոսում է իբրև ծերի։*

I, 1, 172. **Ձէ՞ որ այս ամսին արյուն չեն դնում, ըստ մեր բժշկաց.**— *Հնագույն բժշկարաններում նշված էին այն ամիսները, երբ կարելի էր և երբ՝ ոչ, մարդկանցից արյուն առնել։ Այդ գործողությունը բոլորի կողմից ընդունված հիգիենիկ միջոցառում էր նույնիսկ առողջների համար։*

I, 1, 191.— **Առյուծն է զսպում միշտ ընձառյուծին.**— *Ռիչարդի զինանշանի վրա պատկերված էր առյուծ, իսկ Նորֆոլկի զինանշանի վրա՝ ընձառյուծ։*

I, 3, 33.— **Անունդ ի՞նչ է...**— *Այս ձևականությունը զուրկ չէ իմաստից, քանի որ ասպետի զինանշանը կարող էր հայտնի չլինել և նրա սաղավարտի երեսկալը դեմքին իջեցրած, ապա մենամարտողի ով լինելը անհրաժեշտ էր պարզել։ Դեռ ավելին, այդ հարցը նպատակ ուներ պարզելու նաև մենամարտի տիտղոսը, քանի որ ոչ մի ասպետ պարտավոր չէր մենամարտելու իրենից աստիճանով ցածր որևէ մեկի հետ։*

I, 3, 196.— **Ձեր ձեռքը դրեք թագավորական մեր սրի վրա.**— *Սրի բռնակը խաչաձև էր։ Այդ պատճառով էլ Ռիչարդը պահանջում է, որ Բոլինբրոկը և Մաուբրին երդվեն սրի վրա։*

I, 4, 55.—**Բռնադատելով մեծ գումարներ տալ.**— *Լրացուցիչ հարկեր գանձելու համար ենթականերին տրվում էին չլրացված բլանկներ՝ ստորագրելու համար. առանց գումարը նշելու, որոնք և հետո լրացվում էին ըստ թագավորական պաշտոնյաների հայեցողության։*

II, 1, 23.— **Թե ինչ նոր մոդա կա Իտալիայում.**— *Այն ժամանակ Իտալիան համարվում էր նորաձևությունների կենտրոն։*

II, 1, 42.— **Ազահ ստորի վերջը խեղդվելն է ագահությունից.**— *Համաձայն Հոլինշեդի «Քրոնիկների» Ռիչարդը հայտնի է եղել իր անիմաստ շռայլությամբ։ Այնտեղ ասվում է, որ նա իր անձնական նպատակների համար ծախսել է ամբողջ ազգային եկամտի մեկ երրորդը։ Նա ինքը հպարտանում էր, որ պահում է 10000 ծառա։*

II, 1, 65.— **Այդ երկիրն այժմ վարձու է արված.**— *Ռիչարդ Երկրորդի թագավորության վերջին տարիներին, ինչպես նշվում է նույն քրոնիկներում, ժողովրդի մեջ լուրեր էին պտտվում, որ պետական կալվածքները վարձակալության են տրված թագավորի սիրելիներին։ Դրա հիման վրա պիեսում Ռիչարդի ողջ բնութագիրը ներկայանում է մեզ որպես երկիրը սնանկացնողի։*

II, 1, 81.— **Օ, այդ անունը որքան պատշաճ է ինձ այս վիճակում..**— Gaunt *անունը համահնչուն է* gaunt *բառին. «նիհար», «ուժասպառ»։*

* *Ծանոթագրությունները կազմել է Ա. Հովսեփյանը։*

II, 1, 185.— **Ոչ ամուսնության տոգելէր թշվառ Բոլինբրոկի.**— *Ռիչարդ Երկրորդը խանգարեց Բոլինբրոկի ամուսնությունը Ֆրանսիայի թագավորի քեռու՝ հերցոգի աղջկա հետ։*

II, 3, 114.— **Մահից փրկեցինք Սևուկ իշխանին...**— *Որդին Էդվարդ Երրորդի, Յորքի եղբայրը և Բոլինբրոկի քեռին։*

III, 2, 26.— **Ծաղկի փոխարեն թող իր երկնղված լեզվի խայթիչով.**—*Շեքսպիրը սխալվում է՝ օգտագործելով ժողովրդի մեջ տարածված այն կարծիքը, թե օձը թունավորում է լեզվով և ոչ թե ատամներով։*

III, 3, 121—122.— **Երդվելով վսեմ նախահայրերիդ || Անցյունին կանգնած վեհ դամբարանով.**— *Նորթեմբերլենդը խոսում է Էդվարդ Երրորդի շիրիմի մասին, որ գտնվում է Վեստմինստերյան աբբայությունում։*

III, 3, 206.— **Ֆաետոնի պես կսուրամ ներքև.**— *Արևի աստված Հելիոսի որդի Ֆաետոնը, ըստ դիցաբանության, հորից իրավունք ստանալով մեկ օրով վարելու նրա արևի կառքը, անփորձությունից քիչ է մնում այրի աշխարհը, զայրացած Զևսը շանթահարում է նրան։*

III, 4, 34.— **Գնա ծիրանի ծառերի կախված ճյուղերը կապիր.**— *Անախրոնիզմ՝ Անգլիա ծիրան է բերվել XIV դարից հետո։*

IV, 1, 49.— **Սուսերիս ծայրով քո կուրծքը խոցել.**— *Անախրոնիզմ՝ Ռիչարդի ժամանակ սուսեր չի եղել։*

IV, 1, 264.— **Իշխանությունը իմ աստվածային.**— *Այստեղ առաջին անգամ Ռիչարդը ակնարկում է թագավորի երկնային իրավունքը, որը, ըստ իրեն, անսահմանափակ է և անձեռնմխելի։ Հեշտ է նկատել, որ այս միտքը միշտ հնչում է նրա բոլոր ճառերում։*

V, 1, 2.— **Դեպի ամրոցը Հուլիոս Կեսարի.**— *Ըստ ավանդության Թաուերը կառուցել է Հուլիոս Կեսարը։ Իրականում այն կառուցել է Վիլյամ Նվաճողը 1078 թ.։*

V, 2, 52.— **Դու պետք է այժմ Ռուտլենդ կոչես նրան.**— *Որպես Ռիչարդի կողմնակից, Օմեռլը զրկվում է հերցոգի տիտղոսից և կրում է միայն իր Ռուտլենդ տոհմական անունը։*

V, 3, 1.— **...Թե ուտեղ է իմ անառակ որդին.**— *Արքայազն Հարրի. սրա երիտասարդությունը ներկայացված է «Հենրի Չորրորդում» (մաս I և II)։*

V, 3, 135.— **Ֆրանսերենով այդ բառը ասեք.**— *Շեքսպիրի ժամանակ ֆրանսերեն* Pardonnez-moi *արտահայտությունը բարձր հասարակության մեջ գործածվել է որպես քաղաքավարի մերժման ձև (տե՛ս նույն արտահայտությունը «Ռոմեո և Ջուլիետում», արարված II, տես. 4)։*

V, 5, 10.— **Եվ այս աննշան աշխարհը լցնում բնակիչներով.**— *Բնագրում* this little world— *այս փոքր աշխարհը ասելով Ռիչարդը նկատի ունի իրեն՝ ի հակադրություն արտաքին աշխարհի։*

«ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԴ»

Պիտի ենթադրել, որ «Ռիչարդ Երկրորդում» Հենրի Բոլինբրոկի կերպարը ուրվագծելուց հետո Շեքսպիրի համար հեշտ չէր այլևս չմտածել Հենրի Չորրորդի մասին, կանգ առնելով ոչ այնքան նորաթուխ թագավորի գահակալության ծայրահեղ լարված տարիների (1399—1413), որքան նրա որդու՝ նոր թագաժառանգ Հենրիի բնավորության ու հայացքների ձևավորման վրա։ Ուշագրավ է, որ դեռևս պատանի Հենրիի մասին հայրը խոսք է բաց անում նույնիսկ «Ռիչարդ Երկրորդ»-ում (V, 3)։ Ասել է թե՝ «Ռիչարդ Երկրորդ», «Հենրի Չորրորդ» և «Հե՛նրի Հինգերորդ» քրոնիկ-

ները պետք է որ երիտասարդ դրամատուրգի գլխում ծնված լինեն եթե ոչ միաժամանակ, ապա համենայն դեպս ոչ մեծ ընդմիջումներով: Պիեսների իր ձեռքի տակ եղած ցուցակում (1598) Ֆ. Մերեսը հիշատակում է նաև «Հենրի Չորրորդը», պարզ չէ միայն, թե նրան արդյո՞ք հայտնի էր այս գործի երկրորդ մասի գոյությունը: Առաջին մասը տպագրության համար արձանագրվում է նույն թվականի փետրվարին և նույն տարվա մեջ էլ տպագրվում է առանց հեղինակի անվան հիշատակության, վերահրատարակվում է 1599 թ. արդեն որպես Շեքսպիրի գործ, նորից վերահրատարակվում է 1604, 1608, 1613 և երեք անգամ էլ՝ Շեքսպիրի մահից հետո, մինչև առաջին ամբողջական ժողովածուն, Երկրորդ մասը լույս է տեսնում 1600 թ.: Այնուհետև երկուսը միասին լույս են տեսնում 1623 թ.: Քրոնիկի երկու մասերի գրության ժամանակն է 1597—1598 թվականները: Դրամատուրգի համար հիմնական աղբյուր է հանդիսացել դարձյալ Հոլինշեդի «Քրոնիկները», թերևս բացառված չէ, որ նա նկատի ունեցած լինի նաև մի տասնամյակ առաջ Լոնդոնում բեմադրված մի պիես, որ նվիրված էր Հենրի Հինգերորդի հաղթարշավին Ֆրանսիայում: «Հենրի Չորրորդ»-ի առաջին մասի գործողության ժամանակն է 1402—1403 թվականները, երկրորդ մասինը՝ 1403—1413 թվականները:

«Հենրի Չորրորդ»-ը Շեքսպիրի պատմական թեմայով գրված այն գործերից է, որոնք ամենից քիչ են քրոնիկ: Այս չի նշանակում, թե նա խախտում կամ անտեսում է պատմականության սկզբունքը. այդ նշանակում է միայն, որ նա շատ ազատորեն է վերաբերվում իր աղբյուրների հետ, ինչպես պատմական, նույնպես և գրական: Այդ նշանակում է նաև, որ նա իր ուշադրությունը բևեռում է բնավորությունների խորացման վրա, համեմատաբար ազատ է վարվում ժամանակագրության հետ: Այսպես, օրինակ, նա զգալիորեն մեծացրել է Հենրի Չորրորդին, դարձնելով նրան առաջացած տարիքի մի մարդ, մինչդեռ Շրուսբերի ճակատամարտում նա ընդամենը երեսուն վեց տարեկան է: Հոտսպերը, որ թագավորից մեծ է եղել տարիքով, դառնում է թագաժառանգ Հենրիին համարյա հասակակից: Քրոնիկի երկրորդ մասում նա հանդես է բերում Հենրի Չորրորդի մի՝ երկրորդ որդու ևս, որ պատմական անձ չէ: Սա արված է այն նկատառումով, որ թագաժառանգի ազատ վարքը հակադրի եղբոր խստաբարո նկարագրին: Նրան է պատկանում և կանացի կերպարներ հանդես բերելու գաղափարը: Վերջապես, Շեքսպիրի երևակայության արդյունք են և Ֆալստաֆի հետ կապված տեսարանները, որոնք և քրոնիկը հանում են տվյալ ժանրի նեղ սահմաններից:

Եթե «Ռիչարդ Երկրորդը» իր էությամբ մոտենում է ողբերգության, ապա «Հենրի Հինգերորդը» հեռավոր կերպով հիշեցնում է հերոսական էպոսը: Քառաբանության առաջին մասում քննադատվում է թագավորների «աստվածային իրավունքը», վերջին մասում գովերգվում է մարտական հայրենասիրությունը: Այս տեսակետից միջի զույգ մասերը, որոնց պայմանական կերպով միայն տրվում է տվյալ շրջանի գահակալի անունը, բուն իս, մոտենում են դրամային: Ճիշտ է, դա բաղկացած է

երկու մասից, կարող է ներկայացվել միայն երկու երեկոյի ընթացքում, բայց չի կարող ընկալվել այլ կերպ, քան եթե մի ամբողջություն, և՛ գաղափարական, և՛ գեղարվեստական տեսակետից: Երեք կենտրոնական բնավորություններից (Հենրի Չորրորդ, Հենրի, Ֆալստաֆ) կենտրոնականը ոչ թե թագավորող Հենրին է, այլ թագաժառանգը, որի բնավորությունը վերջնականապես բացահայտվում է երկրորդ մասի վերջին գործողությունում միայն: Նույնը կարելի է ասել և թագավորի մասին, որի ոգին ի բռի մղած գոյակռիվը անօրինական ճանապարհով ձեռք բերած գահի համար ավարտվում է փաստորեն իր մահով, ավելի ճիշտ՝ ավագ որդու գահ բարձրանալով. ավատական օրինականության համաձայն՝ գահին նոր տիրացած Հենրի Հինգերորդը բոլոր տեսակետներից համարվում է ազատ իր թագավոր հոր գործած մեղքերից, այսինքն՝ միանգամայն օրինական թագավոր: Փակվում է և «ուրախ պատկերի ասպետ» Ջոն Ֆալստաֆի (հակառակ «տխուր պատկերի ասպետ» Դոն Քիշոտի) կյանքի ուղին. Մավրը իր դերը կատարեց, Մավրը կարող է գնալ:

Պատմական քրոնիկներում Շեքսպիրն ասես թե իր առջև երկու միմյանցից անբաժան հարցեր է դնում. ինչպիսի՞ն պիտի լինի թագավորը և ինչպիսիք են եղել մեր թագավորները: Ռիչարդ Երկրորդին տեսանք արդեն. գրգամոլ, անքան մի մարդ. նրա հոգևոր ժառանգը (ճիշտ է, մի այլ գահի բազմած) հետագայում պետք է ասեր, թե՝ «Պետությունը՝ այդ ես եմ»: Նրան փոխարինած Հենրի Չորրորդն ավելի զգույշ է, իհարկե, նա էլ է այդպես մտածում, բայց առայժմ այդպես չի ասում: Եվ, այնուամենայնիվ, օրենքի և օրինականության անունից հանդես եկող Հենրի Բոլինբրոկը սկսում է օրինազանցությամբ, սպանել տալով գահազուրկ թագավորին, նա ինքը իրեն օրենքից դուրս է դնում: Նրա առաջին թշնամիները դառնում են երեկվա բարեկամները: Եվ ահա ծայր է առնում ծանր, երկիրը ավերող, նրա ամբողջությունը ջլատող գոտեմարտը կենտրոնախույս ֆեոդալների և կենտրոնաձիգ ազգային պետության միջև: Ընդհանուր առմամբ այդ կենտրոնախույս ուժերը ճիշտ էին, քանի որ նրանք դուրս էին գալիս օրինականությունը ոտնահարած, ոճրագործության ուղին բռնած թագավորի դեմ, բայց և սխալ էին, քանի որ այդ թագավորը ամբողջական պետությունն էր ներկայացնում: Մյուս կողմից՝ ճիշտ էր այդ խռովարարների դեմ դուրս եկած թագավորը, քանի որ նա ճնշելու էր իրենց նեղ, էգոիստական շահերը պաշտպանող ֆեոդալներին և միաժամանակ սխալ, քանի որ իր բարոյական նկարագրով նա ոչնչով չէր տարբերվում երկիրը եղբայրասպան պատերազմի մեջ քաշած այդ բարոններից: Ինքը թագավորը շատ լավ է գիտակցում իր դրության երկվությունը: Բայց նա այլևս փակել է իր առաջ վերադարձի ճանապարհը: Եթե ցանկանա նույնիսկ, նա չի կարող կրկնել Ռիչարդ Երկրորդի թույլ տված հիմարությունը. կամովին չի հրաժարվի գահից: Ուրեմն, որքան էլ նրան տանջի գործած ոճրի գիտակցությունը, նա պետք է որ առաջ գնա, և հենց ճիշտ նույն ուղիով՝ ճանապարհ հարթելով իր համար հրով ու սրով, ոճիր կուտակելով ոճրի վրա: Իրերի տրամաբանությունը թելադրում է, որ դա սկսի երեկվա իր բարեկամներից: Բայց այդ «բարեկամները»

բնավ մտադիր չեն խոնարհվել այս նորաթուխ բռնակալի առաջ: Նրանք լավ գիտեն, որ թագավորական իշխանությունը Հենրի Չորրորդը ստացել է ոչ թե վերուստ, այլ իրենց իսկ ձեռքով:

Ովքե՞ր են Հենրի Չորրորդի դեմ հանդես եկած խռովարարները: Դրանք են, գլխավորապես, Նորթեմբերլենդը, Վուստերը, Հոտսպերը, մարդիկ, որ դաշնակիցներ են փնտրում նույնիսկ իրենց նախկին թշնամիների մեջ: Քաղաքական այս օպոզիցիան, այսպիսով, աչքի է ընկնում իր անսկզբունքայնությամբ. նրան սնունդ է տալիս ամեն մեկի մեջ առանձին-առանձին նստած փառասիրությունը: Եվ անհահայտնվում են իշխանության օրինական թեկնածուն՝ Ռիչարդ Երկրորդի հորեղբոր թոռը՝ Էդմոնդ Մորտիմերը, Մարչի կոմսը. դարձյալ Ռիչարդի ժառանգներից Արչիբոլդը՝ կոմս Դուգլասը, Ուելսի խռովարարների պարագլուխ Գլենդովերը. վերջապես Հենրի Պերսին, կոմս Նորթեմբերլենդի որդին՝ Հոտսպեր մականունով: Եվ նա պիտի կռվեր թագավորի դեմ, իր աջ թևում ունենալով շոտլանդացի Դուգլասին, հենց նրան, որին հաղթել էր ազնիվ մենամարտում: Սրանք բոլորը իրար կպած էին վրեժխնդրության կասկածելի սոսնձով, բոլոր սրանք դաշինքի մեջ էին ներքին և արտաքին, առկա և պոտենցիալ բոլոր թշնամիների հետ: Հազար ու մեկ անգամ կրկնվում էր ֆեոդալական հիերարխիայի պայմաններում սովորական դարձած երևույթը. ֆեոդալը դուրս էր գալիս ոչ այնքան իր վասալի, որքան ազգի դեմ այն պատճառով միայն, որ այդպես էր պահանջում իր նեղ, անձնական շահը: Այս ամենից հետո դժվար չէ պատկերացնել խռովարարների ճամբարում տիրող իրավիճակը: Կրքերի ու բնավորությունների այդ բազմազանությունը զարմանալի մի կենդանություն է ստանում Շեքսպիրի գրչի տակ: Այս փոքր ճամբարում կենտրոնացած են ասես բոլոր կենտրոնախույս ուժերը այն մեծ ճամբարի, որ կոչվում է ավատական հասարակություն:

Այս բոլոր խռովարարների քաղաքական դավանանքը կարելի է արտահայտել մեկ խոսքով՝ ետ դեպի խոր միջնադարը: Բացարձակ միապետության մեջ նրանք տեսնում էին նախ և առաջ իրենց եղած ու չեղած իրավունքների սահմանափակում. համընդհանուր օրենքները գալիս էին սանձ դնելու նրանց սահման չճանաչող փառասիրությանը, գոռոզությանը, խարդավանքին, սեփական տիրույթի սահմանները հարևանների հաշվին անվերջ ընդարձակելու մոլուցքին:

Սրանց մեջ առանձնակի է կանգնած կրտսեր Հենրի Պերսին, որ իր բռնկվող բնավորության պատճառով կոչվում էր Հոտսպեր, այն է՝ տաք խթան: Ռազմատենչ ֆեոդալականության մարմնացումն է նա: Նրա համար չկա ավելի սուրբ բան, քան պատիվը: Օրենքին և օրինականությանը նա հակադրում է ֆիզիկական կոպիտ ուժը: Այստեղ նա ուղղակի նախանձելի է ինչպես իր ուժով, նույնպես և շիտակությամբ: Նրան խորթ են պալատական ինտրիգները, խնամքով հյուսված խարդավանքները: Ասպետական հերոսականության վերջին ներկայացուցիչն է նա ֆեոդալական իրավունքի պաշտպանության համար զենք վերցրած ասպետների մեջ, որոնք, սակայն, ասպետական քիչ բան ունեն իրենց մեջ, քանի որ քաղաքական

խորամանկությունները և անսկզբունք գործարքները շիտակ գոտեմարտից շատ բարձր են դասվում այժմ: Եվ իզուր չէ, որ նա, լքված դաշնակիցներից, անհավասար մարտի մեջ է մտնում և ընկնում է խնկական հերոսի մահով թագաժառանգ Հենրիի արից:

Եթե խարակտերներով այսքան հարուստ է ու բազմազան խռովարար բարոնների ճամբարը, ապա բնավ աղքատ չէ թագավորի ճամբարը: Այստեղ ևս մենք գործ ունենք որոշակի կերպարների հետ, ըստ որում՝ այստեղ ևս առկա են անլուծելի հակասություններ կենտրոնական դեմքերի միջև: Այն ժամանակ, երբ Հենրի Չորրորդը հուսահատ պայքար է մղում օրավուր զորեղացող թշնամու դեմ, երիտասարդ Հենրին, որին խորթ է այն ամենը, ինչ կապված է պալատի և պալատական պայմանականությունների հետ, ժամանակ է անցկացնում հասարակության տականքը կազմող մարդկանց շրջանում: Դեպի բարձր խավն ունեցած այդ խորթության մեջ անգամ թագավոր հայրը վերստին առաքված պատիժն է տեսնում իր գործած չարագործության դիմաց:

Ի՞նչն է թագաժառանգ Հենրիին մղում դեպի հասարակական այն միջավայրը, որ բարձր դասը դիտում է իբրև հատակ: Ոչ միայն երիտասարդական ավյունը, որ ձգտում է ուրախությանն ու անհոգությանը այնպես, ինչպես արևածաղիկն է թեքվում դեպի արևը: Բանն այն է, որ նրան նաև վանում են և վանում է հենց պալատը: Այնտեղ, հասարակական վայրերում և պանդոկներում մարդն է իշխում պայմանականության վրա, այստեղ, պալատում, պայմանականությունն է իշխում մարդու վրա: Այդ պալատում էլ, իհարկե, մարդիկ կան. բայց դրանք անհատներ չեն. նրանցից իսպառ քամված է մարդկայնությունը: Փառասիրությունն ու ցուցամոլությունը, դուրս է գալիս, զրկում են մարդուն վայելելու մարդկային ամենատարրական հաճույքները,—ուրախություն, բարեկամություն, հսկող աչքից ազատ լինելու հնարավորություն: Այս շրջանում նա երկու տարբեր կյանքով է ապրում իսկապես, պալատում նա թագաժառանգ է, պանդոկներում՝ հասարակության ազատ անդամ, որ վարվում է այնպես, ինչպես ցանկանում է, խոսում է այն, ինչ մտածում է: Այստեղ, ըստ իս, առկա կարող է լինել և մի այլ նկատառում. նա ուզում է լավ ճանաչել կյանքը, ուսումնասիրել հասարակության բոլոր խավերին, սկսելով հենց գողերից ու հարբեցողներից: Չէ՞ որ գահ բարձրանալուց հետո այդ հնարավորությունից նա իսպառ զրկվելու է:

Որ նա, այդ ամենով հանդերձ, իրեն կորած չէ համարում, վերադարձի կամուրջները չի համարում այրած, երևում է նրա հենց առաջին խոստովանությունից այն մասին (I, 2), որ ինքը հոգով այս աշխարհին չի պատկանում: Ուստի և խորապես սխալվում են Ֆալստաֆն ու նրա մյուս բաժակակիցները, կարծելով, թե թագաժառանգը իրենց հետ կլինի նաև թագադրվելուց հետո: Իրականում Հենրին և՛ սիրում է նրան, և՛ խորշում միաժամանակ: Սիրում է նրան անսահման կենսասիրության և անմիջականության, ուրախ բնավորության ու կատակասիրության և արհամարհում է այն բանի համար, որ նա զուրկ է բարոյական որևէ սկզբունքից, որ ծառայում է իր

որկորին միայն։ Այն ժամանակ, երբ Հոտսպերի համար պատիվ հասկացությունը նույնանում է կուռքի հետ, որին նա ենթարկվում է կույր հավատով, այն դեպքում, երբ Ֆալստաֆի համար պատիվը ոչ այլ ինչ է, քան եթե դատարկ հնչյուն (V, 1), թագաժառանգն ունի պատվի իր հասկացությունը. նա գիտակցում է իր կրկնակի պարտքը, անձնական և հասարակական, անձնականը՝ թագավոր հոր առաջ, հասարակականը՝ թագավորության առաջ։ Նա իրեն իրոք որ անխոհեմ է պահում այնքան ժամանակ, մինչև որ գահին սպառնացող վտանգը հասնում է իր լարվածության բարձրագույն կետին։ Հենց որ նա գիտակցում է, որ պետությունը ձեռքից գնում է, ցած է դնում բաժակը և վերցնում սուրը, պայքարելու ոչ այնքան անձնական պատվի համար, որքան պետության, նաև, իհարկե, իր ընտանիքի։ Նույնիսկ Հոտսպերի դեմ տարած փառավոր հաղթանակը գլխապտույտ չի առաջացնում. նա միայն իր պարտքն է կատարել, ուրիշ ոչինչ։

Որքան էլ միասնական ու միաձույլ, քրոնիկի երկու մասերն, ասես, տարբեր խնդիրներ են դնում իրենց առջև, եթե առաջին մասի համար կենտրոնական թեման պատվի թեման է, ապա երկրորդ մասինը՝ օրենքն է։ Տարբեր տեսակետներից էին պատիվ հասկացությունը դիտում թագաժառանգը և Ֆալստաֆը, տարբեր է նրանց հայացքը օրենքի մասին։ Վերջինս լավագույն դեպքում ջանք է թափում օգտվել, վատագույն դեպքում՝ շրջանցել այն, չնկատել կամ մերժել։ Ինչ վերաբերում է երիտասարդ Հենրիին, ապա նրա վերաբերմունքը օրենքի նկատմամբ որոշակի էվոլյուցիա է ապրում. առաջին շրջանում նա ևս չի ընդունում օրենքը, խուսափում է նրանից, քանի որ սա կաշկանդում է նրա ազատությունը. այդ հողի վրա է նա ապտակում գերագույն դատավորին, որը և առանց երկմտելու նրան բանտ է նետում։ Գահաթոռը միանգամից փոխում է նրան, դարձնում օրենքի և օրինականության հովանավոր ու պաշտպան։ Նա պաշտոնում է իր ստորադրյալներին՝ արդարացնելով դատավորի արարքն իր նկատմամբ։ Նա մեկ ընդ միշտ հրաժարվում է ազատությունից. այժմ նա միայն պարտականություններ ունի երկրի հանդեպ։

Այսպես ուրեմն, այսուհետև Հենրի Հինգերորդի համար օրինականությունն ավելի բարձր է, քան՝ որևէ անհատ պետության մեջ, բարձր նույնիսկ թագավորից։

Բայց չի՞ գնա, արդյոք, այս երիտասարդ թագավորը այն նույն ճանապարհով, ինչ ճանապարհով որ գնացել էր Հոտսպերը, պատվի փոխարեն ֆետիշացնելով օրենքը։ Որ այդպիսի մի վտանգ կա նրա առաջ, երևում է վերջին տեսարանից, երբ նորընծա Հենրի Հինգերորդը չի ճանաչում ոչ միայն իր նախկին բաժակակիցներին, այլև իր բարեկամ Ֆալստաֆին. ոչ թե չի ճանաչում իրոք, այլ չի ցանկանում ճանաչել։ Նա լավ է գիտակցում, որ դա մահացու հարված կլինի խեղճ ծերունու համար, բայց և չի էլ մտածում հանձնվել սենտիմենտալ ապրումների։ Օրենքը օրենք է այն դեպքում նույնիսկ, երբ անտեսում է մարդկայնությունը, այն բարձրագույն գաղափարը, որի պաշտպանությամբ էլ հանդես էր եկել երիտասարդ իշխանը մինչ այդ։

Անձնապես Հենրի Հինգերո՞րդն է պատասխանատու այն բանում, որ այս կենտրոնական խնդիրն այդպես էլ չի լուծվում։ Ո՛չ, ասես թե պատասխանում է հեղինակը. մեղավոր է այն հասարակարգը, որի զավակն է նա։ Դա պայմանավորված էր ոչ միայն այն ժամանակվա հասարակության սոցիալական բնույթով, այլև մարդկային անհատականության նկարագրով։ Այդ անհատականությունը, ինչ կերպարանքով էլ որ այն հայտնվեր, անլուծելի հակասության մեջ էր պետականության գաղափարի հետ, որքան էլ իդեալական պատկերացվեր այն։

Կենտրոնական այս պրոբլեմը կենսական էր ոչ միայն այն հասարակարգի համար, որ վերարտադրված էր պիեսում, այլև այն մյուսի, որի մեջ ապրում էր բանաստեղծը։ Բուրժուական ինդիվիդուալիզմը ոչնչով չէր տարբերվում միջնադարյան բարոնների անսանձ կամայականություններից։ Այս իմաստով ահա «Հենրի Չորրորդը» ոչ միայն պատմական, այլև ժամանակակից պիես էր. եթե պատմական էր իբրև քրոնիկ, ապա ժամանակակից էր իբրև դրամա։

«Հենրի Չորրորդը» բացառիկ տեղ է գրավում հեղինակի պատմական թեմայով գրված երկերի մեջ նրանով, որ այստեղ վերջնականապես հաղթանակում է ռեալիզմը, այն մոնումենտալ ռեալիզմը, որ դրամատուրգիայի բնագավառում կապվում է Շեքսպիրի անվանը։ Այդ մեթոդի կիրառման հետևանքով է ահա, որ առաջացել են տիպերի այն բազմազանությունն ու հարստությունը, որով աչքի է ընկնում այս գործը։ Դրա արդյունքը պիտի համարվի նաև ողբերգականի և կոմիկականի այն սերտաճությունը, որով առանձնացվում է այս գործը հեղինակի մյուս գործերի մեջ։ Այդ ռեալիզմով է պայմանավորվում այն խորաթափանց հայացքը, որ հեղինակը նետում է պատմական իրադարձությունների ոչ միայն պատճառների, այլև սկզբնապատճառների վրա։ Այն շքեղությունն ու պերճությունը, որ կար բեմի վրա, չէր խանգարում հասարակությանը տեսնելու այդ բոլոր թագավորներին ու բարոններին այնպես, ինչպես նրանք եղել են իրականում. իրենց անսքող մերկությամբ, իրենց իսկական հույզերով ու մտածումներով։ Հենց միայն Ֆալստաֆի հետ կապված տեսարանները բավական էին, որպեսզի մեր առաջ կենդանանա Վերածնության ոգին. այն Վերածնության, որի հռչակված սկզբունքները հեղինակը շարունակում է պաշտպանել ու զարգացնել նաև պատմական թեմայով գրած հաջորդ գործերում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I, 1, 1.— **Թեպետ ցնցված ենք, հոգսերից հյուծված.**— *Հենրի Չորրորդը ակնարկում է Ռիչարդ Երկրորդի հետ ունեցած արյունահեղ պայքարը։ «Հենրի Չորրորդի» առաջին մասը «Ռիչարդ Երկրորդ»-ի անմիջական շարունակությունն է։*

* *Ծանոթագրությունները կազմել է Բ. Անդրեասյանը։*

I, 1, 6—7.— **Եվ բա՛վ է, որ մեր հողն այս պապակած || Շուրթերը ներկեն կարմիր արյունով իր զավակների.—** *Ծարացած հողի անձնավորման վրա կառուցված այս պատկերը վերցված է Աստվածաշնչից։*

I, 1, 36.— **Տասնչորս հարյուր տարիներ առաջ.—** *Նպատակն է ընթերցողին (հանդիսատեսին) ներկայացնել 1402(՞) պատմական տարեթիվը։ Սակայն մոտավորապես 30 տարի սխալ է հաշված. Քրիստոսի թվականը հաշվում են նրա ծննդյան թվականից և ո՛չ նահատակության։*

I, 1, 37.— **Մեկ տարին անցավ, որ մենք վճռել ենք ճանապարհ ընկնել.—** *Տես «Ռիչարդ Երկրորդի» վերջին տողերը, երբ Հենրի Չորրորդը, լսելով Ռիչարդի սպանության լուրը (որ ինքն էր կազմակերպել գահը հափշտակելու նպատակով), արտասանում է.*

Ես պետք է ծովով Սուրբ երկիր մեկնեմ,
Որ այս արյունը իմ ձեռքից մաքրեմ:

I, 1, 48.— **Մորտիմեր.—***Մարչի կոմսը, Անգլիայի գահի ուղղակի ժառանգորդը, որ, համաձայն պիեսի, ղեկավարում է Հենրի Չորրորդի զորքերը արևմտյան ճակատում։*

I, 1, 60.— **Սուրբ խաչի օրը.—** *Սեպտեմբերի 14-ն է։*

I, 1, 61.— **Հոտսպեր Պերսի.—** *Պերսիների մեծ գերդաստանի ամենաերիտասարդ շառավիղն է, որ ղեկավարում է թագավորական զորքերը հյուսիսային ճակատում։ Պերսիները Հենրի Չորրորդի գլխավոր աջակիցներն են եղել գահը հափշտակելու գործում։*

I, 1, 62.— **Արչիբոլդ,** *կոմս Դուգլաս.— Անգլիական Պերսի և շոտլանդական Դուգլաս գերդաստանների միջև եղել է հին թշնամանք։*

I, 1, 80.— **Մորդեկ, Ֆայֆի** *կոմս.— Սա պարտված Դուգլասի որդին չէ, այլ Ալբանիի դուքսի՝ Շոտլանդիայի ռեգենտի որդին։ Շեքսպիրի սխալը գալիս է Հոլինշեդի տեքստում եղած մի կետադրական սխալից։*

I, 2.— **Մտնում են իշխան Հենրին և Ֆալստաֆը.—** *Սրանք միասին չեն գալիս։ Ֆալստաֆը քնած է մի նստարանի վրա, և վարագույրը բացվելու պահին իշխան Հենրին աշխատում է արթնացնել նրան։*

I, 2, 13.— **Մեծ արջի յոթ աստղեր.—** *Խոսքը համաստեղության մասին է։*

I, 2, 14.— **...«Թափառաշրջիկ Երաշալի ասպետով».—** *Էլ Դոնզել Ֆեբոն է՝ Արևի ասպետը (կամ Ֆեբոսը), որ իսպանական հանրահայտ վեպի հերոսն է։ Ամենայն հավանականությամբ այս մեջբերումն արված է ժամանակակից ինչ-որ բալլադից, որին հիմք է ծառայել վերոհիշյալ վեպը։*

I, 2, 26.— **...մենք ծովի պես ղեկավարվում ենք մեր ազնիվ և ողջախոհ տիրուհու՝ լուսնի կողմից.—** *Լուսինը «ջրերի տիրուհին է» համարվել, քանի որ նա է ղեկավարել ծովային մակընթացություններն ու տեղատվությունները։ Նա ավազակների հովանավորուհին էլ է համարվել, քանի որ հարձակումները և կողոպուտները կատարվել են գիշերը։*

I, 2, 39.— **Հիբլա.—** *Քաղաք Սիցիլիայում, որ հայտնի է եղել իր մեղրով։*

I, 2, 39—40.— **Իսկ մի՞թե բանտախցիկի ամենաճոխ պատմուճանը ցլակաշվից չինված բաճկոնը չէ.—** *Ցլակաշվից կարված բաճկոն հագնում էին բանտապահները։*

I, 2, 64.— **Պատիվ և պարգևներ ձեռք բերելու համար...—** *Խոսքը այն պարգևների մասին է, որոնք հեշտությամբ ձեռք էին բերվում պալատում ծառայելով, մանավանդ հագուստներ, որոնցից շատ էին ունենում դահիճները, քանի որ, ըստ օրենքի, մահապարտի հագուստը անցնում էր դահճին։ Այս մասին խոսվում է նաև «Կորիոլանում»։*

I, 2, 70.— **...լինկոլնշիրյան միալար նվագող մի պարկապզուկ.—** *Պարկապզուկ նվագող թափառաշրջիկները մեծ մասամբ լինկոլնշիրցիներ են եղել։ Անգլիայում նրանք մասնակցել*

են ժողովրդական գրեթե բոլոր տոնակատարություններին։ Նրանց շատ են հիշատակում նաև Շեքսպիրին ժամանակակից ուրիշ գրողներ։

I, 2, 72.— ...քաղաքի պատերից դուրս գտնվող աղտեղի ճահճափոս.— *Խոսքը Մուրդիչի ջրափոսին է վերաբերում, որը Լոնդոնը հյուսիսային կողմից բաժանում էր նրա արվարձանից և միանում ճահճուտներին։ Ճահճափոսը խիստ մռայլ տեսք է ունեցել։ Այս արվարձանի մոտ են գտնվել Լոնդոնի թատրոնները։*

I, 2, 83.— ...ասում են, իմաստությունը փողոցներում է գոռում, բայց ոչ ոք չի նայում նրա երեսին.— *Ասույթ Սողոմոնի առակներից (Աստվածաշունչ)։*

I, 2, 101.— Գեդշիլ.— *Բնակավայր Քենտից Լոնդոն տանող ճանապարհին։ Այստեղ հաճախ են եղել կողոպուտներ և սպանություններ։ Պիեսում Գեդշիլ է անվանված նաև մի փողոցային գող, որը հանդես է գալիս քիչ ավելի ուշ (Ֆալստաֆի հետ հետապնդում է անցորդներին)։*

I, 2, 106.— Նեդ.— *Էդվարդ անվան կրճատված ձևն է։*

I, 2, 108.— Ի՞նչ է ասում պարոն Ջոն Քաղցրահամ գինին.— *Փոինսը Քաղցրահամ գինի է կոչում Ֆալստաֆին, քանի որ վերջինս գերադասում է գինու այդ տեսակը։ XVI և XVII դարերում ընդունված է եղել գինին քաղցրացնել շաքարով։*

I, 2, 121.— Քենտբրի.— *Քաղաք նշանավոր մենաստանով, ուր խմբերով աղոթելու են գնացել ուխտավորները։*

I, 2, 124.— Ռոչեստեր.— *Քաղաք, որ Շեքսպիրի ժամանակ մոտ երկու հազար բնակիչ է ունեցել։ Ռոչեստերով է անցել Դովեր նավահանգստից Լոնդոն տանող ճանապարհը։*

I, 2, 152.— Մնաս բարով, իմ ուշացած գարուն, մնաս բարով, ճոխ ամառ.— *Ուշացած գարուն — Եղիսաբեթյան շրջանի դարձվածք է։ Ճոխ ամառ՝ երկարատև տաք եղանակ, որը ձգվել է մինչև նոյեմբեր։ Երկու դեպքում էլ ակնարկ է արվում այն մասին, որ, չնայած Ֆալստաֆի առաջացած տարիքին, նրա հոգին տակավին երիտասարդ է։*

I, 2, 156.— Բարդոլֆ, Պետո.— *Շեքսպիրյան բոլոր վաղ տեքստերում այս անունների փոխարեն դրված են Հարվեյ և Ռոսիլ, ինչպես և Ֆալստաֆի փոխարեն՝ Օլդքասլ։ Մի շարք ծանոթագրողներ ենթադրում են, որ Հարվեյը և Ռոսիլը եղել են դերասաններ։*

I, 2, 178.— ...իսկ երրորդը.— *Ֆալստաֆն է. Շեքսպիրի անփութությունը պիեսների ոչ կարևոր մանրամասներում հիանալիորեն երևում է այստեղ։ Քիչ վերը նա գրում էր, որ գողերը չորսն են, իսկ այստեղ խոսում է երեքի մասին։*

I, 2, 191.— Ես ձեզ բոլորիդ լավ եմ ճանաչում...— *Իշխան Հենրիի մենախոսության այս հատվածը մի ցայտուն օրինակ է այն բանի, թե ինչպես կարելի է մենախոսությանը տալ թատերական խորը նշանակություն՝ հանդիսատեսին ծանոթացնելու համար կերպարի էությանը, որը հետագա գործողություններում ավելի պիտի բացահայտվի։*

I, 3, 87.— Հիմար Մորտիմերին անճապաղ փրկենք.— *Շեքսպիրը Հոլինշեդի քրոնիկներում եղած մի անճշտության պատճառով ընկել է շփոթության մեջ, որի հետևանքով անընդհատ խառնում է սըր Էդմոնդ Մորտիմերին՝ լեդի Պերսիի եղբոր՝ Էդմոնդ Մորտիմերի՝ կոմս Մարչի հետ։ Սըր Էդմոնդը մեռած կոմս Ռոջերի կրտսեր եղբայրն է. կոմս Էդմոնդը վերջինիս որդին է, որը տասը տարեկան հասակում դաստիարակվել է, ավելի ճիշտ գերի է ընկել այնտեղ՝ Հենրի Չորրորդի մոտ։ Փոքրիկ կոմսը Ռիչարդ Երկրորդի մահից հետո գահի ուղղակի ժառանգորդն էր, որովհետև սերում էր Էդվարդ Երրորդ թագավորի երրորդ որդուց՝ Լիոնելից՝ Կլարենսի հերցոգից։ Հենրի Չորրորդի հայրը՝ Ջոն Գոնտը, Էդվարդ Երրորդի չորրորդ որդին է եղել։ Այսպիսով, Լանկաստերները հափշտակել էին Մորտիմերների գահակալական իրավունքը և երրորդ սերնդի գահակալության ժամանակ, երբ սկսվում է Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմը, նրանք պարտվում են։*

I, 3, 151.— Բոլինբրոկ.— *Այսպես էր կոչվում Հենրի Չորրորդը մինչև գահ բարձրանալը, որով-*

հետո ծնվել է Լինկոլնշիրի Բոլինբրոկ ամրոցում։ Միաժամանակ նա ունեցել է հետևյալ տիտղոսները՝ Դերբիի կոմս, Հերֆորդի դուքս, իսկ հոր մահից հետո՝ Լանկաստերի դուքս։

I, 3, 276.— Յորքի դուքսը.— *Յորքի արքեպիսկոպոսի եղբայրը, որին որպես Ռիչարդ Երկրորդի կողմնակից, բռնում են Բրիստոլում և մահապատժի ենթարկում։*

I, 3, 307.— Լորդ Սկրուպ.— *Վիլտշիրի կոմսը, Ռիչարդ Երկրորդի համախոհներից մեկը, որին Հենրի Չորրորդի հրամանով գլխատում են։ Հոլինշեդը գրում է, թե լորդ Սկրուպը արքեպիսկոպոսի եղբայրը չէ։*

II, 1, 25.— **Չերինգ-Կրոս.**— *Շեքսպիրի ժամանակ սա մի գյուղ էր Լոնդոնից Վեստմինստեր ընկած ճանապարհին, այժմ Լոնդոնի կենտրոնական մասերից մեկը։*

II, 1, 60.— Սուրբ Նիկողոսի քսակահատներ.— «Saint Nicolas, clerks» *արտահայտությունը հաճախ է հանդիպում Շեքսպիրին ժամանակակից գրողների երկերում և նշանակում է փողոցային կողոպտիչներ։ Սուրբ Նիկողոսը համարվում էր թափառող երեխաների, ճանապարհորդների, նավաստիների և առհասարակ թափառաշրջիկների հովանավոր։*

II, 1, 70.— Տրոյացիներ.— *Այստեղ կատակով կոչում են ավազակներին (սկզբնական նշանակությունը եղել է քաջ զինվորներ, հերոսներ)։*

II, 1, 76.— **Կարմրաքիթ հարբեցողներ.**— *Հեղինակը նկատի ունի այն մարդկանց, որոնց քթերը կարմրում էին գինու չափազանց շատ գործածությունից։*

II, 1, 88.— **Մենք գտել ենք այն ծաղիկը, որ մարդուն անտեսանելի է դարձնում.**— *Խոսքը ձարխոտանման «պտեր» կոչվող բույսի մասին է, որի ծաղիկը հին բնագետների կարծիքով անտեսանելի էր։ Համաձայն ժողովրդական հավատալիքի, այդ ծաղիկները տեսանելի էին դառնում Սուրբ Հովհաննեսի (*Saint John's Eve*) տոնին՝ հունիսի 23-ին։ Ըստ հավատալիքի, այն մարդը, որին հաջողվում էր հավաքել այդ ծաղիկները, կարող էր աներևույթ դառնալ։*

II, 1, 95.— homo-ն միակ ճանաչված կոչումն է բոլոր մարդկանց համար.— homo-*մարդ (լատ)։ Ուզում է ասել, նույնիսկ անազնիվ գողը մի իսկական* homo *է։ Սա կատակով արված մեջբերում է Լիլիի «Լատիներենի քերականությունից»։*

II, 2, 43.— ...թող քո արքայական ժառանգության ծնկակապերը կախաղանի պարան դառնան **քեզ համար.**— *Ակնարկ ծնկակապի շքանշանի մասին։ Ֆալստաֆը ենթադրում է, որ թագաժառանգը ունի այդ շքանշանից։*

II, 3, 1.— **Մտնում է Հոտսպերը մի նամակ կարդալով.**— *Ըստ որոշ մեկնաբանների՝ այս նամակի հեղինակն անհայտ է։ Ըստ այլ կարծիքի, Հոտսպերը կարդում է իր համախոհի՝ կոմս Դենբար Մարչի նամակը։*

II, 3, 55.— Բազիլիսկ .... վիշապ հրանոթ.— *Հրանոթների հնագույն տեսակներ են։*

II, 3, 79.— Espérance (ֆրանս. հույս).— *Պերսիների զինանշանի վրա եղած նշանաբանն է։*

II, 3, 103.— Կատարինե.— *Հոտսպերի կնոջ անունը Եղիսաբեթ է եղել։ Ենթադրվում է, որ Շեքսպիրը հատուկ սեր է ունեցել Կատարինե անվան նկատմամբ։*

II, 4, 1.— **Իստչիփ.**—*Փողոցի անուն, ուր ժամանակին գտնվում էին Լոնդոնի պանդոկները, ճաշարանները և մսագործների կրպակները։*

II, 4, 10.— ...ես իսկական կորնթական եմ.— *Հին Հունաստանում Կորնթոս քաղաքի բնակիչները հայտնի էին իրենց ազատ բարքերով։ «Կորնթացի», «տրոյացի» և նման այլ մակդիրները Շեքսպիրի ժամանակ Անգլիայի հասարակ ժողովրդի գիտակցության մեջ հարբեցողի, շրջմոլիկի նշանակություն ունեին, այդպես կոչում էին նաև այն մարդկանց, որոնք հաճախում էին անարգ սյուժեներով պիեսներ բեմադրող թատրոնները։*

II, 4, 17.— ...Կարող եմ նստել և կոնծել ուզածդ կաթսայագործի հետ.— *Կաթսայագործները հայտնի են եղել որպես մոլի հարբեցողներ և ունեցել են խիստ «պատկերավոր» բառապաշար։*

II, 4, 27.— Լուսնեղջյուրի սենյակ.— *Այն ժամանակվա հյուրանոցներում և պանդոկներում եղել են առանձին սենյակներ կամ գահլիճներ, որոնք հատուկ անուններ են ունեցել, համաձայն այն բանի, թե ինչպես են կահավորված կամ պատերին ու առաստաղին ինչպիսի նկարներ են արված եղել։*

II, 4, 55.— Միքայել հրեշտակապետի տոնը.— *Սեպտեմբերի 29-ն է։*

II, 4, 59.— ...այն սառնաշաքարը, որ դու ինձ ավիր՝ հազիվ մի պենի արժեր.— *Շեքսպիրի ժամանակ պանդոկների և ճաշարանների ծառաները միշտ իրենց մոտ շաքարի տուփիկներ են պահել՝ հաճախորդներին վաճառելու նպատակով (շաքարով քաղցրացրել են գինին)։*

II, 4, 69.— Դու համաձա՞յն ես կողոպտելու կաշվեբաճկոն... այն պարոնին...— *Ժամանակի հարուստ քաղաքացու բավական տիպիկ զգեստի նկարագրությունն է։ Իշխան Հենրին նկատի ունի հյուրանոցի տիրոջը։*

II, 4, 76.— Բարբարի երկիր.— *Գտնվում է Աֆրիկայի հյուսիսային ափին։ Իշխան Հենրին անիմաստ խոսքեր է ասում Ֆրենսիսին շփոթեցնելու և սենյակում պահելու համար։*

II, 4, 102.— Քան թե Պերսի Հոտսպերը.— *Շեքսպիրն առիթը բաց չի թողնում իրար հակադրելու իշխան Հենրիին և Պերսի Հոտսպերին։*

II, 4, 109.— «Rivo!».— *Այս բացականչության իմաստն ու ծագումը անհայտ է։ Շեքսպիրի օրերում այս բառը հաճախ է հնչել գինարբուքների և խրախճանքների ժամանակ։*

II, 4, 117.— Տիտան.— *Արևն է։*

II, 4, 120.— ...գինու մեջ դարձյալ կիր ես խառնել.— *Պանդոկատերերը վատ գինու մեջ կիր են խառնել, որպեսզի նրա թթվությունը վերացնեն։*

II, 4, 128.— Երանի՜ թե ես ջուլհակ լինեի — *Ջուլհակները հայտնի են եղել որպես բարեպաշտ մարդիկ։ Նրանք մեծ մասամբ կալվինիստներ են եղել և Անգլիա են փախել Ֆլանդրիայից՝ խուսափելով հետապնդումից։ Նրանք սիրել են դազգահի առաջ կրոնական հիմներ կամ սաղմոսներ երգել։*

II, 4, 206.— Ֆալստաֆ.— Հենց որ նրանց սրերը փշրվեցին:

Փոինս.— Վարտիքները ցած ընկան:

Բնագրում՝ Their points being broken,-
Down fell their hose.

Բառախաղ է՝ points *նշանակում է թրի ծայր, նաև վարտիքի կապ։*

II, 4, 213.— Կենդալյան կանաչ մահուդի հագուստ.— *Մուգ կանաչ բրդյա հագուստ է, որ կարել են Կենդալում (Վեստմորլենդ)։ Ռոբին Հուդի ավանդական հագուստն է եղել։*

II, 4, 260.— Հերկուլես *(կամ Հերակլես)*.— *Զևսի և Ալքմենի զավակը։ Առասպելական ուժի տեր դյուցազն հունական դիցաբանության մեջ։*

II, 4, 302.— Դու կարող էիր գործել հրով և սրով.— *Իշխան Հենրին* հուր *ասելով նկատի ունի Բարդոլֆի վառ կարմիր քիթը։*

II, 4, 320.— Ամամոն.— *Դևերի թագավորը, որին իբրև թե հաղթել է Գլենդովերը։*

II, 4, 338.— Կապտագլխարկ շոտլանդացիներ.— *Շոտլանդացիները սովորություն են ունեցել կապույտ գլխարկ դնել։*

II, 4, 365.— Ես պետք է... խոսեմ Կամբիզ թագավորի յուրահատուկ ոճով.— *Պարսկաստանի Կամբիզ թագավորի մասին ողբերգություն է գրել դերասան Թոմաս Պրեստոնը (1570), քիչ ներքև Ֆալստաֆի արտասանած երկու նախադասությունները ցույց են տալիս, որ Շեքսպիրը ծանոթ է եղել այդ գործին։*

II, 4, 413.— ...թող ինձ ոտքերից կախեն ճագարի կամ նապաստակի պես.— *Այստեղ Ֆալստաֆը իրեն համեմատում է ընտանի թռչուններ վաճառող խանութում կախված ճագարների և նապաստակների հետ։*

II, 4, 429.— Մենինգտրեսյան արջառ.— *Մենինգտրեսը (Մենինգտրի) էսեքսի քաղաքներից, որ հայտնի է եղել իր արջառներով։ Ամեն տարի տոնավաճառների ժամանակ արջառներն ամբողջությամբ խորովել են կրակի վրա։ Այդ տոնավաճառների ընթացքում տրվել են ժողովրդական ներկայացումներ, որոնք այն ժամանակներում հայտնի են եղել «մորալիտե» անունով։ Մորալիտեներում հանդես են եկել այլաբանական բնույթի զանազան կերպարներ, ինչպես, օրինակ, Մոլությունը, Անիրավությունը, Ունայնությունը։ Իսկ Հենրին սկզբում Ֆալստաֆին համեմատում է արջառի, իսկ հետո այս այլաբանական կերպարների հետ։*

II, 4, 449.— Փարավոնի նիհար կովեր.— *Ակնարկ է Աստվածաշնչի պատմություններից մեկի մասին։ Եգիպտոսի փարավոնը մի անգամ երազում տեսնում է յոթ գեր և յոթ նիհար կովեր, ընդ որում վերջինները խժռում են առաջիններին։ Այդ երազը նշանակում էր յոթ բերրի և յոթ անբերրի տարիներ Եգիպտոսի համար։*

II, 4, 476.— ...թաքնվիր պատի վարագույրի ետևում.— *Բնագրում՝* arras, *վարագույր, որը կախել են այնպես, որ պատի ու վարագույրի արանքում մնա տարածություն, ուր հնարավոր է եղել թաքնվել և գաղտնի լսել խոսակցությունները։ Ֆալստաֆը թաքնվում է այն վարագույրի ետևում, որը եղիսաբեթյան թատրոնում արտաքին բեմը բաժանել է ներքինից։*

II, 4, 477.— Մյուսները թող վերև բարձրանան.— *Նկատի ունի ներքին բեմի պատշգամբը* (balcony)։

II, 4, 488.— Ձեր ասած մարդը այստեղ չէ, պարոն, վստահացնում եմ.— *Ճշմարտությունը կարծես ինչ-որ չափով պահպանված է, քանի որ մարդը իսկապես որ ներկա չէ, այլ թաքնվում է վարագույրի ետևում։*

II, 4, 502.— Սուրբ Պողոսի տաճարը.— *Գտնվել է Լոնդոնում և հաճախ ծառայել է որպես ժամադրավայր այլևայլ (առևտրական և այլ) գործարքներ կնքելու համար։*

II, 4, 512.— Գալոնը.— *Հեղուկի չափ՝ չորս լիտր։*

III, 1, 1.— Բանգոր.— *Քաղաք Հյուսիսային Ուելսում (Վալես)։*

III, 1, 8.— Լանկաստեր.— *Այստեղ՝ Հենրի Չորրորդ թագավորը։*

III, 1, 89.— Շրուսբերի.— *Շրոպշիր դքսության գլխավոր քաղաքը (Արևմտյան Անգլիայում), սահմանակից է Ուելսին։*

III, 1, 158.— Գուշակ Մեռլինը.— *Ուելսի (Վալեսի) առասպելական բանաստեղծն ու կախարդը, որը, ըստ ավանդության, ապրել է մ. թ. VI դարում, հեքիաթային Արթուր թագավորի ժամանակներում։ Ավելի ուշ շրջանում նրա «գուշակությունների» վրա հենվելով, ուելսցիները երկար ժամանակ Անգլիայից անկախ լինելու հույսեր են փայփայել։*

III, 1, 160.— Առյուծի մեջքով կռնատ արծիվ.— *Ըստ քրոնիկների Գլենդովերը կախարդ Մեռլինի գուշակություններն է վկայակոչում, վերծանելով դրանք հետևյալ իմաստով. Հենրի Չորրորդը խլուրդ է, երեք դավադիրները՝ վիշապ, առյուծ և կատու, որոնք պետք է իրար բաժանեն երկիրը։ Ակներև է, որ Հոտսպերը չի հավատում այս ամենին և Գլենդովերի բոլոր խոսքերը համարում է կելտական դատարկաբանություններ։*

III, 1, 215.— Քո նայվածքների իմաստը պարզ է.— *Մորտիմերն ուզում է ասել, որ ինքն էլ է պատրաստ արտասվելու և կնոջ արտասուքին արտասուքով պատասխանելու։*

III, 1, 229.— Աղջիկս խնդրում է, որ ընկողմանես այս եղեգներին.— *Այն ժամանակվա Անգլիայում, նույնիսկ պալատներում, հատակին գորգերի փոխարեն եղեգներ են փռել։*

III, 1, 241.— Երաժիշտները... Մի ակնթարթում կներկայանան.— *Գլենդովերը խոսում է այն ոգիների մասին, որոնք մարդկանց լսելիքը շոյել են իրենց կախարդական երաժշտությամբ։*

III, 1, 267.— Ֆինսբերյան դաշտեր.— *Լոնդոնի արվարձաններից մեկը, ուր սիրել են կիրակնօրյա զբոսանքի գնալ միջին դասի քաղաքացիները։*

III, 1, 274.— ...կարող են քեզ դերձակուհի կարծել.— Դերձակուհիները, ինչպես և ջուլհակները, աշխատանքի ժամին սովորություն են ունեցել երգել։

III, 2, 124.— Մարս.— Պատերազմների աստված՝ ըստ հռոմեական դիցաբանության կամ Արես՝ ըստ հունական դիցաբանության։

III, 2, 178.— Լորդ Մորտիմերը, այդ շոտլանդացին.— Շեքսպիրն այստեղ շփոթում է երկու ընտանիք՝ շոտլանդական լորդեր Մարչերին և անգլիական դուքսեր Մարչերին։ Շոտլանդական մեծահարուստ Ջորջ Դենբարը, նույն ինքը՝ լորդ Մարչը, որի մասին այստեղ խոսվում է, իրականում անգլիական պալատի կողմնակիցներից է։

III, 3, 9.— Գարեջրավաճառի քոսոտ գրաստ.— Այս համեմատության հիմքում հավանաբար դրված է այն միտքը, ըստ որի գարեջրավաճառի ձին գարեջրի տակառը իր մեջքին է կրում, փոխանակ ստամոքսում կրելու։ Գարեջրավաճառների գրաստները ամենաստոր տեսակի ձիերից են եղել։

III, 3, 30.— ...իմ միտքն են ընկնում դժոխքի կրակները և այն հարուստը, որ կյանքում միշտ վառ ծիրանի էր հագնում.— Ակնարկ Աստվածաշնչի հայտնի պատմության հարուստի մասին, որը չափազանց շռայլ կյանք է վարել, իսկ մահվանից հետո դժոխք ընկել։

III, 3, 34.— «Երդվում եմ այս կրակի բոցով, որ հրեշտակն է ասածռ».— Դավթի սաղմոսներից (Աստվածաշունչ)։

III, 3, 51.— Հավ մարիկ.— Աքաղաղի և աղվեսի մասին եղած անգլիական հերոսներից։ (Տե՛ս Չոսերի "Nonnes Preestes Tale"-ը)։

III, 3, 115.— Դոնապանուհի Մարիանան.— «Մավրիտանական պարի» գլխավոր դերակատարուհին։ Այս պարը կատարել են փողոցներում սուրբ Երրորդության օրը՝ մայիսի մեկին։ Մարիանան ներկայացրել է անգլիական առասպելական ավազակ Ռոբին Հուդի սիրուհուն։ Եվ քանի որ այս դերն այն ժամանակ կատարել են տղամարդիկ, ուստի և Մարիանան կանացի համեստության տիպար չի համարվել։

IV, 1, 112.— Մերկուրիոս (նույնը և Հերմես).— Օլիմպիական աստվածների լրաբերը։

IV, 1, 115.— Պեգաս.— Կախարդական մի նժույգ, ըստ հունական դիցաբանության, բարձրացել է Օլիմպոս, որ կայծակ հասցնի Զևսին։

IV, 1, 122.— ...զոռ պատերազմի ճռաշյա կույսը.— Բելլոնան է՝ պատերազմի աստված Մարսի քույրը (ըստ հռոմեական դիցաբանության՝ պատերազմի աստվածուհին)։

IV, 2, 3.— Սետոն-Կոֆիլ.— Սետոն Գոլդֆիլդ, քաղաք, որ գտնվել է Քովենտրիից 24 մղոն հյուսիս-արևմուտք։

IV, 2, 7.— Հրեշտակ.— Ոսկեդրամ, որը հավասար էր 10 շիլինգի։

IV, 2, 30.— ...կրտսեր եղբայրների կրտսեր որդիներ.— Հնում (որոշ դեպքերում նաև այժմ) որոշ երկրներում սովորություն է եղել, ըստ որի հոր ունեցվածքը ժառանգել է ավագ որդին։ Դրա համար էլ «կրտսեր եղբայրների կրտսեր որդիները» կրկնակի զրկվածներ են համարվել։

IV, 2, 36.— ...որ մինչև վերջերս խոզ էին արածացնում՝ ուտելով խոզակաղին և լակ.— Աստվածաշնչի առասպելներից մեկում հիշատակված անառակ որդու հայտնի պատմությունից է։ Վատ շրջապատում մսխելով հորից ստացած ժառանգությունը՝ երիտասարդը հասնում է այնպիսի աղքատության, որ ստիպված է լինում սնվել խոզերին տրվող կերակրի մնացորդներով։

IV, 3, 74.— Ավատ.— Հողային սեփականություն, որ նվիրել է թագավորը և ժառանգաբար մի սերնդից անցել է մյուսին։

IV, 4, 1—2.— ...դուք այս կնքվածը || Հավքից էլ արագ Մարշալին հասցրեք.— Նկատի ունի լորդ Մաուբրիին, որ հանդես է գալիս «Հենրի Չորրորդի» երկրորդ մասում։ Լորդ Թոմաս Մաուբրին Նորֆոլկի դքսի որդին է եղել։

V, 1, 5.— **Հարավի քամին || Փողահարում է գոռ դատավճիռ արևի համար.**— *Հարավի քամին Շեքսպիրը համարում է ոչ նպաստավոր, դժբախտություն բերող։*

V, 1, 15.— **Եվ մեր ծերացած մարմինը....**— *Շրուսբերիի ճակատամարտի ժամանակ Հենրի Չորրորդ թագավորը 37 տարեկան է եղել, պատմական Հոտսպերը՝ մոտավորապես 40, իսկ իշխան Հենրին՝ 17։ Շեքսպիրի պիեսում թագավորը պատկերված է որպես ծերացած մարդ, իսկ Հոտսպերը և իշխան Հենրին՝ շատ երիտասարդ։ Շեքսպիրն իր երկու հերոսներին պատկերում է մոտավորապես նույն տարիքի։*

V, 3, 48.— **Գրիգոր Յոթերորդ պապը.**— *Անգլիացիների համար ատելի անձնավորություն։*

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ: Շեյլո, Սայլենս, գյուղական հաշտարար դատավորներ.— *Անգլիայում այն ժամանակ դատավորներ ընտրվել են տեղական կալվածատերերից. դրանք ազդեցիկ վարչական դեմքեր են եղել, որոնց պարտականության մեջ է մտել հասարակական հանգստին հետևելը և թագավորի հրամաններն ի կատար ածելը։*

ՆԱԽԱՄՈՒՏՔ: *Սա հատուկ դեր է կատարել պատմական դրամաներում՝ պատմելու համար այն իրադարձությունները, որոնք գործողության մեջ չէին մտնում, բայց որոնց հետ ծանոթությունը չափազանց կարևոր էր պիեսը հասկանալու համար։*

Վորկվորթ.— *Քաղաք և ամրոց. գտնվել է Նորթեմբերլենդի կոմսության մեջ։*

Համբավ.—*«Հենրի Չորրորդի» երկրորդ մասում ճիշտ այնպիսի հագուստով է նկարագրված, ինչպես և ժամանակի ուրիշ գրողների, նաև նկարիչների ու քանդակագործների ստեղծագործություններում՝ վրան անհամար լեզուներ նկարված։*

Սակայն ի՞նչ հարկ կա|| Ինքս ինձ այսպես անդամազննել|| Ի տես ենթակա հպատակներիս.— *Համբավը թատրոնի հանդիսատեսներին համարում է իրեն «ենթակա հպատակներ», որովհետև նրանք, որպես ամբոխի ներկայացուցիչներ, իր՝ Համբավի, օգնականներն են և ջանասիրաբար տարածում են նրա ասածները։*

I, 1, 44.— **...որ Հարրի Պերսու խթանը պաղեց.**— *Ակնարկ է Պերսու մականվան մասին* (Hotspur): *Հոտսպեր նշանակում է տաք խթան։*

I, 1, 61.— **Եվ նրա դեմքը ինչպես մի գրքի տիտղոսաթերթիկ.**— *Այն ժամանակ սովորություն է եղել սգո ողբերգները և տխուր լուրերը տպագրել սև գույնի տիտղոսաթերթի վրա։*

I, 1, 114.— **Մոնմաութ.**— *Հենրի թագաժառանգը։*

I, 1, 133—134.— **Բիրտ սկովտացին, որ երեք անգամ ամեհի սրով|| Խոցեց արքայի կեղծ երևույթը.**— *Դուգլասը սպանել էր երեք ասպետի, որ թշնամուն խաբելու համար Շրուսբերիի ճակատամարտի ժամանակ հագած են եղել թագավորի հագուստները։*

I, 1, 199.— **...Յորքի ազնիվ եպիսկոպոսը|| Զինել է մեծ զորք և վստահության կրկնակ կապերով|| Միացրել է իր համախոհներին.**— *Բարդոլֆը խոսում է Յորքի արքեպիսկոպոսի ունեցած թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ իշխանության մասին։*

I, 1, 217.— **Պոմֆրետի պատից քերված արյունով.**— *Պոմֆրետը այն ամրոցն է, ուր բանտարկել և սպանել էին Ռիչարդ Երկրորդին։*

I, 2, 12.— **Մանրագոր.**— *Տարածված է եղել այն կարծիքը, թե մանրագորի արմատը շատ նման է մարդու կառուցվածքին (այս բույսը աճում էր Հունաստանում և Հիմալայան լեռներում)։ Մանրագորի պտուղները համարվել են գրգռիչ։*

I, 2, 15.— **Մատանու շողակին դրոշմված մարդուկ.**— *Այն ժամանակ ընդունված է եղել մատանու շողակներին մարդ դրոշմել։ Նման շողակը ծառայել է նաև որպես կնիք։ Շեքսպիրը*

հաճախ այսպիսի համեմատություններ է անում՝ կարճահասակ մարդկանց ծաղրելու համար։

I, 2, 17.— ...ես կուղարկեմ իբրև զոհար ‖ քո պատվական զոհար իշխանին.— *Բնագրում բառախաղ է.* jewel *(գոհար)* *և* juvenal *(երիտասարդ)։*

I, 2, 20.— ...մինչդեռ ինքը չի երկմտում ճայատարարելու, թե իր տեսքը թագավորական է.— *Ակնարկ է ոսկեդրամների վրա դրոշմվող թագավորների դեմքերի մասին։*

I, 2, 34.— Ափիտոֆել.— *Դևի անուն։*

I, 2, 44.— Առատության եղջյուր.— *Ֆալստաֆը կատակում է՝ այդպես անվանելով խաբված ամուսնու «եղջյուրները»։*

I, 2, 48.— Սմիթֆիլդ.— *Անասունների կենտրոնական շուկա Լոնդոնում։ Սմիթֆիլդի խարդախությունը ասացվածքի նյութ է դարձել։ Ֆալստաֆը ակնարկում է հետևյալ ասացվածքը. «Վեստմինստերում կին մի ընտրիր, Սուրբ Պողոսի եկեղեցում՝ ծառա և Սմիթֆիլդում՝ ձի, հակառակ դեպքում կընտրես մի պոռնիկ, մի խաբեբա և մի յաբու»։*

I, 2, 54.— ...որի պատճառը Բարդոլֆն էր.— *Սըր Վիլյամ Գասկոնը՝ գերագույն դատավորը, արքայազն Հենրիին բանտ էր ուղարկել, որովհետև վերջինս հարցաքննության ժամանակ ապտակել էր իրեն։ Այս դեպքը, որ թեթևակի հիշատակվում է «Հենրի Չորրորդի» առաջին մասում, հիմք է ծառայել, որ Շեքսպիրը մի ամբողջ տեսարան կառուցի «Հենրի Հինգերորդում»։*

I, 2, 113.— Գալեն.— *Նշանավոր հույն բժիշկ, որ ապրել է մ. թ. երկրորդ դարում։ Նրա աշխատությունները չափազանց գնահատվել են Վերածննդի դարաշրջանում։*

I, 2, 120.— Ոտքերը կոճղերի մեջ դնել.— *Բնագրում՝* «To punish you by the peels».—*Ակնարկ է այն ժամանակներում ընդունված մի պատժի, որին ենթակա են եղել գողերն ու թափառաշրջիկները։ Նրանց ոտքերին կոճղեր են հագցրել, և նրանք այդ վիճակում հարկադրված են եղել մնալ որոշ ժամանակ։ Այդպես են պատժում նաև Քենտին «Լիր արքայում»։*

I, 2, 121.— Հոբ.— *Հին կտակարանի հերոսներից։*

I, 2, 137.— Երանի թե ճակատակը լիներ՝ միջոցներս անձագին, իսկ ծախսը սուղ.— *Բնագրում բառախաղ է՝* waste *(ծախս)* *և* waist *(անձագին, ծավալ)։*

I, 2, 141.— Ես մի կույր ճաստափոր մարդ եմ, իսկ նա իմ առաջնորդ շունը.— *Հնարավոր է, որ սա ակնարկ լինի այն ժամանակներում բոլորին հայանի հաստափոր կույրի մասին, որին առաջնորդել է շունը։*

I, 2, 161.— ...չար ճրեշտակը թեթևամաշ է.— *Շեքսպիրյան սովորական կատակ՝ «հրեշտակ» էր կոչվում 10 շիլինգանոց ոսկեդրամը։ «Չար հրեշտակ» ասելով Ֆալստաֆը նկատի ունի կեղծված դրամը, որն իսկական դրամից քիչ ավելի թեթև է կշռել։*

I, 2, 165.— Իսկական քաջերին մնում է միայն արջերին պար ածել.— *Արջեր վարժեցնելը համարվել է ստոր զբաղմունք, թեև պահանջվել է արիություն։ Վարժեցրած արջեր միշտ ցուցադրել են ժողովրդական ներկայացումների և տոնախմբությունների ժամանակ։*

I, 2, 224.— Թող իմ քիթ ու պռունգը ջարդեն.... թե քո ողջույնը ճաղորդեմ.— *Գլխավոր դատավորը խնդրում է ողջույն հաղորդել Վեստմորլենդին (բնագրում՝* commend me to my cousin W*), Ֆալստաֆը* «commend»*-ը հասկանում է գովասանության իմաստով և հրաժարվում է կատարել գլխավոր դատավորի հանձնարարությունը։*

I, 2, 231.— Գրոթ.— *Հին դրամ՝ չորս պենս։*

II, 1, 80.— Ծովաճարսի սենյակ.— *Այն ժամանակվա անգլիական պանդոկներում յուրաքանչյուր սենյակ ունեցել է իր հատուկ տարբերանշանը։ Այն սենյակում, ուր երդվել է Ֆալստաֆը, ծովահարս է նկարված եղել։*

II, 1, 134.— Գերմանական որս.— *Այդպես է կոչվել վարազների որսը։*

II, 1, 142.— Քսան արծաթադրամ.— *Համասար է 6 ֆունտ ստեռլինգի և 13 շիլինգի։*

II, 2, 61.— Ես կրտսեր եղբայրն եմ.— *Անգլիայում ժառանգական հողերն անցել են ավագ որդիներին, իսկ կրտսերներն իրենք են հոգացել իրենց մասին։*

II, 2, 74.— Պատուհանի կարմիր ճաղեր.— *Այն ժամանակ ճաշարանների յուրահատուկ նշան է համարվել պատուհանների ճաղերի կարմիր գույնը։*

II, 2, 80.— Ալթեի երազ.— *Այստեղ մանկլավիկը շփոթում է երկու անտիկ ավանդություն, որոնցից մեկը վերաբերում է Էնեոսի կնոջը՝ Ալթեին. վերջինս զայրանալով իր որդու՝ Մելեագրոսի վրա, կրակի մեջ է գցում այն կոճղը, որի պահպանումից կախված է եղել որդու կյանքը։ Մյուս ավանդությունը վերաբերում է Տրոյայի թագուհի Հեկուբին. նա Պարիսի ծնվելուց առաջ երազում տեսել է, որ ինքը ծնել է մի հրավառ կոճղ։*

II, 2, 109.— Հաբեթ.— *Ըստ Աստվածաշնչի Նոյ նահապետի երեք որդիներից մեկն է, որոնք մարդկության նախահայրերն են համարվում (Սեմ, Քամ և Հաբեթ)։*

II, 2, 136.— Մեր վարազ.— *Ակնարկում է «Վարազի գլուխ» պանդոկը, ուր սովորություն ուներ հաճախել Ֆալստաֆը։*

II, 4, 9.— Սնիկի երաժիշտները.— *Շեքսպիրի ժամանակ իրոք գոյություն է ունեցել թափառաշրջիկ մի նվագախումբ, որի ղեկավարն է եղել ոմն Սնիկ։ Այս երաժիշտները հաճախ նվագել են Լոնդոնի փողոցներում։*

II, 4, 29.— «Երբ Արթուրը բազմեց գահին».— *Ֆալստաֆը երգում է հին անգլիական հանրահայտ բալլադի սկիզբը սըր Լանսելոտի մասին* (sir Lancelot du Lak)։

II, 4, 46.— «Ձեր ոսկին, ձեր զարդերն ու մարգարիտը».— *Մեջբերում է* «The Boy and the Mantl» *(«Տղան և ձորձը») բալլադից։*

II, 4, 136.— Ել ի՞նչ ես ծամել քո ամբողջ կյանքում— չորացած թթու սալորից և կոշտացած կարկանդակներից բացի.— *Ուզում է ասել, որ կերակրվել է հասարակաց տների մնացորդներով։ Չորացրած թթու սալորը համարվել է վարակից պաշտպանվելու միջոց։*

II, 4, 136.— ...այդ բառը պիտի դարձնեն նույնքան ատելի, որքան «տիրել» բառը.— „occupy" *անգլերեն բառը բուն նշանակության հետ (գրավել, տիրել) Շեքսպիրի ժամանակ ուներ նաև մի այլ, անպարկեշտ իմաստ։ Այս իմաստով այդ բառը գործածված է նաև մի շարք ուրիշ հին պիեսներում։*

II, 4, 148.— Հիրեն.— *Հերոսուհին է Շեքսպիրի ժամանակակից Պիլի «Թուրք Մահմեդը և հույն գեղեցկուհի Հիրենը» կորսված ողբերգության։*

II, 4, 154.— Որ հանդգնում են չափվել մեծահաղթ Հանիբալների, ‖ Վեհ Կեսարների և տրոյական քաջ հույների հետ.— *Աղավաղված մեջբերում Մառլոյի* «Tamburlain the Great»*-ից։*

II, 4, 157.— Որի դուռը Ցերբերն է հսկում, ‖ Ձեր թագավորը.— *Ցերբերը ոչ թե թագավոր է, այլ շուն, որը, ըստ հունական առասպելաբանության, հսկում էր ստորերկրյա թագավորության մուտքը։*

II, 4, 168.— Կեր և գիրացիր, իմ Կալիպոլիս.— *Պարոդիա է՝ ուղղված Պիլի դրամաներից մեկի տողերին* («Battle of Alcazar»)։ *Շեքսպիրի ժամանակ այս դրամայի տողերը հաճախ են պարոդիայի վերածվել։*

II, 4, 170—171.— Si fortune me tormente, ‖ Sperato me contento.
Պիստոլը աղավաղում է սուսերի ֆրանսերեն փորագրությունը։

II, 4, 176.— Մի՞թե մենք քեզ հետ միասին չենք հիացել Մեծ արջի աստղերով.— *Ուզում է ասել, թե շատ գիշերներ են միասին անցկացրել խրախճանքների մեջ։*

II, 4, 188.— Անտրոպոս.— *Բախտի երեք քույրերից մեկը. ըստ հունական դիցաբանության՝ քույրերից մեկը կյանքի կծիկը ձեռքին էր պահում, երկրորդը մարդու բախտն էր նրա վրա մանում, իսկ երրորդը թելը կտրում էր ու կյանքին վերջ էր տալիս։*

II, 4, 210.— Ինը արժանավորները.— *Լոնդոնում հանդիսավոր տոնախմբությունների և նոր կայացումների ժամանակ հաճախ հանդես են եկել այսպես կոչված «ինը արժանավորները», որոնցից երեքը հրեաներ են եղել՝ Հիսուս Նավինը, Դավիթը, Հուդա Մակաբեացին, երեքը հեթանոսներ՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Հեկտորը, Հուլիոս Կեսարը և երեքը քրիստոնյաներ՝ Արթուր արքան, Կառլոս Մեծը և Գոտֆրիդ Բուլոնացին։*

II, 4, 224.— Միտածի զանգ.— *Ժամանակի կախարդական տարօրինակ հնարքներից մեկն է եղել. իբր մի արհեստական մարդկային գլուխ կարող էր ճիշտ պատասխանել բոլոր հարցերին և զուշակել ապագան։*

II, 4, 237.— ...ուտում է ծովային օձաձուկ և սամիթ.— *Ծովային օձաձուկն ու սամիթը այն ժամանակվա հարբեցողների սիրած ուտելիքներն են եղել։*

II, 4, 255.— Սատուրնն ու Արուսյակը այս տարի կցվելու են իրար.— *Այն ժամանակվա օրացույցները նշել են զանազան երկնային մարմինների միացումները։ Սատուրնն ու Արուսյակը (ըստ Ջոնսոնի աստղաբաշխական տեղեկատուի) երբեք չէին միանում։ Ծաղրում է Ֆալստաֆին և Դոլ Տերշիտին։*

II, 4, 257.— Նայեցեք, թե ինչպես այդ կարմրաքիթ Տրիգոնը....— *Տրիգոն բառացի նշանակում է եռանկյունի, դա կենդանակերպի մասերից մեկի հին անունն էր Կարմրաքիթ ասելով նկատի ունի Բարդոլֆին, որի դեմքը և քիթը խիստ կարմիր էին։*

II, 4, 259.— Նրա հաշվեմատյանի և զաղտնիքների հավատարմատարի ձեռ.— *Ֆալստաֆի հաշվեմատյան և հավատարմատար ասելով նկատի ունի տիկին Վռազին, որը կանոնավոր գրանցում էր նրա պարտքերը։*

III, 2, 13.— Նրան հարկավոր է մտնել նաև իրավաբանական դպրոց.— *Բնագրում՝* inns of court։ *Այդպիսի դպրոցները ծառայել են նաև որպես հանրակացարաններ երիտասարդ իրավաբանների համար, որոնք այնտեղ սովորելու ընթացքում ենթարկվել են որոշակի օրենքների և կանոնների։ Նրանք դատական գործ են սովորել փորձված իրավաբանների ղեկավարությամբ և ազատ ժամերին մասնակցել են մայրաքաղաքային զվարճություններին։ Լոնդոնյան այս «*Inns*»-ը փոխարինել է համալսարանական ֆակուլտետին, քանի որ անգլիական համալսարաններում չի եղել իրավաբանական (ինչպես նաև բժշկական) ֆակուլտետ։*

III, 2, 21.— Ջոն Դոյտ, Ջորջ Բառնես, Ֆրենսիս Փիքբոն, Վիլ Սկվիլ.— *Այս բոլոր անունները, ինչպես և հետագայում հիշատակվող Սուրֆիշ, Շուրկարդ, Դեբլ և Նայթվորկ անունները խմաստային բնույթ ունեն։ Դոյտ նշանակում է գրոշանոց, Փիքբոն՝ պնակալեզ, Սկվիլ՝ ճղճղան, Սուրֆիշ՝ ապխտած ձուկ, Շուրկարդ՝ հավանաբար թղթախաղով զբաղվող, Դեբլ՝ երկնրեսանի, Նայթվորկ՝ գիշերային աշխատանք։*

III, 2, 24.— Ջեկ Ֆալստաֆը, որ այժմ սըրոն Ջոն է դարձել.— *Այս մանրամասները համապատասխանում են պատմական սըր Ջոն Օլդքասլի կենսագրությանը, որը նկարագրված է մինչշեքսպիրյան «Հենրի Հինգերորդ» դրամայում։ Ֆալստաֆը քիչ ընդհանուր բան ունի Օլդքասլի հետ, բայց այնուամենայնիվ մի շարք արտաքին գծեր և փաստական մանրամասնություններ շեքսպիրյան Ֆալստաֆին կապում են հին դրամայի Օլդքասլի հետ։*

III, 2, 26.— Թոմաս Մաուբրի.— *Այս պիեսում հանդես եկող լորդ Մաուբրիի հանգուցյալ հայրը։*

III, 2, 30.— Սկոգան.— *Էդվարդ Չորրորդի նշանավոր պալատական խեղկատակը, որի «Կատակներ» գիրքը շատ անգամ վերահրատարակվել է։*

III, 2, 38.— Սաղմոսերգուն.— *Աստվածաշնչային Դավիթ թագավորը, որին ընդունված է համարել սաղմոսներ հորինողն ու երգողը։*

III, 2, 45.— Ջոն Գոնտ.— *Լանկաստերի հերցոգը, հանգուցյալ հայրը Բոլինբրոկի, որը հետագայում դարձավ Հենրի Չորրորդ թագավոր։*

III, 2, 68.— Զինվորին ձեռնտու է առանց կնոջ ապրել.— *Բնագրում՝* a soldier is better accommodated that with a wife. "To accommodate"-*ը այն ժամանակ մոդայիկ խոսք է եղել և Շեքսպիրը գիտմամբ ծաղրում է այն։*

III, 2, 133.— Մենք բավական թվով սովերներ ունենք մեր ցուցակներում.— *Այսինքն՝ «մեռյալ հոգիներ»։ Ֆալստաֆը կեղծիք է թույլ տվել, որպեսզի գանձարանից դրամ շորթի։*

III, 2, 162.— Ես չեմ կարող հասարակ զինվոր դարձնել մեկին, որ հազարապետ է մի ամբողջ բանակի.— *Ուզում է ասել, որ նրա ցնցոտիների մեջ հազարավոր միջատներ են վխտում։*

III, 2, 180.— Ես ձեր պահանջածից երկու մարդ ավելի էի կանչել.— *Շեքսպիրի անփութության կամ Շելլոյի սխալ հաշվի ապացույց է։ Իրականում միայն մեկն է ավել, քանի որ մինչ այդ բեմ են մտել միայն հինգ նորակոչիկներ և ոչ թե վեց։*

III, 2, 213.— Վերցրեք այս չորս Հենրին, յուրաքանչյուրը տասը շիլլինգ արժողությամբ ֆրանսիական կրոնով.— *Ցլիկը «Հենրի» է անվանում տասը շիլլինգանոց դրամները։ Հենրի թագավորի պատկերով։ Այսպիսի դրամներ հայտնվել են միայն Հենրի Յոթերորդի և Հենրի Ութերորդի ժամանակ։ Այս դրամները բերելով Հենրի Չորրորդի ժամանակները, Շեքսպիրը թույլ է տվել անախրոնիզմ։*

III, 2, 273.— Արթուրյան խաղեր.— *Խաղերն այսպես են կոչվել Բրիտանիայի առասպելական թագավոր Արթուրի պատվին։ Վերջինիս պալատում իբր ապրել են ռազմական գործում հատկապես աչքի ընկած, քաջարի և ճարպիկ ասպետներ։ Այդ խաղերի մեջ է մտել նետաձգությունը, որը կազմակերպել են Մայլենդ-Գրինում (դաշտավայր Լոնդոնի մոտակայքում) և որի մասնակիցները կրել են «արթուրյան» վեպի կերպարների անունները։*

III, 2, 274.— Դագոնետ.— *Առասպելական Արթուր թագավորի խեղկատակի անունը։*

III, 2, 298.— Տոռնբուլյան փողոց.— *Լոնդոնի վատահամբավ փողոցներից, ուր գտնվել են հանցագործների որջեր։*

III, 2, 313.— Տիլտ-յարդ.— *Դաշտ Վեստմինստերում, ուր տեղի են ունեցել ասպետական մրցույթներ։*

III, 2, 314.— Եվ... Ջոն Գոնտին ասացի, թե ինքը դրանով իր սեփական անունը կոտրեց.— *Գոնտ անունը (հերցոգի տիտղոս է, որը ծագել է Ֆլանդրիայի Գենտ քաղաքի անունից) համահնչյուն է անգլիական «*gaunt*» բառի հետ, որ նշանակում է նիհար, հյուծված։*

III, 2, 321.— ...և նրան դարձնեմ իմաստնասերի երկու քար ինձ համար.— *Ալքիմիկոսները փորձել են պատրաստել երկու տեսակ նյութ, որ նրանք անվանել են «իմաստասիրական քարի» տեսակներ։ Նրանցից մեկը պիտի բոլոր մետաղները վերածեր ոսկու, իսկ մյուսը՝ բուժեր բոլոր հիվանդությունները։*

IV, 1, 104.— Բայց դաժանորեն եղբորս պատժեց.— *Յորքի արքեպիսկոպոսի եղբորը՝ լորդ Սկրուպին, Վիլտշիրի կոմսին մահապատժի էր ենթարկել Հենրի Չորրորդը։*

IV, 1, 144.— Հերֆորդի կոմս.— *Բոլինբրոկի՝ ապագա Հենրի Չորրորդի տիտղոսը։*

IV, 3, 42.— «Եկա, տեսա, հաղթեցի».— *Հուլիոս Կեսարի խոսքը։*

IV, 4, 136.— Եղանակների կարգը խախտվել է.— *Ըստ Հոլինշեդի «Քրոնիկներ»-ի՝ 1412 թ. հոկտեմբերի 12-ին, թագավորի մահից մի քանի ամիս առաջ, եղել է երեք մակընթացություն առանց նրանց հաջորդող տեղատվությունների։*

IV, 4, 152.— Թագը դրեք բարձիս.— *Անգլիական հին սովորության համաձայն, երբ թագավորը մահամերձ էր լինում, նրա կողքին էին դնում թագը, որը թագավորի մահից անմիջապես հետո իր գլխին էր դնում գահաժառանգը։*

IV, 4, 332.— Թանկ է այն ոսկին, ուր խառնուրդն է շատ, ‖Նա բուժիչ դեղ է հիվանդության

դեմ.— Այն ժամանակվա մի շարք թանկարժեք դեղերի բաղադրության մեջ ոսկի կար, որն ավելի ցածր տեսակի էր, քան թագի մեջ գործածվողը։

V, 2, 57.— Ոչ թե հաջորդը սուլթան Մուրադն է Մուրադից սերված, || Այլ Հենրիկոսի Հենրիկոս որդին.— Անախրոնիզմ է։ Իրադարձությունները, որ տեղի են ունեցել թուրքական պալատում, կատարվել են այս պիեսը գրվելուց ոչ շատ առաջ։ 1574 թ. սուլթան Մուրադը գահ բարձրանալով՝ սպանեց իր բոլոր եղբայրներին՝ որպես հնարավոր հակառակորդների։ Նրա մահից հետո, 1596 թ., նույնն արեց և նրա որդին, որը նույնպես Մուրադ էր կոչվում։

V, 3, 80.— Սամինգո.— Օմինգո անվան կամ սուրբ Դոմինիկոսի անվան աղավաղված ձևն է։ Սուրբ Դոմինիկոսը համարվել է հարբեցողների հովանավորը։

V, 3, 93.— Բարսոնցի Պուֆը.— Բարսոն կամ Բարսաստ քաղաքի հսկան էր, որին զրահով ցուցադրել են տոնավաճառների ժամանակ։

V, 3, 101.— Թեժած աշխարհի և մարդկանց վրա.— Այստեղ և հետագայում Պիստոլի խոսքերը ժամանակի անգլիական մի շարք ողբերգությունների փքուն ոճի պարոդիան են։ Ֆալստաֆը պատասխանում է՝ համապատասխանեցնելով իր տոնը Պիստոլին։

V, 3, 104.— Կոֆետուա արքա.— Անգլիական ժողովրդական բալլադի կերպարներից է, որ Շեքսպիրը հաճախ է հիշատակում իր պիեսներում։

V, 3, 106.— Հելիկոն.— Լեռնաշղթա Հունաստանում, որ համարվել է արվեստների աստված Ապոլլոնի բնակավայրը։

V, 3, 126.— Մեռած է, ինչպես սեպը դռան մեջ.— Մեծ մեխ, որն ամրացվել է մուտքի դռան մեջ և որին խփել են նրա կողքին կախված մուրճիկով. դա զանգի դեր է կատարել։

V, 3, 144.— Գիշատիչները թող նրա լյարդը ճրճրեն նույնպես.— Ակնարկ Պրոմեթևսի մասին, որին Զևսը շղթայել էր տվել ժայռին և հրամայել, որ անգղները ամեն գիշեր կտցահարեն նրա լյարդը։

V, 4, 16.— Այդ դեպքում դու նորից կունենայիր մեկ դյումին բարձ, իսկ այժմ ընդամենը տասնմեկն ունես.— Ոստիկանը ուզում է ասել, թե տիրուհին իր բարձերից մեկը տվել է Դոլին, որն այն կապել է փորին՝ հղի ձևանալով (հղի կանանց այն ժամանակ ազատել են ծանր պատիժներից)։

V, 4, 21.— Ախ դու, կապտազգեստ դատարկասուն.— Ոստիկանները կապույտ բաճկոն են հագել։

V, 4, 25.— Կարելի՞ բան է, որ արդարությունը հաղթի ուժգին.— Տիրուհու սխալախոսություններից է. ուզում է ասել ճիշտ հակառակը։

V, 5, 1.— Եղեգը ճիչ է, էլի շաղ տուր, էլի շաղ տուր.— Եղեգներով ծածկել են պալատների հատակը. եղեգներ են շաղ տվել նաև փողոցներում թագավորի հանդիսավոր մուտքի ժամանակ։

V, 5, 29.— Semper Idem (լատ.).– Միշտ նույնը։
A bsque hoc nihil est.— Առանց դրան ոչինչ չկա։

V, 5, 38.— Ալեկտո.— Ֆուրիաներից մեկի անունը։ Ավանդության համաձայն, նրա գլուխը ծածկված է եղել գալարվող օձերով։

V, 5, 99.— Երթա՛ք, տեղակալ Պիստոլ.— Պիստոլը լոկ ցածրաստիճան սպա էր, բայց Ֆալստաֆը հույս ունենալով, որ այսուհետև ինքը ազդեցություն կունենա պալատում, մտքում արդեն նրան տեղակալ է դարձնում։

V, 5, 102.— Ֆլիտ.— Բանտ Լոնդոնում։

V, 5, 107.— Si fortune me tormente, sperato, me contento.
Մակագրություն սուսերի վրա։

ՎԵՐՋԱԲԱՆ.—Ֆրանսիայի չքնաղագեղ Կատարինեն.— *«Հենրի Հինգերորդում», որը Շեքսպիրը գրել է «Հենրի Չորրորդից» մեկ կամ երկու տարի հետո, նկարագրվում են Հենրի Հինգերորդի հաղթանակները Ֆրանսիայում, իսկ հետո ամուսնությունը ֆրանսիական արքայադուստր Կատարինեի հետ։*

ՎԵՐՋԱԲԱՆ.—Չէ՞ որ Օլդքասլը նահատակի մահով մեռավ, ուրեմն մարտիրոս, մինչդեռ սա բոլորովին ուրիշ մարդ է.— *Տե՛ս «Վինձորի զվարճասեր կանայք» կատակերգության վերջաբանը։*

«ՀԵՆՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ»

«Հենրի Հինգերորդը» ըստ էության մտահղացված տետրալոգիայի վերջին՝ չորրորդ մասն է, երրորդ պիեսը՝ նվիրված այնքան փառաբանված Հենրի Հինգերորդի նախ երիտասարդությանը («Հենրի Չորրորդի» առաջին և երկրորդ մասերը), ապա և թագավորությանը։ Գրվել է 1598—1599 թվականներին, որ հաստատվում է հինգերորդ արարվածի նախերգանքում օրվա հրատապ հարցերին նվիրված այն ակնարկից, ուր հիշատակվում է Էսեքսի՝ Իռլանդիա կատարած արշավանքը։ Տպագրվել է 1600-ին, վերահրատարակվել է ևս երեք անգամ մինչև 1623-ի հավաքածուի մեջ զետեղվելը։ Սյուժեի համար աղբյուր են հանդիսացել «Հենրի Հինգերորդի փառավոր հաղթանակները» (1588) անանուն պիեսի և Հոլինշեդի «Քրոնիկները»։

«Հենրի Չորրորդի» երկրորդ մասի վերջերգում Շեքսպիրը խոստանում է հասարակությանը, որ հաջորդ պիեսում բեմ է հանելու Ֆալստաֆին, նրա հետ և ֆրանսիական արքայադուստր Եկատերինային։ Իր խոսքն ամբողջությամբ կատարել նա չի կարողանում. 1599-ին բեմադրված «Հենրի Հինգերորդ»-ում հասարակությունը չտեսավ իր սիրած «ցմփոր ասպետ»-ին։ Ավելին. տիկին Վռազի բերանից նա իմացավ, որ Ֆալստաֆն այլևս կենդանի չէ։

Ինչո՞վ պետք է բացատրել այս փոփոխությունը։

Քննադատների կարծիքով, երբ Շեքսպիրը ձեռնամուխ է լինում «Հենրի Հինգերորդի» սյուժեի մշակմանը, նոր միայն հայտնի է դառնում, որ ամբողջությամբ առած քրոնիկը շատ քիչ նյութ է պարունակում իր մեջ։ Կարելի էր, իհարկե, ցույց տալ երիտասարդ թագավորի պայքարը լոլարդների դեմ, բայց նա սկզբունքորեն խուսափում էր իր հայրենակիցների կրոնական զգացումները քննելուց։ Այդ դեպքում մնում էին միայն նրա ռազմական հաղթանակները Ֆրանսիայում։ Նա հենց այդպես էլ վարվում է։ Դատարկ բովանդակությունն այս դեպքում չի խանգարում, որ նա հասարակությանը ներկայացնի վարպետորեն հյուսված մի պիես։ Պարզ է, որ նա թևակոխում էր իր ուժերի առավել ծաղկման շրջանը։

Եվ, այնուամենայնիվ, ինչու՞ է հեղինակը հրաժարվում Ֆալստաֆից։ Որովհետև, իրավացի կերպով ենթադրում են շեքսպիրագետները, այժմ՝ վերջին մասում, կոմիկական պլանով մտահղացված այդ կերպարը կարող էր լրջորեն վնասել քրոնիկների այս ամբողջական շարքի ընդհանուր մտահղացմանը։ Պիեսների հիմքում, ինչպես

տեսանք, նա դրել էր ազգի հայրենասիրական ամբողջության և ուժեղ պետականության գաղափարը, բայց անա բեմադրված մասերում հանդես բերված թագավորները շատ հեռու էին այդ գաղափարները մարմնավորողներ լինելուց: Միաժամանակ Ֆալստաֆի մոնումենտալ կերպարի և ֆալստաֆյան կենդանի, հյութեղ միջավայրի հայտնաբերումը ետին պլան էին շպրտում քրոնիկների շարքի հիմնական իդեան: Այսպես, արվեստագետ Շեքսպիրը տեղի է տալիս մտածող Շեքսպիրին. որպեսզի Հենրի Հինգերորդը հանդես գա իրոք արքայական մեծությամբ, իբրև «ժողովրդական» թագավոր, Ֆալստաֆը չպետք է նրա կողքը կանգնած լինի... Այդ կերպ է ստացվում այն հայրենասիրական պիեսը, եզակի նույնիսկ քրոնիկների մեջ, որտեղ գովերգվում են միապետությունն ու միապետը, զուգահեռաբար նաև անգլիացիների ռազմական սխրագործությունները, նրանց արտաքին նվաճողական քաղաքականությունը: Մի քայլ նահա՞նջ էր սա արդյոք հումանիզմի այն սկզբունքներից, որոնցով այնպես ներթափանցված էին նրա ստեղծագործությունները: Այո՛, եթե այս երկը առանձին մի միավոր ընդունենք, ո՛չ, եթե ընդունենք ամբողջ շարքի հետ: Չպետք է անտեսել նաև երկրում տիրող քաղաքական իրավիճակը: Նորից ոտքի էր կանգնել Իռլանդիան, և «խռովարարներին» պատժող արշավախումբը գլխավորում էր կոմս Էսեքսը, թագուհու և լոնդոնյան ամբոխի սիրելին:

Եվ այսպես, արտաքին և ներքին, զուտ ստեղծագործական շարժառիթները մղում են ստեղծելու մի գործ, որտեղ այդ ժամանակ արդեն ձևավորված բացարձակ միապետականությունը բարձրացվում էր քաղաքական իդեալի աստիճանի:

Բովանդակության սակավարյուն լինելը ստիպում է հեղինակին առավել ուշադրություն դարձնել մատուցման վրա: Քանի որ կենտրոնական էպիզոդը Ազինկուրի տակ տեղի ունեցած ճակատամարտն է, նա այն ձգձգում է մինչև չորրորդ արարվածը, այնպես որ բարձրակետը և լուծումը (առաջին անգամ նրա դրամատիկական երկերում) համընկնում են: Պիեսը լի է ճոռոմ հատվածներով. գործող անձերը խոսում են գեղեցիկ ու երկար, իսկ ամենից պերճախոսը մնում է դարձյալ Հենրի Հինգերորդը: Դիտվել է նաև, որ Շեքսպիրի պիեսներից ամենից ռազմաշունչ այս պիեսը մարտի տեսարաններ չունի: Շատ հավանական է, որ հեղինակը խուսափել է բեմական խղճուկ հնարավորությունների պայմաններում վերարտադրել բրիտանական զենքի փայլն ու զորությունը:

Հրաժարվելով Ֆալստաֆից, Շեքսպիրն այստեղ չի հրաժարվում ֆալստաֆյան միջավայրից. առանց դրան ոչ թե դժվար, այլ անհնար կլիներ կենդանացնել պիեսը: Եվ նա հանդես է բերում Ֆալստաֆի և հենց թագավորի նախկին բաժակակիցներին. հանդես է բերում ոչ միայն և ոչ այնքան հանդիսատեսներին աշխուժացնելու համար, այլև ցույց տալու նրանց խեղճությունը թագավորի արքայական նկարագրի համեմատությամբ:

Անգլիական ճամբարը ներկայացված է այնպիսի կենդանի տիպերով, ինչպիսիք են շոտլանդացի կապիտան Ջեմին, իռլանդացի Մաք-Մորիսը և ուելսցի Ֆլյուելենը.

ամենաինքնատիպ կերպարը Հենրի Հինգերորդից հետո: Նա համարձակ է ոչ միայն ռազմանակատում, այլև իր կարծիքների մեջ. նա, եթե կարելի է ասել, նոր զինվորականության ներկայացուցիչն է: Նա քաջ է և հումորի զգացումից ոչ զուրկ: Զարգացած է այնքան, որ գիտի ոչ միայն դասական գրականությունը, այլև հունա-հռոմեական ռազմական արվեստը:

Ինչ վերաբերում է հակառակորդ բանակին, ապա ընթերցողն իզուր կորոնի քիչ թե շատ հավասարակշռված, ռեալիստական կերպար. ամեն ինչ այստեղ ծաղրանկարային է, Հարյուրամյա պատերազմը Ֆրանսիայի հետ իր խոր կնիքն էր դրել նրա ժամանակակիցների վրա: Բայց ավելի լավ չէին վերաբերվում ֆրանսիական հեղինակները ֆրանսիական հողը մտած անգլիացիների կերպարները վերարտադրելիս: Եվ, այնուամենայնիվ, Շեքսպիրի գրիչը մի տեղ իրեն զգալ է տալիս. դա այն տեղն է, երբ նա ներկայացնում է ֆրանսիական թագավորի դուստրը՝ Կատարինեին: Սա մի մանկամարդ աղջիկ է, այնքան անմիջական ու հմայիչ, որ անմիջապես մեղմում է ֆրանսիացիների նկատմամբ հանդես բերված թշնամական վերաբերմունքը: Վերջապես չպետք է անտեսվի նաև Հենրի Հինգերորդի խոսքը իր սպաներին. «Եվ մենք խստագույն հրաման կիջեցնենք, որ մեր արշավանքի ընթացքում ոչ մի զինվոր չհամարձակվի գյուղից զոռով բան վերցնել, այլ վերցրածի համար անպայման վճարել և որպեսզի ոչ ոք չհանդգնի որևէ ֆրանսիացու կշտամբել կամ նախատել արհամարհական անարգ խոսքերով...» (III,6):

Քրոնիկի կենտրոնական հերոսն, իհարկե, Հենրի Հինգերորդն է: Կերպարի ապրած էվոլյուցիային մենք արդեն ծանոթացանք: Այստեղ նա հանդես է գալիս բնավորության համարյա թե նոր գծերով: Նա շատ է հիշեցնում Շեքսպիրի հիանալի պատկերացրած, բայց բեմ չհանած մի հերոսին՝ Համլետի հորը: Ասել է թե՛ նա հակոտնյան է Մալոյի Թամեռլանի. երկուսն էլ աշխարհակալ են, ճիշտ է, բայց այն ժամանակ, երբ Թամեռլանի համար միակ արդարացումն իր ցանկությունն էր, Հենրի Հինգերորդի համար՝ օրինականությունն է, ժառանգական իրավունքը: Այս Հենրին տարբերվում է նաև Ռիչարդ Երկրորդից, Հենրի Չորրորդից, էլ չեմ խոսում իրենից հետո պատմական ասպարեզ իջած Ռիչարդ Երրորդի մասին: Ունենալով վառ անհատականություն, նա նախ և առաջ թագավոր է և միայն թագավոր: Հակառակ իր հոր, որ գահը ձեռք է բերում խորամանկությամբ և ամրապնդում է դաժանությամբ, նա ուղղամիտ է և ճշմարտացի: Որքան էլ դյուրագրգիռ, նա կարող է ներել անձամբ իրեն հասցված վիրավորանքը, բայց չի ներում իր բարեկամներին, երբ սրանք մտածում են սպանել նրան, քանի որ դրա մեջ պետական իշխանության դեմ մտահղացված դավադրություն է տեսնում: Շատ լավ իմանալով ազնվականության, մանավանդ սրա վերնախավի սոցիալական ու դասային բնույթը, նա հանգում է այն գիտակցության, որ երկրի օրհասական պահին միակ վստահելի հենարանը բուն ժողովուրդն է: Ահա թե ինչու Ազինկուրի ճակատամարտին նախորդող գիշերը նա ծպտված շրջում է զորամասերում, զրուցում է հասարակ զինվորների հետ՝ իմանալու համար

նրանց տրամադրությունը։ Հեղինակն իր հերոսին օժտում է տիրակալի արդարամտությամբ, ռազմիկի քաջությամբ, ազնիվ մարդու ուղղամտությամբ։ Նա գույներ չի խնայում, որպեսզի այս և մի շարք այլ բարեմասնությունների շնորհիվ նրան դարձնի այնպիսի կերպար, որ իդեալական լինելով՝ միաժամանակ համոզիչ լինի։ Մի խոսքով, այդ կերպարը ժամանակի «սոցիալական պատվերն» էր, և Շեքսպիրն այդ պատվերն ավելի քան փայլուն կերպով է կատարում։

Նրա անձնական մեղքը չի բնավ, որ այս քրոնիկը չունի նույն շրջանի լավագույն գործերի խորությունը։ Նա կարող էր անկեղծորեն ասել, որ ինքն արել է իրենից կախված ամեն բան՝ արդարացնելու համար բացարձակ միապետության գաղափարը։ Բոլորովին այլ հարց է, որ այդ միապետության իդեալականացումը նույնիսկ Շեքսպիրի մոտ չի ստեղծում գեղարվեստական արտակարգ կատարելություն։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՆԱԽԵՐԳԱԿ.— Այս փոքրիկ բեմը, աքաղաղների այս կռվատեղին, || Կարո՞ղ է միթե Ֆրանսիո արձակ դաշտերն ընդգրկել.— *Լոնդոնի մի քանի թատրոնների բեմերը վերափոխված են եղել աքլորակռվի համար սարքված տախտակամածներից։*

I, 2, 13.— **Սալիք օրենք.—** *Նկատի ունի Սալիքյան օրենքի՝ Ֆրանսիան մի ժամանակ տիրող ֆրանկների հին օրենքների ժողովածուի հոդվածներից մեկը։*

I, 2, 43.— **Փարամոնդ.—** *Մերովինգների դինաստիայի լեգենդար հիմնադիր. պատմական արժանահավատ աղբյուրներում նրա անունը չի հիշատակվում։*

I, 2, 83.— **Արքա Տասներորդ Լյուդովիկոսը...—** *Իրապես՝ Լյուդովիկ Իններորդ։ Շեքսպիրն այստեղ կրկնում է Հոլինշեդի թույլ տված սխալը։*

I, 2, 98.— **Եվ սակայն նրանք Սալիք օրենքը հանում են ձեր դեմ || Արգելակելու ձեր պահանջները Ֆրանսիո հանդեպ.—** *Արքեպիսկոպոսի բոլոր փաստարկները Շեքսպիրն ամբողջությամբ քաղել է Հոլինշեդի «Քրոնիկներ»-ից։ Իրականում Հենրի Հինգերորդի հավակնությունները ֆրանսիական գահի նկատմամբ, եթե նույնիսկ ժառանգականությունը թույլ տանք կանացի գծով, իրավաբանորեն անհիմն են, քանի որ այդ կարգի իրավունք կարող էին ունենալ միայն Մորտիմերները իբրև Իզաբելլա Ֆրանսիացու, անգլիական Էդվարդ Երկրորդ թագավորի կնոջ և Էդվարդ Երրորդ թագավորի մոր, ավագ թոռան ժառանգներ։*

I, 2, 106.— **Գիրք թվոց.—** *Աստվածաշնչի գրքերից մեկը։*

II, 0, 0.— **Ոտքերին թևեր || Մեր անգլիական մերկուրիոսները...—** *Մերկուրիոսի՝ աստվածների արագոտն այդ բանբերի մեզ հասած պատկերներում նա ներկայացվել է ոտքերին թևեր ունեցող։*

II, 0, 0.— **Այնպես չենք անի || Որ մեր պիեսից ձեր սիրտը խառնի.—** *Կատակով ակնարկ ծովային հիվանդության մասին։*

II, 1, 29.— **Գործերդ ինչպե՞ս են, պանդոկապետ Պիստոլ.—** *Պիստոլը պանդոկի տեր է դառնում այն օրից, երբ ամուսնանում է պանդոկի տիրուհու՝ տիկին Վռազի հետ։*

* *Ծանոթագրությունները կազմել է Ն. Մուրադյանը։*

II, 1, 39.— Հիմա մենք ականատես կլինենք սարսափելի արնապղծության և սպանության.— *Տիրուհին ասում է «արնապղծություն», փոխանակ «արնահեղության»։*

II, 1, 52—53.— ...բավական է որ ‖ Ես իմ պիստոլի ձգանը սեղմեմ....— *Ակնարկում է Պիստոլի անունը.* pistol *նշանակում է պիստոլետ, ատրճանակ։*

II, 1, 55.— Բարբասոն.— Դևերից մեկի անունը։

II, 1, 73.— Կրետայան շուն.— *Կրետեն հռչակված էր իր կատաղի որսորդական շներով։*

II, 1, 77.— Կրեսիդա.— *Հույն գեղեցկուհի, տրոյական թագաժառանգ Տրոիլոսի անհավատարիմ սիրածը։ Նրա անունը հոմանիշ է դառնում անառակի (տե՛ս Շեքսպիրի «Տրոիլոս և Կրեսիդա» երկը)։*

II, 2, 99.— Հեմպտոն.— *Սաութհեմպտոն անվան կրճատված ձևը։*

II, 2, 174.— Մտադրությունս ավելի արագ իրագործելու.— *Հոլինշեդի «Քրոնիկներում» հաղորդվում է, որ Քեմբրիջի կոմսը ձգտում էր տապալել Հենրի Հինգերորդին հօգուտ Մորտիմերի։*

II, 3, 2.— Ստենս.— *Այս բնակատեղին Լոնդոնից Սաութհեմպտոն տանող ճանապարհի առաջին ուղեմասի վերջն էր։*

II, 3, 9.— Արթուրի գիրկ.— *Հյուրանոցի տիրուհին ուզում է ասել՝ «Աբրահամի գիրկ»։ Արթուրը հին բրիտների լեգենդար թագավորն է։ Աբրահամը, ըստ Աստվածաշնչի, մարդկային ցեղի նախահայրերից մեկն է։*

II, 3, 13.— Ճիշտ տեղատվությունը սկսելու պահին.— *Ըստ հին հավատալիքի, մարդիկ մեռնում են, երբ սկսվում է տեղատվությունը։*

II, 3, 35.— ...Բայց չէ՞ որ նա ռևմատիկ էր...— *Տիրուհին ասում է* rheumatic *(ռևմատիկ), փոխանակ ասելու* lunatic *(խելագար, լուսնոտ)։*

II, 4, 46.— Ավագ Բրուտոս Հռոմեացի.— *Հին հռոմեական հերոս, որ երկար ժամանակ ձևանում է խելագար, որպեսզի հաստատապես կարողանա գլուխ բերել բռնակալ թագավոր Տարկվինիոս Գոռոզին գահընկեց անելու իր ծրագիրը։*

II, 4, 66.— Մեր պարտությունը Քրեսի ահեղ ճակատամարտում...— *Այդ ճակատամարտը տեղի է ունեցել 1346 թվականին։*

III, 3, 0.— Հարֆլեր.— *Ծովափնյա ոչ մեծ քաղաք Հավրի մոտակայքում, հնում նշանավոր նավահանգիստ։*

III, 2,2.— ...ավագ ենթասպա, մի քիչ սպասիր.— *Շեքսպիրի անփութությունը. վերը (II 1) Բարդոլֆը լեյտենանտ էր։*

III, 2, 20.— Քանի թե այստեղից Լոնդոն փախչելը.— *Անգլիական մեզ չհասած մի երգից հատված։*

III, 5, 11.— Նորմանդացիներ. դրանք բոլորը բիճ են, խառնածին.— *Անգլիական թագավորական տունը սերում էր նորմանդական հերցոգ Վիլհելմ Նվաճողից (XI դ.), որը ապօրինի ծնունդ էր։*

III, 6, 162.— Վերցրո՛ւ, Մոնժուա, վաստակիդ դիմաց.— *Գոյություն է ունեցել սովորույթ, ըստ որի նվեր են տվել նույնիսկ թշնամի պետության դեսպանին նաև վատ լուր կամ վիրավորանք հաղորդելու դեպքում։*

III, 7, 17.— Նրա կճղակի ամենաանվաստ եղջյուրը Հերմեսի սրնգից ավելի քաղցրաձայն է.— *Եղջյուր կրկնակի իմաստով. իբրև սմբակ և իբրև երաժշտական գործիք։ «Ամենանվաստ», քանի որ սմբակի տարբեր մասեր տարբեր որակի նյութերից են։*

III, 7, 17.— Հերմես.— *Հովվական աստված Հերմեսը կարողացել է ճարտարորեն սրինգ նվագել։*

III, 7, 34.— Բովանդակ աշխարհը մեզ ծանոթ և տակավին անծանոթ...— *Անհայտ աշխարհ ասելով հասկացվում են դեռևս չհայտնաբերված երկրները։*

III, 7, 93.— Ես կարծում եմ, նա իր բոլոր սպանածներին կուտի.— *Սպարապետն ուզում է ասել, որ թագաժառանգը կարողանում է միայն որս սպանել, բայց ոչ մարդ։*

IV, 0.— Ռամիկ թե իշխան || Հենրի արքայի դեմքին են նայում գիշերում անծիր, || Որ մեր անարժան ձեռքով գծեցինք.— *Բանաստեղծական պարալոգիզմ. պիեսի ընթացքում Հենրիին դիտող զինվորները ձուլվում են հանդիսատեսների հետ, որոնց դրամատուրգը հրավիրում է տեսնելու բեմի վրա հանդես բերած թագավորի կերպարը։*

IV, 1, 56.— Սուրբ Դավթի օրը.— *Քրեսիի ճակատամարտում (սուրբ Դավթի օրը), որտեղ Էդվարդ Երրորդը գլխովին ջախջախում է ֆրանսիացիներին, աչքի է ընկնում ուելսցիների գունդը մի ընդհարման ժամանակ, պրասի մի բանջարանոցում։ Ի հիշատակ դրան՝ ուելսցիները սուրբ Դավթի օրը իրենց գլխարկները զարդարել են պրասով, որ և դառնում է յուրօրինակ ազգային խորհրդանշան։*

IV, 1, 228.— ... ֆրանսիացիները կարող են մեր մեկի դեմ քսան ֆրանսիական գլխադրամ հանել, որ մեզ կջարդեն.— *Բնագրում՝ բառախաղ.* crown *կրոն (դրամ) և գլխի գագաթ։*

IV, 1, 280.— Հիպերիոն.— *Ապոլլոնի անվանումներից մեկը։*

IV, 1, 302.— Ռիչարդի մարմինը ես արքայորեն թաղեցի նորից.— *Ռիչարդ Երկրորդի դիակը առանց մեծարանքի թաղված Լենգլիում (Հերիֆորդշիրում) Հենրի Հինգերորդի կարգադրությամբ հանդիսավոր կերպով փոխադրվում է Վեստմինստերի աբբայություն։*

IV, 2, 43—45.— Այն կղզու սատկած բնակիչնե՞րը... Արևածագի դաշտն են աղարտում.— *Գրանպրեն անգլիացիների մասին խոսում է այնպես, որպես թե նրանք արդեն դիակներ են, անգլիական դրոշների մասին՝ իբրև պատառոտված լաթերի։*

IV, 4, 12.— ...Ջարմիկ իմ....— *Սոլսբերին դիմում է Վեստմորլենդին։*

IV, 4, 47.— Այսօր Կրիսպիանի սուրբ տոնի օրն է.— *Երկու եղբայրներ, որոնց հիշատակը տոնվում է նույն օրը, հոկտեմբերի 25-ին։*

IV, 7, 10.— ... չէ՞ որ նա ծնվել է Մոնմաուրում.— *Մոնմաութը գտնվում է Ուելսում, Ֆլյուելենի ծննդավայրում։*

V, 0.— Երբ կայսրուհու մեծ զորապետը.— *Ակնարկ Էսեքսի արշավի մասին, որ ձեռնարկվում է 1599-ին՝ Իռլանդիայում բռնկված ապստամբությունը ճնշելու համար։*

V, 0.— Միջամուխ եղավ, որ խաղաղություն || Հաստատի երկու կողմերի միջև.— *Գերմանական կայսր Սիգիզմունդը ջանում է, թեև անհաջող, միջնորդի դեր կատարել Անգլիայի և Ֆրանսիայի միջև։*

V, 1, 27.— Կադվալադեր.— *Ուելսի վերջին թագավորը։ Ուելսում նրա անունով է կոչվում մի լեռ, որի վրա շատ այծեր են արածում։*

V, 1, 35.— Դուք երեկ ինձ լեռան զինակիր անվանեցիք.— *Ուելսի լերկ լեռները ծաղրելը անգլիացիների համար սովորական մի բան էր։*

V, 2, 19.— Նրանց շանթել են մահասփյուռ, անեղ || Հրանոթների ումբագնդերով.— *Բնագրում՝* The fatal balls of murdering basilisks—*Մահաբեր Բասիլիսկոսի օրհասական գնդակը կրկնակի նշանակությամբ.* basilisk—*առասպելական մողես, որ իբր թե սպանում էր միայն իր նայվածքով և բասիլիսկոս՝ թնդանոթի մի հին տեսակ։*

«ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ»

«Հենրի Վեցերորդի» երեք մասերը, ամենայն հավանականությամբ, գրված և բեմադրված պիտի լինեն 1590—1592 թվականներին: Որոշ չափով վիճելի է մնում նրանց գրության հերթականության հարցը. դեռևս վերջնականապես չի հերքված այն

ենթադրությունը, թե առաջին մասը գրվել է երկրորդից և երրորդից հետո: Պիեսի առաջին մասը հեղինակի կենդանության օրոք առանձին լույս չի տեսնում. այն առաջին անգամ հրատարակվում է 1623 թվականի ժողովածուի մեջ: Երկրորդ մասը լույս է տեսնում 1594-ին այս ընդարձակ խորագրով. «Փառապանծ երկու տոհմերի՝ Յորքի և Լանկաստերի գժտության առաջին մասը, որտեղ պատկերված է բարեհամբույր դուքս Հեմֆրիի մահը և դուքս Սեֆոլկի աքսորն ու մահը և ողբերգական վախճանը գոռոզ կարդինալ Ուինչեստերի, Ջեկ Քեդի հայտնի ապստամբությամբ, ինչպես և դուքս Յորքի՝ գահը ձեռք գցելու առաջին նկրտումներով»: Երրորդ մասը ևս նախապես լույս է տեսնում 1595-ին այս խորագրով. «Ճշմարտացի պատմություն Ռիչարդի՝ դուքս Յորքի և բարեհամբույր թագավոր Հենրի Վեցերորդի մահվան մասին՝ ընդարձակ վերարտադրությամբ Լանկաստերի և Յորքի տոհմերի միջև եղած գժտության...»: Այս հրատարակությունների տեքստը այնքան տարբեր է 1623-ին Երկերի առաջին ժողովածուի մեջ մտած տեքստերից, որ երկար ժամանակ այն կարծիքն է իշխել, իբր թե դրանք իրապես պատկանում են Շեքսպիրի նախորդներից որևէ մեկի գրչին (Մառլո, Գրին), որ հետո վերամշակել է Շեքսպիրը: Պիտեր Անդերսենը 1924—1929 թթ. ապացուցում է, որ 1594 և 1595 թվականների հրատարակությունները Շեքսպիրի իսկ պիեսների աղճատված («ավազակային») հրատարակություններն են, որ գրի են առնվել հիշողությամբ: Երկրորդ մասի ամբողջական տեքստը տպագրվում է 1600-ին և ապա, երրորդ մասի հետ, այս ընդհանուր վերնագրով. «Ամբողջական նկարագրությունը փառապանծ երկու տոհմերի՝ Յորքի և Լանկաստերի գժտության»:

Սյուժեի աղբյուրն է Հոլինշեդի «Քրոնիկները»: Գործողության ժամանակն է. առաջին մասի՝ 1422—1444, երկրորդ մասի՝ 1445—1455, երրորդ մասի՝ 1455—1471:

Ստեղծագործական հենց առաջին քայլերից Շեքսպիրը հանդես է բերում ինքնուրույն մտածողություն. նրա քրոնիկների բովանդակությունն են կազմում պետական և հասարակական կյանքի հիմնական հարցերը, իշխանության, դասերի փոխհարաբերության, եկեղեցու դերը պետության մեջ, հարցեր, որոնք առանձին քաղաքական նշանակություն ունեին: Եթե, օրինակ, Մառլոյի համար առաջին պլանում կանգնած էր անհատի պրոբլեմը («Էդվարդ Երկրորդ»), ապա Շեքսպիրի համար հիմնականը պետականության հարցն է: Նրա հիմնական թեման այս և մյուս քրոնիկներում՝ պետության բախտն է ընդհանրապես:

Երիտասարդ դրամատուրգը գրիչ վերցրեց այն օրերին, երբ իր հայրենիքի վրա կախվել էր օտար նվաճողների ներխուժման վտանգը՝ ամենալարված և դրամատիկ պահը Անգլիայի պատմության մեջ: Մահացու վտանգը հասարակության բոլոր դասերի համախմբումն էր պահանջում բացարձակ միապետության հովանու տակ: Սա՝ տեսության մեջ: Իրականության մեջ այդ դասերն ու խմբերը խոր հակասության մեջ էին միմյանց հետ առանձին-առանձին և պետության հետ՝ բոլորը միասին: Որքան էլ երիտասարդ՝ Շեքսպիրը չէր կարող չտեսնել խոր արմատ ունեցող այդ հակասու-

թյունները։ Ազգային կուռ միասնությո՞ւն, թե ինչը կփրկեր երկիրը։ Եվ այդ միասնությունն էլ կարող էր ապահովվել միայն թագավորի գլխավորած կենտրոնացված իշխանությունը։ Այն ժամանակ այսպիսի դիրքավորումը միանգամայն առաջադիմական էր, և հենց այդ դիրքավորումն էլ ունեին հումանիստները։

Ընթերցողը պիտի նկատի ունենա, որ գլխավոր հերոսը Շեքսպիրի քրոնիկներում ոչ բոլոր դեպքերում է նա, որի անունով կոչվում է պիեսը։ Այստեղ, օրինակ, այդպիսին է առաջին հերթին Տոլբոտը։

Իր նկարագրով Տոլբոտը էպիկական հերոս է։ Նա օժտված է այն բոլոր բարեմասնություններով, որոնցով որ օժտված են լինում հայրենիքին մինչև վերջ նվիրված, նրա փառքի համար զոհվելը իրենց համար գերագույն պատիվ համարող քաջերը. Նրա նվիրվածության մեջ ինչ-որ հին, հնամենի, ավանդական բան կա, թեև նա ինքը իր ծառայությունն է հանդես բերում հենց բացարձակ միապետությանը։ Լինելով լորդ, ապա ստանալով կոմսի տիտղոս, նա ժողովրդի զավակն է մինչև ուղն ու ծուծը։ Նա հերքում է ամեն տեսակ եսականություն ու շահամոլություն, առավել թշնամի է հայրենի թուլամորթ ու փառասեր ազնվականներին, քան նույնիսկ ֆրանսիացիներին, որոնց մեջ առնվազն ազնիվ հակառակորդների է տեսնում։ Նրա էությունը հիանալի բացահայտվում է այն տեսարանում, երբ կոմսուհի Օվերնը, խորամանկելով ու խաբելով, նրան իր պաշարված ամրոցն է հրավիրում։ Կոմսուհին գտնության մեջ է. վերջապես առասպելական հերոսը իր ձեռքում է, անգլիացիները զրկված են իրենց դյուցազնից։ Նրա խոսքին գերին պատասխանում է, որ ինքը Տոլբոտը չէ, այլ սոսկ նրա ստվերը, որ իսկական Տոլբոտը երբեք չէր տեղավորվի այս առաստաղի տակ։ Եվ իսկապես, նրա փողի կանչին անմիջապես արձագանքում են պարսպից դուրս սպասող նրա զինվորները, որոնք և անմիջապես ամրոց են ներխուժում։ Ահա՛ թե ով է իսկական Տոլբոտը,—ասում է նա ապշած կոմսուհուն։

Ֆրանսիական բանակում առաջատար հերոս է Ժաննա դ'Արկը։

Շատ է գրվել ֆրանսիական ազգային հերոսուհու շեքսպիրյան մեկնաբանության մասին, ըստ որում դրամատուրգը քիչ անգամ չի մեղադրվել այն բանում, թե նա նեղ ազգային տեսակետից է ներկայացրել այն լեգենդար գեղջկուհուն, որ հետագա սերունդների հիշողության մեջ մնացել է իբրև հայրենասիրության և ազատասիրության եզակի մի օրինակ։ Բայց մի՞թե ավելի լավ են վարվում նրա հետ իր հայրենակիցները, նրա քաջության ու մոլեռանդ նվիրվածության մեջ փնտրելով ինչ-որ կախարդություն և որպես կախարդի էլ հրկիզում են սնոտիապաշտ ժողովրդի աչքի առաջ։ Այս դեպքում Շեքսպիրը թերևս կարողանար արդարանալ, ասելով, թե Ժաննա դ'Արկը զավակն էր մի երկրի, որի դեմ մեկ հարյուրամյակ պատերազմի մեջ էր իր հայրենիքը։ Բայց Շեքսպիրն այլ կերպ է վարվում. Ժաննայի մեջ նույնիսկ ցույց է տալիս ազնիվ ու վսեմ շատ գծեր. նա քաջ է իսկապես, խիզախ, մշտապես ու անվերջ նախաձեռնող, արտակարգ կերպով տոկուն ու համառ։ Ինչ-որ մի չբացահայտված իմաստություն կա ժողովրդի այդ պարզ զավակի մեջ. ասես նա ներքուստ ուրախ է,

42—577

որ իր տգետ հայրենակիցները հավատում են իր մեջ նստած դիվական ուժերի գոյությանը. մինչդեռ ինքը բնավ չի հավատում դրանց, քանի որ միշտ էլ հույսը դնում է սեփական խելքի, խորամանկության, նախաձեռնության վրա: Այս է որ որսացել է Շեքսպիրը: Ի՞նչ կապ ունի կախարդը այն Ժաննա դ'Արկի հետ, որը կրակոտ խոսքով, ո՜չ, արտակարգ մի տրամաբանությամբ համոզում է թուլամորթ անսկզբունք ու հայրենադավ Բուրգոնդիայի դքսին կարմրել իր արածի համար և վերադառնալ ֆրանսիական բանակը:

Այն ժամանակ, երբ օրհասական րոպեին Ժաննա դ'Արկը դիմում է չար ուժերի օգնությանը (մասն Ա, V, 3), Տոլբոտն, ինչպես տեսանք, դիմում է իր հայրենակիցների օժանդակությանը: Սրանով են, իսկապես, նրանք տարբերվում միմյանցից և ոչ թե ազգային պատկանելությամբ: Այս էլ հենց հնարավորություն է տալիս հեղինակին Տոլբոտին դարձնել իդեալական մի հերոս, որ և' իր բարոյական նկարագրով, և' իր անձնական արիությամբ հակադրվում է ոչ միայն ֆրանսիական հերոսուհուն, այլև հայրենի ֆեոդալներին:

Անգլիական ճամբարը բնավ էլ լավ չի ներկայացված ֆրանսիականից: Եթե այնտեղ դիմադրական շարժումը գլխավորում են գիշատիչ, էգոիստ ու փառասեր ազնվականներ, ապա այստեղ, բացառությամբ Տոլբոտի և իր տղայի, ինչպես և, իհարկե, առանձնակի կանգնած կամազուրկ, իրադարձությունների ետևից քարշ եկող Հենրի Վեցերորդի,—պատկերն ավելի վատ է. դեռևս Հենրի Հինգերորդի անթաղ դիակի վրա պայթում է լորդ-խնամակալ Գլոստերի և Ուինչեստերի եպիսկոպոսի վեճը իշխանության համար, քիչ հետո թշնամական տները համախմբվում են երկու մեծ լագերներում. կազմակերպվում են Կարմիր և Սպիտակ վարդերի կուսակցությունները, որոնք պիտի երկարատև, կատաղի, փոխադարձաբար հյուծող ու մաշող գոտեմարտի մեջ քաշեին երկիրը երկար, շա՜տ երկար ժամանակ, մտնելով Անգլիայի պատմության մեջ որպես նրա սև էջերից մեկը... Վերջապես, այդ ֆեոդալներից մեկի՝ շահամոլ Սոմերսետի անվճռականության ու դանդաղաշարժության զոհն է դառնում անգլիական բանակի հույսն ու ապավենը. մնալով առանց օգնական ուժի, անհավասար մի գուպարում իր կորյունի հետ Տոլբոտն ընկնում է հերոսի մահով:

Շեքսպիրը պատմությունը չի դիտում, այլ ըմբռնում է և ըմբռնում, իմաստավորում է միայն իբրև բանաստեղծ: Պատմությունը նրա համար ավարտված, քարացած մի բան չէ, այլ կենդանի, շարժվող մի երևույթ, կենդանի նույնիսկ իր գործող անձերով: Այդպես է նա ըմկալում այն տեսարանը, որտեղ ձևավորվում են Կարմիր և Սպիտակ վարդերի այսպես կոչված կուսակցությունները: Այդ տեսարանը քրոնիկի երկրորդ մասում այնքան կենսալի, բնական, տրամաբանական է, որ հետագա սերունդները այն միայն այդ կերպ են պատկերացնում կատարված:

Եթե առաջին մասում կենտրոնական դեմքը Տոլբոտն է, ապա այստեղ լորդ-խնամակալ Գլոստերն է: Բայց պետք է միայն պատկերացնել նրա դրությունը. ազնըվական վերնախավը բաժանված է երկու թշնամական բանակի. ամեն մի դավ,

խարդավանք, բանսարկություն: Բոլորը բոլորի դեմ են, բոլորը միասին թագավորի դեմ, այդ անկամ, թուլամորթ, խեղճ ու կրակ Հենրի Վեցերորդի, որ ծնվել էր մի խաղաղ մենաստանի համար, բայց ոչ երբեք մի պետության, որ բզկտվում է հակասությունից: Պալատական բանսարկությունների այդ փոթորկվող ծովում Գլոստերը դեռ չի սուզվել, բայց փրկության ափ ինչ-որ չի տեսնում:

Նրան մի վերջին, այս անգամ արդեն մահացու հարված է հասցնում ոչ այլ ոք, քան եթե կինը՝ դքսուհի Գլոստերը. փառասեր այս կինը, չկարողանալով տանել Մարգարիտ թագուհուն, դիմում է կախարդների օգնության, որի համար և են-թարկվում է մահապատժի: Որքան էլ ծանր, օրենքի առաջին հպատակ Գլոստերն արդարացնում է դաժան վճիռը: Բայց օրինապահությունը մի անգամ էլ է ոտնա-հարվում անօրինականության կողմից. նա ևս զոհ է դառնում պետության թշնամի-ների, որ նույնն է թե իր թշնամիների դավին:

Անա և պետության ղեկի մոտ են իշխանասեր Մարգարիտ թագուհին և նրա սիրեկանը՝ դուքս Սեֆոլկը, հենց նա, որ Մարգարիտին բերում է Ֆրանսիայից, նախօրոք, ընդունված սովորության համաձայն, ամուսնանալով հետը (լոկ անվանա-կան կերպով, իհարկե) Անգլիայում գահակող թագավորի փոխարեն: Ծոմի և աղոթք-ների տրված թագավորին նրանք կարող են հաշվի չառնել. նա, որ չկարողացավ փրկել իրեն մինչև վերջ նվիրված Գլոստերին, մի պետություն փրկել, իհարկե, չի կարող:

Իր ստեղծագործական տարերքով ողբերգություն սիրող բանաստեղծը այս թե-մային ձեռնարկելիս հավանորեն պետք է որ շփոթված լինի. Հենրի Վեցերորդի ժա-մանակակից Անգլիան ապրում էր այնպիսի մի ողբերգություն, որ բաղկացած էր բնավ էլ ոչ փոքր, այս դեպքում արդեն՝ որոշակի հասցե ու գործող անձ ունեցող ող-բերգություններից: Կործանվելով, ազնիվ Գլոստերը հետը տանում է և իր ոխերիմ թշնամի կարդինալ Բոֆորտին, որ այդպես էլ չի տեսնում իր փառասիրական իղձե-րի կատարումը: Բայց նա հետը տանում է նաև համարյա թե իր կես նպատակին հասած Սեֆոլկին. նա, որ անթագակիր թագավոր է այժմ, պիտի ժողովրդի առաջ հաշիվ տա ոչ միայն Գլոստերի, այլև իր գործած բոլոր չարաշահումների համար: Եվ խայտառակ կերպով վտարվելով երկրից, նա իր անփառունակ վախճանն է գտնում մի նավի վրա, ծովահենների ձեռքից: Վերջապես, ասես ի լրումն այս ամենի, Լոնդոնի մոտ գլուխ է բարձրացնում մի բախտախնդիր մարդ Ջեկ Քեդ անունով, իրեն թագավոր հայտարարելով, ամբոխի գլուխն անցած՝ նա արշավում է Լոնդոնի վրա. գրավում է այն առանց դժվարության, բայց և հեշտությամբ էլ իրեն գտնում պարտված ու լքված և նույնպես անփառ մի վախճան է ունենում:

Այսպես, մեծ դրամայի գործող անձինք ընդհանուր քաոսի մեջ իրար ոչնչացնե-լով, ասպարեզ են բաց անում նրա համար, որից և իրոք կախված է երկրի բախտը օրհասական պահերին՝ ժողովրդի: Նրանն է վերջին և վճռական խոսքը: Եվ պատ-մական քրոնիկն ստիպված է լինում լայնացնել իր շրջանակները: Թագավորների և

իշխանների սովոր փոքր բեմը այժմ պիտի «տեղավորեր» ժողովրդական զանգվածներին: Այս նոր գործող անձը միաժամանակ պահանջում էր նոր հայացք պատմական երևույթների նկատմամբ, երևույթներ, որոնք հետևանք էին ոչ թե առանձին ուժեղ անհատների ձեռներեցության կամ քաջության, այլ հենց ժողովրդական մասսաների գործունեության: Այդ ժողովուրդը պիտի հանդես գար նաև «Հենրի Հինգերորդ»-ում (տեսանք արդեն), «Հուլիոս Կեսար»-ում, «Կորիոլանում»:

Ի՞նչ կարծիք է ունեցել Շեքսպիրը ժողովրդի մասին ընդհանրապես. ի՞նչ կարծիք է ունեցել նա, մասնավորապես, «Հենրի Վեցերորդ»-ի երկրորդ մասում հանդես բերված Ջեկ Քեդի ապստամբության մասին: Շատ քննադատներ, հենց այդ ապստամբության վերարտադրությունից ելնելով, հեղինակին մեղադրել են արիստոկրատիզմի մեջ, այն բանի մեջ, որ նա ժողովրդին նույնացրել է ամբոխի հետ, ցույց է տվել սրա անիշխանական արարքները, անկուլտուրականությունը, անիմաստ դաժանությունը: Նախ, Շեքսպիրը բնավ էլ ժողովրդին չի ներկայացնում ամբոխի հետ: Եթե առաջինը հավաքական, մնայուն հասկացություն է, ապա երկրորդը ժողովրդի տականքն է, քաղաքային խուժանը: Ապա, այս և մյուս քրոնիկներում ազնվականությունը ժողովրդի համեմատությամբ բնավ էլ լավ կողմից չի ներկայացվում: Մի՞թե այդ յորքերը, սեֆոլկները, սոմերսետները որևէ բանով գերադաս են հասարակ մարդկանցից: Ճիշտ է, և՛ ազնվականությունը, և՛ ժողովուրդը դժգոհ են օրենքից: Բայց այն ժամանակ, երբ ազնվականությունը, դուրս գալով կենտրոնական իշխանության դեմ, ցանկանում է հագուրդ տալ իր փառասիրական ձգտումներին, հասարակ ժողովուրդը ձգտում է բավարարել լոկ իր նյութական կարիքները:

Հենց միայն Ջեկ Քեդի անվան հետ կապված ապստամբության վերլուծությունը բավական է դրանում համոզվելու համար:

Լանկաստերները փառասեր Յորքից ազատվելու համար նրան ուղարկում են Իռլանդիա՝ ճնշելու տեղի խռովությունը: Եվ ահա, որպեսզի կարողանա Անգլիա վերադառնալ, Յորքն իր հերթին մի խորամանկության է դիմում, որի համեմատությամբ հակառակորդների խարդախությունը կատակ կարող է թվալ. նա ընտրում է իր զինվորներից մեկին, մի հավատարիմ մարդու և հանձնարարում ժողովրդական ապստամբություն բարձրացնել թագավորի. ասել է թե՝ օրինական կառավարության դեմ: Նա մտածում է այսպես. հաջողության դեպքում նրան իր զորքով նա կկանչեն Իռլանդիայից այս առավել վտանգավոր ապստամբությունը ճնշելու: Որ ժողովուրդը կհարի ապստամբներին, նա չի տարակուսում. չէ՞ որ առաջին հերթին հենց այդ ժողովուրդն է դժգոհ ֆեոդալական կարգերից, սահման չճանաչող հարկերից ու տուրքերից, ներքին և արտաքին վերջ չունեցող կռիվներից: Եվ կատարվում է ազգադավ այդ մարդու կանխատեսությունը: Ջեկ Քեդն իրեն ներկայացնում է իբրև կոմս Մորտիմեր և հայտնում իր պահանջները գահի նկատմամբ: Ժողովրդի մեջ գտնվում են մարդիկ, որոնք իմանում են նրա ինքնակոչ լինելը և այնուամենայնիվ հետևում են նրան: Ինչու՞: Որովհետև նրանց այնքան էլ չի հետաքրքրում, թե ինչ

ատիթով կամ ում գլխավորությամբ են իրենք դուրս գալիս իշխանության դեմ: Նրանց հետաքրքրում է ապստամբության նպատակը: Իր հերթին Ջեկ Քեդը գիտե, թե ինչ է հետաքրքրում ժողովրդին, ինչով կարող է նրան իր կողմը գրավել: Եվ ահա թափվում են խոստում խոստումի ետևից, «Տերության մեջ բոլորը կճանաչվեն հավասար... իսկ երբ ես դառնում թագավոր...՝ Այն ժամանակ փող չի լինի, բոլորդ կուտեք կխմեք իմ հաշվին...» (IV, 2):

Ի՞նչն է ուշագրավը այս ապստամբության մեջ: Այն, որ հեղինակն այս որոշակի ապստամբությանը տվել է ընդհանրապես ժողովրդական ապստամբներին հատուկ առավել բնորոշ գծեր: Ստացվել է այսպիսի մի պատկեր. Ջեկ Քեդը, ոտքի հանելով ժողովրդի ներքին խավերին, կռվում է իր նեղ, անձնական շահերի համար. նա չի հավատում իր տված խոստումներին, բայց ջանք է թափում, որ ուրիշները հավատան: Եվ, ընդհակառակը, այնքան էլ չհավատալով նրա տված խոստումներին, ժողովուրդը տարերայնորեն գնում է դեպի դա, այսինքն՝ պայքարում է իր սեփական շահերի համար: Որ այդ խոստումները Ջեկ Քեդի երևակայության արդյունքը չեն, երևում է քրոնիկների պահպանված այն կոչերից, որ միջնադարում տարածվել են Անգլիայում: Դրանցում իր արտահայտությունն է գտել հավասարողական կոմունիզմի գաղափարը:

Ժողովրդի հետ կապված տեսարանները, մասնավորապես ժողովրդական խռովությունների և հուզումների հետ կապված տեսարանները, որոնց համար անցյալում Շեքսպիրին մեղադրել են հակադեմոկրատիզմի մեջ, ցույց են տալիս նրա ռեալիստական մտածողության խորությունը: Նա չէր կարող դրանք ներկայացնել որպես կազմակերպված շարժումներ, որովհետև դրանք իրոք անկազմակերպ, տարերային են եղել միջնադարում, իրենց կեղեքողների դեմ ոտքի ելած գյուղացիները չէին կարող դաժան չլինել, քանի որ այդ տերերից նրանք երբեք գթասրտություն չէին տեսել: Այն, ինչ այստեղ բուրժուական մտածողներին անօրինական էր թվում, օբյեկտիվորեն միանգամայն օրինական է ու հասկանալի: Այդ օբյեկտիվության մեջ է հենց Շեքսպիրի ուժը:

Այդ նույն օբյեկտիվությունն էլ նրան հնարավորություն է տալիս նկատելու ժողովրդական մասսաների ոչ միայն ուժը, այլև թուլությունը: Այդ շարժումներն աչքի են ընկնում իրենց անկայունությամբ. սովորաբար դրանք ինչպես արագ բռնկվում, այդպես էլ արագ մարում են: Այնուհետև, նրանք սաստիկ դյուրահավատ են, դյուրահավատ նույնիսկ երեկվա կեղեքիչների նկատմամբ: Ահա մի տեսարան, որ պերճախոս է այս տեսակետից. Ջեկ Քեդը ապստամբներին կոչ է անում բարձրանալ վեր, իջնել վար. չխնայել ոչ ոքի, թափել նրանց Թեմզան, երբ գալիս է Կլիֆորդը: Սա կոչ է անում խռովարարներին՝ զենքը վար դնել, հանձնվել թագավորի ողորմածությանը: Եվ ի՞նչ. բոլորը միաբերան գոչում են. «Տե՛ր, պահիր թագավորին»: Քեդը կոչ է անում չլսել կեղծավոր լորդի խոսքերը, բայց այդպես էլ չի կարողանում ետ պահել ամբո-

խին: Կլիֆորդի դեմագոգիկ խոսքը կախարդական ազդեցություն է գործում. Քեյդի եռնից գնացող ժողովուրդը այժմ անցնում է թագավորի և լորդերի կողմը:

Լքված ժողովրդից, Ջեկ Քեդը, այդ ակամա արկածախնդիրը, ինչպես սովորաբար մնում է մենակ ու լքված, սովածությունից ուժասպառ, հազիվ ոտքերը քարշ տալով իրեն գտնում է մի մանր կալվածատիրոջ՝ սկվայր Այդենի պարտեզում: Էպիզոդի այս կերպարը հին, նահապետական Անգլիայի տիպիկ ներկայացուցիչն է: Նա համոզված է, որ թագավորին սանելով Քեդի գլուխը, դրանով նպաստում է կարգի և խաղաղության հաստատմանը, մոռանալով, որ երկիրը վաղուց է զրկված դրանից: ճնշելով ժողովրդական խռովությունը՝ Լանկաստերի և Յորքի տոհմերը նոր ուժով են նետվում միմյանց վրա. նրանցից առաջինին հարկավոր է պահպանել գահը, մյուսին՝ տիրանալ այդ գահին:

Այսպես է վերջանում տրիլոգիայի երկրորդ մասը. ոչ թե խաղաղ գործարքով, այլ թշնամական ձեռնարկումների նոր բռնկումով:

Անգլիայի պատմության մեջ հազիվ թե լինի մի շրջան, որտեղ ներքին պայքար ու հակամարտությունը ոչ թե տարբեր դասակարգերի, այլ դասերի, այս դեպքում հենց նույն դասի մեջ կրի այնպիսի անողոք, համառ, այնքան անկզբունքային բնույթ, որքան Կարմիր և Սպիտակ վարդերի «կուսակցությունների» հակամարտությունները այս ամբողջ շրջանը: Հետևելով Հոլլի և Հոլինշեդի տարեգրություններին, Շեքսպիրը վերցնում է այդ գժտության ամենաարտահայտիչ ու դրամատիկ մոմենտները: Եվ այնուամենայնիվ, այս ամբողջ երկրորդ մասի դրամատիզմը լոկ արտաքին բնույթ է կրում: Եթե բեմում խոսքակռիվ չէ, ապա արակռիվ է: Եվ մեկ, և մյուս կողմերը ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում միմյանց իսպառ ոչնչացնելու, երկրի երեսից ջնջելու համար: Ահա ձեզ նույն Կլիֆորդը. նա սպանում է միանգամայն անպաշտպան պատանուն Ռուտլենդին, իսկ թագուհի Մարգարիտը՝ ծաղրուծանակի ենթարկելուց հետո սպանում է ծերունի Յորքին: Սրա որդին, վրեժ լուծելու համար, սպանում է Հենրի Վեցերորդին: Քանի որ ուժերը մոտավորապես հավասար են, ապա հաղթությունը մեկ սրա կողմն է լինում, մեկ՝ նրա, և հոսում, թափվում է ժողովրդի արյունը: Սկզբում Յորքին հաջողվում է գահազուրկ անել Հենրի Վեցերորդին, հետո իշխանությունը կրկին իր ձեռքն է գցում Լանկաստերի տոհմը, վերջում, ավելի Յորքի մահից հետո արդեն, դարձյալ հաղթանակ են տանում Յորքի որդիները:

Եղբայրասպան պատերազմի այս փուլում արտակարգ կերպով հռչակվում կոմս Վորվիկը, նա, որ քաղաքական ասպարեզ էր իջել դեռևս Հենրի Չորրորդի ժամանակ: Լինելով Յորքի կողմնակից, նա քաջության հրաշքներ է գործում. օտարներ լինեին հակառակորդները, մի նոր Տոլբոտ կդառնար նա: Երիտասարդ, նորընծա թագավոր Էդվարդը Վորվիկին ուղարկում է Ֆրանսիա՝ Լյուդովիկ Տասնմեկերորդի քրոջ ձեռքը խնդրելու: Կշռելով ստեղծված իրադրությունը՝ Լյուդովիկը տալիս է իր համաձայնությունը, բայց հենց նույն ժամանակ լուր է ստացվում, թե թագավորը կնության է առել լեդի Գրեյին: Կատաղած Վորվիկը անմիջապես անցնում է գահա-

զուրկ եղած Հենրի Վեցերորդի կողմը և ֆրանսիական զորքի գլուխն անցած՝ արշավում է Էդվարդի վրա: Առաջին իսկ ընդհարման ժամանակ նրան հաջողվում է գերի վերցնել Էդվարդին: Վորվիկը նրա գլխից առնում է իր ձեռքով դրած թագը: Հենրի Վեցերորդի համար մղած նոր ճակատամարտում էլ նա գտնում է իր վախճանը:

Հենրի Վեցերորդի կերպարն այս մասում էական փոփոխության չի ենթարկվում. թուլակազմ, թուլամորթ, հիվանդոտ մի մարդ, նա շարունակում է հանձնվել խոկմունքի և ծոմապահության, գործնական ոչինչ չձեռնարկելով այնպիսի մի ժամանակ, երբ երկիրը տակնուվրա է լինում ներքին և արտաքին պլեկոծություններից: Տեղի տալով հակառակորդների համառ ճնշմանը, նա իր մահից հետո թագը խոստանում է Ռիչարդ Պլանտագենետին, Յորքի դքսին, այսպիսով իր որդի Էդվարդին՝ Ուելսի թագաժառանգին զրկելով օրինական ժառանգությունից: Այս գործարքը ցասումով է ընդունվում բոլոր Լանկաստերների, բայց ամենից ավելի՝ թագուհու կողմից, որ իր պատանի որդու հետ փախչում է Ֆրանսիա՝ օգնություն հայցելու իր հայրենակիցներից: Հենրի Վեցերորդի կողմնակիցները նույնիսկ ճակատամարտի ժամանակ չեն հանդուրժում նրա ներկայությունը: Եվ ահա, մի բլրի վրա նա խորհում է խաղաղ, անաղմուկ կյանքի մասին և... ցավում է, որ չի ծնվել մի աղքատ հովվի ընտանիքում (II, 5): Հենց այստեղ էլ նրա աչքի առաջ տեղի է ունենում հետևյալ ցնցող տեսարանը. ռազմաճակատից գալիս է մի զինվոր՝ քարշ տալով իր սպանած հակառակորդի դիակը՝ պատրաստվելով կողոպտել: Սաղավարտի դիմապանակը մի կողմ տանելով, նա տեսնում է, որ սպանել է հարազատ հորը: Անմիջապես հայտնվում է և մի այլ զինվոր՝ նույնպես մի դիակ քարշ տալով: Պարզվում է, որ սա էլ սպանել է իր որդուն:

Թագավորը ցնցված է. ահա՛ թե ուր հասցրեց երկիրը եղբայրասպան այս պատերազմը:

Տրիլոգիայի երկրորդ մասից հանդես է գալիս մի գործող անձ, որ պիտի վիթխարի դեր կատարեր հետագայում, խոսքը Ռիչարդ Պլանտագենետի՝ Յորքի դքսի որդիներից չորրորդի՝ Ռիչարդի, մասին է (Էդվարդ, Էդմունդ, Գեորգ, Ռիչարդ), որ հետո պետք է դառնար դուքս Գլոստեր, ապա և՝ Ռիչարդ Երրորդ: Մինչ սա մահացու հարված կհասցնի Հենրի Վեցերորդին, թագավորը մարգարեանում է ասելով, թե նա ծնվել է, որ անհաշիվ դժբախտություններ բերի երկրի ու ժողովրդի գլխին:

Եվ այսպես, Յորքի տոհմը հաղթում է. գահի վրա է Ռիչարդ Պլանտագենետի ավագ որդին՝ Էդվարդը: Հաղթում է Սպիտակ վարդը, բայց արդյո՞ք երկար ժամանակով: Ահա մեր առաջ է նրա ամենանկրտսեր եղբայրը՝ այլակերպ Ռիչարդը: Նա երդվում է «խափանել այդ բերքը»: Հանդիսատեսը գիտեր, որ չարագործն իր խոսքը պիտի կատարի: Նա գիտեր, այսպիսով, որ ավերված այս երկրում ցանկալի խաղաղություն չի հաստատվի դեռ երկար ժամանակ: Բայց նա, այնուամենայնիվ, համոզված էր, որ կգա այդ օրը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I, 1, 1.— **Սև հագիր. երկինք, և ցերեկ, զիջիր տեղը գիշերվան.**— *Ըստ ծանոթագրողներ Ստիվենսի և Մելոնի, հեղինակը նկատի ունի ոչ միայն արտահայտության փոխաբերական իմաստը, այլև եղիսաբեթյան թատրոնում ողբերգություն ներկայացնելիս բեմի առաստաղը սև պաստառով պատելու պրակտիկան։*

I, 1, 5.— **Քանզի հաշտվեցին Հենրու մահվան հետ.**— *Այսինքն՝ ինչո՞ւ կռվով վրեժխնդիր չեն եղել ֆրանսիացիներից։*

I, 1, 81.— **Զինանշանից պոկել են բոլոր շուշանները արդեն.**— *Կորցնելով Ֆրանսիան՝ Անգլիան զրկվում է իր զինանշանի վրա ֆրանսիական շուշանները կրելու իրավունքից։*

I, 1, 155—156.— **Թշնամու հողում խարույկ կվառեմ, || Որ այդ Երկրում էլ մեր սուրբ Գևորգի հանդեսը լինի.**— *Ի պատիվ սուրբ Գևորգի տոնակատարության, Անգլիայում ընդունված է խարույկներ վառել։*

I, 1, 164.— **Հիշեք, իշխաններ, ձեր նվիրական երդումը Հենրիին.**— *Գլոստերի և Բեդֆորդի երդման մասին պատմում է Հոլինշեդը։*

I, 2, 1—2.— **Մինչև այս օրը դեռևս հայտնի չէ Մարս մոլորակի շարժումը ստույգ || ո՛չ երկրի վրա ո՛չ էլ երկնքում.**— *Մարս մոլորակի շարժումը այն ժամանակ դեռ անհայտ էր։ Այս փաստն է ընկած պատերազմի կասկածելի ու անհայտ վախճանը արտահայտող փոխաբերական արտահայտության հիմքում։*

I, 2, 28.— **Մեր հայրենակից Ֆրուասարը հիշատակում է.**— *Ֆրուասարը՝ ֆրանսիացի նշանավոր տարեգիր (1338—1410), անձամբ գիտեր Էդվարդ Երրորդի Անգլիան։ Համապատասխան մեջբերումներ Շեքսպիրը վերցրել է Հոլինշեդից։*

I, 2, 29.— **Որ Անգլիան երկնեց միայն ռոլանդներ ու օլիվերներ.**— *Կառլոս Մեծի երկու դյուցազուններն են, որոնց նվիրված են հին ֆրանսիական շատ երգեր։*

I, 2, 39—40.— **Կարծես թե նրանց ձեռքերն է լարել || Ինչ-որ համառ սարք կամ մի զսպանակ.**— *Շեքսպիրը նկատի ունի այն ժամացույցը, որի ժամերը մարդու արձանիկը խփում է ձեռքով։*

I, 2, 46.— **Ողջույն ձեզ, Բաստարդ, երիցս ողջույն.**— *Բաստարդ նշանակում է անօրինական ժառանգ։ Դա ամոթալի ու հեգնական ձև չէ, այլ պաշտոնական անուն, որ կրում էին նշանավոր անձանց անօրինական ժառանգները միանգամայն բացահայտ։*

I, 2, 53—54.— **Նրա խորամիտ. գուշակող ոգին || Ուժեղ է Հռոմի ինն սիբիլներից.**— *Սիբիլը, ըստ ավանդության, գուշակ է Կում քաղաքից, որ Հռոմի արքա Տարքվինիուսին առաջարկում է իրենից գնելու գուշակությունների ինը գիրք՝ նվիրված Հռոմի ճակատագրին։*

I, 2, 101.— **Բայց Դեբորայի սրով ես կռվում.**— *Բիբլիական կին մարգարե, որն իր արիությամբ փրկեց հրեաներին Քանանի ցեղերից։ Տե՛ս «Գիրք դատավորաց», գլ. 21։*

I, 2, 132—133.— **Արդ. ես նման եմ այն հպարտ նավին. || Որ միանգամից տարավ Կեսարին ու նրա բախտը.**— *Պլուտարքոսը պատմում է, որ մի անգամ Հուլիոս Կեսարը, ուզենալով աննկատ հասնել իր բանակը, ծպտված նստում է նավ։ Ճանապարհին փոթորիկ է բարձրանում, տագնապ և իրարանցում գցում նավաստիների մեջ։ Այդ ժամանակ Կեսարը մոտենում է նավավարին և ասում. «Բարեկամ, դու տանում ես Կեսարին, նրա հետ միասին և նրա բախտը»։ Նավաստիներն անմիջապես հանդարտվում են, և նավը բարեհաջող հասնում է տեղ։*

---

* *Ծանոթագրությունները կազմել է Ա. Գրիգորյանը։*

I, 2, 134.— **Մահամեդն, արդյո՞ք չէ՞ր ոգեշնչվում իր աղավնիով.**— *Մահամեդը սովորեցրել էր մի աղավնու իր ականջի մեջ լցրած հատիկները ուտել և միամիտ արաբներին համոզում էր, որ ոգին իր մտքերն է թելադրում նրա ականջին աղավնու միջոցով։*

I, 2, 136.— **Ո՛չ, նման չեն քեզ սուրբ Փիլիպոսի դուստրերը չքնաղ, || Ո՛չ Կոստանդնու մայրը՝ Հեղինեն.**— *Բյուզանդական Կոստանդին կայսեր մայրը՝ սուրբ Հեղինեն (241—327) քրիստոնեությունը դարձրեց պետական կրոն։ Նա համարվում էր մարգարե։ Մարգարե էին համարվում և Փիլիպոսի չորս կույս աղջիկները։*

I, 3, 28.— **Մտնում են Ուինչեստերի եպիսկոպոսը և նրա սպասավորները՝ հագած մուգ դարչնագույն զգեստներ.**— *Հոգևոր դատարանի ծառայողները հագնում էին մուգ դարչնագույն զգեստ, իսկ աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները՝ կապույտ։*

I, 3, 30.— **Ածիլված տերտեր...**— *Իբրև կաթոլիկ հոգևորական, եպիսկոպոսը գլխարկը կրում էր ածիլված գլխի վրա։*

I, 3, 35.— **Դու չէ՞իր ներում անառակ կանանց մեղքերը բոլոր.**— *Լոնդոնի հասարակաց տները գտնվում էին Ուինչեստերին պատկանող կալվածքում, որոնցից նա հարկ էր վերցնում։*

I, 3, 39.— **Թող այս վայրը քեզ դառնա Դամասկոս.**— *Ըստ ավանդության Կայենը Աբելին սպանել է Դամասկոսի մոտ։*

I, 3, 54.— **Ուինչեստերի ղա՞գ.**— *Ինչպես «Տրոիլոս և Կրեսիդայում» (V, 2), այստեղ ևս Ուինչեստերի ղագ արտահայտությունը ակնարկ է նրան հարկատու հասարակաց տների մասին։*

I, 4, 1.— **Բարձրանում են պարիսպների վրա Օռլեանի զինագործների վարպետը և նրա որդին.**— *Շեքսպիրյան բեմում պարիսպներ չեն եղել։ Հրետանու պետն ու նրա որդին բեմ են եկել և զենքն ուղղել վերևի հարթակի վրա կանգնած Սոլսբերիին և Տոլբոտին։ Տեսարանը վերարտադրված է ըստ Հոլինշեդի, ճշտությամբ։*

I, 4, 51.— **Եվ ցրիվ կտամ ադամանդակուռ պատերը բանտի.**— *Ադամանդը Շեքսպիրի մոտ, ինչպես և մագնիսը, ալմաստը, օգտագործվում է իբրև արտակարգ ամուր և կարծր քար։*

I, 4, 95.— **Պլանտագենետ, վրեժդ կառնեմ.**— *Տոլբոտը կոմս Սոլսբերիին այստեղ կոչում է Պլանտագենետ՝ թագավորի անունով, որովհետև նա Էդվարդ Երրորդի և կոմսուհի Սոլսբերիի զավակն էր։*

I, 4, 107.— **Աղջիկ կամ պոռնիկ. դոֆին կամ դելֆին.**— *Բնագրում անթարգմանելի բառախաղ է փ-ս, դ-ք կրկնվող հնչյուններով։ Բառացի՝ «Կույս կամ ջաղու, դելֆին կամ շնաձուկ»,—* „Pucelle or puzzel, dolphin or dogfish“։ Dolphin-*ի երկրորդ՝ թագավոր իմաստը շեշտվում է բառախաղով։*

I, 5, 21.— **Ոչ թե զորությամբ, այլ սարսափներով Հաննիբալի պես....**— *Ակնարկում է Հաննիբալի հայտնի խորամանկ ձեռնարկը, որով նա փրկվում է հռոմեական զորքերից։ Վառվող ճյուղեր ամրացնելով ցուլերի եղջյուրներին՝ նա բաց է թողնում հոտը թշնամու վրա։*

I, 6, 4.— **Ով աստվածային դու արարչություն, դուստր Աստրեայի.**— *Աստրեան հռոմեական դիցաբանության մեջ արդարության աստվածուհին է, Յուպիտերի և Թեմիդայի դուստրը։*

I, 6, 6.— **... վառ Ադոնիսի այգիների պես.**— *Ադոնիսին սիրահարված էր Վեներան։ Ադոնիսի պարտեզը հիշատակում է Պլուտարքոսը, որից էլ Շեքսպիրը քաղում է պարտեզի նկարագրությունը։*

I, 6, 22.— **...քան Ռոդոպեի բուրգը փիփիարի...**— *Հետերա Ռոդոպեն՝ հույն կուրտիզանուհին, ըստ ավանդության, իր պատվին Մեմֆիսում բուրգ է կառուցել։*

I, 6, 26.— **...քան թե Դարեհի ակնազարդ տուփը.**— *Պարսկական Դարեհին հաղթելուց հետո, Ալեքսանդր Մակեդոնացին ավար է վերցնում և մի թանկարժեք տուփ։ Այդ զարդատուփում նա պահում էր Հոմերոսի պոեմները, որոնցից չէր բաժանվում նույնիսկ արշավանքների ժամանակ։*

I, 6, 29.— Մենք էլ չենք կանչի սուրբ Դիոնիսին.— *Սուրբ Դիոնիսը Ֆրանսիայի հովանավորն էր։*

II, 1, 7.— **Թմբուկները հարվածում են թաղման քայլերգ.**— *Ավելի ճիշտ՝ թմբուկները խուլ հարվածում են, որպեսզի հակառակորդը չլսի։ Այս դրվագը, որ Շեքսպիրն ամբողջությամբ փոխադրել է Օռլեանի պաշարման տեսարանի մեջ, Հոլինշեդի մոտ վերաբերում է Մանսի գրավմանը։*

II, 3, 6.— Ինչպես սկյութացի քաջ Տոմիրիսը՝ Կյուրոսի մահով.— *Ըստ Հերոդոտի Տոմիրիսը՝ Մասագետ ցեղի թագուհին, իր ամուսնու մահից հետո զորքերն առաջնորդում է կռվի դաշտ, գլխատում է Կյուրոս Մեծին (մ. թ. ա. 529) և գլուխը դցում արյունով լի գինու տիկի մեջ։*

II, 4, 82.— Հեռացիր, բարի Վիլյամ դը լա Պոլ.— *«Բարի», բնագրում* «good» *մակդիրով, որ արհամարհական իմաստ ունի, դիմել են հասարակ ազնվականներին։ Հետագա տեքստը պարզաբանում է այս իմաստը։ Նրանք, ի տարբերություն բարձր դասի ազնվականության, զինանշան չեն ունեցել իրենց սաղավարտի վրա։*

II, 4, 89.— Նա օգտվում է արքայական վայրի արգելումներից.— *Պլանտագենետը **Թեմպլի** պարտեզը արտոնյալ է համարում, որովհետև այդ վայրում արգելված է եղել որևէ բռնություն։*

II, 4, 104.— Իմ հիշողության գրատախտակին ես պետք է գրեմ ձեր անունները.— *Այսպիսի արտահայտության մենք հանդիպում ենք և «Համլետում» (I, 5)։*

II, 5, 6.— ... ինչպես Նեստորը.— *Տրոյան պաշարող հույն արքա զորավարներից մեկը, որին համարել են իմաստության տիպար։*

III, 1, 71.— Ինձ հավատացեք, թեև ջահել եմ.— *Թագավոր Հենրին այդ ժամանակ 5 տարեկան է եղել։*

III, 1, 154.— Որ ձեզ ասացի Էլթեմ պալատում.— *Այն տեղը, որտեղ Հենրին դաստիարակվել է մինչև թագավոր հռչակվելը։*

III, 1, 171—172.— Բարձրացիր, Ռիչարդ, որպես իսկական Պլանտագենետ || Բարձրացիր, նորից քեզ շնորհվել է Յորքի անունը.— *Ռիչարդին այժմ վերադարձնում են իր կոչումը, որից զրկել էին հոր մահապատժի ենթարկվելուց հետո։ Ռիչարդի հայրը մեղադրվել էր Հենրի Հինգերորդին սպանելու մեջ։ Այս տեսարանից սկսած՝ Ռիչարդ Պլանտագենետը կոչվում է Յորք։*

III, 1, 198.— Հենրի Հինգերորդն ինչ որ վաստակեց.— *Բնագրում՝* That Henry born at Monmouth should win all—*ինչ որ ձեռք է բերել **Մոնմութում ծնված Հենրին։ Հենրի Մոնմութը** թագավոր Հենրի Հինգերորդն է, որ այս մակդիրն է ստացել ըստ իր **ծննդավայրի.***

III, 2, 66.— ...չար Հեկատե.— *Հռոմեացիների մոտ դժոխքի աստվածուհի, իսկ միջնադարյան հավատալիքներում՝ վհուկների տիրուհին։*

III, 2, 70.— ...սինյոր.— *Խիստ մոդայիկ դիմումի ձև (ծագումով իտալական, որ այստեղ օգտագործված է ծաղրանքով)։*

III, 2, 97. ...Պենդրագոն.— *Արթուր թագավորի՝ հին անգլիական ասքերի հերոսի, լեգենդար հայրը։*

III, 2, 124.— ...կարծեմ, նիրհում է նրա չար ոգին.— *Նկատի ունի այն չար ոգուն կամ սատանային, որ օգնում է, հովանավորում նրան։*

III, 4, 27.— Թագադրության արքայական ժամին ձեր բարձր պահեք.— *Հենրին, որ արդեն թագադրվել էր Անգլիայի արքա, հայտնում է և Ֆրանսիայի արքա դառնալու իր հեռանկարի մասին։*

III, 4, 38.— **Սրիկա՛, գիտես օրենքը ռազմի. || Ով սուր է հանում՝ նա պետք է մեռնի.**— *Հին զինվորական օրենքով մահապատժի էր ենթարկվում նա, ով սուր էր քաշում արքայի ժամանած վայրում։*

IV, 1, 158.— **...զի Շոտլանդիայի արքան թագ ունի.**— *Հենրիի միտքը հետևյալն է. Կարմիր վարդի ընտրությունը բոլորովին էլ չի նշանակում, թե նա գերադասություն է տալիս Սոմերսեթին։ Այս տրամաբանությամբ թագ կրել կնշանակեր համակիր լինել Անգլիայի ոխերիմ թշնամու՝ Շոտլանդիայի արքային, քանզի նա էլ էր թագ կրում։*

IV, 2, 35.— **Նայիր, փախչում է աղվեսն անորսով, || Բայց մինչև ժամի ավարտը լրիվ...**— *Այսինքն մեկ ժամից հետո։ Ավազի ժամացույցների սովորական չափն է։*

IV, 2, 39—40.— **Լսի՛ր, թմբուկն է, քաջամարտնցի. || Զգուշացումի զանգն է ահարկու...**— *Դոֆինի թմբուկը հնչում է իբրև զանգ, որ նախապատրաստում է Տոլբոտի հոգին մահվան, իսկ հրամանատարի թմբուկը կզարկի մահվան քայլերգ։*

IV, 7, 16.— **...իմ հաջ Իկարը.**— *Կրետե կղզու տիրակալ Դեդալը կարողանում է իր տղայի՝ Իկարի համար թևեր պատրաստել թռչելու, բայց չի կարողանում թռչել սովորեցնել և դրանով կործանում է նրան։ Տոլբոտը ևս պատերազմի մեջ որդուն մղում է առնական վեհության ու կործանումի։*

IV, 7, 18.— **Ո՜, խեղկատակ մա՛հ.**— *Այստեղ, ինչպես և «Ռիչարդ Երկրորդում», մահը հանդես է գալիս հին անգլիական բեմի խեղկատակի ձևով, որ ծաղրում էր մարդկանց ձգտումները։*

IV, 7, 61.— **Ալֆիդես.**— *Հերկուլեսի անվանումներից մեկը։*

V, 1, 28.— **Ի՞նչ, մի՞թե արդեն ձեռնադրել են եպիսկոպոսին.**— *Շեքսպիրի անփութությունն է. Ուինչեստերը հենց սկզբից (I, 3) արդեն կարդինալ էր։*

V, 3, 6—7.— **Դուք արագաշարժ իմ աջակիցներ, որ ենթարկվում եք Հյուսիսի բարձր ամենակալին.**— *Չար ոգիների բնակատեղին համարվել է Հյուսիսային բևեռը։*

V, 3, 35.— **Կիրկե.**— *Ոդիսևսին և նրա ուղեկիցներին խոզ է դարձնում կախարդուհի Կիրկեն։ Նրա մասին Շեքսպիրը հիշատակում է և «Սխալների կոմեդիայում» (V, 1)։*

V, 3, 48.— **Ես համբուրում եմ մատներդ բարակ.**— *Բնագրում ասված է. «Ես համբուրում եմ այս մատները»։ Մեկնաբանները հակված են այն մտքին, որ Սաֆոլկը համբուրում է իր ձեռքը, նախքան նրա ձեռքին դիպչելը։ Ի նշան խորին հարգանքի իր ձեռքը համբուրելու սովորույթի մասին Շեքսպիրն ակնարկում է և «Հենրի Վեցերորդի» երկրորդ մասում (IV, 1) և «Օթելլոյում» (II, 1)։*

V, 3, 116—117.— **Եվ դու կստանաս ազատություն. || Երբ ազատ է Անգլիայի արքան.**— *Այսինքն՝ եթե արքային շրջապատողները թույլ տան ամուսնանալ քեզ հետ։*

V, 4, 61.— **Հղի եմ, արնոտ մարդասպաններ.**— *Հոլինշեդը պատմում է, որ Ժաննա դ'Արկը սկզբում երդվում է իր՝ սատանայի հետ մնացած կապի համար և հրաժարվում է կախարդությունից։ Սկզբում դատապարտվում է ցմահ կալանքի, իսկ հետո, նորից ընկնելով չար ոգու իշխանության տակ, կորցնում է ամոթը և խոստովանում, որ հղի է։*

V, 4, 73.— **Վա՜յ մեզ, Ալանսոն, դու տխրահռչակ Մաքիավելի.**— *Իտալացի պետական գործիչ (1459—1527), պատմաբան, որ հայտնի է իր «Իշխանը» գրքով։ Նրա քաղաքական սիստեմը դիտվում է իբրև բարոյական օրենքների ժխտում։*

V, 4, 131.— **Եվ զարդարելով ճակատն արքային ոչ փայլել թագով.**— *Բնագրում ասված է.* «coronet», *այսինքն փոխարքայի փոքր թագով։*

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I, 1, 128.— **Ուզում է, անշուշտ, տասնհինգ բաժինը.**— *Ըստ Հոլինշեդի՝ արտակարգ դեպքերում գանձվում էր լրացուցիչ հարկ՝ տարեկան սովորական բոլոր հարկերի մեկ տասնհինգերորդի չափով։*

I, 1, 183.— **Գնաց առջևից զոռոզությունը, փառասիրությունն հետևեց նրան.**— *«Առջևից գնում է հպարտությունը, նրա ետևից՝ ամբոխը» առածի ակնարկն է։ Զոռոզությունը՝ Սաֆոլկ և Ուինչեստեր. փառասիրությունը՝ Բուկինգեմ և Սոմերսետ։*

I, 1, 197.— **Յորք.**— *Բնագրում՝* brother York—*եղբայր Յորք.—Յորքն ամուսնացած էր Սոլսբերիի քրոջ հետ։*

I, 1, 210.— **Նույնն է Յորքն ասում. զի ավելի մեծ նպատակ ունի.**— *Յորքն իրեն վերապահում է գահ բարձրանալու և օրինական ժառանգորդի իրավունք սկսած այն պահից, երբ Մորտիմերը նրան բացատրում է իր իրավունքները։*

I, 1, 237.— **Ինչպես մոխրացած ստոնն՝ Ալթեայի || Կալիդոն Երկրի իշխանի սրտին.**— *Ալթեային՝ Կալիդոն երկրի իշխան Մելեագրոսի մոր համար գուշակել էին, որ նրա որդին կապրի այնքան ժամանակ, որքան պահի օջախից հանած խանձողը։ Ալթեան երկար ժամանակ պահում է այդ խանձողը, բայց մի անգամ զայրանում է որդու վրա և գցում խանձողը կրակի մեջ։ Երբ խանձողն ամբողջությամբ այրվում է, մեռնում է և Մելեագրոսը։*

I, 1, 243.— **Ահա՛ թե ինչու ես պիտի կանգնեմ Նեվիլների մոտ.**— *Նեվիլներ՝ ազնվական մի տոհմ, որի հետ ազգակցական կապով կապված էին Յորքն ու Սոլսբերին։ Ակնարկում է վերջիններիս։*

I, 3, 16.— **Մելֆորդի արոտավայրեր.**— *XV և XVI դարերում անգլիական ազնվականները ցանկապատում էին արոտավայրերը և սեփականացնում գյուղացիներին։ Այս պրոցեսը լուսաբանված է Մարքսի «Կապիտալում» (հատ. 1, գլ. XXIV)։*

I, 3, 139.— **Ապա՝ քո դեմքին կկնքեի տասը պատվիրաններ.**—*Պատվիրան գրել, որևէ մեկի դեմքի վրա այն ժամանակվա լեզվով նշանակի չանգռոտել դեմքը տասը պատվիրանների չափ՝ տասը մատներով։*

I, 3, 165—167.— **Ինձ լորդ Սոմերսետն այնտեղ կպահի, || Առանց պարենի. առանց դրամի, || Մինչև որ դոֆինն հաղթի այդ Երկրում.**— *Յորքն ակնարկում է այն դեպքը, երբ Սեֆոլկը անօգնական թողեց Տոլբոտին (տե՛ս «Հենրի Վեցերորդ», Ա, IV, 3 և 4)։*

I, 4, 63.— **Բայց նա շատ կապրի...**— *Ո՞վ ումից շատ կապրի, հայտնի չէ։ Գուշակությունների հատուկ միտումնավոր անորոշություն։*

I, 4, 65.— Aio te, Aeacida, Romanos vincere posse.— ***Դելֆյան պատգամախոսի երկիմաստ պատասխանն է՝ տրված Պիր թագավորին, որը կնշանակի. «Էակիդը (այսինքն՝ Պիրը) կարող է հաղթել հռոմեացիներին» կամ՝ «Հռոմեացիները կարող են հաղթել Էակիդին»։***

II, 1, 4.— **...ծեր բազեն թռչել.**— *Բնագրում ասված է՝ «Ծեր Ջոնը»։ Ջոնը բազեներից մեկի մականունն է։*

II, 1, 47.— **Կբերես հեզ հետ քո սուրը ռազմի.**— *Բնագրում՝* Come with thy two hand sword- *Կբերես հետդ երկկոթանի սուրդ։ Դանը, լայն դաստակով սուր, որ բռնում էին երկու ձեռքով։*

II, 2, 38.— **Բայց այս էդմոնդը...**— *Շեքսպիրն այստեղ, հետևելով Հոլինշեդին, թույլ է տալիս նույն սխալը, ինչ «Հենրի Վեցերորդի» առաջին մասում և «Հենրի Չորրորդում»։ Գահի թեկնածուների մեջ ոչ թե այստեղ հիշատակված էդմոնդ Մորտիմերն է, այլ նրա ազգականը՝ Ֆիլիպի ավագ որդու՝ վաղամեռիկ Ռոջեր Մորտիմերի որդին՝ նույնպես էդմոնդ Մորտիմեր անունով։*

II, 3, 57.— **...բեմ է գալիս ցուպը ձեռքին, որի ծայրին ամուր կապված է ավազով լեցուն մի պարկ.**— *Ի տարբերություն ազնվականների, որ սրերով են կռվել, քաղաքացիները կռվել են փայտերով, որոնց ծայրերին ամրացված են եղել ավազով լեցուն տոպրակներ։*

III, 1, 273.— **Եվ ես կլինեմ այդ հպարտ դուքսին խոստովանահայր.**— *Այսինքն մահվան կպատրաստի նրան։*

III, 1, 311.— **Վայրի կեռներ զենք են վերցրել.**— *Կեռները թեթև զինված իռլանդական թափառաշրջիկներ և գյուղացիներ էին։*

III, 1, 334.— **Ինչին ձգտում ես՝ դու նրան հասիր, կամ ինչպես որ կաս՝ Հանձնվիր մահվան.** *Ծանոթագրող Դելիուսի կարծիքով Յորքի միտքը հետևյալն է. ինքդ նայիր քեզ, ինչպես արքայի, կամ մոռացիր, որ մինչև այժմ դուքս ես եղել։*

III, 1, 367.— **Նա պարեց, կարծես վայրի մի մավր էր.**—*Բնագրում՝* Like a wild Morisco *ինչպես կատաղի մավր։ Խոսքն իսկական մավրերի մասին չէ, այլ Հին Անգլիայում շատ տարածված մավրիտանական պար՝* «morisco» *պարողի մասին է, որն իր ոտքերին ու ձեռքերին զանգակներ էր կապում։*

III, 2, 53.— **Բայց ոչ, մի գնա, մոտ եկ, բասիլիսկ.**— *Հեքիաթային զազան, որ սպանում է միայն հայացքով։*

III, 2, 76.— **Մի՞թե չես լսում, խուլ ես իժի պես.**— *Ըստ ժողովրդական հավատալիքի, իժերը խուլ են։ Նույն արտահայտությունը հանդիպում ենք «Տրոիլոս և Կրեսիդայում» (II, 2) և Սոնետներում (112)։*

III, 2, 90.— **Նզովքի խոսքեր շաղ տվի բարի քամու հասցեին.**— *Քամիների աստված Էոլը քամիները բանտած պահում էր քարայրներում, երբեմն ազատ արձակելով նրանց։*

III, 2, 119.— **Ինչպես Ասկանին, երբ խելագարված Դիդոնին պատմեց || Իր հոր սխրանքը.**— *Ակնարկ է Վերգիլիոսի «Էնեականի» մի միջադեպի։ Էնեասի որդու՝ Ասկանի տեսքով Դիդոնի հետ խոսում է Էրոսը և համոզում սիրելու իր հորը։*

III, 2, 311.— **Ինչպես հառաչը մանրագորայի.**— *Ըստ ժողովրդական հավատալիքի, մանրագորա բույսի արմատը պոկելիս նա հառաչում է։*

III, 2, 386.— **...հարավի ամպոտ անձրևների հետ.**— *Հարավի քամիները Անգլիայում միշտ խոնավություն և անձրև են բերում։*

III, 3, 13.— **Հարությո՛ւն առավ, ո՞ւր է, ցույց տվեք.**— *Բոֆորտի աչքերի առաջ կանգնում է սպանված Գլոստերը։*

IV, 1, 4—5.— **...Կարթնացնի նիհար, քնձռոտ ձիերին, || Որ քարշ են տալու այս եղերական տխուր գիշերը.**— *Գիշերվա դիցաբանական պատկերը կառք է, որին լծված են վիշապներ։ Այստեղ դրանք փոխարինված են ձիերով։*

IV, 1, 37.— **Քո անունը սառ՞ույց հնչում է Գոթիե.**— *Գոթիեն Ուոլթեր անվան հնագույն ազնվականական գրելաձևն է եղել։ Վերջինս համահնչուն է «ուոթըր»* (water-*ջուր) բառի հետ, որն էլ վախեցնում է Սեֆոլկին (տե՛ս ոգու գուշակությունը, I, 4)։ Այդ պատճառով Սեֆոլկը փորձում է այն փոխարինել արխաիկ ձևով։*

IV, 1, 70.— **Պոլ, Պոլ, Պոլ, նեխած ջրափոս.**— Poole-*Պոլ (Սեֆոլկի ազգանունը) համահնչուն է անգլիական* «pool» *ջրափոս բառին։*

IV, 1, 85.— **Հագեցար մորդ սրտի արյունով.**— *Մայր ասելով նկատի ունի հայրենիքը։*

IV, 1, 87.— **Դու Նորմանդիայի ապստամբներին լեզու տվեցիր.**— *Նորմանդական քաղաքների անգլիական ներկայացուցիչներին։*

IV, 1, 96.— **Քանզի սպանեց || Անմեղ արքային մի արյունարբու գոռոզ բռնակալ.**— *Ռիչարդ Երկրորդին սպանել է Հենրի Չորրորդ Լանկաստերը (տե՛ս «Ռիչարդ Երկրորդ»)։*

IV, 1, 98.— **...դրոշների վրա առաջ է տանում մեր կես-արևը.**— *Յորքի դուքսը իրենը դարձրեց Էդվարդ Երրորդ թագավորի զինանշանը, որն ամպերի միջից կիսով չափ երևացող արև էր հետևյալ նշանաբանով՝* Invitis nulibus—*այսինքն՝ «ի հեճուկս ամպերի»։ Այստեղից էլ «Յորքի արևը» արտահայտությունը, որ հանդիպում ենք «Ռիչարդ Երրորդում»։*

IV, 1, 102.— **Գիտցի՛ր, սողոսկեց պալատն արքայի || Լոկ քո միջոցով խայտառակություն և աղքատություն.**— *Նկատի ունի թագուհու կասկածելի վարքը, որը կապված էր Սեֆոլկի անվան հետ։*

IV, 1, 109.— Իլլիրիայի ծովահենն անեղ.— *Պատմության մեջ քիչ հայտնի այս ծովահենի մասին հիշատակում է Ցիցերոնն իր աշխատություններից մեկում՝* «De officus» *(«Պարտականությունների մասին»)։*

IV, 1, 135.— Մի եղեռնագործ, ավազակ գերու դաշույնով ընկավ քնքուշ Տուլլոսը.— *Տուլլոսը Մարկոս Տուլլոս Ցիցերոնն է։*

IV, 1, 136—137.— Իսկ պոռնկորդի Բրուտոսի ձեռքով՝ Հուլիոս Կեսարը: Մեծ Պոմպեոսի գլուխը կերան ցեղերը վայրի.— *Ըստ ավանդության, Բրուտոսը Հուլիոս Կեսարի անօրինական ժառանգն էր։ Իսկ Կեսարի մեծ մրցակից Պոմպեոսը սպանվել է ոչ թե վայրի ցեղերի կողմից, այլ Աքիլլասի և Սեպտիմիուսի կողմից Եգիպտոսում։*

IV, 2, 62.— Չիպսայդ.— *Լոնդոնի ամենամարդաշատ փողոցներից մեկը։*

IV, 2, 74.— ... խայթում է մեղրամոմը.— *Մոմե կնիքով էին կնքվում պարտամուրհակները։*

IV, 2, 92.— Էմանուել.— *Հին եբրայերեն այս բառով, որ նշանակում է «Մեզ հետ է աստված», սկսվում էին շատ պաշտոնական գրություններ։*

IV, 2, 95.— Քո անունը տառերո՞վ ես գրում, թե քո նշանը ունես.— *Անգրագետները ստորագրության փոխարեն նշան էին դնում։ Նույնն անում էին երբեմն և գրագետները։*

IV, 2, 111.— Վեր կաց, սըր Ջոն Մորտիմեր.— *Մինչև հիմա Քեդը իրեն կոչում էր պարզապես Ջոն Մորտիմեր։ Այժմ ասպետական կոչում շնորհելով իրեն՝ իր անվանը կցում է «սըր» տիտղոսը։*

IV, 2, 125.— Չէ՞ որ Ադամն է եղել պարտիզպան.— *Այսինքն՝ մենք բոլորս հավասար ենք, բոլորս սերում ենք Ադամից, իսկ նա էլ պարտիզպան է եղել։*

IV, 3, 6.— Թող մեծ պասը կրկնակի երկար տևի, քանի այժմ էլ ու քեզ արտոնություն տրվի սպանելու իննսունինը անասուն մեկ շաբաթում.— *Դիկին իրավունք է տրվում մեծ պասին անասուններ մորթելու, մինչդեռ ոչ ոք արտոնված չէր այդ իրավունքով։*

IV, 4, 27.— ...Սաութվորկ.— *Լոնդոնի արվարձաններից մեկը՝ Թեմզայից դեպի քաղաքի հարավային մասը։*

IV, 4, 39.— Կիլինգվորթ.— *Քաղաք-ամրոց Ստեֆորդի մոտ։*

IV, 6, 1.— Լոնդոնի քարին.— *Անհիշելի ժամանակներից Լոնդոնի Սիտիում ընկած մի քար է։ Ըստ Հոլինշեդի նրան հարվածել, նշանակում է տիրանալ Լոնդոնին։*

IV, 7, 2.— Սավոյի պալատը.— *Հին արքայական ամրոց, որ կառուցել է կոմս Սավոյը 1245 թ.։ Ըստ Հոլինշեդի՝ այն կործանել է ոչ թե Քեդը, այլ ժողովրդական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ Ուոտ Թայլերը։*

IV, 7, 7.— ...որ Անգլիայի օրենքները դուրս գային միայն ձեր բերանից.— *Այստեղ Քեդին է վերագրված այն, ինչ տարեգիրները պատմում են Ուոտ Թայլերի մասին։*

IV, 7, 30.— ...ճանաչեցիր մսյո Բեզիմեքյուին.— *Ֆրանսիական կոպիտ հայհոյանքի աղավաղված ձև (Համբուրիր իմ...)։*

IV, 7, 62.— Հուլիոս Կեսարի «Մեկնություններում».— *Այս գիրքը Շեքսպիրին հայտնի է եղել Արթուր Գոլդինգի թարգմանությամբ (1565 թ.)։*

IV, 7, 135.— ...ամեն անկյունում նրանց ստիպենք, որ համբուրվեն։— *Այս մանրամասը Շեքսպիրը վերցրել է Հոլինշեդից։*

IV, 9, 26.— Գալլոուգլասներ.— *Իռլանդական ծանր սպառազինված զինվորներ։ Սրանց հանդիպում ենք և «Մակբեթում» (II, 2)։*

IV, 10, 8—9.— ...կամ աղցան, որ վատ չէ մարդու ստամոքսը զովացնելու.— *Բառախաղ է. բնագրում* «sallet»—*նշանակում է աղցան կամ սաղավարտ։*

V, 1, 25.— Բայց Այաքսի պես ես կարող էի || Ցասումս թափել եզների կամ թե այծերի վրա.— *Այաքսը՝ տրոյական պատերազմի հերոսներից մեկը, ցանկանում է վրեժխնդիր լինել իրեն վիրավորած հույներից։ Բայց Աթենաս Պալլասը՝ հույներին հովանավորելով, մթագ-*

նում է նրա գիտակցությունը, և նա իր ցասումը թափում է եզների վրա, կոտորում է՝ ընդունելով նրանց հույների տեղ։

V, 1, 99.— **Աքիլլեսի նիզակի նման.**— *Աքիլլեսի նիզակը օժտված էր կախարդական զորությամբ. խոցելով, միաժամանակ կարող էր և ապաքինել՝ դիպչելով իր իսկ հասցրած վերքին։*

V, 1, 144—147.— **Կանչեք իմ երկու քաջսիրտ արջերին... || Թող գան Վորվիկը և Սոլսբերին։**— *Նեվիլների զինանշանի վրա պատկերված է եղել շղթայված արջ։ Վորվիկը և Սոլսբերին պատկանում էին Նեվիլների տոհմին։*

V, 1, 214.— **Օ, պիղծ այլանդակ.**— *Բնությունը Ռիչարդին «այլանդակությամբ» էր օժտել։*

V, 2, 45.— **Թող ահեղորեն հնչեն օրհասի փողերը ուժգին.**— *Ըստ քրիստոնեական հավատքի, ահեղ դատաստանի օրը փողերը կարթնացնեն մեռյալներին, որոնց դատավճիռը կկարդա աստված՝ ուղարկելով ոմանց հոգիները դժոխք, մյուսներին՝ դրախտ։*

V, 2, 61.— **Ինչպես Մեդեան ջահել Աբսիրտին.**— *Ըստ հին հունական դիցաբանության, Կոլխիդիայի թագավորի դուստր Մեդեան փախչում է Յազոնի հետ։ Տեսնելով ծովի վրա իրենց հետապնդող հորը, նա կտրատում է իր հետ եղող փոքր եղբորը։ Մինչ արքան կհավաքեր որդու մասնատված մարմինը, նա հասցնում է չքանալ տեսադաշտից։*

V, 2, 64.— **Ինչպես Էնեասը տարավ Անքիզին.**— *Վերգիլիոսի «Էնեականում» պատկերված է, որ Էնեասը վառվող Տրոյայից իր ուսերի վրա դուրս է բերում զառամյալ հորը՝ Անքիզին։*

V, 2, 70.— **Սոմերսետը խիստ փառաբանեց թշվառ վհուկին.**— *Խոսքը Բոլինբրոկի գուշակության մասին է. Սոմերսետը պիտի զգուշանա դղյակներից։ Նա հենց մեռնում է «Սուրբ Օլբենսի դղյակ» կոչված գարեջրատանը։ Գուշակության ընդունված երկիմաստություն է սա։*

Մ Ա Ս Ն   Ե Ր Ր Ո Ր Դ

I, 1, 10.— **Լորդեր Կլիֆորդի և Ստաֆորդի հետ || Եվ նրանք ընկան սաստիկ հասարակ զինվորի սրից.**— *Շեքսպիրի անփութությունն է. «Հենրի Վեցերորդի» առաջին մասում Կլիֆորդը սպանվում է Յորքի սրով։ Այստեղ Շեքսպիրը նույնությամբ հետևում է Հոլինշեդին, որից շեղվել էր արդեն սկզբում։*

I, 1, 19.— **Ջոն Գոնտի տոհմը...**— *Այսինքն Լանկաստերների տոհմը, որ Ջոն Գոնտի՝ Լանկաստերի դուքսի ժառանգորդներն էին։*

I, 1, 25.— **Ահավասիկ վախկոտ Հենրու պալատը.**— *Խոսքը ոչ թե պալատի մասին է, այլ պառլամենտի։*

I, 1, 48.— **Երբ Վորվիկը զանգերն իր Բաշի.**— *Բնագրում Վորվիկը իրեն համեմատում է որսորդական բազեի հետ, որի ոտքերին զանգակներ են կախել։*

I, 1, 82.— **Ժառանգություն էր այս դքսությունը և կոմսությունը.**— *Շեշտված է ժառանգություն բառը։ Յորքը հորից կստանա Յորքի դքսությունը, իսկ մորից՝ Մարչի կոմսությունը։ Մոր հիշատակումն այստեղ կարևոր է, որովհետև նրա կողմից է (Մորտիմերների միջոցով) հավաստում գահը տիրելու իր իրավունքը։*

I, 1, 93.— **Մեր քաջ սրերից ձեր հայրերն ընկան.**— *Նկատի ունի Նորթեմբերլենդի և Կլիֆորդի հայրերին։*

I, 1, 109.— **Հայրդ եղել է Յորքի լոկ դուքսը.**— *Սա սխալ է։ Յորքի հայրը եղել է ոչ թե Յորքի դուքսը, այլ Քեմբրիջի կոմսը, որ գլխատված էր ավելի առաջ, քան դքսությունը կարող էր անցնել նրան եղբորից։ Յորքի դուքսը եղել է Յորքի հորեղբայրը։ Այսպես է պատկերված և Շեքսպիրի մոտ (տե՛ս, «Հենրի Վեցերորդ», մաս Ա, III, 1)։*

I, 1, 248.— Ֆոլկոնբրիջը նեղուցն է հսկում.— *Լորդ Ֆոլկոնբրիջի ապօրինի որդին՝ Թոմաս Նեվիլը, Վորվիկի կողմից նշանակված էր փոխծովակալ։ Նա հսկում էր, որ Կալեից Լոնդոն չներխուժեն Հենրիի ֆրանսիական համախոհները։*

I, 2, 51.— Այո, իմ սրով.— *Յորքը չի ուզում պարպել ամրոցը, կարծելով, թե այն պաշտպանելու համար բավական է միայն իր սուրը։*

I, 4, 2.— Հորեղբայրներս ընկան ինձ համար.— *Այսինքն՝ սըր Ջոնը և սըր Հյու Մորտիմերը։*

I, 4, 33.— Բայց Ֆաետոնը արևի կառքից գահավիժեց վար.— *Ըստ դիցաբանության, Ֆաետոնը մի անգամ թույլտվություն է ստանում հորից՝ Ֆեբոսից, վարելու «Արևի կառքը», որով Ֆեբոսը ամեն օր շրջում էր երկնակամարում։ Բայց Ֆաետոնը չկարողանալով սանձել անզուսպ երիվարներին՝ ջախջախվում է։ Կլիֆորդը Յորքին Ֆաետոն է կոչում, որովհետև նա ևս չի կարողանում լուծել իր իսկ դրած խնդիրը։*

I, 4, 78.— Դիկ.— *Ռիչարդի (հետագայում՝ Ռիչարդ Երրորդ) անվան փաղաքշական ձևը։*

I, 4, 119.— Քո հայրն է կրում Երուսաղեմի, զույգ Սիցիլիայի || Եվ Նեապոլի թագավորության խորհրդանշանը.— *Թվարկված բոլոր տիրույթները պատկանել են Ռենեին միայն անվանապես։*

I, 4, 149.— Ավելի դաժան, քան թե Վրկանա վագրերն անողորմ.— *Վրկանիա՝ Կասպից ծովից հարավ ընկած մի շրջան, որ հայտնի էր արյունարբու վագրերով։*

II, 1, 26.— Աչքի՞ս է թվում, թե՞ ես տեսնում եմ երեք արևներ.— *Ճիշտ այսպիսի տեսիլքի մասին գրում է Հոլինշեդը։ Էդվարդի՝ Մորտիմերի կողմում տարած հաղթանակից առաջ Կոմս Մարշի աչքին երևում են երեք արեգակ, որոնք անմիջապես ձուլվում են մեկի մեջ։ Այս տեսիլքը նրան այնքան է ոգևորում, որ նա կատաղած հարձակվում է թշնամիների վրա և փախուստի մատնում։*

II, 2, 48.— ...ում թշվառ հայրը դժոխք է գնում ժլատության համար.— *Թագավորը նկատի ունի այն առածը, ըստ որի որդիներն անպատիժ օգտվում են բարիքներից, իսկ այդ բարիքները ձեռք բերելիս գործած մեղքերի համար անդրաշխարհում պատժվում են հայրերը։*

II, 2, 134.— Այստեղ է ահա քո մայրը կանգնած.— *Այսինքն՝ մայրը հայտնի է, թե ով է։ Անհայտը հայրն է։*

II, 2, 140.— Դու Նեապոլի հասարակ երկաթ, բայց մեր անգլիական ոսկով սեղմված.— *Վիրավորական ակնարկ այն մասին, որ անվանապես միայն Նեապոլի թագավորի աղջիկը Անգլիա եկավ իբրև աղքատ։*

II, 2, 146—147.— ...կառնեի մի խարամ ծղոտ հազար կոռնով || Միայն թե այս լիրբն իրեն ճանաչեր.— *Շեքսպիրի ժամանակներում ծղոտի պարանով ամոթանքի սյունին էին կապում անառակ կանանց։*

II, 3, 15.— Ձի՞ որ քո եղբոր արյունը խմեց.— *Այս արտահայտությունը Շեքսպիրն օգտագործում է և հինգերորդ արարվածում, ուր Սոմերսետը Վորվիկին հայտնում է իր եղբոր՝ Մոնտեգյուի մահը։ Խոսքը Սոլսբերիի քիչ հայտնի ապօրինի որդու մասին է։ Հոլինշեդը թեթևակի պատմում է, որ նա զոհվել է Տոութոնի կռվում։*

II, 5, 3.— Երբ հովիվ տղան բերև փչում է մատների վրա.— *Որպեսզի տաքացնի մատները սառնաշունչ առավոտյան։*

II, 5, 54.— Վատ է այն քամին, որ փչում է զուր.— *Առած է, որի իմաստն այն է, թե ինչից պետք է կարենալ օգուտ քաղել։*

II, 5, 59—60.— Ո՞վ է սա, աստվա՛ծ, հորս դեմքն ունի, || Ում սպանեցի չճանաչելով.— *Այս հայրասպանության պահը Շեքսպիրը ստեղծել է Հոլինշեդի ազդեցությամբ, որն ասում է. «Այդ ճակատամարտը հակաբնական է, քանզի այդտեղ կամ որդին էր սպանում հորը, եղբայրը՝ եղբորը, ազգականը՝ ազգականին, ծառան՝ տիրոջը»։*

II, 5, 72.— Երբ առյուծներն են պայքարում իրենց որջերի համար, || Անմեղ գառներն են տառապում նրանց ընդհարումներից.— *Առյուծներ ասելով նկատի ունի յորքերին և լանկաստերներին, որ պայքարում են գահի համար։ Գառները նրանց հպատակներն են։*

II, 5, 92.— ...Քեզ կյանք տվեցի չափազանց կանուխ || Եվ չափազանց ուշ կյանքդ խլեցի.— *Այս արտահայտությունը մեկնաբանողները դժվարանում են բացատրել։ Հավանականը հետևյալն է. ես շտապեցի քեզ կյանք պարգևել, այսինքն՝ չմտածված քայլ էր դա, եղավ, բայց այդ դեպքում ճիշտ կլիներ քեզնից խլել կյանքդ, երբ դու դեռ անհասկացող մանուկ էիր։*

II, 6, 106—107.— Թող Ջորջը լինի Գլոստերի դուքսը. իսկ ես՝ Կլարենսի || Քանզի Գլոստերի դքսությունում կա չարագուշ մի բան.— *Գլոստերի շատ դուքսեր, այն ժամանակաշրջանում ապրող, իրենց կյանքն ավարտել են ողբերգական ձևով, ինչպես և ինքը՝ Ռիչարդը։*

III, 2, 7.—Կյանքը կորցրեց Յորքի տան համար մղվող պայքարում.— *Ջոն Գրեյը զոհվել է՝ կռվելով Լանկաստերների համար։*

III, 2, 101.— Թեև ամուրի, || Բայց դուստրեր ունեմ.— *Խոսքը Էդվարդի անօրինական դուստրերին է վերաբերում։*

III, 2, 111.— Մեկ օր ավելի || Քան սովորական հրաշքն է տևում.— *Ըստ հավատալիքի՝ հրաշքը տևում է ինը օր։ Տասնօրյա հրաշքը համարվել է արտակարգ։*

III, 2, 160.— ...Կամ ինչպես արջի || Ձագը նորածին, որը չի կրում իր մոր պատկերը.—*Կարծիք է եղել, թե արջի ձագը ծնվելիս մի տձև զանգված է, որը լիզելով մայրը տալիս է արջի ձև։*

III, 2, 187.— Սինոնի նման.— *Հույն զինվոր, որը գործադրեց փայտե ձիու խորամանկությունը, որով հույները թափանցեցին Տրոյա և նվաճեցին այն, ինչպես պատմում է Վերգիլիոսի «Էնեականը»։*

III, 2, 189.— Պրոտեոս.— *Հունական աստված, որ օժտված էր կերպարանքը փոխելու ունակությամբ։*

III, 3, 44.— Մեր կոմս Վորվիկն է.— *Մարգարիտի պատկերացմամբ անգլիական բոլոր կոմսերը իր հպատակներն են, նրա կոմսերը, չնայած վերջինս ապստամբվել էր նրա դեմ։*

III, 3, 81.— Գոնտին, || Ով Իսպանիայի մեծ մասը գրավեց.— *Ջոն Գոնտը ամուսնանալով Կաստիլիայի արքա Պեդրո Դաժանի աղջկա հետ, հավակնություն է ունեցել տիրելու Կաստիլիայի գահը։ Նա արշավանք է ձեռնարկել Իսպանիայի վրա և մի քանի ոչ մեծ հաղթանակներ տարել, բայց շուտով էլ ձեռնունայն վերադարձել է տուն։*

III, 3, 127.— Բայց համառանքը || Չի կարող տանել.— *Էդվարդին վախեցնում է ոչ թե ուրիշների ատելությունն ու զայրույթը, այլ մերժված լինելու հանգամանքը։*

III, 3, 189.— Մի՞թե ներեցի վիրավորանքը, || Որ նա հասցրեց եղբորս աղջկան.— *Հոլինշեդը տեղեկացնում է, որ Էդվարդը մի անգամ հյուր լինելով Վորվիկի տանը, փորձում է պատվազուրկ անել նրա աղջկան, կամ ազգականուհուն։*

III, 3, 222.— Որ Ֆրանսիայի Լյուդովիկ արքան ծաղրյալ մարդիկ է ուղարկում նրան.— *Գոյություն է ունեցել սովորություն, ըստ որի, բարեկամները հարսանիք էին ուղարկում դիմակահանդեսի զգեստներ հագած մարդկանց։ Այստեղ Լյուդովիկը նկատի ունի գուջեքը։*

III, 3, 227.— Ես պիտի կրեմ ուռենու պսակ.— *Անգլիական ժողովրդական պոեզիայում ուռենին հանդիպող դժբախտ սիրո խորհրդանշանն է։ Այստեղ այն օգտագործված է հեգնանքով։*

III, 3, 240.— ...Ավագ աղջկաս... || Կմիացնեմ սուրբ ամուսնությամբ.— *Անճշտություն է։ Էդվարդի հետ նշանադրված է եղել Վորվիկի ոչ թե ավագ, այլ կրտսեր աղջիկը՝ Աննան։ Ավագը Կլարենսի կինն էր։ Իր սխալը Շեքսպիրն ուղղում է «Ռիչարդ Երրորդ»-ում։ Էդվարդի այրին լեդի Աննան է։*

IV, 1, 48—49.— Այդ խոսքի համար լորդ Հեստինգսն արժեր, || Որ Հենգերֆորդի աղջկան առներ.— *Երբ մահանում էր որևէ ազդեցիկ տան գլխավորը, որ չուներ արու ժառանգ, թագավորն*

իրավունք ուներ եղած ժառանգորդուհու համար ամուսին ընտրել։ Այս ձևով շատ անգամ բարձրանում և հարստանում էին թագավորների սիրելիները։ Տվյալ դեպքում թագավորը Հենգերֆորդի ժառանգորդուհու հետ ամուսնացնում է ոչ թե Հաստինգսին, այլ նրա որդուն։

IV, 1, 70.— Մի՞թե չեմ եղել ազնվատոհմ աղջիկ.— *Լեդի Գրեյը մոր կողմից Հենրի Հինգերորդի ազգականուհին էր։*

IV, 2, 18.— ...ինչպես Ոդիսևսն ու Դիոմեդը.— *«Իլիականում» պատմվում է, որ ըստ գուշակության՝ Տրոյան չէր գրավվի, եթե տրոյացիների դաշնակից թրակյան թագավոր Ռեզի ձիերը թեկուզ մի անգամ ճաշակեին տրոյական կերը և խմեին Քսանֆ գետի ջուրը։ Իմանալով այս՝ Ոդիսևսն ու Դիոմեդը, օգտվելով գիշերային խավարից, սպանում են քնած արքային 12 պահակներով և գողանում թրակյան սքանչելի ձիերը։*

IV, 6, 69.— Մոտ եկ, Անգլիայի հույս ու ապավեն.— *Ռիչմոնդի այս շեշտված կարևորումը, որի՝ գահին տիրանալու իրավունքները աննշան էին, բացատրվում է այն դերով, որ նա հետագայում խաղաց Անգլիայի քաղաքական պատմության մեջ, դառնալով Թյուդորների դինաստիայի հիմնադիրը և Եղիսաբեթ թագուհու պապը։*

IV, 7, 9.— ...մեր դքսությունից ներս մտնել ճպարտ.— *Յորք քաղաքը դքսության գլխավոր քաղաքն է, որի անունով էլ Էդվարդը կոչվում է։ Նա մտնում է Յորք իբրև անառարկելի օրինական տեր։*

V, 1, 27.— Հիշիր, թե ով է քեզ բարձրացրել ‖ Եվ ով է գցել.— *Այս հպարտ հայտարարությունը հիշեցնում է Վորվիկի հայտնի մականունը՝ «թագավոր գահակալող»։*

V, 1, 37.— Ատլաս.— *Դիցաբանական հսկա, որն իր ուսերի վրա պահում է երկրագունդը։*

V, 1, 46.— Դու թշվառ Հենրուն եպիսկոպոսի պալատում թողիր.— *Լոնդոնի եպիսկոպոսի պալատում յորքերը բանտեցին թագավորին։*

V, 1, 48.— Մինչև իսկ այդպես: Բայց դեռ Վորվիկն ես.— *Այսինքն չնայած անհաջողություններին, Վորվիկը մնում է Վորվիկ, պետության առաջին մարդկանցից մեկը։*

V, 1, 95.— Հեփթայե.— *Աստվածաշնչում հիշատակված իսրայելական առաջնորդ-զորավար, որ երդվել էր հաղթության դեպքում աստծուն զոհաբերել նրան, ով առաջինը կհանդիպի քաղաքում։ Առաջինը հանդիպում է իր աղջիկը, որին և զոհաբերում է։*

V, 2, 15.— Յուպիտերի տարածվող ծառը.— *Աստվածների արքայի ծառը ծառերի արքան է՝ կաղնին։*

V, 4, 18.— Նեդ.— *Էդվարդի փաղաքշական անունը։*

V, 5, 2.— Տարեք Օքսֆորդին Հեմսի ամրոցը.— *Գտնվում է Ֆրանսիայի հյուսիս-արևմտյան շրջանում, որն այն ժամանակ դեռ պատկանում էր Անգլիային։*

V, 5, 8.— Հանդիպենք վերին Երուսաղեմում.— *Այսինքն՝ դրախտում։*

V, 5, 23.— Այն ժամանակ դու պետք է հագնեիր հորից շրջազգեստ ‖ Եվ Լանկաստերի տաբատը բնավ չհափշտակեիր.— *Եթե Հենրի Վեցերորդը նույնքան վճռական և համարձակ լիներ, ինչպես իր որդին, Մարգարիտը կարող էր չդավաճանել իր բնությանը և իր վրա չվերցնել ամուսնու տղամարդկային հոգսերը։*

V, 5, 25.— Թող Եզոպոսի առակներն ասեն ձմռան գիշերին.— *Ակնարկի սրությունն այն է, որ ըստ ավանդության Եզոպոսը կուզ էր ինչպես Ռիչարդը։*

V, 5, 50.— Թառեր... Թառեր...— *Գլոստերի այս խոսքերը ուղղված են Կլարենսին։ Նրանց իմաստը պարզում է հաջորդ տեսարանը։*

V, 6, 10.— Ռոսցիուս Կվինտոս.— *Հռոմեացի նշանավոր կոմիկ դերասան (30 մ. թ. ա.—62 մ.թ.)*

V, 6, 21.— Ես Դեդալոսն եմ.— *Կրետեի արքա Մինոսից փրկվելու համար Դեդալոսը իր և տղայի համար մոմե թևեր է պատրաստում։ Թռչելիս պատանին շատ է մոտենում արևին, մոմը հալչում է։ Պատանին ծովն է ընկնում ու խեղդվում։*

V, 6, 56.— Ինչ դեռ լսել եմ, ուրեմն, Գլոստեր...— *Հենրին չի հասցնում ավարտել խոսքը, հավանաբար այն մասին, որ նա ծնվել է ոտքերը առաջ, որ համարվում էր չարագործի նշան։ Գլոստերը մահացու հարվածում է նրան և Հենրին խոսքն ավարտում է այլ կերպ։*

V, 7, 25.— Դու ցույց տվեցիր ինձ ճանապարհը, դու էլ կատարիր.— *Ըստ ծանոթագրող Ստիվենսի, առաջին «դու»-ն ասելիս Գլոստերը ցույց է տալիս իր գլուխը, իսկ երկրորդին՝ ձեռքը։ Առաջինն իր մտադրությունների արարիչն էր, երկրորդը՝ կամակատարը։*

«ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԴ»

«Ռիչարդ Երրորդը», ամենայն հավանականությամբ, գրված պետք է լինի 1592—1593 թվականներին։ Պիեսի առաջին հրատարակությունը՝ 1597-ի քվարտոն (առանց հեղինակի անվան հիշատակության) պարունակում է անկատար մի տեքստ, որ վերատպվում է 1598-ի քվարտոյում (արդեն Շեքսպիրի անվամբ), ինչպես և 1602, 1605, 1612, 1622 թվականներին։ 1623-ին հրատարակված ֆոլիոյի տեքստը, հավանորեն, ընդօրինակված է ձեռագրի հիման վրա, քանի որ քվարտոյից 230 տող ավելի ունի, ինչպես և այս վերջինս էլ 40 տող ունի, որ չկան ֆոլիոյում։ Ժամանակակից հրատարակությունները հիմք են ընդունում այս երկու տեքստերը միաժամանակ։

Սյուժեի աղբյուրը, ինչպես և Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմների մասին գրված գործերի հիմնական աղբյուրը Հոլինշեդի «Քրոնիկներն» է, որտեղ, ի դեպ, Ռիչարդ Երրորդի թագավորության պատմությունը շարադրված է ըստ Թոմաս Մորի «Ռիչարդ Երրորդի պատմությունը» երկի։ Գործողության ժամանակը՝ 1470—1485։

Հնարավոր է, որ Ռիչարդին առանձին պիես նվիրելու գաղափարը ծնված լինի այն ժամանակ, երբ ավարտում է «Հենրի Վեցերորդ» տրիլոգիան։ Վերջին երկու մասերում արդեն ձևավորվում են Ռիչարդի բնավորության հիմնական գծերը՝ փառասիրություն, նպատակին հասնելու պողպատյա կամք, դաժան միջավայրում անգամ անհասկանալի դաժանություն։ Եվ այնուամենայնիվ «Ռիչարդ Երրորդը» «Հենրի Վեցերորդի» շարունակությունը չէ, այլ ինքնուրույն ողբերգություն պատմական թեմայով, ինքնուրույն հենց նրանով, որ հեղինակն այստեղ դուրս է եկել քրոնիկի սահմաններից. դուրս է եկել այնքանով, որ ինքնուրույն մոտեցում է հանդես բերել գլխավոր կերպարի նկարագիրը գծելիս։

Հաստատված է, որ Հոլինշեդը իրքը Կարմիր և Սպիտակ վարդերի կռվի նկարագրությունը քաղել է Հոլլի ավելի հին քրոնիկից, որտեղ Ռիչարդը մինչև Էդվարդ Չորրորդի մահը (1483) պատկերացվում է բռնկվող ու վճռական, առավել անհաշտ և, թերևս, դաժան, քան Յորքի տան մյուս անդամները, բայց ո՛չ երբեք ստոր հանցագործ և նենգ, ոխստադրուժ ոճրագործ։ Այստեղ ոչ մի խոսք չկա նաև նրա ֆիզիկական վանող արատների մասին՝ մի ուսը կարճ, մի ուսը բարձր, կուզիկ, ծուռոտ և այլն։ Ռիչարդի վարքը Էդվարդի մահից հետո Հոլինշեդը տալիս է՝ ամբողջովին հենվելով «Ուտոպիայի» հռչակավոր հեղինակ Թոմաս Մորի վրա։ Մորի Ռիչարդն

արդեն այլ նկարագիր ունի. նա ֆիզիկապես ու բարոյապես մի հրեշ է, մի ճիվաղ:

Ինչպես երևում է, Շեքսպիրը Ռիչարդ Երրորդի բնավորությունը կերտելիս հիմնականում հետևել է Մորին: Դա վերաբերում է և «Հենրի Վեցերորդի» վերջին երկու մասերում հանդես բերված Ռիչարդին, և, առավել ևս, «Ռիչարդ Երրորդում» հանդես բերվածին: Շեքսպիրը որոշակիորեն խտացնում է գույները՝ իր հերոսին ներկայացնելով որպես արտակարգ մի չարագործի: Ջորջը և Ռիչարդը վրդովվում են, տեսնելով, որ Էդվարդ Չորրորդը կնության է վերցնում լեդի Գրեյին (մաս Գ, III, 2), Նրանց դուրս գալուց հետո Ռիչարդը մի մենախոսության մեջ բաց է անում իր գաղտնի մտածումները: Ֆիզիկապես այլանդակ լինելը նրա հոգին չարությամբ է լցնում գեղեցիկ մարդկանց նկատմամբ: Վրեժ լուծելու միայն մեկ միջոց կա՝ տեր և իշխանավոր լինել դրանց վրա: Այստեղ, թերևս իր համար էլ աննկատելի, տոհմական պատվի համար մարտի մտածը դառնում է մի մարդ, որ այսուհետև պետք է ապրի իր փառասիրական նկրտումներին հագուրդ ու գոհացում տալու համար: Այժմ նա պատրաստ է «արյունոտ կացնով» ճամփա բաց անել իր համար մինչև գահը: Եվ ահա ծայր են առնում նրա սպանությունները: Դեռևս «Հենրի Վեցերորդի» երրորդ մասում ռազմական իրադրության մեջ նա սպանում է Էդվարդին՝ Ուելսի թագաժառանգին, այնուհետև՝ Թաուերում արգելափակված Հենրի Վեցերորդին:

Այս ողբերգությունը կանգնած է միջնադարյան միստերիայի և Վերածնության շրջանի դրամայի ճամփաբաժանում, ավելի կամ պակաս վառ արտահայտված էպիզոդների հերթական ցուցադրում, էպիզոդներ, որոնք ինչ-որ չափով ինքնամփոփ են, ավարտված: Սա գալիս էր հնից: Նորը կենտրոնական հերոսն է, նա, որի համար ստեղծված է դրվագը, նա, որ ինքն է ստեղծում այդ դրվագը: Այդ կենտրոնական հերոսն էլ բերում էր իր կենտրոնական, երկի հիմքում ընկած գաղափարը: Բոլոր էպիզոդները, այսպիսով, «հայացքով» դարձած են դեպի հերոսը, այս դեպքում՝ միակ հերոսը, քանի, որ «Ռիչարդ Երրորդի» մյուս հերոսները, իսկապես, երրորդ կարգի են, ոչ թե երկրորդ: Հիշենք, որ տեքստի 3603 տողից 1128-ը կազմում են Ռիչարդի դերը:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե երիտասարդ Շեքսպիրը տուրք էր տալիս այն մոնումենտալությանը, որ հատկանշական էր, ասենք, Մառլոյի ողբերգություններին (Թամեռլան, Ֆաուստ): Իրականում Ռիչարդը շատ ավելի է ուժեղ և ուժեղ է հենց իր հոգեբանական բարդ խարակտերով: Մի կողմից՝ արտակարգ հնարամտություն, կամքի ապշեցնող լարում, մտքի գերագույն ճիգ, մյուս կողմից՝ խոշտանգելու, ոչնչացնելու, սպանելու դիվային մոլուցք: Զարմանալի մի տպավորություն է գործու[մ] Շեքսպիրի բացասական հերոսը հենց նրանով, որ իր ամբողջ վիթխարի հասակո[վ] բարձրանում է բացասական հերոսների մեջ: Նրան շրջապատողները,—բարեկամ[,] թե թշնամի, միևնույն է,—թերևս այդքան խեղճ ու կրակ չթվային, եթե չգտնվեի[ն] նրա մռայլ ստվերի տակ: Եթե եղբայրներից Էդվարդը տկար մի ցանկասեր է, ապ[ա] Գևորգը ձախողված մի բանսարկու է: Ռիչարդի համար ոչինչ են այդ բուկինգեմներ[ը]

հեստինգսները, ստենլիները: Նրա հակառակորդների մեջ մեկը կա միայն, որ հակա-կի է իր բարոյական նկարագրով, և այդ մեկն էլ կին է՝ Մարգարիտը, Հենրի Վեցերորդի կինը: Այդ պատճառով չէ՞ արդյոք, որ երկու թագուհիների ու Յորքի դքսուհու և Ռիչարդի հանդիպման տեսարանը (IV, 4) դրամատիկական արվեստի մի կատարելություն է ստացվել:

Ռիչարդի ներքին ուժը, նրա պերճախոսությունը, համոզելու նախանձելի կարողությունը հանդես են գալիս հենց այն տեսարանում, երբ նա Հենրի թագավորի դիակի մոտ գայթակղում է լեդի Աննային (I, 2): Շատ քննադատներ այս տեսարանը համարել են հոգեբանորեն չպատճառաբանված. չէ՞ որ այդ նույն չարագործի ձեռքով են ընկել ոչ միայն սկեսրայրը, որի վերքերից դեռ արյուն է ծորում, այլև ամուսինը՝ թագաժառանգ Էդվարդը: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ պատմական Աննան, Վորվիկի դուստրը, իսկապես ամուսնանում է Ռիչարդ Գլոստերի հետ, որ իր հարազատների հալածողն ու սպանողն է եղել: Վկայակոչելով պատմական փաստը, հեղինակը կարող էր արդարանալ, իհարկե, բայց նա այս դեպքում արդարանում է հենց իբրև արվեստագետ: Վերցնելով իրոք անհավանական մի տեսարան, նա դարձնում է հավանական: Ինչո՞վ. իր հերոսի մտքի վիթխարի ուժն ու փայլը ցուցադրելով: Ռիչարդը կարող էր հենվել իր դարի և իր ժամանակի բարքերի վրա. մի՞թե այդ արյունալի խրախճանքը չէր կատարվում ամենուր և հենց իրենց աչքերի առաջ: Բայց, այնուամենայնիվ, Ռիչարդն այդ խելագար առաջարկությունը չէր անի, եթե չճանաչեր կանացի հոգին: Համլետի հայտնի բացականչությունը, թե՝ «Թուլությո՛ւն, անունդ կին է»,—չէր վերաբերում միայն Գերտրուդին, իհարկե, լեդի Աննան պակաս դյուրահավատ, միամիտ կանանցից չէ: Չարագործը նրան չի գրավում, այլ կախարդում է, հմայում, թվում է այդպես նապաստակն է առաջանում դեպի վիշապ օձի բացված երախը...

Ռիչարդի հնարամտությունն անբավ է, իսկապես: Ամեն մի նոր տեսարանում այն նոր կողմով է հանդես գալիս: Ահա թագավոր «ընտրվելու» տեսարանը (III, 7): Դերաբաշխումից առաջ նա խորապես ուսումնասիրում է դերակատարներին, իր վրա վերցնելով և՛ գլխավոր դերակատարի, և՛ ռեժիսորի դերը: Բայց կա մի գործող անձ այս խաղում, որին և պատկանում է վերջին խոսքը, թեև նա չի բարձրանում. ժողովուրդն է դա: Ռիչարդը գիտեր ժողովրդին. գիտեր նրա և՛ ուժը, և՛ թուլությունը: Նա լավ էր հիշում, թե ինչպես ժողովրդի իսկ պահանջով նրկրից վտարվեց գոռոզ Սեֆոլկը. նրա հիշողության մեջ դեռ թարմ էր Ջեկ Քեդի գլխավորած ժողովրդական հուժկու ապստամբությունը: Բայց հասու էր նաև նրա թուլությանը. գիտեր, որ վտանգավոր չէ, քանի դեռ անկազմակերպ է: Անկասկած, ամբոխի մեջ կգտնվեն մարդիկ, որոնք կհասկանան իր սարքած խաղը: Բայց ո՞վ կհամարձակվի իր կարծիքն առաջինը հայտնել: Եվ նա շահում է խաղը: Տեսնելով անշրջահայաց Բուկինգեմի անճարակությունը, նա ժողովրդի առաջ է ելնում երկու եպիսկոպոսների ուղեկցությամբ, աղոթագիրքը ձեռքին և ահա ստացվում է, որ ժողովրդի թախանձանքին անսալով է միայն, որ նա համաձայնվում է ընդունել թագը:

Ռիչարդի դաժանությունը սահման չի ճանաչում: Միայն դահճի հետ կարելի է համեմատել նրան: Բայց նույնիսկ դահիճը չի կարող առանց սարսափի ձեռք բարձրացնել երեխայի վրա, մինչ Ռիչարդի խղճի վրա երկու փոքր իշխանների բռնի մահն է ծանրացած: Եվ ահա պարզվում է, որ մի դահճի չափ դաժան ու քարասիրտ լինելով հանդերձ, դահիճ չի նա: Այդ երևում է երկու փոքրիկ իշխանների սպանությունից հետո, երբ կորցնում է հոգեկան հավասարակշռությունը, տարեգրի խոսքերով ասած՝ գիշերները չի քնում, վեր է ցատկում անկողնուց, նետվում է դեպի սուրը, ինչ-որ քրթմնջում է քթի տակ... Ողբերգության մեջ շրջադարձային այս մոմենտի բարձրակետը հանդիսանում է մոր անեծքի տեսարանը (IV, 4): Ռիչարդն, իհարկե, չի երկատվում անմիջապես, բայց նրա գրանիտե կամքը տալիս է իր առաջին ճեղքը: Նա սկսում է քննադատաբար նայել իր շուրջը. բավականաչափ ամո՞ւր է իր կառուցած շենքը: Ո՛չ, նրա թագավորության պարիսպները կանգնեցված են «բարակ ապակուց»: Ստացվում է անելանելի մի վիճակ. ետ գնալ չի կարող, առաջ գնալն իմաստ չունի: Նոր սպանություննե՞ր: Անպայման: Բայց որևէ բան կլուծե՞ն դրանք: Նա երկրորդ անգամ է ցանկանում ամուսնանալ, բայց առանց խանդավառության: Նրա հակասական հրամանները մատնում են իր հուզված, խռովյալ վիճակը. նրա կողմնակիցների նսրացած շարքերը խռովքը փոխում են բացահայտ տագնապի:

Ռիչարդ Երրորդի անկումը ցույց տալու համար Շեքսպիրը դիմում է առեղծագործական մի հնարի, որ պետք է կիրառեր նաև հետագայում՝ իր մեծ ողբերգություններից մի քանիսի մեջ. դա նույն անձի կրկնակի անկումն էր, անձնական և հասարակական: Նախքան անդունդի եզրին հասնելը նա արդեն տեսնում էր այն: Եվ ահա իր եսի և շրջապատող աշխարհի հակամարտությունը տեղափոխում է ներսը, իր էության երկատված մասերի մեջ: Նա արդեն նկատում է իրեն, տեսնում է ինչպես որ կա և՝ սարսափում է իրենից: Հիմա է ուշքի գալիս, երբ ուշ է արդեն. «Ոչ ոք ինձ չի սիրում: Ոչ ոք իմ մահից հետո ինձ չի խղճալու» (V, 3):

Տրամաբանական է մտածել, որ նույնը պետք է կատարվեր նաև քաղաքական գծով: Մի մարդ, որ բնաջնջել էր բոլոր թշնամիներին և կիսաթշնամիներին, չէր կարող վճռական րոպեին հույս դնել որևէ օգնության վրա: Կործանումից հետո այսպիսի մարդիկ մենակ են մնում և մենակությունն է հենց նրանց կործանումը: Բայց ճշմարիտ հերոսական բնավորությունները սիրում են նույնիսկ մահը դիմավորել հերոսաբար: Վերջին մարտը Ռիչարդը մղում է ոչ իր իշխանության համար, այլ իր համար, իր հպարտության համար: Ահա՛ թե ինչու է նա խենթանում, երբ զրկվում է նժույգից: «Մի ձի, մի ձի տվեք,—բացականչում է նա:—թագավորությունս մի ձիու կտամ» (V, 4):

Ստեղծելով Ռիչարդի տիտանական կերպարը, խտացնելով գույները մինչև այն սահմանները, որ թույլատրելի է համարում մոնումենտալ ռեալիզմը, Շեքսպիրը կարծես թե դիմում է իր ժամանակակիցներին, ասելով.երբ պետական առողջ կյանքի հիմքերը խախտված են, երբ ոտնահարված են օրենքն ու օրինականությունը,

իշխանության ղեկի մոտ կարող են հայտնվել միայն նրանք, որոնց միակ զենքը դաժանությունն է, կոպիտ ուժը, օրենքի ոտնահարումը:

Այդպես հասկացան նաև բանաստեղծի հետևորդները:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

I, 1, 2.— Փառավոր ամառ բերեց մեզ համար Յորքյան արևով.— *Նկատի ունի Էդվարդ Չորրորդի զինանշանը, որը արև էր, ի հիշատակ այն երեք արևների, որոնք, ասում են, երևացել են այն ճակատամարտի ժամանակ, որի հաղթական վախճանը գահ բարձրացրեց Յորքերի տան ներկայացուցիչ Էդվարդ Չորրորդին:*

I, 1, 40.— Բերդ...— *Նախապես թագավորական պալատ է եղել Լոնդոնում: Իսկ հետագայում վեր է ածվել բանտի, ուր և թագավորները բանտարկել են իրենց հակառակորդներին:*

I, 1, 42.— «Գ» տառն է հիմքից բնաջնջելու Էդվարդի տոհմը.— *Այդ մասին նշվում է Հոլինշեդի «Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի քրոնիկներում»: Այն ասում է, որ «Կլարենսի մահվան պատճառ դարձավ մի հիմար գուշակություն, ըստ որի Էդվարդ արքայից հետո կթագավորի նա, որի անվան առաջին տառը «Գ» է (անգ.* George*): Սակայն իրականում գուշակը նկատի է ունեցել Գլոստերին, որը և հաստատում է Հոլինշեդը:*

I, 1, 70.— Անառն Վուդվիլ.— *Թագուհու եղբոր՝ կոմս Ռիվերսի ազգանունն է:*

I, 1, 85.— Շոռ.— *Լոնդոնի ոսկերիչներից մեկի կինը, Էդվարդ Չորրորդի սիրուհին:*

I, 2, 58.— Բացելով իրենց մունջ բերանները՝ արյուն են ծորում.— *Այդ ժամանակ տարածված հավատալիքներից մեկն ասում է, որ երբ մարդասպանը մոտենում է սպանվածի դիակին, նրա վերքերը նորից բացվում են, և արյունն սկսում է ծորալ:*

I, 2, 121.— Պլանտագենետ.— *Այդ ժամանակ Անգլիայում իշխող թագավորական տան բոլոր անդամները, այդ թվում նաև Յորքերն ու Լանկաստերները, կրել են Պլանտագենետ ազգանունը:*

I, 2, 163.— Կլիֆորդ.— *Գլոստերը հիշատակում է այն կռիվներից մեկը, որի ընթացքում Լանկաստերների կողմից Կլիֆորդը սպանում է Ռետլենդին՝ Էդվարդ Չորրորդի և Գլոստերի եղբորը:*

I, 2, 219.— Կրոսբի.— *Այդպես է կոչվել Գլոստերի պալատը Լոնդոնում:*

I, 3, 20.— Ռիչմոնդ կոմսուհի.— *Մարգարիտ Բոֆորտը, առաջին ամուսնությամբ կոմսուհի Ռիչմոնդ, ապագա թագավոր Հենրի Յոթերորդի մայրը, ծագում էր Լանկաստերների տոհմից և, հետևաբար, Յորքերի տան թշնամին էր:*

I, 3, 237.— ...դու, ավերիչ կինճ...— *Ռիչարդ Գլոստերի զինանշանի վրա կինճ էր նկարված:*

I, 4, 49.— Այն սարսափելի նավավարի հետ.— *Խոսքը Քարոնի մասին է, որը, ըստ հին հռոմեացիների և հույների հավատալիքի, մեռյալների հոգիները տեղափոխում էր հանդերձյալ աշխարհ:*

I, 4, 194.— Որ մարդ չսպանես.— *Խոսքը այստեղ «Մի՛ սպանիր» պատվիրանի մասին է:*

I, 4, 274.— Պիղատոսի պես ձեռքս լվանալ.— *Նոր կտակարանում ասվում է, որ հրեա քահանայապետները Քրիստոսի հետ դատաստան տեսնելու համար խնդրում են Պաղեստինում հռոմեացիների կուսակալ Պիղատոսի համաձայնությունը: Սակայն վերջինս, տեսնելով Քրիստոսի անմեղությունը և զգալով, որ անկարող է մերժել քահանայապետներին,*

---

* *Ծանոթագրությունները կազմել է Ա. Հովսեփյանը:*

«ձեռքերն է լվանում» ի նշան այն բանի, որ ինքը «այդ արդար արյունեն անպարտ է» և նրանց թողնում է, որ գործեն ըստ իրենց հայեցողության։

II, 4, 2.— Նորթեմպտոնում են երեկ գիշերել, || Այսօր կհասնեն Ստոնի-Ստրետֆորդ.— *Նորթեմպտոնը և Ստոնի Ստրետֆորդը քաղաքներ են, որ գտնվում են Չեստերից Լոնդոն տանող ճանապարհին։*

II, 4,46.— Պոմֆրետ.— *Այն ամրոցն է, որտեղ աքսորվել և սպանվել է Ռիչարդ Երկրորդը։*

II, 4, 75.— Ձեզ այն կնիքը, որ մոտս եմ պահում.— *Այսպես կոչված «Մեծ թագավորական կնիքը» պահվում էր լորդ խորհրդատուի մոտ։ Այդ ժամանակ լորդ խորհրդատուն Յորքի արքեպիսկոպոսն էր։*

III, 1, 69.— Ոչ մի շինություն այնպես չեմ ատում, ինչպես այդ Բերդը.— *Ըստ ավանդության, Թաուերը կառուցել է Հուլիոս Կեսարը։ Իրականում այն կառուցել է Ուիլյամ Նվաճողը 1078 թ.։*

III, 1, 83.— ...Թագավորի հին խեղկատակի պես.— *Այլաբանական կերպար միջնադարյան բարոյա-դաստիարակչական պիեսներում։*

III, 1, 102.— Ինչպե՞ս է դուքսը, իմ եղբորորդին.— *«Եղբորորդի» (cousin) ասելով Շեքսպիրի ժամանակ հասկանում էին ոչ միայն եղբորորդի, այլև ընդհանրապես որևէ մոտիկ ազգական, բացառությամբ՝ հայր կամ եղբայր։*

III, 1, 132.— Ուստի, կարծում է, ինձ կշալակես.— *Ծաղրաբար ակնարկում է Գլոստերի կուզը։ Պալատական ծաղրածուները երբեմն իրենց ուսերին կապիկներ էին դնում, իսկ թափառական խեղկատակները գյուղական տոնավաճառներ էին գալիս իրենց հետ ունենալով արջ և կապիկ՝ կապիկը արջի մեջքին։ Մանկահասակ իշխանի ասածը, ինչպես նկատում է Բուկինգեմը, հեռու է հաճոյախոսությունից, որ դեպքում էլ որ հիշատակվի կապիկը։*

III, 1, 142.— ...իմ հոգաբարձու հորեղբոր կամքն է.— *Թագավորի անչափահասության շրջանում հոգաբարձու, այսինքն՝ Անգլիայի կառավարիչ, նշանակվում է Գլոստերը։*

III, 1, 180.— Վաղը առանձին երկու խորհուրդ ենք մենք գումարելու.— *Գլոստերն ու Բուկինգեմը որոշում են երկու խորհուրդ գումարել։ Առաջինը պիտի որոշեր Ուելսի իշխանի թագադրման հարցը, իսկ երկրորդը, որին պիտի մասնակցեին նրանց ամենավստահելի անձինք, խիստ գաղտնի պայմաններում պիտի ծրագիր մշակեր հետագա գործողությունների համար։*

III, 1, 186.— Նա տիկին Շորին մեկ էլ համբուրի.— *Էդվարդ Չորրորդի մահից հետո Ջեյն Շորը դառնում է լորդ Հեստինգսի սիրուհին։*

III, 2, 68.— Քանզի գլուխդ ուզում են տեսնել կամուրջի վրա.— *Հնում սովորություն է եղել դավաճանների կտրված գլուխները ցուցադրել Լոնդոնի կամուրջի աշտարակի վրա։*

III, 5, 43.— ...չլինի մեզ թուրք եք կարծում կամ թե անհավատ.— *Թուրքեր բառը եղիսաբեթյան հեղինակները հաճախ են օգտագործել որպես հոմանիշ «անհավատի»։*

III, 5, 84.— Խոսքը այդ մարդու տան ցուցանակի մասին է եղել.— *Ռիչարդը նկատի ունի, որ այդ քաղաքացու խանութի ցուցանակի վրա թագ էր պատկերված։*

III, 5, 104.— Թե խոսքը ազդեց, նրանց Բեյնարդի դղյակ բեր իսկույն.— *Յորքերի դղյակը Լոնդոնում։*

III, 5, 109—110.— ...շուտ գնա դոկտոր Շոյի մոտ, || Իսկ դու.... Պենկերին.— *Շոն և Պենկերը աբեղաներ էին, հայտնի քարոզիչներ, համախոհներ Ռիչարդ Գլոստերի։*

III, 7, 5—7.— Այո, հիշեցի նրա դաշինքը տիկին Լյուսի հետ || Եվ Ֆրանսիայում կնքված դաշինքը.— *Մինչև Եղիսաբեթ Գրեյի հետ ամուսնանալը Էդվարդը սիրահարական կապեր է ունեցել տիկին Լյուսիի հետ։ Բանակցություններ են վարվել նաև Էդվարդին Ֆրանսիայի թագուհու քրոջ հետ ամուսնացնելու։*

IV, 1, 31.— Յորքի դքսուհուն կողջունեի որպես սիրող մոր.— *«Մայր» բառն այստեղ օգտագործվում է «սկեսուր» իմաստով։ Ստենլին ուզում է ասել, որ մի ժամ հետո Յորքի դքսուհու երկրորդ հարսը՝ լեդի Աննան, նույնպես թագուհի է դառնալու։*

IV, 1, 51.— Ձեր մասին որդուս նամակ կգրեմ.— *Ստենլին «որդի» է անվանում իր խորթ որդուն՝ Ռիչմոնդին։*

IV, 2, 125.— Բրեկնոք.— *Քաղաք Հարավային Ուելսում, որտեղ գտնվում էր Բուկինգեմների տոհմական դղյակը։*

IV, 3, 43.— Էդվարդի որդիք հայր Աբրահամի գրկումն են քնած.— *Աստվածաշնչի համաձայն, Աբրահամի գոգը այն վայրն է, որտեղ, իբրև թե մահվանից հետո, տեղափոխվում են արդարների հոգիները և հավիտենական երջանկություն վայելում։*

IV, 3, 60.— ...արքայական սրընթաց Հերմես.— *Ըստ հունական դիցաբանության՝ Հերմեսը Զևսի սուրհանդակն էր։*

IV, 4, 271.— ...Խորասուզիր քո ցաված հոգու Լետա գետի մեջ...— *Ըստ հունական առասպելաբանության՝ այդ ստորերկրյա գետի ջրերը առաջ էին բերում մոռացության զգացում այն հոգիների մեջ, որոնք խմում էին այդ գետից։*

IV, 4, 385.— Վկա սուրբ Գեորգ, իմ ծնկակապը, նաև իմ թագը.— *Սուրբ Գեորգը Անգլիայի պահապանն է համարվել։ Թագավորի «Ծնկակապ» ասելով Ռիչարդը նկատի ունի «Ծնկակապի շքանշանը», որով պարգևատրվում էին թագավորական տան անդամները ու մասնավորապես բարձր ազնվականությունը։*

V, 1, 12.— Մեռելոցն, ուրեմն, դատաստանիս օրն է.— *Քրիստոնեական կրոնի համաձայն, դա այն օրն է, երբ վրա կհասնի աշխարհի վերջը, և մեռելները, գերեզմաններից դուրս գալով, Աստծո առաջ դատի կներկայանան։*

V, 3, 67.— Սեռի.— *Ռիչարդի նժույգի անունը։*

V, 4, 11.— Վեց Ռիչմոնդ կար ռազմադաշտի մեջ.— *Ընդունված էր նաև, որ որևէ թագավոր կամ դուքս ճակատամարտի դաշտում ունենար իր նման հագնված մի քանի ասպետներ։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ, ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ, թարգմ. Հ. Սեան 5
ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ, ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ, թարգմ. Հ. Սեան 121
ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ, ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ, թարգմ. Հ. Սեան 253
ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԴ, թարգմ. Խ. Դաշտենց 385

Հոդվածներ և ծանոթագրություններ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 551
ՇԵՔՍՊԻՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ, Յու. Շվեդով 553
ՇԵՔՍՊԻՐԻ ՔՐՈՆԻԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ, Ռ. Զարյան 618
ՌԻՉԱՐԴ ԵՐԿՐՈՐԴ, Ն. Մուրադյան 624
ՀԵՆՐԻ ՉՈՐՐՈՐԴ, Ն. Մուրադյան 631
ՀԵՆՐԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ, Ն. Մուրադյան 650
ՀԵՆՐԻ ՎԵՑԵՐՈՐԴ, Ն. Մուրադյան 655
ՌԻՉԱՐԴ ԵՐՐՈՐԴ, Ն. Մուրադյան 675

ՇԵՔՍՊԻՐ

ШЕКСПИР

ՔՐՈՆԻԿՆԵՐ

2

Հրատ. խմբագիր Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարչ. ձևավորումը Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ
Տեխ խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Մ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատվեր 577 ԽՀԽ 1402 Հրատ. 3564 Տպաքանակ 10,000

Հանձնված է արտադրության 12/V 1971 թ., ստորագրված է տպագրության 5/III 1973 թ., տպագր. 42,75 մամուլ + 12 ներդիր, հրատ. 38,5 մամուլ, պայման. 50,2 թուղթ № 1, 70×90 1/16: Գինը 3 ռ. 0 5 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

ՇԵ-ՔՍՊԻՐ